



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ջանկացած մեջատիով կամ կրիչով
մեջտիով կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Գ Ա Յ

Գ Ա Ն Ե Ր Ա Գ Ի Տ Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՔԱՔՆԵՐԸ, ԳԻՒՂԵՐԸ, ԼԵՌՆԵՐԸ, ԳԵՏԵՐԸ, ՎԱՆՔԵՐԸ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՅՐԵՐԸ, ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՆԵՐ, ՀԱՅ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԳԷՄՔԵՐ (Թագաւորներ եւ իշխանաւորներ, կաթողիկոսներ եւ եկեղեցականներ, ազգ. գործիչներ, համալսարանականներ, հեղինակներ, խմբագիրներ, վասակաւոր ուսուցիչներ եւ այլն), ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԿԱՊ ՈՒՆԵՑՈՂ ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ՕՏԱՐԱԿԱՆՆԵՐ, ՀԱՅ ՊԱՐՔԵՐՈՒԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ Եւայլն

Խ Մ Բ Ա Գ Ի Ե Յ

Հ. ՄԿՐՏԻԶ ՎՐԴ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Պ Ա Ր Տ Ի Չ Ա Կ Ց Ի



1938

Տպ. ՊՈՒՔԻՇ

Ընթերցող, կարդա՛, երբ ո՛րեւէ անուն կամ ծանօթութիւն պակաս կը գտնես՝ հաղորդէ հետեւեալ հասցեին P. M. Bodurian Frumoasa-Ciuc (România)

Գինն է 120 լէյ, 1.25 տոլար, 25 ֆրանկ, 4 շիլլին, 90 լեվա, 100 դրուս, 100 սրախմի

„ՀԱՅ ՀԱՆՐԱՊԵՏԱԿ“Ի ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Մեծ էր վախս՝ որ մի գուցէ անտարբերութեան վէժին բաղխի «Հանրագիտակ»ը՝ որուն երկասիրութեան ձեռնարկողն եղայ:

Համակրանքի կարկառուն ցոյցերը, ու դատափետումի գրաւոր փորձերը այդ վախը փարատեցին: Անշահախնդիր անձեր, քննադատելով հանդերձ, գնահատեցին: Շատ չանցաւ նախանձի ուտիճը արթնցաւ գործը վարկարեկելու համար: Թէ՛ համակրողներուն, թէ՛ միւսներուն՝ կը մնամ երախտապարտ, որովհետեւ անոնք քով քովի գալով, հանրութեան ուշադրութիւնը սրեցին. բան մը որ թանկագին է ինձ համար:

Այն գրութիւնները, բազմաթիւ, զորս աշխարհի չորս ծագերէն հետզհետէ ստացայ, բերին խրախոյս և եղան ինձ քաջալեր:

Ընթերցողներուս բարեացակամութիւնը չարաչար գործածած չըլլալու համար, պիտի յիշեմ անոնցմէ միայն մի քանին: Գերերջանիկ Գրիգոր Պետրոս Ժ.Ն. Աղաճանեան Կաթ. Պատրիարք: Ամենապատիւ Թորգոմ Արեպ. Պատրիարք Երուսաղէմի: Գեր. Ներսէս Արքեպ. Մելիքեթանգեան: Գեր. Երուանդ Արքեպ. Փերտահճեան: Տիգրան պէյ Կամսարական, իշխան Պորիս Երկ. Արղութեանց: Պարոնայք՝ Վահան Մալէղեան, Շահան Նաթալի: Վերապատ. Հ. Գերովրէ Զրաքեան: Պարոնայք՝ Գ. Մալաթեան, Օննիկ Մահտեսեան և յարգելի ուրիշ ականաւոր մտաւորականներ, ի շարս որոց՝ բժիշկներ, իրաւաբաններ, բեղմնաւոր գրչի մշակներ, արուեստագէտներ, և այլք:

Ամէնուն՝ շնորհակալիքս ի խորոց սրտէ:

Շնորհակալիքս նաև բազմաթիւ պարբերութիւններու որոնցմէ վերյիշեմ Աթէնքի «Նոր Օր»ը (Իրանակցական), «Պաշտօնեան Մամուլ» (Ս. Գ. Հնչակեան), «Արև» (Ռամկավար), «Հայ Սիրտ», «Անհատ», «Բազմավէպ» և այն՝ որ փութացին նուիրելի իրենց քաջալերանքը «Հանրագիտակ»ին:

Միջադէպ մը միայն, վաղանցուկ րոպէ, փորձեց մթազնել «Հանրագիտակ»ի հորիզոնը «Արաղ» թերթի մէջ՝ որ Պուքրէշ կը հրատարակուի ջանասէր պ. Յ. Ճ. Սիրունիի կողմէ, քարկոծող յօդ-

ուած մը լոյս տեսաւ. յօդուած՝ որ ընդօրինակուեցաւ այսինչ թերթին մէջ նոյնութեամբ, այնինչին մէջ բառափոխութեամբ, անտարակոյս պ. Սիրունիի հաճոյք պատճառելու համար:

Գրախօսականի տարբերքէն զուրկ այդ կծու քննադատականը, արդար կամ անարդար, թէ որ թելադրուած չըլլար քննախնդրական ոգիէ, զայն պիտի վերագրէի աւելի կամ պակաս հասկացողութեան, թողով որ «Հանրագիտակ»ի անկողմնակալ ընթերցողները դատեն ու վճռեն: Այսպիսի մէկ տեսականի վրայ անասան մնալով հանդերձ, իմ վրաս պարտ կը ծանրանայ անդրադասուլ միջադէպին՝ և ցոյց տալ անոր աղբիւրը:

«Բազմավէպ»ի 1936ի Բացառիկի մասին քանի մը տող գրելու առիթով, շեշտած էի թէ պ. Սիրունի, սխալմամբ-- ո՞վ է մարդ անսխալական—Վարատին քաղաքը՝ որ Ռուսաստանի մէջ չէ, Օրատէա Մարէի հետ (Նաճ Վարոտ) որ Ռուսաստանի մէջ է, չիթեւելով, և Մխիթարեանց դատարակչական գործունէութեան վայրը, անշարժ քաղաքը, երկրէ երկիր տեղափոխելով փառաբանած է, իրրեւ թէ Վարատին՝ ուր Մխիթարեանք գործած են, Ռուսաստանի մէջ եղած ըլլար: Պատմական ու մանաւանդ աշխարհագրական այս ճշդումը պ. Սիրունիի դիւրադգած սրտիկը վիրաւորած ըլլալու է. մինչդեռ այդ չէ եղած նպատակս, ո՛չ ալ առիթ ստեղծել որպէսզի «Հանրագիտակ»ը քննախնդրութեան թիրախ ըլլայ: «Ե՛րթ յետս իմ, Սատանայ»:

Սակայն ինչ որ ցաւալի է, այն պարագան է որ՝ կարգ մը ուրիշ թերթեր ալ, առանց իսկ տեսած ըլլալու «Հանրագիտակ»ի մէկ պրակը, ազդուելով յումպէտս չարչարուած ոգիի մը վրիժառու թելադրանքէն կամ ենթարկուելով ինձ համար անհասկանալի անբարեխոյս և նախանձարեկ մէկ կարգախօսի, անխորհրդարար մանակցեցան քարկոծումին:

Ինձ վայել է միայն աղօթել. «Տէ՛ր, թող դոցազի՛ ոչ գիտեն զինչ գործեն»:

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

Հ Ա Յ Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ յ Ի

Բ. Գրքին Մեկեման և

Պ. ԱՐՄԵՆԱԿ ՊՕՂՋԷԼԵԱՆ

Ջերմագին շնորհակալիք

Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ



ԱՐԱՄ ԱՆՏՐԷ ՊՕՂՋԷԼԵԱՆ
Ծնած Քոստանցա 17 Դեկտ. 1919ին
Զրամոյն եղած 1937 Մայիս 21 Կալազ
Պուարե Լինին մեջ


Թարմ հողակոյտիդ առջև ա՛ա բոլորուած, սուգին ու կսկիծին դառնագոյնը մեր աչքերուն
և սրտին մէջ. կ'ողբանք քեզ ո՛վ յաւէտ սիրելի Արամ:

Տակաւին երազներուդ գեղեցկութեան չհպած, կեանքի բաժակին դեռ չերկարած պատանի
չրթներդ. գիտութեան դափնեպսակը դեռ չծաղկած մաքուր ճակտիդ վրայ, Դուն վե՛ր թռար հայ-
րենի տունիդ գողոր բոյնէն՝ անմխիթար սուգի մէջ թողլով սիրելի ծնողքդ:

Դուն զո՛նը եղար անխոյթ կամ անհող ձեռքի մը, դաժան վայրկեանի մը, անգո՛ւթ ճա-
կաաագրին, ահա թէ ինչո՛ւ մեր անցունքները խոշոր են և ծնողքիդ վիշտը անհունորէն դառն ու
անսահման Անոնք սիրելի Արամ՝ մխիթարութեան ժպիտը երբեք պիտի չունենան:

Դուն վերն ես այժմ և կը սլլպլաս աստղերուն հետ, ու կը տեսնես մոմերը որոնք հողիդ
լուսաւորելու համար կ'արտասուեն եկեղեցիներու խորաններու վրայ: Հայ չքաւոր պատանիներ՝
քու յիշատակէդ կ'առնեն լոյսը իրենց մտքին, ու այս Գիրքն իսկ, հէ՛զ Արամ, այս արտաս-
ուալից աշխարհի չորս ծագերուն կ'երթայ Բե՛զ պատմելու, քու սիրելի ազգիդ բեկորներուն ու
կը մնայ իրրև արձան մը յաւիտենական քու յիշատակիդ:

Յաւիտենական հանգիստ տայ Բեզի Ատուած ու մշտնջենաւոր լոյսը լուսաւորէ՛ թող
ԽՄԲ.



... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

... ..

1919ին Մլաժի դատարանին նախագահ և 1920 ին նոյն պաշտօնով Լուճ կը փոխադրուի: Հոս կը ծանօթանայ հայկական Հանրապետութեան նախկին զօրապետ պ. Քիչմիշեանցի հետ: 1922ին կը կանչուի ի Վարչաւիա Արդարութեան նախարարութեան վարիչի պաշտօնով, ընդհանուր վարչութեան ճիւղին մէջ, միեւնոյն ժամանակ դերնախարարի պաշտօնը վարելով նոյն նախարարութեան մէջ: 1926ին հանգստեան կը կոչուի, Վարչաւիոյ մօտ Մինսք Մօզավիէցքի կոչուած քաղաքին մէջ նօտարի պաշտօն ընդունելով: Դատաւորական ասպարէզին մէջ մատուցած ամենամեծ ծառայութեանցը համար «Վերահաստատեայ Բոլոնիոյ» պատուանշանի հրամատար եղած և մի քանի ուրիշ նշաններ ստացած է:

ԱՌԻԿՈՒՍԹԻՆՈՎԻԶ Տոմպրովսկա Վլասիսլավա, նկարչուհի: Ծնած է 15 Մայիս 1901ին ի Քրաքով: Միջին դասընթացքը աւարտելէն յետոյ, նկարչութեան կը հետևի, նախ առանձնաբար սորվելով և ապա անուանի նկարչուհի Մէլսօֆֆէրովայի դպրոցին մէջ: 1925ին նրկարիչներու զովոդուլթեան մէջ մտած է: 1929ին կ'ամուսնանայ Տոքթոր Աթանիսլավ Տոմպրովսքիին հետ որ նմանապէս արուեստագէտ նկարիչ մըն էր: 1925էն սկսեալ արդէն կը մասնակցի տեղական նկարահանողէաներու և ապա ինքը իր կողմանէ կը ցուցադրէ իր գործերը, Վարչաւիայի, Քրաքովի և Զիքակոյի մէջ: Կը շահագրգռուի մասնաւորապէս դաշտանկարչութեամբ և դիմանկարներով: Իրեն գործերուն մէջ յիշուելուարժանի են 1. Կին մը կուժ ի ձեռին (1926), 2. Իր մօր դիմանկարը (1921), 3. Հանգիստ աշխատանքէ ետքը (1927), 4. Չմեւուր յեռներու վրայ (1929), 5. Վայրանկար մը (1931), 6. Կլանաւի ապարանքը (1932), 7. Դղեակի մը ներքսակողմը (1934):



ԱՌԻԿՈՒՍԹԻՆՈՎԻԶ ՏՈՄՐՈՎՍԿԱ ՎԼԱՍԻՍԼԱՎԱ

Ա.ՉԱՂՂՈՒ, հին գիւղ Սիւնեաց Բաղք (Աձանան) գ. ի, որ տրուած էր իբրև կալուած Վահանայ վանքին:

Ա.ՉԱՂՂՈՒԲ, հայարնակ գիւղ Գանձակու Ղազարի գ. ի մէջ, Ս. Մակարայ վանքէն գրեթէ 11 վերստ հեռու: 1900ին 1845 բնակիչ ունէր, բաժնուած 150 տուն:

Ա.ՉԳԿԵՕՁԵԱՆ Արքաթի, ծնած է Կ. Պոլիս, երկար ատենէ ի վեր Ռուսահա հաստատուած, և պատուաւոր դործանութեամբ կրցած է իր առեւտրական տունը կանդուն պահել: Հայ Հանրապետակի Ա. գրքին մեկնեաս եղած է:

Հասցէն՝ A. Acikgheuzian, str. Columb 9 Bucuresti (Roumanie):

Ա.ՉԳՊԱՆ, այս անուամբ հայարնակ գիւղ մը կար Բարձր Հայոց Եկեղեաց (Երզնկա) գ. ի մէջ:

Ա.ՉԻԿԱՅ Գեորգ ծնած Արճէշ ԺԲ դարու սկիզբը, զինքը Աշիկայ կոչած են ի ծնէ կոյր բլալուն համար, փոքր հասակէն վանքի մը մէջ առանձնացած կ'սարքէր խտակրօն վարքով իրեն բնկեր ունենալով Գրիգոր կրօնաւոր մը: Գէորգ Աշիկայ Գրիգորի հետ եօթն անգամ Երուսաղէմ ուխտի երթալէ ետք կը բաղձայ նաև Հոռոմ երթալ սակայն Հունգարիոյ մէջ աւազակներու հանդիպելով կը կողոպտուին և Գրիգոր վիրաւորուելով կիսամահ գետին կ'իյնայ: Մերձակայ վանքի կրօնաւորներէն մին անոնց հանդիպելով՝ վանք կը փոխադրէ զիրենք ուր Գրիգոր կը վախճանի: Կրօնաւորները Գէորգին ցաւ չպատճառելու համար թէ և չեն յայտներ ընկերօջ մահը՝ բայց նա կը զգայ անոր մեռնիլը և կը խնդրէ որ զինքը եկեղեցի տանին: Գէորգ կ'ազօթէ և Գրիգոր կը կենդանանայ: Այս դէպքէն ետք Հոռոմ կ'երթան և ուխտերնին կատարելով Հայաստան կը դառնան և վեց ամիս Անիի կաթողիկէին հիւրանոցին մէջ իջեւանելով՝ իրենց սրտակեաց սքանչելի վարքով զամէնքը զարմացուցին: Ասոնց սրբութեան համբաւը Անիի չրջակայքը տարածուեցաւ ու հաւատացեալներ իրենց հիւանդները ասոնց ոտքը ընրին և առողջութիւն գտան: Գրիգոր Աշիկայ ըստ Հ. Չամչեանի 1185ի ատենները կը վախճանի: Աշիկայի կեանքը Յայամաւուրները և Վարդան Բարձրբերդցի պատմիչը մանրամասն կը պատմեն: (Հ. Չամչեան՝ «Պատ. Հայոց» Գ. 145—6):

Ա.ՉԻՔՈՅ, կը յիշուի Մոկք Առանձնակ գ. ի մէջ:

Ա.ՉՔԱՀԱՆ, գիւղ կը յիշուի Զալախանէն՝ Լօռու գ. ի մէջ:

Ա.ՉՔԱԶՈՐ կամ ձալա, հայարնակ գիւղ Գուգարաց, այժմ՝ Պորչալու վիճակի մէջ, 1900ին ունէր 12 տուն՝ 121 հոգի:

Ա.ՊԱԳԱՅ, օրաթերթ, լոյս տեսաւ ի Կ. Պոլիս 1877ին, արտօնատէր՝ Կ. Ս. Իւթիւճնան, խրմբագիր տնօրէն՝ Մ. Գափամաճնան:

Ա.ՊԱԳԱՅ, երկարաթաթերթ, լոյս տեսաւ Ռուսչուկ 1905ին (երկու թիւ միայն): Հրատարակութիւն Հնչակեան կուսակցութեան:

Ա.ՊԱ.Գ.Ա.Յ, օրաթերթ (Հնչակեան կուսակցութեան). լոյս տեսաւ Թիֆլիս 1907—8 (1—57 թիւ): Խմբագիր հրատարակիչ՝ Արզար Տէր-Արրահամեան (և Ատրպետ):

Ա.ՊԱ.Գ.Ա.Յ, լոյս տեսած է Պոլիս 1910ին՝ ներսէս Չաքարեանի արտօնատէրութեամբ 20 թիւի չափ միայն լոյս տեսած է:

Ա.ՊԱ.Գ.Ա.Յ, «քաղաքական և հասարակական շառաթաթերթ» (ապա եւօրեայ և օրաթերթ) օրկան Թամկավար Ազատական կուսակցութեան: Լոյս տեսաւ Բարիդ 1921-1935 խմբագիր՝ Յովհաննէս Պօղոսեան, Արչակ Զօպանեան, Ա. Թէրղիպաչեան, Ա. Դարբինեան: 1936ին զաղրեցաւ և 1937-ին կրկին սկսաւ լոյս տեսնել իր և շարաթաթերթ:

Ա.ՊԱ.Զ.Ա. կամ Աբազա խան թաթարաց (1265—82). տե՛ս Հուլիպոլ:

Ա.ՊԱ.ՀՈՒՆԵԱՅ Վ.Ա.Ն.Ք, Եկեղեցաց գ.թ. Բթառիճ գղ.ի մօտ, Եկեղեցիներն են Ս. Նիկողայոս, (որուն անուամբ կը կոչուի նաև վանքս) և Ս. Աստուածածին: 1309ին՝ Յովհաննէս երէց այդ թուին գրուած աւետարան մը կը նուիրէ վանքին: 1449ին՝ Ժ.Գ դարուն գրուած Աստուածաշունչ մը կը ստանայ Կարապետ վրդ. որդի Մկրտիչ քհ.ի և վանքիս կը նուիրէ, կը յիշէ վանքին հայրապետը զՍիմէոն և զՅակոբ վարդապետն իւր (Մուանձեանց՝ «Թորոս աղբար» Բ. 296): 1480ին գրուած աւետարանի մը յիշատակարանը կը յայտնէ վանքիս առաջնորդին անունը՝ Թորոս, միառանք՝ Առաքել գրիչ Աւետի, Սարգիս վրդ., Սաշատուր և Գրիգոր միաբանք:

Ա.ՊԱ.ՀՈՒՆԻ Եզնիկ. Կպիսկոպոս, ծնած Կ. Պոլիս 1843ին, կ'ուսանի Նուպար Շահնազարեան վարժարանին մէջ. վարդապետ կը ձեռնադրուի 1868-ին քաղաքական ղեպքերու պատճառով Երուսաղէմ կ'աքորուի և 1895ին ներսէմ ստանալով Պոլիս կը վերադառնայ, անկից Եզրիպոս, յետոյ Կովկաս կ'անցնի: 1908ին պաշտօնով Ամերիկա էրթաթայ և 1908ին Պոլիս դառնալով՝ քարոզչական պաշտօն կը վարէ և 1913ին կը վախճանի:

Ա.ՊԱ.ՀՈՒՆԻ Կարապետ, Կեսարիոյ Արամեան սղջկանց վարժարանին տնօրէնութիւն ըրած է 1889—1901:

Ա.ՊԱ.ՀՈՒՆԻՔ, հին գաւառ Տուրուբերանի, որուն կը համապատասխանէ այժմեան Մանգակիէր ամ Մէլազկիէր գաւառակը: Վաղարչակ թգ. գաւառիս մէջ հաստատեց յատուկ Ապահուենաց Կախարարութիւնը: Ժամանակ անցնելէ վերջ Ասողկոյ պատմածին համեմատ (Գ. Ժե), Վասիլ Կոստրը այս գաւառս սահմանակից Հարք և ուրիշ գաւառներու հետ տուաւ Տայոց Դաւիթ Կիւ-

րապաղատին, որպէսզի անոնց փոխարէն իրեն զօրք զրկէ: Թ. Արծրունին Կալսիկ անուամբ այլազգի ժողովուրդ մը կը յիշէ դաւառիս մէջ, Սմբատ թգ.ի օրով: Թովմա Մեծափեցին այլապահուենաց դաշտ մը կը յիշէ ուր եկած է Լէնկ-թիմուրի որդին Շառուհ: Գաւառիս զլիսաւոր քաղաքն է Մանգակերտ: Ապահուենիք՝ Հայաստանի Կպիսկոպոսական գաւառներէն էր, և կը թուի թէ Հարք գաւառին հետ մէկ թեմ կը կազմէր. հինգերորդ դարուն մէջ բաժնուեցան այդ երկու գաւառները և ունեցան առանձին Կպիսկոպոսներ, որովհետև Աշտիշատի ժողովին մէջ Հարքոյ անունով Մելիտէ Կպիսկոպոսը, և Ապահուենաց անունով՝ Երեմիա Կպ.ը կը յիշուին: Ապահուենիք (Մանգակերտ) առաջնորդութեան մէկ վիճակը կը կազմէր և ունէր 23 գիւղ, տե՛ս Մանգակիէր: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն»):

Ա.ՊԱ.Ղ.Ա., նշանաւոր դաշտ Բերկրի գաւառակի (Վտապուրական), զոր ոմանք սխալմամբ նոյնը կը համարեն Չիւրաւ գաշտի հետ: Երկարութիւնը 24 հզրմ. է: Դաշտիս մէջ միայն 500 քուրդ ընտանիք կ'ապրէր 1900ին: Հին ատեն դաշտս 300ի չափ Հայոց գիւղեր ունէր, որոնց շատերուն աւերակները կ'երևին: Դաշտս կ'ոռոգուի Պանտուժանու գետով:

Ա.ՊԱ.Ղ.Ա., բերդաքաղաքը համանուն դաշտին կողմերը գտնուող լեռներուն մէկուն վրայ, կը յիշուի ԺԷ. դարուն, ունէր 4 ամուր բերդ, Դրոնք աւազակներու ըոյն դարձած էին: 1788ին Վանայ փաշան շատ զօրքով բնաջնջեց զիրենք և բերդերէն մին կործանեց: (Միրախորեան «Նկար. Ուղ.» Գ. 19—20):

Ա.ՊԱ.ՃԵԱՆ. Համբարձում, փաստարան, ծն. Կեսարիա 1851ին, ծննդավայրին մէջ նախակրթութիւնը ստանալէ ետք Պոլսոյ իրաւագիտական վարժարանը կը մտնէ և փաստարանի վկայականը առնելէ ետք Կեսարիա կը դառնայ, փաստարանութիւն կ'ընէ ու յետոյ Պոլիս կը փոխադրուի և հոն կը վախճանի 1906ին:

Ա.ՊԱ.Ն.Ա., գղ. Շապին Գարահիսարի, 50 տուն հայ, 25 տ. մահմետական: Հայերը ունէին Պօղոս-Պետրոս Եկեղեցի մը, վարժարանը 50 մանչ կը յաճախէին:

Ա.ՊԱ.Ն.Ա., գետակ Սիւնեաց Վայոց-ձոր գ.թ. մէջ, որուն մօտ համանուն գիւղի մը աւերակները կը նշմարուին:

Ա.ՊԱ.ՆՕՂԵԱՆ, Կեղծ անուն Աղ. Փ ո ս ո ս եանի (տե՛ս):

Ա.ՊԱ.ՈՍԺ, շարաթաթերթ (ապա ամսաթերթ), լոյս տեսաւ Ամասիոյ մէջ 1911ին, խմբագրութեամբ Լեւոն Լանխի:

Ա.ՊՍ.Ռ.Ս.Ժ, քաղաքական, հասարակական եւ գրական թերթ (2 շաբաթր 1 անգամ). օրկան Հ. Յ. Դաշնակցութեան Շուշու կոմիտէի, տպ. Շուշի 1917—9, խմբագիր Հայրապետ Մուսայէլեան:

Ա.ՊՍ.Ս, գիւղակ Այրարատայ Բաղրեւանդ գո.ի 20 տուն քուրդ բնակիչ ունի: Կը տեսնուին եկեղեցւոյ եւ գերեզմանատան հետքեր:

Ա.ՊՍ.Ս — ԹՈՒՄԱՆ տե՛ս Աբաս Թուման:

Ա.ՊԱՐ, հին գիւղ Չորրորդ Հայոց Կեզի գո.ի, մէջ: Տե՛ս Ապարու Ս. Կարապետ վանք:

Ա.ՊԱՐԱՆ, Աբարան կամ Պառ Ապարան, վիճակ այժմեան Երեւանայ նահանգի՝ Էջմիածնայ գո.ի մէջ, որ կը համապատասխանէ Այրարատայ հին գո.ի արեւմտեան մասին: Վիճակիս սահմաններն են, արեւելքէն՝ Ղազախ, էջիկ-Մէյրտան եւ Տէրէչիչէկ անտառապատ լեռներու արեւմտեան ճիւղերը, արեւմուտքէն՝ քառագագաթ Արագածը իր լայնանիստ ստորոտներով, իսկ հարաւէն՝ մասամբ Արայի լեռը: Կլիման զմեղակ է եւ ձմեռը կը տեւէ 7—8 ամիս:

Ապարանցիք գաղթած են Այաշկերտէն եւ Պուլանըրէն, մաս մ'ալ Վանայ հարաւային կողմերէն. այս պատճառաւ երկու բարբառ կար, Վանի եւ Մշոյ Վիճակիս մէջ կան շատ մը աւերակ գիւղեր, զլիսաւոր աւանը կը կոչուի Քասաղ կամ Պաշ-Ապարան (տես):

Ներկայ Խ. Հայաստանի մէջ Ապարանը համանուն շրջանին կեդրոնն է, ուր կան բազմաթիւ Եգիտի գիւղեր: Շրջանին բնակչութիւնը որ մօտ 50000 է, կ'ապրի հողագործութեամբ եւ խաշնարածութեամբ:

Ա.ՊԱՐԱՆ կամ Ապարանե, հին հայաբնակ գիւղաքը Սիւնեաց Երնջակ գո.ի մէջ, 1900ին 100 թաթար տուն բնակչով գիւղ մը: ԺՅ. դարուն Միարանողաց կեդրոնատեղին եղաւ ուր փոխադրեցին Նախճաւանէն՝ եպիսկոպոսական աթոռը: Բարգաւաճ էր ո՛չ միայն կրօնաւորական կարգօք՝ այլ իր բարքերով: Այդ ատեն Ապարաներ ունէր 500 տուն հայ բնակիչ եւ եպիսկոպոսական եկեղեցին կը կոչուէր Ամենայն սբոց, որ 1848ի երկրայարժէն աւերուեցաւ: Եկեղեցւոյն մէջ կան ԺԲ. ԺԳ. դարու յիշատակներ: 1870ին ալլաղզիները եկեղեցւոյ տակ գտան ներքնատուն եւ ուսկից աննշան սպասներ զուրս հանեցին: Արձանագրութեանց թուականներէն կը յայտնուի որ Միարանողաց ուխտը այստեղ հաստատուելէն առաջ եւս Ապարաները չէն էր: Միարանողաց եպիսկոպոսը ԺԷ. դարու սկիզբը, Ապարաների սահմանները կը յիչէ նաեւ ուրիշ հինգ մատուաներ, ուր միայն տօնական օրեր կը կատարուէին պաշ-

տամուռք: Ապարաների նշանաւոր գործիչը եղած է Միթար կամ Միթարիչ(տես՝), Միարանողաց վանքի եկեղեցին կը կոչուի Ս. Աստուածածին. Ս. Ստեփաննոս Նախավկայ, Ս. Յակոբոս Առաքեալ եւ Ամենայն Սուրբք: Տե՛ս Միարանողք:

Ա.ՊԱՐԱՆԵՐ տե՛ս Ապարան:

Ա.ՊԱՐԱՆԻՉ ԳԵՏ, կը յիշուի Սիւնեաց Ծղուկ գո.ի՝ Սիւնեաց եկեղեցւոյն հարկատու գիւղերու կարգին մէջ:

Ա.ՊԱՐԱՆՍԱՆ կամ Ապարանցան, Վարազայ ձորին մէջ գլխացող աղբիւր մը՝ պաղ ջուրով, եզերուած մարմանդով. Խրիմեան Հայրիկի սիրած աղբիւրը, Վանեցին կիրակի օրերը հոն կ'երթար զուարճանալու: Անմահական ջուր ունի (Սու-Վանի):

Ա.ՊԱՐԱՆՔ կամ Ապարանից Ս. Խաչ, Մոկաց աշխարհի Մոկք Առանձնակ (Մակըրաւաք) գո.ի մէջ կ'իյնայ՝ երբեմն հռչակաւոր եւ այժմեան դրութեամբ սղաւոր վանքս. համանուն հայաբնակ գիւղէն քառորդ մը հեռու՝ հիւսիսային կողմը: Հին ժամանակները վանացս տեղը կտառուցուած է եղեր Հայոց երեւիլի նախարարներէն միոյն ապարանք, որոյ անուամբ կը կոչուի վանքս: Ապարանից ուխտի հիմնարկութեան թուականը որոշ չի գիտցուիր, ինչպէս նաեւ անձանթ է իր հին պատմութիւնը: Տասներորդ դարուն մէջ կը սկսի յիշուիլ այս հռչակաւոր վանքը, որ կը թուի թէ Մոկաց աշխարհի եպիսկոպոսանիստ աթոռն էր: Հայոց Սմբատ թգ.ի եւ Անանիա Մոկացի կաթողիկոսի ժամանակ, Մոկաց եպիսկոպոսն էր Դաւիթ անուամբ իմաստուն եւ առաքինի մէկը, որ խոր ձերութեան հասնելով՝ վախճանեցաւ եւ թաղուեցաւ Ապարանից վանքի մէջ: Այս երանելի Դաւիթ եպիսկոպոսը, իր կենդանութեան ատեն, եղբոր դստեր որդին Ստեփանոս քահանայ ձեռնադրած եւ վարդապետութեան պատիւ տարով՝ Ապարանից ուխտին առաջնորդ կարգած էր, որ յետոյ Մոկաց աշխարհին եպիսկոպոս ձեռնադրուելով՝ նոյն վանքին մէջ նստաւ:

Վանքս կանխաւ ունեցեր է Ս. Կարապետ եկեղեցի մը, որուն խորանին մէջ է հրաչազործ Դաւիթ եպ.ի գերեզմանը: Ստեփաննոսի վանահայրութիւն ժամանակ շինուած է նաեւ Ս. Ստեփաննոս նախավկայ եկեղեցին եւ Ս. Աստուածածնայ նուիրուած մեծ ու փառաւոր եկեղեցի մը: Ստեփաննոսի եղբորորդին Մանգլաւտ իշխան՝ Պոյսէն վանքս բերաւ Կենաց փայտէն մաս մը եւ ուրիշ անգիւտ մասունքներ, զորս Ս. Կարապետ եկեղեցւոյ խորանին վրայ հանգոյց եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ աւարտումէն ետք Ստե-

փանոս վանահայրը հրաւիրեց բազմաթիւ եպիսկոպոսներ, վանականներ, կղերականներ, մեծամեծ իշխաններ և նախարարներ, նաև Վասպուրականի թագաւորներէն երեք եղբարք՝ Աշոտ Սահակ, Գուրգէն Խաչիկ և Սենեքերիմ՝ Յովհաննէս եւ մեծ թափորով Կենաց փայտի տապանակը Ս. Կարապետէն նորակառոյց Ս. Աստուածածին եկեղեցին փոխադրեցին 983ին, մեծ պահոց Աւագ ուրբաթու խորհրդաւոր օրը։ Այս հանդէսին ներկայ էր նաև Ս. Գրիգոր Նարեկացին, որ ի վերջոյ Ստեփանոս եպ. ի նորանոց զրեց թէ՛ Ապարանից պատմութիւնը և թէ Ս. Խաչի հրաշալի ներքոյը Կենաց փայտի մասունքը վանքս բերուելէն վերջ՝ Ապարանից ուխտի անունը փոխեցին և այսուհետև Ապարանից Ս. Խաչ անուանեցին։

Հռչակաւոր վանքս. ժամանակի յաջող և ձախող ընթացից համեմատ իր գոյութիւնը պահած եւ հասած է մինչև մեր օրերը, առանց պատմական կարևոր դէպքերու։ ԺԶ. դարուն՝ վանքիս միաբաններէն կը յիշուի Սիմոն վարդապետ, որ տաղաչափեց Պահլաւունեաց և Մամիկոնէից վրայասանութիւնը։ ԺԹ դարու կիսուն վանքիս ձեռագիր մատենաները, թանկագին սպասները և սրբութիւնները գրաւած է քիւրտ Օսման աղան և ժառանգ թողած իր որդւոց։ Հռչակաւոր Ս. Աստուածածին եկեղեցին կանգուն կը մնայ, նոյնպէս կիսակործան Ս. Կարապետ եկեղեցին։ (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» Ա. 237—40)։

ԱՊԱՐԱՆԻ ԿԱՄ ԱՊԱՐԱՆԻ, գղ. Ակնի, բնակիչք՝ այլազգիք։ — Ուրիշ մը Սիւնեաց Վայոց-ձոր գու. մէջ։

ԱՊԱՐԱՆԻ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՎԱՆՔ, Ապար գիւղին մօտ՝ Կեղի գու. մէջ, ունի հարուստ կալուածներ և ամուր սենեակներ, վանքիս այժմ Կեօ կոչուած արարին մէջ զանակոծուած է Ս. Խաչ հայրապետը։

ԱՊԷԼ ԶԵՎԻԼԱ (Օր. Զեփիւռ Տատիկօղեան), երգչուհի, ծնած է Ռոտտսթօ և յաճախած է Պէյրութի Ազգային վարժարանը և յաջող կերպով աւարտած։ Ապա մտած է Աթոն sp Շառիքներու վարժարանը և բոլորած է Աեռիքիֆաի և՛ Պարվիշ շրջանը փայլուն կերպով։

Օր. Զ. Ապէլի ձայնը ընտանեկան ժառանգութիւն մ'ըլլալով, իր մանկութեան օրերէն երգելու փափազը իր մէջ զարգացնողը եղած է՝ իր երաժշտասէր հայրը՝ Միհրան Ապէլ։

Օր. Զ. Ապէլ. Պէյրութի շայ՝ բեմերուն վրայ իր մասնակցութիւնը բերած և հետզհետէ իր մէջ լսմեղ կերպով երեսն եկած է ապագայ մեծ երգչուհի մը շնորհքը։ Ապա հետևած է Պէյրութի Ամերիկեան համալսարանի Institut de Musiqueի

(երաժշտանոց), ուր յաճախ երեցած է յիշեալ հաստատութեան բեմին վրայ, և քանիցս արժանացած է օտար արուեստագէտներու անվերապահ գնահատանքին։

Զեփիւռ Ապէլ իր սորբանոյի կիրթ եւ անորժայուր ձայնով, արդէն իսկ կը գրաւէ Պէյրութահայութեան գեղարուեստասէր մարդին մէջ ուրոյն տեղ մը։ Ան յաճախ իր սիրայօժար մասնակցութեանը բերած է հայ և օտար բեմերուն, և ուր հասարակութիւնը միշտ ալ գիտցած է գնահատել արժէքաւոր արուեստագիտուհին։ (Կեանք եւ արուեստ 1925 էջ 43)։



Օր. ԱՊԷԼ ԶԵՓԻԻՆ

ԱՊԸԼԼԻՆՏԻ, գղ. Կարնոյ, 50 տուն բնակչօք, կէսը հայ կէսը թուրք էր։ Հայք Ս. Աստուածածին եկեղեցի մը ունէին։

ԱՊԸԼՊՈՒՀԱՐ, Ալյուրհար կամ Ալյուրհար, գղ. Տուրուբերանի Տարօն գու. մէջ, կը նայի Մշոյ դաշտին վրայ, 35 տուն հայ բնակիչ ունէր։ ԱՊԸԲՆԷ կամ Ալյուրհար, հայարնակ գղ. Բարձր Հայոց թորթումի. 60 տուն բնակիչ ունէր։

ԱՊԷԲԶԷՆ կամ Էրգենի, գետակ Խզուի մէջ։

ԱՊԷԽ տե՛ս Աբիխ։

ԱՊԷԿԷՐՄ տե՛ս Զեմիկ։

ԱՊԷՆ, գղ. Բուպանի նահանգի մէջ, Վլատիկավհասեան երկաթուղւոյ գծին վրայ, 11 տուն Հայեր կ'ապրէին առանց եկեղեցւոյ և դպրոցի։ Ապինի շրջակայքն ալ Տրապիզոնցի Հայեր կային, որոնք ծխախոտի մշակութեամբ կը զբաղէին։

ԱՊԷԼ կամ Ափիլ քաւ, այսպէս կը կոչուի Կիլիկիոյ Ալատաղ լեռան բարձրագոյն կատարը։

ԱՊԷՊԷՏԼԻՍ, վտակ Բաղէշու մօտ։

ԱՊԷՍԻՆԻՍ տե՛ս Եթովպիա։

ԱՊԷՐԱՏ ԻՇԽԱՆ, 1045ին Գաղիկ վերջին թգ. Բագրատունեաց՝ Անի քաղաքին վերակացու գրաւ Պոլիս մեկնելէն առաջ։ 1046ին երբ Յունաց բանակը Անին գրաւելու եկաւ՝ Ապիրատ տեան մը ընդդիմացաւ պատերազմելով յոյն բանակին դէմ, երբ իմացաւ թէ Գաղիկ այլևս պիտի չվերադառնայ՝ Անին յանձնեց Յունաց։

ԱՊԷՐԱՏ ԳՐԻԳՈՒԵԱՆ, իշխան Անուոյ, որդի Գրի-

գործի Վասակեան, եղբ. Բարսեղ եպ.ի Անուոյ, որ Կարսի ամիրայէն գերի կը բռնուի և յետոյ կ'ազատի (1174—5):

ԱՊԻՐԱՏ իշխան Հասանեան, որդի Հասանի, 1020ին կ'օգնէ Աշոտի՝ ընդդէմ իր եղբոր Յովհաննէս թգ.ի. յաջորդ տարին սակայն երբ Աշոտ հիւանդ ձեացած իր քով կանչեց Յովհաննէս թգ.ը և խնդրեց Ապիրատէն որ ձերբակալէ և սպաննէ՝ Ապիրատ, Յովհաննէսը ձերբակալելէ ետք դուրս հանեց սենեակէն և փոխանակ սպաննելու՝ Անի տարաւ. և զահին վրայ նստեցուց: Ապիրատ խորհելով որ Աշոտ պիտի թշնամանայ իրեն հետ՝ ընտանիքը և Ապլիսապու Վասակ որդիները առնելով՝ իր հեծեակներով միասին Դուին գնաց Ապուսովար ամիրային Ապուսովար սիրով ընդունեց քաջն Ապիրատը. սակայն քիչ ետք նախանձորգները Ապուսովարը Ապիրատի դէմ զրգռեցին. ըսելով թէ՝ այս զօրաւոր անձին քեզի ապաստանելու միակ նպատակն է սպաննել քեզ ու ընտանիքդ: Ապուսովար 1021ին իրեն կանչելով ծածուկ խողխողեց: Ապիրատի մահը սուգ պատճառեց Յովհաննէս թագաւորին:

ԱՊԻՐԱՏ իշխան մօր կողմանէ Պահլաւունի, հայր ներսէս Շնորհայիին, կ'իշխէր Ծովք զղեկին, «այր փառացի և շքեղ՝ և արիութեամբ անուանի»: 1111ին երբ Սկիւթացիք Ծովք զղեկին վրայ յարձակեցան՝ ապիրատ քաջութեամբ զիմազրեց և թշնամին կոտորեց ու հայածեց: Սակայն քիչ ետք երբ Ապիրատ զղեկին պարսպին վրայ ելած դուրսի աղմուկին պատճառը կ'ուզէր իմանայ՝ Հագարացի զինուոր մը նետահար վար տապալեց: Հայ զինուորները երբ իրենց իշխանը դէպի բնակարանը տարին՝ արիւնահոսութենէն հոգին աւանդեց և և թագուեցաւ հօրենական չիրմին մէջ:

ԱՊԻՐԱՏ Շահանեան տե՛ս Գրիգոր Զ. կր. Ապիրատ:

ԱՊԻՐԱՏ եղբ. ներսէս Լամբրոնոցուոյ, կը յիշուի 1190ի Յիշատակարանի մը մէջ:

ԱՊԻՐԱՏ Գրիգոր, տե՛ս Գրիգոր Ապիրատ:

ԱՊԻՐՈՆ, գղ. Տրպիզոնի, որուն թաղային վարժարանին մէջ 30 մանչ և 8 աղջիկ կ'ուսանէին:

ԱՊԼԱՀԱՏԵԱՆ Գաւմէ (1839—1927), վերսպատուելի, ծնած Մերտին 1839ին, թէ և ճիշդ ասորի՝ բայց հայ շրջանակի մէջ ապրած ու գործած է: Նախնական ուսումը Տիգրանակերտի Խըտըրպլը դիւղին մէջ կը ստանայ: Ծաղիկ հիւանդութենէն կուրացած աչքերը ուխտագնացութեան մէջ կը բացուին: Կ'առաջադրէ միսիոնար

ըլլայ. Խարբերդի Աստուածարանական ճեմարանին մէջ կը լրացնէ ուսումը, ուր քանի ժը տարի ուսուցչութիւն ընելէ ետք Ռընտփան կ'երթայ և չորս տարի Աւետարանը կը քարոզէ: Հետզհետէ կը պաշտօնավարէ Տիգրանակերտ. Մարգուան, յետոյ շրջիկ քարոզիչ կը դառնայ ու 1917ին Ամերիկա կ'անցնի իր զաւակներուն քով ու կը հաստատուի Լոս Անճէլըս և հոն կը վախճանի 1927ին Ապլահատեան՝ Պետրոս Ամիրխանեանի աջակցութեամբ՝ Ռընտփանի մէջ Ս. Գիրքը քիւրտերէնի կը թարգմանէ: (Կոչակ» 1927 թ. 33, էջ 1039):

ԱՊԼԱՍԱԹ Տարուեցի, իշխան, որդի Տաճատ իշխանի, 1108ին շատ մը հեծելազօրքով Գող Վասիլի օգնութեան կ'երթայ Պարսից դէմ՝ մղուած պատերազմին: 1110ին Սկիւթացիները երբ Թորոսի սահմաններուն մօտեցան ի Կիլիկիա՝ Թորոս իրեն օգնութեան կանչեց Ապլասաթը. յազմութիւնը թէ և Հայոց վիճակեցաւ, սակայն այդ ճակատամարտին մէջ Տիգրան և Ապլասաթ քաջ իշխանները ինկան:

ԱՊԼԱՍԱԹ տես Ալպիսան:

ԱՊԼՀԱՃ տես Աբլխան:

ԱՊԼԽՍԻՊ կամ Ապլլարիպ Արծրունի, որդի Հասանայ, որ հօրը մահէն ետք 1042ին Կ. Պոլիս երթալով՝ Կոստանդին Մոնոմախ կայսրէն պատուուեցաւ և իշխան կարգուեցաւ Տարսոն քաղաքին և Կիլիկիոյ գաւառներուն: 1072ին Ապլլարիպ կրկին Պոլիս գնաց, Միքայէլ կայսեր մտերմացաւ և վերահաստատուեցաւ իր իշխանութեան մէջ. ամբացուց Լամբրոնի բերդը և պարսպապատելով Պապեռոն ամրոցը՝ հոն նստաւ, շինելով եկեղեցի ու շիրիմ հանգստեան, իր դուստրը Գագիկ գահազուրկ թագաւորին Դաւիթ որդւոյն կնութեան տալով՝ իրեն օգնական կարգեց, սակայն 1080ին կասկածելով որ Դաւիթ իրեն պիտի դաւաճանէ՝ թունաւորելով սպաննեց: Այդ տեսնները մեռնելով Ապլլարիպ՝ իրեն յաջորդեց Սահակ Լամբրոնի Օշին իշխանին փեսան:

ԱՊԼԽՍԻՊ Հաւուուի կամ Արծրունի, սպարապետ Արծրունեաց, 1922ին Գագիկայ Վասպուրականի թգ.ի կողքին Յուսուփի դէմ կ'ելլէ:

Գագիկի մահէն ետք 937 երբ Վասպուրականի վրայ Դերենիկ-Աշոտ կը թագաւորէ՝ Ապլլարիպը սպարապետութեան պաշտօնէն կը ձգէ և տեղը կը կարգէ Աարգիս անուն հղօր և երեսիլի անձ մը: Ապլլարիպ զայրացած Հերայ և Զարուանդայ Ապլահաճ ալլաղգի իշխանը կը զրդէ Դերենիկ-Աշոտի վրայ յարձակիլ, օգնելու խոստում տալով: Ապլահաճ յանկարծակի Վասպուրականի վրայ,

կը յարձակի Դերենիկը կը ձերբակալէ և հետը տանելով կը բանտէ: Հայ վանականք և եպիսկոպոսք կը նզովեն Ապլխարիպը իր այս արարքին համար: Ապլխարիպը կը զղջայ և Դերենիկը բանտէն կ'ազատէ 941ին ու իր աթոռին վրայ կը բարձրացնէ և ինքն ալ իր նախկին սպարապետի պաշտօնին կը հասնի:

ԱՊԼԽԱՐԻՊ ՀԱՆՈՒՆԻ, իշխանաց իշխան եղբորորդի վերնոյն, 983ին Վասպուրականի Աշոտ Թգ. ի հրամանով Գողթն գո. ի Ապուտէլի ամիրայի ղէմ կը ճակատի և պարտուելով՝ կը ձերբակալուի:

ԱՊԼԽԱՐԻՊ ՎԱՍԱԿԵԱՆ, Տէր Պիր կամ Պիրի-ճիկ քաղաքին: Հայ թագաւորներէն շինուած այս քաղաքը պարսից ձեռքէն կ'առնու Ապլխարիպ և հոյակապ ամրոցով անառիկ քաղաքի կը վերածէ: 1117ին Բաղտին, Եղեսիոյ կոմսը շատ մը զօրքով Պիրի վրայ կը յարձակի և տեսնելով որ պիտի չկարենայ քաղաքը առնուլ՝ կը պաշարէ զայն տարւոյ մը շտի և ներսինները սովի կը բռնէ: Ապլխարիպ կը ստիպուի քաղաքը Բաղտինի յանձնել և ինքն ու իր եղբայրը՝ Թորոս իշխանին կ'երթան — Տե՛ս Ապլղարիպ:

ԱՊԼՀԱՏ, ամիրայ Հերայ և Զարուանդայ, 940ին Ապլխարիպ Հաւնունի սպարապետի զբողմամբ Վասպուրականի վրայ յարձակելով՝ Դերենիկ Թգ. ը գերի բռնելով բանտեց Հերի մէջ:

ԱՊԼՀԱՏԻ, ամիրայ Ատրպատականի (987ին):

ԱՊԼՀԵՐԹ Ջահապունի, իննբորդ զարու կիտուն Սիւնեաց վրայ կը յարձակի (ըստ Վարդան պատմագրի) չորս հազար զօրքով, իր ղէմ կ'ելլէ Բաթկէն երկու հազար զինուորով և կը վանէ զինքը:

ԱՊԼՀԵԹ Վրացի, 1125ին վրաց թագաւորին կողմէ Անիի վրայ իշխան կը կարգուի յաջորդ տարին Անին պարսից կը յանձնուի:

ԱՊԼՂԱՐԻՊ մարզպան՝ Բագրատունեաց թագաւորութեան օրով, որդի Գրիգորի, ծնած ժԱ. դարու սկիզբները, սա 1040ին Անիի Ծաղկածորի բարձանց վրայ կառուցած է գողտրիկ եկեղեցի մը իբր հանգստարան իր հօրը Գրիգորի, եղբօրը Համգէի և քրոջը Սեղայի (ըստ արձանագրութեան) զանազանելու համար միւս Ս. Գրիգոր եկեղեցիներէն՝ Ապուղամբեց Ս. Գրիգոր կը կոչուի, ասկէ առաջ 1036ին կառուցած էր Ս. Փլրկիչը (Տե՛ս «Հայ Հանգ.» էջ 176):

ԱՊԼՂԱՐԻՊ կամ ԱՊԼԽԱՐԻՊ Գունդոտայի՝ իշխան Հուտաֆոյն՝ 1199ին (Ալիբան՝ «Հայաստան»):

ԱՊԼՂԱՐԻՊ, Զ. դարու պատմիչ, գործը մեր ձեռք հասած չէ:

ԱՊԼՂԱՐԻՊ, կեղծանուն թիւքմենեան Մ. Սի (Տե՛ս):

ԱՊԼՃԵՍ, բերդ Կիլիկիոյ սահմանը, կը յիշուի Ներսէս Պայկէնցէն (Չամչ. Գ. 384):

ԱՊԼՄԱՆՐԱ, իշխան Ազնեաց, ուրացող, 896ին:

ԱՊԼՈՅ, հայ իշխան, որուն խնդրանքով զրեց Յովհաննէս Երզնկացի «Յաղագս երկնի» ոտանաւորը՝ ժԳ դարու վերջերը:

ԱՊԼՋԱՀԱՊ, որդի Ապիրատի, Յովհաննէս թագաւորէն կը պատուուի և իր հօրը պաշտօնին կը հասնի (1021ին):

ԱՊԼՋԱՀԱՊ, որդի Վասակի, եղբորորդի վերնոյն (1082), եղբայր Բարսեղ կթ. ի:

ԱՊԼՈՒՍԻ կամ Ապլիւսելար, ամիրայ Անեոյ՝ 1124ին:

ԱՊԿԱՐՈՎԻԶ տե՛ս Աբգարովիչ:

ԱՊՈՂՆԱԿ, գղ. Կեղիի (Բղի), 1900ին 80 տուն հայ և 8 տուն մահմետական բնակիչ ունէր, եկղ. Ս. Յակոբ, վարժարանին մէջ 41 մանչ կ'ուսանէին:

ԱՊՈՂՈՆ, չատուած Յունաց, որդի Դիոսի, որուն պղնձածոյ պատկերը Արշակունեաց Արտաշէս Ա. Թգ. ը (114—89 ն. ք. Բ.) Հայաստան բերել տալով Արմաւիր քաղաքին մէջ դրաւ:

ԱՊՈՍ, լեռ Հայաստանի և Մարաց երկրին սահմանագլխին վրայ՝ ըստ Ատրարնի:

ԱՊՈՅ, փոքրիկ վիճակ Գուգարաց (Գայուլի՝ ըստ այլազգեաց): Վիճակս ունի իր անուամբ լեռներ: Բնակիչք՝ հայագգի են, կորովի և բարձրահասակ, և արուեստով իւղագործ: Ըստ Վասիտէ աշխարհագրին՝ վիճակիս քաղաքաւանն է Ղազանճի: Վիճակիս զիւղերու անուանները մեծ մասով հայկական են կամ տաճկական, ուսկից կ'ենթադրուի թէ երկիրս աւելի Հայոց կը վերաբերէր քան Վրաց: Տե՛ս ԱՇՈՅ:

ԱՊՈԻԼ կամ Սբուլ, լեռ Գուգարաց Ջաւախք գո. ի, բաղկացած երկու գագաթներէ Մեծ և Փոքր Ապուլ:

ԱՊՈԻԼ, գղ. համանուն լեռան մօտ, բնակիչք՝ ամբողջ հայ՝ մօտ 900 հոգի:

ԱՊՈԻԼ, փոքրիկ լիճ, համանուն լեռան երկու գագաթներուն մէջտեղ:

ԱՊՈԻԼԱՀԵԹ տե՛ս Անիէս խան:

ԱՊՈԻԼԲՈՒՀԱՐ տե՛ս Ապրիլյուխար:

ԱՊՈԻ-ԿԱԼԿԱԼ զիւղ, երբեմնի Կարկառ քաղաքը. տե՛ս Կարկառ:

ԱՊՈՒՂԱՄԲԵՆՅ Ս. Գրիգոր, այսպէս կը կոչուի Անիի հռչակաւոր Ս. Գրիգոր եկեղեցին որ ըստ

արձանագրութեան 1040ին Հայոց մարզպանը Ապրիլարիպ կառուցանել տուաւ իրր հանդստա-
րան իր հօրը Գրիգորի,
եղբորը Համդէի, քրոջը
Սեղայի: Շէնքին ձեր
կլոր է, հայկական ոճով
կաթողիկէն ղեռ ան-
վրթար կը մնայ, եկե-
ղեցւոյն միւս մասե-
րըն ևս տակաւին կան-
գուն կը մնան: Այս
հրաշակերտ տաճարի-
կըն ալ տաղանդաւոր
Տրդատ ճարտարապե-
տի ձեռակերտը կը
համարուի:



Ա. Գրիգոր Ապուլամբեց

ԱՊՈՒՂԱՆ Տարոնե-
ցի որդի Գրիգորի՝ Տա-
րօնի իշխան կը կար-
գուի և Յունաց Լեոն
Զ. կայսրէն (880-911)
պատրիկ կ'անուանուի

և կը վախճանի իր հայրենեաց մէջ:
ԱՊՈՒՄՐՈՒԱՆ տե՛ս Գագիկ Ապումրուան:
ԱՊՈՒՄԸՃՈՒԲ. հարկապահանջ ի Հայս Թ. դա-
րու կիսուն (Ալիեան՝ «Հայապատմ»):
ԱՊՈՒՇԻԲ, քղ. Իրանի, Սպահանու նահանգին
մէջ, կը բնակին 35 տուն Հայեր:
ԱՊՈՒՇՏԱ կամ Ապուշտ, գղ. Արմտանի, բնա-
կիջ՝ 80, որոնք որսորդութեամբ կը պարապին.
եկեղեցի Ա. Թորոս:

ԱՊՈՒԶԵՆ կամ Ապշուղա, գիւղ կամ արուար-
ձան Փոքր Հայոց Ակն քաղաքի: 1900ին 1100
հայ և 850 այլազգի բնակչութիւն ունէր: Վա-
րագայ վարժարանը 75 մանչ և 45 աղջիկ կը
յաճախէին: Ժամանակին Ապուշխ տուած է կրե-
ւելի ամիրաներ որոնք ազգային կեանքի մէջ
գործօն դեր ունեցած են և նիւթապէս նպաստած
հայ մշակոյթին՝ գրքերու հրատարակութեանց
մեկնասաներ հանդիսանալով:

ԱՊՈՒՋՏԱ s. Ապուշտ:
ԱՊՈՒ ՍԱԼԻՉ, հայազգի պատմիչ՝ ըստ Գէորգ
Մարրիանի (Համագրային տարեգրք 1836 էջ 278):
Տե՛ս Աբուսաիլ:

ԱՊՈՒՍԱՅԻՏ, որուն մարդակազմութիւնը 1671ին
կ'ընդօրինակէ Մեսրոպ գրիչ: («Բագմավեպ» 1926
թ. գ. էջ 167):

ԱՊՈՒՍԷԹ կամ ԱՊՈՒՍԷՃԹ ոստիկան, որ Թ.
դարու կիսուն (848) Տարօնի վրայ յարձակեցաւ
և Բագրատ իշխանը խորամանկութեամբ իրեն

կանչելով շղթայակապ ամիրապետին զրկեց:
ԱՊՈՒՍԻ կամ ՀԱՊՈՒՍԻ, գիւղ Խարբերդու,
1900ին 1200ի չափ հայ լուսաւորչական բնակիչ
ունէր:

ԱՊՈՒՍՎԱՐ, Գուինի պարօիկ ամիրայ, որուն
կ'ապաստանի Ապիրատ իշխան 1021ին: Ապուս-
վար իր հակառակորդ Դաւիթ Անտոյիսի քոյրը
կնութեան տուած էր՝ 1036ին գնաց անոր իշխած
գաւառներուն վրայ յարձակեցաւ: Դաւիթ ար-
քայ Աղուանից՝ զրացի թագաւորներէն օգնու-
թիւն ուզեց և Աղուանից կաթողիկոսին զիմեց
որպէսզի կղերը խաչով և աւետարանով բանակին
առջև իյնայ, այսպէս կրցաւ Ապուսվարի բանակը
կոտորել ու երկրէն դուրս վանել: 1047ին ծերունի
Վահրամ Պահաւունի հայ և յոյն զօրքերու
գլուխն անցած՝ Ապուսվարի վրայ յարձակեցաւ
զայն մինչև Գուին քիչ, բայց ինքն ալ նահա-
տակուեցաւ այդ ճակատամարտին մէջ:

ԱՊՈՒՏԵԼՓ կամ ԱՐՈՒՏԼՈՒՓ, ամիրայ Գողթ-
նայ և Գուինի, 983ին Գուինը Մուշեղի ձեռքէն
կ'առնէ և 987ին Սմբատ Թղ. ին հետ խաղաղու-
թեան դաշինք կը կնքէ:

ԱՊՊԱՍԱՊԱՏ s. Ասապատ:
ԱՊՊԱՍ ԿԷՕԼ s. Աբաս-Կեօլ:
ԱՊՋՈՒՂԱՍ s. Ապուշխ:

ԱՊՏԱՂ-ԱՂԱԼԸ, հայաբնակ գիւղ Սիւնեաց
Գեղարքունի գո. ի, Գեղամայ Մովակի հարաւա-
յին եղերքին վրայ, 1900ին 600 բնակիչ ունէր:

ԱՊՏԱԼ-ԱՍԱՐ s. Աբարա-Սար:
ԱՊՏԱԼԵԱՆ Յ. և Ս. տե՛ս Աբսալտան:
ԱՊՏԱԼԵԱՆ ՍԱՐԳԻՍ բանաստեղծ, գրակա-
նութեան ուսուցիչ Նիկոսիոյ (Կիպրոս) Մելքոն-
նեան հաստատութեան մէջ, կեղծ անունն է
Վահէ Վանեան: Տե՛ս Վանեան:

ԱՊՏԱԿ. «երգիծական, քաղաքական հանդէս»
(միամսեայ բերք) Հնչակեան Կուսակցութեան,
յոյս տեսաւ Աթէնք 1894—6ին, յետոյ Լոնտոն
1897ին: Հրատարակեան Հմ.:

ԱՊՏԱԿ. «ազգային, գիտական, երգիծական
չարաթաթերթ» յոյս տեսաւ 1925ին Սոֆիայի մէջ:

ԱՊՏԵԱՆ ՀԱՅԿ, ուսումը առած է Միացեալ
Նահանգներու մէջ, 1931ին Հարվըրթի համալ-
սարանէն վկայական կը ստանայ Պսալաուր Ար-
ուեսից բարձր պատիւներով:

ԱՊՏԻԻ-ԱՋԻՋ Ա. Օսմանեան կայսր 1861—76:
ԱՊՏԻԻ-ՀԱՄԻՏ Ա. Ղազի, Օսմանեան կայսր
1773—1789:

ԱՊՏԻԻ-ՀԱՄԻՏ Բ. Սուլթան Թուրքիոյ, որդի
Սուլթան Մէհմետի, ծնած է 1842ին և գահ բարձ-
րացած 1876ին: Համիտ եղած է արիւնարբու բըռ-

նակալ մը, մանաւանդ անոր սարքած 1895-1896ի հայկական Զարդերը իրեն համար գէշ համբաւ մը չինեցին և շատեր զինքը կոչեցին Կարմիր Սուլթան: 1908ին իր թագաւորութեան օրով յայտարարուեցաւ Օսմանեան Սահմանադրութիւնը: Բայց 1909ին Մարտին ուզեց խափանել խորհրդարանը, որուն հետեանքով նոյն տարւոյ Ապրիլին սկիզբը դահազուրկ եղաւ և աքսորուեցաւ Սելանիկ: Մեռաւ Ընդհ. պատերազմի ընթացքին:

ԱՊՏԻԻԼ-ՄէձԻՏ Ա. Ղազի, Օսմանեան կայսր 1839—1861:

ԱՊՏՈՒԼԼԱՆ ԳԵՆՐԳ, Ծնած 1839ին Օրթաքէօյ, որուն Լուսաւորչեան դպրոցը յաճախած է. յետոյ Վենետիկի Ռափայէլեան, դասընկեր ունենալով Մ. Մճէմեան, Թ. Թէրզեան, Ս. Թ՛ղլեան, և ուսուցիչ՝ Հ. Ալիշան: Գեղարուեստական ճիւղի մէջ միշտ փայլուն հանդիսացած է: 1858ի ընթացաւարտ Պոլիս դարձին՝ նուիրուած է լուսանըկարչական ասպարէզին, անընդմիջ արարար մինչև 1898 թուականը: Այդ պտեններուն՝ սկզբնական վիճակի մէջ կը գտնուէր նոյն արուեստը. 3 եղբայր (Վիչէն, Յովսէփ և Գէորգ) եռանդեամբ աշխատելով՝ իրկատարելութեան հասցուցին զայն: Մարաքաղաքս այցելող թագաւորներ, թագուհիներ, իշխանազուհիք, աւագանիք, զրօսաշրջիկներ եւն. ասոնց աշխատանոցը պատրաստել տուած են իրենց կենդանագիրներն, իրր լաւագոյնները տեղացի լուսանկարիչներուն, պատուելով զանոնք շքանշաններով:— Իր զբաղմունքը չէր արգիլեր իրեն որ ինք աղզային գործերով ալ զբաղի: Գէորգ Հայաստանի հարստահարութեանց առթիւ հրատարակած է կարգ մը յօդուածներ թէ՛ արտասահմանի և թէ՛ տեղական եւրպ. թերթերու մէջ: Անդամակցած է նաև աղզ. մէկ քսնի կարեւոր ընկերութեանց:— 1874ին Մօրթմանի՝ Հայաստանի բեւեռագիր արձանագրութեանց մասին գերմ. երկը համառօտելով հայերէնի թարգմանած ու հրատարակած է. գոյացած հասցիքը (100 ոսկի) նուիրելով հեղինակին, իրր զոյգն փոխարժէք անոր բաղմամեայ տքնութեան: Իր աղզային գործունէութեան փայլուն շրջանը կը համարուի երբ Ռուսեթուրք պատերազմը ծագեցաւ և ինք հրատարակեց զանազան քաղաքական յօդուածներ ֆրնս. թերթերու մէջ, մանաւանդ նոյն ատեն Պոլիս գտնուող եւրպ. թղթակիցներու պարզելով Հայաստանի թշուառ վիճակը, նոյն իսկ նիւթապէս վարձատրելով զօմանս, մղուած տարու համար հայկական գաւառներու բարենորոգման գործին, առանց միտքէն անցընելու թէ օր մը այս ամէն ջանքերն ու

զոհողութիւնք պիտի յանգէին Պերլինի 61րդ յօդուածին... Գ. Ապտուլահի պառնասեան գրիչէն ելած են բառերն այն խանդավառ երգին զոր ատենօք պոյսահայ ուսանողութիւնը կը սիրէր երգել հանդիսաւոր օրերու: Ի Միուրիւն Հայոց խորագիրն ունի այդ երգը: (Թեոդիկ՝ «Ամենուն Տարեցոյց»ը 1912 էջ 255): Հ. Նայի Տայեցիի գրած րնդարձակ կենսագրականքսե՛ս «Բազմավեպ»ի մէջ, 1929 էջ 72 եւայլն:

ԱՊՏՈՒԼԼԱՆԵԱՆ Ռափայէլ, հողագէտ 1920ին՝ Արմաշի մէջ:

ԱՊՏՈՒՀԵՐԻ կամ Աջու-Տանիր այլազգարնակ գիւղ Պարրերդու՝ համանուն վիճակի մէջ:

ԱՊՏՈՂԼՈՒ, գղ. Ատանայի արեւելահողմը, ձիհան գետին աջ եզրին վրայ: Ունէր 80 տուն հայ և թուրք բնակիչ: Եկղ. Ս. Գէորգ: Աղզային վարժարանին մէջ 60 մանչ կ'ուսանէին:

ԱՊՐԱԿԻ կամ Ամբակից, հին գիւղ Գուգարաց Տաշիր գո.ին մէջ:

ԱՊՐԱԿՈՒՆԻՍԻ կամ Ապրակունիք, հին գիւղ Սիւնեաց Երնջակ գո.ի, մեր պատմիչք ԺԳ. դարէն միայն կը յիշեն գիւղս. սա ես Միարանողաց ձեռքն անցած է: Ս. Գէորգ եկեղեցին 1868ին հիմնովին նորոգուած է: Գիւղիս վանքը ևս Ս. Գեորգ կը կոչուի, զոր Մխիթար Ապարանեցի Վերին վանք կը կոչէ: ԺԷ. դարուն սկիզբը 12 միաբաններ ունէր վանքը, իսկ գիւղը 100 տուն բնակիչ: Երթալով նուազած է բնակչաց թիւը, և ըստ Ղազար Ջահեցի կաթողիկոսին՝ մեծ մասը Պարսից կրօնքին դարձած, միւս մասն ալ գաղթած են:

1900ին Ապրակունիք ունէր 75 տուն զուտ հայ բնակիչ, որոնք Սալմաստէն և ուրիշ կողմերէ զաղթած են: 1868ին երբ եկեղեցւոյ նորոգութեան ժամանակ հիմերր փորեցին՝ Ս. Աստուածածնայ կճեայ արձան մը կը գտնուի ՇԱ. (1052) թուականով: Գիւղիս մօտ կայ Ս. Յովհաննու մատուռ մը:

Ապրակունիք՝ ըստ 1900ի աշխարհագրական բաժանման, նախիջեան գո.ի երրորդ վիճակը կը կազմէր, ունէր 38 գիւղ, որոնց 10 գիւղը միայն հայարնակ էր 5600 բնակչով, օտարք՝ 11 հազար:

ԱՊՐԱՆԻՑ ՎԱՆՔ, իրր Կոտերոյ գիւղ կը յիշուի ձեռագրաց իշխատակարանաց մէջ:

ԱՊՐԱՆՈՒՑ ԶՈՐ, կը յիշուի Շիրակ գո.ի Հոռոմոսի վանքին արձանագրութեանց մէջ:

ԱՊՐԱՆՑ Տ. Ապրակն:

ԱՊՐԱՆՔ կամ Ապրակն գղ. Բարձր Հայոց Դերջան գո.ի մէջ: 1900ին ունէր 50 տուն հայ բնակիչ, եկղ. Ս. Փրկիչ. մօտն է Ծակքարի Ս.

Դաւիթ վանքը: Ազգ. վարժարանին մէջ 30 մանչ կ'ուսանէին:

Ա.ՊՐԱՆՔ գղ. Բալուէի, ունէր 30 տուն զուտ հայ բնակիչ, եկզ. Ս. Աստուածածին:

Ա.ՊՐՆՍԵԱՆ Գարեգին, Ռուսաց հիւպատոս եղած է Ի. դարու սկիզբները Իրանի Խորասան նահանգի մայրաքաղաք Մաշադի մէջ:

Ա.ՊՐԻ, գղ. Տուրուբերանի աշխատանքներին Պուլանըրի գաւառակի, 1900ին 90 տուն բնակիչ ունէր, կէսը հայ, կէսը քուրդ: Հայերը ունէին անշուք եկեղեցի մը: Գիւղիս շէխերէն միոյն մէջ քար մը կար, որ իրր թէ գերեզմանը եղած ըլլայ այն հովիւին՝ որ Մանեայ այրին մէջ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինը գտաւ և թորդան տւանին մէջ թաղեց, այս քարին ուխտի կ'երթան թէ՛ հայերը և թէ՛ քուրդերը:

Գիւղիս արեւիկեան կողմը կայ Կարմիր վանի ըսուած աւերակ մը, ուր Հայերը ուխտի կ'երթային, կը կարծուէր թէ Թիլ աւանն է: (Միլախուրեան ցկարագր. Ուղ. Գ. 87—9):

Ա.ՊՐՈՅ կամ Ապրո Առաքել (1832-1875) եգիպտահայ, սերած Իզմիրէն, որդի Պետրոս Ապրոյի, ծնած 1832ին և բարձրագոյն ուսումը ըրած Գերմանիոյ մէջ, որուն լեզուին հմուտ էր և տեղեակ ֆրանսերէնի ու անգլիերէնի: Պաշտօնավարելէ ետք խալի Իսմայիլ փաշայի քով՝ մտած էր Մեծն Նուպար փաշայի օրով եգիպտոսի Արտաքին նախարարութեան մէջ 1870—79 տարիներուն, որ երբ եգիպտական կառավարութեան կողմէ Եթովպիոյ վրայ գնաց՝ հայազգի երիտասարդ քաղաքագէտն այ 1875ին եգիպտոսի փառքին համար զոհուեցաւ:

Ա.ՊՐՈՅ Սահակ (1823—1900): Սահակ Ապրոյ Ապրոյ Չէլէպիի ծանօթ գերդաստանէն սերած է: Ծնած Չմիւռնիոյ մէջ 1823 Սեպտեմբեր 15ին:

Երիտասարդ հասակին Պոլիս երթալով՝ մտած է Բ. Դուռ և անուանուած թարգմանութեանց զիւանի անդամ: 1852 Փետրուար 28ին՝ պաշտօնակից Գրիգոր Մարկոսեանի հետ կը սկսի հրատարակել «Նոյեան Աղաւնի» շաբաթաթերթը, որ կը տեւէ մինչև 8 Օգոստոս 1853:

Արտաքին Գործոց նախարարութեան մէջ կարեւոր պաշտօններ վարելէ ետք, Այի փաշայի եպարքոսութեան օրով կայսերական զիւանին Ա. թարգման և յետոյ Արտաքին Գործոց ընդ. քարտուղար կ'անուանուի:

1876ին Ֆիլիպէի արտասովոր յանձնաժողովի անդամ, յետոյ նախագահ: Յետ այնու քանի մը կարեւոր պաշտօններ վարելէ ետք կ'ընտրուի Անդամ պետական խորհուրդի, ուր կը մնայ ցմահ 1900:

Ազգային գործերու մէջ այ կարեւոր պաշտօններ վարած է և թուրքերէնի թարգմանած է Մեծն Պետրոսի և Վօլթերի «Կարոյու ժի.»ի պատմութիւնները, Ժ. Պ. Սէյի Բաղաւական Տնտեսութիւնը, Մաքիա Վէլլիի Իսխանը, յետոյ Բիթաթ փաշայի հետ հրատարակած է նաև քաղաքական անձերու վրայ ուսումնասիրութիւններ: (Վ. Չարգարեան «Յիւսասկարան» Գ. Թեոդիկ՝ «Ամեցուն արեգոյցը 1912 եջ 368»):

Ա.ՊՐՈՅԱՆ (Ա.ԲԲԱ.ՀԱՄԵԱՆ) Հ. Եփրեմ Ծ. վրդ. Մխիթարեան միաբան, ծնած Ի Կաղաթիա (Անգարա) 1869 փետր. 21ին: Նախնական ուսումը Պոլսոյ Լուսաւորչեան և Մազըզ Աղաճի Մխիթարեան վարժարաններու մէջ ստանալէ ետք՝ Վենետիոյ Ս. Ղազարու վանքը զրկուած է 1884ին ու աշակերտած Հ. Մկրտիչ Վ. Եանուղեանի ու Հ. Թորոսեանի: 1892ին Գեր. Իգնատիոս Կիւրեղեան Արքեպ. էն քահանայ կը ձեռնադրուի և կը նուիրուի ուսուցչութեան: Վանքին մէջ վարած է փոստնօրէնի և տնօրէնի պաշտօններ և միաբանութեան ընծայած է քահանայական դաս մը: Ուսումնապետի պաշտօն վարած է Վենետիոյ Մ. Ռաֆայէլեան վարժարանին մէջ և խորհրդական ու քարտուղար վանքի՝ Վարչական Ժողովոյ:



1912—1926 Պոլսոյ Իերայի Մխիթարեան վարժարանի տնօրէն, ու յետոյ մեծաւորի պաշտօն վարեց մինչև իր մահը՝ որ յանկարծակի տեղի ունեցաւ 1935 Յունուար 5ին:

Հ. Եփրեմ թարգմանութիւններով և ուսումնասիրական յօդուածներով աշխատակցած է «Բագմավէպ»ի և Պոլսոյ «Նոր Լուր»ին, «Ժամանակ»ին ու Ս. Գարամաճեանի «Գրպանի Տարեցոյց»ին:

Առանձին հատորով լոյս տեսած են իր թարգմանած Թէնի «Վենետիկ»ը և Բլիշ արլա-Գրանտի «Տիրերիսի նաւավարն» պատմական վէպը: Շատ մը յօդուածներ ստորագրած է Խուրից Հայկազն կեղծանունով: Անտիպ և անաւարտ կը մնայ Մուրատ Ռաֆ. վարժարանի աշակերտաց և Վենետիոյ Մխիթարեան Հարց կենսադրութիւններու հաւաքածոն, որուն վրայ շատ տարիներ աշխատած է:

Հ. Եփրեմ Ա.ՊՐՈՅԱՆ

Ա.Ջ.Ա.Բ.Ա.Չ կամ Աջբեշ. հին գիւղ Սիւնեաց Զորք գաւ.ի, որուն վրայ յարձակելով Տէր Աւետիք՝ մէջի բոլոր այլազգիները կոտորեց: Բնակիչք՝ այլազգիք:

Ա.Ջ.Ա.Ն.Յ, գղ. Կարնոյ Սոյեր դաւառակի, 30 ա. հայ ունէր և 30 ա. մասմեաական: Հայերը ունէին Ս. Աստուածածին եկղ. մը և վարժարան: Ա.Ջ.Ա.Ա.Պ.Ն.Ղ.Ն.Ս.Ն սոսմ տե՛ս Աջպահեաւս:

Ա.Ջ.Ա.Ռ.Ա.Գ.Ա.Ի.Ի.Թ հին գղ. Սիւնեաց Վայոց-ձոր գաւ.ի:

Ա.Ջ.Ա.Ռ.Բ.Ե.Կ տե՛ս Աջաուերեկ վանք:

Ա.Ջ.Բ.Է.Ջ տե՛ս Աջաբաջ:

Ա.Ջ.Ի.Թ, աւերակ գիւղատեղի Գուգարաց աշխատի մէջ, Հաղարտայ վանքին մօտ, Ամիր-Չաքար լեռան ստորոտը՝ Տակաւին մնացած են եկեղեցւոյ և կրկին թաղերու աւերակները: Ինչպէս նաև հին գերեզմանները՝ անասչ տապանաքարերով:

Ա.Ջ.Ո.Գ.Բ հին գղ. Սիւնեաց Վայոց-ձոր գաւ.ի

Ա.Ջ.Պ.Ա.Հ.Ն.Ա.Ն տե՛ս ՅԱ.Ի.Ե.Լ.Ո.Ի.Ա.Ն.Թր:

Ա.Ռ.Ա.Չ, սահաւարնակ գիւղ Վանայ Մասմեան վիճակի մէջ, քարուկիր եկեղեցին Ս. Սարգիս:

Ա.Ռ.Ա.Ա, գղ. Ախայցխայի գաւ.ի մէջ, 52 տուն բնակիչ ունէր 1900ին:

Ա.Ռ.Ա.Կ, գիւղ, կը յիշուի Առաքել պատմչի (ԽԸ) Աւետիս նահատակի պատմութեան մէջ:

Ա.Ռ.Ա.Կ.Լ.Ի տե՛ս Էրեկլի:

Ա.Ռ.Ա.Գ. Առաղս կամ Արաղ, գղ. Տարօն գաւ.ի Մշոյ արեւելիկողմը՝ ձորագետոյ մը բերանը: Զորք և գետակը կը կոչուին Աարձու, որ դէպի Սասուն կ'երկարի Ըստ Յովնան Մամիկոնեան պատմչի՝ «Առ գաղսէն առջ եկած է Առաղ անունը: Հին տուներու աւերակները կը վկայեն թէ առնօք աւելի շէն եղած է աւանս: 1900ին 100 տուն հայ բնակիչ ունէր, եկղ. Ս. Սարգիս:

Ա.Ռ.Ա.Գ.Ս, աւան կը յիշուի 604ին Յովն. Մամիկոնեան:

Ա.Ռ.Ա.Ն կամ Ա.Ռ.Նայ, անունս կը յիշուի Աղճնեաց Խերխեթք գաւ.ի մէջ:

Ա.Ռ.Ա.Ն Սիսակեան, «այլ իմասուն եւ քաջ», կողմնակալ Վաղարշակ Ա.ի օրով, կը կարծուի թէ ասիկց սերած են Ուտեցիք, Գարդմանացիք, Ծովդէացիք և Գարգարացիք (Մ. Խորեն.):

Ա.Ռ.Ա.Ն.Ա.Յ ԱՇԽԱՐՀ տե՛ս Աղուանք (տե՛ս Խաչիկ Վրդ. Գատեանի «Առան երկիր կամ աբխարն» յօդուածը (Արարս 1896 էջ 233):

Ա.Ռ.Ա.Ն.ՉԱՐ Ամասունի ընկեր Ս. Վարդան զօր. Մամիկոնեանի (452):

Ա.Ռ.Ա.Ն.ՉԱՐ գրական անուն Սիսակ Գույումեանի ծն. 1877ին, որդի Պաղտատցի մեծահարուստ Քե-

րովրէ Գույումեան վաճառականի, Սանասարեանի շրջանը աւարտելէ ետք Յիւրիսի համալսարանը կը մտնէ: Ատանայի ազգ. վարժարանին տնօրէն կը կարգուի, ուր կը վախճանի 1914ին: 1908ին առաջ տնօրէն եղած էր նաև Աղեքսանգրիոյ վարժարանին Առանձարի երկիրն են փրկիչները և ամենայնզոգ վիպակներու հաւաքածոն՝ վշտի նիւթով:

Ա.Ռ.Ա.Ն.ՉԱՐ Միխայէլ տե՛ս Մարգարեան Միխայէլ Առանձար:

Ա.Ռ.Ա.Ն.ՉԱՐ ՄՈՎԿԵ, Մոկաց աշխարհի հին գաւառներէն մին, որուն կը համապատասխանէ այժմեան Մոկի վիճակը:

Ա.Ռ.Ա.Ն.ՐՈՏ կամ ԱՐԱՆՈՏ, Ուտի նահանգի հին գաւառներէն մին:

Ա.Ռ.Ա.Պ.Ա.Ճ.Ն.Գ. տե՛ս Կառավարեց Գեորգ:

Ա.Ռ.Ա.Պ.Ա.Ն տե՛ս Առպան:

Ա.Ռ.Ա.Պ.ԱՐ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒ, այսպէս կոչուած է ի հնուց Այրարատայ Արագածոտն գաւ.ի մէջ, Վաղարշապատէն դէպի հիւսիսային արեւելք և մինչև Օշական եղած քարուտ և աւաղուտ երկիրը:

Ա.Ռ.Ա.Պ.ԱՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ կամ Զուարթնոց եկեղեցի, վերոյիշեալ Վաղարշապատու Առապարի մէջ, էջմիածնէն կէս ժամ հեռու կը գտնուէր հռչակաւոր պատմական եկեղեցիս: Ըստ աւանդութեան Տրդատ թգ. այստեղ ընդառաջ ելաւ Ս. Գրիգորի և այդ յիշատակին Ներսէս Գ. շինող



Զուարթնոց եկեղեցւոյն աւերակները

կթղ. կառուցանել տուաւ հոյակապ եկեղեցիս, որ Սերէոս պատմչին գրածին համեմատ, նախ կոչուեցաւ Երկնաւոր Զուարթնոց և ի վերջոյ՝ Ս. Գրիգոր: Մեր պատմիչք հիացումով կը յիշեն եկեղեցիս: Ըստ Ասողկայ Ժ. դարուն կործանած ըլլալով եկեղեցիս՝ Գագիկ Ա. թգ. նոյն ոճով Ս. Գրիգոր անուամբ տաճար մը շինեց Անիի մէջ:

Ներսէս Շինող, եկեղեցւոյս չուրջը պարսպով պատեց և մէջը կոփածոյ քարերով բնակարաններ կառոյց իրեն և ուրիշներու համար, Քասաղ գետէն շուր բերել տուաւ: Ս. Էջմիածնի միաբան Հ. Սաչիկ Վ. Դատեան 1900ին պեղումներ կատարեց և երևան հանեց չորս քանդակազարդ գեղեցիկ արձիւներ, խոյակներ, սիւններու բեկորներ, որոնք որոշ դադափար կու տան եկեղեցւոյ հոյակապ շինութեան Կան հայ, ասորի յոյն և վրացի արձանագրութեանց հետքեր, յայտնուած է մոզայիկ խաչի մը մասը և սեպածե 47 սող արձանագրութիւն: (Տե՛ս Հ. Ալիբաև «Այրարտ» 244—6, «Արարտ» անագիր Լ. Գ. Տարի՝ էջ 380—1, «Բագմավեպ» 1902՝ էջ 20—24 ուսկից քաղած է Էջմիածնէն):

Ա.Ռ.Ա.Ջ.Ա.ՋՈՐ, գղ. Արձախի Պարզկանք գա. ի. Զիւլէթ սարի ստորոտը Բն. ամբողջ հայ, 1900ին 1500 բնակիչ ունէր, եկղ. Ս. Աստուածածին՝ կառուցուած է 1668ին: Գիւղէս դէպի Մժակահող տանող ճամբուն վրայ կան մարդաշափ բարձրութեամբ երկու խաչքարեր, կանգնուած Սեբ անուն անձէ մը ՈԶԶ (1238) թուին: Գիւղիս սահմանները կան ուխտատեղիներ և հին գերեզմանատուներ: Ուխտատեղիներն են Կարմիր Եկեղեցի, Նահապակ, Անապատ (Բարխուբարեան՝ «Արցախ» էջ 185—9):

Ա.Ռ.Ա.Ջ.Ա.Մ.Ա.Ր.Տ, օրաթերթ (Հ. Յ. Գաւախկոյրեան) «Ա.Պատմութիւն»-ի և «Բագին»-ի շարունակութիւնը, տպ. Պոլիս՝ 1912ին:

Ա.Ռ.Ա.Ջ.ԻՆ ՀԱՅՔ, ի հնումն Փոքր Հայոց երեք բաժանումներէն մին՝ այսպէս կոչեց մեր Արամ քաջ նահապետը: Այս մասին գլխաւոր քաղաքն էր Կեսարիա:

Ա.Ռ.Ա.Ջ.Ն.Ա.Գ.Լ.ՈՒՍ, լեռ Գուգարաց աշխարհին մէջ, Հաղրատ վանքի մօտ:

Ա.Ռ.Ա.Ջ.ՆՈՐԴ Ա.Ռ.ՈՂ.ՋԱՅԱՆՈՒԹԵԱՆ, ամսական տետր, տպ. Կ. Պոլիս 1896—98:

Ա.Ռ.Ա.Ջ.ՆՈՐԴ Վ.Ա.ՃԱՌ.Ա.ԿԱՆԱՅ, ամսաթերթ, խմբագիր տնօրէն՝ Ժիրայր Շիրակացի (Սիմեոն Զեօմիկեան), տպ. Կ. Պոլիս՝ 1896—1901. լոյս կը տեսնէ որպէս յաւելուած «Հանրագիտակ»-ի:

Ա.Ռ.Ա.ՍՏՈՄ ԳՆՈՒՆԻ, ընկեր Վահանեանց 481ին: Ա.Ռ.Ա.Ի.Ն, յունարնակ գիւղ Լեռնային Կիլիկիոյ, ունի Ս. Թէոդորոս եկղ. մը:

Ա.Ռ.Ա.Ի.Ն, թգ. Հայկազն, որդի Վահագնի (493—473 Ն. ք. Ք.):

Ա.Ռ.Ա.Ի.Ն Աղբիւրակցի, Վահանեանց օրով 481ին:

Ա.Ռ.Ա.Ի.Ն Անձեւացի, Ս. Ղևոնդեանց օրով 454ին:

Ա.Ռ.Ա.Ի.Ն հաղարապետ Ս. Մեսրոպայ օրով 390ին:

Ա.Ռ.Ա.Ի.Ն Վանադեցի, ընկեր Վարդանանց 450ին:

Ա.Ռ.Ա.Ի.Ե.Լ.Ա.Գ.Ա.ՇՏ, դատ մը Սիւնեաց Մզուկ գա. ի մէջ, Յուրայ վանքի մօտերը:

Ա.Ռ.Ա.Ի.Գ.Ե.ԱՆՔ կամ Առուեղեանք, նախարարական տոհմ մը Հայոց Մեծաց մէջ, Ալաններէ սերած:

Ա.Ռ.Ա.Ի.ԵՆԱՆՔ, հին նախարարական տոհմ, սերած Վահագնի Առաւան օրովէն:

Ա.Ռ.Ա.Ի.ՏՈՒՅ ԳԻՒՂ, Այրարատայ Մաղկան գա. ի մէջ, Շահապիվանի մօտ:

Ա.Ռ.Ա.Ի.ՕՏ, շաքաթաթերթ, տպուած ժրնէլ 1909—1910:

Ա.Ռ.Ա.Ի.ՕՏ, «գրական, հասարակական և դիտական շաքաթաթերթ» (Սօրիալիստ յեղափոխականների օրգան), խմբագիր՝ Սահակ Յարութիւնեան, տպ. Բագու 1909:

Ա.Ռ.Ա.Ի.ՕՏ, «Լրաղիր՝ ազգային և քաղաքական շաքաթաթերթ» (Վերակազմեալ Հնչակեաններու), աէր և տնօրէն Միսակ Սուրեան, խմբագրապետ նոր շրջանի Երուանդ Անդրէասեան (1911էն), տպ. Կ. Պոլիս 1909—1922:

Ա.Ռ.Ա.Ի.ՕՏ, «գրական, հասարակական, քաղաքական և անտեսական շաքաթաթերթ», խմբագիր՝ Հ. Պանիրեան, տպ. Թաւրիզ 1909—1912:

Ա.Ռ.Ա.Ի.ՕՏ, շաքաթաթերթ, Արտօնաաէր և պատասխանատու՝ Հ(այկ) Բագիլ, տպ. Թեհրան 1919—1920:

Ա.Ռ.Ա.Ի.ՕՏ ՆՈՐԱ.ՀԱՍՆԵՐՈՒ, շաքաթաթերթ, տնօրէն՝ Մ. Սուրեան, խմբագիր՝ Գր. Գալուստեան, տպ. Պոլիս 1919—1920:

Ա.Ռ.Ա.Ի.ՕՏ շաքաթաթերթ, հրատարակութիւն Թուրք և Հայ Միութեան, տպ. Կ. Պոլիս 1924: (Ն. Գասպեան՝ «Բագմ». 1937 էջ 204):

Ա.Ռ.Ա.ՔԵԱ.Լ.Ք, վանք, ահա Առաքելոց վանք:

Ա.Ռ.Ա.ՔԵԼ կամ Առաքել Վաղարշապատեցի, կթգ. Էջմիածնի, սա նախապէս 1575ին՝ Թաղէոս Բ. ի օրով փոխանորդ-կաթողիկոս ընտրուեցաւ, (1577ի երկու յիշատակարանաց մէջ կը յիշուի) և երբ Թաղէոս վախճանեցու (1584ին՝ ըստ Չամչեանի, ըստ այլոց 1586ին) ինքն եղաւ Էջմիածնի կաթողիկոսը: Ըստ ժամանակակից պատմաց՝ Առաքել «այր զգաստ և խոհական, բարեսէր և պահեցող», ի սկզբան յանձն չուղեց առնել կաթողիկոսական աթոռին վրայ նստիլ, նկատի ունենալով ժամանակի դառնութիւնը, բայց մահամերձ Թաղէոս կթ. ի և միաբանից ստիպման վրայ զիջաւ և հաղիւ երկու տարի կաթողիկոսութիւն ընելով իր անզը ձեռնադրեց Դաւիթ Վաղարշապատեցին և ինքը վանք մը առանձնացաւ ու հոն մնաց մինչև մահը:

Ա.Ռ.Ա.Քել, պատրիարք Երուսաղէմի 1218ին կը յաջորդէ Արրահամ պատրիարքին, որուն կենդանութեան ժամանակ հրովարտակաց մէջ կը յիշուին երկուքին անուններն այլ Ասոր օրով է հաւանարար, ըստ պատմութեան Յովհաննէս Գառնեցւոյ, Ս. Յակոբայ վանուց մէջ Ասարի 7ի Աւետման տօնին պատահած պատկերաց հրաշքը, զոր կը յիշեն Գիրք Թղթոց և Կիրակոս (Աղաւունքի՝ «Միաբանք» էջ 24):

Ա.Ռ.Ա.Քել, կթղ. Աղուանից, հայ պատմագիր գործն անձանթ, ապրած է ԺԵ. դարուն: 1494 թուին ի Լեհաստան գրուած ձեռագրի յիշատակարանի մը մէջ կը յիշուի:

Ա.Ռ.Ա.Քել, վրդ. պատրիարքական փոխանորդ, որուն ի վայելումն կը գրէ Յակոբ պարք. Նալեան (1741—9) իր «Ճառ վասն բղխման Հոգւոյն սրբոյ» երկը:

Ա.Ռ.Ա.Քել, եպ. Սիւնեցի, տե՛ս Սիւնեցի Առաքել: Ա.Ռ.Ա.Քել, եպ., առաջնորդ Ս. Ուխտին Գէորգայ, կը յիշուի 1433ի յիշատակարանի մը մէջ:

Ա.Ռ.Ա.Քել, եպ., ծաղկող, ապրած պէտք է ըլլայ 1442էն առաջ. որովհետեւ իր ծաղկած Աւետարանը (անթուական)՝ կը գտնուի Անդրէասէն՝ 1442ին: (Անառեան՝ «Յուցակ Ձեռագրաց Նոր Պայաղիսի. «Հանդես Ամսօրեայ» 1910 էջ 212):

Ա.Ռ.Ա.Քել, եպ. Խարբերդու կը յիշուի Նիկոսիա գտնուող Մաշտոցի մը յիշատակարանին մէջ, գրուած 1468ին Խարբերդ քղ. Սիւնամուր թագին մէջ, «յեպիսկոպոսութեան տէր Սիմէոնի և տէր Առաքելի»:

Ա.Ռ.Ա.Քել, եպ. առաջնորդ Արզնի Բարձրահայեաց վանքին 1579ին՝ 1505ին գրուած Աւետարան մը կը ստանայ կը յիշուի նաև 1593ին գրուած Մաշտոցի մը յիշատակարանին մէջ:

Ա.Ռ.Ա.Քել, եպ. Թոմարդայի, կը յիշուի 1632ին գրուած Ծարականի մը յիշատակարանին մէջ, նոյնպէս 1638ին, երկար ընդմիջումէ ետք 1661ին և 1662ին: Սա եղած է վանահայր առաջնորդ Թոմարդայի Ս. Աստուածածնայ ուխտին: Իր մասին (կը գրէ Ալլոյանեան) կենսագրական ծանօթութիւններ կու տայ Գր. Դարանաղցի, որ «նա է այժմոյս առաջնորդ Կեսարիոյ երկրին և վանուցն» կ'ըսէ, անշուշտ սխալ տեղեկութեան մը վրայ հիմնուած: Այս Առաքել վրդ.ը եղբորորդին էր Մելքիսեղ անուն չափազանց տգէտ արեղայի մը Ամիթի կողմերէն, մականուանեալն Հերիսա (Դարանաղցի, էջ 421):

«Այս վրդ.ը Սեպուհ լերան Ս. Լուսաւորիչ վանքը գտնուած ատեն Գրիգոր Դարանաղցի ալ կը գտնուէր հոն (1590—1597) և ան հոն էր,

երբ ինք մեկնեցաւ աշակերտութեան գնաց Դարանաղցի կ'ըսէ թէ անիկա երկու եղբորորդիք ունէր, մին Առաքել անուն՝ լաւ հանճարեղ և իմաստուն, որ էր ինձ հաւասար ի հասակին» ուրեմն ծնած էր 1576ին:...

«Առաքել և Մկրտիչ կ'երևայ թէ ծրագրած էին հետևիլ Դարանաղցիին, «բայց չէին կարացել կեալ անդ, և ելեալ գնացել էին ի Տիւրիկէ ի Վօռուի վանին» ուր Մելքիսեղեկ վրդ. Հերիսա «առաջնորդ էին եղեալ և ուր աւագակ քրդերն սպաննել էին զեղկեկին (էջ 421) «Ասկէ յետոյ» երկու եղբորորդիքն զարգացան և լաւ մարդիկ եղին» կ'ըսէ պատմիչը, մինն որ Առաքելն էր Եպիսկոպոս եղեկ ձեռնադրեալ և նա է այժմոյս առաջնորդ Կեսարիոյ... և միւս եղբայրն երէց և քահանայ» (Դարանաղցի էջ 421):

«Դարանաղցիի այս տեղեկութիւնները կը լուսարանեն Առաքել եպ.ի խոնարհ ծագումը և անոր զարգացումը»: (Ալլոյանեան «Հայ Կեսարիա» էջ 970):

Ա.Ռ.Ա.Քել (եպ.) Պարոնաէր, առաջնորդ Ս. Աստուածածին անապատին (1640)ին կը յիշուի յիշատակարանի մը մէջ):

Ա.Ռ.Ա.Քել, եպ. Երեւանցի, 1669ին Իտալիոյ Լուքա քաղաքը ուխտի կ'երթայ Ս. Դաւիթ Հայկազն գերեզմանին:

Ա.Ռ.Ա.Քել, եպ. գրիչ Աւետարանի, որդի Սոճոնի և Արևիկի 1612ին = Ռ.Վ.ին, (պէտք է ըլլայ Ռ.Վ. կամ ՌեՍ, այսինքն 1572 կամ 1592, որովհետեւ ՌեՎ (1605) քուին կը նորոգուի ընկուզիկ անապատին մէջ): (Սիւրեհեան ցուցակ Ձեռագրաց Հայկի էջ 31—2):

Ա.Ռ.Ա.Քել, վրդ. Բաղիսեցի, Պոսեցի ալ կը կոչուի Բաղէչի Պոս գիւղին մէջ ծնած ըլլալուն, ԺԵ. դարու սկիզբը կամ աւելի առաջ ծնած և այդ դարու կիսուն մեր այժմոս մատենագիրներէն մին եղած է: Ըստ յիշատակարանաց՝ Առաքելի հայրն է Ներսէս, իսկ մայրը՝ Ղութլու Մելիք: Առաքել վրդ. Բաղիսեցին աշակերտ նշանաւոր Գրիգորի Սլաթեցի Ծերենց վրդ.ի կը սկսի Չմկածագի (Յազնիայ գո.ի) նորաչէն երկայն ընկուզեց վանքին մէջ, որուն առաջնորդն է թերևս չիւնողը:

Բացի իր գրական գործերէն որոնց մեծ մասը ոտանաւոր գրուած են՝ լսուած է բաւական թիւով գիտնական աշակերտներ: Բաղիսեցին է որ 1431ին «նորաչէն երկայնընկուզեց անապատ»ին մէջ՝ որ յանուն Ս. Աստուածածնի և Ս. Յովհաննու Կարապետի՝ կը շարագրէ «Ճառ Ծննդեան և Յայտնութեան Տիառն մերոյ և գովեստ Տի-

բամօր Աստուածածնին»։ 1434ին Առաքել Բազիլեցին կը շարագրէ «չափաւ»՝ Յովատափայ պատմութիւնը, նոյնպէս այդ թուին «ոտնաչափ» կը շարագրէ «Պատմութիւն Եօթն Իմաստասիրաց»ը։ Յաջորդ տարին 1435ին կը գրէ «Քառասնօրեայ գալստեան» ճառը։ Առաքել Բազիլեցին է որ կը գրէ 1455ին «Ողբ մայրաքաղաքի Ստամպոլու և վասն գալստեան ֆրանկաց ազգին և ազատել զաշխարհս Հայոց»։ Այս գրութիւնը որ կը սկսի.

«Արդ ամենայն ազգ եւ ազիցն

Ողբան զեզ քաղաք Սքսքոլ»՝

պ. Զօպանեան 1901ի (թիւ 9) «Անահիտ»ին մէջ ի լոյս ընծայեց։

Առաքել տաղաչափած է հայ եկեղեցւոյ մեծ դէմքերու պատմութիւնը. գրած է իր վարժապետին Գրիգոր Սլաթեցւոյ նահատակութեան պատմութիւնը, ունի նաև բաւական թիւով քերթուածներ և դանձեր որոնք ցրուած են տաղարաններու և դանձարաններու մէջ։ Հիները, (Հ. Գ. Զարպհանայեան և Հ. Ալիշան), կը գրեն թէ «Երկու Առաքելներու (Սիւնեաց և Բազիլեցւոյ) գործերը (հեղինակութիւնք) չիթիին իրարու հետ»։ Այսօր սակայն դիւրին է Բազիլեցիին քերթուածները զատել Սիւնեցիին գործերէն որոնք արդէն լոյս տեսած են 1913ին։

Աղաւնուցի Սրբազան իր «Միաբանք»ի մէջ, էջ 28՝ կը յիշէ Առաքել վրդ. մը որ 1435ին Երկայնընկուզիք վանքին մէջ ընդօրինակուած ձեռագիր Յայամաուրի մը 1445ին Երուսաղեմայ Ս. Յակոբ վանքին յիշատակ կը դրկէ հետեւեալ յիշատակարանով։ «Ես Առաքել վարդապետս եւ պ. Արեւան Խոճազամ աղայս տուայ գգիբս այս ի Ս. քաղաք Երուսաղեմ ի դուռն Ս. Յակոբ կարողիկէի, յիշատակ մեզ եւ ձնողայ մերոց եւ ամենայն արեան մերձաւորաց։ Ձեռամբ եւ վկայութեամբ Տէր Աբրահամ եպ. ի Երուսաղեմի եւ վկայութեամբ Տէր Յովհաննէս եպ. Արղու։— Առաքել Բազիլեցւոյ վրայ ուսումնասիրութիւն մ'ունի Ն. Քարանեանց՝ «Արարտ» ամսագրի մէջ, 1895 էջ 12։ Կը կարծեմ որ Բազիլեցիին է այն Առաքել վրդ. որ 1422ին, այսինքն ղեռ Երկայնընկուզեց վանքին առաջնորդ չեղած՝ Տարօնոյ Ղազարու կամ Առաքելոց վանքին մէջ կը գրէ Ծաղկազարդի նաբ։

ԱՌԱՔԵԼ ՎՐԳ. Գարիթեցի, ծնած Թաւրիզ ԺԶ. դարու վերջերը, երթատարող հասակին Ս. Էջմիածին կը գրուի և հոն կ'ուսանի ու կը հմտանայ նաև արտաքին ուսմանց, և Փիլիպպոս կթղ. էն (1633—1655) քահանայ կը ձևանաղբուի։ Բաւական տարիքը առած էր երբ Առաքել վրդ. 1651ին Փիլիպպոս կթղ. ի թելազրութեամբ իր ժամա-

նակակից պատմութիւնը կը գրէ, սկսելով 1601էն մինչև 1662, 1651ին, Փիլիպպոս կթղ. ի մահուան տարին կ'ընդհատէ զայն, ապա անոր յաջորդ Յակոբ Զուղայեցի կթղ. ի (1655—1680) խորհուրդով կը շարունակէ 1658ին և կ'աւարտէ 1662ին։ Առաքել գացած է Յունաստան՝ Իրբեւ նուիրակ էջմիածնի, շրջագայած է Ամասիա, Ուռահ, Ասպահան և այլն, ուխտաւորութեամբ այցելած է նաև Երուսաղէմ, ինչպէս կը գրէ իր պատմութեան մէջ. «Եւ եղև ի գալն մեր յԵրուսաղէմ, յորժամ հասաք ի Հայէպ՝ պատահեցաք այս Սարգիս քհ. ին»։ Վերջինս ակնավաճառ և լեզուագէտ հայ քահանայ մ'ըլլալով՝ իր վասն ականց գրուածքը կը յանձնէ Առաքել վրդ. ի, որ կը կցէ զայն իր պատմութեան։ Առաքել վրդ. ձեր հասակին մէջ կը վախճանի 1670ին և կը թաղուի Ս. Էջմիածնի գերեզմանատունը։

Առաքելի պատմութիւնը իր կենդանութեան՝ 1699ին՝ տպագրուի կը սկսի Ամասերաամի մէջ, յետոյ էջմիածնի մէջ տեղի կ'ունենան Բ. (1886ին) և Գ. (1896ին) տպագրութիւնները։

Առաքել Գալթիթեցւոյ պատմութիւնը բազմաթիւ ծանօթութիւններով ֆրանսերէնի կը թարգմանէ Brosset որ լոյս կը տեսնէ Սեն Պետերպոլի մէջ 1874ին։ Առաքել Գալթիթեցւոյ մասին բացի Հ. Գ. Զարպհանայեանէ, (Նոր մատենագրութիւն էջ 72—9) և Հ. Զամչեանէ (Պատմութիւն Հայոց Ա. 17) գրած է Հ. Ալիշան իր «Հայպատմութիւն»ին մէջ, Պատմիչ էջ 331—2։

1666ի յիշատակարանէ մը կ'իմանանք թէ Առաքել «Թաւրիզեցի» Երևանի մէջ իր ծախքով ընդօրինակել կու տայ իր պատմութիւնը։

ԱՌԱՔԵԼ (աէր) Նահատակ 1208ին Այրարատայ Գարեղենք գո. ի կէջրոտ գղ. ի մէջ։

ԱՌԱՔԵԼ Հնազանդեցի, նշանաւոր կազմող գրոց 1259ին Մաշկեւոր վանքին մէջ ապրած։ (Սիրմեեան՝ «Յուլյակ Ձեռագրաց Հայկայի» քիւ 25), յիշուած է ուրիշ յիշատակարաններու մէջ ևս։

ԱՌԱՔԵԼ Վրդ. Շոուրեցի (Նախիջևան) Փիլիպպոս կթղ. ին կ'ընկերանայ Երուսաղէմ, Պոլիս եւ այլուր. 1053ին Պոլսոյ մէջ Աստուածաշունչ մը նորոգել կու տայ և յիշատակարանին մէջ Փիլիպպոս կթղ. ի գործունէութիւնը կը նկարագրէ։ (Սարգիսեան Հ. Բարսեղ՝ «Յուլյակ Ձեռագրաց» հօր. Ա. էջ 170—3)։

ԱՌԱՔԵԼ վրդ. աշկ. Վանական վրդ. ի, աշակերտակից կիրակոս Գանձակեցի պատմիչին, ապրած ԺԳ. դարու սկիզբը։

ԱՌԱՔԵԼ, գրիչ Ձեռագրաց. — 1207ին՝ Հաղբաւի մէջ կը գրէ Եսայեայ գիրքը և Պօղոս Առաքելոյ թղթերը — 1434ին, աշկ. Թաղէոս կրօնաւորի՝

գրիչ ի Բարերդը—կրօնաւոր կոկող թղթոյ Երուսաղէմայ Ս. Փրկիչ վանքին մէջ 1463ին— գրիչ Աւագ վանքին մէջ՝ յԵրզնկա, կը յիշուի նաեւ 1483ին, 1484ին, 1485ին: — արեղայ գրիչ Շատուանի մէջ 1489: — գրիչ Մոկաց Դաշա գիւղին մէջ 1490ին: — աշակերտ Աւետիս վրդ. ի գրիչ Խարտիշատու վանքին մէջ 1500ին: — գրիչ ի Շատախ 1549ին — սարկաւագ Գեղամայ երկրին մէջ, աչկ.՝ Կիչառու վանքին առաջնորդ Փիլիպպոս եպ. ի գրիչ 1578ին: — Հոբերցի նորոգող եւ կաղմոզ ձեռագրի 1580ին — գրիչ Կարնոյ Սալաձոր գղ.ին մէջ 1586ին — գրիչ Աւետ. ի Էրզրու մի մէջ 1601ին: — Բարերդացի, աչկ. Մարտիրոս Հիզանցի, գրիչ ի Կ. Պոլիս 1617 եւ 1618 թուին: — գրիչ Աստուածաշունչի 1633ին ի Տիգրանակերտ, աշակերտ Մինաս Տիգրանակերտցոյ: — արեղայ գրիչ յԵրուսաղէմ 1034ին:

Ա.Ռ.Ա.ՔԵԼ Երզնկացի, օրչի Զաքարիայի 1610 ին Ֆիրէնցէ (Իտալիա) կ'երթայ:

Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ ԱՐՄՄ. խմբագիր Պազու հրատարակուած (1914—1919) «Արև» օրաթերթին ինքը խմբագրած է նաև «Արև» օրաթերթի համանուն «գրական, պատմական» պատկերազարդ յաւելումը՝ 1915ին (լոյս տեսած են թիւ 1—58):

Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Արփինէ, օրիորդ, դաշնակի հանրածանօթ ուսուցիչ եւ նոյնքան հանրածանօթ ընկերացոյ: Օրիորդ Արփինէ Առաքելեան յամառ աշխատանքի եւ անուած կորովի փպար մըն է, համակրանքի լայն շրջանակ մը ստեղծած է իր շուրջ. 1928ին ի վեր ուսուցանելով բազմաթիւ աշակերտներու, եւ երևան բերելով բժախնդիր մանկավարժի յատկութիւններ: Իր երամշտական ուսումը կատարելագործած է Բարիզի մէջ 1928ին, աւարտելով հոշակաւոր Քօրթոյի էֆօլ նօրմալին դասընթացքը եւ ստանալով ուսուցանելու վկայադիր:

Մինչև հիմա հրատարակային երկու աշակերտական ռեսիւրայներ տուած է, մեծ խանդավառութիւն եւ ոգեւորութիւն յառաջ բերելով: Իբրև առաջնակարգ ընկերացոյ



Օր. Առաքելեան Արփինէ (accompagnatrice) Օր. Առաքելեան հաւատարիմ է, խոր լմբռնողութեամբ եւ թափանցումով: Ասկէ զատ մեծ է իր նպաստը հանրային բազմաթիւ ձեռնարկներուն,

ուր ապացոյցը տուած է համեստութեան եւ զնահատելի անձնութեան: (Տարեցոյց Ազգ. հիւանդանոցի 1935 էջ 340—1):

Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Գաբրիել, 1894ին Արիտակէս Սեղրակեան եպ. ի գրած «Ամուսնական խնդիրներ» գրքոյկին իր պատասխան լոյս բնծայած է «Ամուսնական տարակուսանքներ» 98 էջնոց զբոյսը 1894ին՝ Բագուի մէջ:

Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Խաչատուր, Աստուածարան վարդապետ (1666—1760), ծնած Կարին 1666ին, այդ պատճառաւ Էրզրումցի կոչուած, եւ Առաքելեան՝ հօրը Առաքելի անունով: Մանուկ հասակին էջմիածին կ'երթայ եւ երբ Լեհաստանի առաջնորդ Յովնանեան վարդան վարդապետ (յետոյ եպ.) հոն կ'այցելէ՝ տեսելով Սաշատուրի ուշիմութիւնը՝ 1682ին զայն Հոռոմ տանելով Ուրբանեան համալսարանին մէջ կը դնէ, ուր Սաշատուր իրեն աշակերտակից կ'ուսննայ Ստեփանոս Ռօշքեանը, որ նոյնպէս Յովնանեանէն զրկուած էր: Սաշատուր Աստուածարանական ուսումը աւարտելէ ետք քահանայ կը ձեռնադրուի եւ իրր առաքելական քարոզիչ Պոլիս կը զրկուի: Կ'ենթադրեմ որ 1695ին Սաշատուր Լիվոնոյ (Իտալիա) անցած ըլլայ, քանի որ իր առաջին երկը Քերականութիւնը՝ այդ քաղաքի Ս. Սարգիս Զօրավար տպարանին մէջ լոյս կը տեսնէ 1696ին: Այս գրքին ձեռագիրը Կ. Պոլսոյ մէջ կարդացած է Կաֆայեցի Յովնանէս վրդ. Տ. Գէորգեանը եւ արժանի համարած է տպագրութեան յանձնուելու: 1698ին պատուարբի նուիրակութիւն մը կ'ընէ Սաշատուր. Հոռոմայ Իննովկենդիոս ԺԲ. Քահայանապետին կողմանէ ընծայատար երթալով յէջմիածին առ Նահապետ Կաթողիկոս, որմէ ստացաւ — չքեղ ընդունելութեան հետ — լիազօր իշխանութիւն՝ ամէն տեղ քարոզելու այն ոճով եւ իշխանութեամբ, ինչպէս բրբ էր մինչև այն-ժամանակ: Դարձին անմիջապէս Գուգ-Գափուի Մայր եկեղեցւոյն եւ յետոյ Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցւոյն քարոզիչ կարգուեցաւ: 1700ին երբ Եփրեմ եւ Աւետիք պատրիարքները սկսան հոռոմէական կղերն ու ժողովուրդը իրրև «ֆոանկ» բանտել եւ աքսորել տալ՝ Սաշատուր խոհեմութիւն համարեց լսել առժամին: Աւետիքի անհետացումէն ետք դարձեալ երեցաւ Սաշատուր: 1701ին Պոլսոյ մէջ լոյս բնծայեց իր երկրորդ երկը Մեկնութիւն Երզնկացի, 1700ին Եփրեմի նախորդ պատրիարք Մելքիսէղ վրդ.էն տպագրութեան հրաման ստանալով: 1707ին երբ Հոռոմէական հայերու դէմ մեծ հալածանքը կը սկսի՝ Սաշատուր վենետիկ կ'անցնի, ուր 1708ին Ս.

Աթոռոյն կողմանէ տեղւոյն Հայոց առաջնորդ կը զրուի:

1709ին երբ դեռ Մխիթար Արքայ Մոսկա կղզւոյն Մեթոն քաղաքն էր իր միարաններով՝ Պաշտուրը վրդ. Անտոնիոս Պոսթոլի տպարանէն լոյս կ'ընծայէ Բարոյական Ասուածաբանութիւնը՝ «արդեամբք և գոյւք պմենապայծառ Շէհրիմանեանց, բարեպաշտ և Աստուածասէր Սոջայ Սարհատի որդի Զուգայեցւոյ պարոն Մուրատին» (Երկսիւն 791 էջ):

1710ին Պաշտուրը վրդ. նոյն տպարանէն լոյս կ'ընծայէ Քարոզգիրքը, երկու հատորներէ բաղկացած (1894 էջ), միեւնոյն Մուրատի նըպաստով: 1711ին Բովանդակութիւն ամենայն ուսմանցը հրատարակեց Սարհատի որդի՝ պարոն Գասպարի նպաստով. (Երկու հատրէ բաղկացած 1439 էջերով):

1713ին նոյն Գասպարի մեկենասութեամբ լոյս ընծայեց ճարտասանութիւնը (310 էջով): 1717ին երբ Մխիթար Մեթոնէն Վենետիկ կու գայ հաստատուելու՝ հոն կը գտնէ իրեն համախոն և Պոլսէն ծանօթ Պաշտուրը վարդապետը, որ մէկէ աւելի անգամ, երբ չարամիտները Մխիթարը կ'ամբապատանեն՝ պաշտպան կը կանգնի Ս. Աթոռոյն առջև:

1719ին Պաշտուրը վրդ. Դրանախլովանիա կը զրկուի Հոռոմի կողմէ և դարձին կը շարունակէ Ս. Պաշտուրը եկեղեցւոյ հովուութեան պաշտօնը. 1725ին Հոռոմ կ'երթայ և այդ առթիւ նորէն պաշտպան կը կանգնի Մխիթարայ: 1729ին լոյս կ'ընծայէ Ասուածաբանութիւնը ընդարձակ երկու հատոր (1283 էջ). 1734ին երկրորդ մասն Ասուածաբանութեանը (383 էջ):

Կը Վախճանի 1740ին, իր բոլոր գրքերն ու ստացուածքը Մխիթարեան Միարանութեան նըւիրելով: Կը թաղուի Վենետիկոյ Ս. Պաշտուրը մէջ հետեւեալ տապանազրին ներքև. «Աստ հանգուցեալ է — Վարդապետն աստուածաբան — Որ Պաշտուրը յարանուանիւր Արզրումեան. — Ամք երեսուն նաև երկու այնմ յաւելան. — Յորս աստ եկաց ազգիս — Հայոց ի հովուութեան. — Էր սրբակեաց և արժանի մեծ գովութեան — Եւ ջատագով Հոռովմէական ճշմարտութեան, — Յամի Տեառն 1740 Ապրիլի 20: (Յ. Հ. Թորոսեան «Վարք Մխիթար Աբբայի» էջ 353):

ԱՌԱՔԵԼ(ԵԱՆ) Խաչիկ. (1741—1790), Զուգայեցի, ծանօթ իր բարեգործութիւններով: 1790ին նորոգած է Կալկաթայի Ս. Նազարէթ եկեղեցին, շինած երիցատունը, նաև նուիրած դանգակատան հսկայ ժամացոյցը: 1788 Յուլիան Անգլիոյ

ձորճ Գ. Թագաւորին ծանր հիւանդութենէ մը ազատելուն առթիւ՝ պարտքի համար բանտարկեալ 60 հոգի փրկանաւորեց 3000 ոսկիով: Թագաւորը նուիրեց իրեն թուր մը և իր պատկերը, զորս ստանալէ առաջ մեռաւ 25 Յուլիս 1790ին: (Ալպոյանեանի Թեոդիկի Տարեցոյց 1926 էջ 621):

ԱՌԱՔԵԼ(ԵԱՆ) Կարապետ. ծնած էվէրէկ 1887ին, 1897ին իր ծնողաց հետ Ադրբայձան կ'երթայ, 1905ին Հայ—Թաթարական շարժումներուն Կովկաս կ'անցնի մասնակցելու համար կռիւններուն. յուսախար կրկին եղբայրս կը վերադառնայ: Ներկայիս Գահիրէի առաջնակարգ ֆոթօ-Ջինկօի տիպար գործարան մ'ունի, կատարելագործուած և առանձնայատուկ: (Ալպոյանեան «Պատմ. Հայ Կեսարիոյ» 2228):

ԱՌԱՔԵԼ(ԵԱՆ) Համբարձում (Շահրիար).— Ծն. 1855 թ. Մայիս, Շուշի: Նախն. կրթ. ստացած հոն մինչև 10 տարու, յետոյ անցած Դաւրէժ (ուր իր Թեքլիւ Բաւի հայրը կը դառնուէր). շարունակելով ուսումը յայտնի հայկարան Սամուէլ Գիւլզադեանի քով: 1872 թ. կը սկսի աշխատակցիլ «Մեղու Հայաստանի» և «Մշակ»ի՝ Պարսկահայոց կեանքէն թղթակցութիւններ զրկելով: Դաւրէժ կը հիմնէ առաջին ընթերցարան գրատունը որ ցարդ կանգուն է: 1878 թ. կ'անցնի Պաղու որուն գիմնադիրնը 1879ին աւարտելով կը մտնէ դարձեալ «Պետրօւսքի» գիւղատնտեսական ճեմարանը: Հօրը մահուամբ դառնալով Կովկաս 1881 թ. տեսուչ կը կարգուի Ղարաբաղի հայոց երկես զարոյցներուն նոյն տարին Շուշի կը հիմնէ Կովկասահայ Բարեգործ. Ընկեան անդրանիկ մասնաճիւղն ու ընթերցարան մը: 1892 թ. Գ. Արծրունիի մահուամբ կը կոչուի «Մշակ»ի խմբագրապետութեան պաշտօնին՝ Ալ. Քալանթարի գործակցութեամբ: Քանիցս պատգամաւոր կարգուած Կաթող. ընտրութեանց առթիւ: 1892—8 քարտուղար Կ. Հ. Բ. Ը. ի և մատենադարանի վարիչ: — Թիֆլիզի Գայեանեան և Յովնանեան դպրոցներու հոգաբարձու, Կովկասեան Ժողովրդ. համալսարանի Հայկ. ճիւղի նախագահ, Թիֆլիզի քաղաքապետութեան անդամ և հայ նպաստամատոյց ընկերութիւններու անդամ: — Առաջին անգամ ինք եղաւ Կովկասահայ գործիչներէն՝ որ մտածեց հայկական հարցը քննութեան առարկայ դարձունել Մաղաղութեան Համաժողովին: 1902ին Բարիդ, իսկ 1901ին Կլասիօ գումարուած նոյն «Կոնկրէտ»ներուն ներկայացուցելով La Question arménienne au point de vue de la paix universelle վերնա-

գրով ընդարձակ տեղեկագիրներ՝ որոնց հիման վրայ ինչ ինչ որոշումներ քուէարկուելով հազորդուեցան մեծ պետութեանց: Մասնակցած եւրպ. և Միջազգ. գիտնական ժողովներու գումարմանց, ներկայացուենելով անոնց՝ մեր եկեղեցիին պատմութեան, դրականութեան ևն. մասին գեղուցադրեր, որոնք զանազան լեզուաց թարգմանուելով արպագրուած են: 1905-ին Հոմ հրատարակուած Dictionaire international des Ecrivains մէջ կը գտնուի Համարձուեմանի անունը:



Առաքելեան Համբարձում

1893ին Թիֆլիզի Թիֆլիսի Լիոնով թերթին խմբագիր հայտագրի Մաշտոտեանի հետ՝ իր պատգամաւոր Պարսկաստանի և Հնդկաստանի թեմի՝ այցելած է Երուսաղիմայ Ս. Յակոբայ Վանքը: Ներկայ գտնուած է Արեւիագէտներու Ժ. Ժ. միջազգային ժողովին գումարուած Այսթիէրի մէջ. իր գեղուցումը եղած է Ակնարկ Հայ գրականութեան վրայ և նրա ուսումնասիրութեան կարեւորութիւնը արեւելագիտութեան համար:

1917ին Համարձուեմ Առաքելեան իր տանը մէջ կը սպաննուի քաղաքական պատճառներով: Հ. Առաքելեան տակաւին ուսանող՝ իր անդրանիկ երկը 29 էջով գրքոյկ մը՝ յոյս ընծայած է 1880ին Առողջաբանական ընթերցանութիւն, 1883ին Ազգայնութիւն և նրա պիւնջիպիւն, 1893ին՝ Խրիստեան Հայրիկի կարողիկոսական ընթերցանութիւնը, 1896ին՝ Զեյթուն. «տեղագրական. ազգագրական և վարչական տեսութիւն», 1899ին՝ Գալիլէյ. «նրա կեանքը և գիտնական գործունէութիւնը», 1900ին՝ Միլսոն, «նրա կեանքը և գրական գործունէութիւնը», 1902ին՝ Ջոնս-Քուեան վէպ, 323 էջով, ունի դեռ մանր մանր գրութիւններ եւ և երկարաշունչ յօդուածներ «Մուրճ»ի մէջ: Ժ. Միջազգային Արեւիագէտներու քննկրէին զրկած է Les Rapports des Arméniens avec l'Occident au moyen âge et après: Ունի շատ մը հեղինակներէ թարգմանութիւններ և Հանրամատչելի գրադարանին մէջ հատորիկներ: Հ. Առաքելեան հրատարակած է նաև հանրագիտարան մը՝ Լառուսի հետեւողութեամբ համառօտ կենսագրականներով համաշխարհային երեւիլի անձանց մասին:

Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ ՄԵԼԻՆ ՏՔԹ. Խարբերողի, որուն

գումարը Բամբիչ Խանըմ 1931ին 74 տարու կը վախճանի Լոս Անճէլըսի մէջ: «Հ. Կոչնակ» 1931 էջ 1080 կը գրէ թէ հանգուցեալը Խարբերողի աղջկանց ձեռնարանին առաջին շրջանաւարտներէն եղած է և կեանքին առաջին շրջանը անցուցած է Վան, իր ծնողացը (Տ. Ք. Մելքոնի) հետ, ուր ամուսնացած է Վանեցի Պօղոս անունով երիտասարդի մը հետ, որ յետոյ Ամերիկայի մէջ բժշկութիւն ուսանելով՝ կոչուած է Տֆր. Պօղոս Առաքելեան, որ երեք տարի Խարբերողի մէջ բժշկութիւն ընելէ ետք իր քաղաքական բժշկ. Ատիեաման կը փոխադրուի ընտանեօք. ուր 1895ի կոտորածներուն իր փոքր աղջկան հետ զոհ կ'երթայ Այս դառն կորուստէն ետք տիկին Բամբիչ Ամերիկա կ'անցնի. ատեն մը Թրոյ մնալէ ետք Քալիֆորնիա կը հաստատուի և Լոս Անճէլըսի մէջ կը վախճանի:

Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Յ. Սարկաւազ, լեռոյ Ալլանեան Գիւլս ևն. (ՏԵՄ):

Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Պօղոս, հեղինակ 1933ին ի Յիւլաւէրիա տպուած «Ծփանքներ» բանաստեղծութիւններու (98 էջ): — Տես Ալլանեան Մելիոն:

Ա.Ռ.Ա.ՔԵԼԵԱՆ Սեդրակ, Խ. Հայաստանի նշանաւոր Նկարչներէն մին, աշակերտած Մոսկուայի Ակադեմիայի մէջ 1908—1917 շրջանին իրեն վարպետ ունենալով Կոստանդին Կորովին, Արխիպով և Սերգէ Իվանով: 1921ին Առաքելեան իր նկարները կը ցուցադրէ Կ. Պոլսոյ մէջ:

«Առաքելեանի գործերն ընդգրկում են երկու շրջան, կը գրէ Ա. Երեմեան («Հ. Կոչնակ» 1937 թ. 11 էջ 257): «Առաջին շրջանում նա վրձինել է զլիտաւորապէս գիւղացիական կեանքից: Այդ է պատճառը, որ նրա նկարների վրայ ղուք չէք տեսնում կարմիր կտուր: Այդպէս է. օրինակ «Յուրեմ եմ ձեռնում»: Ջահակ գիւղի պատկերն է դա, ուր արտայայտուած է ցորեն ձեռնու պրօցէսը. «Հին Նախիջեւանի շուկան»: Լուրջ կոմպօզիցիա է դա, ուր ցոլանում է արեւելքի փոշոտ շուկայի կօյօթիտը: Ունի նաև մի շարք էքլիտներ «Ջուրպետից», ուր արտայայտել է տների խրմբաւորումները, որոնք մեծ քաղաքի զծերի տպաւորութիւնն են թողնում: Կամ «Նախիջեւանի օձի սար». Եգիպտական բուրգերի նման ցցուել է սարը և մի ամբողջական կապոյտ թանկազին հսկայ քարի տպաւորութիւնն է թողնում:

«Երկրորդ շրջանում Առաքելեանն իր սիւժէտը վերցրել է զլիտաւորապէս Երեանի և առանձնապէս Սեւանի տեսարաններից: Այդ տպաւորութիւնների մէջ արտայայտել է նա Երեանի հին և նոր կեանքը և Սեւանի խորհրդաւոր լուսութիւնն

ու վսեմութիւննր Այդ նկարներէց յիշատակենք «Ասդալի գիւեք Երեւանում», «Երեւանի ուրախ աւանալիս առաւօսը», «Գարունը Երեւանում», «Սեւանայ լիճի ափին», «Գիւեքը «Սեւանում» եւլն:

Առաքելեանը վարդեօ է նաև գլուխներ նկարելու մէջ. որոնցմով տալիս է նա ո՛չ թէ բնականը, այլ իր տպաւորութիւնը, այն է անհատի յատկանշական բնորոշ ապրումները: Այդպէս է օրինակ, «Տպաւորութիւնը բաւրումում» նկարը . . . Առհասարակ, Առաքելեանը պօշտ նկարիչ է: Ունի համարձակ վրձին և ինքնուրոյն ոճ:

Հայաստանի տաղանդաւոր նկարիչների շարքում նա անպայման ունի իր առանձնայատուկ էջը»:

ԱՌԱՔԵԼՈՎԻԶ Գրիգոր, վարդապետ. ծնած 1732-ին ի փոքր Լեհաստան: 1749ին Յիսուսեան վանքը մտած և 5 տարի փիլիսոփայութեան ուսուցիչ եղած ի Լուպլին: 1773ին վերջը Պիալոուս կ'երթայ և ուսմանց վերակացու կը կարգուի և ապա կը դրկուի իրրև առաքելալ (ժիլիոնար) ի Հայիչ: 1798ին կը վախճանի Տինապուրկի մէջ: Հրատարակած է ա. Propositiones selectae ex Universa philosophia adnotationibus illustratae, սյուլած ի Przemislai 1768ին: ք. De mundi Systemate distertatio Cosmologica:

ԱՌԱՔԵԼՈՎԻԶ Յակոբ. Տօթքոր փիլիսոփայութեան և Աստուածաբանութեան: Ուսուցիչն ու վարիչը եղած է Ջաժոյս Քաղքի Ակադեմիայի: Լվովի Հայոց աւագ թեմին մէջ տեղւոյ պակասութեան համար լատին քահանայ եղած է: Բշէմիչի քաղքին մէջ մեռած է իրր կանոնիկոս մայր եկեղեցւոյն 1739ին: Հռչակուած էր իրր լաւ քարոզիչ և պերճախօս ատենարան:

ԱՌԱՔԵԼՈՎԻԶ Սիմօնիանոս, կրօնաւոր Ս. Փրանկիսկոսի կրտսեր եղբայր կարգէն: Կ'ապրէր Ժէ—ԺԸ դարուն մէջ: Իրեն բարեկրօն կենցաղավարութեան և իմաստութեանը համար՝ ընտրուեցաւ նախ գտնուած վանքին մեծաւոր և ապա Փոքր Լեհաստանի ամրող դաւառին վերակացու: Մեծապէս յարգուած և սիրուած էր ո՛չ միայն քահանայից՝ այլ նաև աշխարհականներու կողմանէ իրեն անձնատուկ բարեմասնութեանցը համար: Հրատարակած է Հոգեւոր մտածումներու հաւաքածոյ մը:

ԱՌԱՔԵԼՈՅՎՅՈՒՄՅԱՆ վանքեր կան Շապին Գարահիսար, Կիլիկիա: Տե՛ս Եղիվարդ և Ղազարու վանք:

ԱՌԱՔԵԼՈՅՎՅԱՆՔՎԱՆՔ, Ամայի վանք Գանձակի Ղազար գո. ի մէջ. ունի հոյակապ տաճար մը սուր կաթողիկէով: Գաւթի զրան արտաքին

ճակատին վրայ կայ ՈՂԳ (1244) թուականով արձանագրութիւն: Վանքս պարսպապատ եղած է. այժմ կործանուած:

ԱՌԱՔԵԼՈՅՐԵԼՈՅ ԲԼՈՒՐ, կը յիշուի Ռշտունեաց գո. ի մէջ:

ԱՌԱՔԵԼՈՅ ԵՐԿԻՐ, կը յիշուի Մաղարդայ վանքին թեմերուն յիշատակագրին: Պարսկահայոց կողմերը:

ԱՌԱՔԵԼՈՅ ԼԵՆՆԵՐ, Մշոյ կողմերը կը կարծուի

ԱՌԲԵՐԱՆԻ, Վասպուրականի գաւառներէն մին ըստ հին աշխարհագրական բաժանման, սովորաբար կը յիշուի Տուրուերանի Ազիովիտ գո. ի հետ, ուր կը բնակէին մեր թագաւորաց եղբայրներն ու քոյրերը: Երկիրը ընդհանրապէս դաշտային է առողջարար օդով, ջրով և արգաւանդ հողով, թերևս այդ պատճառով այժմ Բերկի կը կոչուի գաւառս: Գաղիկ Արծրունեաց թգ. ը՛ գաւառս իր պետական եկամուտներով նուիրած է Աղթամարայ կաթողիկոսական աթոռին: Գաւառիս զբլխաւոր քաղաքն է Բերկի: Տե՛ս Աշիովիտ: (Միւրախոբ. Բնկար. Ուղ. Գ. 17—21):

ԱՌԳԵՆՈՍ կամ Արգեոս, յետ Առաջին Հայքի մէջ, Կեսարիոյ մօտ Օտարները Արնիաս, Էրնիաս կ'անուանեն: Տե՛ս Արգեոս:

ԱՌԵՂ, Շատախ գո. ի Փեսանդաշտ գիւղախումբին երկրորդ գիւղն էր իր մեծութեամբը, Արթօս յերան թեւին տակ, Գաւառէն Շատախ երկարող ճամբուն վրայ: Բնակիչ՝ 100 տուն հայ. զիրքը դաշտային: Ունէր նախակրթարան և եկեղեցի մը (Սու-Վանի):

ԱՌԵՂ, սակաւարնակ գիւղ Վանայ Հայոց-ձոր գաւառակի, ունէր աննշան եկեղեցի մը: Բնակիչք՝ 15 տուն հայ և 4—5 տուն քուրդ էին: Գիւղիս արևելակողմը, կէս ժամ հեռի կը գտնուէր Ս. Վարդան փոքրիկ վանք մը:

ԱՌԵՍ հին աւան Վասպուրականի Առբերանի գո. ի մէջ՝ համանուն գետի վրայ, Վանայ ծովակի եզերքը: Խոսրով թգ. հոս յաղթեց պարսից անհամար զօրաց՝ Վրթանէս կթղ. ի աղօթքով: Արշակ թգ. ի ժամանակ Բագոս զօրավարը յաղթեց հոս բանակող պարսից: Ղազար Փարպեցին քաղաքագէտը կ'անուանէ Առեստը, իսկ Ղևոնդ պատմիչ Առեսակողմն կ'անուանէ մօտի դաշար:

ԱՌԵՍ ՓՈՒՔԻ, այս անուամբ աւան մը ևս կը յիշուի Առբերանի մէջ, կրնայ ըլլայ որ նոյն է վերինին հետ, կամ անոր մօտ Ասողիկ կը զրէ թէ Ղևոնդ կթղ. հոս ծնած էր: Յովհաննէս կթղ. ևս Ղևոնդ կթղ. ի համար կը զրէ «... էր սա ի փոքր Երաստայ»:

ԱՌԵՍ կամ Պանսումանի, գետ Վասպուրականի հին Առբերանի գո. ի, այժմեան Բերկիի գլխաւոր

և պատմական գետն է: Գարնան յորդելով՝ նոյն խոզ ժարդկային կեանքեր կը խլէ: Գետս անուանի է սառելիս ձկներով: Ունի հին ամրաշէն կամուրջ մը:

ԱՌԵԻՏՈՒՐ, վաճառականական թերթ (չարաթաթերթ), արտոնատէր՝ Մ. Իրանոսեան, խրմրադիր տնօրէն՝ Ս. Գարրիէլեան, ապա Ս. Չէօմլէքճեան, ապա՝ Ա. Գալփաքճեան. սպ. Պոլիս 1908 (թիւ 1—11):

ԱՌԵԻՏՈՒՐ, պարբերաթերթ, սպ. Նիւ Եօրք 1922—5 (Ն. Գասապեան՝ «Բազմալիւայ» 1937, էջ 204):

ԱՌԷՆ կամ Յառլն, հյրն. գղ. Տուրուբերանի Խորհուրդնեաց (Արծկէ) գո.ի մէջ, Վանայ ծովակի հիւսիսային եզրքը: Բն. 1900ին՝ 170 տուն, եկղ. Ս. Լուսաւորիչ, ունէր ծաղկոց մը:

ԱՌԷՔ կամ Արեգ, գղ. Չրրորդ Հայոց Վերին Կեղի գաւառակի, ունէր 180 տուն հայ բն. եկղ. Ս. Յովհաննէս, և վարժարան մը՝ Կեղիէն մէկ ժամ հեռի՝ ուր 1900ին 63 մանչ և 40 աղջիկ կ'ուսանէին:

ԱՌԸՆՊԵՂ, Խարբերդի հին գիւղերէն մին կը կարծուի, կը յիշուի ԺԶ. դարու յիշատակարանի մը մէջ:

ԱՌԸՆՁՈՒՅ կամ Առնջեաց վանք, կը յիշուի Ռեմի թուին (=1595) գրուած ձեռագրի մը յիշատակարանին մէջ, որուն համաձայն եկեղեցին կը կոչուէր Ս. Մարիամ Աստուածածին, գրիչ՝ Յակոբ եպ., ստացող Տէր Միքայէլ: Վանքս կը գտնուի Այրարատայ կոտաք գո.ի Առինձ գիւղին մօտ:

ԱՌԻԳՈՄ կամ Յառիգոմ, սակաւարնակ գղ. Հայոց Մոկաց Շառախ գաւառակի մէջ:

ԱՌԻՆՁ կամ Առուզ, հայարնակ գղ. Չրրորդ Հայոց Վարի Կեղի գո.ակի մէջ, Մէլիքան գիւղաքաղաքի դիմաց: Բն. 50 տուն էր. եկղ. Ս. Փրկիչ, որ երկրաշարժէ վնասուելով՝ կրկին նորոգուած է: Աղգային վարժարանը կը յաճախէին 37 մանչ:

ԱՌԻՆՃ, հայանուն՝ բայց թուրքարնակ գղ. Վայոց-Չոր գո.ի մէջ. կը նշմարուին հին եկեղեցւոյ աւերակներ:

ԱՌԻՆՃ գղ. Միւնեաց Շահապօնք գո.ի մէջ, բն. 50 տուն հայ ունի եկեղեցի մը:

ԱՌԻՆՃ կամ Առինչ, գղ. Այրարատայ կոտայք գո.ի մէջ, Աւան գղ.ի հիւսիսակողմը, բն. 600, եկղ. Ս. Աստուածածին, ունի կիսաւեր մատուռ մ'ալ բազմաթիւ գերեզմաններու և խաչքարերու մէջ. գիւղս Շահարասէն աւերուեցաւ:

ԱՌԻՆՁ կամ Յառինչ, գղ. Մոկաց Հին Ջեր-

մաձոր գո.ի մէջ, բն. 40 տ. եկղ. Ս. Ստեփանոս:

ԱՌԻՆՁ կամ Առինճ, գղ. կաթողիկէ Հայոց Տուրուբերանի Տարօն գո.ի Մշոյ հիւսիսակողմը կէս ժամ հեռի, երկու թաղերու կը բաժնուի, վերին և վարին, 1900ին 200 տուն բնակիչ ունէր, եկղ. Իրեֆ Խորան: Աւագ խորանին հակը կից է քարաշէն գետնափոր մատուռ մը, որուն մէջ կը գտնուին շատ հին գերեզմաններ, որոնց տէրերը յայտնի չեն Յովհան Մամիկոնեան պարսից զօրքերուն «Առ ի՞նչ դարձայք անդրէն ի պատերազմ» հարցումէն մնացած կը համարի գիւղիս անունը:

ԱՌԻՆՁ կամ Առիչ, Բարձր Հայոց հին Առիւծ գո.ի մէկ մասն է, կը ձևացնէ առանձին վիճակ. կ'իշնայ Կարնոյ գո.ի հարաւակողմը, գլխաւոր տեղն է Առինչ կամ Առիչ աւանը:

ԱՌԻՆՁ ՎԱՆՔ կամ Առնվանք, հայարնակ գղ.ի Տարօն գո.ի մօտ: Բն. 100 տուն հայ (1915ին) և 5 տուն քուրդ:

ԱՌԻՁ տե՛ս Առինչ Բարձր Հայոց:

ԱՌԻԻԾ, երկրորդ գաւառ Բարձր Հայոց, որուն այժմ կը համապատասխանեն Կէրճանիս և Շէյ-ուան վիճակները, հոս է Առիւծ լեռը, ուր կը բնակէր Ս. Դանիէլի Շաղիտայ աշակերտը:

ԱՌԻԻԾ կամ Առիւքերդ, Կիլիկիոյ մէջ, որ Ռուբինեանց Հայոց ձեռքն անցաւ:

ԱՌԻԻԾ. Իշխան Թլղուրանի 1136ին, որմէ կը խնդրէ Գրիգոր Գ. Պահլաւունի կթ. որպէսզի այդ ժամանակի Միջագետքի և շրջակայքի աղանդաւոր ազգայինները յանդիմանէ:

ԱՌԻԻԾ Խաչիկ տե՛ս Խուլ Խաչիկ:

ԱՌԻԻԾԱԹԻԼ, հին աւան Հայոց Միջագետքի մէջ:

ԱՌԻԻԾԱՁՈՐ, Աշոտի Առիւծ որդւոյն անունով, ըստ 998 (թերեւս 978) թ. արձանագրութեան: («Հանդէս. Ամս.» 1913 էջ 539):

ԱՌԻՂԱԿ, գղ. Հին Տուրուբերանի Ապահունեաց գո.ի մէջ:

ԱՌՂԱՁՈՐ կամ Աղըձոր, ձոր Տուրուբերանի Տարօն գո.ի մէջ, Տե՛ս Առադ:

ԱՌՂԱՇԱՆ, փոքր գղ. Եողղատի, 20 տուն հայ բն. ունէր:

ԱՌՂԱԻԻՍ, գղ. Շ. Գարահիսարի, 80 տուն հայ:

ԱՌՂՈՒ, սակաւարնակ գղ. Հայոց՝ Մոկաց վերին Կարկառ վիճակին մէջ:

ԱՌՄԷՆԻԱ տե՛ս Հայաստան:

ԱՌՆԱ տե՛ս Ընճա:

ԱՌՆԱԿ տե՛ս Չօրթեան Համբարձում:

ԱՌՆԱՌՈՒՏ, գղ. Աղահէճք գո.ի Հօշանց գետին ձախակողմը:

ԱՌՆԱՎԻՆՁ գղ. Մշոյ, որուն Ս. Յակոբ զըպ-
րոցը 40 մանչ և 7 աղջիկ կը յաճախէին:

ԱՌՆԱՎՈՏ, հին գղ. Կոզովիտի կը յիշուի հար-
կատու գիւղերու շարքին:

ԱՌՆԵՂ, հին գղ. Հայոց Գեղարքունի գուի
մէջ, Գեղամայ Ծովակի արեւմտակողմը. այժմ
կը կոչուի Փաշախէն կամ Մեհմէս-Աղալի, 1900ին
2000 հայ բնակիչ ունէր, մօտը, բլրակի մը ստո-
րաւէն կը բղխին աղբիւրներ՝ որոնք Կէօք-Չայ
գետակը կը սկզբնաւորեն Եկեղեցիներէն մին է
Ս. Գրիգոր սրբատաշ քարերով և փոքրիկ կա-
թողիկէով, վերջերս նորոգուած. միւս եկեղեցին
կամ վանքը Ս. Աստուածածին, որ ըստ արձա-
նագրութեան կառուցուած է Յեկ (= 898)
թուին, Առնեղ գիւղի Շաղբարաթ իշխանէն Ս.
Գրիգոր եկեղեցին 1549ին Դաւթի զուտար Տար-
լուղանէն կը նորոգուի: (Ալիւսան՝ «Սիսական»)

ԱՌՆԵՏ, աւերակ գիւղատեղի Սիւնեաց Վա-
յոց-ձոր գուի մէջ. ըստ Քաջբերունիի՝ հին Առաս-
սամուղ գիւղն է:

ԱՌՆԻՈՏ, գղ. Տուրուբերանի, Մշոյ արևելա-
կողմը, 1900ին 80 տուն հայ բնակիչ ունէր:

ԱՌՆՃԻԿ կամ Առնչիկ, քրդաբնակ գղ. Մշոյ
արևելակողմը:

ԱՌՆՃՈՅ կամ Առնչոյ հուն. կը յիշուի Սիւ-
նեաց Գեղարքունեաց գուի գիւղորէից կարգին
մէջ:

ԱՌՆՃՎԱՆՔ տե՛ս Արիցիվանք:

ԱՌՆՈՅՈՏ կամ Առնոտ, հին գո. Վասպու-
րականի, կը կարծուի ըլլալ Առնոտ կամ Առնոյ
լեռան մօտերը:

ԱՌՆՁԻԿ տե՛ս Առնցիկ:

ԱՌՆՈՍ կամ Առնոսար, լեռ Վասպուրա-
կանի Պոչայ գուի մէջ, 3350 մէթր բարձր: Լեռս
կոչուած է, յետոյ Չուխ:

ԱՌՆՇՎՈՅՍ, գղ. Արծկէ գուի Վանայ ծովակի
հիւսակողմը, բն. 200էն աւելի էր նախ քան 1915
թուականը, եկղ. Ս. Գէորգ և Ս. Յարութիւն:

ԱՌՆՁՎԱՆՔ տե՛ս Առիցիվանք:

ԱՌՈՂՁԱՊԱՆ, Հրատարակութիւն «Աղբիւր-Տա-
րազ»ի խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազար-
եան, տպ. Թիֆլիս 1911—1912:

ԱՌՈՂՁԱՊԱՆԱԿԱՆ ԹԵՐԹ «մի ամսեայ Հան-
դէս նուէր ազգին» խմբագիր Լեոն Տիգրանեան,
տպ. Երևան 1881—1884:

ԱՌՈՂՁԱՂՁԱՊԱՆԻԿ, «ժողովրդական առողջա-
պահական կիսամսեայ հանդէս», խմբագիր՝ Բժ.
Վահան Արծրունի տպ. Երևան 1920:

ԱՌՈՂՁԱՊԱՆԻԿ ԹԵՐԹ, «կիսամսեայ նկարա-
զարդ հանդէս», խմբագիր հրատարակիչ՝ Բժ. Վա-
հան Արծրունի, տպ. Թիֆլիս 1903—1905:

ԱՌՈՂՁԱՊԱՆՈՒԹԻՒՆ, ամսաթերթ. խմբագիր՝
Կ. Ս. Գալֆայեան, տպ. Վառնա 1906 (թիւ 1—2
միայն):

ԱՌՈՂՁԱՊԱՆՈՒԹԵԱՆ ՖՐՈՆՏՈՒՄ, «միամսյա
մասայական պատկերազարդ հանդէս ՀՍՍՆ Առ-
ժողովմատի Որգան», Պետրոբրատ, պատ. խմբա-
գիր՝ Գ. Ղևոնդյան, պատ.-Քարտուղար՝ Ա. Ղա-
զարյան. տպ. Յերեվան 1932—1934 և յետոյ:

ԱՌՈՂՁԱՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, (ամ-
սագիր) «Առողջ. ժողովրդ. կոմիտարիատի», խմբ-
ագիր՝ Մ. Գարտաշեան, տպ. Յերեվան 1929:

ԱՌՈՂՁ ԿԵԱՆՔ, «ժողովրդական առողջապա-
հիկ ամսագիր», խմբագիր՝ Բժ. Թ. Չաքարեան,
տպ. Բագու 1917 (թիւ 1—7):

ԱՌՈՂՁ ԿԵԱՆՔ, ամսագիր բժշկական և ա-
ռողջապահական, տպ. Պարիս 1930:

ԱՌՈՂՁ ԿԵՆՅԱՂ, «միամսյա պատկերազարդ
հանդէս, ՀՍՍՀ Առժողովմատի Փ. Կ. Գերխոր-Որ-
գան» պատ. Քարտուղար՝ Ար. Ղազարյան: Տպ.
Յերեվան 1929:

ԱՌՈՍՊԻԺԱՆ. հին գո. Փայտակարանի:
ԱՌՈՒԱԼԻԺ? հայաբնակ գղ. Տուրուբերանի Տա-
րօն գուի:

ԱՌՈՒԱՆԻՑ կամ Առուենից ձոր, Մոկաց աշ-
խարհի հին գաւառներէն մին: Գաւառս ունի
նոյնանուն աւան մը՝ որ Մոկս քաղաքէն 6 ժամ
հեռի է: Բն. քուրդ են: Ըստ Թովմա Արծրունեոյ՝
ի հնումն գաւառս սահմանակից էր Ռշտունեաց
գուին:

ԱՌՈՒՋ s. Առիցն:

ԱՌՈՒՆ, դեռ Այրարատայ Կոզովիտ գուի մէջ
որ կը կոչուի Պալք-չայ:

ԱՌՈՒՇԵԱՆ Շմաւոն, Միքայ, Խ. Հայաստանի
Հողագործութեան ժողովրդային կոմիտար նշա-
նակուած 1937ին, «երիտասարդ ոյժ մը»:

ԱՌՈՒՍ, հին աւան Փայտակարանի (Թալիշ)
Առասպիտան գուի, ունի 110 տուն թաթար բնա-
կիչ:

ԱՌՁԱԿ s. Հառչակ:

ԱՌՍՍԱՄԲ Մելիք. Բաղրատունեաց ցեղէ, Բար-
սուճցի, իշխող կողմանցս (Բարխուդարեանց՝
Արցախ 318—9):

ԱՌՎՆՏԱՅ s. Առքնոց:

ԱՌՏԵԱԼ s. Դրանսիվանիա:

ԱՌՏԵՐ, Վանայ Ծովակի կղզիներէն մին, որոյ
մէջ Ս. Աստուածածնի նուիրուած վանք և եկղ-
զոր ԺԸ. դարու վերջերը ոմն Յակոբ վրդ. Բա-
տականցի կը նորոգէ և քանի մը կրօնաւորներ
հաւաքելով միաբանական ուխտ կը հաստատէ:
Երբ 1772ին Յակոբ վրդ. կը նահատակուի՝ միա-

բանները կը ցրուին (էփրիկեանց՝ «Բնաւխարհիկ»)։
ԱՌԻԸՏՈՅ կամ ԱՌՎՏՆԱՅ, քրդարնակ գղ-
Սասնոյ

ԱՌՓԱ s. Արփա։

ԱՍԱՂԻՆ s. Ալբերդ։

ԱՍԱԿԵԱՆ Ամդեցի, 1660ին Տիգրանակերտի
մէջ Աւետ. մը ընդօրինակել կու տայ և կը նուիր-
է Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին (Մուսանձ-
սեանց՝ «Թորոս Աղբար» Բ. 439)։

ԱՍԱՏՈՒՐ Հ. Զապէլ (1863—1934), ծնեալ Խանձ-
եան, գրական անունն է Սիպիլ. յայտնի գրագի-
տուէր. ծնած Սկիւտար 1863ին։ 7 տարեկանէն
Մատամ Կառիւսի ֆրանսական վարժարանը կը
յաճախէ. 1872ին Ս. Խաչ վարժարանը կ'ըսանի.
յաջորդ տարին Ճեմարանի ուսանող, ուրկէ շըր-
ջանաւարտ 1880ին։ 1879ին կը հիմնէ «Ազգանուէր
Հայունհաց ընկերութիւնը»։ 1881ին կ'ամուսնա-
նայ փաստարան Կարապետ Տօնէլեանի հետ։ Կ'ու-
ղեւորի գաւառները, ուրկէ կ'աշխատակցի Պոլսոյ
մամուլին։ 1889ին կը դառնայ Պոլիս և կը նուիր-
ուի գրական ու հանրային գործունէութեան։
1891ին կը հրատարակէ Աղջկան մը սիրք վէպը,
Ալիս ծածկանունով։ 1896էն սկսեալ՝ Պոլսոյ կա-
րեւոր կրթական հաստատութիւններուն (էսայեան,
Կեդրոնական, եւայլն) մէջ կը պաշտօնավարէ որ-
պէս հայ լեզուի և գրականութեան ուսուցիչ։
1901ին կը վերամուսնանայ Հրանդ Ասատուրի
հետ։ 1902ին լոյս կ'ընծայէ Յոլքեր բանաստեղ-
ծութեանց հատորը։ 1926ին լոյս կը տեսնէ Կնոջ
Հոգիներ պատմուածքներու հաւաքածոն։ 1933-
ին իր գրական և հանրային գործունէութեան
յիսնամեայ յորելեանը կը տօնուի։ 1934 Յուլիս
19ին տեղի կ'ունենայ իր մահը։

«Տիկին Զապէլ Հ. Ասատուր Հայ գրականու-
թեան վերջին յիսնամեակի ամէնէն տիրական
վարպետներէն մէկը կը հանդիսանայ։ Պուէտ Խ.
Միսաքեանի և Ֆէլէկեանի շունչով, անոնց բա-
նաստեղծական ախլանով բեղմնաւորուած իր միտ-
քը, հզոր ճառագայթումներ ունեցաւ առաջին
չըջանին իսկ, երբ մանկամարդ էր և Անահիտ ծած-
կանուէնով այնքան հմտութիւն պահանջող լեզ-
ուապայքարի մը մէջ կը նետուէր, կորովի դի-
մադրութեամբ մը։ Տարիներ ետք, աշխարհարար
լեզուի որպէս ախոյեան մեր իրապաշտ սերուն-
դին կարեւորագոյն ներկայացուցիչը կը դառնար
Տիգրան Կամսարականի, Գր. Զօհրապի և Ա.
Զօպանեանի նման մեծ գրողներու փաղան-
գին մէջ, այն ամբողջօր փաղանգին՝ որուն կը
պարտի արեւմտահայութիւնը իր այսօրուան ար-
ձակն ու քերթողութիւնը։

Տիկին Զապէլ Ասատուր ո՛չ միայն իր սերուն-
դին, այլև յաջորդական սերունդներու միակ քեր-
թողուհին եղաւ ու կը մնայ այսօր ալ»։

Տիկին Զ. Ասատու-
րի հեղինակութիւն-
ներն են. 1. Աղջկան
սիրք, վէպ, հրատա-
րակուած երկու ան-
գամ, 2. Կնոջ հոգիներ.
պատմուածքն եր, 3.
Դրամ եւ Դիրք, վէպ
անտիպ, 4. Յոլքեր, ո-
տանաւորներ, 5. Վե-
վեսումներ, ոտանաւոր-
ներ թերթերու մէջ
տպուած, 6. Որբունից,
7. Հարսը, մանկական
թատերախաղ, 8. Պաս-
ուաւոր Ընթացիք, թա-
տերախաղ անտիպ, 9.



Տիկ. Զ. ԱՍԱՏՈՒՐ

Առաքինութեան մրցա-
նակ. թատերախաղ, 10. Մանկական սաղեր, գիր-
քերու մէջ տպուած, 11. Առակներ. Հ. Ասատուրի
աշխատակցութեամբ, 12. Ծարուր եւ Ուրուր. հայ-
կական հէքեաթ անտիպ, 13. Քերականութիւն ար-
դի աշխարհարարի՝ տարրական, 14. Քերականու-
րիւն Ա. Բ. Գ. Տարի և Բարձրագոյն (Հր. Ասա-
տուրի հետ), 15. Թանգարան հատընտիր հատուած-
ներու Ա. Բ. Գ. Տարի և Բարձրագոյն (Հր. Ասա-
տուրի հետ), 16. Սիլվեստր Պոնարի ոմիրը, թրգմ.
Անաթոյ Յրանտէ, 17. Պանպանակ թրգմ. Բօլ էո-
վիւտէ, 18. Ս. Իլիք ֆրանսերէնէ թարգմանու-
թիւն, 19. Թանգարան մայրենի լեզուի, 20 Մագ-
նիս թատերախաղ՝ Ա. Փանոսեանի հետ։ (Ազատ-
եան Թորոս «ժամանակակից դեմքեր» Ա. գր-
քոյկը, ուր կան եւ ցանկերը գրագիտութիւնը քերթ-
ու մեջ ցիրուցան սպուած էրբուածներու եւ յօդ-
ուածներու։ Սիպիլի աւակերներն են Արեւոյս շ
Անտոնեան, Ասրիկէ Լօմակեօգեան, Անանի Պ.
Սիմանեան, Բերուզ Զ. Խօրասանեան, Սիրարփի
Տեր Ներսեսեան, Սիրվարդ Կիւլպէնկեան, Ասրիկէ
Տասրեան Թագուհի Սվանեան եւայլն)։

ԱՍԱՏՈՒՐ Կալիքիկէ 1880ին՝ «Կիլիկեան» ընկե-
րութեան մատուցած բարոյական աջակցութեան
համար Միացեալ Ընկերութեան պատուոյ անդամ
կ'ընտրուի։ (Սանակ Մետրոպի «Հայուն Տարեցոյցը»
1913 էջ 273)։

ԱՍԱՏՈՒՐ Հրանդ (1862—1928), գրագէտ-բա-
նասէր, փաստարան, ծնած Պօյաճը գիւղ (Պոլիս)
1862ին։ 1866էն սկսեալ կը յաճախէ ամառը տեղ-
ւոյն Երից Մանկանց դպրոցը, իսկ ձմեռը Հիսար-

աիպի Մէղպուրեան վարժարանը 1871ին կ'աչակերտի Ռոպէրթ Գոլէճի, ուր կը մնայ մինչև 1873: 1874ին կը թարգմանէ Պասուրբիւն Մալվինային,

որ լոյս կը տեսնէ յատուկ տետրակով: 1875ին կ'աչակերտի Մինաս Չերազի, որ կը դասախօսէ հայերէն և ֆրանսերէն: 1876ին կ'աչակերտի Նասել Բիւղանդ Քէչն անի, թուրքերէնի և ուսուցութեան դասեր առնելով: 1879ին կը հրատարակէ Պասեմական ցեղեցումները: Նոյն տարին խօսած իր մէկ ճառը Սահմանադրութիւնը եւ նայ ժողովուրդը լոյս կը տեսնէ մասնաւոր պրակով: 1879ին ատենադպրութիւնը կը վարէ Կիլիկեան Ընկերութեան և կ'անդամակցի Գպրոցատիրաց Արեւելեան ընկերութեան: 1881ին կը մեկնի Բարիզ, ուր կը մնայ երեք տարի, իր աչակերտ իրաւագիտական վարժարանին: Հոն կ'անդամակցի Ուսումնասիրաց Ընկերութեան: 1884ին կը դառնայ Պոլիս: 1885ին փաստարանական գրասենեակ կը բանայ ընկերակցարար: 1888ին կ'անդամակցի Կտակաց Հոգաբարձութեան: 1889ին խնամակալ կ'ընտրուի Կեղրոնական վարժարանին: 1890ին Ազգային Երեսփոխան կ'ընտրուի Պոյաճը-գիւղէն, յետոյ ալ Ճէրի-գիւղէն: 1892ին «Մասիս» կը հրատարակէ Գրիգոր Զօհրապի հետ: 1895էն սկսեալ կ'աւանդէ իրաւագիտական մասնաւոր դասեր: 1898ի վերջեր կը ստանձնէ Կեղրոնականի բարձր կարգերու գրականութեան և աշխարհարարի դասախօսութիւնը, զոր կը վարէ 10 տարի անընդհատ:



Հ. ԱՍՍՏՈՒՐ

1900ին Ուսումնական Խորհուրդի անդամակցութեան կը կոչուի, կ'անդամակցի Սանասարեան խնամակալութեան: 1905ին կ'անդամակցի Իզմիրեանց Յանձնաժողովի Գրական մասնախումբին: Այդ տարին Օսմանեան իրաւագիտութիւն դասախօսելու կը կոչուի անգլ. դասպանատան և հիւպատոսարանի թարգմաններուն և այդ առթիւ կը պատրաստէ կարգ մը ֆրանսերէն գործեր: 1909ին անդամ կ'ընտրուի Առևտ. Ծովային դատարանին: 1910ին առաջին աստիճանի պաշտօններու ընտրութեան յանձնախումբին անդամ կ'ըլլայ: 1911ին Ծովային Գրաւմանց Դատարանի նախնական ատենանին և ա-

ռևար. օրէնքի յանձնաժողովին: 1912ին անդամ էնճիւմէնը Ատլիէյի ժողովին: 1913ին անդամ քաղաքային դատաւարութեան օրինագիրքը սըրբագրելու պաշտօն ունեցող յանձնաժողովին: 1914ին պետական խորհուրդի անդամակցութեան կը կոչուի: 1915ին կը հաստատուի Գնալը կղզի, առողջական պատճառներով: 1919ին կրկին հիւանդանոցով կը փոխադրուի Շիշլիի հիւանդանոցը, ուր կը մնայ մինչև 1920 Մայիս: 1920 Մայիսին կը փոխադրուի Գնալը, ուր իր հիւանդութեան ամբողջ շրջանին ընտանեկան գուրգուրալի խնամքներ կը վայելէ:

1920էն սկսեալ հետոյ ալ իս հանրային կեանքէ և պետական պաշտօնավարութիւններէ, կը նշուի զրական, բանասիրական և մատենագրական աշխատութեանց: 1928 Յունիս 5ին տեղի կ'ունենայ Հրանդ Ասատուրի մահը:

Հրանդ Ասատուրի հրատարակած երկասիրութիւններն են.— 1. Պասեմական ցեղեցումներ 1879, 2. Սահմանադրութիւն եւ Հայ ժողովուրդը 1880, 3. Ազգ. Հիւանդանոցի Ընդհանուր Տարեցոյց Ա. և Բ. տարի 1900—1, 4. Գիմասուներ 1921, 5. Գործնական Քերականութիւն և Թանգարանի Դասընթացները (Սիպիլի հետ): (Բառ առ բառ աւելուած թ. Ազատեանի 1937ին լոյս ընծայած ժամանակակից դեմքեր Ա. հատորիկէն):

ԱՍՍՏՈՒՐ Հերմիցէ Պ., տաղանդաւոր դաշնակարուհի, ծնած 1914 Յունիս 26ին Ռուսճուքի մէջ (Պուլխարիա), գուշտըր Պարոյր Ասատուրի Իր նախնական կրթութիւնը ստացած է Պոլիս Հայ Կղզոյ Ազգային դպրոցը, անկից իր ծնողացը հետ Պուլկարիա վերադառնալով մտած է Լօվէչի Ամերիկեան գօյէժը ուրկէ փայլուն վկայականով մը ընթացաւարտ եղած է շատ մատաղաստի հասակին մէջ:



Օր. ԱՍՍՏՈՒՐ ՀԵՐՄԻՆԷ

Կ. Պոլիս զանուած միջոցին 8 տարեկան հասակին մեծ փափաք ունեցած է նուագի: Այս հիւղին մէջ իր առաջին դաստիարակուհին եղած է Օր. Սիրաքեան Հայ-Կղզիէն, որը տեսնելով փոքրիկին նուագի

հանդէպ ունեցած տաղանդը յանձնարարած է որ չընդհատեն դասերը և Պուլկարիա վերագառնալուուն յանձնեն զայն լաւ ձեռքերու մէջ:

Օր. Հերմինէ Ամերիկեան գոլէժը լրացունելէ վերջ մէկ տարի Սօֆիայի մէջ մասնաւոր դասընթացքի հետեւած է փրօֆ. Տիկին Բէլէշէքի մօտ և յետոյ զօնգուրսի քննութեան ներկայանալով ընդունուած է գօնաէրվաթուարը, ուրկէ իր ընդունակութեանը շնորհիւ 3 տարիէն (1935ին) շրջանաւարտ եղած է շատ մը ուսանողուհիներու մէջ առաջին հանդիսանալով, իր անդամիկ նուագահանդէսը լուծած է Զինուորական Ակումբի սրահին մէջ նախարարներու, բրոֆէսորներու ներկայութեանը արժանանալով առաջնակարգ վկայականի և շատ մը ծաղկեփունջերու:

Հէրմինէ Ասատուր դաշնակի ճիւղը կատարելագործած է Վիեննայի մէջ նշանաւոր բրոֆէսորներու մօտ, և Պուլկարիա դարձին՝ Սօֆիայի մէջ մէկէ աւելի անգամներ նուագահանդէս սարքած է ի նպաստ կարօտ ուսանողներու:

Պուլկար աղբը կը ճանչնայ այլևս այդ տաղանդաւոր հայուհին, որովհետև շատ անգամ գրուած է իր մասին թերթերու մէջ և լուսանկարն ալ հրատարակուած:

Օր. Հէրմինէ Ասատուր բացի միւլիքէն և մայրենի լեզուէն՝ տիրացած է ֆրանսերէն, գերմաներէն, պուլկարերէն և անգլիերէն լեզուներուն (Ա. Փ. 1936):

ԱՍԱՏՈՒՐ Պարոյր, գրասէր-առևտրական, ծնած Սերաստիա 1882 Օգոստ. 20ին, որդի Ասատուրի սերած Վերիբերդացի Մըջնիկ տոճէն, (Վերիբերդը Սենեքերիմ թգ.ի ժամանակ անոր անձնական զօրաց իրրև բանակատեղի և նախարարաց իրրև բնակավայր ծառայած էր) ունենալով դարաւոր ընտանեկան պատմութեան մը արձանագրութիւնները իրական տուեալներով: Պարոյր Ասատուր նախնական կրթութիւնը Ս. Սարգիս եկեղեցւոյ դպրոցին մէջ ստանալէ ետք փոխադրուած է Ամերիկեան գոլէժը, ուրկէ շրջանաւարտ եղած է բրոֆ. Պալեօզեանի և Գապագճեանի օրով:

Որպէս յաջողակ թուարանագէտ դպրոցական շրջանէն իսկ յանձնառու եղած է մ'հտ. Մարուգէ Իրրանոսեանի առևտրական հաստատութեան մէջ պաշտօնավարելու: Պատասխանատու պաշտօններ վարած է նաև նոյն Տան մասնածիւղերուն մէջ Մամսոն, Գասթէժուրի և այլն:

1900էն սկսեալ աշխատակցած է կարգ մը թերթերու, Բ. Բէշեանի «Բիւզանդիոն»ին, Ա.

Զէօմլէկճեանի՝ առևտրական շօրաթաթերթին, ինչպէս նաև արտասահմանի Հնչակեան կիսապաշտօնական օրկաններու՝ Պ. Հայկազն, Հայկունի, Անցորդ և Պ. Ա. ստորագրութիւններով: 1904ին

վտանգուելով՝ անցած է Եւրոպա և հետեւած որպէս թղթակից ուսանող Բարիզի Ազատ Համալսարանի ճիւղին, վկայական ստանալով:

Նախապէս հաստատուած է Ռուսոնոք (Պուլկարիա) իրրև գլխաւոր տոմարակալ Կրօնիկ և Կ. Փափազեան վաճառատան և ի վերջոյ անձնական ձեռնբեղէցութեամբ հիմնած է Գոմիսիոնի գործ մը, որ հասցուցած է փայլուն վիճակի մը:

Պ. Ասատուր 1923էն ի վեր իր առևտրական տունը հաստատած է Սօֆիա, իր պատուաւորութեամբ մեծ վստահութիւն կը վայելէ զրամատուներէ: Գործօն անդամ է ֆրանսական և բոլոնական Առևտրական Կրասնեակներու:

Ինքն էր որ 1933ին կազմակերպեց ներգաղթի կեդրոնական կոմիտէն և աշխատեցաւ մինչև կարաւանին մեկնումը: Սերաստիոյ Վերաշինաց Միութիւնը հաստատեց, նախաձեռնարկ և գըլխաւոր հիմնադիրը եղաւ Հայ Համագործացական Սեւան զրամատան, նաև «Գօթվա» ըստնետիրական ներկի գործարանին Կարա-Իսքըր:

1935ին հրատարակեց «Վիքոն-Արարտ» Պուլկարահայ Տարեգիրքը, որ համայն հայ մամուլէն զովեառներու արժանացաւ, որպէս ատաղձ ապագայ Պուլկարահայ պատմութեան:

Մեծ սիրահար մըն է իւ. Հայաստանի և հիացող անոր հսկայ վերաշինութեան (Սօֆիա, 3 Յունիս 1936, Ս. Փաշանեան):

ԱՍԱՏՈՒՐԵԱՆ Ազատ, թենոն, օրերայի երգիչ, ծնած Ղարարազ 1882ին, նախնական և միջնակարգ ուսումը թիֆլիսի մէջ աւարտելէ ետք 1900ին Իտալիա անցած ու Միլանոյի Բօնետվաթուար աւարտած է: Երգած է Իտալիա, Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսա, Պուլկարիա, և 1921ին անցած է Ռումանիա, ուր թէ՛ ազգային շրջանակներու մէջ՝ ըլլայ Պուքրէշ, ըլլայ գաւառները,



ԱՍԱՏՈՒՐ ՊԱՐՈՅՐ

և թէ պետական թատրոններու մէջ երգած է օրերայի ներկայացումները:

Ասատուրեան կը խօսի գրեթէ ասոր լեզուներ և այդ լեզուներով ևս կ'երգէ: Ասատուրեան Պոլիս երգած է հայկական երգերը Օրֆէնոն Ռեֆորսի Բլախներուն վրայ, որոնք Պոլսոյ մէջ կը վաճառուին:



Ա.Ս.Ս.ՏՈՒՐԵԱՆ Ա.Չ.Ա.Տ

ԱՍԱՏՈՒՐԵԱՆ ԼԵՆՈՆ, աստղագէտ, ծնած Սամաթիա (Պոլիս) 1863ին, աշակերտած Թիւրքիան Բասքալի, հազիւ չըջանաւարտ՝ Սամաթիոյ Սահակեան վարժարանին մէջ թուարանութիւն կը դասախօսէ: 1905ին Ռուսոյութիւն մէջ դերասանութիւն կ'ընէ. 1906ին Բարիզ է. 1910ին Ֆիլիպէ. 1914ին Պոլիս կը դառնայ աստղագէտի անունը շահած: Հեղինակած է «Եւ սակայն չի դառնար», գրքոյկը ասպոցուցանելով թէ երկերս Հալլէյի գիտաւորէն չի կործանիր: Բարիզի աստղագիտական Ընկերութեան պաշտօնաթերթը հրատարակած է իր հետազոտութիւնները: Անդամ է Ֆրանսայի Աստղ. Ընկերութեան և, Ասատուրեան երբ Բարիզի մէջ աստղագիտութեան հետեւած է՝ ցորեկները լոբում ծախելով իր օրապահիկը հայթայթած է: 1937ին երբ Բարիզի մէջ դումարուեցաւ Ֆրանսայի աստղագիտական Ընկերութեան ընդհ. ժողովը՝ նախագահին և Տիկ. Ֆլամարիոնի ճառերէն ետք կատարուած է բաշխումը ընկ.եան յիշատակական անդամներուն տրուած պատուանշաններուն, որոնց կարգին Ասատուրեան ալ ստացած է պսակաւորի արծաթեայ պատուանշան մը՝ իր կողմէ ընկ.եան մատուցուած ծառայութեանց ի վարձ:

Հասցէն է L. Assadourian, 33 rue de la Charbonnière PARIS 18

- ԱՍԱՔԻ ԿԵՐԿԷ տե՛ս Առևտրի վիշ:
- ԱՍԱՐ ՍԲԱՍԱՅԻ Տ. ՅԱԻԵԼՈՒԱՆԸ:
- ԱՍԵՍՖՈՐ կամ Ասեցվոր հին գո. Տայոց, այժմեան Բերդազրակ վիճակին կը համապատասխանէ:

ԱՍԵՂ, չարաթաթերթ (գաւեսական), ասպ. Աղեքսանդրիա 1923ին:

ԱՍԹԱՐԱԲԱՏ գղ. Իրանի, 6 ընտանիք հայ կայ:

ԱՍԻՈՒԹ գղ. Եգիպտոսի, 85 հայ կայ:
ԱՍԻԱ, «Ձայն Հայաստանի, լրագիր ազգային, քաղաքական, բանասիրական և այլն»: Տպ. Կ. Պոլիս, 1872—1875: Խմբագիր անօրէն Յովակիմ Գ. Բէյրեան, յետոյ Յակոբ Խանճեան, ապա Մկրտիչ Փորթուգալեան:

ԱՍԼԱՆ կամ Արսլան:
ԱՍԼԱՆ կամ Արսլան Ապրօ տե՛ս Ապրօ Արսլան (Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՆԸ):

ԱՍԼԱՆԵԱՆ Տֆր. Ասեփան տե՛ս Արսլանեան:
ԱՍԼԱՆ Արեակ Խ. ատամնարոյժ, ծնած 1886ին Մուհնճուսուն և իր նախակրթութիւնը առած է իր ծննդավայրին Աղզային Մճրեան, իսկ երկրորդական կրթութիւնը Թայասի Ամերիկեան վարժարանին մէջ, որմէ 1905ին վկայականը ստանալէ յետոյ Պոլիս անցած՝ և մտած է բժշկական վարժարանը, ատամնարութեան հետեւելու համար: 1909ին կը ստանայ վկայական:



ԱՍԼԱՆ ԱՐՇԱԿ Խ.

1914ին կամաւոր Հայ Լէզէոնական Ֆրանսական բանակին մէջ:

Ատամնարոյժ սպայ Տեղակալ Ատանայի և Մերսինի Ֆրանսական հիւանդանոցներու:

Կիլիկիոյ պարպումէն առաջ դացած է Պոլիս, ուր Ֆրանսական Կիւրճանէի հիւանդանոցին ատամնարոյժ եղած է երկու տարի: Հոն ամուսնանալէ յետոյ 1923ին Պուէնոս Այրէս գացած է իր եղբորը՝ ծանօթ ճարտարապետ Իսրայէլ Ասլանի մօտ: Արշակ Արսլան եղբայրն է նաև Տոքթ. Յովհ. Ասլանի (Ալպօյանեան՝ «Հայ Կեսարիա» 2099):

ԱՍԼԱՆ (Արսլան) Իսրայէլ Խ. ճարտարապետ, ծնած է Մուհնճուսուն (Կեսարիա) 1879 Օգոստ. 15ին. նախնական ուսումը կը ստանայ ծննդավայրին Մճրեան վարժարանին մէջ, ուրկէ կ'անցնի Կեսարիա Ս. Կարապետ վանքին ժառանգաւորաց վարժարանը և չըջանաւարտ ըլլալէ ետք 5 տարի ուսուցիչ-անօրէնի պաշտօնը կը վարէ Կեսարիոյ Հայկեան վարժարանին մէջ ու յետոյ 4 տարի ընդ. Տնօրէնի պաշտօն կը վարէ Մէրզուֆունի (Մարզուան) և Օրտու քղ.ի Աղզային երկսեռ վարժարաններու մէջ: Ի. Ասլան 1905ին կը մտնէ Բարիզի ճարտարապետա-

կան վարժարանը և 1909ին վկայականը ստանալով Պուլհեսու Այրէս կը մեկնի, նեցուկ ու պաշտպան հանդիսանալով վերջերս հոն գաղթող ազգայնոց:

Ի. Արսլան իր ճարտարապետական ապարէզին մէջ անտեսած չէ ազգային կեանքը և իր մասնագութեան գլխաւոր առարկան ըրած է Արժանիքի և մանաւանդ Պ. Այրէսի հայ գաղութին ազգապահպանման կարևոր հարցը և ջանացած է անոր մէջ ազգային ոգին վառ պահելու միջոցներ ձեռք առնել:



ճարս. ԱՍԼԱՆ ԻՍԲԱՅԷԼ

1918ին, ընդհանուր պատերազմի ընթացքին, Պ. Այրէսի մէջ հիմնած է «Հայ Ազգային Միութիւն» մը (Union Nacional Armenia), զոր տեղական կառավարութեան և Դաշնակից պետութեանց ներկայացուցիչներուն պաշտօնապէս ծանչցնել տալէ ետք, հայ գաղութի մէջ հիւպատոսարանի պակասը լրացուցած է անցագիրներ, ինքնութեան վկայագրեր և այլ պաշտօնական գրութիւններ յանձնելով:

1920ին Պուլհեսու Այրէսի մէջ հաստատած է «Հայ Կաղութային կեդրոն» անուան տակ (Centro Colonial Armenia) նոր կազմակերպութիւն մը, որ յաջողապէս ի գլուխ հանած է՝ Պոյէն, Սիւրիայէն և Յունաստանէն տեղս հասնող հազարաւոր գաղթական հայերու տեղաւորման դժուարին հարցը, առանց տեղական իշխանութեանց և օտար գաղութներու աջակցութեան ղիմելու: Սոյն կազմակերպութիւնը նոյնպէս նախաձեռնութիւնը ունեցած է կարգ մը դպրոցներ և մատուց մը բանալու:

Ի. Արսլան 1930ին նոր ծրագիր-կանոնագիր մը պատրաստելով տեղական կառավարութեան վաւերացնել տուած է «Հայ Առաքելական Եկեղեցւոյ Հոգարարձութիւն» Institucion Administrativa Iglesia Armenia) անուան տակ և ի՛ր իսկ նախաձեռնութեամբ ի գլուխ հանած է Հայ Կեդրոնի շինութիւնը, թատրոն — սրահով և յարակից բաժիններով, որոնք յատկացուած են Արսլանեան երկսեռ վարժարանի, գրադարանի և

հաստատութեան գրասենեակի: Ներկայիս Հ. Ա. Եկեղեցւոյ Հոգարարձութեան գանձապահն է: (1937ին դրկուած կենսագրականէն):

Ի. Արսլանն է որ 1932 Հոկտ.ին հիմնած է Հայ Կեդրոն ամսաթերթը և զայն կը խմբագրէ ցարգ: (1938): Ի. Արսլան իր անհատականութիւն մը կը գրաւէ այսօր Հարաւային Ամերիկայի գաղութին մէջ պատուաւոր զիրք մը և իրրեւ արժանաւոր գաւակը իր հայրենիքին: (Այլ. «Հայ Կեսարիա» էջ 1185 - 6):

ԱՍԼԱՆ Յակոբ, Ազնուատո՛մ հայ մը. Պուլքովինացի Իր ազնուականութեան հաստատութիւնը ընդունած է Ենչի մէջ 15 Յունուար 1810ին և Կայիցիայի մէջ նոյն վաւերաթուղթը ծանչցուած է 20 Ապրիլ 1810ին, (Տօնիկիէվի):

ԱՍԼԱՆ (Արսլան) Յովհաննէս, բժիշկ և ուսուցիչ, ծնած է Մուլհուսուէն 1873 Դեկտ. 3ին, եղբ. ճարտարապետ Իսրայէլի: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին Մծրնեան վարժարանին մէջ, յետոյ տեղւոյն բողոքական քարոզիչէն անդիէրէն դասեր կ'առնէ և 1888ին կը մտնէ Մարզուանի Անատոլիա Գոյէճը, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ 1893ին: 1893—4ին անդիէրէնի դասախօս Ս. Կարապետի բարձրագոյն վարժարանին: Յետոյ Պէյրութ գացած իրր վաճառականի գրագիր. սակայն տարին չլրացած մըտած է Ամերիկեան համալսարանը: 1890ին բժիշկ վկայուած և Կ. Պոլսոյ մէջ քննութիւն տալէ վերջ գացած է Կեսարիա, ուր գործակցած է Թալասի Ամերիկեան հիւանդանոցի բժշկապետներուն (Dr. W. S. Dadd և Dr. W. M. Post): 1908ին կը տեղափոխուի Օրտու, 1910ին կ'երթայ Բարիզ, ուր ձեռք կը բերէ վիրաբոյժ կնախտաբոյժի վրկայական, երկու տարի աշխատութեամբ: 1912ին կը հաստատուի Թալաս, 1914ին կը զինուորագրուի և կը զրկուի Կովկասի ճակատը, Մամա Խաթունի հիւանդանոցին բժշկապետ կը կարգուի եւ թիֆուսէ վարակուելով Երզնկա կը դառնայ: Յետոյ կը զրկուի Սեբաստիա, ուրկէ կը յաջողի դառնալ Թալաս՝ պաշտօնով. սակայն երկու ամիսէն դարձեալ ճակատ կը զրկուի: Զինադադարին Կարս էր, Պոլիս գալով Թալաս գնաց՝ ուրկէ իր ընտանիքը առնելով Էրէյլի ճամբով Ատանա կ'երթայ, ուր կը սթանձնէ Ֆրանսական հիւանդանոցին բժիշկի պաշտօնը, նոյն ատեն դարձանելով N. E. R.ի որբանոցներուն երկսեռ հայ որբերը: Կիլիկիոյ պարպումէն յետոյ կ'երթայ Կ. Պոլիս և N.E.R.ի որբանոցներուն մէջ կը պաշտօնավարէ: 1922 Նոյեմբերին որբերու կարաւանին հետ Քորֆու կ'երթայ, ուր որբանոցներուն իրր բժիշկ

կ'աշխատակցի, իսկ անոնց փակումէն յետոյ, American Women's Hospitalsի կազմամերպու-թեան կողմէ պաշտօնի կը կոչուի Սելանիկի հիւանդանոցին մէջ, և կ'ըլլայ միեւնոյն ատեն Ամերիկեան հիւպատոսարանի բժիշկը:

Կեսարիոյ մէջ անդամակցած է Գաւառական ժողովի, Ատանայի մէջ՝ Ազգ. Խորհուրդին և ատենապետ Կեսարիոյ Հայրենակցականին, Սելանիկի մէջ Հօկի վարչութեան ատենապետն էր: Երբեմն Ազատական կուսակցութեան անդամ, անոնց միացումէն յետոյ անդամակցած է Ռամկավար-Ազատական կուսակցութեան: Մարզուան Անաթոլիա Գոյէճի տպարանէն հրատարակած է իր «Նոր-Այգ»ի մատենաշար, փոքր տետրակ մը Քոլերա (1910) խորագրով և ունի յօդուածներ հայ լրագիրներու մէջ: (Ալլոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 1184—5): (Նկար տե՛ս էջ 229)

ԱՍԼԱՆ Ռաուլ, հայազգի, միջազգային անուանի գերասան, ծնած է Սելանիկ, մեծ մայրը Փսարայէն է և հելլէնուհի մը: Հայրը կը սերի հայկական իշխանական հին ընտանիքէ մը: Փոքր հասակէն մեծ սէր ցոյց կու տայ թատրոնի հանդէպ: Առաջին անգամ Համպուրկի մէջ բեմ կ'ելլէ փոքր դերով մը. քիչ ետք Վիեննայի մէջ հռչակաւոր բեմադրիչ Ռայնարտ զինքը ի լոյս կը հանէ: Կը հրաւիրուի Շտուտտարդ, ուր կը մնայ հինգ տարի: Երկու տարի «Տէօյէ Թոլքոթէաթեր»ի մէջ խաղալէ ետք, կ'անցնի Վիեննայի «Պուրկէթէաթեր», ուր կը մնայ մինչև հիմա (1937), պարբերաբար երևալով ուրիշ երկիրներու մէջ: Ի. Ասլան բեմ ելած է Շէյքսպիրի գրութէ բոլոր գերերով:

ԱՍԼԱՆ Վահան, ուսուցիչ գրող. բնիկ Մարզուանցի, թերաւարտ ծննդավայրին Ամերիկեան Գոյէճէն, Կեսարիա Ս. Գարապետի բարձրագոյն վարժարանին անգլիերէն լեզուի դասախօս 1906-9: 1909ին կը մեկնի Երուսաղէմ կրօնաւորելու համար: Բանաստեղծութեան հակում ունէր: Աշխատակցած է հայ մամուլին: Մեռած է (Ժամանակ ք. 5995): (Ալլոյանեան՝ «Հայ Կեսարիա. էջ 1185):

ԱՍԼԱՆՆԱՆ Կամ Ասլանեան:

ԱՍԼԱՆՆԱՆ Արամաս, գրգ. Միարան Երուսաղէմայ Ս. Յակոբ վանքին, ծնած Մալաթիա 1860ին, ուսումը ստացած է վանքին ժառանգաւորաց վարժարանին մէջ, ուր 1892ին արեղայ ձեռնադրուած է. և վանքին մէջ նախ հիւրընկալի պաշտօն վարելէ ետք Բեթղհէմի, Յոպպէի Ս. Փրկիչ վանքին մէջ տեսչական պաշտօն վարած ու վախճանած է 1927 մարտ 13ին Ս. Յակոբայ վանքին մէջ: (Աղանունի՝ «Միաբանք 11):

ԱՍԼԱՆՆԱՆ (Ասլանօօ) Աղեփանլար, մեծանուն և յայտնի երաժշտագէտ, ծնած է Պաղու 1874ին, ուր աւարտելով երկրորդական վարժարանը՝ կը մտնէ Մոսկուայի ֆիլարմոնիքի քօնսերվաթուառը և անոր ընթացքը կ'աւարտէ միաժամանակ ներկայիս նշանաւոր Սերժ Կուսեւեցկիի, նշանաւոր երգիչ Սարինովի, Մոսկուայի զեղարուեստական թատրոնի պրիմիէր Կնեպեր Չեխովայի և Մոսկովինի հետ: 1899 թուականէն սկսած՝ Ռուսիոյ նշանաւոր քաղաքներուն մէջ վարած է մեծ սէմֆօնիք օրքէստրաներ: 1909ին Փեթրոկրատի քօնսերվաթուառի տնօրէն Ա. Գլազունով՝ միակ յարմարագոյն մարդը կը դառնէ յանձին Ասլանովին՝ գլխաւոր նուագապետի պաշտօնը վարելու այն ժամանակներուն նշանաւոր և ամբողջ Ռուսիոյ մէջ յայտնի Պավլովսկի մամուլային մեծ սէմֆօնիք օրքէստրային: Այդ օրքէստրան անընդատ կը վարէ մինչև 1917, միեւնոյն ժամանակ 1911ին կը հրաւիրուի Փեթրոկրատի կայսերական Օրերայի նուագապետ՝ երբ հին կ'երգէր նաև ռուս նշանաւոր երգիչ Ֆ. Շալխապին, և այդ պաշտօնը կը վարէ մինչև 1917: Ասլանեան կը համարուի Ռուսիոյ լաւագոյն սիմֆօնիք և օրերայի նուագապետն երէն: Անոր նուագահանդէսներու մասին մեծ զգովեստով են խօսած Ռուսիոյ նշանաւոր քննադատները: 1922էն



ԱՍԼԱՆՆԱՆ Աղեփանլար ետք Բարիզ և Մօնթէքարօ՝ Ասլանեան վարած է մէկ քանի սիմֆօնիք նուագահանդէսներ և օրերաներ, որոնց մասին ֆրանսական թերթերը մեծ զովեստով են խօսած և յետոյ Ամերիկա է անցած (Յ. Մեհրապեան՝ «Նաւասարդ» Ա. արի էջ 114):

Ասլանօֆ Նիւ Եօրքի մէջ «Արսլանօֆ» Սթուտտին կը բանայ որուն վարիչ տնօրէնութիւնը ինքը կը վարէ, ուր իր արուեստը կատարելագործած է երգչուհի Մարի Արագեան (տե՛ս): Հայազգի երաժշտագէտը հեղինակած է նաև օրքեստրայի համար զրուած հայերէն երգերու եւ նուագներու շարք մը:

ԱՍԼԱՆՆԱՆ Աւեսիս, (Աւեսիս Բեմգի), 1893ին շրջանաւարտ Պոստ անտառարանական վարժարանէն, եղած է Անտառներու վարչութեան ընդհ. տնօրէն և հանգստեան կոչուած:

ԱՍԼԱՆՆԱՆ Գալուս, Բժիշկ, ծնած Վան 1868 Փետր. 13ին: Ծրջանաւարտ Մ. Փորթուզայեանի հիմնած Կեդրոնական վարժարարէն: Երկու տարիի չափ ուսուցչութեամբ կը զբաղի սոյն վարժարանին մէջ: Բժիշկ. ուսանողութեան սկսած է Մարտիիոյ մէջ, ուր 1890ին, հիւանդանոցներու «Interne» մըրցումին մէջ առաջին կ'ելլէ: Բժիշկական վրկայական կը ստանայ՝ Բարիդի համալսարանէն՝ 1895ին և Սելաւնիկ կը հաստատուի, երկար տարիներ վարելով Իտալական եւ Հրէական հիւանդանոցներու վիրարութեայեանի պաշտօնները: Իտալական կառավարութիւնը անուանած է զինք՝ «Ասպետ Իտալական Թագին»:



Տոքր. Գ. ԱՍԼԱՆՆԱՆ

Տոքթ. Ասլանեան վարած է Ազգային և հասարակական կարեւոր պաշտօններ: Ան՝ եղած է՝ Հայ Հանրապետական Կառավարութեան պատուակալ Հիւպատոս: Սելաւնիկի Խնամակալութեան, Բարեգործականի տեղւոյն մասնահիւղին և Ազգային Վարժարանի Հոգաբարձութեան Աստեճակատ:

Տոքթ. Ասլանեան, իր հանրային կեանքին մէջ, ցոյց տուած է հասուն, փորձառու և ողջախոս հայու մը ոգին: Ինքն է Սելաւնիկի ամէնէն վաղեմի բժիշկը: (Մակարեան՝ «Յուլագիրք» էջ 201):

ԱՍԼԱՆՆԱՆ Գալուս, իրաւարան, ծնած է Վան, 1882ին չրջանաւարտ Մ. Փորթուզայեանի Կեդրոնական վարժարանէն: Վախճանած:

ԱՍԼԱՆՆԱՆ (Արսլանեան) Գեորգ Արքեպ. Պոլսոյ պատրիարքական Տեղապահ, գրագէտ: Աշխարհական անունով Գարեգին, ծնած է Բիւնկեան 1869ին: Ծննդավայրին Սեբրոպեան վարժարանին տեսչութիւնը վարած է ատեն մը: Յետոյ Պոլիս երթալով՝ կը հետևի կեդրոնական վարժարանի կիրակնօրեայ հոգեբանական դասընթացներուն: 1890ին իր եղբորը հետ կը հիմնէ գուլպայի եւ ֆանելայի գործարան մը: Ի վերջոյ կայսերական պալատան «Փանէլաճի պաշը» կ'անուանուին:

1898ին Գ. Ասլանեան սարկաւագ կը ձեռնարարուի Եւզոկիոյ մէջ և կը դառնայ Տիվրիկ, ուր իր բացած սրբանոցին տեսչութիւնը կը

վարէ 2 տարի: 1900ին Սվազի սրբանոցներուն վերատեսուչ կ'անուանուի: Նոյն տարուան Սեպտեմբեր 10ին վրդ. կը ձեռնադրուի Տէր Գէորգ անունով և Ս. Նշան վանքին փոխ-վանահայր կ'ընտրուի: Իսկ Դեկտ. 30ին՝ Եւզոկիոյ հովուութեան կը կոչուի: 1901ին Առաջն. Տեղապահ կը նշանակուի Ակնայ թեմին, իսկ 1904ին Առաջնորդ կ'ընտրուի Մալաթիոյ: 1908ին Պոլիս կուգայ, ուր կ'ընտրուի անդամ կրօն. և Ազգային ժողովներուն: Երեք թեմերէ իբր պատուիրակ կը մասնակցի կաթողիկոսական ընտրութեան, 1909ին Ատանայի ղէպքին քննիչ: 1909ի աշնան Խարբերդի Առաջն. Տեղապահութեան, 1910ին Թէքիրտաղի Առաջնորդութեան, իսկ 1914ին Ատանայի Առաջնորդութեան կը կոչուի:

1921ին Պոլիս գալով կ'անդամակցի Կրօն. ժողովին: Քարոզչական բազմաթիւ պաշտօններ ևս կը վարէ: 1922ի Հոկտ.ին եպիսկոպոս կը ձեռնադրուի Էջմիածին, Գէորգ Ե. կաթողիկոսէն և 1922 Դեկտ. 22ին Պոլսոյ Պատրիարքական Տեղապահ կ'ընտրուի: Այս պաշտօնը կը վարէ մինչև 1927 Յունիսի վերջը:

1928ին կ'ուղևորի Եթովպիա, Ատտիս-Ապպայի Ս. Գէորգ եկեղեցիին հիմնարկէքը կատարելու:

Գէորգ Արքեպոս. իր առաջնորդական պաշտօններուն հետ ունի և գրական շատ մը արտադրութիւններ, ծաղկեայ ոճով գրուած, որոնց ցուցակը հետևեալն է. 1. Ժիրայր, 2. Հովոյի խօսքեր, 3. Հայ Պանդուխտին, 4. Հայ Զինուորին, 5. Մատենիկ մը բանախօսութեանց, 6. Գեղեցիկ Ասացուածք (Ա. Բ. Գ.), 7. Կեանքի դասեր, 8. Աղուհացից Եօթնեակը: 9. Ուղևորութիւն յԵթովպիա, 10. Գիւղական պատկերներ:



ԳԷՈՐԳ ԱՐՔ. ԱՍԼԱՆՆԱՆ

1890ական թուականներէն ի վեր աշխատակցած է Բազմավեպի, Հ. Կոչնակի, Սիոն, Անանիս, Բիւզանդիոն, Եփրատ, Արեւելք, Գիւղասնեստ, Կոնակ, Հայ Խօսնակ և այլ պարբերականներու, թերթերու և տարեցոյցներու:

ԱՍԼԱՆՆԱՆ Գեորգ (1849—1922), ճարտարագէտ, ծնած Պոլիս 1849ին, մօրեղբայր Երուանդ Օտեանի, գիտութեանց պսակաւոր, նախկին սան

Թարիզի Կեղրոնական վարժարանի, ծննդավայր դարձին՝ մտած է Հանրային շինութեանց նախարարութիւնը, ճարտարագէտ՝ Հայտար փաշա-Իզմիթ-Սելանիկ գիծերուն, 1892-1902 Օգնական տնօրէն և 1909 տնօրէն կամուրջներու և խճուղեաց, յաջորդ տարին հանգստեան կոչուած: Հեղինակ երեք անգամ ապուած «Աշխարհագրութեան», «Բնագիտութեան» և «Etudes historique sur le Peuple Arménien»-ի (1909), «առեւնապետ Միացեալի Գործադիր Ժողովոյ (1880) և Տնտեսականի, անգամ Ուսումնական Խորհրդոյ, անգամ (1906) և առեւնապետ (1911) վարչութեան, նախագահ (1914) Հայկական Պանքայի վարչական խորհրդոյ, վախճանեղաւ 1922 Յուլիս 30ին ի Կ. Պոլիս» (Թեոդիկ 1923 էջ 417):

ԱՍԼԱՆԵԱՆ Գրիգոր, ղեղազործ, ծնած Կիւմիւլ-ճինա 1896ին, աւարտած տեղւոյն ազգ. վարժարանը և թուրքական Իսախին 1912ին: Երկու տարի Պոլսոյ անասնաբուժական վարժարանը յաճախած: Պայքանեան և ընդհ. պատերազմներու հետեանքով իր ուսումն ընդհատուած: Զինադադարէն վերջ, կը յաջողի ղեղազործական վարժարանի երկրորդ կարգը մտնել: 1920ին չըջանաւարտ՝ իբր ղեղազործ: 1921-3 Հելլէն բանակին մէջ «ղեր-տեղակալ՝ ղեղազործի» աստիճանով ծառայած: 1923էն ի վեր հաստատուած է Կիւմիւլճինա (Յունաստան) ունենալով իր սեփական ղեղազորանը: Վարած է ազգային պաշտօններ: Զաւակն է վաստակաւոր ուսուցիչ Տիգրան էֆ. ի (Մակարեան՝ «Յուլեագիրք» էջ 423):



ԱՍԼԱՆԵԱՆ ԳՐԻԳՈՐ

ԱՍԼԱՆԵԱՆ Թաղուր, վարժապետ, հայկարան, կրօնագէտ, որուն աշակերտած է Սերովրէ վարժապետ Պատկանեան: Եւնի Գարուցիկը կարծուի, Պօղոս պատրիարքին սիրելի եղած մասնակցած է է 1820ի Լուսաւորչականաց և Հռոմէականաց մէջ տեղի ունեցած բանակցութեանց (Այվազեան Աբր. Շար. Կենսագրութեանց Գ. էջ 114):

ԱՍԼԱՆԵԱՆ Լուիզա տե՛ս Լաւ:

ԱՍԼԱՆԵԱՆ Մելանի, 1931ին Պոստոնի համալսարանէն չըջանաւարտ կ'ըլլայ Գիտութեան պակաւոր աստիճանով:

ԱՍԼԱՆԵԱՆ Յովհ. Տ. Մանուչարեան Ս. Յովհ.

ԱՍԼԱՆԵԱՆ Ներսէս եպ. ծնած Պոլիս 1854ին, ինքն է որ 1879 փետր. 23ի Ազգային Ժողովին մէջ ըսած է «կարելի պիտի ըլլա՛ն որ մը այդ բարեփոխմանը, բայց ա՛յն ատեն, կարծեմ, երբ այլևս Հայ մը չմնայ Հայաստանի մէջ, իմ հաւատքս է չհաւատայ Բ. Դրան խոստումներուն»: Ներսէս վրդ. 1891—8 Զմիւռնիոյ առաջնորդութիւն կ'ընէ և այդ թուին էջմիածին երթալով Խրիմեան Հայրիկէն եպիսկոպոս կը ձեռնադրուի և վանայ Առաջնորդութիւն կ'ընէ, վախճանած է:

ԱՍԼԱՆԵԱՆ Սեփան փաշա, բժիշկ, Պոլսեցի, ծնած Բերա 1822 Դեկտ. 25ին աղքատ ընտանիքէ մը: Նախնական կրթութիւնը կը ստանայ Բերայի Ս. էջմիածին ազգային դպրոցին մէջ, 1839ին կը փոխադրուի Ակիւտարի գիշերօթիկ ձեմարան վարժարանը, ուր ընկերակից կ'ունենայ Կարապետ Իւթիճեանը, Մասիսի ապագայ խմբագիրը: Երբ ձեմարանը կը գոցուի՝ Ասլանյանեան Օսմանեան բժշկական վարժարանը կը մտնէ և 1847ին յաջողութեամբ կ'աւարտէ դայն առաջինը հանդիսանալով և Սուլթան Մէճիտի թոշակով Վիեննա կ'երթայ կատարելագործուելու, ուր նոյնպէս աւստրիական վկայական կը ստանայ: 1844 Օգոստոս ամսոյն երբ Պոլիս կը հասնի Տօքթ. Ասլանեան՝ քօյերան մեծ աւեր կը գործէր: Իր մատուցած ծառայութեան իբր գնահատական 1849ին վերջերը, դեռ երբ հաղիւ 27 տարու էր՝ Դեր-գնդապետ կ'անուանուի պէյ տիտղոսով: 1849ին իր ջանքերուն շնորհիւ կը վերականգնի Նարեկեան Ընկ.ը: 1857ին Խասդիւղէն Բերա կը փոխադրուի և գնդապետի աստիճանին կը բարձրանայ: 1860ին յոյս կ'ընծայէ Նկարաղիր Ս. Փրկչեան Հիւանդանոցին: 1878ին երբ վերջ կը գտնէր Թուսեթուրք պատերազմը, Տօքթ. Ասլանեան մեծ դեր կ'ունենայ Հայոց ցաւալի՝ զինակը Թուսաց ուշադրութեան յանձնելու՝ և Այ-Սղեֆանոյի դաշնագրին մէջ գնել տուաւ 16րդ ծանօթ յօդուածը: Ստեփան փաշա 1879ին իբր լիազօր ԲՅԻՅ Ս. Յակոբայ վանական, վարչական և հաշուական գործերու՝ Երուսաղէմ կ'երթայ: Իր քննութեանց տեղեկագիրը կը ներկայացնէ Պոլսոյ Ընդհ. Ժողովին, որուն շնորհակալութեան կ'արժանանայ կը վախճանի 1901ին:

(Ընդարձակ կենսագրութիւնը հրատարակուած է «Հանդէս Ամսօրեայ»-ի 1905 արւոյ 4 թիւերուն մէջ էջ 75—79էն սկսեալ՝ Տոքթ. Վ. Թորգոմեանի կողմէ: Նոյն հանդէսին մէջ (1903 էջ 73—82) կայ Կիրայեան «Ասլանեան Սեփ. փաշայի կենսագրութեան մոռցուած էջ մը»: Տե՛ս նաև Թեոդիկի «Ամենուն Տարեցոյց»ը 1909 էջ 205. «Հ.Կոչնակ» 1931 էջ 1110):

ԱՍԼԱՆԵԱՆ Վահագն, նշանաւոր սօխոտ, աշակերտ բրոֆ. Միւսէնտիտեանի (տե՛ս ՅԱԼԵԼՈՒԱՅՐ):

ԱՍԼԱՆԵԱՆ (Արսլանեան) Վահան ք. (1863—1914), ծնած է Բինկեան 1863ին, քահանայազօր՝ ծած մինչև իր նահատակումը (1914): Աշխարհականութեան ատեն Բինկեանի և Զիմառայի դպրոցներու մէջ դասախօսած է:

Կրօնապատկան յօդուածներով և ուսուցնասիրութիւն ներսով աշխատակցած է Հայրենիք, Արեւելք, Մանգուլիէի Էֆեսոս, Բիւզանդիոն, Ար. Մամուլ, Տանար և այլ թերթերու և պարբերականներու:



Վ.Ա.ՀԱՆ ՔԵՆ ԱՍԼԱՆԵԱՆ

Ունի կրօնի ուսման դասադրքեր, որոնք մեծապէս դնահատուած են և կը կարգացունին ազգային վարժարաններու մէջ:

ԱՍԼԱՆԵԱՆ Տիգրան, վախճանած ի Ֆրանսա 1925ին. եղբայր ճարտարագէտ Յարութիւն Ասլանեանի ծանօթ իր գրական գործերով, որոնց մէջ աչքի կը զարնէ փիլիսոփայելու իր հակումը (Թեոդիկ՝ 1926 էջ 733):

ԱՍԼԱՆԵԱՆ Տիգրան, վաստակաւոր ուսուցիչ, ծնած Սկիւտար (Պոլիս), չրջանաւարտ Արմաշու դպրեմանքէն, ուրիշ ետք Կիւմիւլճինայի (Յունաստան) Ազգ. վարժարանի տնօրէնութիւնը ստանձնած: Ամբողջ 43 տարի կրթական գործին նուիրուած և հայ ու օտար բազմաթիւ սերունդներ դաստասարակած: 32 տարի Կիւմիւլճինայ պաշտօնավարած, իսկ մնացեալ տարիները Իզմիր, Գասապա, Սպարթա, Ատապաղար և Պուրկազ: Կը վախճանի 1923 Յուլիս 23ին Կիւմիւլճինայի մէջ:

ԱՍԼԱՆԵԱՆ Կամ Արսլանբէկ, գղ. Տիգրանակերտի արեւելակողմը, բն. 50 տ. քուրա: Քանի մը տուն Սիլիվանցի և Տիգրանակերտցի Հայեր կային:

ԱՍԼԱՆԵԱՆ, Արսլանբէկ կամ Ասլան պէյ, հայարնակ գիւղ, կը գտնուէր Փոքր Ասիոյ ծայրը, Նիկոմիդիոսյէն հետիտան 3 ժամ հեռու, կառուցուած Քեյ-Թեյի լերան կողերէն միտն վրայ: Ունէր մօտաւորապէս 4000 բնակիչ: 1886էն առաջ ունէին Ս. Աստուածածնի նուիրուած փառաւոր եկեղեցի մը և Մամիկոնեան կոչուած դպրոց մը: 1886ի հրդեհը մոխիր դարձուց ամբողջ գիւղը, 450 տունէն 15 տուն միայն մնաց: Ազգային պատրիարքարանի և կառավարութեան

հանգանակութեամբ գիւղը վերաշինուեցաւ նախկին տեղէն 15 վայրկեան հեռու. 1894ին կրկին այրեցաւ: Երկրորդ անգամ վերաշինուեցաւ:

Քէյ Թեյի լերան մօտ կը գտնուի Ս. Թովմաս Առաքեալի քարուկիր և խարխուլ ուխտատեղին: Արսլանբէկոց գրադումն էր շերամարտութիւն, ազգեգործութիւն, ածխագործութիւն և ծխախոտի մշակութիւն. կար նաև մետաքսի գործարան մը ուր հարիւրէ աւելի օրիորդներ կ'աշխատէին: Ուսման և գիտութեանց եռանդը բաւական տիրած էր իրենց մէջ: Բրոֆ. Հր. Աճառեան 1898ին Վենետիոյ մէջ սպեց Ասլանբէկի բարբառի վրայ ուսուցնասիրութիւն մը: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» Ա. 250): Տե՛ս Ասլան պէյ ԱՍԼԱՆԻԿ, հայարնակ գղ. Ատապաղարանի Սալմաստ գու.ի մէջ. ունի 16 տուն բնակիչ եւ եկղ. մը:

ԱՍԼԱՆ ՂԱՅԱ, ապառաժուտ, բարձր լեռ. Կարսէն 10 ժամ հեռու, Սպերի ճամբուն վրայ:

ԱՍԼԱՆՈՎԻԶ Անդրեաս, աւագ զօրապետ ուսական բանակին: Վերահաստատուած է իր ազնուականի տիտղոսը և Յովհաննէս, Պետրոս Գասպար զաւակներուն հետ արձանագրուած է Փոտոլի ազնուականաց մատեանին մէջ: Այս սերունդէն ուրիշ շառաւիղ մը կ'ապրի մինչև զայսօր Փոքր Լեհաստանի մէջ Եարոսլաւ. վաղեմի հայկական գաղթավայրը (Տօնի կիւկի):

ԱՍԼԱՆ ՊԷՅ, հայարնակ գղ. Պիլէճիկի առաջնորդական վիճակի մէջ, ունէր Հեթումեան զըպոց մը՝ 35 աշակերտներով:

ԱՍԼԱՆ ՊԷԿ Թուրք սուլթան 1165—1185:

ԱՍԼԸ կամ Այրլը, անձանօթ մենաստանի մը աւերակները Այրարատայ Նիզ գու.ի արեւելեան մասին, Պապաքիչի հիւսիսակողմը՝ ձորի մէջ: Այս մնացորդներէն կը տեսնուի, թէ եկեղեցին հոյակապ չէնք մ'է եղած և սիւնազարդ, իւկ կտորուած արձանագրութիւններէն կը յայտնուի որ Վաչուտեանց դաստակերտ եղած է:

ԱՍԼՈՅ, գղ. Տիգրանակերտի Ալիվան գու.ի մէջ, 1900ին 40 տուն հայ ունէր:

ԱՍՆԱԲԱՏ կամ Ասղապաս, Անդրկասպեան քղ. Ռուսիոյ, որ 1900էն քանի մը տարի առաջ անմարդարնակ և ամայի էր: Գանձակէն և Գարապաղէն բաւական հայ գաղթած են հոս և կը պարապին գինեվաճառութեամբ: Ունին եկղ. եւ դպրոց: 1919ին հրատարակած են Ժողովրդական Թերք և Կոչնակ պարբերականները:

ԱՍՆՈՉ, հին գիւղ Սիւնեաց Սողք գու.ի:

ԱՍԿԱՅՈՒԿ, հին գիւղ Սիւնեաց Հարանդ գաւառի:

ԱՍԿԷՐԵԱՆ Հ. Վրբանես (1720—1810) վենետիկյան Մխիթարեան Մխարանութեան անդամ, քաջ հայկարան. ծնած 1720 Մարտ 15ին ի Կ. Պոլիս, փոքրիկ հասակին Ս. Ղազարու վանքը զրկուած եւ հոն «սնած, զարգացած Մխիթարաց ձեռաց տակ, վառուած տնոր աղամանդեայ հոգիէն փայլատակած կրակով»։ Վանքին մէջ իմաստասիրական եւ աստուածաբանական ուսումները ընելէ ետք 1743 Մարտ 9ին քահանայ կը ձեռնադրուի։ Ասկէրեան ինքզինքը կու տայ նախ և առաջ հայկական և յատկանական յեղուաց խոր հմտութեան, իր մեծ վարդապետին փափագին համաձայն՝ հայերէն թարգմանելու համար յատին եկեղեցւոյ Հարց գրուածները։ Չորս հինգ անգամ կը բաղդատէ Աստուածաշունչի հայկական թարգմանութիւնը՝ Սօթանասնից յատին թարգմանութեան հետ, 7 տարի անընդհատ աշխատելով և ուսումնասիրելով. այդ ատեն է որ կը շարագրէ յատկաներէնէ ի հայ բառարան մը՝ որ ձեռագիր կը մնայ։



Հ. Վրբ. ԱՍԿԷՐԵԱՆ

1782ին վենետիկյան Դէմեաթեայ Թէոդոսեանց տպարանէն լոյս կ'ընծայէ «Մշտնչեանա որ պարզատօմար»ը։ Ասկէրեան մեծ է իր թարգմանութիւններով, որոնց մէջ կը նշմարուի մեր զրարարի գեղեցիկութիւնը և իրաւամբ Հ. Սարեան կ'ըսէ իրեն համար «առաջին շարժիչ տոհմային իեղուն գտելու մեքենային»։

Հ. Ասկէրեան ունի շատ մը թարգմանութիւններ Դոսեանցէն, Թոմաս Գեմրացիին «Յաղագս նմանոյ լինելոյ Բրիտանոսի»ն, Թեաւարոսի «Իմաստասիրութեան բարոյական»ը, 804 էջ, և Ռօլէնի «Պատմութիւն Հռոմայեցւոց» թարգմանատր զործը։

Այս «Մեծագլուխ Վրթանէս վարդապետ»ը, ինչպէս կը կոչէին ն. Ջուղայեցիք, վախճանեցաւ 1810ին՝ 90 տարեկան։ (Տե՛ս «Մխիթար» բացառիկ քերք էջ 72, գրուած Հ. Ա. Վրդ. Սարեանէ, «Փեղումն» Բ. տարի 1903՝ Հ. Ղազիկեանէ)։

[ԱՍԿԷՐԵԱՆ շատուած ի Հայս, պաշտպան թշկուութեան (Տե՛ս Հ. Ալիւանի «Հայապատմութիւն»)։

ԱՍԿՆՋԱԽԱՍ կամ Յասկեցաւս, հայարնակ գիւղ Մոկաց, 1900ին ունէր 170 բն. եկեղեցի Ս. Յովհաննէս։

ԱՍԿՈՒՌԱՍ, բերդ յեռնային Կիլիկիոյ
 ԱՍԿՈՒՐԷԹ Տ. Աղգոր։
 ԱՍՂԱՊԱՏ Տ. Ասխաբադ։
 ԱՍՂԱԲԵՐԳ Տ. Ասղաբերդ։

ԱՍՂՆԻԿ Ասեփանոս, առաջնորդ Կամրջածոր վանքին, որ Փրկչական 1000 թուականի ատենները վախճանեցաւ. երբ Հազարացիք Հայ աշխարհի վրայ յարձակեցան։

ԱՍՄԱՆԷ (գիւղ), Վահրամ Պահլաւունի 1029ին Մարմաշէն վանքին կը նուիրէ։ (Ալիւան՝ «Հայապատմութիւն»)։

ԱՍՄՆՁՈՒԿ կամ Անցմնուկ. ձորակ և վտակ Դաշտային Կիլիկիոյ, որուն կամուրջին փլած կամարը նորոգած է Գրիգոր, որդի Պաղաղիի եւ կոր. Լեւոնի 1350—60 տարիներու մէջ։

ԱՍՈՂԻԿ Տ. Ասեփան Ասողիկ։
 ԱՍՈՅԵԱՆ Մ. ճարտարագետ Երևանի մէջ։
 ԱՍՍՐԵՄԱՅՐ ԱՆԱՊԱՏ, կը յիշուի Ծովք գաւառի մէջ։

ԱՍՈՐԵՍԱՆ, աշխարհ Տիգրիսի աջակողմը, Հայաստանի հարաւակողմը՝ սահմանակից։

ԱՍՈՐԻ ԳԻԻՆ Տ. Գլին վերին։

ԱՍՈՐԻՈՅ ԱՇԵԱՐՀ, Եփրատայ արեւմտակողմը, Հայաստանի հարաւակողմը։

ԱՍՈՐԻՈՅ ԳՐՈՒՆԲ. նշանաւոր գուռն Ծովային Կիլիկիոյ մէջ, Աղեքսանդրեակի մօտ, ասկից միտայն երթեակ կը լինի յԱսորիս։ Այլազգիք Սագալթուրան կը կոչին։

ԱՍՊԱԳՈՒՆԻՔ Տ. Ասպակունիք։

ԱՍՈՒԳ Բագրատունի, ժամանակակից Մեծն Տիգրանայ։

ԱՍՈՒՐ զօրավար պարսից (606ին)։

ԱՍՊԱԿՈՒՆԵԱՅ ՁՈՐ, կը գտնուի Տուրուքերանի համայնուն գուրի մէջ։

ԱՍՊԱԿՈՒՆԻՔ կամ Ասպակունիք, հին գո. Տուրուքերանի։

ԱՍՊԱՀԱՆ Տ. Իսպահան։

ԱՍՊԱՐԷՉ, հանդէս կիսամսեայ, տպ. Աթէնք 1890։

ԱՍՊԱՐԷՉ, «Թերթ», տպ. Բարիկ 1905—9, տնօրէն իմրագրագետ Ա. Գուրոն և եանց։ (Լոյս տեսած է 1—196 թիւ)։

ԱՍՊԱՐԷՉ, աղգային, գրական և քաղաքական



804 Հ. ԱՍԿԱՆ

չարաթաթերթ. (Հրատ. Հ. Յ. Դաշնակցութեան Ամերիկ. Շրջանի). Ֆրեզնո 1890. կը շարունակուի: ԱՍՊԱՐԷՉ, գրական (պարբեր.), ժողովածու, տպ. Ալեքսանդրապոլ 1912—3, խմբագիր Նորդ (Մարուքէ Խաչատրեան):

ԱՍՊԱՐԷՉ, Հ. Յ. Դաշնակցութեան օրգան, տպ. Շուշի 1917 (թիւ 1—9?) խմբագիր Հ(այրապետ) Մուսայէիան:

ԱՍՊԵՆԵՂՈՍ, հին քղ. Ծովային Կիլիկիոյ Ատալիոյ արեւելակողմը, այժմ աւերակ: Մեծն Լեւոնի ժամանակ այս կողմերն ևս Հայոց տիրակառութեան տակ անցած կը թուին:

ԱՍՊԵՏ ԱՐԱՄ, խմբագիր, զինադադարէն ետք Ատանայի մէջ «խմբագիր-վարիչ» հանգամանքով լոյս բնծայած է Նոր Սերունդ «գրական, գիտական հանդէս օրաթերթ»ը: (Տե՛ս Ասպէս Նուարդ):

ԱՍՊԵՏ Յովհաննէս (Զիմրէ Սարաֆ), գրագէտ, (1873—1932), ծնած Սկիւտար (Պոլիս) 1873ին, ուսումը առած է կեդրոնական վարժարանի մէջ, 1893ին շրջանաւարտ ըլլալով: Եղած է օրագրող, մատենագիր և թարգմանիչ: Երիտասարդ տարիքին Եւրոպա այցելելով Պոլիս դարձին հրատարակեց իր տպաւորութիւնները՝ Միամիտ մը արկածները հատորին մէջ: Իրրե հատոր հրատարակած է նաև Պուրժէի Փիլիսոփայի մը Աւակերտին թարգմանութիւնը: Զինադադարէն յետոյ եղած էր անդամ Վերջին Լուրի խմբագրական կազմին և 1919ին հրատարակած է «Ազգային և գրական» շարաթաթերթ մը՝ Հայ Միսի:

Պոլսոյ Ազգային Երեսի. Ժողովին Գատրգիւղի երեսփոխան էր և վարեց ատենադպրութիւնը նոյն ժողովին: Ստորագրած է Հայրենիք ամսագրին, Հ. Կոչնակի ու Պոլսոյ ու արտասահմանի շատ մը հանդէսներու մէջ գրական էջեր:

1922ին Բրբոն (Յունաստան) անցաւ ապա Մարսէյ, իսկ 1928ին ժընև գնաց պ. Բրաֆթ Պոնարի հաստատած Զուլյէ Հայաստան սրբանոցին տնօրէնութիւնը վարելու, ուր վախճանեցաւ 1932 Յուլիս 11ին:

ԱՍՊԵՏ Նուարդ տիկին, զինադադարէն ետք Ատանայի մէջ կը կազմէ Կիլիկեան Տարեցոյցը, «միասնեայ օրգան» իր ամուսնոյն Արամի հետ: Տիկին Ասպետ Նուարդ ծնած է 1902ին, ուսուցչական պաշտօն վարած է Կիլիկիա և Եգիպտոս: Իրենց տարեցոյցին մէջ ունի զգալուն քերթուածներ: Մեծաւ Գահիրէի մէջ 1928 30 Սեպտեմբերին:

ԱՍՊԻՇԷՆ կամ Ասպուճէն, հայանուն գիւղ Թորթոս վիճակին, քն. թուրք:

ԱՍՊԻՍԱԿ կամ Ապակ, գիւղ Տուրուբերանի

Արճէչ գո. ի կը կոչուի նաև Հասպիսիցակ, 1915-ին 90 տուն հայ բն. ունէր. եկղ. Ս. Ստեփանոս:

ԱՍՊԻՍՆԿԱՅ ՎԱՆՔ, վերոյիշեալ Ասպիսակ գիւղին մօտ, որ կը կոչուի նաև Յարուբիւնեան Ս. Ուլս և Զորոյ Վանք: Վարդան պատմագիր կը յիշէ վանքս երբ Վահան կթ. ի մահուան մասին կը գրէ. հոս կը վախճանի 965ին Վահան կթ. ուր կար սեղան պատարագի և գաւազան Ս. Գրիգորի և հողաթափ Հարիսիմեանց: 1304ին Յովսէփ քն. ձեռագիր մը կ'ընդօրինակէ վանքիս մէջ, որուն ստացողն է Սարկաւազ քն.: 1306ի յիշատակարանի մը մէջ կը յիշուին վանքիս եկեղեցիներն Ս. Աստուածածին և Ս. Յարութիւն, առաջնորդն է Ստեփանոս, գրիչ՝ ստացող ձեռագրի և Յովհաննէս: Այդ տարին վանքս կը նորոգուի կամ կ'ընդարձակուի Պետրոս, Պողոս և Կիրակոս կրօնաւարաց ձեռքով: 1308ին Ստեփանոս Առաջնորդի օրով Ղազար՝ ձեռագիր մը կ'ընդօրինակէ, որոյ ստացողն է Հայրապետ: 1310ին Իգնատիոս հոս կ'ընդօրինակէ ուրիշ ձեռագիր մը: 1414ին Ասպիսեկեցի Յակոբ գրիչ Գր. Տաթևացոյ Մատթէի Մեկնութիւնը կ'ընդօրինակէ Սահարավանքի մէջ, 1450ին Բաջրերունեաց Զորոյ վանքին մէջ Թումա ուսուցիչ Միւս կրօնաւորի՝ ձեռագիր մը կ'ընդօրինակէ, ստացողն է Հայրապետ:

ԱՍՊՇԱՏ s. Աւիւսա:

ԱՍՊՍԱՆ, գղ. Տոսպ գո. ի Վանայ շրջակայքը, բն. սակաւաթիւ էին. եկղ. փայտայէն՝ Ս. Աստուածածին:

ԱՍՍԱՔԻԷՎԻԶ. Պուքովինացի հայ ազնուական սերունդ մը: Այս ընտանիքէն Ղուկաս և Գրիգոր Լվով զացած և ընդունած են 1812ին՝ Իրենց ազնուականութեան հաստատութիւնը. (ՏօնիկիէՎիչ):

Այս անունը կրնայ հաստատել ԱՍԱՔԷ ԿԷՕՐԿԷԻ հայ բլայր, որուն ձեռնարկն հարիւրամեակը տօնուեցաւ 1936ին Պուրթէի Արեւելի ցրանին մէջ: Սա հիմնադիրը եւ յառաջապանը կը նկատուի ուսմէն բաժնակցան, հրապարակագրական եւ դպրոցական շարժման՝ Մոլսովայի մէջ:

ԱՍՍԱԶՕՐ, հայարնակ գղ. Սիւնեաց Արևիք գո. ի, բն. 850, հռչակաւոր է գինին:

ԱՍՍԱԽԱՆԷ կամ Ասեղանի, գղ. Շիրակի, բընակիչք՝ այլազգիք. ունի փոքրիկ բերդ մը:


ԱՍՍԱՊԱՏ կամ Ապպասապաս, երեւմն հռչակաւոր գիւղաքաղաք Սիւնեաց Նախճաւան գո. ի մէջ, Երասխայ ձախակողմը: Անունս կը յիշէ նախ թոմա Արծրունին՝ երբ Խրամ աւանին համար կ'ըսէ, թէ կը գտնուի «ի ներքոյ Աստապատայ վանացն» և Խաչիկ Ա. կթղ. ի կոնդակին մէջ 976 թուին: Կը յիշէ նաև Ստեփ. Օրբելեան պատ-

միշը գիւղ կոչելով, որուն մօտ ժ.Ֆ. դարու կիսիուն, Սիւնեաց Բարսեղ եպ.ը ջորիով երասին գետը իյնալով և խնդողւելով, հանեցին և տարին թաղեցին Մաղարդայ վանքը: Ի վերջոյ աւելի բարգաւաճելով և բազմամարդ դասնալով կոչուեք է գիւղախաղախ: ժ.Գ. դարու վերջերը Միաբանողաց հակառակորդ: Մաղաքիա Դրիմեցին՝ հոս դպրոց հաստատեց Սարգիս վրդ.ի տեսչութեան տակ, ասկից էր նոյն ժամանակները Տաթեւացւոյն աշակերտ Աւետիս վրդ.ը:

ժ.Է. դարու սկիզբը Շահ Աբաս գերի տարաւ Աստապատու բնակիչներն ի Պարսս, և ըստ պատմելոյ Զաքարիա պատմչի (Ս. Ի.), իրեն իրրեւ հարձ առաւ կիւղէյ (Գեղեցիկ) անուամբ Աստապատցի հայազգի կին մը, որ յետոյ դառնալով իր հայրենիքը, և հաւատաւորաց վանք մտնելով և ապաշխարելով վախճանած է: — Աստապատ շատ անգամներ պարսից ասպատակութեանց ենթակայ լինելով. երթալով անչքացած է և սակաւարնակ գիւղ մը դարձած, այնպէս որ ժ.Թ. դարու առաջին քառորդին մէջ, պարսից թագաժառանգ Ապպաս Միրզան, ռազմազիտական նպատակով այն մնացած ժողովուրդն ալ ուրիշ տեղ փոխադրեց: Այնուհետև Եւրոպացի ճարտարապետաց խորհրդով, մասամբ մը ամայի շէնքերը քակելով, շինեց Աստապատի տեղը մեծ ամրոց մը, քառակուսի, ընդարձակ պարիսպներով եւ խրամով: Այս ամրոցին մէջ դրաւ զօրքեր եւ զէնքեր և զինուորական ամենայն ռազմամթերք և 20 թնդանօթներ: Թագաժառանգի անուամբ ամրոցը կոչուեցաւ Ապպասապաս.. — Յիշատակաց արժանի է Աստապատու մեծակառոյց եկեղեցին՝ շինուած նախնի բնակիչներէն, որ ունի բազմաթիւ արձանագրութիւններ ժ.Յ. — ժ.Ը. դարու սկիզբները: Եկեղեցիս կառուցուած է Ս. Վարդանայ Մամիկոնեան զօրավարի անուամբ և կողմանցս բնակիչք Ասապաս անուան ստուգաբանութեան համար կ'աւանդեն, թէ Մեծն Վարդանայ և ընկերաց նահատակութենէն վերջը, անոնց մարմինները հոս կը բերեն, և զանոնք թաղելու համար պատանած ժամանակ, Մակուայ բնակչաց երեւելիներէն կու գան զանոնք կ'առնուն և կը տանին կ'ամփոփեն Մակուայ մէջ, և այն օրէն այս տեղս կոչուեցաւ, Աստապատ՝ իբր աստ պատած:

Աստապատու Ս. Վարդան եկեղեցին բաւական մեծ է և հաստատուած է չորս սիւներու վրայ, ունի բարձրաբերձ գմբէթ, մէկ սեղան, երկու աւանդատուն և ընդարձակ գաւիթ: Տաճարս վերանորոգած են ժ.Է. դարու մէջ, 1655ին ոմն

Սոջայ Սաֆար, ըստ արձանագրին, իւր նախընթիւ կառուցանել տուած է նրաւազան յօրինմամբ Ս. Վարդանայ մեծ դուռը, որուն ճակատը, ինչպէս կը տեսնուի պատկերին մէջ, զարդարուած է այլեւայլ ճարտարարուեստ քանդակներով:



Ս. Վարդան եկեղեցւոյ դուռը

Դրան վրայ կայ Տիրամօր քանդակապատկերը, մանուկ Յիսուսը զիրկր և զիմացը ծնրադիր մէկը, թերեւ եկեղեցւոյն շինողը. կան նաև հրեշտակներ, որոնք թագեր բռնած են Տիրուհւոյ և ծնրադիր անձի մը գլխոց վրայ:

Այդ քանդակապատկերի վերը և երկու կողմերը կը տեսնուին զարդարուն խաչարձաններ՝ որոց արձանագրութիւնք՝ մասամբ անընթեւնելի են: Դրան կամար երկու կողմերն ևս կան արձանագրութիւնք և խաչարձաններ: Եկեղեցւոյ աւազանը սեւաւ կճէ է, և ունի ՌձԸ (1681) թուականաւ նուիրատուաց արձանագրութիւն: Գաւթի սիւներէն միոյն վրայ գրուած է ՌձԾԲ (1703) թուին եկեղեցւոյս վերակացու Մարտիրոս վրդ.ի յիշատակազիրը, որ կ'երևի թէ շատ աշխատութեամբ աւարտած է գաւթի շինութիւնը կամ նորոգութիւնը: Ս. Վարդանայ եկեղեցւոյն կից և անկից կը մտցուի սուրիշ փոքր, սագաչն եւ կարմիր աղիւսներով եկեղեցի մը Ս. Պետրոս եւ

Պօղոս առաքելոց նուիրուած: Ապպաս Միրզա թագաժառանգի օրով, վերոյիշեալ գեղեցկաշէն Ս. Վարդանայ եկեղեցին ամբողջին մէջ մնաց, և ամբարանոց դարձաւ:.

Վաճառականութեամբ հեռու աշխարհներ գացող Աստապատցիներէն յիշենք Խօճայ Յովհաննէս ոմն, որդի Սահակայ, որ Վենետիկ լինելով 1666ին, Ս. Խաչ եկեղեցւոյ նարոզութեան համար ընծայեր է երկու սիւն: Ասոր ժամանակակից կը յիշուին Բարսեղ, Թորոս և Ասուխ վաճառականներ, որոնք արծաթի անօթներ և սպասներ նուէր տուած են Անկիւրիոյ Ս. Աստուածածնի Վանաց: (Էփրիկեան՝ «Բնագոյնարիկ» էջ 253—5. քաղուած Շանխարուեանցի Ասուրաբ. Բ.էն 297—304, Ալիւսանի «Սիսական»էն էջ 507—514):

Ասապաս նշանաւոր է իր կրկնակ Կարմիր եւ Ս. Յովհաննէս վանքերով (սե՛ս իրենց կարգին): Յիշատակարանաց մէջ կը յիշուի 1674ին, երբ Կիրակոս վրդ. Գիոնեսիոսի յիշատակիրը կը գրէ, 1698ին Սամուէլ երեց Ս. Վարդան եկեղեցւոյն Աւետ. մը կը նուիրէ. 1750ին Աբրահամ Ասապացի վրդ.ը կը յիշուի Ս. Էջմիածնի մէջ, իբրեւ ուսուցիչ: Ասապասի մասին անդրագոյն տեղեկութիւններ սե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԱՍՍԱՐԱ, գլխաւոր քղ. Փայտակարանի Թալիշ նահանգի, համանուն գետին վրայ:

ԱՍՍԱՐՃԵԱՆ Գրիգոր, բժիշկ, ծնած Մարաշ, կը բնակի Մուսուլ (Իրազ):

ԱՍՍԱՐՃԵԱՆ Տիգրան, ատամնարոյժ ի Քերքուկ (Իրազ):

ԱՍՏԵՂԱՆԻ Տ. Ասախանէ:
ԱՍՏՂԱԲԵՆՐԻ, Ասղնբերդ կամ Մոկաց բերդ, Տուրուբերանի Տարօն գ.ւ.ի մէջ, Յովհաննէս Մամիկանեան Աստղաբերդի եկեղեցին «Մեծ կաթո ղիկէ կը կոչէ»: Ամբոցս ըստ պատմիչին կը կոչուի Աստղանի, Աստղոնի, Ասղոնի:

ԱՍՏՂԱԲԵՆՐԻ կամ Ասղբերդ, գիւղ՝ Չորրորդ Հայոց կամ Ծոփաց աշխարհի. մինչև ժԳ դար Խորձէն կամ Խորձեան, ապա Կեղի և յետոյ Քղի կոչուած գ.ւ.ի մէջ, որ 1914ին գոյութիւն ունեցող թուրք վարչական բաժանումով էրդրում (Կարին) նահանգին կը պատկանէր: Գիւղը 1910էն սկսեալ գաւառակեղրոնի վերածուեցաւ ու հոն նստաւ Միւսիւրը:

Աստղաբերդը կը գտնուի Կարնոյ հարաւը եւ Երզնկայի արեւելքը. իւրաքանչիւրէն շուրջ 140 հզրմ. հեռի, յերան մը ստորոտը:

Ըստ բնակչաց աւանդական պատմութեան Աստղաբերդը Աստղիկ իշխանուհւոյ մը մայրաքաղաքը եղած է: Բայց աւելի հաւանական է որ

Հայոց հեթանոսական շրջանին Աստղիկ ղիցուհիին ձօնուած մենեանական բերդաքաղաք մը եղած ըլլայ, որ դարերու ընթացքին զանազան արշաւաւքներէն քանդուելով, անոր աւերակներուն վրայ մնացած էր զիւր մը, պահելով նոյն անունը, ունենալով եւ իր արեւելեան կողմը, 20 վայրկեան հեռու, բարձր բլուրի մը վրայ, նոյն աւերումներէն զեռ իր որմերը պահող բերդը, որուն կոչուած քարերէ հիմերուն մէջ ու մուտքին անցը գտնուած էին հին գրամներ ու առարկաներ:

1914ին 150 տուն բնակիչ ունէր, որոնցմէ 130ը հայ, և 20ը Սիւննի Քիւրտեր: Ունէր Ս. Սարգիս անուամբ քարաշէն հոյակապ եկեղեցի մը, հսկայ ու սրբաօջառ քարերով կառուցուած և հին Ս. Գէորգ մատուռ մը՝ որուն ներքեւէն կը հոսին 4 բարեհամ ու յորդաջուր աղուքներ: 1911ին ունէր երկու զարոց, մանչերու և աղջիկներու 80+52 երկսեռ աշակերտներով:

Գիւղին հիւսիս արեւմտակողմը, կէս ժամ հեռաւորութեամբ կը գտնուէր Ս. Կիրակոս վանքը. անտառազարդ և ջրարբի լայնատարած հողամասի մը մէջ, իսկ արեւելեան կողմը 20 վայրկեան հեռու բարձր բլուրի մը վրայ. դարաւոր աւերումներէն զեռ իր հետքը պահող բերդը:

1915ին 864 հոգի կոտորուած է, ազատուած ու արտասահման անցած են 46 անձ, որոնցմէ մէկը միայն տղամարդ: Ջարդի այդ շրջանին 70 հոգի միայն Ամերիկա կը գտնուէին: (Տիգրան Պաղօտեան 1936). տե՛ս Էփրիկեանի «Բնագոյնարիկ»ը:

ԱՍՏՂԱԲԵՆՐԻ այսպէս կը կոչուի Խ. Հայաստանի Ղրղայան (տե՛ս):

ԱՍՏՂԱԲԵՆՐԻ կամ Աստղբերդ, կը յիշուի Արցախի Մեծկունեաց գ.ւ.ի մէջ: Տե՛ս Ականա:

ԱՍՏՂԱԶՈՐ, այսպէս կը կոչուի ներկայիս Խ. Հայաստանի Ալի դըւրլը:

ԱՍՏՂԱՆ ԲԵՆՐԻ, գղ. Սղբերդի Խիւան գաւառակի:

ԱՍՏՂ ԱՐԵՆԵԼԵԱՆ, ազգային զրական և քաղաքական շարաթաթերթ, տպ. Թեհրան 1896. խմբ. Մակար Մակարեանց:

ԱՍՏՂ ԲԵՆԵԼԵՆՄԻ, «պարբերաթերթ հոգևոր արարչագիտական», տպ. Կ. Պոլիս 1911—1912 տէր և տնօրէն Մանուկ Յ. Գոչուեան:

ԱՍՏՂԻԿ, զրական, գեղարուեստական, ընկերական կիսամսեայ հանդէս, տպ. Վենետիկ, քաղաքին իտալացի տպարանի մը մէջ (Նշանակուած «տպ. Պոյաճեան»), խմբագիր Դերենիկ Նըշանակուած, բայց իրականին Հ. Մ. Պոտուրեան, երեք թիւ միայն լոյս տեսած 1911ին:

ԱՍՏՂԻԿ, գետ Սեբաստիոյ, այս կոչուած է ի Հայոց թարգմանելով թուրքերէն Երլսրգ սաղի և Երլսրգ սու անուններէն: Գետս Սեբաստիայէն պնցնելով՝ հոն Մոսսար սու կը կոչուի:

ԱՍՏՂԻԿ լեռ Սեբաստիոյ, ուր ըստ աւանդութեան կը պատսպարուի Ատոմ, Սենեքերիմ թգի որդին, Տուզրիլի յարձակումէն հոն փոխադրելով բոլոր թագաւորական գանձերը և հայրապետական զգեստները: Մօտը կան հին քաղաքի մը աւերակները:

ԱՍՏՂԻԿ, գեղեցկութեան զիցուհի, դուստր Գեսուլթրայ որ խողաղացուց իր եզրայրները: Հայաստանի մէջ Անահիտի կուսքը՝ Աստղիկ կը կոչէին: Աշտիշատի մէջ էր իր գլխաւոր մեհանը:

ԱՍՏՂԻԿ, դերասանուհի, իսկական անունով Աստղիկ Գանթարճեան, քոյր անուանի դերասանուհի Սիրանոյշի, որուն և ազգականուհի տիկին Հրաչեայի առաջնորդութեամբ բեմ կ'ելլէ Սիրանոյշ 1870-ական թուականներուն:



Գեղասանուհի ԱՍՏՂԻԿ

ԱՍՏՂԻԿ ԱՐԵՒԵԼԵՆԵԱՆ «ամսաթերթ» բարոյական, բանասիրական, տնտեսական և բնական գիտելեաց» Տպ. Կ. Պոլիս 1855: Աշխատութեամբ Սեսրոպեան ընկերութեան:

ԱՍՏՂՈՒՆ, գղ. Արշարունեաց գ.ի մէջ (Այրարատ), կը յիշուի 1177ի ատենները, ուսկից էր Կիրակոս քհ. որուն օրով տեղի ունեցաւ Խաչիւսը:

ԱՍՏՂՈՒՆՔ կամ Ասղոնի տե՛ս Ասղաբերդ:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ (գիւղեր):

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, հին գղ. Բասեն գ.ի մէջ, կը յիշուի Ստեփանոս Աստղիկ պատմիչէն, ունէր Ս. Աստուածածին անուամբ եկեղեցի մը:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, գղ. Սիւնեաց Սորք գ.ի մէջ, կը յիշուի հարկաւոր գիւղերուն շարքին:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, գղ. Վասպուրականի, Վանայ հիւսիսակողմը, Լիմ կղզիին զիմաց, 1900ին 60 տուն բնակիչ ունէր, եկղ. Ս. Աստուածածին ուր վերափոխման տօնին բազմաթիւ ուխտաւորներ կ'երթային և այդ օրը ցոյց կը տրուէր Ս. Կոստի հոգաթափները ու գլխոյն ծածկոցը:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՍ հին մենաստան Վայոց-ձոր գ.ի մէջ, կը կոչուի նաև Մարիամ Աս-

ուածածին՝ եկեղեցւոյն սպիտակագոյն քարերուն համար, իսկ այլազգիք կը կոչեն Կիւլ վանք, չուրջը խիտ առ խիտ բուսած վայրի վարդենիներուն համար: Հիւսիսային կողմը պարսպապատ է, միւս կողմերը կան 30ի չափ սենեակներ ոմանք կամարակապ: Եկեղեցին փոքր է, քառակուսի և բարձրագոյն թ. ունի չորս զեղնագոյն քարէ սիւներ, վայելուչ քանդակուած պատկերներ սեղանին վրայ, որոնք անշխատ մնացած են գ'րէթի չորս անկիւնները եղող չորս աւետարանչաց քանդակապատկերներուն հետ: Վէժքարի վրայ քանդակուած կայ ձերուհի քահանայի մը պատկերը, ձեռքերը վեր բարձրացուցած: Արեւմտեան դրան ճակատը սպիտակ քարի վրայ քանդակուած է Տիրամայրը՝ Յիսուս գիւկը: Եկեղեցիս ունի նաև փոքր դաւիթ մը, որուն առատադը բոլորովին խոնարհած է, և գեղեցկաչէն զանդակատուն մը: Արտաքին հիւսիսային որմոյն վրայ կայ քանդակապատկեր մը, որ կը ներկայացնէ լայն զգեստով մեծաչուք և գլուխը խոյր դրած մարդ մը՝ ձեռքը ուղիղ բռնած, կը կարծուի թէ Պոօշ իշխանն է, նոյն ձեռով զարդարուն զգեստներով պատանի մ'այ կայ մօտը, որոյ գլխուն վրայ գրուած է Ամէր Հասան որդի Պուաւայ: Եկեղեցւոյ արևելեան որմոյն վրայ ազուցուած են խաչքարինք. հարաւայնոյն վրայ կայ երկու խաչակիր ձեռաց քանդակ և 22Գ (= 1334) թուականը, այդ քանդակները տեղերէն ինկած լինելով՝ դրուած են եկեղեցւոյ մէջ: Վանացս եկեղեցւոյ դուրսը և ներսը կան բաւական թիւով արձանագրութիւններ ժ.Գ—Ժ.Ե դարուց, որոնք են յիշատակագրութիւնք զանազան միաբանող և նուիրատու անձանց: (Եփրիկեան «Քննաշարհիկ» փաղուած Հ. Ալիւսանի «Սիւսական» էն):

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՆԱՊԱՍ տե՛ս Երկայն Ընկուզենց վանք:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ Անապատ Սեբաստիոյ, որուն առաջնորդն է 1709ին՝ Յակոբ Վարդապետ: Տե՛ս Սեբասիա:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, վանք Անկիւրիոյ, քաղաքին հիւսիսակողմը, գրեթէ կէս ժամ հեռի, ուր կը նստէր Գաղատիոյ Լուսաւորչական Հայոց առաջնորդը 2—3 վարդապետներով: Ունէր 24 սենեակ: Բոլորչի և գոթէթաւոր եկեղեցիին Ս. Պօղոս առաքեալէն շինուած կը համարին: Աւագ խորանը որ եկեղեցւոյ յատակէն 1.20 մէթր բարձր է՝ շինուած է կուտինայի սպիտակ և կապոյտ խեցիով, ինչպէս նաև պատերն ու յատակը, որոնց շինութեան թուականն է 1758: Վանքիս մէջ կային բաւական գրչագիրները որոնց յի-

չատակարանները բարերախտարար ընդօրինակած է վանքին վերջին վանահայրը Բարգէն եպ. (Աթոռակից կթ.):

Վանքս կը յիշուի 1441ի յիշատակարանի մը մէջ,



Անկիւրիոյ Ա. Աստուածածին վանքը

Սեփանոս գրչեմ: 1455ին Մովսէս գրիչ՝ Մաթոսց մը կ'ընդօրինակէ վանքիս մէջ (Բարիզ կը գտնուի այդ ձեռագիրը): 1616ին վանքիս առաջնորդը եղած է Աւագ արքեպիսկոպոս. շարականի կազմող՝ Գրիգոր: 1678ին առաջնորդ կը յիշուի Սեփանոս Զէյրունցի: 1677ին վանքիս առաջնորդն է Միմաս վրդ. հոս ուսանելու կու գայ Սարգիս եպ. Եւզոպիացի: 1691ին վանքիս առաջնորդը Սեփանոս՝ գրմբէքը կը նորոգէ: 1694ին Կարապէտ Զէյրունցի վանքիս առաջնորդ կ'ընտրուի, որ 1712ին վանքը կ'ընդարձակէ: (Տե՛ս Գաղափա):

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Առաքէր կղզւոյ, տե՛ս Առաքէր:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, վանք, տե՛ս Բարանա:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, վանք տե՛ս Բարձրահայեաց Ա. Աստուածածին վանք Արդնի:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ Բարձրաբաշ, Գուգարաց Զորափոր գու. մէջ, Դրսեղ զղ. մօտ:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Բջնոյ, ուր 1652ին Յովհաննէս Շոռոթեցի Սեւանէն գանձարան մը կը տանի և հոն օրինակել է աք կը զրկէ (Յե՜կ): 1665ին վանքիս վերափոխուչ (առաջնորդ) կը յիշուի Մովսէս:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Գեղիքի, տե՛ս Գեղիքի Ա. Աստուածածին:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Երուսաղէմայ, Ս. Սիոնի զիմաց, Բեթղեհէմի ճամբուն վրայ, վանքս շինած է բարի անուն և ընտրեալ Գէորգ ք. որուն եղբորորդին Յովհաննէս ճգնաւոր «հանդերձ քեռը (Տիկներես) իւրով կրօնաւոր կարգաւ» կը ստանայ Երուսաղէմ ի Յովհաննէս արեղայի ձեռամբ գրուած ճառընտիր մը: Զեռագիրը կը նուիր-

ուի Երուսաղէմայ Ս. Աստուածածին վանքին «ի վայելումն որդւոյ իւրեանց Գէորգայսարկաւազի և այլ կրօնաւորաց և քահանայից»: Յիշել կը խնդրէ զհիմնադիր կամ զչինոզ եկեղեցւոյս զԳէորգ ք. զնացեալն առ Քրիստոս և զգծողն եւ զկազմողն (ճառընտիրս) Յովան 1215ին: Ըստ այսմ՝ վանքս ԺԳ. դարու սկիզբը կառուցուած է: (Աղանունի՝ «Միաբան» էջ 347): 1473ին Աւետիս եպիսկոպոս վանքիս մէջ Ոսկեփորիկ մը կ'ընդօրինակէ, և կը յիշէ միարաններէն Արիստակէս, Մելքիսեղ Յակոբ ճգնաւոր: 1768ին Սաչատուր վրդ. վանքիս մէջ կ'ընդօրինակէ Պօղոս վրդ. ռոմանաւորները (Յիշատակարան):

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք ի Զէյթուն տե՛ս Ֆրոնրզու վանք:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Թումարգայի, համանուն քաղաքին արեւելակողմը կառուցուած է վանքս, որուն հիմնարկութիւնը կը վերագրուի Ս. Թաղէոս առաքեալին — անշուշտ աւանդութեամբ որուն արձագանգ եղած են կոնդակներ — մինչ պատմական տուեալներով ԺԲ. դարէն աւելի հնութիւն չունի կարապետ վրդ. Հազարեան, փոխ-վանահայր նոյն վանքին, կ'ըսէ թէ «վանուցս գոյութիւնը գրեթէ հինգ դարու մօտ հընութիւն մ'ունի, ինչպէս ճշմարտապէս կը վկայէ հին թուական մը» (Մանգուսէ 1902 թ. 389) ինչ որ շատ որոշ չէ թէ ի՞նչ թուականի կ'ակնարկէ: Կ'երևայ թէ հնագոյն թուականով յիշատակարան մը իրեն ծանօթ էր, մինչ ինծի ծանօթ ամէնէն հին յիշատակարանը 1516 թուականով՝ 1222ին Սիս գրուած Աւետարանին, այն ծանօթագրութիւնն է որ կը յայտնէ թէ Մովսէս ք. կազմած է գայն «Ընդ հովանեաւ Ա. Աստուածածինի «ի զիւղն որ կոչի Տումարգայ»: Այս թուականէն յետոյ զանազան յիշատակարաններու մէջ (1570-1588) կը յիշատակուի այս Ս. Աստուածածինը, երբ Թումարգա արդէն շնորհիւ Տարօնեցի Աստուածատուր եպ. ի եղած էր մտաւորական փայլուն կեդրոն մը, որ իր համբաւը և հմայքը պահած էր բաւական երկար ատեններ, և ԺԷ. դարուն սկիզբը դարձած՝ նշանաւոր ուսումնասիրող մը, ուր կը զիմէին հեռու տեղերէ, ինչպէս կը հաստատէ Մեսրոպ Կաֆայեցի գրիչը որ էր «աւակերտ Տեառն Յովհաննէս Կարողիկոսի Սիս արթոյ» (Այլեան՝ «Կամենից», էջ 168)...

ԺԷ. դարուն կէսին կը թուի թէ վանքը անչքացած է, վասնզի 1661—1675 գրուած չորս գրքչագիրներու մէջ դարձեալ վերադարձ մը կը տեսնենք զէպի հնագոյն ձեւը «ի դուռն Ս. Աստուածածնի և Ս. Պետրոսի և Պօղոսի»: Հետեւաբար

կը տարուիմ մտածել թէ առ նուազն ժՁ. դարուն սկիզբներէն թումարգայի մէջ գոյութիւն ունէր Ս. Աստուածածին մենարանը կամ եկեղեցին, որ ժէ. դարուն սկիզբը վանքի կը վերած-



Թումարգայի Ս. Աստուածածին վանքը

ուի և կարճ փայլ մը ունենալէ յետոյ կ'անշքանայ և կը դադրի միարանութիւն ունենալէ, թէ և չի դադրիր վանք մը ըլլալէ: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 1007—1020):

Վանքիս հնագոյն առաջնորդներն են՝ 1582ին՝ Անտոն եպիսկոպոս և 1630ին՝ Գրիգոր եպիսկոպոս (rus յիւսակարանաց): Իսկ 1552էն առաջ՝ Յովհաննէս եպ. Հզնեցի:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Ծարի (Արցախ) մօտ, սրբատաշ քարերով շինուած տաճար մը, որ կը գտնուի Ծարի հարաւային վիմահերձի ստորոտը, Տաք-Ղրի և Զրիւլ գլ.ի վտակներու խառնուրդին մօտ: Վանքս, ըստ արձանագրին, սկսեր է շինել Տէր Յովհաննէս Գոփեան 2Ծ (1031) թուականին: (Բարխուդարեանց՝ «Արցախ» էջ 404—10):

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Կամրջանոց, Այրարատ նահանգի Սուրմալուի վիճակին մէջ: Զօր զիւղին մէջ գտնուելուն՝ կը կոչուի նաև Զօրաց տե՛ս Կամրջանոց վանք:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք՝ Հինձք գլ.ին մօտ տե՛ս Կարմիր վանք:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ կամ Հասան-խալայի վանք, հիմնուած Գրիգոր Մագիստրոսէն Վերին Բասկնի մէջ, ուր թաղուեցաւ ինքը հիմնադիրը Գրիգոր՝ 1058ին:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Մոկաց, 1306ին կը յիշուի, ուր Վարդան ձեռագիր մը կ'ընդօրինակէ:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Շնեհերի, կուսաստան, 1673ին գրիչ՝ Երինէ, ստ. Կարապետ. վանքիս

մէջ կ'ապրէին Քարանազգեաց կուսանք, գրչուհի Մարիամ: Տե՛ս Շնեհերի Ս. Աստուածածին վանք: ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Շոռորու, 1631ին կը շինուի Վարդան քհ.էն, ուր կուսանքներ կը ժողովէ, տե՛ս Շոռոր:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ վանք Սակունեաց, յաշխարհն Շամայ. Արամու գլ.ի դիմաց, եկղ. Ս. Գէորգ, 1466ի յիշատակարանին մէջ կը յիշուի վանքիս եպ. Թումայ, և Սիմէոն քհ. միարան:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ Վերին տե՛ս վերին Աստուածածին վանք:

ԱՍՏՈՒԱԾԱԾՈՐ, գլ. Սիւնեաց, կը կոչուի նաև Աստուածագօր (տե՛ս):

ԱՍՏՈՒԱԾԱԾԱՅՐ, վանք, Գուշնայ (Արաբկիրի) գլ.ի մօտ:

ԱՍՏՈՒԱԾԱՄԱՅՐ մենաստան Զարսանճագի Լամք գլ.ի մօտ, այժմ աւերակ:

ԱՍՏՈՒԱԾԱՇԷՆ, հին գլ. Վասպուրականի Վայոց-ձոր գո.ի մէջ, ունէր 80 տուն բնակիչ, 50ը հայ էին և 30ը քուրդ: Եկղ. Ս. Ստեփանոս, որ 1400ի առնչները շինուած կը համարուի: Ըստ աւանդութեան այս զիւղին մէջ շատուածներ կը շինէին, այդ պատճառաւ Աստուածաւեհն կոչած են: Ունի հին գերեզմանատուն, մօտն է Հայկայ բերդը: Գիւղս ունէր և դպրոց մը ուր 20 մանչ կ'ուսանէին:

ԱՍՏՈՒԱԾԱՇԷՆ, բարձր լեռ Կիլիկիոյ Կապան գո.ի մէջ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Կթղ. (1714—1725), Համասնցի, Էջմիածնայ Աղեքսանդր կթ.ի մահէն (1714, Նոյ. 22) վեց ամիս ետք, 1715 Մայիս 7ին, կաթողիկոս ընտրուեցաւ Աստուածատուր Համատանցին: Սա զարդարեց եկեղեցւոյ ներսը տեսակ տեսակ նկարներով և ոսկեղօծ զարդերով: Իր օրով 1724ին Օսմանցիք Էջմիածինը կը գրաւեն: Աստուածատուր կթղ. 1725 Հոկտ. 10ին երբ Օչականի մէջ տանիքին վրայ ելած լուսնոյ խաւարումը կը դիտէր՝ վար ինկաւ և հոգին աւանդեց:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Ա. Պատրիարք Երուսաղէմի 1313—1316:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Բ. Մերտինցի, Պատրիարք Երս.ի 1532—1542, Ըստ վաւերագրոց՝ Յովհաննէս եպ. (Քիլիսցի կթղ. Սոյ) այդ միջոցներուն Երուսաղէմի Ս. Յակոբ վանքին գործոց գլուխը կը գտնուի, 1532ին, պատրիարքական իշխանութիւնը դատարանի միջոցաւ կը յանձնէ Աստուածատուր եպ.ի, որ բաւական ժամանակ պաշտօնավարելէ ետք. իշխանութիւնը կը յանձնէ Փիլիպպոս եպ.ի, որուն մահուամբ դարձեալ կը

վարէ ի իշխանութիւնը երկու տարւոյ չափ, և ձեռութեան պատճառաւ յաջորդ կը կարգէ եղբորորդին՝ Անդրէաս Պարոնտէրը, 1542ին Աստուածատուր իր ինքնագիր յիշատակարանին համաձայն (ՄՁ ր. 12) այլուր արեղայ ձեռնադրուած և ապա Երուսաղէմ գալով՝ ընտրուած է պատրիարք.— «ես սէր Աստուածատուր Մերօնցի յաբեղա եկա ի սր. Երուսաղէմ ի քվ. ԶԷԲ (= 1523) մճայ ի Ա. Յակոբ ի սպասաւորութեան»:

Աստուածատուր պատրիարք 1540ին, Պոլիս գացած է Ս. Յակոբի նորոգութեան հրովարտակը ձեռք բերելու համար: Այս մասին թ. 251 մագաղաթեայ Աւետարանին մէջ գրուած է, ի թվ. ԶԶԹ (= 1540) ի թագաւորութեան սուլթան Սուլէյմանին, և ի պատրիարքութեան տէր Աստուածատուր վարդապետին, Տր. Աստուածատուր եպօկն. Եէմյ. երեկ (եկաւ) ի յՍտամբոյ և շատ բարութիւն արար, և աղէկ հօքումնի հանեց, և զԵրուսաղէմ կրկին նորոգեց. Աստուած ողորմի տէր Աստուածատուր վարդապետին, ծնողացն հոգուն՝ որ աղէկ կանգնեցաւ և մասնակից եղև, և զհօքմերն հանեց: Եւ այս Երուսաղէմայ ոսկեզարդ աւետարանս, գերի էր բերած յՍտամբոյ քաղաք, և Աստուածատուր Պարոնն՝ Պօղածէ որդին՝ ի գերութենէ ազատեր է զայս Աւետարանս, և ինքն վախճանեցաւ: Եւ քարեյ իշատակ մնաց՝ Սինան Չալապին: Եւ երբ տեսաւ զտէր Աստուածատուր եպիսկոպոսն, որ շատ բարութիւն արար Երուսաղէմայ. նա ետուր զսր. աւետարանս՝ ի ձեռն տր. Աստուածատուր եպիսկոպոսին, որ տանի իւր ձեռամբն ի սր. քաղաքն յԵրուսաղէմ և զնէ ի սր. Յակոբ, յիշատակ հոգոյ Պօղածէ որդուն և Շահրիեար Չալապէ և Սինան Չալապէ և իւրոյ նախնեացն հոգոյն Աստուած ողորմի և վարձահատոյց լիցի նոցա, աստ և ի հանդերձեանս:

Աստուածատուր պտրք., Մերտինցի ՌևԸ Նոյեմբեր Ը (= 1589) թուին, վասն Ծոազաւսկին եւ վասն լուսոյն Երուսաղէմի, խորագրով թուղթ մը կը գրէ Լեհահայոց (Հ. Ալիբան «Կամենց» 231—8): Այս թուղթին թուականը ճիշտ չի թուիր, վասնզի նոյն թուականին արդէն վախճանած էր Աստուածատուր պտրք. և անոր եզրօրսրդի և յաջորդ Անդրէաս Պարոնտէր պատրիարքին ալ մահուան տարին էր, և մահաւանդ որ Ծոազաւսկի կը պատահած էր Աստուածատուրի պատրիարքութեան օրով 1538ին, (Վ.Պե Ա. հասնր էջ 284 5), հետեւաբար 1589 թուականը ճշտումի կը կարօտի: (Աղաւունի՝ «Միաբանք» էջ 32—3):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԻ Գ. Տարօնցի, պատրք. Երս. ի

(1645—1671) աշակերտ Կրիգոր պատրիարք Պարոնտէրի, կը զահակալէ 1645ին Ս. Հրեշտակապետի վանքը կը նորոգէ 1649ին: Հակառակորդներու ձեռքով զահընկեց կ'ըլլայ, բայց կը վերահաստատուի կայսերական պերթով 1650ին, ներկայ կ'ըլլայ Փիլիպպոս կթղ. ի 1651ին Երուսաղէմի մէջ գումարած ժողովին, 1653ին և 1656ին կրկին Պոլիս կ'ուղևորի վանական գործերու կարգադրութեան համար, զարձին փոխանորդ կը կը կարգէ Եղիազար վրդ. Այնթապցին, վերջնոյս յարուցած զանազան խնդրոց և ոտընձգութեանց համար, թէև երկիցս կը հրատարի աթոռէն, բայց զարձեալ պաշտօն ստանձնելով կը շարունակէ իշխանութիւնը, գործերու ղեկավարութիւնը կը յանձնէ իր աշակերտին՝ Կաֆայեցի Մարտիրոս վրդ. ին. կը վախճանի 1670ին: Իր տապանագիրն է.

«Նսեմայարկ զիրս ստորին
Ունի աւանդ զանձ զովելին,
Զմաքուր մարմին բաղմերջանկին,
Աստուածատուր վարդապետին,
Նստեալ զահն Յակոբոսին,
Ըստ մարմնոյ եղբոր մերոյ փրկչին,
Մեծ պատրիարք յաջորդ նմին,
ՅԵրուսաղէմ սուրբ քաղաքին,
Հայրապետաց սրբոց կարգին,
Փայլէր վարուք գեր քան զնոսին,
էր անձանձիր իր քարոզին,
Աստուածարան քաջ բարունին,
Արդ փոխեցաւ ի ցանկալին,
Չուեաց յատեացս յոյսն վերին,
Լցեալ շրջման ամք հազարին,
Հարիւր քսան յարարողին
(ՌձԻ = 1671):

(Աղաւունի՝ Միաբանք էջ 33—4)

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԻ Ա. պատրիարք Կ. Պոլսոյ 1537-1550), սա աշակերտն է եղած Դերջանցի Մաղաքիա վարդապետին, իր օրով 1547ին Պոլիս կ'երթայ էջմիածնայ կթղ. Ստեփանոս Սալմաստցի: Պատրիարքը մեծ ընդունելութիւն կ'ընէ կաթողիկոսին:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒԻ Բ. Պաղճեան, պատրիարք Կ. Պոլսոյ (1841—1844): Աստուածատուր ծնած է ի Կ. Պոլիս 1771ին և Զաքարիա պատրիարքի վերջին ձեռնասուններէն եղած է: Ամիրաները 1841 Սեպտ. 19ին ընտրեցին այս 70 տարեկան ծերունին, որպէս զի հլու գործիք ըլլայ իրենց կամքին: Աստուածատուրի ընտրութենէն երկու շաբաթ ետք ամիրաները փակեցին Սկիւտարի ձեմարանը, ինչպէս կը փափագէին Նոյ. 13ին ամիրաները

կրկին ձեռք առին պատրիարքարանի վարչութիւնը: Աստուածատուրի օրով Պատրիարքարանի գործերուն մէջ գերակշիռ դեր ունեցող ամիրան Յարութիւն Երկանեանն եղաւ 1842ին՝ ժողով գումարուելով պատրիարքարան՝ Յարութիւն ամիրա կ'ընտրուի «վերատեսուչ» պատրիարքարանի եկամուտներուն, Միսաք ամիրա «վերատեսուչ» Հիւանդանոցի, և Աշնանեան Պօղոս աղա «տնանկ աղքատաց և որբեւարիներու խնամածու»: Սակայն ո'չ ամիրաները և ոչ էսնաֆները զո՛հ էին Աստուածատուր պատրիարքէն, որ բարկացոտ էր և սիրաշահելու անկարող. ուստի ձեռուների պատրիարքը կը ստիպուի 1844 Յուլիսին հրաժարի և իրեն յաջորդ կ'ընտրուի Մատթէոս եպ. Չուխաճեան: Աստուածատուր կը քաջուի Սկիւտար, ուր իր օրով ու ջանքով շինուած է Եէնի Մահալլէի Ս. Կարապետ եկեղեցին, մեռած է Սկիւտար, 1846 Յունուար 2ին, և թաղուած Պաղար Պաշիի գերեզմանատունը: (Ազգ. Հիւանդանոցի բնդարձակ օրացոյց 1901 էջ 215): Ահաւասիկ իր տապանաքարին ընդօրինակութիւնը:

ԱՅՍ Է

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՀԻ ԱՐՀԻՈՅՆ

Անցաւորք աստի, դարձիք յայտ տապան, նայիլ միանգամ յարհիս սրբազան: Այն որ անդստին գործոց բարութեան, վե՛հ հանդիսացաւ չքնաղ տեսարան: Պատրիարք Պոսոյ՝ Զաքարեան Արհւոյն, Ձեռնասուէն ընտիր, տէրըս վեհարուն. Սոյն և Եզգասէր ընդ իւրոց նախնոյն, ի հոգ իւր հօտին, բղգաստ և սրթուն՝ Սա ի աղգային անդ խըռովութեան, Եղեւ Պատրիարք ի խընամոց Տեսուն: Յորդորմամբ սորին շինեալ անըման՝ Սուրբ Կարապետին տաճար հրաշազան: Անդ հանդոյց զնորա նշխար պատուական. Փայեալ հրրաշիւք յազգըս ամենայն. Ինքն վճարեալ ցաւակից իւր կեան, ի վեր սըլացաւ, յանմայից ի խորան: Յամի տեսն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1846 փոխեալ Յունուար 2 Ամաց 75:

(Հնասեր՝ «Անանիս» 1931 ր. 1—2 էջ 143):

Աստուածատուր 1805ին եպ. ձեռնադրուած է եւ 1820ին՝ 24 օր բանտարկուած, րսԱլլազեանի (Շար. «Հայ Կեան» Բ. էջ 22—3):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԿԹՂ. Սոսոյ՝ Սասունցի նարին կոչուած. Առաջնորդն էր Աղցախու Ս. Առաքելոց վանքին, որ ըստ 1692ի յիշատակագրի մը՝

Պոլիս կ'երթայ և Սոսոյ կ'թղ. կ'ըլլայ, ըստ Չամչեանի 1691—1694:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Առաջնորդ Յանկիւնեաց վանքին՝ 1470ին և 1477ին կը յիշուի:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպ. Գեղարդայ, որ 1603ին Մելիքիսեղեկ կ'թղ.ի հետ Պարսկաստան կ'երթայ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպ. առաջնորդ, Գլակայ վանքին մէջ ընդօրինակող ձեռագրի 1529ին: 1549ին:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպ. Երզնկայի, կը յիշուի 1375ին:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպ. Թեղոսիպոլեաց.՝ 1179ին Հոռմկլայի Բ. Ժողովոյն ներկայ կ'ըլլայ և կը ստորագրէ առ Սանուէլ Ա. Յունաց կայսեր գըրուած թուղթը:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպ. Մարազի, միարան Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին, 1593ին առաջին անգամ կը նորոգէ Հայոց Սմրատ թգ.ին մագաղաթեայ շարականը, որ ընդօրինակուած է 1296—7ին: (Աղաւնուցի՝ «Միաբան» էջ 30):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպ. Մեծքուն (Մեծքարի) 1199ին (տե՛ս Ալլազեի «Հայապատմութիւն»):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպ. Պոլսեցի, միարան Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին, 1804ին եպ. կը ձեռնադրուի. նոյն իրակ Պոսոյ և յրջակայից՝ 1820ին, կը վախճանի 1830ին: (Աղաւնուցի՝ «Միաբան» 29):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ եպ. Տարօնեցի կամ Մեցի: Այս անձը թերևս նոյնն է Գլակայ (Տարօնոյ վանք) առաջնորդին հետ, եթէ ընդունինք որ շատ երիտասարդ հասակին (129) եպիսկոպոս ձեռնադրուած է, ուր կը գտնենք տակաւին իրր գրիչ ձեռագրի՝ 1549ին: Աստուածատուր 1580ական թուականին Կեսարիոյ յրջանին մէջ շատ արդիւնաւոր դործունէութիւն մ'ունեցած է, ի մասնաւորի Թոմարդայի Ս. Աստուածածին վանքին մէջ, ուր իրր Առաջնորդ կը յիշուի 1580ին գըրուած Մաշտոցի մը մէջ (Ալլազեանեան՝ «Հայ Կեսարիա» 967), իր հոգեւոր հայրն էր երամիս եւ քաղցրաբարաւ Սաշատուր վրդ. և ուսուցիչը՝ կուսակոմ Մակար վրդ. որ գրչապետ այ կը կոչուի: Վաւերագիր մը (Աղանեան ԲԲ.ի Գիւան Հայոց պատմ. Ժ. հր. 396—7) զայն ցոյց կու տայ միաբան Սերաստիոյ Ս. Նշան վանքին, 1560-1578ի ատենները այրն այն երեւելին որ Կեսարիոյ, Թոմարդայի, Սերաստիոյ, թերևս նաև Սարբերդի յրջանակին մէջ, ինչպէս նաև Երուսաղէմ, 1550ական թուականներէն մինչև նոյն դարուն վախճանը մօտաւորապէս 50 տարի, անխոնջ կերպով աշխատած է, թէ իրր գրիչ կատարելով բազմաթիւ ընդօրինակութիւններ ձեռագիրներու և թէ կազմելով և փրկելով կարգ մը ձեռագիրներ՝

որոնք կորսուելու դատապարտուած էին Ասկէ զատ անիկա գործած է իրր ուսուցիչ և հասուցած է քաղմաթիւ աշակերտներ, որոնցմէ մեզի հասած են յիշատակարաններ և որոնք երախտեօք կը յիշեն իրենց ուսուցիչը և վարպետը: Աստուածատուր եպ. Մշեցի իրր Առաջնորդ Թոմարզայի կարճ պաշտօնավարութիւն մը ունեցած է, 1582ին կը յաջորդէ ուրիշ մը և ինքը կը մեկնի Երուսաղէմ»:

Ըստ Աղաւնունի սրբազանի, Աստուածատուր եպ. Տարօնցի 1582ին այցելած է Երուսաղէմ եւ երկրորդ անգամ Թոմարզայէն 1589ին Երուսաղէմ գալով Լեռնակողման Ս. Կարապետ վանքին մէջ 1590ին գրուած Մաշտոցին մէջ յուշագիր մը կը գրէ, որուն մէջ կը յիշէ իր 1582ին Երուսաղէմ ուխտի գալը, այդ տարին կազմած է Փամագիրք մը, և 1591ին Սաղմոս մը կ'ընդօրինակէ:

Աստուածատուր եպ. Մշեցին զեռ մեզի ծանօթ է 1591էն ետք 1593ին կը նորոգէ 1473ին գրուած շարահան մը՝ Երուսաղէմի մէջ, Սեւանի մէջ կը դանուի Սաղմոս մը, որ ունի հետեւեալ յիշատակարանը... «զՄշեցի անարժան Աստուածատուր եպիսկոպոսն յիշել... Ռեմի (1594), զրեցաւ ի զուռն Ս. Յակոբայ»:

Արդեօք վերի Աստուածատուր եպ. Մարտեցի Արեւելի պիտի չըլլայ (տե՛ս): Աստուածատուր եպ. ի Աշակերտ Պօղոս կը յիշուի 1552 և 1553ին. իսկ Գրիգոր՝ 1576ին ի Տուժարձայ (Թոմարզայ):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Եպ. Եղեսիոյ, կը յիշուի 1563ի 1564ի յիշատակարանաց մէջ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Եպ. Մեծօրայ վանքին, կը յիշուի 1564ի Մաշտոցի մը յիշատակարանին մէջ, Գրիգոր Աղթամարցի 1523ին այս վրդ.ին խնդրանքով կը շարագրէ «Ծաղկունք ասեն» քերթուածը:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Արքեպ. առաջնորդ Կարմիր վանքին, կը յիշուի 1662ին:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Եպ. առաջնորդ Տրապիզոնի, կը վատճանի 1650ին, կը յաջորդէ Յովհաննէս վրդ.:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ, Առաջնորդ Ս. Տիրամօր (յԱղուլիս), կը յիշուի 1671ին «որ բազում աշխատանք ունի ի վերայ սուրբ ուխտիս»:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ վանահայր, որդի Աղբրկայ հայ իշխանի Արճիշեցոյ, կը յիշուի 1213ին:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Զարհապալացի, եպ. Նոր Զուգայի տե՛ս ԱՂԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ վրդ. քեռորդի Յակոբ բարունապետ Ովոսանց՝ կը շարագրէ Մկրտիչ Նաղաշ եպ.ի վարքը ՓԵ. դարուն:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ վրդ. Առաջ. Սեբաստիոյ Ս. Հրեշտակապետ վանքին, կը յիշուի 1709ին. 1750-

ին Յովհ. վրդ. Յակոբ Նախան պատրիարքի կողմէ Առաջնորդ ընտրուելով՝ կ'երթայ Աստուածատուրի ազգականները վանքէն դուրս կը վտարէ (Յիւստակարան):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ գրիչներ և կազմողներ— 1419-ին Աստուածատուր միայնակեաց Լեռնակողմեցի կը յիշուի Ճառընտրի յիշատակարանին մէջ: — 1421 Աստուածատուր դպիր գրիչ՝ աշկ. Ոնոփրիոսի՝ Պատուագրակ վանքին մէջ: — 1443ին եւ 1445. 1465 Աստուածատուր քհ. որդի Կարապետ քհ.ի, գրիչ ի Սլաթ: — 1476ին Աստուածատուր գրիչ Երզնկայի Երէզ վանքին մէջ: — 1485 Աստուածատուր գրիչ Քարէվրակ գիւղին մէջ: — 1486, 1490ին՝ Աստուածատուր Կաֆայեցի սարկաւազ, գրիչ ի Քօթայ: — 1488 Աստուածատուր գրիչ յիշատակարանի ի Բարերթ: — 1490-ին Աստուածատուր կրօնաւոր կը ստանայ «Տօնական» մը կը նուիրէ Ամգայ Ս. Թորոս եկեղեցւոյն: — 1496. 1498 Աստուածատուր գրիչ՝ Եղեգեաց վանքին մէջ: — (1517)ին Աստուածատուր գրիչ, Թաղէոս եպ. զինքը Ամիթէն Ղազարու (Տարօն) վանքը տարած է: — 1520 Աստուածատուր արեղոյ Ս. Մաշտուր քհ.ի կազմող:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ Խալիս Պօլսոյցի, ճարտարապետ. Թուրքիոյ մէջ գործած 1601–1630:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Բ. Բժիշկ, Բրոֆէսոր Երեւանի համալսարանին մէջ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Եսայի, Արքեպ. ծն. Թիֆլիս 1843ին Լոնտոնի հոգևոր հովիւ, որուն օրով ժ.Թ. դարուն տեղւոյն հայերը մատուռ մը կը շինեն: Եսայի վրդ. պատարագամատոյցը անդրիէրէնի կը թարգմանէ և հայերէնի հետ դէմ առ դէմ ապելով՝ կը ցրուէ հաւատացեալներուն 1890ին եպ. կը ձեռնադրուի և իրր սինոդական էջմիածին կը մնայ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Զարեհ, Պուրկազցի, 1937ին 300.000 լէվայով գետին մը կը գնէ Պուրկազի մէջ Ազգային նոր վարժարան մը կանգնելու համար:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ ՄԵլիոն, խայֆա, ճարտարապետ Թուրքիոյ մէջ, մեռած 1857 Գեկտ. 7ին: (Զարդարեան՝ «Յիւստակարան» դ. էջ 51):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Միհրան, ճարտարապետ ծն. Սասգիւղ (Պոլիս) 1891ին: Նախնական ուսումը ստացած է տեղւոյն Ներսէսեան վարժարանը, իր մէջ զգալով ճարտարապետութեան կոչումը՝ անցած է Զուլիգերիա և աւարտած Լոզանի համալսարանը Կառուցած է արարական և բիւզանդական ոճով քաղմաթիւ. չէնքեր թէ՛ Պոլիս և թէ՛ Նիս ու այլուր:

Ազգային շրջանակներու մէջ ունեցած է նաև պատուարեր գործունէութիւն: 1936ին Պոսեցիներու Միութեան Վարչութեան անդամ, նաև Ազգ. Խորհուրդին ատենապետ (1937ին): Իր հասցէն է 5 Boulv. Bel-air, MARSEILLE (France): (Ժ. Զ.):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Յակոբ Էպ. սե'ս Աճեմեան Յակոբ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Յովնանէս եւ Պողոս, որդի եւ թոռ Աստուածատուրի, 1777—1790 հայր եւ որդի կը գործեն իրենց սեփական ապարանին մէջ (Թեոդիկ՝ Տիպ եւ Տառ 63):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Ներսէս, խմբ. Յեղ եւ Հայրենիք կիսամսեայի ի Բլովալե (Պուլկարիա) 1936ին:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Պետրոս Էպոս. Կեսարիոյ վանք գիւղէն. միարան Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին, աշակերտ Կաղզուանցի Ջաքարիա պատրիարքի (Պուլիս), որուն փոխանորդ կը կարգուի 1786—1801. յետոյ Երուսաղէմի մէջ 1812—3 պատրիարքական փոխանորդի պաշտօն կը վարէ եւ այդ տարին կը վախճանի:

Թէ՛ Պոլտոյ եւ թէ՛ Երուսաղէմի մէջ շատ մը ձեռագիրներ ընդօրինակած է: (Աղաւնուցի՝ Միաբանք 409):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Սահակ Էպոս. ծնած Բարերդ, միարան Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին, աշակերտած Սահակ վրդ. Գաղատացոյ, ձեռնադրուած 1849ին, պատրիարքական տեղապահ՝ 1860ին, Էպ. կը ձեռնադրուի 1863ին. ընկերակցութեամբ Տիմոթէոս վրդ. Սափրիչեանի 1867ին Հապէշիստան կը մեկնի եւ կը դառնայ 1869ին, կը վախճանի 1883ին: (Աղաւնուցի՝ «Միաբանք» 441):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Սահակ վրդ. ծնած Պէշիկթաշ (Պոլիս) 1870ին: Կը ձեռնադրուի 1903ին. Լուսարարապետ էջմիածնի մէջ 1904ին: 1910ին Խարախանեան Էպ. էն Տարօն կը հրաւիրուի, կը կազմակերպէ Մշոյ Ս. Կարապետ վանքի մատենադարանը եւ թանգարանը: 1912ին կրկին անգամ Երուսաղէմ կ'երթայ եւ կը միարանակցի: Հրատարակած է Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի եւ Երզնկայից պրակ Ա. (տպ. Վաղարշապատ 1910), Բ. պրակ (տպ. Երուսաղէմ, 1913): (Աղաւնուցի՝ «Միաբանք» 442):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Վանէ, թէ՛նոս երգիչ, 1937ին կը յիշուի Գահիւնի մէջ:

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐԵԱՆ Տ. Ճարտարապետ-երկրաչափ Ս. Հայաստանի մէջ (Դեմք՝ Հիւանդանոցի Տարեցոյց 1935 էջ 280):

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐՈՎ Խ. Նշանաւոր վիրաբոյժ բժիշկ Ռոստովի քաղաքական հիւանդանոցին մէջ:

ԱՍՏՈՒԱԾՐՆԿԱԼ Կամ Ասոււածրնիկ. հայաբնակ գղ. Այրարատայ Ապարան վիճակին մէջ, ըն. 30 տուն: Աւեր փոքրիկ քարաշէն դմբեթաւոր եկեղեցի մը, շինուած ըստ արձանագրութեան՝ 1244ին Քուրդ իշխանաց իշխանէն Թովմա Վանանդեցիի «Աստուածընկեայ երկրպագեալ, Ս. Յակոբայ աջն պատուեալ» տողերէն կը կարծուի որ Ս. Յակոբ Առաքելոյն աջը կամ կողը սեղանին հիման մէջ ամփոփուած է: Եկեղեցիին կէջ գտնուած փոքրիկ սենականերէն կը յայտնուի որ հոն վանք եղած է եւ դրան վրայի 1207 թուականով արձանագրութենէն կը գուշակուի, որ այդ թուին նորոգուած է վանքը: Այժմ հազիւ կը տեսնուին վանքի բնակարանաց հեքերը: Տեղագրող մը կ'ըսէ թէ՛ նշանաւոր է գիւղիս Ս. Լուսաւորչի վանքը, որ շինուած է մեր հին եկեղեցիներու ճով. պատերը կազմուած են ամբողջ ժայռէ եւ ունին արձանագրութիւններ: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ վանքը կառուցուած է Ս. Լուսաւորչի օրով: Տրդատի աջակցութեամբ: Վարդավառին բազմաթիւ ուխտաւորներ կ'այցելեն վանքս: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն», քաղուած Հ. Ալիւանի «Այրարատ»էն էջ 254):

ԱՍՏՈՒՐԵԱՆ Հ. Յարութիւն, պատմաբան, ծնած Մարաշ 1880ին, պատանի հասակին Վենետիոյ Ս. Ղազարու վանքը կը զրկուի, ուր ուսումնական շրջանը աւարտելէ ետք 1902 նոյ. 2ին քահանայ կը ձեռնադրուի Մի քանի տարի ուսուցչութիւն ընելէ ետք Գերմանիոյ համալսարանէն իր պատմագէտ տիպոսով շրջանաւարտ եղած՝ վանք կը դառնայ եւ հմտալից յոգւածներով կ'երեւայ «Բազմավէպ»ի մէջ:

Ընդհ. պատերազմի ընթացքին Գաւրգիւղի Միտիթարեան վարժարանին մէջ ընդհ. ազգաց պատմութիւն կը դասախօսէր, 1922ին Հարաւային Ամերիկայի Գորտոպա քաղաքը կը հաստատուի: (Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՆՐ):

ԱՍՏՐԱՍՏԱՆ Աժգերխան Կամ Հաւսարխան, գլխաւոր քղ. Ռուսիոյ համանուն կուսակալութեան, կառուցուած Վոլկա գետին ճիւղերէն ձեւացուած կղզւոյ մը վրայ: 1897ին 125000 բնակիչ ունէր քաղաքս, մեծամասնութիւնը ուսումիւս ազգերն են Հայք, Թաթարք, Պարսիկք եւ այլն:

Եւրոպայի եւ Ասիոյ զանազան կողմերը ցրուած Հայերէն ամէնէն հիները եւ նշանաւորները կը համարուին հին Աստրախանցիք, որոնք Անիի

վրայ եղած ութերորդ կամ վերջին արշաւանաց և աւերմանց ժամանակները. 1239ին Թաթարաց Չարմաղան զօրավարին ձեռքէն խոյս տալով տպաստանեցան քաղաքս, գրեթէ 100 տարի բընակելէ վերջ, բազմութեամբ ոտք ելան և Թաթարաց հետ պատերազմելով, անցան Խրիմ և անկից ալ կամաց կամաց Լեհաստան, Մոլդովա (Ռումանիա), Հունգարիա և այլ աշխարհներ: Այժմեան Աստրախանցի Հայոց նախնիք Անեցիներ չեն: Ժէ դարու սկիզբները Պարսկաստանէն բաւական թիւով վաճառականներ քաղաքս եկած ու տեղաւորուած են: Ռուսաց Մեծն Պետրոս կայսրը, լաւ ըմբռնելով Հայոց ազգի վաճառականութեան և արուեստից ունեցած մասնաւոր յարմարութիւնն ու հանճարը, նա ինքն հրաւիրեց Հայերը որ Աստրախան հաստատուին, և մասնաւոր արտոնագիր ևս շնորհեց անոնց՝ որպէսզի իր տէրութեան մէջ ծաղկեցնեն թէ՛ վաճառականութիւնը և թէ՛ արուեստները: Քաղաքիս Հայերը հետզհետէ բազմացած են գաղթելով զանազան կողմերէ, ինչպէս Պարսկաստանէն, Արցախէն, Կորիէն, Ղաղախէն, Տարօնէն և Աղուանից աշխարհէն: 1900ին Հայոց թիւը 6500ր կը հասնէր: Ունին Ս. Աստուածածին, Ս. Պետրոս Պօղոս, Ս. Կատարինէ, Ս. Գր. Լուսաւորիչ անուամբ չորս եկեղեցի, հինգերորդ մ'այ Ս. Յարութիւն՝ գերեզմանոցին մէջ:


Մայր եկեղեցին էր Ս. Աստուածածինը, վաշելած և զանգակատունով և շքեղ կաթողիկէով: Այս զանգակատան մէջ Սարգիս եպ. Ջալալեանց, 1850ին, անխնամ ձգուած գտնելով ցուցակագրեց այլ և այլ տպագիր և ձեռագիր գըրքեր՝ զորս հաւաքած էր Յովսէփ արքեպ. Արղութեանց զանազան կողմերէ, որոնց մէջ կար ՅԽԲ (893) թուին գրուած Գրիգոր Նիւսացւոյ Երգ Երգոցի մեկնութիւնը:

Աստրախան կը կազմէր Ռուսաստանի Հայոց թեմերէն մին, վերջին բազմամուտ առաջնորդն էր Արիստակէս Արքեպ. Սեդրակեան (տե՛ս), 1795ին Յովսէփ Արքեպ. Արղութեանց հոն հիմնած է միակ հայ տպարանը որ բաւական եկեղեցական գրքեր լոյս ընծայելէ հոք անգործութեան դատապարտուեցաւ:

Ս. Պետրոս Պօղոս եկեղեցին ալ յոյժ գեղեցիկ և հոյակապ չէնք է: Ջալալեանց զմայլած տաճարիս գեղեցկութեան և ձօնութեան վրայ կ'ընէ: «... համեմատ նմին եկեղեցի չունին ամենեւին Հայք. ո՛չ ի Հայաստան և ո՛չ ի Ռուսաստան»: Եկեղեցւոյս մէջ կար Քրիստոսի խաչէն վար առնելու և գերեզման դնելու պատկեր մը, որ յոյժ գեղեցիկ օրինակութիւն մ'էր Ռաֆայէլի,

որուն բուն օրինակը Հոռոմ կը գտնուի Կրսուի թէ իտալիայէն բերուած և Կատարինէ թագուէլոյն նուիրուած էր և վերջինս ալ Պօղէմկիւնի միջոցաւ Յովսէփ Արքեպ. Արղութեանցի ընծայած: Եկեղեցւոյս հիմը ձգած է Մինաս Արքեպ. ր և կաթողիկէն վերըստին շքեղադարձած և նորոգած է Արղութեան Արքեպ. ր:

Քաղաքիս մէջ կային և կաթողիկէ Հայեր իրենց վերափոխման եկեղեցիով, որոնց թիւը մինչև 450ի բարձրացած էր:



Ս. Պետրոս Պօղոս եկեղեցի

1806ին Աղգային վարժարան մը հիմնած է պ. Աղապապեանց՝ իր անունով որ մինչև համաշխարհային պատերազմը գոյութիւն ունէր, որը 1896ին Ռուսաց Լուսաւորութեան նախարարութեան անմիջական հսկողութեան տակ կ'ինայ, սակայն հայերէն լեզուի ուսուցումը կը շարունակուի: 1860ին Հայք ունէին նաև առանձին հոգեւոր դպրոց մը, և յետոյ ուրիշներ որոնք կառավարութեան ձեռքն անցնելով 1891ին՝ փակուեցան:

Հայոց նիւթական տնտեսական վիճակը ընդհանրապէս լաւ էր: (Էփրիկեան՝ «Բնագիտարհիկ»):

Աստրախանի մէջ առաջին անգամ լոյս տեսած է, 1815ին, «Մանուցմանց շարաթաթերթ»ը, ու յետոյ 4 թերթ: Ներկայ վիճակէն սաչափ գիտենք որ քաղաքին մէջ այժմ 3000 հայ կայ և 7 ամեայ դպրոց մը, կայ նաև անկեղանոց մը, ուր 30ի շափ պառաւներ կը խնամուին:

ԱՍՐԱՆ կամ ԱՇՐԱՆ, կրկնակ գիւղեր՝ վերին և ներքին Ատրպաաականի Գարատաղ գու.ի մէջ, մին ունի 35 տուն, միւսը 158 տուն հայ բնակիչ:

ԱՍՐԱՅ, գղ. Աղիովիտ (Արճէշ) գու.ի, բնակիչ՝ 70, հոյակապ եկղ. Ս. Աստուածածին:

ԱՍՐԵԱՆ Ս. դերասանուհի Խ. Հայաստանի մէջ (դեմքր սեւ «ՀՕԿ» ամսաթերթ էջ 294):

ԱՍՐԻԿ, գետ Ուտի գու.ի մէջ, աջակողմեան օժանդակ Տաուշի:

ԱՍԲԱՆԱԶԵԱՆ Մինրան գրող և խմբագիր, ծնած 1854ին Գատրգիւղ: Ռ. Յ. Պէրպէրեանի անդրանիկ սանը: Պատանեկութենէ նետուած ուսուցչական ասպարէզն ուրապրեցաւ և զատեցաւ ցվերջ՝ իրր հայ լեզուի տիպար դասախօս, անուանը պատիւ ընդոզ բաղմամբիւ աշակերտներ հասցունելով: Երկար ատեն դասախօս եղած է Պոլսոյ բարձր. կրթարանաց (Պէրպէրեան, Մեղպուրեան, Կեղրոնական, Արամեան եւայլն). ատեն մ'այ տեսուչ Ռոտոսղոյի ազգային վարժարանին: Ամուսնացած Օր. Կատարինէ Յակոբեան մանկավարժուհւոյն հետ՝ Սկիւտար: 1896ի հայ գաղթականութեան հոսանքը զինք ընտանեօք քշած էր Եգիպտոս՝ ուր վարեց ուսուցչ. պաշտօններ, մինչև իր անողոք մահը (20 Դեկտ. 1904):

Երկերը. — Գրագիտութիւն (բանայիտով 3 հատոր) 1884ին: Ծայլիկ Մանկանց կրթ. շարաթաթերթ 4 Յունուար 1891ին սկսուած և 22 թիւ հրատարակուած՝ Պոսասայ ծանօթ ուսուցիչներու մասնագիտական յօդուածներով: 1903 - 4ին Ռամբէի մէջ տպարան բացած է, 1904ին կը խմբագրէ Պարսեզ «գրական, գիտական, մանկավարժական թերթ»ը որ 1904ին, խմբագրին մահուամբ կը դադրի, ատենց մէջ ունի «Մսային հովիտ» վերնագրով սրամիտ յօդուածներ: Իսկ իր գլուխգործոցն է Հոմանիճեհերու Բառարան մը անտիպ, վիթխարի՝ հեղինակութիւն զոր լրիւ կերպարանելու համար 20 տարի տքնած է: Աշխատակցած է Եգիպտոս՝ երբեմնի «Փեքակ» հանդէսին Մեղրածած ծածկանուամբ: (Թեոդիկ՝ «Ամենուն Տարեցոյց»ը 1911 էջ 244):

ԱՎԱՆԱՇԷՆ. հայաբնակ գղ. Աղուանից Կոկիտոն գու. բն. 1000էն աւելի, գաղթած են Արցախի Նիդակ և Վարանդայ գաւառներէն, Խաչէնի Թաշ-Պուլաղ գղ.էն և Զանգեզուրէն: Հոյակապ եկեղեցին Ս. Աստուածածին՝ կառուցուած է 1752ին. ունի փառաւոր դպրոց: Գիւղս հիմնած է Արցախցի Ավան Իւղպաշին:

ԱՎԱՆԷՍԵԱՆ Ա. ճարտարապետ Երեւանի մէջ (1935):

ԱՎԱՆ ԻԻՋՊԱՇԻ Արցախցի, հիմնադիր Ավանաշէն գղ.ի

ԱՎԱՆՅ Տ. Աւանց:

ԱՎԱՆՔԱՐԳ. օրգան Հայաստանի Լենինյան Կոմյերիտ Միութեան կենտրոն. յեմ Յերեվանի Կոմիգեների: Տպ Յերեվան 1929—1934: Խմբ. Հր. Միրզոյեան, նախապէս՝ Հ. Եկավհան, Հմ. Յովհաննէսեան, Տ. Պորուհի, Ծ. Ազնաւուր, Ստ. Կուրաիկեան:

ԱՎԳԱԹ կամ Ավիսաք Հանի գիւղ, (Ամառիա),

Զորումի շրջակայքը, ունէր 100 տուն հայ, եկղ. և ազգային վարժարան, ուր 1900ին 29 մանչ և 15 աղջիկ կ'ուսանէին:

ԱՎՏԱԼԵԱՆՅ Յովնաննէս, ուսուցիչ Կարկաթայի Մարդասիրական ձեմարանի ժթ դարու կիսուն: Աչկ. Յարութիւն Գալուցեանի: Հեղինակած է հետեւեալ գրքերը: Անգլիաց անպէս, տպ. 1821ին, 320 էջ. Մեսիկ, տպ. ի Կարկաթա 1823ին, 50 էջ և այլ մանր գրքոյկներ: Տես Գալիքեանց Մ. Մ.:

ԱՎԵԽԱՆ կամ Աւեխու Ս. Ասուածածին. վանք Աղձնեաց Սայոց-ձոր գու.ի մէջ, Բաղէշի արեւելակողմը: Մօտը կան Թաղէոս և Թւվմաս Առաքելոց անուամբ 2 աղբւր, ուր ժողովուրդը կը դիմէ և հիւանդութեանց գարման կը գտնէ: Կը կարծուի թէ ի հունմն հոս Ավեխ անուամբ գիւղ մ'եղած ըլլայ: Հոս է նաև Ավեխուկորը:

ԱՎԵՏՈՒՄԵԱՆՅ Թաղէոս Խաչիկ. Կարկաթացի ժթ դարու սկիզբները, հեղինակ Արամայիս բարոյական ստեղծագործութեանց տպուած 1846ին, ուր պատուական տեղեկութիւններ կան Նոր Զուգայու, Շիրազի, Պասրայի ու Հայոց վրայօք: Ավետեմեանց ունի նաև մի քանի թարգմանած գրքեր:

ԱՎԸՐԳՆԻԿ կամ Աւրգնիկ, գղ. Զորբորղ Հայոց Վերին Կեղի գաւառակի մէջ, բնակիչն էր 40 տուն հայ և 25 տուն քուրդ: Հայերը եկեղեցի մ'ունէին:

ԱՎԹՈՅ, կը յիշուի տեղս Աղձնեաց Տատիկ գու.ին մէջ:

ԱՎԻՆԵՅՆ, ֆրանսական պատմական քղ. ուր կը կանգնի Յովհաննէս Այթունի արձանը. կան 150 հայեր, որոնք զլիսաւորաբար ազարակներու մէջ կ'աշխատին:

ԱՎԼԱՎՈՒ, հայաբնակ գղ. Բալուէի, ունէր 15 տուն հայ:

ԱՎԼԱԹ Տ. Ավլաք

ԱՎՃԸ ՆԷՎԱՍԸ (Խաչասուր), հայ աշուղ, բնիկ Շամախու Մատրասա գիւղէն, ապրած 1810-1880:

ԱՎՇԱՔԱՐ, գղ. Զարսանճագի Փէրին գաւառակի. ունէր 40 տուն հայ, եկղ. Ս. Գէորդ:

ԱՎՇԷՆ կամ Աւշէն, գղ. ծառագարդ՝ Բարձր Հայոց, այժմեան Կամախ գաւառակի մէջ, երբեմն բաղմամարդ և շէն, այժմ ամառայի:

ԱՎՈՒՇ Տ. Աւէտ:

ԱՎՍՈՒՆՏՈՒՎՄԼՈՒՆ, գղ. Շապին Գարահիսարի, որուն Ազգային դպրոցը 1900ին 15 մանչ կ'ուսանէին: Եկղ. Ս. Լուսաւորիչ, բնակիչք՝ 30 տուն հայ, 25 տուն մտմեմտական:

ԱՎՏԱԼԵԱՆ Պ. բժիշկ մը կը յիշուի 1920ին Լենինականի մէջ: (Նո՞յնն է արդեօք Խորհրդեր-
ցի Ալտայեան Պետրոսի հետ, Վենետկոյ Մուրատ
Ռաֆայելեան վարժարանէն շրջանաւարտ 1906-8):

ԱՎՏԻԲԷԿ գղ. Բամպակաձորի, բն. 130 տուն
մասամբ գաղթած Ալաշկերտէն, Մուշէն, Բա-
սենէն: Ունի քարաշէն եկղ. մը Ս. Գէորգ ան-
ուամբ, մօտը կայ Ս. Յովհաննէս սարը, ուր մա-
տուռ մը կայ և ուխտատեղի է:

ԱՎՏՈՒՌ. հայարնակ գղ. Արցախի վարանդա
գու.ի, Հացի գիւղի արեւելակողմը, բն. 900, եկղ.
Ս. Աստուածածին, շինել տուած են Սարգիս Բէկ
և Յարութիւն Բէկ Ղազեանց:

ԱՎՐԱՆ S. ԱՐԱՄ:

ԱՎՐԱՐ կամ Էվլիա, լեռ Այրարատոյ վա-
նանդ (Կարս) գու.ի մէջ:

ԱՏԱ, հայարնակ գղ. Ատրպատականի, Ուրմիոյ
գու.ի մէջ. բն. 70 հոգի:

ԱՏԱԲԱՋԱՐ կամ Ասապազար, գլխաւոր քաղաք
Նիկոմիդիոյ գաւառին, կը գտնուի Սագարիա
գետին եզերքը, Նիկոմիդիայէն 45 քմ. հեռու ըն-
դարձակ և բարերեր տափարակ դաշտի մը մէջ:
Քաղաքիս վայրը նախապէս լիճ եղած է, որ հե-
տըզհետէ Սագարիայի յորդումներէն մնացած սի-
կով լիցուելով ցամքած է: Գետը նախապէս հո-
սած է քաղաքի վայրէն՝ անցնելով Յուստինիա-
նոսի շինած հսկայ քարաշէն կամուրջին տակէն:
Այս կամուրջը այսօր ալ դեռ կանգուն կը մնայ
և «Պէշ Բէօփրիւ» կը կոչուի, բայց գետը իր ըն-
թացքը փոխած ըլլալով այժմ անոր տակէն չանց-
նիր: Քաղաքին միւս կողմէն կ'անցնի Սապան-
ձայի լճակէն հոսող «Եավաշ Սու» ըսուած գե-
տակը, զոր տեղացիք «Չարխին ջուրը» կ'անուա-
նէին:

Երբ Ժ՛ի դարուն վերջերը Լէնկթիմուր Հայաս-
տանը կ'աւերէ, կտրգ մը Սերաստացի հայեր գաղ-
թականի ցուպը ձեռք առած կը դիմեն ղէպի
Արեմուտք՝ ապահով վայր մը գտնելու յոյսով,
ու կը հասնին Ատարազարի դաշտը, որ այն ա-
տեն այլևս մեծ մասով ցամքած էր և անտէր,
անմարդարնակ անտառ մը կը ներկայացնէր,
միայն շրջակայքի բլուրներուն ստորոտը բնակ-
չութիւն կար:

Այս Հայերուն մէկ մասը շրջակայքի թուրք
ագարակատէրերուն քով ծառայութեան կը մըտ-
նեն և հետզհետէ կը կսզմեն Յէրիզի, Թամուք,
և Էյմալը գիւղերը, իսկ ծառայութեան մտնել
չուզողները՝ դաշտին մէջ բնակութիւն կը հաս-
տատեն ու կը սկսին մէկ կողմէ երկրագործու-
թեան և միւս կողմէ արհեստներ ի գործ դնելու:

Գիւղը անոնց առաջնորդին անունով կը կոչուի
Տօնիկաշէն:

Հետզհետէ նոր գաղթականութիւններ կը հաս-
նին Ակնէն, Թոքաթէն, Պարսկաստանէն և նոյն
իսկ Եւրոպայէն և գիւղը կ'ընդարձակուի մէկ
կողմէ նորեկներով և միւս կողմէ ներքին ա-
ճումով:

Աւելի յետոյ հո՞ծ թիւով եկուորներ եկած են
Օրտուէն, իսկ նոր թուականներուն գաղթական
հայեր եկած են Կեսարիայէն և շրջականերէն
(Կէյվէ, Պարտիզակ եւայլն):

Թուրքերը բնակութիւն հաստատած են հոս
Հայերու կողմէ շէն գիւղաքաղաքի մը վերած-
ուելէն յետոյ, հուսկ ապա եկած են յոյներ շըր-
ջականերէն:

Երբ Թուրքերը Պոյսոյ ևս տիրապետել յետոյ
վարչական կազմակերպութեան ձեռնարկած են,
Հայերու կողմէ շինուած այս գիւղաքաղաքը
անուանած են Ատա (կղզի), ժամանակ մը շատ
սխտոր արտադրելուն համար կոչուած է նաեւ
«Սարըմսագ Ատասը» (սխտորի կղզի), իսկ ավելի
յետոյ բանուկ բաղար ունենալուն համար ան-
ուած է Ատարազար:

Քաղաքը 1915ին ունէր 30000 բնակիչ. որոնց
կէսէն քիչ մը ավելին Հայեր, իսկ մնացեալ մասը
Թուրքեր, Յոյներ և վերջի 50 տարուայ ընթաց-
քին եկած զանազան իսլամ գաղթականներ:

Հայերը ունէին իրենց ուրոյն փողոցները,
բաժնուած 4 թաղերու, որոնք կը կոչուէին Ի-
րենց հոյակապ եկեղեցիներու անունով Ս. Հրեշ-
տակապետի, Ս. Կարապետի, Ս. Լուսաւորիչի եւ
Ս. Ստեփաննոսի թաղեր: Իւրաքանչիւր եկեղեցի
ունէր իր մանչերու և աղջկանց նախակրթա-
րանները և մանկապարտէզը՝ Արամեան-Գոյ-
եանեան, Ներսէսեան Սանդուխտեան, Ռուբինեան-
Հօրիսիմեան և Մեսրոպեան-Նունեան անուննե-
րով: Ասոնցմէ դուրս 1909ին բացուած էր «Կեդ-
րոնական» վարժարան անունով երկրորդական
մանչերու վարժարան մը և 1912ին երկու դասա-
րանով աղջկանց լրացուցիչ դասընթացք մը:
Իւրաքանչիւր թաղ ունէր իր ուրսյն թաղ. Խոր-
հուրդը և մատակարարութիւնը, նախապէս մի-
այն աղգային բաղնիքը և գերեզմանատունը հա-
սարակաց էին, իսկ յետոյ կեդրոնական վարժա-
րանն ու աղջկանց լրացուցիչ դասընթացքը եւս
եղան յոյր թաղերուն հասարակաց: Այս աղգին
կողմէ մատակարարուող վարժարաններէն զատ,
որոնց մէջ կը յաճախէին շուրջ 3000 երկսեռ ա-
շակերտներ, կար նաև մասնաւոր «Մանիշակ»
անունով մանկապարտէզ նախակրթարան մը:

Հայ Բողոքականները կը հաշուէին 70 ընտանիք, ունէին հոյակապ նորակառոյց քարաշէն ժողովարան մը, որուն քով էր «Հայունեաց» Բարձր վարժարանը: Անոնք ունէին մանչերու և աղջկանց նախակրթարան և մանկապարտէզ: «Հայունեաց» վարժարանը, ուր կը յաճախէին աշխարհի ամէն կողմերէն եկած միջին հաշուով 80 գիշե-



Ասաբազարի կառավարական հրապարակը

րոթիկ աշակերտուհիներ, բացուած էր ամերիկեան Պորտ Ընկերութեան կողմէ, սակայն անոր ղեկավարներն էին տեղւոյն բողոքական հասարակութեան կողմէ ընտրուած խնամակալները: Պորտը դպրոցին կ'օժանդակէր միայն անոր տրամադրելով 3 ամերիկացի վարժուհիներ՝ ինքը վճարելով անոնց թոշակը:

Նախքան ընդհ. պատերազմը Ատարազարի մէջ գոյութիւն ունէին շարք մը մշակութային միութիւններ: Կրթասիրաց Ընկերութիւնը կազմուած էր շատ կանուխէն՝ նպատակ ունենալով քաղաքին մէջ հաստատել ուսումնարան (երկր. վարժարան) և ունէր իր կայուածները, որոնց հասոյթը կը յատկացուէր «Կեդր. Վարժարան»ի, Ընթերցասիրաց Միութիւնը ունէր հարուստ գրադարանով ընթերցարան: Ազգ. Ժողովասեղիի Միութիւնը ունէր կանոնաւոր ֆանֆանի խումբ և հաստատած էր գեղեցիկ հանրային պարտէզ մը: Կային թատերասիրաց միութիւններ և թատերական խումբեր, երգչախումբ ևւայլն: Նոյնպէս կային կանանց բարեսիրական կազմակերպութիւններ:

Ատարազարցիք կը խօսէին իրենց յատուկ գաւառարարաւ մը:

Ատարազարի հայաբնակ զիւղերն են. Ֆէրիղլի, Թամլըք, Էյմալը, Սէթ գիւղ, Արամ գիւղ. Գեղամ գիւղ, Հովիւ գիւղ՝ զուտ հայաբնակ, Ֆըն-

տըղլը՝ Յոյներու հետ խառն և Սապանճա՝ Թուրքերու հետ խառն:

Ատարազարը վաճառահան քաղաք էր, վաճառականութիւնն ու արհեստները գրեթէ ամբողջութեամբ Հայերու ձեռքն էին:

Կար «Ատրուշան» տպարանը, ուր տպուած են կարգ մը հայերէն գիրքեր, 1912էն սկսեալ այս տպարանէն լոյս կը տեսնէր «Բիւթանիա» շաբաթաթերթը: Նոյնպէս Ատարազարի մէջ լոյս կը տեսնէր «Ներկիր» թերթը, որ կը տպագրուէր սակայն Պոլիս:

1915ին ամբողջ հայ բնակչութիւնը աքսորուելով հաղիւ տասնեակ մը ընտանիքներ կրցան մնալ հոն: 1918ի զինադադարին վերադարձան շուրջ 4000 վերապրող Հայեր և հայ կեանքը կրկին սկսաւ կենդանանալ հոն, թէ և տուներուն շատ քանդուած էր և չուկային մէկ մեծ մասը այրած: 1921ի ամառը երբ յոյն բանակը պարպեց Ատարազարը, Հայերն ալ քաշուեցան քաղաքէն, մեկնելով Պոլիս, Յունաստան ևւայլն, հազիւ 50ի շտի Հայեր մնացին, ատոնք ալ սակայն յետոյ Պոլիս զրկուեցան:

Այսօր կը մնայ Ս. Հրեշտակապետ թաղի Հայոց տուններէն մէկ մասը, որոնց մէջ կը բնակին թուրք գաղթականներ. Ս. Հրեշտակապետ եկեղեցին վերածուած է թանգարանի և միւս եկեղեցիները աւերուած են: Ոչ մէկ հայ մնացած է հոն:

(Ասաբազարի մասին ուսումնասիրութիւն մը ունի Յ. Գ. Արանասեան, որուն մէկ մասը հրատարակուած է «Հայ Մամուլ»ի մէջ՝ 1935 թ. 14էն սկսեալ:

ԱՏԱ Թէֆէ, քարաբլուր Սիւնեաց, Գեղամայ ծովակի արեւելեան եզերքը, Աղա կոչուած փոքրիկ թերակղզոյն վրայ:

ԱՏԱ, ԱՆԱՆ Կարապետ վերպ. (1854—1904) ծընած Մարաշ 1854ին, ուր կը ստանայ նախնական կրթութիւնը, յետոյ Այնթապի և կրկին Մարաշի ձեմարաններու մէջ ուսանելէ ետք՝ 1888ին իրր քարոզիչ կը պաշտօնավարէ շատ մը վայրեր և 1891ին Ամերիկա [կ'անցնի ու Լին (Մէս) քաղաքի հայոց հոգևոր հովուութիւն կ'ընէ. կը վախճանի 1904ին, խաղաղասէր և բարձր ներկարագրով հովիւ մ'եղած է: (Գալուստեան Մարաշ էջ 678):

ԱՏԱ, ԱՆԱՆ Ասալիա կամ Մասալիա, գլխաւոր և հին քղ. Կիլիկիոյ համանուն գ.թ.ի մէջ, Պամփիլիոյ ծովեզերքը, որ հայկական տիրապետութեան արեւմտեան ծայրագոյն սահմանն էր, վասընդի Մեծն Լևոնի յաղթական սուրբ միջնակ այս կողմերը իրեն հպատակեցուց: Հիանալի է քաղաքիս զիրքը, պարսպապատ է, և նշանաւոր շէն-

քերն են մղկիթներ, եկեղեցիք և հասարակաց վաճառանոցք: Հայերը հազիւ 15 տուն էին (1900ին), ունէին Ս. Յովհաննէս մատուռ մը 1852ին շինուած ներքնաբերդին մէջ, ուր է նաև հայկական անշուք թաղը, կայ նաև Ս. Գէորգ անուան եկեղեցի մը անգործածելի և բոլորովին փակուած, Լևոնեանց ժամանակ շինուած (Էփրիկեան «Յնաւթխարհիկ» Ալիւանի «Սիսուան»էն քաղուած):

ԱՍԱՄՆԱՐՈՅԺ, ամսագիր?, տպ. Կ. Պոլիս 1921ին

ԱՍԱՆ կամ Սիրասան Պալլ (1219) Զապէլ թագուհւոյ խնամակալ իշխան

ԱՍԱՆԱ, շարաթաթերթ?, տպ. Ատանա, խրմբագիր տնօրէն՝ Յովհ. Սիմիկեան:

ԱՍԱՆԱ, գլխաւոր և վաճառաշահ քղ. համանուն կուսակալութեան, ընդարձակ և բարեբեր դաշտի մը մէջ, Սարոս (Սիհուն) գետի ափանց վրայ, երկաթուղիով Տարսնէն հեռու է 1 ու կէս ժամ և Մերսինէն՝ 3 ժամ: Հին ատեն Ասանա անունը ծանօթ չէր, և իր հիմնարկութեան նկատմամբ ալ որոշ տեղեկութիւններ չկան: Կրիկիոյ միւս քաղաքաց պէս Ատանան ալ գանազան անգամ Արարացուց և Բիւզանդացուց պատերազմաց և հարստանարութեանց աղէտքը կրած է, բայց մեր Բ. Թորոսի իշխանութեան ժամանակ՝ Ատանա ծաղկեալ և բազմամարդ կ'աւանդուի: Առաջին Պաշակրաց արշաւանքին ատեն՝ վերջինքս յափշտակեցին զայն թուրքաց ձեռքէն, զոր յետոյ Տաշկերտ կրկին անգամ առաւ Յունաց ձեռքէն և միացուց Անտիոքայ իշխանութեան հետ, որ իրեն բաժին էր ինկած: Կրիկիոյ հայ իշխանութեան օրով Ատանա մեր երկրորդական քաղաքներէն մին համարուած է: Եգիպտացուց ձեռքով Կրիկիոյ առաջին աւերմանէն յետոյ՝ Ատանա կը սկսի կամաց կամաց պատմութեան մէջ նշանակութիւն ստանալ, վասնզի հոն յամին 1310 Հոմայ Պապին նուիրակին առջև հաստատուեցան Կիպրոսի թագաւորին Հնարկոս Բ.ի և իր եղբոր Ամաւրեայ դաշինքը, զարձեալ հոն, յամին 1316 գումարուեցաւ վերջնթեր աշխարհածողով սիւնհոգոսը, յորում եկեղեցւոյ ուխտին հետ ի միասին բաղմեցան նաև աշխարհիկ հայ իշխանագունք, այս զիպուածիս մէջ Ատանա կը կոչուի հոյակապ եւ բազաւորական քաղաք, ինչպէս նաև ժողովատեղին՝ տաճարն Ս. Մինասայ՝ կը գանուէր ի բազաւորական պալատին: Եւ իրաւի, Սոոյ և ուրիշ քաղաքաց աւերմանէն ետք հոս ապաստանած կ'երևին մեր վերջին թագաւոր-

ները, որոնցմէ Գ. Լևոն անկասկած կեցեր էր, երբ յամին 1335 ասպատակեց իր վրայ Ալթուն-Գաշ Նայիպն Հալպայ, որոյ ձեռքէն հազիւ կրօցաւ ազատիլ Լևոն՝ փախչելով ի Մոլեոն բերդն: Բաց ի վերոյիշեալ Ս. Մինաս եկեղեցիէն՝ կը



Ա Ս Ա Ն Ա

յիշուին Ատանայի մէջ նաև եկեղեցիքն Համբեր կամ Անհամբեր Ս. Ասուածածին, Մօթոբու Ս. Ասեփանոս: Ատանան 1841 թուէն սկսեալ բոլորովին Օսմանեան երկիր մը դարձաւ, ուր կը նստի կուսակալը՝ Բ. Դուռէն նշանակուած:

Ատանայի հին յիշատակարաններէն մնացած է Սիհուն գետի վրայ ձգուած հոյակապ կամուրջը, որ 22 աշք ունի և երկայնութիւնն է 400 կանգուն: Յիշատակութեան արժանի է նաև Ուլու ձաւին, որ ժամանակաւ յունական հին եկեղեցի մը ըլլալով՝ Բպմազան-Օղլուի ձեռքով դարձեր է մղկիթ:

1900ին Ատանան 45000 բնակիչ ունէր, որուն 11000ը հայեր էին բաժնուած երեք յարանուանութեանց: Տեղական արհեստները մեծաւ մասամբ Հայոց ձեռքն էին, ինչպէս նաև վաճառականութիւնը: Հայք կը զբաղուէին նաև երկրագործութեամբ:

Լուսաւորչական Հայոց թիւն էր 2500 տուն և ունէին երկու եկեղեցի ի հնուց մնացած Ս. Ստեփանոս և Ս. Աստուածածին, որոնք ժամանակի ընթացքին նորոգուած են: Ս. Ստեփանոսի մօտ երբեմն Հայք ունեցած են Ս. Յակոբ և Ս. Սարգիս անունով եկեղեցիներ, որոնց մնացորդները դեռ կ'երևին: Ունէին հետեւեալ վարժարանները, Աբգարեան՝ ուր 180 մանչ, Միջլն Աբգարեան՝ 70 մանչ, Արամեան՝ 630 մանչ, Աւսեկեան՝ 370 աղջիկ, Աւսեկեան երկսեռ՝ 50 մանչ և 100 աղջիկ, Աւսեկեան մանկապարտէզը 100 փոքրիկներ կ'ուսանէին:

Ի հնուց Ատանա ունեցած է եպիսկոպոսական

աթոռ, վերջերս տեղապահով մը կը կառավարուէր: Ըստ Օրմանեանի (Հայ եկզ.) Ատանայի Արքեպիսկոպոսական վիճակը (Ատանա, Մերսին, Իզմիրի սանճագներով) 16 թաղ ունէր, 12 եկեղեցիով:

Կաթողիկէ Հայերը 170 տուն էին, ունէին իրենց հինցած եկեղեցին և Թէրզեան եպ. նոր մը կառուցած էր նուիրուած Անարատ Յղութեան Ս. Կուսի: Հայ Կաթողիկէից վարժարանը 90 մանչ և 50 աղջիկ կը յաճախէին: Բացի ասկից Հատիններն ալ ունէին դպրոց մը ուր 150 հայ մանչ և 120 աղջիկ կ'ուսանէին:

Հայ Բողոքականաց թիւը աւելի նուազ էր, ունէին ժողովարան մը և քանի մը վարժարաններ, ուր 100 մանչ և 100 աղջիկ կ'ուսանէին:

Ատանայի Հայք մեծ մասամբ թրքախօս էին՝ միայն վերջերս, Հնորհիւ դպրոցներու՝ նոր սերունդը սկսած էր հայերէն խօսիլ և կարդալ: (Եփրիկեան՝ «Բնաշխարհիկ» Ա. հատր):

Ինձի ծանօթ հետեւեալ յիշատակարաններուն մէջ կը յիշուի Ասանա, 1587ին Ասեփանոս քն. «ընդ հովանեաւ Ս. Ասուածամբի» կը կազմէ Աւեսարան մը: 1659ին Սահակ դպիր ձեռագիր մը կ'ընդօրինակէ, եւն.: Ժ. 1729ին Ասանայի եպ. Յակոբ Կ. Պոլսեցի Հոռմ կը գտնուի: Ժ՛՛ դարու յիշատակագիրք Տրովազա կ'անուանեն Ասանան:


Երբ 1908ին Թուրքիոյ մէջ Սահմանադրութիւն հռչակուեցաւ և Երիտասարդ Թուրքերը եղբայրութիւն ու հաւասարութիւն կը քարոզէին, 1909ին Ատանայի մէջ տեղի ունեցաւ սարսափելի ջարդ մը, ուր հայութիւնը հազարաւոր զոհեր տուաւ: Ներկայիս Ատանայի Հայոց մեծ մասը Սուրիա և Լիբանան ապաստանած է:

Ատանայի մէջ առաջին անգամ 1910ին լոյս տեսաւ Ասանա հայատառ թուրքերէն եռօրեայ թերթը, խմբագրութեամբ Յովհաննէս Սիմիկեանի: Համաշխարհային պատերազմէն ետք, 1919ին, 5 թերթ հրատարակուեցաւ, Արձագանգ Կիլիկիոյ, Կիլիկիա, Հայ Չայն, Տաւրոս և Քաղաքացի, 1920ին լոյս տեսաւ Ազատ Տաւրոս, Արաւ. Նոր Աւիստի, Կիլիկեան Սուրհանդակ, Նոր Սերունդ, կը նշանակէ թէ աքսորէն վերադարձող բազմամաթիւ Հայեր Ատանայի մէջ հաստատեցին իրենց բնակութիւնը, ուր մնացին մինչև Կիլիկիոյ պարպումը (1922—3):

ԱՏԱՆԱԼԵԱՆ Կ. Պ. վերապատուելի, կ'ապրի Նիւ Եորք, հասցեն է՝ 602 West 190th str. New York N. Y. (U. S. A.):

ԱՏԱՊԱՂԻ, գղ. Տուրուբերաւի Բզնունեաց գու.ի մէջ, Վանայ ծովակի արեւմտեան ափանց վրայ:

ԱՏԱՏ ԳՆՈՒՆԻ, Արշակ Գ.ի օրով (385ին):
ԱՏԵԱՄԱՆ կամ Ասիեաման, գղ. Արագածոտն գու.ի մէջ. բն. 600: Եկեղեցիէն կարելի է գուշակել թէ հին գիւղ մը եղած պէտք է ըլլայ շատ կը նմանի Էջմիածնի Ս. Հռիփսիմեանց վկայարանին:



Սպիտակաւոր Ս. Ասուածամբի = Կիւլ վանք (Տե՛ս 233 էջ)

ԱՏԵԱՄԱՆ ՎԵՐԻՆ, հյրն. գղ. Գեղարքունի գու.ի Կոթայ հիւսիսային կողմը, Իշխանադեպի եղբրքը: Բնակիչք 1900ին՝ դրեթէ 1000 էին բաժնուած 80 տուներու: Գաղթած են Սլաւկերտի Սաստուր գիւղէն, եկեղեցին Ս. Գէորգ, անշուք ձևով: Տե՛ս Կոր:

ԱՏԵԱՄԱՆ կամ Հուսնի Մանսուր, փոքրիկ քղ. Մալաթիոյ գու.ի: Բնակիչք՝ Թուրք, Ասորի և Հայ (յուսաւորչական, կաթոլիկ և բողոքական): Լուսաւորչական Հայոց եկեղեցին էր Ս. Ասուածամբին, իսկ վարժարանը՝ Ռուբինեանց: — Տե՛ս Հուսնի Մանսուր:

ԱՏԵՆԱՊԵՏ, լոյս կը տեսնէ տօնական օրերը: Առժամեայ տեղեկատու Բիւրօ: Ծագրածու: Տպ. Շիրակօ 1919:

ԱՏԵՌ s. Յասնո:
ԱՏԸԿԻԻԶԷԼ s. Ասիկիւզել:
ԱՏԸՇԷՆԻ, գղ. Ռուսմանիոյ Պոթոչան հայարնակ

քղի մօտ, գիւղս սեփական էր հայազգի Մանուկ Զօմաքի:

ԱՏԻԼԼՈՒ, գղ. Արցախու Դիզակ գո.ի 1900ին 500 հայ և 100 ալյուզգի բնակիչ ունէր:

ԱՏԻԼՃԷՎԱԶ s. Արծկէ:

ԱՏԻԿԵԱՆ, գղ. Իրանի Փէրիա գո.ի, 70 տուն հայ բնակիչ ունի եկեղեցիով և դպրոցով:

ԱՏԻԿԻԻՉԷԼ կամ Ասրկիւզէլ, գղ. Վանայ: Սև զետը գրեթէ առջևէն կ'անցնի, 1900ին 20 տուն հայ բնակիչ ունէր. եկղ. Ս. Աստուածածին, 1862ին յինուած, մօտը կայ Ս. Սարգիս ուխտատեղի մատուռ մը:

ԱՏԻՃԱՆՍ կամ Ասիմանց, գղ. Մոկք գո.ի, բն. 200 հայ (1900ին), եկեղեցիք՝ Ս. Ստեփանոս և Ս. Յովհաննէս:

ԱՏԻԼ կամ Աղլի, գղ. Արղնիի, Մատենի առաջնորդութեան թիւին մէջ. 1900ին ունէր բն. 1500 Հայք և սակաւաթիւ ալյուզգիք: Եկղ. Ս. Կարապետ, ունէին և վարժարան:

ԱՏԻԼԷՆ, աւերակ գիւղատեղի Արցախի Գարգման գո.ի մէջ. Փոսիստի վանքին արևելեան կողմը: Եկեղեցին սակաւին կանգուն է:

ԱՏԻԱ. փոքրիկ գիւղ մը, Վանի թիւմար գո.ի մէջ: անասր էին և յամառ աշխատողներ: Դպրոց չունէին (Սօս-Վանի):

ԱՏԻԱ-ԱՊԷՊԱ s. Երովպիա:

ԱՏԼԷՐ, գղ. Սօխուսի, Սև ծովու եղերքը. կան քանի մը հայ ընտանիքներ, որոնք վաճառականութեամբ կը զբաղին:

ԱՏԼՇԱՀ թղ. Պալսից 1747—8:

ԱՏԿՈՆ կամ Հասկոնք, գղ. Տուրուբերանի ներքին Պուլանըխ գաւառակի, 1900ին ունէր 100 տուն հայ, եկղ. Ս. Աստուածածին. կայ նաև նախակրթարան մը:

ԱՏՆԱԿԱՆՅ. հայարնակ գղ. Վասպուրականի, Վանայ շրջակայքը. 1900ին 30 տուն հայ բնակիչ ունէր և Ս. Ստեփանոս քարուկիր եկեղեցի մը:

ԱՏՆԱԿԱՆՅ (աւեր) Արալէզէն (ի Վասպուրական) կէս ժամ հեռու, ընդարձակ աւերակ մը հին հայկական գղ.ի մը, կիսակործան եկեղեցին կը բարձրանայ աւերակներու մէջտեղ, ունի զերեզմանատուն մը խաչքարերով ճիւղ (Սօս-Վանի):

ԱՏՏԱ կամ Ասքե, գղ. Տիզրանակերտի Ալիվան գո.ի, ունէր 40 տուն հայ, եկղ. և դպրոց:

ԱՏՈՄ կամ Ասովմ. կրօնաւոր, սա Պետրոս Գետարգիլ կթ.ի Պալը Շիրակ կը տանի, յետոյ նորէն կը դառնայ և Պաւարածորի վանքը կը շինէ ցրուած կրօնաւորները հոն հաւաքելով: Բարի ձերութեամբ կը վախճանի և վանքին հիւսիսակողմը կը թաղուի:

ԱՏՈՄ կթղ. Աղթամարայ կը յիշուի իբր Արքեպ. 1471, իբր կթղ. 1491, 1497 և 1499ի յիշատակորաններու մէջ:

ԱՏՈՄ Աղբակացի, Որսիրան գիւղէն, 853ին, Բուղայի հրամանով կը նահատակուի վեց ընկերներու հետ:

ԱՏՈՄ Անձեւացի իշխան, զօրավար Սմբատ և Աշոտ Բագրատունի թագաւորաց օրով (896-922), սա 921ին միացած Գաղիկ բռնաւորի հետ Յուսուփայ րանակը հայածեցին: Յաջորդ տարին խոհեմութիւն համարեց տուրք տալով Յուսուփին՝ խնայել իր ժողովուրդին՝ որ ոստիկանին բանակէն ոտնակոխ չըլլան:

ԱՏՈՄ Արժուցի, որդի Սենեքերիմի, թագաւոր կամ իշխան Սերաստիոյ (1030-1080), 1021ին իր հօրը և եղբորը հետ Սերաստիա կը փոխադրուի, ուր իր եղբօր Դաւիթ թգ.ի մահէն ետք կը նստի հօրենական աթոռին վրայ 1037ին: Մատթէոս Ուռհայեցի պատմիչ կը գրէ Ատոմի համար «լցեալ առաքինութեամբ և արդարութեամբ և սուրբ վարուք ի Գրիստոս Յիսուս, և զարդարեալ հեզութեամբ և քաղցրութեամբ, ողորմած ի վերայ տառապելոց, դարմանիչ աղքատաց, և յոյժ սիրելի կրօնաւորաց դասուն. շինող եկեղեցւոյ եւ բազմացուցիչ վանքէից»:

Ատոմի իշխանութեան երկրորդ տարին (1038), հայ իշխաններէն մէկն, որ Սենեքերիմի հետ Վասպուրականէն Սերաստիա եկած էր՝ նախանձելով Ատոմի և եղբորը Արուսաչի վրայ՝ ընտանեօք Կ. Պոլիս գնաց և Միքայէլ Դ. կայսեր ներկայանալով ըսաւ թէ՛ «Ատոմ և Արուսաչ կը պատրաստուին ապստամբիլ և չարիք հասցնել, այդ պատճառաւ հեռացայ անոնցմէ և ընտանեօք Պոլիս եկայ»: Միքայէլ հաւատարմով չարասուս իշխանին՝ շատ մը զօրք զրկեց Ատոմի վրայ, հրամայելով զօրապետին թէ՛ «եթէ երկու եղբարքը յանձն առնեն ինձի գալ՝ մի պատերազմիր, իսկ եթէ ընդդիմանան՝ աւարի ա՛ռ երկիրը և զիրենք բռնելով ինձի բեր»:

Ատոմ և Արուսաչ, հակառակ իրենց Շապուհ սպարապետին կամքին ու յորդորին՝ չուզեցին պատերազմիլ, Պոլիս երթալով կայսեր ներկայացան և աղաչեցին որ միասին Վասիլ կայսեր զերեզմանին այցելեն: Երբ կայսեր հետ երկու հայ իշխանները զերեզման հասան՝ Վասիլէն իրենց Սենեքերիմ հօրը տուած նամակը հանելով ինկան անոր զերեզմանին վրայ և ըսին. — Գո՛ւն տուիր մեզի այս գիրը, և դուն բերիր մեզ քու աշխարհդ, և հիմա դատէ՛ մեզ, ո՛վ հայր, յաջորդներդ կ'ուզեն մեզ բնաջլջել և մեր աշխարհը առնուլ մեր ձեռքէն»: Սիքա-

յէլ լսելով այս խօսքերը ի գուժ շարժեցաւ, չարախօս իշխանը բանտեց և զիրենք թագաւորական զարդերով և մեծաշուք փառքերով Սերաստիա վերադարձուց: Ատոմ 1051ին միջամտեց Պոլսոյ կայսեր մօտ և երաշխաւոր ըլլալով՝ Պետրոս գետադարձ կաթողիկոսը Սերաստիա տարաւ, և երկու տարի հոն պսնեց ու Ս. Նշան վանքին մէջ նստեցուց: 1060ին Յունաց Կոստանդին Տուկիժ կայսրը երբ ծրարեց Հայերը Յունադաւան ընել՝ նախ Ատոմն ու Արուստայը կանչեց, զիրենք համոզելու համար: Իշխանները իրենց հետ տարին Յակոբ վրդ. Սանահնեցին կամ Քարաքնեցին և երբ յոյն աստուածաբանները բռնադատեցին որ ընդունին Քրիստոսի երկու բնութիւնը՝ Յակոբ վրդ. պատասխանեց. «մենք ալ դաւանինք այդ տարբերութիւնը բառերու մէջ է»:

Այդ տարին Պարսիկները երբ Սերաստիոյ վրայ յարձակեցան, Ատոմ և Արուստայ հայ իշխաններու հետ Սաւաթանէք աւանը փոխադրուեցան, որովհետև անառիկ էր ան: Պարսիկները Սերաստիա աւերելէ, թագաւորական պալատը կողոպտելէ ետք երբ իրենց աշխարհը վերադարձան՝ Ատոմ Պոլիս գնաց և առեն մը հոն կեցաւ:

1070ին երբ Ռոմանոս Դ. Իիոսէն կայսրը պարսից զէմ պատերազմելու համար Սերաստիայէն անցաւ՝ Ատոմ և Արուստայ ընծաներով կայսեր ընդառաջ ելան. այդ կողմի յոյն իշխանները չարախօսեցին, ըսելով թէ — «ասոնք են որ Պարսիկները մեզի զէմ կը գրգռեն»:

Կայսրը հրամայեց վերանորոգուած Սերաստիան աւարի առնել, ջարդել տուաւ հայերը, մինչև որ Պոյսէն եկող յոյն իշխանները միջամտեցին: Ռոմանոս թէև ջարդը դադրեցուց՝ բայց Ատոմն ու Արուստայը իրենց իշխանութենէն ձգեց:

ԱՏՈՄ ԳՆՈՒՆԻ նախարար Հայոց, 443ին Յազկերտին կ'երթայ նախարարներու և քահանայից հետ, ուր իրրե պատանդ վար կը դրուին: 449ին Ատոմ Գնունի տեսնելով որ Յազկերտ վերջ ի վերջոյ պիտի ստիպէ զիրենք ուրանալ Քրիստոնէութիւնը՝ Մանածիհր Ռշտունեոյ հետ գաղտագողի կը փախչի Պարսկաստանէն, և երբ Ատոմ իր ընկերներով Անձևացեաց գաւառը կը հասնի՝ Յազկերտի հետապնդող զօրքերը կը բռնեն զիրենք և կը նահատակեն 449ին: (Տե՛ս Չամչեան՝ «Պատմութիւն Հայոց» Բ. 21 և էջ 461):

ԱՏՈՄ ԳՆՈՒՆԻ, փոքր ազդական վերինին, 450ին Կ. Պոլիս կը տանի Յովսէփ կթ. ի նամակը՝ օգնութիւն խնդրելու համար բռնարարութեանց զէմ: 482ին Ատոմ վահան սպարապետի հետ կը զինակցի պարսից զէմ գունդի մը զինուորներու գլուխն անցնելով:

ԱՏՈՄ Մոկյացի քաջ իշխան Շապուհ թգ. օրով (416—7)

ԱՏՈՄ երէց Գանձասաց, որուն «Գանձ Շողակաթին Այսօր տօնեմք զնաւակատիս» սկզբնաւորութեամբ՝ հրատարակուած է Արարատ ամսագրի մէջ (1902 էջ 477):

ԱՏՈՄ ք. գրիչ Շատուանի մէջ (Վասպուրական) կը յիշուի 1464ին, 1489ին:

ԱՏՈՄ գրիչ Հարանց Վարբի՝ յԵրուսաղէմ Ս. Յակոբայ վանքին մէջ 1549ին, այս ձեռագիրը Մշոյ Ս. Կարապետ վանքին կը նուիրուի (Աղաւնուցի «Միաբան» էջ 36):

ԱՏՈՄ ք. Ծաղկող Վասպուրականի մէջ Զըզիրէն գաղթած, եղբ. Կարապետ գրչի (1605ին):

ԱՏՈՄ ստացող ձեռագրի Աղթամարի մէջ, կը յիշուի 1454ին 1458ին:

ԱՏՈՄ և Քուրդ Ամիր, որդիք Ամիր շահի, ստ. Աւետ.ի 1524ին:

ԱՏՈՄ Գրասէր գրական կեղծ անուն Տէմիրճիպաշեան Եղիայի:

ԱՏՈՄ պր. Սօջա ստացող Յայամաւուրքի ի վան 1601ին.— ուրիշ ԱՏՈՄ Զէլեպի մը Տիգրանահերտցի, կը յիշուի իբր նուիրող՝ 1601ին:

ԱՏՈՎՄԵԱՆՅ Վանք կը գտնուի Աղջնեաց այմեան Հզու վիճակի մէջ, Կոնստոս վանքէն քառորդ ժամ հեռու: Բոլորովին ամայի և աւերակ վիճակի մէջ:

ԱՏՈՄԵԱՆՔ (Սուրբ) կամ Ասովմանք գորավար, նահատակուած Վարդանանց օրով, 449ին, այսպէս կը կոչուին իրենց առաջնորդին Ատոմ Դընունիի անուամբ (տե՛ս Ատոմ Գնուցի), Հայ եկեղեցին կը տօնէ բուն Բարեկենդանէն երկու շաբաթ առաջ: (Ատոմեանց մասին ուսումնասիրութիւն մը Միաբանէն՝ տես Արարատ 1902 էջ 106):

ԱՏՈՄԵԱՆՔ (Երկրորդ) վկայք Բուղայի օրով, եօթը քաջ երիտասարդներ 853ին խաչուեցան որոնց գլուխը կը գտնուէր Ատոմ Անձևացին (տե՛ս):

ԱՏՁԱՐ, հին գղ. Վայոց ձոր գու.ի մէջ, զոր Սիւնեաց տիկինը Սոփիա Գնդեվանքին նուիրեց:

ԱՏՈ. հին գղ. Սիւնեաց Բաղք գու.ի

ԱՏՏԻՎՈՍ, պատրիարք Յունաց ի Կ. Պոլիս 406-426:

ԱՏՐԵԱՆ Վարդան. Թիֆլիսի մէջ լոյս տեսած (1927էն ի վեր) պրոյետար հայ թերթին խմբագիր:

ԱՏՐԵՆԻՍ, գու. մը՝ փոքր Սիւնեաց մէջ, կը յիշուի 1313ի յիշատակագրէ մը:

ԱՏՐԻԷՆ Աճաբէ (չուսին) հայ երգչուհի մը Պոստոնի մէջ (1930):

ԱՏՐՄԷՆԱԲԱՎ. հին գղ. Սիւնեաց Սողք գու.ի

ԱՏՐՆԵՐՍԵՀ թգ. Աղուանց, որուն քով կ'ա-

պատանի 910ին Յուսուփին ձեռքէն փախչելով՝ Յովհաննէս կթղ. պատմարան:

ԱՏԲՆԵՐՍԵՆ, ի.խան Խաչենոյ, որ 854ին Բուզայէն կը սպաննուի:

ԱՏԲՆԵՐՍԵՆ, պարսիկ սպարապետ, որուն զէմ կը պատերազմի Վահան Մամիկոնեան 482ին:

ԱՏԲՆԵՐՍԵՆ, Սիւնեաց իշխան, 768ին Սիոն կթղ.ի Պարտաւի մէջ դումարած ժողովին ներկայ կը գտնուի:

ԱՏԲՆԵՐՍԵՆ Բագրատունի, Կիւրտպաղատ, թգ. վրաց, որդի Դաւթի, 860ին Արսաէն կը բանտարկուի Կարսի մէջ: Սմբատ արքայ 899ին վրաց երկրի մի մասին վրայ թաղաւոր կը կարգէ, 906—7ին Ատրնեքսէն միանալով Վասպուրականի Գաղիկ թղ.ին և Յուսուփ արար ոտիկանին հետ Սմբատայ զէմ պատերազմի կ'ելլէ և տեսնելով որ պիտի պարտուի՝ Սմբատէն թողութիւն կը խնդրէ, Սմբատ կը ներէ և անոր երէց որդին իր քով պատանգ զնկելով ազատ կ'արձակէ զինքը: 922ին Ատրնեքսէն՝ Աշոտ Բագրատունի թղ.ին հետ միացած՝ Ափխազաց Գուրգէն թաղաւորին զէմ կը պատերազմի յաղթական հանդիսանալով:

ԱՏԲՈՐՄԻՉՎ պարսիկ, մարզպան Հայոց 451—464:

ԱՏԲՈՒՆԻ (= Խուլմանեան) Յարութիւն, 1882-1936, բժիշկ, ծնած Զէյթուն 1882ին: 1909ին չրջանաւարտ Տարսնի Ս. Պողոս գոյէճէն: Ատանայի կոտորածէն ետք 1910ին Ամերիկա կ'անցնի, ուր Պէթը Բրիքի բուժարանին մէջ ժամանակ մը աշխատելով՝ կը յաջողի Եուն Իվըրսիթի աւ Իւլենոյի բժշկական ճիւղը աւարտել 1913ին, 1936 Փետրուար 29ին կը վախճանի շէյթիսիսի մէջ:

ԱՏԲՈՒՆԻ Պետրոս Յ. (1862—1922), ուսուցիչ, խմբագիր, ծնած է Պոլիս 1862ին, Օրթագիւղի թարգմանչաշ գրողին մէջ կ'ուսանի, գրողացակից ունենալով Կր. Զոհրապը, Տիգրան Արփարը, Խնդիր Սիմոնեանը, հայրն է թուադէտ Պետրոս Պ. Ատրունի: 1889—9ին խմբագրած է կրթաւան «Հանդէս ամսօրեայ», հրատարակութիւն «Հայկական կրթարանի նախկին սանուց», պան մը զերասան Օրթագիւղի թատրոնին մէջ, յետոյ առեւտրական, ուսուցիչ, տոմարակալ և Յովհ. Ծանաղարի Հայրենիքի վարչական պաշտօնեայ: Թարգմանած է Ժ. Լէրմիւայի, Է. Կուպրիօի, Էօժ. Սիւրի, Տիւմա Որդիի, Ա. Վէյի, Օսթրաի գործերէն, ունի թերթսններ «Հայրենիք»ի մէջ: Մեռաւ 1922 Յուլիս 14ին ի Կ. Պոլիս (Թեոդիկի «Ամենուն Տարեցոյց» 1923 էջ 416):

ԱՏԲՈՒՆԻ տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅԵՐ:

ԱՏԲՈՒՇԱՆ կեղծանուն Երեմեան Հ. Սիմոնի, և Սայապալեան Ժագի:

ԱՏԲՈՒՇԱՆ գրական, գիտական և զեղարուեստական կիսամսեայ հանդէս: Տպ. Իգմիր 1919: Տնօրէն խմբագիր՝ Միքայէլ Պարտիկեան:

ԱՏԲՊԱՍԱԿԱՆ կամ Ագրպէյնան, հին աշխարհ Հայաստանի արեւելեան հարաւակողմը, որ իր մէջ կը պարունակէ Մեծին Հայոց Պարսկահայքը. Փայտակարան նահանգները և Վասպուրականի մէկ մասը: Բուն Ատրպատական նահանգը կ'իյնար Ուրմիոյ ծովակի արեւակողմէն մինչև Կիլանայ սահմանները, հիւսիսային կողմէն կը տարածուի մինչև Գարատաղ և Սուզան գաւառները կամ մինչև Երասխ գետը, և հարաւային կողմէն մինչև պարսից Քիւրտիստանը և Իրազ-Աճէմ, որ է հին Մարաց աշխարհը կամ Մեծ Մարք ըսուածը, որուն մէկ մասը կը համարուէր Ատրպատական և կը կոչուէր Փոքր Մարք: Որովհետև այս նահանգը մերթ ի Հայոց և մերթ ի Մարաց կը նուաճուէր, կամ թէ կէսը մէկին և միւս կէսը միւսին կը կը վերաբերէր, այդ պատճառաւ կը կոչուէր Ասրպատական Հայոց և Ասրպատական Մարաց: Յոյները կ'ըսեն թէ նահանգս Ատրպատ նախարարին անուամբ կոչուէր է Ատրպատական, Պարսից Դարն Զ. թագաւորին ժամանակէն, սակայն աւելի հաւանական է թէ ասր բառէն ելած է, որ պարսկերէն կրակ կը նշանակէ, և ասկից կը հետեցնեն, թէ կրակապաշտութիւնը նախ հոս հնարուած է:

Ատրպատական աշխարհը Մեծն Արշակ Պարթևի իր Վաղարշակ եղբորը տուաւ, զինքը Հայաստանի վրայ թագաւոր դնելով: Վաղարշակէն մինչև Արտաւազգ Ա. ի ժամանակ, կ'երեւի թէ Հայք կ'իլիսէին նաև այս ընդարձակ աշխարհին վրայ, և անկէջ վերջ անցաւ Պարսից ձեռքը, և երբեմն երբեմն ինքնազուլս եղաւ. Փայտակարան նահանգի և Պարսկահայոց մէկ մասի հետ: Այժմ Ատրպատական Պարսկաստանի գաւառներէն մին է, և տարածութիւնն է 104840 քառակուսի հազարամէթր՝ գրեթէ 2 միլիոն ընակիչով: Երկիրը տեղ տեղ խիստ բարեբեր է, մանաւանդ Դաւրիժու կողմերը, ուր գրեթէ ամէն տեսակ բերք առաջ կու գայ, և ունի ճերմակ մարմարիւնի նման քարանօք, երկաթ, պղինձ, հանքային ջրեր, սուտ աղահանքեր և նաւթ: Դիրքը գրեթէ 1200—1500 մէթր ծովու երեսէն բարձր է. ունի շատ լեռներ, որոնց մէջ նշանաւոր են Սահանտ և Սաւարան: Վաճառականութեան գլխաւոր նիւթերն են՝ նուշ, խաղող, շալկաշի, չոր պտուղներ, ափսոն և այլն: Ատրպատ

տակահեր գլխաւոր քաղաքն է Դավրէժ կամ Թավրիզ: Ըստ 1888 տարուոյ Այրարատ ւսմաս-
դրի մէջ հրատարակուած մարդահամարի՝ Ատրբ-
պատականի 11 գաւառներու մէջ 30400 հայ
կայ, բաժնուած 134 գիւղերու մէջ, որոնք 103
եկեղեցի և 30 դպրոց ունին:

Այս նահանգը կը կազմէ Հայոց առաջնորդա-
կան մի թեմ, որուն առաջնորդն է ներկայիս
(1937) Ներսէս Արքեպ. Մելիքթիմոնզեան որ Թաւ-
րիզի մէջ կը նստի:

Հայերը ընդհանրապէս ցրուած կը բնակին և
չկայ գաւառ մը ուր իրենք կազմեն մէկսմս-
նութիւն: 1828 թուականի գաղթաւնէ թեմը
Հայոց թիւը շատ նուազեցաւ, և այնուհետեւ
շատ չկարողացաւ աճիլ, որովհետեւ առեւտուր
և այլ հանգամանքներու պատճառաւ, շարու-
նակարար մասնական փոքր գաղթականութիւն-
ներ ալ եղած են: Բայց երբեմն Տաճկաստանի
սահմանակից գաւառներէն գաղթած եւ հաս-
տատուած են այս տեղ Հայք, վերջին Ռուս-
թուրքական պատերազմի պատճառաւ Ադրակ
գաւ.էն լազմաթիւ բնտանիքներ Սարմատ հաս-
տատուեցան, և հիմա տեղացի կը համարուին:
Ատրպատականի հայ ժողովուրդը կրթութեան ըն-
դունակ է և հիւրասէր: Հայերը քաղաքակրթու-
թեան ընդունակ ըլլալով՝ շատ անգամ Իրանի
Շահերու զոհունակութեանց և համակրանաց ար-
ժանացած են:

Մօտ 200000 բնակիչ ունեցող Դավրէժի մէջ
միայն 600 տուն հայերն էին ասկէ 38 տարի
ուռաջ (1900ին) որ ունէին ուսումնարաններ, ըն-
թերցարաններ, յարաններ և թատրոն: — Վա-
ճառականութեան մէջ ևս Հայերն էին առաջին,
իւրաքանչիւր հայ վաճառական ամէն տարի անա-
զին քանակութեամբ մրգեղէն կ'արտածէ զէպի
արտասահման:

Ատրպատականի գաւառներն են Ա. Դավրէժ,
Բ. Մակու, Գ. Ոռոյ, Դ. Սարմատ, Ե. Ուրմի, Զ.
Բարանտուզ, Է. Սուլտուզ, Ը. Սովուճ Բուլազ,
Թ. Միանդուար, Ժ. Մարաղա, ԺԱ. Գարատաղ:

Ատրպատականի ունի չորս վանքեր, որոնցմէ
Կերիքի Ա. Ասուածամիւր աւերակ դարձեր է
1894ին, Գարատաղի Ա. Գեորգը միարան չունի,
Արտաղի Ա. Թաղեոս Առաքեալ և Դարաշամի Ա.
Անեփանոսը անխնամ վիճակի մէջ են: (Էփրիկեան՝
«Քննախարհիկ» էջ 275—91. քաղուած «Առաք»էն
1898 Ա. 143—152. տե՛ս Եւ Հայկ Անեփանի
գրութիւնը «Հիւանդանոցի Տարեցոյց» 1927 էջ
381—390):

ԱՏԻՊԱՏՈՒՆԻՔ կամ Տրպասուսիք, Վասպուրա-

կանի հին գաւառներէն մին, կար նաև նոյն
անուամբ մեծ նախարարութիւն մը Արշակ թգ.ի
և Մեծին Ներսէսի ժամանակ:

ԱՏԻՊԷՃԱՆ Կովկասի իտերզգային երկիրներէն
մին, սահմանակից Վրաստանի և Հայաստանի
(Տե՛ս ՅԼԻԵԼՈՒԻՆՅԱՐ):

ԱՏԻՊԵՏ (= Մարկիս Մուրայիանեան) (1850--
1937), դրական և հանրային գործիչ, ծնած է
Կարս 1850ին, 1869—1878 զինքը Բողէ, Աղեք-
սանցրապոյ (Վենիսա-
կան). Կ. Պոլիս Վիեն-
նական Մխիթարեան
Հարց վարժարանը,
հուսկ Օսմանեան Լի-
կեոնի մէջ կը գտնենք:
1881էն մինչև 1888
ուսուցչութիւն կ'ընէ
Կարսի մէջ, 1893ին
Դավրէժ կ'անցնի և
գատարանական գոր-
ծերով կը զբաղի: 1907-
1908ին Թիֆլիսի մէջ
Արգար Տէր Արթանա-
մանի հետ Ապագայ
Հնչակեան օրաթերթը
կը խմբագրէ:



ԱՏԻՊԵՏ

Ատրպետ աշխատակցած է աղգային գանազան
թերթերու, ինչպէս Բագրապէպի, Հանդէս Ամ-
սուրեայի Մուրնի, Մալիք, Տարապի. 2. Կոչնակի,
Գեղունիի և այլն:

Ատրպետ իր հասարակական ասպարէզին սկիզ-
բէն արդէն կը սկսի իր գրական գործունէութիւ-
նը, իր նրախարիկը կ'ըլլայ Խէ Կարապետը վէպ
Հայ Կաթողիկոսի կեանքէն, արտասպուած
Մուրնէն տպ. ի Թիֆլիս 1889ին, էջ 248: 1890ին
յոյս կ'ընծայէ Շուշան, օպերա երեք արարուածով,
(Թուրքիայի Հայոց կեանքից), ողբերգութիւն,
երաժշտութիւն Խ. Մ. Կարա-Մուրզա, տպ. Ս.
Պետերպուրգ, էջ 113: — Ալմաստ վէպ, (Բարձր
Հայոց իրական կեանքից), տպ. 1891 Մոսկուա,
536 էջ: — Ասրաճ, ողբերգութիւն, հինգ ա-
րարուածով. Թուրքահայերի պատմական կեան-
քից, տպ. Թիֆլիս 1893 էջ 70: — Գոռ-Եղիկ,
վէպ Շիրակեցիների կեանքից (1840-ական թ.):
Տպ. Թիֆլիզ 1898ին, էջ 97: — Շխնոց, պատկեր
Տաճկահայերի կեանքից, տպ. Նոր Նախիջևեան
1898, էջ 85: — Փառանգներ, (Պատկեր Թուր-
քահայերի կեանքից), տպ. Նոր Նախիջևեան,
1899, էջ 88: — Բերուայի Առաքելը, վէպ Թուր-
քահայերի կեանքից, տպ. Նոր Նախիջևեան, 1899,

էջ 71: — Թուրուսպաշինեւ, պատկեր, տպ. Նոր
Նախիջեւան 1899, էջ 25: — Խալիֆաք, պատմա-
կան հետազոտութիւն, տպ. Նոր Նախիջեւան 1899,
էջ 99:

1904ին Թաւրիզի մէջ լոյս կ'ընծայէ Երկերի
ժողովածուի Ա. հատորը, որոնք ընդհանրապէս
արտասպունմներ են. էջ 272, Բ. հատորը նոյնպէս
նոյն տարին լոյս կը տեսնէ Թաւրիզի մէջ, 304
էջերով և հետզհետէ մինչև վեցերորդ հատորը:

Ատրպետ բեղմնաւոր գրող մ'եղամ է «իր հա-
սուն գործերուն մէջ աւելի ազգագրութիւն է
ըրածը քան թէ զուտ վիպագրութիւն: Ատրպետ
ուրոյն տիպար մըն է, իր գործն ալ ուրոյն եւ
յատուկ նկարագրով» կը գրէ Հ. Ե. Փ. («Բազմ-
մովէպ» 1931 էջ 307): Ատրպետի քանի մը գոր-
ծերը ուսներէնի ալ թարգմանուած են:

Ատրպետ իր կենաց վերջին տարիները Լենին-
նականի մէջ անցուց. 1931ին իր գրական և հա-
սարակական գործունէութեան յորելանը ասո-
ուեցաւ. անկէ վերջն ալ մտնը գրութիւններով
երեցաւ մամուլի մէջ ու 1937ին 87 տարու
վախճանեցաւ: (Կենսագրութիւնը տե՛ս Թեոդիկի
«Ամենուն զարեցոյց»ը 1911 էջ 245 «Բազմավէպ»
1931 էջ 307 եւայլն):

ԱՏՔԻՆ ԷՏՈՒՐՏ, յորտ. հայասէր անդրապիտ
ծնած 1863ին ու վախճանած 1926ին: Սա եղած
է 1895 ճի հայկական ջարդերու առթիւ՝ կողմ-
ապակերպողը-Անկիո-Հայ Ընկերութեան, միակ նր-
պատակ ունենալով օգնութեան հասնել աղէտ-
եայներուն և որբերուն:

ԱՐԱՅ ազգը կը տիրէ Հայաստանի երկու դար,
652էն սկսեալ, իրենք են որ ոստիկաններ կը
զրկեն Հայաստան:

«ԱՐԱՅԱՅԻ մատենագիրները Հայաստանի մա-
սին», ուսումնասիրութիւն Գրիգոր Խոյաթեանցի
(տե՛ս «Հանդէս Ամսօրեայ» 1905 էջ 53էն յաջոր-
դաբար. նաև 1906):

ԱՐԱՅԱՅԱՅԱՅԱՅ Յովն. Տ. Արապետեանց:

ԱՐԱՅԱՅ Զիֆլիկ Եղազաթի, ունէր 10 տուն
հայ բնակիչ:

ԱՐԱՅԱՅԻ կամ Արաբկիր, գլխաւոր քղ. համա-
նուն գու.ի, Երկրորդ Հայոց մէջ, մահկաձե
տարածուած է զեղեցիկ և բարձր դիրքով Անդրի-
տաւրոսի ստորոտը, Եփրատ գետին արևմտա-
կողմը՝ անոր վտակին մօտ: 1900ին 20000 բնա-
կիչ ունէր, որոնց 9365ը՝ հայ լուսաւորչական,
300ը կաթողիկէ և 335 բողոքական էին, մնաց-
եալ տասը հազարը մահմետականք:

Արարկեր յատուկ աւազանման սև հող մը
ունի, որ իբր խիւս մածանուելով՝ միապազազ

և միակտուր քարի պէս կը պատսպարէ տունե-
րուն տանիքները:

Լուսաւորչական Հայերը ունէին չորս եկեղեցի,



Ա Ր Ա Յ Ի Ր

Մայր եկեղեցին, որ Ա. Ասուածածին կը կոչուի,
հոյակապ է, ընդարձակ և քարուկիր. ժամանա-
կին վանք եղած կը կարծուի: Միւս եկեղեցի-
ները կը կոչուին, Ա. Յակոբ և Ա. Գեորգ՝ Քէշիշ-
լերի թաղին և Ա. Լուսաւորիչ՝ Շահրոզի կամ
Սրա Կեալուրի թաղերուն մէջ: Աւնէին Առաջ-
նորդարան և 10ի չափ դպրոց, որոնց մին Աւ-
սումնարան Ա. Թարգմանչաց անուամբ՝ 120
մանչ աշակերտով, Մայր վարժարանը 140 մ.,
Աղջկանց վարժարանը 114 աղ., Ա. Կարապետի
վարժարանը 50 մ. 10 ա., Ա. Լուսաւորիչ վար-
ժարանը 39 մ. 6 ա.: Հայ կաթողիկէք և հայ
բողոքականներն ալ ունէին իրենց դպրոցները:
«Մայր վարժարան բուածը՝ ծաղկոց մ'է, ուր 200
աշակերտք ձրի կ'ուսանէին Սաղաթիլեան Կա-
րապետ աղայի ի կենդանութեան կտակած 50 000
զուլէի անկոտով» (Մուանձեանց Թորոս Աղբար
Ա. 277):

Կաթողիկէ Հայք Ա. Փրկիչ եկզ, մը ունէին,
իսկ բողոքականք՝ ժողովարան մը:

Քաղաքիս մէջ առաջին արհեստան համարուած
էր մանիսագործել, որ երբեմն մեծ շահու զուռ
էր Արարկեբցւոց: Արհեստները ընդհանրապէս
Հայոց ձեռքն էին, կային հայ ճարտարագէտներ,
որոնք զիւրութեամբ կը շինէին եյրոպական զէն-
քեր, մեքենաներ և նուրբ գործիքներ: Վերջին
տխուր դէպքերուն (1895—6ի ջարդերուն) քա-
ղաքս 600 զոհ տուաւ, բազմաթիւ տուներ կո-
ղոպտուեցան, եկեղեցիներէն երեքը այրեցան:
Արարկերի բազմաթիւ գիւղերէն 15ը միայն հա-
յարնակ էին, Ամպրկայ, Շեկիկ, Անջրղի, Ծագ,

Մաշկերտ, Աղըն, Սաղմըրկայ, Վաղշէն, Քուչնա, Ծապլար, Խոռոչ, Վանք, Էննեցիք, Կոսնի, Հացկնի, որոնց մէջ 4250 հայ կ'ապրէին. ամէնքն ալ ունէին եկղ. և դպրոց, եկեղեցիներէն շատերը Ս. Աստուածածին և մէկ քանին Ս. Նշան կը կոչուէին:

Քաղաքիս մօտ կայ ուրիշ հին քաղաք մը, զոր Հայք Անդի-հաղաբ կ'անուանէին և Թուրքերը Էսկի-սէնիլը, 1800ի սկիզբը Հայք բոլորովին լքեցին զայն և նոր քաղաք փոխադրուեցան: Արարկեր գոյութիւն ունէր Արծրունի Աննեքերիմայ գաղթականութենէն առաջ, ինչպէս կը վկայեն պատմական տեղեկութիւնք: (Բախսիկեան՝ «Արաբկիր» էջ 12):

(Արաբկիրի մասին գրած են Էփրեկեան՝ «Բնագիտական», Մուսնիսեանց՝ «Թորոս աղբար» Ա. 270. սե'ս մանաւանդ Բախսիկեանի «Արաբկիր եւ Երջակայի գիւղերը» գիրքը այ. 1934ին):

1448ին գրուած ձեռագրի մը յիշատակարանին մէջ (առ Անտոնեան Հարս) կը յիշուի «Արապկեր»: Ձեռագիրս Արրիկի մէջ գրուած է «ի մեծ հրաշակաւոր ուխտն վրկչին» (տե'ս): «Գրիչն է Մինաս սարկաւազ, ծագկողն և հրամայող ի գրել»՝ մօրեղբայր զբջին Գրիգոր եպ. Հարսնփէֆոյ. ստացող՝ Կարսպետ կաթողիկոս եզր. պ. Առաքելի: Ժէ դարու յիշատակագիրք Երազօլիս կը կոչեն. իսկ 1434ի յիշատակարանի մը մէջ կ'ըսուի. «Երազօլիս գա.ը այժմ Զմչկածագ կը կոչուի. ուր է Ընկուզեաց վանքը»: 1667—1680 Արարկերի մէջ բաւական ձեռագիր ընդօրինակած է Աւետիս գրիչ:

Արաբկիրի գաւառաբարբառի մասին Մ. Ա. Գաւիթ Բեկ յօդուածաւարտ մը գրած է «Հանդես Ամսօրեայի» մէջ (1900 էջ 248, 398):

ԱՐԱՔԻԵՐ գաւառ, 1890ական թուականներուն ունէր 69 507 բնակչութիւն հետեւեալ կերպով բաժնուած. Միւսիւլման՝ 27622 Քիւրտ՝ 4318. Հայ Լուսաւորչական՝ 10 532, Հայ կաթողիկ' 200, Հայ Բողոքական՝ 235 Ղզըլ պաշ՝ 26600:

ԱՐԱՐՔ ՓՈՒՆԱՐ տե'ս ԱՐԱՊ ՔՈՒՆԱՐ:

ԱՐԱԳ, գգ. Տուրքերանի Տարօն գա.ի, Մշոյ գաչտին մէջ, բնակիչք Հայք էին և Քուրտք:

ԱՐԱԳԱՄ նշանաւոր և բարձր լեռ Այրարատայ Արագածոտն գա.ի Այլազգիք՝ Այլկէզ կը կոչեն: Մասիսի նման Արագածն ալ մեր աշխարհի միւս լեռներէն գրեթէ զատուած է. եւ ինքնուրոյն լեռանց խումր մը կը ձևանէ: Ըստ Մ. Խորենացոյն՝ Արագած կոչուած է լեռս Հայկայ Արմենակ որդւոյն անուամբ: Ծովու երեսէն բարձր է 4095 մէթր կամ 12871 ոտնաչափ. իր

այսքան բարձրութեամբը՝ ուրիշ լեռներու պէս չ'աղղեր մարդու վրայ, իր մեծատարած լայնութեանը պատճառաւ:

Արագած գլխաւոր չորս կոնաձև կատարներ



ԱՐԱ. ԳԱՄ ԼԵՌՆ

ունի, և իր բազմաթիւ հովիտներով և դարատափներով Մասիսէն շատ կը տարբերի Չորսկատարներու վրայ ևս կան գեղեցիկ լեռնադաշտեր: Հնադարեան հրաբխային ապարածներն ևս Մասիսէն աւելի փխրած և հող դարձած են, և գետինն ալ աւելի բուսաւէտ և արգաւանդ է:

Հին ժամանակները մեր նախնեաց ծանօթ էր լեռանս հրաբխային զօրութիւնը, որուն համար Վարդան Աշխարհազիր կ'ըսէ. «Մեծաքանջ լեռն Արագածոյ, որոյ ստորուէն մինչև ցկատար լեռինն աւուրուկէս ճանապարհ է, չ'ըս մեծամեծ լեռներու կը բաժնուի, որոնց մէջ կայ հարթայատակ գոգ հովտաձև, և լեռանց չորս ծայրերը խաչանման միմիանց հանդէպ են»:

Լեռանս հրաբուլիս կանթեղները ի վազուց շիջած են, ընդհակառակն անոնց տեղ կ'երևին լեռանս գագաթը և սարատափներու վրայ տասնէ աւելի լճեր: Այս լճերէն ոմանց արամաղիծը կէս մ'զոնաչափէն աւելի է, և յայտնի կ'երևի որ ժամանակաւ հրաբխային խառնարաններ եղած են:

Լճակնելն մեծագոյնը և բարձրագոյնը՝ արեւելեան կողմը կը գտնուի և կը կոչուի Գարակեօլ (Ան լիճ), ուրիշ մ'ըն ալ արեւմտակողմը՝ Գըլլ կեօլ (Կարմիր լիճ): Արագած իր առատ ջրերու համար ո՛չ միայն ձորեր և ձործորներ ունի, այլ և տեղ տեղ քարալէժ սահանքներ: Գագաթներուն հիւսիսային արեւմտակողմը՝ կայ հրաբխի մը շրջարօրը խառնութեամբ՝ գրեթէ 40' արամագծով, յորմէ հոսած թխագոյն լաւան կը տեսնուի լեռանս ստորոտքը:

Վակնէր գերմանացին, որ 1843ին Արագածի

վրայ ելաւ՝ հիացումով կը նկատարէ զայն. հաւաքած է շատ տեսակ ծաղկանց հետ նաև միջատներու և ճճիներու տեսակներ, և ամէնէն աւելի նշանաւոր և միայն Հայաստանի կողմանց սեփական՝ Ուսթիկ (Callisthes) կոչուածը, խիստ փայլուն կապտագոյն և նորորինակ ձևով, որ լերանց բարձունքը և ձիւներու սանձանները կը գտնուի: Լերան վրայ կը գտնուին նաև վայրի այծեմունք և վիթք, գեղեցիկ ոզորկ, սուր և երկայն եղջիւրներով, մինչև 0,70 մէթր երկայնութեամբ: (Էփրիկեան «Յնագիտական» Այլբանի Այրարատէն Բաղուած, էջ 129—131), Մ. Վահէր, Ընդհ. Բ. 115—8:

ԱՐԱԳԱՅ. պատկերազարդ շարաթաթերթ, ազգային, գրական, քաղաքական (Վերակազմակ Հնչակեաններ), տպ. Նիւ Եորք 1911:

ԱՐԱԳԱՅ, գրական, հասարակական, քաղաքական թերթ (Եւրոպայ), տպ. Ալեքսանտրապոլ, 1912: Ուր. հրատարակիչ՝ Պետրոս Այվազեան:

ԱՐԱԳԱՅ. Ամերիկայի Արրանոյցի Աշակերտական Բիւրօ, տպ. Թիֆլիս 1919:

ԱՐԱԳԱՅ, «օրգան ազգային-ազատական կուսակցութեան, պատկերազարդ շարաթաթերթ»: Տպ. Կ. Պոլիս 1919—20. խմբագրապետ՝ Վահան Ծախիման, տպա Գեղամ: Պատասխանատու անօրէն՝ Յ. Գարրինեան:

ԱՐԱԳԱՅ, «Գրական, գեղարուեստական, գիտական կիսամսեայ հանդէս»: Տպուած Բարիկ 1926-7 (խմբագիր) Յովհաննէս Պօղոսեան:

ԱՐԱԳԱՅ, ամսաթերթ, տպ. Զարգեալին (Գանատա). հրատարակութիւն Գանատայի Հայորդիներու Միութեան:

ԱՐԱԳԱՅ, շարաթաթերթ, անպաշտօն Ռամկավար-Ազատական օրկան, Բարիկի մէջ սկսաւ խմբագրութեամբ Ա. Պօղոսեանի լոյս տեսնել 1936ին՝ երբ «Ապագայ»ն դադրեցու, դադրեցաւ 1937ին երբ «Ապագայ»ն կրկին լոյս տեսաւ:

ԱՐԱԳԱՅՈՏՆ, դաւառ Այրարատայ, հոշակաւոր թէ՛ բնական գիրքով և թէ՛ քաղաքական տեսութեամբ: Սանձաններն են. Արևելքէն Կոտայք և Ոստան, Հօրաւէն՝ Մասեացոան և Ծակառք, Արևմուտքէն՝ Արշարունիք և Երրակ, իսկ Հիւսիսէն Նիգ: Այս կոչուած է վերը նկարագրուած Արագած լերան անաւամբ, որ կ'իջնայ դաւառիս հիւսիսային կողմերը իր ոտները կամ ոտքը կը տարածէ աւելի դէպի հարաւ:

Արագածոան հոշակաւոր է քաղաքական տեսակէտով. որովհետև իր մէջ կը բովանդակէ մեր աշխարհի հնագոյն մայրաքաղաքները, դարձեալ հոշակաւոր է, որովհետև իր մէջ կը գտնուի Հայոց ազգին պատմական և նուիրական էջ-

միածինը: Գաւառիս մէջ, ըստ աւանդական պատմութեան, Հայկայ որդին Արմենակ՝ նախ այս կողմերը սկսեց շէնցնել, որուն կալուածները տարածուած էին այս հողամասին վրայ և կը կոչուէին Ոսն Արագածու: Յայտնի է Արմենակայ բնակութեան կեդրոնը կամ բնիկ դասակերտը, բայց կը թուի թէ Գասաղ գետին արեւակողմը կը գտնուէր, վասնզի շինութեան աւելի յարմար էին, քան անհարթ լեռնավայրերը, և որովհետև Աղթամարայ վիճակին Գաւթ կաթողկոսը կամ Եպիսկոպոսը, Ժ. Գարու (923) սկիզբները, կ'ըսուի թէ Արագած գիւղէն էր և ազգակից Մաշտոց կաթողկոսի՝ և այս վերջնոյս հայրենիքը լինելով Եղիվարդ գիւղը՝ հաւանական է կարծել թէ նոյն Եղիվարդ գիւղն էր, և կամ անոր մօտերը կը գտնուէր Արագած շէնը: Արագածոանը ի հընումն արքունի սեփականութիւն եղած կը թուի Ո՛չ միայն նշանաւոր էր իր բնական ամբողջութեան հրովը՝ այլ և ձեռակերտ բերդերով, դասակերտներով և ձմեռանոցներով: Գաւառիս անուամբ իշխաններ կամ նախարարներ չեն յիշուիր, միայն Տրդատայ Գահնամակին մէջ՝ ըստ Մեսրոպ Երիցու, կը յիշուին նաև Արագածեան, Հայկազանց հարստութենէն շատ ժամանակ վերջը Արտաշէս Բ. ի օրով, գաւառիս գէթ մէկ մասը (արեւելակողմը) տրուեցաւ օտար տո՛մի, Ամատունեաց:

Գաւառիս նշանաւոր վանքերն են. Յովհաննավանք, Սաղմոսավանք, Ծաղկավանք, Ուշոյ վանք (Ս Սարգիս), Կաղրեվանք, Մուղնոյ Ս. Գէորդ, Եղիվարդայ վանք և այլն որոնց վրայ իրենց կարգին կը խօսինք: Յայտնի է թէ այս վանքերու կառուցման համար ձեռնտու եղած են երկրի մէջ բնակող բազմաթիւ ազնուականներ և նոյն իսկ Հայոց արքունիքը:

Գաւառիս անուամբ մինչև ցարդ կայ տո՛նձ մը Արագածուին, որոնց ցեղէն կը յիշուի ոմն Մելիք Սեյուձ 1685ին, և այդ թիւէն հոն չի յիշուիր այլ ոք. այս տո՛նձի սերունդը պահած ունին թագաւորական կոնդակներ և հրովարտականք:

Մեկ ժանօթ դաւառիս զլխաւոր վիճակներն են, Ս. Թալլին, Բ. Թալիլ, Գ. Սարսարայուս, Գ. Կարբի կամ Կարբի պալատ, Ե. Անբերդ կամ Բիւրական Զ. Վաղարշայուս: Ռուսաց տիրապետութեան օրով Երևան նահանգի հին դաւառներէն մին էր Արագածոանը, որուն կը համապատասխանէր էջմիածին կամ Վաղարշայուս դաւառը: (Էփրիկեան «Յնագիտական» Բաղուած Հ. Այլբանի «Այրարատ»էն էջ 129—133):

Ներկայիս ևս Արագածոտն գաւառը կը համապատասխանէ Վաղարշապատ, Թալին, Հոկտեմբերեան, Արթիկ Աշտարակ շրջաններու:

ԱՐԱԳԱՄՈՒՆԻ, տոհմ վերոյիշեալ գաւառին ան լաւք. 1685ին կը յիշուի Մելիք Աքլում Արագածունի:

ԱՐԱԳԱՄԵԱՆՔ տոհմ, կը յիշուի Տրդատայ Գանահայկի մէջ, ըստ Մեսրոպ Երիցու:

ԱՐԱԳԵԱՆ Մարի, երգչուհի, 1931էն արդէն սկսած է Միացեալ Նահանգներու մէջ նուագահանդէսներ տալ Նիւ Եօքքի «Ասլանօֆ Սթուաիօնի» մէջ (որուն վարիչ-տնօրէնն է նշանաւոր երաժշտաղէտ Ասլանեան Աղեքսանդր) մարդուած է: 1937ին երբ Տիկին Մարի Գարրիէլ Արագեան երգահանդէսներ տըւաւ Ֆիլատելֆիոյ մէջ՝ իր ուսուցչակետը Աղ. Ասլանօֆ՝ զայնակով ընկերացաւ: (ՏԵՍ ՅԱԻԵԼՈՒԱՅՐ):



Օր. ԱՐԱԳԵԱՆ ՄԱՐԻ

ԱՐԱԳԵՂՏ Տոր մը կողմից գ.ա.ի մէջ, կը յիշուի Ղևոնդ պատմիչէն:

ԱՐԱԳԻԼ Տ. Արեղին:

ԱՐԱԳԻԼԻ յեռ և գետակ Սիւնեաց Ծղուկ գ.ա.ի մէջ:

ԱՐԱԳԻԼԻՌՅՆ, գղ. Մշոյ արեւելեան հարաւային կողմը:

ԱՐԱԳՈՎԱ Տ. Արակովա:

ԱՐԱՁ Տ. Երասի և Սոյրանաբաւ:

ԱՐԱՁ, նախ չարաթափերթ, յետոյ եօթեայ, (խմբագիր Յ. Ճ. Սիրունի) լոյս տեսաւ 1932ին Պուքրէյի մէջ, և կը շարունակուի, 1938էն աւելի մեծադիր:

ԱՐԱՁ Տարեգիրք (խմբ. Յ. Ճ. Սիրունի), տպ. Պուքրէյ, երկու գիրք, 1933, 1934:

ԱՐԱՁԵԱՆ Բ. ճարտարապետ, շինարարութեան և «մշակոյթի զարգացմանոյ» երեանի (1936 7):

ԱՐԱՁԻ գրող Թիֆլիսի մէջ: 1937ին գրած է Ոսկի Երազները թատերախաղը, զոր Երեանի Ժուրին բեմադրութեան յանձնարարելի կը գտնէ: ՏԵՍ ՅԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԱՐԱՁԻՆ, գղ. Երնջակ գ.ա.ի մէջ, 1900ին 48 տ. հայ ունէր և 48 տ. թաթար չափ Իրանի բաժնէն գաղթած են, ունին անշուք եկեղեցի մը:

ԱՐԱՁԼՈՒ, արեւելահայ աշուղ, 120 տարու վախճանած:

ԱՐԱՁ ՕՂԼՈՒ, հայարնակ գիւղ Շիրակ գ.ա.ի մէջ. 1900ին 300 բնակիչ ունէր:

ԱՐԱԹ կամ Հարաք, գղ. Մոկաց Մամրտանք գ.ա.ի, 1900ին ունէր 20 տ. հայ, եկղ. Ս. Պետրոս-Պօղոս:

ԱՐԱԼԳԳ կամ Արալիս այլազգարնակ գիւղեր Այրարատայ:

ԱՐԱԼԸՆ կամ Արալուխ, գիւղ Շիրակի, 1900ին 40 տ. բնակիչ ունէր, զանազան ազգերէ: Նշանաւոր է մէջը գտնուած հին ամրոցը որուն արձանագրութեան մէջ կը կարդացուի Նազարեկ անուէր ԺԱ. կամ ԺԲ. դարու: Դրան քով մեծ քար մը կայ, որուն վրայ կը կարդացուի ՈՆԷ (1228) թուականը: Արալուխ գղ.ը 1926ին շա՛տ աւելի տուներ ունէր, այնպէս որ այդ տարւոյ երկրաշարժին 173 տուն կը կործանի:

ԱՐԱՆ կամ Արաղ, գղ. Մշոյ, 150 տ. հայ ունէր, մէջը հնութեան մնացորդներ կան: ՏԵՍ ԱՌԱԽ:

ԱՐԱՆՈՅՁ կամ Արախուս Տ. Արամուս:

ԱՐԱՄ. գաւառակ Այրարատայ Աւրծ գ.ա.ի: Նախնիք կոչած են նաև Արամոյ կողմն կամ Ա. ամակողմն: Այս անուամբ ո՛չ տոհմ կայ, ո՛չ իշխան: Կը յիշուի ազգային զորաբաժնի մէջ Աւամացի տոհմի մը անուէր, թերևս սխալ գրուած փոխանակ Արամացիի Գաւառիս գիտաւորներէն կը յիշուի Զ. զարուն՝ ոմն Սահակ որդի Համազասպայ: Վերջին անգամ գաւառիս անուին կը հանգրայնք 832ին, երբ Դաւիթ Բ. կթգ. մեռնելու առն կաթողիկոսարանին կայուածները յախտակողաց հետ անիծեց նաև Ապուչափր Արամացին: ՏԵՍ ԱՒՐԾ:

ԱՐԱՄ. անյայտ գիւղ մը. հոս ծնած են Սամուէլ Երէց և Արրանամ սարկաւազ, որոնք Ղևոնդեանց հետ նահատակուեցան:

ԱՐԱՄԱԿՈՂՄՆ Տ. Արամ (գաւառակ):

ԱՐԱՄԱՆԻ, Եփրատ գետին ճիւղ մը, այժմ Մուրաս չայ կոչուած, որ Այրարատայ Ծագկոտն գաւառի Ծագկանց լեռներէն կը ըղիւի: Արամանի Տրատինի դաշտէն ու Տրատին գիւղաքաղաքի մօտէն քերելով կը հասնի Զերաւայ դաշտը, հին Բագաւանը աջակողմը թողլով՝ կ'երթայ մինչև Գարաքիլիսէ: Հոն ընդունելով ոչ սակաւ գետակներ՝ Անթապ գաւառակէն անցնելով կը շարունակէ իր ընթացքը Մանազկերտի և Ապահունեաց գաւառներու մէջ, իւրաքանչիւրը երկու մասանց բաժնելով՝ կ'անցնի Հարք և Տարօն գաւառներէն: Տուրուրեանէն դուրս գալով՝ Բարուչ գղ.ի մօտ կը միանայ Ա-

րեւմտեան Եփրատի հետ: (Միւրախորեան՝ «Նկար Աւր» Գ. 56—59):

ԱՐԱՆՄԱՆԻ, գղ. Աղաւնից, կը յիշուի Ս. Գրիգորի Եփրատի առաջին պատմութեան մէջ:

ԱՐԱՎԱՅ, գղ. երբեմն Ակնայ, այժմ Տիվրիկի, բն. 508 թուրք: Գիւղէս գուրս լեռան կողմն վրայ է Ս. Գրիգոր Նարեկացւոյ վանքը: Ըստ աւանդութեան ժԱ. դարու մէջ վանայ Նարեկայ վանքէն Սենքերիմ թգ.ին հետ հոս փոխադրուեցան կրօնաւորներ, հետեւին բերելով Ս. Գրիգոր Նարեկացւոյ մարմինը, զիւր կոչեցին Նարեկայ, յետոյ աղուազուելով Արակայ եղաւ: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» «Հնուրիւնք Ակնայ» գրքին 36-7 էջէն հաղուած):

ԱՐԱԿԵԼ (մեծ) գղ. Գուգարաց Ջաւախք գու.ի, բն. 600 հայ, 60 քուրդ:

ԱՐԱԿԵԼ (փոքր) գղ. Ջաւախքի, բն. 320 հայ, սակաւաթիւ այլազգիք:

ԱՐԱԿՈՎԱ կամ Արագովա, հայաբնակ գղ. Ջաւախք գու.ի մէջ: Հին ժամանակ զիւրս բազկացած է եղեր Արա բերդէն և Կովա գիւղէն, յետոյ այս երկու անուաները միանալով կազմեր են այժմու անունը: Արա բերդը աւերակ է. հոն կայ կիսաւեր եկեղեցոյ պատը, որուն մէջ Ս. Սարգիս խորանը ուխտատեղի դարձած է: Կովա գիւղը ևս աւերակ է: Հոս է պետական դպրոցը 500 աշակերտներով, շինուած գետին աջակողմը: Արակովայի հասարակութիւնը ունի 13 հայաբնակ գիւղ՝ 7000 բնակչով: (Էփր. «Բնագիտութիւն էջ 287»):

ԱՐՀԱՍ. Հայնի:

ԱՐԱՀԵՂ, գղ. Տայքի, զիրքը անյայտ: Ղազար Փարպեցի կը յիշէ զիւրս իրրեւ հայրենիք Գիւտ կաթողիկոսի:

ԱՐԱՀՈՒՄ. Մարտիրոս վրդ. տե՛ս Մարտիրոս վրդ. Վանեցի Արահու:

ԱՐԱՀՈՒԾ, հին գղ. Աղահէճքի:

ԱՐԱՂ. ս. Արախ և Առաղ:

ԱՐԱՄ. Հայաստանի ամէնէն քաջասիրտ իշխաններէն մին՝ Հայկազեանց տոհմէն. որդի Հարմայի, հայր Արայ Գեղեցիկի: Իշխած է 1827-1769 (ն. ք. Բ.): Յաղթած է Մեղացւոց Նիւքեար իշխանին, որ Հայաստանի մէկ մասը աւերած էր, և տիրած անոր հողերուն, տարած զայն Արմաիր և հոն աշտարակին զազաթր գամած է: Յաղթական արեւմուտքի մէջ, Արամ ճակատած է Բարելունի Բարչամ իշխանին դէմ, Հայաստանի սահմանները ազատած և զայն սպաննած: Իրեն ենթարկելէ յետոյ Ասորեստանի կարգ մը մասերը, անցած է Արևելք, տիրած է Կապադովկիոյ, անոր իշխան կարգած է Մշակ անունով

հայ մը, զոր տեղացիք Մաթակ անուանուած են: Արամ իշխեց երկար տարիներ և ընդարձակեց իր երկրին սահմանները: Իր անուամբ էր որ փոխանակ Հայաստանի՝ մեր երկիրը Արմենիա կոչեցին և մեր ազգը Արմեն (Աւանդական պատմութիւն):

ԱՐԱՄ, գղ. Նիկոմիդիոյ վիճակին մէջ Ատարաղարի հիւսիսակողմը զուտ հայաբնակ նորաչէն գիւղ մը: ԺԹ դարուն վերջին քառորդին Օրտուի շրջանէն եկող հայ գաղթականներ Ատարաղարի մօտ կը հաստատուին 4 վայրեր: Առաջնորդ Յովակիմեան արքեպ. այդ գիւղերը կ'անուանէ իրենց նահապետներուն անունով: Արամ գիւղ անոնցմէ մէկն է, որ ունէր փայտաչէն եկեղեցի մը և վարժարան: Նախագէս վայրը կը կոչուէր Գուգուլճուխլը կամ Չօպան Եաթար: Բնակիչները կը զբաղին երկրագործութիւնով և ատաղձաշինութիւնով:

ԱՐԱՄ ԱԵՏՏ. ԱԵՏՏ ԱՐԱՄ:

ԱՐԱՄ ԱՍԿԵՏՏ. ԱՍԿԵՏ ԱՐԱՄ:

ԱՐԱՄ յեղափոխական գործի, տե՛ս Մանուկեան Արամ:

ԱՐԱՄ ԶԱՊԵԼ, յայտնի երգչուհի, ծնած է

Պարտիզակ (Փանոսեան?) համաշխարհային պատերազմէն առաջ Ամերիկա անցած ու իր սորբանօ ձայնով իրրեւ երգչուհի անուանի եղած է Ամերիկայի բեմերուն վրայ: Ամուսնանալով Արամ կոչուած: Ապրած է նաև Իտալիա իր ձայնը աւելի ևս մարդելու համար: Իր և իր դստեր մասին որ նշանաւոր պարուհի մը եղած է՝ տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:



ԱՐԱՄ ԶԱՊԵԼ

ԱՐԱՄ ՉԱՐԳՏ. ՉԱՐԳ ԱՐԱՄ:

ԱՐԱՄ ՎՐՈՅՐՏ. ՎՐՈՅՐ ԱՐԱՄ:

ԱՐԱՄԱԶԳ (ԶԵԱ) հեթանոս Հայոց երրորդ պատուածը = Ահարամագա, սանաքրիտ լեզուով կը նշանակէ հուր իմաստութեան. ինքն էր ամէն բարիքներու աղբիւրը և իր մեհեանը կը գտնուէր ըստ Ազատանդեղոսի և Մ. Խորենացւոյն՝ Հայաստանի մէջ:

ԱՐԱՄԱԶԳ, «ազգային անկախ օրաթերթ» տպ. Աթէնք 1934. խմբագիր՝ Հ. Վարդանեան (Գ. Լեւոնեան), «Նոր Օր»ի (4419 թիւ) համաձայն:

1935ին ևս լոյս կը տեսնէ. «Խմբադրութիւն Հ. Մամուլեան, Յ. Գարրինեան, Ա. Կէօքճեան, Տ. Այրքանեան, ՇահակՆտէրեան»:

ԱՐՄՄԱՅ ԳԻԻՂ տե՛ս Արամու:

ԱՐՄՄԱՅԻՄ տե՛ս Արամու:

ԱՐՄՄԱՆԱՅ գղ. Բագրեւանդ գա.ի մէջ, կը յիշէ Ղազար Փարպեցի (էջ 165):

ԱՐՄՄԱՆԵԱԿ տե՛ս Արմենակ:

ԱՐՄՄԱՆԵԱԿ, հին անունը կը թուի Շապին Գարահիսարի այժմեան Ալամնիկ հայաբնակ գղ.ի

ԱՐՄՄԱՆԵԱԿ բերդ, ըստ Թ. Արծրունեոյ Սպեր գա.ի մէջ կամ սանձանակից: Գուրգէն Արծրունին (Թ. դարուն) Բուրգայէն խոյս տալով՝ Արամանեակ բերդին մէջ կ'ապաստանի:

ԱՐՄՄԱՆԵԱԿ գա. կը յիշուի Վարդան Այսարհագրէն, որ անշուշտ Մեծ Հայքէն դուրս կ'իյնար:

ԱՐՄՄԱՇԷՆ, հայաբնակ գղ. Սիւրիոյ, Որոնդէսի գետին եզերքը, ուր կը բնակին 50 տուն հայ ընտանիք. ունին իրենց զարոյցը:

ԱՐՄՄԱՅԻՔ s. Ասորիք:

ԱՐՄՄԵԱՆ զարոյց, նախկին Նէրսիսեան, Թաւրիզի մէջ, որուն հարիւրամեայ յորելեանին առթիւ Հայկ Աճէմեան հատոր մը հրատարակեց «պատմութիւն Արամեան Ազգային զարոյցի (Թաւրիզ) Հարիւրամեայ յորելեանի առթիւ 1835-1935»:

Թաւրիզի այս Արամեան զարոյցը իր հիմնարկութենէն ետք մօտ 40 տարի Ներսիսեան կոչուած է իր հիմնադիր Իսահակ եպ. Սաղունեանէն: Չի գիտցուիր թէ ո՞ր թուականին և ի՛նչ պատճառով յետոյ Արամեան կոչուած է (Անեմեանի զիւրք էջ 64):

Այս վարժարանը մշակութային մեծ դեր խաղացած է Ատրպատականի և բովանդակ Իրանի մէջ, ունեցած է նշանաւոր զրատէր և զրազէտ ուսուցիչներ, տնօրէններ. ինչպէս Բաֆֆի, Աճառեան, Գիւրգասեան, նախապէս Թաւրիսեանց և այլն:

Թաւրիզի այս Արամեան զարոյցը ըստ Թէոզիկի (Տիպ ու Տառ էջ 16) ունեցեր է և իր տըպարանը ուսկից 1898—1903 լոյս տեսած են զանազան կանոնագիրներ, տեղեկագիր-հաշուեկիւններ ևն:

ԱՐՄՄԵԱՆ Կրքարան, Սկիւտար (Պոլիս), հաստատուած 1914ին, հիմնադիր-տնօրէն՝ Արամ Նիկողոսեան: «Ընդհ Պատերազմի ազիտայի շրջանին հետեանքով խիստ աննպաստ պայմաններու մէջ հաստատուած այս կրթարանը փայլուն ապացոյց մըն է պ. Արամ Նիկողոսեանի ձեռննէցութեան և հզօր նկարագրին: Յիշեալը պահ մը էրպէրեանի տնօրինութիւնը վարելէ զատ՝ զա-


նազան տեղեր տեսչական պաշտօն վարած է ձեռնհասօրէն, ինչպէս Մագրիզլուզ, Ագշէհիր, Ատանա, Ատապաղար: 1919ին կրթարանը իր անդրանիկ շրջանաւարտները նուիրած է ազգին»: (Ս. Գաբաւմանեան Գրպ. Տար. 1920 էջ 165):

ԱՐՄՄԵԱՆ ձանիկ (1820—1879) «նշակաւոր վիճագրող փորագրիչ, գրածուշիչ, տառերու հընարիչ, տպագրիչ և տպարանատէր արուեստագէտ և միաժամանակ գրող, ծնած է 1820ին՝ Իզմիր: Համեստ ծնողքի զաւակ. աղայ հասակէն Պոլիս գացած և դերձակութեամբ պարսպած է: Մէկ կողմէ իր արհեստին աշխատելով, հետամուտ կ'ըլլայ նաև ինքնադարգացման և հայերէնը կ'առաջացունէ, առնն մըն ալ գրաչարութեամբ կը զրազի: Յրանտացի դերձակներու հետ տեսնուելէն հետզհետէ ֆրանսերէն ալ կ'ուսանի և Բարիզ երթալու ցանկութիւնը կ'ունենայ: 1846ին է որ կը մեկնի հոն և քանի մը տարի կը շարունակէ իր արհեստը: — 1850ական թուականին Արամեանը կը տեսնենք դերձակութենէ քաջուած և ինքզինքը տուած փորագրութեան և վիճագրութեան արհեստներուն, այդ օրերուն է որ կը հրատարակէ հայերէն ձեռագիր թերթիկ մը: Յետոյ իր մտասեւեռումը կ'ըլլայ հայկական ձոխ տպարան մը բանալ, հայ տառերը զեղեցիկացնել՝ եւրոպականներուն մերձեցնելով դանտէք: Կ'աշակերտի Բարիզինչաւնաւոր տպագրիչներէն Վալտէռի և արհեստանոր քով կատարելագործելով՝ հմուտ կ'ըլլայ առաջադրած նպատակին: Երկար աշխատելէ վերջ ձուլարան մը կը հիմնէ և կը հնարէ շարուածքով ու տեսքով զեղեցիկ այն տառերը — տեսակով այլազան — որոնք մինչև այսօր (1912) իր մականուանով կը յօրջորջուին: Մեծագիր թուղթի վրայ տպագրեալ այդ տառերուն մէկ ցուցակը ձեռք անցուցած ըլլալով, տեղեկօցանք թէ իր հնարածները կը յանդին 73 պատկառելի թիւին, այլ և այլ «բուկթօ»ներով, գլխազիր և բոլորագիր միասին հաշուելով:

Արամեան՝ իր գիրերը կը տեղաւորէ նախ վարպետին՝ Վալտէռի տպարանին մէջ, իրաւունք ստանալով «Արամեան տպագրութիւն»ը զրոյմելու հայերէն գիրքերու վրայ: Ինչ մը ատեն Վալտէռի քով իրեն յատուկ տպարանն ունենալէ վերջ, 1859ին կը հիմնէ զատ տպարան մը և կ'ունենայ իր մեքենաները, (Աէն Սիւրիս փողոց թիւ 38), սկսելով տպագրութեան Ս. Ոսկանեանի Արեւմուտք կիսամսեային: Արամեան տպագրած է նաև Մատեաց Աղաւնի «Հայաստանեայց աւետարներ» ամսաթերթը 1855էն

սկսեալ Արամեան 1854—1862 Բարիցի մէջ շատ մը գործեր հրատարակած է (Թեոդիկ՝ Տիպ ու Տառ 94): Կը փոխադրուի Մարսիլիա, և 1862—64 հոն ալ քանի մը գիրք հրատարակելէ ետք Պոլիս կը փոխադրուի և 1865էն սկսած մինչև իր մահը 16 Ապրիլ 1879 շատ մը հեղինակներու գործերը կը սպէ:

Արամեան իրրե կրող ալ կը ներկայանայ մեզ, ազգային հարցերու շուրջ գրիչ շարժելով երբեմնակի: 1861ին երբ դիպելէ թացուեցաւ սոյոժմանի մասին, ճանկի քանի մը տետրակ հրատարակեց ընդդէմ այն կուսակցութեան որ կը յարձակէր նոյն օրէնսդրութեան վրայ: 1867ին ալ հրատարակած ունի «Լուսաւ որ չա կ'ան Հայք» անուն տետրակ մը: Իր շնորհակցութիւն ընծայի»ն (Թ. Կրկովիկեան կեղծանունով), զոր ոմանք Ջունգի և Միսաքեանի վերագրեցին, սրամիտ գրուածք մըն է, և մեր երգիծարանական գրականութեան ամենահին վաւերագիրը կրնայ նկատուիլ: Իր թունդ ազգասիրութեանն ապացոյց՝ բաւ է նկատել դատապարտեալ 7 Աւրիացի Հայերու՝ կախաղանէ ազատելու գործին ոգի ի բռին աշխատիլը, ֆրանս. հիւպատոսարանի հօգոր միջամտութիւնը յաջողելով ապահովել: — Բացի արհեստին մէջ ունեցած անժխտելի կարողութենէն, Արամեան մասնակցած է ազգային գործերու և համակրանքը շահած Պոլսոյ բոլոր յայտնի ազգայնոց: Մեծահանդէս յուզարկւելութիւն մը սարքած են ազգայինք Հասքէօյի Հաճըր օղլու, ուր կը բնակէր այս նշանաւոր Հայը: Ներսէս պատրիարք, գիրի և գիրքի համար տքնողները գնահատող վեհ վարժապետը, ներկայ եղած է նոյն օր, 17 ապրիլ 1879: Թագուած է տեղոյն գերեզմանոցը: (Թեոդիկ՝ «Տիպ ու Տառ» էջ 93—5):



ԱՐԱՄԵԱՆ ՃԱՆԿ

Ճ. Արամեանի առաջին գործն եղած է «Ընդունելութիւն Ընծայի»ն, տպ. Բարից 1856, 140 էջ, գրուած Գապարածեան Գր. վ.ի, «Ընծայ» անուն գրքին դէմ: Յետոյ հետզհետէ լոյս ընծայած է «Դասարան հայկական մանկանց» էջ 53, 1860ին. նոյն տարին «Դասարան Հայկազն Մանկանց», էջ 230: «Համառօտ Բառգրքոյկ հայ.

Թուրք-Ֆրանս. տպ. 1860 էջ 309: Ուրիշ մը՝ «Համառօտագոյն Բառարան Արգեան լեզուի հայտածկ-Ֆրանս» էջ 178, և ուրիշ ազգային խնդրոյ շուրջ հրատարակած տետրակները: (Տե՛ս Ղազիկեան՝ «Նոր Մատենագիր» էջ 228—9):

ԱՐԱՄԵԱՆ Մինքան «Մուրատ»ի կեղծոնի օրով Բարիցի մէջ կազմուած Հնչակեան Մասնաճիւղին մտաւորական և անձնուէր ընկերներէն, բնիկ Պոլսեցի, խիզախ յեղափոխական որ իրրե կեղծոնի գործիչ ունեցած է բեղուն գործունէութիւն: 1923 Յունիս 4ին վարդապետ ձեռնադրուած Երուսաղէմի մէջ, ուր կը մեռնի տառապակոծ և յուզումնայից կեանք մը ապրելէ վերջ («Յուշարձան» նուիրուած Հնչ. 40ամեակին, էջ 207):

Կ'ենթադրեմ որ միեւնոյն անձն է Մինքան Արամեան «Գործնական բարոյագիտութիւն»ը բարգձմաւբար հաւաքողին հետ, սպուած Պոլիս 1893ին:

ԱՐԱՄԵԱՆ Ներսէս Ճ. ծնած Բարից 1865ին: Նխն. կրթ. ստացած Պոլիս՝ Ներսէսեան, յետոյ ֆրէնկերու, Պէրպլեան և Ռոպէրթ Գոլէճ: 14 տմեայ պատանի հայրը կորսնցնելով, կը սկսի պահ մը գրայարութեամբ գրադիլ «Մասիս»ի տպարանը, վերջն ալ Յակոբեան խանի հօրենական աշխատանոցին մէջ՝ ուր Գ. Պաղտատեան տնօրէն էր արդէն: Վերջ ի վերջոյ կը լքէ հօրը արհեստը և դաշնակահարութեամբ ու առևտուրով կը զբաղի:

ԱՐԱՄԵԱՆ Հմայեակ (= Շուս Մարտիրոս) խրմբագիր, ծնած Բալու 1878ին, բուն անունը Մարտիրոս Տիրացու: Կ'անդամակցի յեղափոխական կազմակերպութեան, կ'անցնի Կովկաս և կը ճամբորդէ Եւրոպական շատ մը երկիրներ, ի վերջոյ Բեղբրսպուրկ կը դառնայ, ուր «Արաքս»ի խրմբագրութեան մէջ կը մտնէ: Քիչ ետք Հարաւային Ռուսաստան կ'անցնի ուր 50,000 հայ գաղթականներ հաստատուած էին: Անափայի մէջ «Շուսեան ուսումնարան»ը կը բանայ, կը գրէ թատերագութիւններ և կը հիմնէ Օրգանա (Գար. Լեոնեանի անձանօթ) և 1905ին ի Զեմ թերթերը Ափանայի մէջ: Կ'աշխատակցի շատ մը թերթերու: Հեղինակած է Քիւրդ պեկ, Արամը, Անասուածները, Մերկացում, Դաս, Սեւ հարսանիք, Քրդերը Տանկահայասանի մէջ, Հնչակ, Հերոսուհի եւ, Գեպի Ազատութիւն (ողբերգութիւն 3 արար) Գեպի կախաղան եւ այլն գրքերը, ունի եւ թարգմանութիւններ: Ոմրագրած է բացի վերի թերթերէն Պոլսոյ մէջ՝ Կոնակ պատկերազարդ շաբաթաթերթ 1909—1914. Գիւղասնեստ պատկերազարդ ամսաթերթ 1913—1914. Գիւղասնեստի

Տարեցույցը 1914ին, Գայլալիկ (Հնչակեան կուսակցութեան) 1913ի վերջին ամսէն՝ փոխարէն Կոնակի: (Թեոդիկ՝ «Ամ. Տարեցույց»ը 1909 էջ 239):

Արամեանց ընդհ. պատերազմի նախօրեակին մասնաձև է Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Քոսթանցայի մէջ գումարուած ընդհ. ժողովին պատգամաւորները, պատերազմի ընթացքին ևս կատարած է մատնութիւններ, որոնց համար դինազադարէն յետոյ սպանուեցաւ:

ԱՐԱՄԵԱՆՅ Միսաք, բժիշկ ի Սայեան, արեւելահայ, գրչով պայքար մղեց Ասորայսանի Առաջնորդ Արիստակէս Արքեպ. Սեղրակեանի հրատարակած գրքին դէմ՝ իր «Եկեղեցական նշմարներ» 1891ին հրատարակած գրքովով, ունի և ուրիշ ուսումնասիրութիւններ: Հեղինակած է նաև Սալեանից Էջմիածին. «Նկարագիր ուխտաւոր սեղևորութեան (փոփոխութիւններով արտասպած «Նոր-Դար» ամենօրեայ լրագրից)» տպ. Թիֆլիս 1887, էջ 166: Տօքթ. Արամեանց մեռաւ 1909ին:

ԱՐԱՄԵԱՆՔ, այսպէս կը կոչուին Հայք մեր Արամ նահապետին անուամբ:

ԱՐԱՄԻՍ s. Իրիմիս:

ԱՐԱՄԼՈՒ կամ Արամանից գիւղ. գղ. Այրատայ Արագածոտն գ. ի մէջ, Օշականի արեւմտակողմը, բնակիչք՝ այժմ այլազգիք:

ԱՐԱՄՈՅ կամ Արամին գուտ հայարնակ գիւղ Անտիօքի, ըստ Էփրիկեանի 1900ին 50 տ. հայ կար, եկղ. Ս. Աստուածածին, Նոր տեղեկութեանց համաձայն Արամոյ 200 հայ բնակիչ ունի, ո՛չ եկեղեցի և ոչ դպրոց կայ: (Արամօ գղ.ի հայ լեզուին նմոյս սե՛ս «Հանդէս Ամսօրեայ» 1907 էջ 27):

«Արամու գեղը կը յիշուի Անտիօքի Քեսայ գիւղը գտնուած Յայամաւուրքի յիշատակարանին մէջ 1466ին: («Սիօն» Ա. տարի էջ 99):

ԱՐԱՄՈՒՍ կամ Արամօն. հայաբնակ հին գղ. Այրարատայ Կոտայք գ. ի, 1900ին ունէր 1200 բնակիչ: Եղիշէ պատմիչ Արամօն (Երամօն կամ Արամօնիք) անունը կու տայ գիւղիս, Սամուէլ Անիցի՝ Արամօնք, Ասողիկ՝ Արամօնեաց, կաթողիկոսաց գաւազանագրոց մէջ՝ Գիւղ Արամայ, որուն մօտ էր Արախոյզ կամ Արախուս ըսուած տեղը՝ ուր ըստ ոմանց Շամիրամեան պատերազմէն ետքը Ասորոց թաղուհին փնտռել տըւաւ Արայի դիակը: Յովհաննէս պատմարան կթղ. կըսէ թէ՛՝ գիւղս սեփական էր կաթողիկոսարանի տան: 729ին Դաւիթ Ա. կթղ. ընտրուեցաւ, նա հոս ծնած էր և իր այս ծննդավայրին մէջ եկեղեցի և կաթողիկոսարան շինել

տալով՝ հոն նստաւ և վախճանիէն ետք եկեղեցւոյն մօտ թաղուեցաւ: Այս հին եկեղեցւոյ քայքայուած որմոց հազիւ մէկ մասը կայ այժմ, շինուած կոփածոյ քարերով. անյայտացած է Դաւիթ Ա. կթղ.ի գերեզմանատեղին: Այժմեան եկեղեցին կը կոչուի Ս. Յակոբ զոր փոխանակ հնոյն՝ նորոգ կառոյց քարաշէն Տէր Յովհան քհ. 1863 թուին: Երկու եկեղեցիներն ալ թ. դարու արձանագրութիւններ ունին: Թէպէտե քիչ ժամանակ միայն կաթողիկոսանիստ եղած է գիւղս սակայն այնու հանդերձ բարգաւաճեր և զարգարուեր է շինութիւններով և սրբութիւններով որոնցմէ կը յիշուի Ժն դարուն Արամօնից Ս. Խաչն՝ Աղջոց վանքի մէջ: Գիւղիս արեւելեան հարաւային կողմը՝ բլրակի մը ծայրը շինուած է սրբատաշ քարերով Ս. Աստուածածին անուամբ մատուռ մը, հայկական ՅՄԶ (= 907) թուականին, այս արձանագրութիւնը կը յայտնէ թէ Գրիգոր Սիւնեաց տէրը, Վասակ Հայկազնի որդին, շատ գանձիւք գներ է Արամովքայ (Արամօնք) գիւղը Հագարացիներէն և միևնոյն ժամանակ նորոգած է այս մատուռը: (Էփրիկեան՝ «Քննախարհիկ», Ալիսան՝ «Այրարատ» 289, Է.Ե.):

ԱՐԱՅ Գեղեցիկ, Հայկազն նահապետ, որդի Արամայ, հօրը կը յաջորդէ 1769—1743 (ն. ք. Բ.) 26 տարի իշխելով: Ասորեստանի թագուհին Շամիրամ, ուղեց ամուսնանայ Արայի հետ, երբ վերջինս յանձն չառաւ՝ պատերազմի ելաւ, հրամայելով որ Արան ողջ բռնեն, բայց թշնամի զինուորէ մը սպաննուեցաւ: Շամիրամ իրեն դէմ չզայրացնելու համար Հայերը՝ իր զօրքերէն միևնոյն հագցուց Արայի զգեստները և ցոյց տուաւ Հայոց բանակին, ըսելով որ կ'ապրի:

(Հ. Ա. Մասիկեան ուսումնասիրութիւն մ'ունի «Արայ Գեղեցիկ՝ Յոյն մատենագրութեան մէջ». «Հանդէս Ամսօրեայ» 1930 էջ 1—2. 61, Է.Ե.):

ԱՐԱՅ ԱՐԱՅԵԱՆ s. Կարգոս:

ԱՐԱՅԻ ԳԻՒՂ, աւերակ գիւղատեղի Արագածոտն գ. ի մէջ:

ԱՐԱՅԻ ԼԵՌ, նշանաւոր և պատմական լեռ Արագածոտն գ. ի մէջ, այսպէս կոչուեր է, որովհետև Արայ Շամիրամայ դէմ պատերազմի ելած ատեն՝ լեռանս ստորտը բնակեցաւ: Այս աւանդական պատմութեան հիմ կրնայ համարուի նաև Շամիրամայ անուամբ կոչուած լեռը, որ կ'իյնայ լեռանս դիմաց՝ Կոտայք գ. ի մէջ: Այլազգիք Արայի լեռը Գաւնը Եարք կը կոչեն: Լեռանս շրջակայքը զարգարուած է բնութեան հրաշալիքներով և մենաստաններով: Մօտերը կայ քարայր մը, իրրե գերեզման Վառվառեայ կուսի

ուր կը դիմեն բազմաթիւ ուխտաւորք Համբարձման տօնին: Շրջակայքի մենաստաններն են Եղուարդայ և Թեղենեաց վանքերը, Բլշոյ վանքը՝ Հրազդանի խորածորի մէջ, Սաղմոսավանք, Յովհաննավանք և Սերկելի (հն. Սիւղի) անապատ: (Էփրիկ. «Քննաշարհիկ», քաղուած Ալիսանի «Այրաւս»էն էջ 161):

ԱՐԱՅՎԻՈՍ Արապիոս կամ Արեպուն, Փոքր Հայոց գաւառակ, այժմեան Նիկոէ գ.ի մէջ, ունի 14 գիւղ, ի հնուքն կը կոչուէր Արապիւրա:

ԱՐԱՆՈՏ, հին գ.ս. Արցախու, զիրքը դաշտային է, այժմ միացած է Տոբի գ.ս.ի հետ և ծանօթ է Գեապիլու անուամբ: Բնակիչք՝ մանմտականք են:

ԱՐԱՆՅ, հայարնակ գիւղ մ'էր վանայ Կարճկան գաւառակի մէջ:

ԱՐԱՆՅ ԱՆԱՊԱՏ տե՛ս Հարանց Անապատ:

ԱՐԱՇ ս. Արեւ:

ԱՐԱՇԱՏ ս. Երիւստ:

ԱՐԱՇԷՆ ս. Արեւ:

ԱՐԱՇԻՆ, յետ Երնջակ գ.ս.ի հիւսիսակողմը, բարձր 9910՛:

ԱՐԱՈՒՍ կամ Արալու. հայարնակ գ.դ. Զանգեզուր գ.ս.ի մէջ, 1900ին 15 տուն բնակիչ ունէր:

ԱՐԱՊԱՃԵԱՆ Գ. գրած է «Ծովեր» բանաստեղծութեան հատոր մը, տպ. ի Կ. Պոլիս:

ԱՐԱՊԱՃԵԱՆ Օր. Մաքունի փաստարանուհի, ծնած Սիլիստրէ: Վկայական ստացած Պուքրէշի համալսարանէն 1937ին:

ԱՐԱՊԱՃԵԱՆ Միհրան, զօրաւոր երեակայութեամբ թրքագէտ աշուղ Ներսէս Վարժապետեան պատրիարքի օրով՝ ԺԹ. դարու վերջին քառորդին: (Ըստ Ս. Կուրսիկեանի, «Հիւ. Տարեց. 1935 էջ 123):

ԱՐԱՊ-ԲՈՒՆԱՐ, գիւղաքաղաք Սիւրիոյ, Թուրքիոյ սահմանագլուխը, Հայէպէն 150 հզրմ. հետի. 450 տուն հայ բնակչով, մեծամասնութիւնը Ուրֆացիներ են: Ունին եկղ. մը և Խրիմեան վարժարան մը՝ 100 աշակերտով:

ԱՐԱՊԵԱՆ Աղեքսանդր պէյ, ըմբիշ, գնդապետ, Պոլսեցի, հայր Միքիաս Արապեան վիպասանի, կը վախճանի Բերա 1910ին:

ԱՐԱՊԵԱՆ Կարապետ, ճարտարագէտ, ծնած Կեսարիա 1889ին, փոքր հասակին Եգիպտոս իր մօրեղբոր Պախտիարեանի մօտ կ'երթայ և կ'աշակերտի Գահրէի Գալուստեան վարժարանին, ապա Ֆրէրներու դպրոցին, յետոյ կը մանէ երկրաչափի մը մօտ, ուր գործնական վարժութիւններ կը ստանայ, իսկ տեսականին համար կը հե-

տակ Գոթեբուրգսան Թրալօ Բիւպպիի ընթացքին և 1912ին Փարիզէն կը ստանայ երկրաչափի վկայականը: Գահրէի մէջ կը գործէ, շինած է շատ մը շէնքեր: Եկեղեցեաց Հոգարարձուլթեան անդամ եղած է մի քանի տարիներ:

ԱՐԱՊԵԱՆ Հոլիվալմե (տիկին), ծնած 1864 թ. Տարտանէր: Ուսումն առած Սկիւտարի Ս. Խաչ վարժարանն, 70-ական թուականներուն աշակերտելով Պուէտ Խ. Միսաքեանի՝ որուն կը պարտի ունեցած իր հակումը բազմատական ուսումնասիրութեան համար: Աշխատակցած «Սուրհանդակ»ի և «Բիւզանդիոնի», ղեկերելով իր գրիչը կանացի, մանկավարժական և քննադատական հարցերու շուրջ որոնց մէջ պարզած է միշտ նուրբ և անաչառ դատաստան: Ծնօպէլի և Բէստայօցցի մեթոտներն անձամբ կիրարկած է առեն մը Գատրքէոյ՝ մասնաւոր մանկապարտէզի մը մէջ: — Արուեստագէտ իր ամուսինը հնարիչն է ոսկեղրամներու կշիռի մը՝ Արապեան քիմիկ անուամբ, որ ոսկիներու պակասին որքանութիւնը կը ցուցնէ: (Թեոդիկ՝ «Ամենուն Տարեցոյց»ը 1911. էջ 246): Այժմ կ'ապրի Աղեքսանդրիոյ արուարձանի մը մէջ:

ԱՐԱՊԵԱՆ (Մառի Կ.), Իզմիրի մէջ Մամուրեանի տպարանէն 1903ին յոյս բնծայած է Իր իսեալը գրուածքը: Իր 1895ին Մարտինի Օր.ի «Ընտիր աղջիկ մը» վէպը թարգմանած և հրատարակած է:

ԱՐԱՊԵԱՆ Միքիաս (Շ. Շաւարճ), վիպասան, որդի գնդապետ ըմ. Աղեքսանդրի, առեն մը իրրե առևտրական Մանչեսթր բնակելէ ետք Լոնտոն կը հաստատուի և գրականութեան կը նուիրուի:

Պէրպէրեանի այս շրջանաւարտը 1895ին երբ առաջին անգամ Անգլիա ոտք կը կոխէր՝ տեղւոյն լեզուն չէր գիտեր: Յամառ ընթերցող եւ զեզարուեստասէր մ'ըլլալով սակայն՝ շուտով կը տիրանայ անգլիերէնի և առանց բոլորովին հեռու ապրելու հայ իրականութենէն, կրցած է մուտք գործել անգլիական գրական շրջանակներէ ներս:

Արապեան արդէն իսկ իր գործերէն երկու թատերգութիւններ կը բեմադրէ Լոնտոնի և Մանչեսթրի մէջ (Օրինազանցներ պիսի հետապնդուին, Սէր. հրմ). 1920ին երիտասարդ հեղինակը տարուած օրուան մարդու խաղաղասիրական երազներէն, հրատարակած է «Yeraz» անունով այլարանութիւն մը (allegorie), ուր կը նկարագրէ Ուիլսոնեան բարեմիտ իտէալները իրականացուցած մարդկութեան մը վիճակը:

Այնուհետև իր անունը կը տեսնուի Լոնտոնեան շարաթաթերթերով մէջ, ստորագրելով սիրուն նորավէպեր և կարճ նկարագրութիւններ:

Մ. Արապեան հրատարակած է նաև անգլիական կեանքէ առնուած վէպ մը: Նիւթըն է իր ամուսինին անարժէք և ստորին արարած մը ըլլալը զիտնալով հանդէս ձգինքը սիրող կնոջ մը իր զգացած սէրը խեղդելու և անկէջ կարենալ ազատելու համար բրած ջանքերը: Այս նիւթը առիթ տուած է հեղինակին Լոնտոնի յետ-պատերազմեան կեանքէն պատկեր եւ տիպարներ ուրուագրածելու:



ՄԻՔԻԱՍ ԱՐԱՊԵԱՆ

Գիրքը (Laykin) 1926ին հրատարակուեցաւ ու այդ առթիւ անգլիական մամուլը, մասնաւորաբար Թայմզ գրախօսականներ նուիրեցին, գնահատելով հայ երիտասարդ վիպասանին տաղանդը: (Հիւանդանոցի Տարեցոյց 1928, էջ 205):

Պ. Արապեան մօտ 7-8 տարիէ ի վեր Ռուսմանիա հաստատուած է իրրև տնօրէն Թիմիշուարայի շաքարի գործարանին:

ԱՐԱՊԵԱՆ Յ. ԲՈՒՆԻՔ Ժնած է ի Սիվրիհիսար 1860ին, ուսումը առած է Ռուսերթ Գուլէճի մէջ. 1882ին անցած է Միացեալ Նահանգները և 1889ին Նիւ-Եօրքի համալսարանէն բժշկական վրկայական ստացած: 1892ին հայրենիք վերադառնալով՝ առեն մը հոն հաստատուած է, յետոյ երկար տարիներ Անատօլու-Պաղտատ երկաթուղային ընկերութեան մէջ պաշտօնավարած է: 1922ին Պոլիս վերադառնալով հաստատուած է Գատր-գիւզի մէջ: 1932ին անցած է Վենետիկ և 1936ին մեկնած է Պուէնոս-Այրէս, ուր այժմ իր զաւակներուն մօտ կը գտնուի:



ՏՈՒՐ. Յ. ԱՐԱՊԵԱՆ

ԱՐԱՊԵԱՆ Յովսէփ Ս., պատուելի, ծնած Պարտիզակ 1868 Օդ. 28ին, տեղւոյն Ազգ. վարժարանին մէջ նախնական ուսումը առնելէ ետք Բարձրագոյն վարժարանը կը մտնէ: 1889ին ընթացաւարտ կ'ըլլէ ու այլ և այլ տեղեր ուսուցչական պաշտօն կը վարէ և 1903ին Մարզուանի Աստուածարանական ձեմարանը կը մտնէ, 1906ին Պարտիզակ կը դառնայ իրրև պատուելի՝ վրկայականը ի ձեռին: Կ'ամուսնանայ Տօքթ. Յ. Տէր Ստեփանեանի քրոջ հետ և Պրուսայի Աւետ. բեմին կը հրաւիրուի, ժողովրդեան խաւերուն մէջ մեծ համակրութիւն կը գտնէ. կարճատեւ կ'ըլլայ պաշտօնը. 1908ին կազդուրուելու համար ծննդավայրը կը դառնայ և 1908 Փետր. 14ին հոն կը վախճանի: (Համագգ. Օրացոյց 1912 էջ 313):

ԱՐԱՊԵԱՆ Յովսէփ. 1872ին չրջանաւարտ Պոլտոյ անասնաբուժական վարժարանէն:

ԱՐԱՊԵԱՆ Ն. ՏՔԹ. Մ. Նահանգաց Պրուքլին քղ.ին մէջ:

ԱՐԱՊԵԱՆ Պօղոս (1742—1835), անուանի տրպարանատէր, ծնած Ապուշիս 1742ին, Սուլթան Սէլիմի օրով Պոլիս կ'երթայ, միջոց մը չրջան փերեղակութեամբ կը զբաղի, յետոյ կ'աշակերտի իր տպագրիչ հօր՝ Յովհաննէս Աստուածատուրեանի քով՝ սրուն ունեցած գիրքը հետզհետէ ձեռի բերած ու կատարելագործած է, պակասներն ալ ամբողջացնելով: Հօրը հետ, յետոյ առանձին, հուսկ ուրեմն զաւակներուն հետ գործակցաբար 70է աւելի տարիներ անընդհատ աշխատած է, հայր և մայր տառեր շինելու, ձուլելու և գիրքեր տպելու բազմաղիմի գործերուն անձնատուր, մեծ սատար հանդիսանալով հայ մտաւորական խորտումին և անոր աստիճանական զարգացման իրրև քաջ տպագրիչ և գրաձուլիչ՝ համբաւը հետզհետէ տարածուած ըլլալով ամէն կողմ, Արապեան 1770ին Վրաց վերջին Հերակլի թգէն Թիֆլիս կը հրաւիրուի, ուր կը մամանէ տաժանագին ուղեորութենէ մը վերջ, կ'աշխատի նախ՝ ուսումնասիրելու համար վրացերէն տառերը, զորս վերջ ի վերջոյ կանոնաւորելով տպարան կը հաստատէ: Վարձատրուելէ վերջ Թիֆլիսէն էջմիածին կ'անցնի ու Սիմէոն կթգէն մեծարուելէ ետք Պոլիս կը վերադառնայ, ուր կը հնարէ թուրքերէն տառերու մայրեր և Սուլթան Մահմուտէն կ'ընդունի բացառապէս շնորհուած գրիտակիր Մամուլնյանը: Իր զաւակներն էին Աստուածատուր, Գէորգ, Գալուստ և Սիմէոն, բայ ի վերջինէն Յ զաւակներն ալ ցվերջ աշխատակցած են իրենց հօր, իր գրաձուլիչ, գրաշար և տպագրիչ: Գէորգեան ինչպիսի որդին է միայն

որ ապարանով կը զբաղի ատեն մը, հօրենական թուրքերէն հայր և մայր տառերը Մով. նախարարութեան վաճառելով՝ հոն պաշտօնի կը կոչուի էյուպ փաշայի տնօրէնութեան օրով, բայց զըժ-զո՛հ շուրջիներուն անոպայ ընթացքէն՝ 9 ամիս ետք զորձաւորապետ-ձուլիլի այդ պաշտօնն ալ լքած է:

Պօզոս Արապեան այեփառ մօրուքով պատկառելի ծերունի մըն էր, իր խօսքը կը փնտռուէր միշտ, քաղաքական և ազգային հրատապ խընդիրներու մէջ, որովհետեւ ինք ուղղամիտ էր և անասառ:

Նախագգայով իր մահը՝ երբ ո՛ր է տկարութիւն մը չուէր՝ առջի իրիկուընէ սապէս կը խօսի իրեններուն. — «Այս գիշեր ժամը 5ին պիտի մեռնիմ, անկողինս արեւելք-դի ձգեցէք. կէս ժամ առաջ արթնցուցէք զիս, որպէսզի մնաս-բարովս ըսեմ»: Ու իրաւ ալ որոշեալ ժամուն ձայն կու տան իրեն. աղօթքի և օրհնութեան պէս խօսքեր կը մըթմըթայ և անվրդով համակերպութեամբ մը հրաժեշտ առնելով՝ ժպիտը չըրթունքին կ'աւանդէ հողին 95 տարեկան հասակին մէջ, 1835ին: Թաղուած է Օրթագիւղի նախկին գերեզմանատունը: (Թեոդիկ՝ Տիպ ու Տառ 66—70):

ԱՐԱՊԼԱՐ կամ Արապլը գղ. Մարաշի, 12 տուն հայ քնակիչ ունէր:

ԱՐԱՊԻՈՍ s. Արալլիոս:

ԱՐԱՊՇԱՀ պատմագիր, որուն գրած «Պատմութիւն լէնկ Թիմուրայ»ն տաճիկ ընագրէն թարգմանած է Աստուածատուր վրդ. Տէր Յովհաննէսեանց, (յետոյ եպ.) միարան Ս. Յակոբայ և տպ. Երուսաղէմ 1873ին:

ԱՐԱՊՈ հերոս մը:

ԱՐԱՍԽԱՆԵԱՆՅ Աւետիք, տքթ. խմբագիր, ծնած է Վերին Ագուլիս 1857ին, նախնական ուսումները իր ծննդավայրը առնելէ ետք Լայրցիկի, Շթրագպուրկի և Բարիդի համալսարաններուն մէջ կ'ուսանի տնտեսագիտութիւն և պատմութիւն և համբաւաւոր տնտեսագէտ բրոֆ. Շմոյլէրի ամենամտերիմ աշակերտը կը դառնայ: Արասխանեանց իբր տքթորութի թեզ՝ «Յորենի առեւտուրը Ֆրանսայի մէջ ժ.Ղ. դարուն» կը ներկայացնէ: Բրոֆ. Շմոյլէր Արասխանեանցին կ'առաջարկէ Գերմանիա մնալ և իր հրատարակած գիտական հանդէսին խմբագրութիւնը վարել: Արասխանեանցայս պատուարեր առաջարկութիւնը կը մերժէ իր ազգին ու հայրենիքին ծառայելու համար: Կովկաս վերադառնալով կը մասնակցի այն Յանձնաժողովին որ պաշտօն ունէր,

1883-5 թուականներուն ուսումնասիրել պետական հողերուն վրայ հաստատուած գիւղացիներուն տնտեսական վիճակը: Իրեն վիճակուած էր Նուխի և Արէշի գաւառները, բնակչութիւնը կազմուած էր Հայերէ և Թուրքերէ: Արասխանեանց իր պաշտօնական հետապնդութեանց կից կը հրատարակէ նաև երկու հայերէն և երկու ռուսերէն փոքր ուսումնասիրութիւններ, միշտ ընկերային հարցերու մասին:

Տարի մը՝ խումբ մը մասնագէտներու աջակցութեամբ ձեռնարկեց տնտեսագիտական և առեւտրական դասընթացքներու հաստատման, թէ՛ ժողովրդականացնելու համար գիտութիւնները և թէ՛ մասնագիտական ուսում տալու համար անոնց՝ որ կը պատրաստուէին առեւտրական ապարէզին: Յետոյ Թիֆլիսի Ներսիսեան և Յովհաննեան վարժարաններու մէջ կ'աւանդէ պատմութիւն, և քանի մը տարի ետք կը հրատարակէ «Արեւելեան Ազգերի հին պատմութիւնը» (Եգիպտոս, Փիւնիկիա, Միջագետք, Ասորեստան, Բաղդէա, Բաբելոն, Իրան (Մարաստան, Պարսկաստան), տպուած Թիֆլիս 1891ին: Ատեն մը «Մշակ»ի կ'աշխատակցի, բայց զաղափարական տարրերութիւններէ անհամաձայնութիւն առաջ կու գայ իր և Գր. Արծրունիի միջև, կը թողու «Մշակ»ը և 1889ին կը սկսի «Մուրճ» ամսագիրը հրատարակել, որ այդ չրջանի ամէնէն հեղինակաւոր գրական հանդէսը դարձաւ և իր շուրջ հաւաքեց ժամանակի յայտնի գրողները, որոնք նիւթապէս կը վարձատրուէին:

Արասխանեանց 12 տարի ղեկավարելով «Մուրճ»ը, մեծ և բարերար ազդեցութիւն մը ի գործ դրաւ հայկական կեանքին և երիտասարդ ուժերուն վրայ, և ասոր մէջ կը կայանայ «Մուրճ»ի և Արասխանեանցի արժէքը:

Գրիգոր Արծրունիի քննադատութեանց և իշխան Կալիշինի հալածանքներու հետեանքով «Մուրճ»ի բաժանորդներու թիւը 1000էն 600ի կ'իջնէ և Արասխանեանց կը ստիպուի «Մուրճ»ը Լեոն Սարգիսեանցի թողուլ, որ 8 տարի ևս հրատարակեց գայն:

Արասխանեանց չլքեց սակայն հանրային գործունէութիւնը: Իբր ուսուցիչ պաշտօնավարեց Ներսիսեան դպրոցի և էջմիածնի ճեմարանին մէջ. յաճախ ընդունուեց ուսուցչի տեսուչներու հետ՝ ատեն մը անպաշտօն մնաց. յետոյ Ախալքայաքի ազգային վարժարանի աւագ ուսուցչի համեստ պաշտօնը ընդունեց ու հիւանդացաւ, բայց այնուհանդերձ շարունակեց իր պաշտօնը: Ականջի սուր ցաւ մը ծանրացուց վիճակը և ի չզոյէ մաս-

գէտ բժշկի՝ հիւանդութիւնը հասաւ ուղեղին եւ 1913ին վախճանեցաւ հոն մեցեցմիքէ: Փառաշուք թաղումը Թիֆլիսի մէջ կատարուեցաւ: (Մ. Բունեաբեանի դասախօսութեան քննարկումը «Կեանք եւ Արուեստ» 1936 էջ 170):

Արասխանեանց 1883ին Թիֆլիսի մէջ կարգացած Քաղաքական և Գրական դասախօսութիւնները նոյն տարին հրատարակեց, իսկ 1884ին՝ «Հողի արդիւնաբերութիւնը եւ Հասարակութիւնը»: Թարգմանած է դիսք. Բօկի «Գործնական խրատներ», եւ սպառ 1876ին. եւ Ն. Մառի «Հայ-վրացիական յարաբերութիւնների մասին անցեալում» գրքոյկը, սպ. 1898ին:

ԱՐԱՍՍԻՍ s. Հոսոսոս:

ԱՐԱՍՍՍՄՈՒԶ, անձանօթ գիւղ Սիւնեաց Վայոց-ձոր գո.ի մէջ:

ԱՐԱՎԱՄԱՆՆ. Կարամ-Վարդան գղ. Այրարատայ Վանանդ գո.ի մէջ, Կարսի արևմտակողմը, բնակիչք՝ յոյն:

ԱՐԱՏԷՍ, Արատեցի կամ Արիսես, հին գղ. Սիւնեաց Վայոց-ձոր գո.ի, ծանօթ Այսաի անուամբ, բն. այլագրի:

ԱՐԱՏԷՍԻ ՎԱՆՆԻ, կը գտնուի համանուն գիւղին մէջտեղ բարձրավանդակի մը վրայ, ի հնումըն կառուցուած: Այս վանքը գիւղին հետ Ստեփանոս Օրբէլեան պատմչին ժառանգութեան վիճակելով իր Տարսայիճ հօրմէն՝ զայն նորավանից նուիրեց իրրե կալուած և բնակարան ամրան: Տակաւին թէ և մասամբ կանդուն են վանացս եկեղեցիները, սակայն ամայի օրէ օր քայքայման և կործանման տխուր վիճակի մէջ: Այս եկեղեցիներէն գլխաւորը կառուցուած է չորս որմափակ սեանց վրայ, ունի երկու աւանդատուն և մատուռներ աջ և ձախ կողմերը, որոնց մէջ կան պատարագի սեղաններ: Ունի նաև ժամատուն՝ կոփածոյ քարերով շինուած, վեց որմափակ սիւներով: Արևելեան որմոյն մօտը կայ որոցածե տապան մը Չիթ (1280) թուականով գեղեցկատառ արձանագրութեամբ, որուն մէջ կը հանգչին վանքս նորոգող բարունապետ Հայրապետի նշխարքը: Երկրորդ եկեղեցւոյ գաւթի արևմտեան դրան ձակաւոր կայ ճարտարաքանդակ պատկեր Տիրամօրն՝ Յիսուս գիրկը, և երկու կողմը կրկին արձանագրութիւնք: Երրորդ եկեղեցւոյն նոյնպէս կիսակործան քանդակներն և դրան դրուագները աւելի նուրբ արուեստով շինուած են, ուր կը տեսնուին զանազան ձևերով խաչեր, ողկոյզներ, կենդանիներ և այլն Վանացս եկեղեցիներու որմերու և իրաչարձաններու վրայ կան բաւական թուով արձանա-

գրութիւններ, յորոց մին կը յայտնէ երեք եկեղեցիներուն անունները, որոնք են Ս. Սիովն, Ս. Աստուածածին և Ս. Կարապետ: Վանացս արձանագրութիւնները չեն յայտնել շինութեան թուականը, եղած թուականներէն հնագոյնն է ՆիԴ (= 975) և նորագոյն՝ 1713: (Էփրիկեան՝ «Բնագլխարհիկ», քաղուած Հ. Ալիշանի «Սիսական» էն էջ 141—5):

ԱՐԱՐ, հին գղ. Սիւնեաց Վայոց-ձոր գո.ի մէջ: ԱՐԱՐԱ լեռ տե՛ս Յաւելուածը:

ԱՐԱՐԱ օրաթերթ, ապա կիսամսեայ, տպ. Ատանա 1920—1921: Պատասխանատու տնօրէն՝ Հայկ Մաստիճեան:

ԱՐԱՐԱ, անկախ հայաթերթ, (չարաթաթերթ): Տպ. Ելեքսանդրիա 1926—1930: Արտօնատէր խմբագիր՝ Արամ Ստեփանեան:

ԱՐԱՐԱՏ s. Այրարատ:

ԱՐԱՐԱՏ լեռ տե՛ս Այրարատ լեռ:

ԱՐԱՐԱՏ s. Գաւալու (Խ. Հայաստան):

ԱՐԱՐԱՏ, «լրագիր՝ քաղաքական, առևտրական և բանասիրական շարաթաթերթ» տպ. Թիֆլիս 1850—1851, խմբագիր հրատարակիչ Գարրիէլ քհ. Պատկանեան:

ԱՐԱՐԱՏ, կրօնական, բարոյական, պատմական, բանասիրական և ազգային. — պաշտօնական ամսագիր Հայրապետական Աթոռոյ Ս. Էջմիածնի» տպ. Էջմիածին 1868—1918:

ԱՐԱՐԱՏ «չաւիղ առաջադիմութեան քաղաքական, ազգային, բանասիրական և առևտրական շարաթաթերթ»: Տպ. Կ. Պոլիս 1869—1872: Խմբագիր և Տէր՝ Մատթէոս Այվատեան:

ԱՐԱՐԱՏ, լրագիր հայերէն և թուրքերէն (հայատառ), տպ. Կ. Պոլիս 1876: Խմբ. Մ. Այվատեան:

ԱՐԱՐԱՏ, «հայամերիկական օրագիր, ազգային և ընթերցասիրական»: Տպ. Նիւ Եօրք 1891—2?: Խմբագիր հրատարակիչ Փառնակ Մ. Այվատեան: Նոր Շրջան կը կոչուի, հին համարելով հօրը Սատթէոս Այվատեանի Արարատ:

ԱՐԱՐԱՏ, օրաթերթ, Հայ Ռամկ. Ազատ. Կուսակցութեան: Տպ. Աթէնք 1925:

ԱՐԱՐԱՏ, ամսագիր, օրկան Գանատայի Հայորդիներու Միութեան: Տպ. Հէմիլթըն 1926, յետոյ Չորեքտոն 1927?: Տնօրէն խմբագիր Ա. Զ. Ալիքսանեան:

ԱՐԱՐԱՏ, կիսամսեայ հանդէս, գրական, գեղարուեստական, գիտական: Տպ. Բարիդ 1927:

ԱՐԱՐԱՏ, օրաթերթ (Ս. Դ. Հնչակեան) 1937-ին սկսաւ հրատարակուիլ Պէյրութի մէջ: Հասցէ՝ B. P. 616:

ԱՐԱՐԱՏՅԱՆ Աղբխանդր վրդ. ծնած Գարա-

գրիսէ (Շիրակ) ժ.ժ. դարուն առաջին քառորդին: «Փոխանորդ ընդհանուր Հոգեւորական կառավարչի ի վերականգնութեան Հոգեւորական շինութեանց հայ կաթողիկոսաց», լոյս կ'ընծայէ «Ճակատ անմահից» գիրքը 1850ին՝ Թիֆլիսի մէջ. (էջ 169) «Արդեամք և ծախսէք Այաստանցի Գ. հանգուցեայ տեառն Յովհաննու Սաղաթէլեան, և պարկեշտուհի կողակցի նորա»:

Այս Այրարատեան վարդապետն է հեղինակը «Անի քաղաք նստեր կու լայ» շատ ժողովրդականացած երգին (Ալիբանի՝ «Շիրակ» էջ 109). Արարատեան վարդապետ մեծ ժողովրդականութիւն դատած է. Աշըղ Զիււանին «Հ. Աղեքսանդր Արարատեանի մահուան առիթով» երգ մը գրած է (տպ. 1890ին): Արարատեան վրդ. մեռած է 1888ին Թիֆլիսի մէջ: («Մշակ» 1888 թիւ 79):

ԱՏԱՐԱՏԵԱՆ Աղեքսանդր, վերի Աղ. վրդ Արարատեանի օրով ապրած Գանձակ-Թիֆլիսի մէջ, որ շատ երիտասարդ տարիքին՝ 1876էն սկսեալ լոյս կ'ընծայէ հետեւեալ գրքովները. «Երկու թումբ կամ խեղճ սիրահարներ». (Անցկացած բան), Գանձակ. ի տպ. Ֆետոքովի և Թառուսեանցի, 1876, 45 էջ: «Քնարիկ մանկական» տպ. Տիգրիս 1880 էջ 113, «Գիւղական խալիֆայ» տպ. անդ 1883, էջ 188. «Փռչիկ» (մանկական երգեր) 1885 էջ 32, «Հիմնարկութիւն գաւառական ուսումնարանի» (գաւառական պատկեր) տպ. 1889 էջ 224: Կ'երևի այս ալ ճիշդ 1888ին կը վախճանի կամ 1889ին, որովհետեւ «Մշակ» 1889 թիւ 18ին մէջ կը գրէ այս գրքին հրատարակութեան առթիւ եղած գրախոսականին մէջ «այդ աշխատութիւնը պարունակում է իր մէջ բազմաթիւ գեղեցիկ, կենդանի և ճիշտ նկարագրութիւններ դիւղական կեանքից, որը ինչպէս երեւում է, շատ լաւ ուսումնասիրած է եղել հանգուցեայ Երիսասարդ հեղինակը»: (Ղազկիկեան՝ «Նոր Մատենագիր» 233):

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՇԽԱՏԱԻՈՐ, գիւղացիական թերթի Հ. Յ. Գանչակցութեան էջմիածնի շրջան, կոմիտէի օրգան (Եսորեայ): Տպ. էջմիածին 1919: Սմբագիր Գ. Բեալաշեան:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՇԽԱՐՀ s. Այրարատ:

ԱՐԱՐԱՏԵԱՆ Առաքել վարժապետ, աշակերտ Վաղարշապատեցի Յովհաննէս քհ. Մարտիրոսեանի: Այս երրորդ Արարատեանն ալ ժամանակակից է վերիններուն ու ապրած Թիֆլիսի մէջ, յայտնի գիտնական ուսուցիչ մը եղած է, որուն կենսագրութիւնը դժբախտաբար չեն արձանագրած ժամանակակից թերթերը: Առաջին գործը լոյս ընծայած է 1858ին հետեւեալ ձևկառով «Դիմագր-

քաւ ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական նախամայր մաքուր լեզուիս Հայոց»: Գործ Առաքել վարժապետի Արարատեան. . . ծախսէք նուիրանաց Ազնուական, Աստիճանաւոր և Ասպետ պարոն Արիքոսայ Տէր Ղուկասեանց, ի յիշատակ հոգւոյ հանգուցեայ Աւագ քհ. Տէր Յարութիւնեան հօր իւրոյ: Ի Տիֆլիս, ի տպ. Ներսիսեան Հոգեւոր Դպրոցի Հայոց ընծայելոյ Ազնուական Աղայ Գէորգայ Արծրունւոյ 1858», 110 էջ:

ձուխաղ պարբերականը 1859ի (էջ 256) գրքիս մասին գրած ատեն «քաջուսումն և հանճարամիտ հեղինակ» կը կոչէ Արարատեան վարժապետը:

Նոյն տարին միևնոյն Ասպետ Ալեքսայի նուիրական ծախքով լոյս ընծայած է «Մխալանք վարդապետարանին կրօնի» 100 էջնոց գիրքը, որ քննադատութիւն մըն է Ստ. Նազարեանցի վարդապետարան կրօնի գործին:

1959ին լոյս կ'ընծայէ «Համառօտ վարք և գրաւոր գործք Տեառն Յովհաննու աւագ քահ. Մարտիրոսեան Ոսկերչեանց Վաղարշապատեցւոյ»:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ հաստատուած ի 15 Ապրիլ, 1876, որուն նպատակն եղած է զարկ տալ «ազգային դպրոցներու զարգացման», իր տեղեկագիրները հրատարակած է 1877-9, «Հիմնական կանոնագիր և ներքին կանոնագիր»ն ալ՝ 1877ին: «Արարատեան Ընկերութեան հիմնադիրներն էին, կը գրէ Ա. Ալոյսյանեան, Օրթագիւղցի 4—5 խանդավառ երիտասարդներ՝ Արփիար Արփիարեան, Զարեհ Շիշմանեան, Պետրոս Վասիլեան, Յովհաննէս Երլաբղեան և Մկրտիչ Փորթուկալեան: Արարատեանի սկզբնական նպատակն էր Կ. Պոլիս գտնուող գաւառացի տղոց ուսում և արուեստ սորվեցնել, սակայն յետոյ նկատելով որ Կ. Պոլսոյ մէջ ուսում առնողներէն շատեր կը դժկամակին գաւառ գառնալ, որոշուեցաւ տեղւոյն վրայ գաւառացի տղոց ուսում տալ և Վանայ Ալիւր գիւղի մէջ Փորթուկալեանի տեսչութեամբ բացուեցաւ առաջին վարժարանը» («Հայ Կեսարիա» էջ 1257):

ԱՐԱՐԱՏԵԱՆ ԳՈՒԼԷՃ ի Գահիրէ հաստատուած կէօզիւպէօյիւքեան Բիւզանդէ (տե՛ս):

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՈՐԲԱՆՈՅ կաղմակերպուած Գահիրէի մէջ 1919ին, որուն աջակիցներէն գլխաւորն եղած է Բարսեղ Պալըզեան:

ԱՐԱՐԱՏԵԱՆ Յարութիւն, Վաղարշապատեցի, որուն կեանքը ուսերէնէ ի հայ թարգմանած է Պ(երծ) Պ(ոսչեանց) 1892ին և տպած Թիֆլիս (ԺԲ + 254 էջ): Ս. ստորագրութեամբ ոմն՝ գրած է «Յարութիւն Արարատեանի կեղծիքը»: (Ղազկիկեան՝ «Նոր Մատենագիր» 234):

ԱՐԱՐԱՏԵԱՆ Յովհաննէս «Մայրենի լեզու»-ն գրած է, որուն Բ. տպ.ը եղած է 1920ին Ալեքսանտրապոլ:

ԱՐԱՐԱՏԵԱՆ Սարգիս, յայտնի հասարակական գործիչ և քիմիագէտ, ծնած է Նուխի (Կովկաս), 1884 Հոկտ. 1ին, իր նախնական ուսումը ստացած է նախ տեղւոյն Հայոց ծխական վարժարանը, ապա ուսական քաղաքային դպրոցը: Իր քննութիւնը տուած է սպայից վարժարան մանկու համար Թիֆլիսի պետական կրթնագիտոնին մէջ ու ապա Ներսիսեան վարժարանին մէջ տուած է աւարտականի քննութիւն: Անցած է ժընեւ և աւարտելով բնական գիտութեանց համալսարանը՝ վկայուած է իրր գիտութեանց տոքթոր՝ մասնագիտութիւն ունենալով քիմիագիտութիւնը:



ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ

Պաշտօնավարած է նաւթային ընկերութեանց մօտ իրր տնօրէն և նաւթի արդիւնաբերական ընկերութեանց խորհուրդի կողմէ նշանակուած է ներկայացուցիչ, իրր քիմիագէտ, պետական թէքնիք ընկերութեան մօտ:

1903 թուականին յարած է Հ. Յ. Գաշնակցութեան և եկեղեցական կալուածներու զրաւման ընթացքին անդամակցած է Նուխի շրջանի բողոք կաղմակերպող յանձնախումբին, Հայ-թաթարական կռիւներուն ատեն նսյն շրջանը կաղմակերպուած ժողովրդական ինքնապաշտպանութեան գործին մէջ ստանձնած է ղեկավարի դերը:

Ընդհ. պատերազմի ընթացքին մասնակցած է կամաւորական շարժման ղեկավարութեան՝ նախ իրր Կեղր. Յանձնաժողովի ներկայացուցիչ Քեռիի բանակին ու Վան արշաւող Արարատեան բանակին մէջ՝ կեդրոնական շտապի անդամ: Այս բանակին հետ մտած է Վան: Վանի նահանջէն յետոյ ոռւս կառավարութեան կողմէ, իրր մասնագէտ, հրաւիրուած է Պաքուի Ռաղմա-արգիւնարբրական կոմիտէին բացած պատերազմ. քիմիական արտադրութեանց գործարանի փոխտնօրէն և քիմիական բաժնի տնօրէն: Այս գործարանը Անդրկովկասի մէջ առաջին տեղը կը գրաւէր:

1917ի ոռւսական յեղափոխութեան ընթացքին և անկէ յետոյ ունեցած է ամենայայն ակտիւ գործունէութիւն հայ զանգուածներու և Հ. Յ. Գաշնակցութեան կաղմակերպութեան գործին մէջ՝ Պաքուի շրջանը: Պաքուի հերոսամարտին մէջ Ռոստոմի և Ա. Գիւլիսանտանեանի հետ ղեկավարած է ինքնապաշտպանութեան շարժումը:

Պաքուի ճակատագրական օրերուն, իրր Պաքուի Աղգ. Խորհուրդի անդամ վարած է անդրիական բանակը Պաքու հրաւիրելու գործը և Պարսկաստան երթալով յաջողած է Զօր. Տանթէրվլիի բանակը Պաքու բերել 1918 Օգոստոս 3ին, որու շնորհիւ Պաքուն կրցաւ իր ինքնապաշտպանութիւնը շարունակել մինչև Սեպտ. 15:

Եղած է լիազօր ներկայացուցիչ Պաքուի Աղգ. Խորհուրդին՝ Թէհրանի մէջ՝ պարսիկ կառավարութեան և Գաշնակից կառավարութեանց դեսպանատանց մօտ: Իսկ Հայաստանի Հանրապետական կառավարութեան կողմէ, 1919ին, նշանակուած է Պարսկաստանի առաջին հայ դեսպան, բայց մերժելով վերադարձած է Հայաստան: Հայաստանի մէջ յաջողաբար ստանձնած է ելմտական, առևտրոսարդիւնարբրական, պարենաւորման և վերջին ճակատագրական շրջանին ներքին գործերու նախարարութիւնները:

Հայաստանի խորհրդայնացումէն յետոյ անցած է Պոլիս, Բարիզ, Լոնտոն, կրկին Պոլիս և անկէ 1922ին Պուքրէշ, ուր ցարդ կը զբաղի իր մասնագիտութիւնով:

Արարատեան հանրային գործերու մէջ մասնակցած է աղգ. համազումարներու և աշքի ինկնոց աղգ. և կուսակցական բոլոր ձեռնարկներուն: Թուամանիոյ մէջ զանազան բեմերէ կատարած է բաղմաթիւ բանախօսութիւններ հասարակական ու քաղաքական նիւթերու վրայ՝ յոգնախոռոն բաղմութեանց առաջ:

Գրական մարդի մէջ Արարատեան աշխատակցած է «Ազատամարտ»ի, «Հօրիզոն»ի, խմբագրած է Թաւրիզի «Առաւօտ»ը, Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան օրկան «Ուսանող» պարբերականը, Պաքուի «Արև»ը: Աշխատակցած է նաև արտասահմանեան զանազան պարբերաթերթերու:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՍԵՐՈՎԷՔ Պ. միաբան Սրբոյ Էջմիածնի, գրած է «Համազօր բարոյագիտութեան» մը 213 էջով, տպ. ի Վաղարշապատ 1885ին:

ԱՐԱՐՎ, հին գղ. Գողթն դռ. ի մէջ:

ԱՐԱՐԵՆՅ, գղ. Աղթամարայ, 1890ին գեղիս դպրոցը 24 մանչ կ'ուսանէին:

ԱՐԱՐՈՒՅ ՎԱՆՔ, կը գտնուի Վասպուրա-

կանի Արարք գոյին մօտ, ձուլայ գո.ի մէջ, սա Մազարդայ Ս. Ստեփանոսի վանքին թեմերէն էր. սահմանուած Մեծն Ներսէսէ (Դ. դար):

ԱՐԱՐՏԱԿ, լեռ կը յիշուի Ստեփանոս Ասողիկ պատմչէն, կը կարծուի որ Բասեն գո.ի մէջ կը գտնուի: Յուստինիանոս կայսրը երբ բազմաթիւ զօրքերով Հայաստան եկաւ՝ իր զօրքերը այս լեռան ստորոտը երեք մասերու բաժնեց:

ԱՐԱՐՔ, հին և երեւելի գղ. Վասպուրականի ձուլայ գո.ի մէջ:

ԱՐԱՒԱԳԵՏ, կը յիշուի Սիւնեաց Բաղք գո.ի մէջ:

ԱՐԱՒԻՍ կամ Արաւետակ, հայանուն բայց այլազգարնակ գղ. Երնջակ գո.ի մէջ: Կայ եւ համանուն վտակ մը:

ԱՐԱՒԻՍԱՐԱԿՔ, հին գղ. Սիւնեաց Սոգք գո.ի մէջ:

ԱՐԱՒՍԵԱԿ Տ. ԱՐԱՒԻՍ:

ԱՐԱՒՐԱԿ Տ. Արօրակ:

ԱՐԱՔՍ Տ. Երասխ:

ԱՐԱՔՍ, «պատկերազարդ հանգէս, զրական և զեղարուստական (վեցամսեայ)» խմբագիր հրատարակիչ՝ Սիմոն Գուլամիրեանց, տպ. Պետերբուրգ 1887—1898:

ԱՐԱՔՍ, շարաթաթերթ, ազգային, զրական և քաղաքական, խմբագիր Վ. Շահէնի (Յովհ. Յակոբեան), 1905—6 Պոստոն և 1907ին Նեւ Եօրք հրատարակուած:

ԱՐԱՔՍ, շարաթաթերթ լոյս տեսած Պա. քրէշի մէջ 1915ին խմբագրութեամբ Լ. Լանխի: Լոյս տեսած 5 թիւ միայն:

ԱՐԱՔՍ, կիսամսեայ անկախ թերթ, Տէր և տնօրէն՝ Մ. Ն. Մոստիճեան, տպ. Լառնաքա (Կիպրոս) 1924—8:

ԱՐԱՔՍ, անկախ հայաթերթ, խմբագիր՝ Արամ Ստեփանեան, տպ. Աղեքսանդրիա, ի սկզբան փոքրազիր, յետոյ մեծազիր: Լոյս կը տեսնէ 1925էն ի վեր: Հասցէն է rue Mahmoud pacha el-Falaki, Alexandrie (Egypte):

ԱՐԱՔՍ, Թրաթերթ, տպ. Սոֆիա 1926—1930 (գաշնակցական) խմբագիրներ՝ Յ. Տէվէճեան, Գ. Փիլիպպոսեան, միջոց մը՝ Յ. Մուրատեան, տպա Օն. Մխիթարեան (Ն. Գասապեան Բազմ. 1937 էջ 204):

ԱՐԱՔՍ, զրագիտուհի Ս. Հայաստանի (Երեւանի մէջ):

ԱՐԱՔՍԵԱՆ Ասխէն, վաստակաւոր գերաստուհի Ս. Հայաստանի (Երեւան) մէջ:

ԱՐԱՔՍՄԱՆ Ալեքսանդր, 1937ին Երեւանի Ժիւրիէն Գ. մրցանակ կը շահի իր գրած «Էմմանուէլ» թատերախաղին համար:

ԱՐԲԱԿ, Հայկազն Նահապետ (1612—1568 Ն. ք. Բ.):

ԱՐԲԵՆՈՒՏ կամ Արբենուտ, բարեհամազրիւր Բարձր Հայոց մէջ:

ԱՐԲԵՐԳ Տ. Յարբերգ:

ԱՐԳԱԲ Տ. Կովսական:

ԱՐԳԱԼԷՍՈՆ, հին գղ. Չորրորդ Հայոց Խորձայն գո.ի մէջ, զոր Յուստինիանոս կայսրը ամուր պարիսպով պատել տալով՝ բերդ ըրաւ և մէջը զօրքեր դրաւ:

ԱՐԳԱՃԻՆ կամ Արգիճի, հին գղ. Կեղարքունեաց, որուն համապատասխանող կը համարուի Այրիճէ գիւղը:

ԱՐԳԱՍԻՔ. զրական, գիտական, հասարակական թերթ, տպ. Թիֆլիս 1906 (1 համար): Խմբ. հրտ. Ալեքսանդր Պարզեանց:

ԱՐԳԱՍՈՎԻՏ, մին Մոկաց աշխարհի հին գաւառներէն Գաւառիս անունը գրուած է նաև Չարդարեաց Ովիտ:

ԱՐԳԱՒԱՆԻ, կիսաշարաթաթերթ, տպ. Վառնա 1905. խմբագիր՝ Տ. Էլմասեան: (Վերջին 17րդ թիւը Ռուսձուք լոյս տեսած է, կը գրէ Ն. Գասապեան):

ԱՐԳԵԱՁ Տ. Արկազ:

ԱՐԳԵԼ, հայարնակ գղ. Այրարատայ Կոտայք գո.ի 1900ին 500 բնակիչ ունէր:

ԱՐԳԵԼԱՆ Ա. ԱՍՏՈՒԱՄԱՄԻՎՆԻ վանք տե՛ս Տէր Յուսկան որդի վանք:

ԱՐԳԷՈՍ, Առգեոս, Արգիդոս, Արհիաս, Էրնիաս, ձեպելի, Էրնասիպ Արմիաս, լեռ Առաջին Հայքի մէջ Կեսարիոյ մօտ: Լեռս անուանի է թէ՛ հին և թէ՛ նոր պատմութեան մէջ. աշխարհիս ամենամեծ լեռներէն մին կրնայ համարուիլ, լայնանիստ է և բարձր. գագաթը միշտ ծածկուած է ձիւնով, որ իրրև սպիտակ գլխարկ մը կ'երևի երկու երեք օրուան ճանապարհ հեռուէն: Օգոստոս ամսոյ մէջ անգամ հին ձիւն կու գայ: Ունի ազրիւր մը, որոյ ջրոյն ատողջարարութիւնն և պտուղականութիւնն հռչակուած է, իբրանս վրայ կը գտնուին արջ, գայլ և ուրիշ կենդանիներ: Ստորոտները կան ցիր ու ցան հին կամարակապ շինուածոց աւերակներ, և փոքրիկ քարակոփ այր մը, յորում կը գտնուին մարդկանց ոսկորոտիք, և կը կարծուի որ գերեզմանապեղի եղած լինիլ Լերանս մօտ կը դնեն հրեանազէտք նաև հին Կեսարիոյ աւերակները: (Նոր Հայք 310 էջ):

ԱՐԳԷՈՍ (Argaeus) Փոքր Ասիոյ ամենաբարձր լեռն է, ծովու մակերեսէն 3840 (կամ ըստ Cooperի 3993 մ.) բարձրութիւն ունի:

Մեծահռչակ յոյն պատմաբան և աշխարհագիր Ստրաբոն՝ անձամբ կեսարիա ձամբորդած և այցելած է Արգէոսը, և իր Աշխարհագրութեան մէջ կը խօսի անոր մասին և կ'ըսէ թէ հրաբխային մարած լեռ մ'է. տեղ տեղ այրած և խորացած են. շրջակայ ստորոտը անտառային վայրի ծառերով զարդարուն մինչև իսկ անոր զազաթը կլլոզ մօրդիկ կը հաւաստեն թէ օլը պայծառ և խաղաղ եղած ատեն Արգէոսի բարձրունքին արևելեան կողմէն կը դիտուի Պոնտոսը, իսկ արևմտեան կողմէն՝ Սպիտակ Ծովը:

Արգէոսի հարաւային արևելեան կողմերը գրեթէ գետերու և յորգառատ ջրերու ամբարներ են, նամանաւանդ Գօրամաղէն բղխող Սարմուսաքլը ջուրը-Քէստէլէն, որոնք կեսարական դաշտերը ոռոգելէ յետոյ կը մտնեն Սուլլբան Սազը կոչուած կնիւններուն մէջը, և անկէ 10 քիլոմէթր վարէն անագին գետակ մը կազմելով Պօղազ Քէօրրիւէն կ'անցնի Գաբասու (Melas) Թէլլաս անուամբ, և 15 քիլոմէթր ոռոգելէ հետք կը թափի Թէք-Կէօզիւ կամուրջին մօտ Այիս գետը, որ օձապտոյտ կ'ընթանայ դէպի Սև Ծով 1000 քիլոմէթր: (ձիվան Յ Աւրգեան՝ Գաբամանեանի Գրպանի Տարեցոյց 1934 էջ 168. տես նաև աւելի քննարկակ սեղեկութիւն Ալպոյանեանի «Հայ Կեսարիա»):

ԱՐԳԷՈՍ Բարձրագոյն վարժարան, = Էրճրաս վրժ. = Հայ Բողոքականաց բարձրագոյն վրժ. Կեսարիոյ մէջ, հիմնուած 1883ին՝ նիւթական նպաստովը Կարապետ Թէլլիքեանի և այլ բարեկեցիկ ըողոքականներու՝ Վարժարանին հիմնադիրն եղած է Հայկազուն Յազուպեան: (Ալպ. «Հայ Կեսարիա» 1130):

ԱՐԳԷՈՍ, պաշտօնաթերթ Զօմախյուրի Հայրենկց. Միութեան, նիւ Եօրք. 1932. կը շարունակուի (Ն. Գասապ. «Բազմավեպ» 1937 էջ 204):

ԱՐԳԻԼԻ, հին գղ. Գեղարքունիի մէջ, կը համապատարխանէ Այրիներ:

ԱՐԳԻՆԱ կամ Երզնիա. երբեմն անուանի գիւղաքաղաք Այրարատայ Շիրակ գո.ի, այժմ փոքրիկ տաճկարնակ գիւղ Կարուց, Ախուրեանի ձախակողմը: Մատթէոս Ուռհայեցի Մեծ Արգինա կ'անուանէ գիւղս, անշուշտ մէջը գտնուած վանքին և վարդապետարանին համար: Գիւղս Զ. դարէն, Կամսարականաց ժամանակ նշանաւոր եղած է իր ընդարձակ և ամուր բերդով: 603ին՝ Յոյն-պարսիկ պատերազմի ատեն՝ Յոյները շատ նպաստաւորութեան բերդէս և յաղթանակ տարին, բայց ի վերջոյ Պարսիկները բերդին վրայ յարձակեցան. տիրեցին և կոտորեցին:

Իններորդ դարուն, Բագրատունեաց ոստանը Հայ Հանրագիտակ — 17*

Շիրակաւան հաստատուած միջոց՝ հոս Արգինայի մեծ վանքը փոխադրուած է նաև կաթողիկոսական աթոռը, և անկից ետք գրեթէ դար մը մինչև Անի փոխադրուած ժամանակ՝ Նիս Կաթողիկոսաց կոչուած է: Ժ. զարուն Անանիա Մոկացի կթղ.ը կը թուի թէ հոս շինութիւններ ըրած է, ուր և թաղուած է իր մարմինը: Ասոր քրոջ որդին Սաչիկ Ա. կթղ. (972—990), բաց Ստեփան



Արգինայի վանքին աւերակները

հոս Ասողկայ (Գ. Թ.) «նորոգեաց դառն կաթողիկոսարանին ի Շիրակ գո.ի, ի դիւղաքաղաքին Արգինայ, յեղերս Ախուրեան գետոյ, ի հանգրստարանի Տեան Անանիայի՝ Հայոց վերադիտողի, և ի նմին գիւղ շինեաց զկաթողիկէ եկեղեցին վիմարդեան կոփածոյիւք, հաստահեղոյս արձանօք... հանգերձ երեք եկեղեցեօք նոյնաձև հրաշատեսիլ չքնազագեղ յօրինուածովք. և զարդարեաց մեծապայծառ ծիւղանաղիկ տնկուածովք, և զարդ ոսկոյ և արծաթոյ, և ամենազարդ պայծառութեամբ ջահարորոք լուսաւոր անօթոյ: Այլ եւ զաստուածախօս կտակս յոլովակի ստացեալ զգիրս սուրբ... հանգերձ ամենայն վարդապետացն ձայնիւք»: Հայոց մեծ ճարտարապետն Տրդատ կառոյց այս հրաշատեսիլ կաթողիկէն, Անուոյ մայր եկեղեցիէն առաջ: Սաչիկ կթղ. վախճանելով 990ին, կը թաղին եկեղեցոյս հիւսիսային կողմը, իրեն յատուկ հանգստարանին մէջ, կաթողիկոսական աթոռոյն ասկէ վերնայն վերջ ևս, Արգինա իր վանքովն ու վարդապետներով, քանի որ երկիրը չէն էր, միշտ անուանի եղաւ. բաց Ստեփանոս Ասողկայ վանքիս մէջ ուսած է հանճարեղ «Տէր Ներսէս ի Բագրեւանդ գաւառէ՝ իշխան Հայոց» Արգինայի վանքը կործանուած է ներկայիս, միայն կաթողիկէին հիւսիսային սրմն եւ արևմտակողման կէս մասը կանգուն մնացած է:

Արևմտեան դրան վրայի արձանագրութիւնը բոլորովին խանգարուած է. կրնամարուի շինութեան թուականը ՆԿԱ (= 1012) և շինողի անունը... Բեռնոզի Սաչկայ կաթողիկոսի: Գիւղիս արևմտակողմը ձորին մէջ կը տեսնուին աւեր

բակաց քարակոյտներ, և սեպացած բլրոց կղերքը ամբողջի աւերակներ: Կաթողիկոսարանին և ոչ հետքը կը նշմարուէ: (Էփրիկեան՝ «Բնագիր», Հ. Ալիսանի «Շիրակ»-էն քաղուած):

ԱՐԿՈՒԼԻՔ Տ. Ագուլիս:

ԱՐԿԱՆ կամ Արգաւ, սակաւածանօթ գիւղ Սիւնեաց ձառուկ գ. ի, ըստ Հ. Ալիշանի գիւղս կը համապատասխանէ Որդո՛ գիւղի: Միարանողս ժամանակ (ԺԳ.ԺԳ դարուն) 30 տուն բնակիչ ունէր:

ԱՐԿԱԿ Տ. Անդակ:

ԱՍԻԱՐԱՄԱՐՏ. օրաթերթ, (Հ. Յ. Դաշնակցութեան) տպ. Կ. Պոլիս (չարունակութիւն «Ճակատամարտ»-ի). խմբ. Շ. Միսաքեան, տպա Յ. Ճ. Սիրունի:

ԱՐԿԱՐԵԱՆ Գարեգին, (Սեփան), դերասան 1883—57 կատակախօս:

ԱՐԿԱՐՈՒԹԵԱՆ ՁԱՅՆ, «չարաթաթերթ», ազգային, զրական, և քաղաքական Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան». տպ. Պոստոն 1919—20:

ԱՐԿԱՒԱՍԻԿ կամ Արսաւազիկ հին մատուռ՝ Արագածոտն գ. ի մէջ, Ջ. վշտիկ վտակի մօտ, կործանուած 1840ին՝ ջրոյ հեղեղներէ:

ԱՐԿԵԱՆՏ Տ Ընչին:

ԱՐԿԵՐԹ. հայարնակ գիւղ Տարօն գ. ի, Մշոյ արեւելյան-հիւսիսակողմը, բն. 100 տնուորէն աւելի էին 1900ին:

ԱՐԿԻ, շարաթաթերթ, լոյս տեսած է Երզնկա 1909—1911ին:

ԱՏԿԵՆԻ. գղ. Մշոյ, 160 տուն բնակիչ ունէր: ԱՐԿԻԿ կամ Արքիկ. բազմամարդ հայարնակ գղ. Շիրակի մէջ, Հառիճոյ վանքի մօտ. բն. 1900ին 2700, գաղթած են Կարսէն ու Կարսէն: Ունի երկու հնաչէն զեղեցիկ եկեղեցիներ. մին մեծ՝ Ս. Գրիգոր, խաչաձև, կիսաբոլոր թեւերով, անսիւն է և գմբէթը ինկած: Միւս եկեղեցին Ս. Յարութիւն, այս ևս անսիւն: Ունի վայելուչ ուսումնարան մը: Արդի Արդիկը տն՝ս ԱՐԹԻԿ անուան տակ:

ԱՐԿԻՍ ՈՒՊԱՆԻ, հայարնակ գղ. Գուգարաց Ձորոփոր (Տփղիսու վիճակ) գ. ի մէջ: Բնակչիք՝ (1900)ին 192. բաժնուած 25 տուն:

ԱՐԿԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՅԻՍ, «Որգան Հայանարկոսպի, Կուսկորյուրոյի յեվ վարչութեան (Հնգօրյա թերթ)»: Ապա «Հայտնարկոսպի Անտա Միութեան, վարչութեան յեվ Արդկոսպի Կուս. կազմակերպութեան». Տպ. Յերեման 1931-1934. խմբ. Յ. Կոթողեան, յետոյ Յովհ. Յարթեան:

ԱՐԿԿԱՅ կամ Արդական, գղ. Չմշկածագի, ուր 1900ին սակաւաթիւ հայեր կային առանց եկեղեցիի և դպրոցի:

ԱՐԿՂԱՆ կամ Արքրխան, գղ. Բալուի. 60 տ. հայ կար և ունէր եկղ. մը Ս. Մինաս անուամբ. մօտն է Ս. Թովմաս աւերակ եկեղեցի մը:

ԱՐԿՈՒԱՐԿ Իշխան կամ կուսակալ Հայոց (317-284 ն. ք. Ք.):

ԱՐԿՈՒԻ, գղ. հինաւուրց և նշանաւոր, Գուգարաց Տաշիր գ. ի Օձուն գղ. ի մօտ, բն. 180, գիւղիս անունը կանխաւ Մելիք-գիւղ (Մելիք-Բեանդ) եղած է. Յովհան Օձնեցի կթղ. այս գիւղին մօտ եկեղեցի մը շիներ ու ճգներ է: Վանքս որ ներկայիս Արդուիէն երկու վերստ հեռի է, ո՛չ կալուած ունի, ո՛չ կրօնաւոր, միայն երեսփոխան մ' ունի. Կարմիր Կիրակին ուխտի կու գան Հոս է Յովհան Օձնեցոյ դամբարանը: Արդուի գիւղը միշտ կառավարեր են Օձնեցիի տոհմին շառաւիղները, որոնց մի մասը Մելիք, միւսը Քալանքար տիպոսը գործածեր են Տեղացիները գաղթած են Արդուին, որոնք յետոյ Լօռու-Մելիքներ և Լօռու-Քալանքարներ կը կոչուէին: (Էփրիկեան՝ «Բնագիր» 1900ին, քաղուած Զալալեանցի ձեպրեւիցէն Ա. 103—4 եւ այլն):

ԱՐԿՈՒԻՆ, գիւսաւոր հայաշատ քաղաք համանուն գ. ի Քուխալիսի նահանգին մէջ, ձորոխ գետի ձախակողմը: Քաղաքին շատ օգտակար է բազմաջուր ձորոխ գետը, որուն վրայ ձգուած է զեղեցիկ բարձր և միակտուր կամուրջ մը:

Արդուին 1900ին ունէր մօտ 1400 տուն եւ բնակչաց թիւը 6000ը կ'անցնէր: Ամէնէն բազմաթիւ էին Հայերը՝ երկու հասարակութեանց (յուսաւորչական և կաթողիկ) բաժնուած: Կաթողիկէ Հայերը 5000էն աւելի էին, որոնք երբեմն ունէին եպիսկոպոս: Ունէին հետեւեալ չորս եկեղեցիները, Ս. Աստուածածին, Պողոս-Պետրոս, Գրիգոր Լուսաւորիչ և Ս. Սաշ: Գիւսաւոր ուսումնարանը կը գտնուէր Միջնաքաղաքին մէջ, ուր կը գտնուէր Մայր եկեղեցին: Միւս եկեղեցիներուն մօտ ալ կային դպրոցներ: Լուսաւորչական Հայք 1900ին 250 տուն էին և Ս. Աստուածածնայ անուամբ եկեղեցի մը և դպրոց ունէին: (Էփրիկեան՝ «Բնագիր»-ից, «Բազմակէպ» 1889. էջ 392—395 եւ այլն):

ԱՐԿՈՒԻՆ, գաւառ, ունի 6 հայարնակ գիւղեր, Տանձն, Նորաշեն, Մարլէ, Մամանէլիս, Փխիկուր եւ Օֆօբակէք:

ԱՐԿՍԻՎԱՆ, գղ. Գուգարաց Թոնգք գ. ի մէջ: ԱՐԵԱՆ ԵՐՈՒԱՆԳ (1891—1931) (Գասպարեան Ե.) նկարիչ, ծնած 1891ին Սերաստիոյ մէջ. մինչդեռ ծնողքը ուղած էր զինքը արհեստի պատրաստել՝ Երուանդ դպրոցական դրասեղանին վերայ կը սիրահարուէ նկարչութեան, հակառակ մօրը բաղձանքին, այնպէս որ մայրը ըսած է իրեն վրդովուած — «Չհասնիս մութրատիդ»: «Ամբողջ կեանքս ապրած եմ մօրս անէծքին տակ»

ըսած է ստէպ հէզ արուեստագէտը: Սանժմանա-
դրական սկզբնական տարիներուն կը յաճախէ
Երուանդ Պոլոյ գեղարուեստական վարժարանը,
ու պատերազմը գինքը անսկնկալի կը բերէ. կը
փախչի Պոլսէն և կ'իյնայ Կիպրոս:

Պահ մը Եգիպտոս կ'անցնի և Գահիրէի Գա-
լուսեան վարժարա-
նին մէջ կը դասախո-
սէ, Պատերազմէն ետք
Գերմանիա կ'երթայ:
«Գերմանիան իր են
տուած է, կը դրէ Փ.
Սանասար (Կեանք եւ
Արուեստ 1933 էջ 72)
ներչնչումը քանի մը
պարզ բնակարանե-
րու՝ քաղուած Պալ-
թիկեան ափերէն, ձիւ-
նապատ դաշտօրանե-
րու բարի հանդարտու-
թիւնը ջանացած է
զնել այդ փոքրիկ
պատաններուն վրայ,
ուր իր նկարչական վրձինը կը յայտնուի տա-
կաւին զողոջուէն և վարանոտ:



Պոնեմուհին

«Ու այնուհետև կը նետուի ֆրանսա, թէև
քայքայուած՝ բայց քանի մը լուրջ աշխատու-
թիւններով, յաջող դիմանկարներով կը մաս-
նակցի Բարիզի Անկախներու ցուցահանդէսին
(1926ին և 1927ին): «Իրեն նիւթ ընտրած է ա-
ռուելիապէս աւելեան, հայեցի տիպարներ, իրենց
մթնոլորտին գոյներով, իրենց ինքնայատուկ ար-
տայայտութեամբ կենդանացած, իրմէն կը մնան
այսօր աւելի քան տասնեակ մը կտաւներ, ու-
րոնցմէ յաջողակները կը նկատուին՝ Հայ պա-
ռուր, Կովկասեան բառիսք. Արեւելի ծաղիկը,
Պոնեմուհին և այլն:

«Արեանի մէջ երբեմն ինքնամոտացման պա-
հերուն, կը թլթոար աշուղական լար մը, որմէ
կը ծորէին պարզ, միամիտ, անյաւակնոտ տողեր:
Կը մտածէր անցնիլ Երկիր, գէթ նկարները նը-
ւիրել հայրենիքին, բայց ահա գնաց, կարօտը
աչքին, զեւ չըսած իր վերջին բառը, վերջին ե-
րանգը»:

Երրտասարդ նկարիչը՝ որ ենթակայ էր սիրտի
և թոքերու հիւանդութեանց, 1931ի Դեկտեմ-
բերին մեռաւ Բարիզի Շառիքի հիւանդանոցին
մէջ:

ԱՐԵԱՆ ԼԻՃ, կը յիշուի թ. Արծրունիէն, Կոր-
ճէից Որսիբանք գա.ի մէջ:

ԱՐԵՐԱՆՈՒ Տ. Արեւիքացու:
ԱՐԵՔ Տ. Փիլմալախ (Ս. Հայաստանի մէջ):
ԱՐԵՔ, «գրական հասարակական, քաղաքա-
կան օրաթերթ», խմբագիր հրատարակիչ Եր-
ուանդ Արքայեան, լոյս տեսած է Բագու 1915ին՝
միայն 1—57 թիւ Հրատարակուած է նաև Արեգ
յաւելուած 1—6:

ԱՐԵՔ, գրական-գիտական ամսագիր (այս
երկարամթերթ). խմբագիր՝ Սիմոն Յակոբեան,
1922ին տպ. Վիեննա (թիւ 1—12), 1923ին՝ Պեր-
լին (թ. 1—11), 1924ին կրկին Վիեննա (թիւ 1-18):

ԱՐԵՔ, անկախ շարաթաթերթ, տպ. Մարտէյ
1932—3 խմբ. Տոքթ Խաչիկեան:

ԱՐԵՔԱԿ. «հանդէս ուսումնական և արուես-
տական շարաթաթերթ» խմբագիր՝ Մ. Ե. Բար-
սեղեան, տպ. Կ. Պոլիս 1880:

ԱՐԵՔԱԿ, շարաթաթերթ, ազգային և քաղա-
քական, խմբագիր՝ Հ(այկ) Էլիենեան, տպ. Ընդդի
Սիթի Վեստ Հոպքըն (Միացեալ Նահանգներ):

ԱՐԵՔԱԿՆԱԾԱՔ, բլուր Տարօն գա.ի, Տաւրոսի
ստորաբ. որուն վրայ կը գտնուի Առաքելոց
կամ Ղազարու վանքը:

ԱՐԵՔԳԷՄ, գիւղակ Խոտըջրոյ:

ԱՐԵՔԳԷՄ, կը յիշուի Սասնոյ մէջ:

ԱՐԵՔԻ, գղ. կամ թաղ Ակնայ, ունի Ս. Լու-
սաւորիչ մատուռ մը, բնակիչք՝ հայ էին:

ԱՐԵՔԻՆ տե՛ս Ալապաւ (գղ. Զէյթունի), որուն
չըջակայքը կը գտնուէին 45 ազարակներ, ուր
300 տուն հայ բնակիչ կար:

ԱՐԵՔԻՆ, գղ. Սոկայց Սպարկերա վիճակի,
1900ին ունէր 100 տուն բնակիչ: Կը կարծուի
թէ նոյն է Սպարկերաի մէջ յիշուած Արաղլի գիւ-
ղին հետ:

ԱՐԵՔՆԻ ՎԱՆՔ, համանուն գիւղին մօտ, որ
կը կոչուի նաև Ալապաւ: Կապանի արքեպիսկո-
պոսական աթոռը հոս էր: Ս եծն Լեոնի օծման
հանդէսին ներկայ եղող 14 եպիսկոպոսներէն երկ-
րորդը Արեգնի եպիսկոպոսն էր:

ԱՐԵՔՈՒՆԻ կամ Արագունի, (= Կիւնէիք) վի-
ճակ Սիւննաց Գեղարքունի կամ աւելի Սոդք
գա.ի, ունի հայաբնակ գիւղեր: (Ալիւան՝ «Աի-
սական էջ 76):

ԱՐԵՆԻ կամ Յարենի, գղ. կը յիշուի Առաքել
պատմիչէն (ԻԱ). Արագածոտն գա.ի մէջ. Կար-
բի մօտ, որ արդէն պատմչին օրով աւերակ էր:
Այս գիւղին մէջ ծնած էր Ժէ. դարուն սկիզբ-
ները՝ Սաղմոսավանքին առաջնորդ Սարգիս եպ.:

ԱՐԵՆՅ կամ Յարենց, գղ. Սոկայց գաւառակի,
բն. 100էն աւելի, եկղ. Ս. Աստուածածին, քա-
րաչէն:

ԱՐԵՆԻ, «օրաթերթ ազգային, գրական և քաղաքական լոյս տեսած 1907ին (ցարդ 1938 թ. կը շարունակուի), խմբագիր 1907—8՝ Ե. Օտեան, երբ Գահրիէ կը տպուէր, 1915—1924 Աղեքսանդրիա կը փոխադրուի, 1915—20 խմբ. Վահան Թէքէեան», 1922էն «պաշտօնաթերթ Ռամկավար Աղատական Կուսակցութեան Եգիպտոսի շրջանակին»: 1922—27 տնօրէն խմբագրապետ՝ Յովհաննէս Յակոբեան: 1924ին կրկին Գահրիէ կը փոխադրուի: Ներկայիս «Արե»ի խմբագիրն է Յովհաննէս Պօղոսեան:

ԱՐԵՆԻ, «հասարակական, գրական լրագիր», (շաբաթը մի անգամ) լոյս տեսաւ Աղեքսանդրապոլ 1914ին, խմբագիր հրատարակիչ Գէորգ Խոյնցեան:

ԱՐԵՆԻ, «գրական, հասարակական» և քաղաքական օրաթերթ» խմբագիր՝ Ս. Թադիանոսեան, ապա Արամ Առաքելեան, լոյս կը տեսնէ Բագուի մէջ 1914—1919 ըրբև շարունակութիւն «Գործ»ի վերջին շրջաններուն Հ.Յ. Գաշակցութեան թերթ, խմբագիր Ս. Մնացականեան, ապա Սիմոն Յակոբեան:

ԱՐԵՆԻ, «գրական պատմական, պատկերադարդ յաւելուած Բագու հրատարակուող համանուն թերթին, 1915ին լոյս տեսած են թիւ 1—58, խմբ. Արամ Առաքելեան:

ԱՐԵՆԻ Ա. Կ. Վիմաթիպ պարբերաթերթ, խմբ. Տիգրան Մանուկեան, լոյս տեսաւ Պոլիս 1861ին:

ԱՐԵՆԻ ԲԱՆՈՍ կամ Արեբանոս, քղ. Աղրակ գո.ի մէջ, ըստ Յայսմաւուրաց: Մովսէս Խորենացին ևս Բարդուղիմէոս առաքելաւ յայ քաղաքին մէջ նահատակուած կը համարի:

Օտարազգի մատենագիրները Քորվանուպոլիս Մեծի Հայոց, Այվանապոլիս և Ուրվանապոլիս կը կոչեն քաղաքս: Իսկ Մովսէս Խորենացւոյ ընծայուած Տիրամօր պատկերի պատմութեան մէջ՝ Ուրբանոս: Տե՛ս Բարև:

ԱՐԵՆԻ ԱՆ Արգար, քահանայ, Եղեասցի, 1881ին դրած է «Պատմութիւն Եղեախոյ կամ Ուր քաղաքի» երկու հատոր, ընդ ամէնը 430 էջ: Իւլամները 1895 դեկտ. 17ին Հայոց կոտորածի միջոցին սպաննած են: (Հանդէս Ամսօրեայ) 1928 թ. 9—10 էջ 453):

ԱՐԵՆԻ ԱՆ Արամ, բժիշկ, փեսայ Մատթէոս Պալեօղեանի († 1902): (Այլպ. «Հայ Կեսարիա» էջ 2193):

ԱՐԵՆԻ ԱՆ Բագմայիզու վարժարան, հիմնուած Բարդիլ մէջ 1856ին Գարրիէյ վրդ. Այվազովսկիի, Հ. Սարգիս վրդ. Թէոդորեանի և Հ. Ամբրոսիոս Գայֆայեանի ջանքերով որ 1858ին Հայկազեան կոչուեցաւ:

ԱՐԵՆԻ ԱՆ Թասուն, հիմնուած ի Կ. Պոլիս 1863ին, հիմնողներն են այդ շրջանի գերասանները՝ Ստեփան Էքչեան, Արուսեակ և քոյրը Աղաւնի, Աճէմեան. Յասուլեանեան, Թրեանց ևն.:

«Արեւելեան թատրոն» Միութիւնը կը գործէ մինչև 1874, ներկայացումներ տալով Պոլիս. Իզմիր եւ այլն: (Մանրակրկիտ ուսումնասիրութիւն մը «Արեւելեան թատրոն»ի գործունէութեան մասին՝ տե՛ս Պոլսոյ Ազգ. Հիւանդանոցի Տարեցոյց 1927 էջ 170—205, գրուած Հրանդ Ասատուրէն):

ԱՐԵՆԻ ԱՆ Ուրբանոց, բացուած 1895ի Վարդերու շրջանին Պրուսա քաղաքին մէջ, ուր կ'ապաստանին Կեսարիոյ Վարդէն ազատուած որբեր:

ԱՐԵՆԻ ԱՆ ՏԵՏԱԿԱՆ Միութիւն, հաստատուած Պոլսոյ մէջ, որուն հիմնադիրներն եղած են Գէորգ Զարդարեան († 1888) և Յակոբ Արշակ: Այս շատ օգտակար և խնայողութեան գաղափարը մշակող մարմինը չկրցաւ իր նպատակը իրագործել, կառավարական արգելքներով: (Այլպ. «Հայ Կեսարիա» 2184):

ԱՐԵՆԻ ԱՆ ԳԱՐ (Կիսամսեայ) օրագիր այլաբանական. խմբագիր-տնօրէն Մ Գ. Տէյրիմէն-ճեան, տպ. Պոլիս 1860—1863:

ԱՐԵՆԻ ԱՆ ՀՆԻԿԱՅ ԼՐԱԳԻՐ, տպ. Կալկասթա, 1863—1865:

ԱՐԵՆԻ ԱՆ ՄԱՄՈՒԼ, ազգային, գրական և քաղաքական ամսագիր, խմբագիր տնօրէն Մատթէոս Մամուրեան, 1871—1901, յետոյ Հրանդ Մամուրեան, 1901—1921: 1894էն Կիսամսեայ, 1903էն շաբաթաթերթ, 1908էն եռամսեայ, 1919—1921 օրաթերթ (տե՛ս Դաւիթ):

ԱՐԵՆԻ ԱՆ ՎԿԱՅԻՔ տե՛ս Պողիկարպոս:

ԱՐԵՆԻ ԱՆ ՓՈՂ օրաթերթ, լոյս տեսած 1873ին՝ ի Կ. Պոլիս, շարունակութիւն Փոյ Արեւելեանի «Տէր լրագրոյս Կ. Երզնկանիւհան, Բարթող Սուր»: Երկու թերթերը միասին 253 թիւ լոյս տեսած են: ԱՐԵՆԻ ԱՆ Ս. Արեւիք:

ԱՐԵՆԻ ԱՆ Կիսամսեայ, տպ. Պարիս 1855—6, խմբագիր տնօրէն՝ Ստեփան Ոսկան: Շարունակութիւնը տե՛ս Արեւմուտք:

ԱՐԵՆԻ ԱՆ Օրաթերթ ազգային, խմբագրապետ Բիւղանդ Քէչեան (1884—94): Սկսած է լոյս տեսնել 1884ին: 1907էն՝ խմբ. Տօքթ. Յ. Թոփճեան. 1911էն՝ խմբ. Երուանդ Օտեան, 1913էն «Արեւելք»ը «Լուսին», «Պայքար», «Լրարեր», «Զէյթոն» անուններով լոյս կը տեսնէ: Ներկայիս (1938) նորէն «Արեւելք»:

ԱՐԵՆԻ ԱՆ «ազգային աղատական անկախ օ-

րաթերթ» (Դաշնակցական Չախ թերթ, յետոյ Ռամ-
կավարներու թերթ) տպ. Սալոնիկ 1930. 1934-
ին խմբագիր Գ. Բաղրեւանդեան: Դադրած
1937ին:

ԱՐԵԻՆԵԼՒՅ, քաղաքական, տնտեսական և գրա-
կան օրաթերթ, տպ. Կ. Պոլիս 1932—1938 (կը
չարուեակօրի) Խմբագրապետ Խորէն Ճամճեան:
ԱՐԵԻՆԵԼՒՅ, կիսամսեայ յաւելուած (համանուն
թերթի) գրականութեան և արուեստներու, տպ. Կ.
Պոլիս 1932, խմբ. Խ. Ճամճեան:

ԱՐԵԻԷՍ, հին գղ. Սիւնեաց Մզուկ գաւ.ի:
ԱՐԵԻԸՆԴԱՆ, ամբողջ Եփրատացուց երկրի մէջ,
Կուրբիս ամուր քաղաքի մօտ: Եղեսիոյ Պաղ-
տին կոմսը 1117ին տիրեց բերդիս իր շրջակայ-
քով, որոնք Բագրատ հայ իշխանին ձեռքն էին:

ԱՐԵԻՒՒՅ կամ Արեւելք, փոքրիկ գաւառ Սիւ-
նեաց աշխարհի հարաւակողմը: Սահմաններն են,
Արեւելքէն՝ Կովսական, Հիւսիսէն՝ Կապան, Ա-
րեւմուտքէն՝ Գողթն և Հարաւէն՝ Երասխ: Գըլ-
խաւոր գետն է Մեղրի, որ բաւական թուով օ-
ժանդակներ ունի:

Սիւնեաց եկեղեցւոյն հարկատուաց ցանկին
համեմատ, Արեւիք ունէր միայն 24 գիւղ: Ստե-
փանոս Օրպելիան պատմիչ կը յայտնէ, թէ իր
ժամանակ փոխանակ Արեւիքի՝ գաւառիս երկու
անուն կու տային, Դաւոս և Մեղրի, մէջը զըտ-
նուած նշանաւոր գիւղերու անուամբ: Տաթևի
թեմին վերջին ցուցակաց համեմատ գաւառս
ունի երկու վիճակ, Մանցրու և Կաքաւարբրդ,
27 գիւղերով: Դաւիթ Բէկի պատմութեան մէջ
ևս կը յիշատակուին 6 գիւղեր:

Հ. Այիշան երկու վիճակաց կը բաժնէ Արեւիք,
Մեղրաձոր և Կեանուղ: (Էփրիկ. «Բնագիտարհիկ»
հաղուած Ալիսանի «Սիւսական» էն էջ 298—308):

ԱՐԵԻՄՏԱՀԱՅ ԲԱՆԻՈՒԱ-ԳԻՒՂԱՅԻՈՒԹԻՒՆ,
Վրաստանի յեղափոխական կոմիտէի օրգան:
Տպ. Թիֆլիս 1921: Խմբագիրներ՝ Ղ. Դերենիկ-
եան, Ս. Երզնկեան. Գ. Մելոյեան:

ԱՐԵԻՄՏԱՀԱՅ ՉԱՅՆ, շաբաթաթերթ, Վրաս-
տանի Արեւմտահայ Բիւրօ: Տպ. Թիֆլիս 1921—2:
Խմբագիր՝ Ղ. Դերենիկեան:

ԱՐԵԻՈՐԳԻՒՅ, Արեւապաշտ Հայեր, որոնք Մի-
ջագետաց կողմերը կը գտնուէին և Գր. Լուսա-
ւորչայ օրէն մինչև Ներսէս Ծնորճայի անդարձ
մնացին, ինչպէս կը վկայեն Ներսէս Ծնորճաւոյ
գրած թուղթերը (Արև սրբուց՝ մասին ընդար-
ձակ ուսումնասիրութիւն գրած է Գր. Վանցեան
«Հանդէս Ամօօրեայ» ի մէջ 1896 էջ 12, 148: Տե՛ս
նաև Հ. Այիշանի «Ծնորճայի և պարագայ իւր»
զլ. ին.):

ԱՐԵԻՈՅ կամ Արեւու թուր, Տարօն գաւ.ի մէջ,
կը կոչուի նաև Աւեսեաց բլուր, հոս կը ճգնէին
Անտոն և Կրօնիդէս, Բարեհամ աղբիւրի մօտ,
որ կը կոչուէր Քաղցրահամ:

ԱՐՁՈՒ, գաւառակ Մայաթիոյ:

ԱՐՁԱՔԱՆ կամ Արգախէն, մեծ գղ. Նիդ գաւ.ի,
1900ին 1200 բն. ունէր, 900ը հայ էին, ունէին
երկու եկեղեցի Ս. Գէորգ և Ս. Ստեփանոս:
Մօտն է Ս. Ասուածամին Նեղոսի մենաստանը,
տե՛ս Նեղոսի Ս. Ասուածամին:

ԱՐՁԷՆԿԱՆ, Արգեհնան տե՛ս Երիզա:

ԱՐՁԸԱՆ (Արզուեան) Սարգիս, բժիշկ, ծնած է
Թալաս 1872ին, նախակրթութիւնը ծննդավայրը
և յետոյ Պոլիս ստանալէ ետք Նանսիի բժշկա-



Տար. Ա. ԱՐՁՈՒՆԵԱՆ

կան համալսարանը կը մտնէ, ուրկէ 1897ին բը-
ժիշկ կը վկայուի, ու երբ Պոլիս կ'երթայ հաս-
տատուելու՝ թուրք ոստիկանութեան բռնու-
թիւններուն կ'ենթարկուի և բաւական ատեն
բանտ կը մնայ: Արձակուելէն ետք Կեսարիա կ'աք-
սորուի ու փախչելով Բարսիլ կը հաստատուի
1908ին Օսմ. Սահմանադրութեան օգտուելով
Պոլիս կը դառնայ և յաջող մրցումէ մը վերջ
Դամասկոսի նորարաց թուրք վարժարանին դա-
սատու կը կարգուի, 1914ին պաշտօնակիցներու
սաղարաններով պաշտօնանկ կ'ըլլայ ու Պոլիս կը
դառնայ: Ընդհ. պատերազմին զինուորական բը-
ժիշկ կ'ըլլայ և կը գործէ հիւանդանոցներու մէջ:
Ունի անտիպ աշխատութիւններ առողջապահու-
թեան վերարեբեալ և հրատարակուածներ այլ-
ևայ օրաթերթերու մէջ:

Անդամ է Հայ Բժշկական Միութեան: 1919ին
Հայ Բանակին նուիրեց վիրաբուժական գոր-

ծիքները 1922ի վերջերը Թուրքիայէն հեռանալով Մարսիլիա հաստատուեցաւ:

Հասցէն է 2 Bd. Beaumont, Marseille:

ԱՐՁն, հին գաւառ Աղձնեաց նահանգի, զբրուած է նաև Արձն և Աղձն, օտարները գրած են Արքանի, Արգանիի, Արգուն և այլն: Սանատուակի օրով, ըստ Մ. Խորենացւոյ՝ Շարաշան կուսակալին պարզե կը տրուի գաւառու: Թովմա Արծրունի կը համարի որ Արծրունեաց նախկին բնակավայրը հոս եղած ըլլայ. և Արզունիքը եղած Արծրունիք: Սա. Ասողիկ գաւառիս մէջ Ազրու քաղաք մը կը յիշէ:

Արզն սանձանակից է Տուրուբերանի Խոյթ և Ասպակունիք գաւառներու. այժմ կը կոչուի Խարգան: Երկիրը լեռնային է, բնակիչք՝ հայ և քուրդ. գաւառու ունի Խարգան անուամբ այլազգարնակ գիւղ մը, որ կը կարծուի թէ լինի հին Արզն քաղաքի տեղը: Արզնի հայ բնակիչները կարովի էին և քաջ:

ԱՐՁն, հին և դիսաւոր քաղաք Աղձնեաց համանուն գաւառի մէջ: Դիրքը և տեղը անյայտ. ոմանք Խարգան անունը կը համարեն:

ԱՐՁն կամ Արձնի, ի հնումն բազմամարդ եւ դուռ հայարնակ գիւղ, 1900ին 120 տուն այլազգի բնակիչ ունէր, կը գտնուի Կոտայք գո.ի մէջ, այլազգիք Սարալու կը կոչեն գիւղս: Հիմա ամայի պարիսպները և տուներու աւերակները վկայ են այս գիւղի անցեալին. կան հին եկեղեցւոյ մը աւերակները: Գերեզմանատան մէջ գտնուած խաչքարերու արձանագրութեանց ծանօթ թուականները կը վերաբերին ժ.Ձ դարու: ԺՅ. դարու կիսուն զրուած ճաշոցի մը յիշատակարանի մը մէջ կը յիշուի գիւղիս անունը: Այժմեան բնակիչք յունազաւան Ասորիներ են: Գիւղիս մօտ կայ Բօս աղբիւր կոչուած հանքային ջուր մը, որ քօս և բօր բժշկելու յատկութիւն ունի: (Սմբատեանց Մ. Արքեպ. «Գեղարհունի» 223-230. Հ. Ալիւանի «Այրարս» 388):

ԱՐՁՆԿԱՅ Տ. Երիզայ:

ԱՐՁՈՒԵԱՆ Ալեքսան (=Վահէ) բնիկ Կեսարացի ծնած 1874ին, աշակերտ Պոլսոյ Կեղրոնականի, Նանսի կ'երթայ մեքենական նորահար արօրներ շինող Տօմալի գործարանը աշխատելու, յետոյ Թուրքիա դառնալով աշխատած է որ գիւղացիութիւնը այդ արօրները գործածէ:

Յանդուզն Հնչակեան մըն էր: 1895ի Պապ-Ալիի ցոյցին մէջ կարևոր դեր կատարած էր: 1896էն ետք Լոնտոն անցած է: («Անահիտ» 1935 p. 3-4 եջ 30):

Վահէ Աղզուեան 1898ին Ամերիկա կը մեկնի

ընկերներու պնդումով. քաղաքէ քաղաք՝ պատուելով կը կազմակերպէ Ամերիկայի մասնաճիւղերը և բուն հիմնադիրը կ'ըլլայ Վերակազմախուրթեան: Քիչ ետքը Եգիպտոս կ'երթայ քանի մը գործիչներով, նպատակ ունենալով Կիպրոսի ճամբով Կիլիկիա անցնել: Հընչակեան բաժանումէն ետք Աղեքսանդրիա երթալով՝ հարուստ Հայերու կը դիմէ կուսակցութեան նպաստելու, և տմէնքնայ կը սատարեն, Վահէի անձին հմայուած կամ վախի ազդեցութեամբ Արզուեան հիւանդ էր, թոքախտը ամբողջութեամբ չէր սպիտցած, միայն կաթով կը սնանէր: Արզուեան որ կուսակցութիւնը իր կամքին ուժովը փրկած էր Ամերիկա, Եգիպտոսի մէջ իր յուրջ հաւաքելով իսկապէս եղական ուժեր, չէր նշմարած թէ՛ անոնց մէկ մասը իր գէմ կը դառնար, և քայքայումը չէր կրնար ուշանայ. և միակ կուսակցութիւնը որ կրնար թուժը կանգնել 1908ի հայկական յիմարութեան առջև, դադրած էր այժմ ուժ մը ներկայացնել, իրր հետեւանք Արզուեանի կամակորութեան (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» 2134-40):



ԱՐՁՈՒԵԱՆ ԱԼԵՔՍԱՆ

ԱՐՁՈՒԵԱՆ Հայկունի (Ստեփան) երէց եղբայր Արզուեան Աղեքսանի, ծնած Կեսարիա, համեստ բնատնիքի գաւառ. 1893ի Կեսարիոյ ձերբակալութիւններուն փախած և քանի մը փախստականներու գլուխը անցած և ասպատակային խումբ մը կազմելով Կիլիկիա անցած է Թուրք ժողովուրդէն «փաշա» կոչուելով իր հասակին, վեհանձնութեան և կորիճութեան համար: Մատուցած մը զո՛ր ըլլալով՝ կը ձերբակալուի ու Ատանայ կը տարուի և 15 տարուան շրթայակապ աշխատութեան կը դատապարտուի Յետոյ ազատ արձակուելով երբ կ'աքսորուի Թուրքիայէն՝ հիւանդ, բանտի տանջանքներէն հիւժած՝ Եգիպտոս կը հասնի: Քիչ մը կազդուրուելէ ետք Աթէնք կը մեկնի նորէն երկիր մասնելու համար, բայց մահը հասած՝ կը մեռնի ծաղիկ հասակի մէջ:

ԱՐՁՈՒԵԱՆ Յովհաննէս, բժիշկ, ծնած Նիյաէ

1881ին: Ուսումը առած Տարսոնի Ամերիկեան Գոլէճը, ուրկէ չըջանաւարտ եղած՝ 1908ին: Հետեւած է Պէյրութի Ամերիկեան Բժշկ. Համալսարանին, չըջանաւարտ եղած 1912ին: Գործած է Գոնիայի, Ատանայի և Իզմիրի մէջ: Փոքր Ասիոյ աղէտէն վերջ Սելանիկ հաստատուած: Հմուտ է յունարէն լեզուի (Մակարեան՝ «Յուլագիրք 212):

ԱՐՁՈՒԵԱՆ Սարգիս Ս. Արզրեան:

ԱՐՁՈՒՄԱՆ Մկրտիչ, ըմբռնած Թոփ-զափու (Պոլիս) 1857ին, նախնական ուսումը ստացաւ ծննդավայրի Մայր վարժարանին մէջ, յետոյ յաճախեց Բժշկական Համալսարանը, որմէ ընթացաւարտ ըլլալէ վերջ պահ մը Մամօթիոյ մէջ բժշկութեամբ կը զբաղի ու յետոյ Բարիզ կ'երթայ ուսումը կատարելագործելու համար: Պոլիս զարձաւ և իբրև յայտնի մանկարարձ-կնախտարան բժշկութիւն կ'ընէ, կը վախճանի 1925, 20 Մայիսին: 5000 ոսկինոց բժկական գործիքները և մատենադարանը Ազգային Հիւանդանոցին կտակած էր (Գաբամանեան Սիմ. «Գրպ. Տար. Եւ Թեոդիկ «Ամ. Տար», 1926 մահագրութիւն):



ԱՐՁՈՒԵԱՆ ՅՈՎՀ.

ԱՐՁՈՒՄԱՆ Վահան Էֆ. կարեւոր պետական պաշտօնեայ ԺԹ. դարուն, թաղուած է Եէնի գիւղի գերեզմանատունը (Հ. Ամսորեայ 1930 էջ 613):

ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ Երուանդ, ըմբռնած է 1895 Նոյեմբեր 15ին Երզնկա: Նախնական կրթութիւնը բնագաւառի Եղնիկեան վարժարանի մէջ ստանալէ ետք 1909ին կ'անդնի Պոլիս՝ ուր կը յաճախէ Բերայի Վենետիկեան Միթարեանց գպրոցը: 1912ին չըջանաւարտ՝ կը մեկնի Վենետիկ, շարունակելու համար իր ուսումը Մուրատ-Ռափայէիան վարժարանին մէջ: 1915ին յաջողութեամբ կ'աւարտէ երեք տարուան բնթացքը և իբրև թոշակաւոր սան հինգ տարի կը հետևի Լոզանի և Պազրի բժկական համալսարաններու դասընթացքին: 1920ին կը տեղափոխուի Հոմ, և յաջորդ տարին կը ստանայ իր բժշկական վրկայականը, աւարտական ճառի նիւթ ունենալով «Միջին դարու բժշկութիւնը» (բաւական ըն-

դարձակ ուսումնասիրութիւն մը, որուն մէջ հեղինակը պատմական ընդհանուր ակնարկէ վերջ կը ներկայացնէ հայ հոգի յատուկ զեղարանական բոյսերը, վերլուծելով անոնց բուժիչ յատկութիւնները: (Այս քեզիմասին ամփոփ ուսումնասիրութիւն մը հրատարակուած է նոյն տարուան Պոստոնի «Հայրենիք» ներուն մէջ՝ Պատրիկի կողմէ, ինչպէս նաև Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյց»-ին մէջ բանասէր Կ. Գարիկեանի կողմէ):

Թեզը լաւագոյն գնահատութեան կ'արժանանայ Ուսուցչապետական Յանձնաժողովէն:

1922ին կ'ամուսնանայ Տիկին Լիւսի Սելուսեանի հետ, և այդ թուականէն ի վեր կը հաստատուի Բոտալիոյ Միլան քաղաքին մէջ:

Բժ. Ե. Արզումանեան մէկն է այն եւսանդուն մտաւորականներէն որ աշխատած է միշտ ազգային շունչով հրահրել թէ իտալիոյ ուսանողութիւնը և թէ Միլանոյի հայ դաղութը ինք եղած է «Համագրային» մասնաճիւղին կազմակերպողը և Տոքթ. Ե. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ երկարատեւ Մուրատ-Ռափայէիան նախկին սաներու վարչութեան քարտուղար: Գիտական յոգուածներով երեցած է թէ՛ հայ և թէ իտալական մամուլին մէջ:



Իր հասցէն է Dott. Med. Y. M. Arzumanyan Via Giason del Maino 16, Milano (ITAL A).

ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ ՍԵՒՈՒՄԵԱՆ Տիկին Լիւսի, արուեստագէտ երգչուհի, ծնեալ Սանտանեան, Ալեքսանտրապոլցի (Լենինական), հազիւ միամեայ՝ իր ծնողքին հետ կը տեղափոխուի Թիֆլիս: Գեղարուեստի ասպարէզը կը տեղափոխէ թատերարեմով՝ 1914ին, անուանի դերասան Օլի Սելուսեանի հետ՝ որուն ամուսինը կը զառնայ յաջորդ տարին:

Վեցամեայ գործունէութեան ընթացքին իր բեմի ընկերներն եղած են մեր կարող և լաւագոյն դերասանները՝ Սիրանոյշ, Արեւիան, Սելուսեան, Վ. Փափազեան, Մայսուրեան, Ալիխանեան, Արմենեան, Շահխաթունի, Սաթենիկ Աղամեան և այլն:

Տիկին Լիւսի միակ և մեծ ուսուցիչը բեմին

վրայ՝ Օֆի Սեւեմեանն էր, տաղանդաւոր դերասան, զոր մահը խլեց անկէ երիտասարդ հասակին մէջ, 1920ի դարնան, Կ. Պոլսոյ մէջ: Սակայն այդ դերասանը կ'ապրի արուեստագէտ տիկնոջ մէջ իր մեծ ազդեցութեամբ՝ որով կերպաւորած է անոր հոգին, և զեռ այսօր կը ծառայէ անոր արուեստի ասպարէզին մէջ որպէս լուսաւոր փառոս, որով անվերապահ է և մեծ՝ տիկնոջ երախտագիտութիւնը հանդէպ անոր, որուն կը պարտի ամբողջ գագտնիքն իր արուեստին և բանալին բոլոր յաջողութիւններուն՝ թէ՛ թատերական և թէ՛ քնարական (dramatique և lyrique) աշխարհի:

Օֆի Սեւեմեանի մահէն վերջ սակայն կտրձես տիկին Լիւսի Սեւեմեան շեղում մը կ'ընէ իր ասպարէզին, ինչպէս ոմանք կ'ըսեն: Երևոյթին մէջ գուցէ այնպէս ըլլայ, սակայն մենք գիտենք որ անոր սկզբնական և խոր ձգտումն ու փարուժը Երզնի համար էր, որուն համար բնութիւնն օժտած էր զինք ձայնով մը՝ որ գեղիցիկ ու սրտագրաւ էր:

Որքան ողջ էր Օ. Սեւեմեան՝ Տիկին Լիւսի, ի սէր իր ամուսնոյն, ընկերագաւ անոր տրամաթիք արուեստին, սակայն երգի սէրը վառ կը մնար իր հոգւոյն մէջ, և իր ձայնին հմայքն զգացուցած էր հայ և ռուսական երգի կտորներով, զորս կը լսեցնէր մեծ պատերազմի օրերուն՝ բարեգործական երեկոյթներու և ընթանական հաւաքոյթներու մէջ: Գեղարուեստագէտ բարեկամներու անընդհատ հիացումին և ստիպման ազդեցութեան տակ արդէն նէ վճռեր էր մշակել իր ձայնը, և 1918ին էր որ կը մտնէր Թիֆլիսի երաժշտանոցը, ուր հետեցաւ երգի գլխաւոր և մեծանուն ուսուցչապետ Levitzky-ի դասընթացքին:

Այդ շրջանին արուեստն սկսեր էր աւելցնել հմայքն իր ձայնին, ու նէ ուսուցչապետ Լեւեցկիի քաջախրութեամբ և առաջնորդութեամբ ոգեւորուած երաժշտական արուեստով, կու տար քանի մը երգահանդէսներ, որոնց արձագանգը հայ և ռուս մամուլին մէջ նպաստաւոր և քաջայերիչ էր արուեստագէտ տիկնոջ առաջին քայլերուն:

... Տիկին Սեւեմեան չբաւականացաւ մեր բնախարհի երգին հովուութեան և քնքու շոունջով միայն, այլ տիրացաւ նախ ռուսականին անկեղծ, թափանցիկ ու կայտառ նկարագրին, ուսկից յետոյ հայեացքն ուղղեց Արեւմուտք՝ եւրոպական վսեմ ու դասական գծերն իւրացնելու:

Ատոր համար էր որ 1920ին Բարիզ անցաւ, ուր պարագեցաւ կատարելագործելու երաժշտական

ուսումն ու իր ձայնը, ունենալով որպէս ուսուցիչ համբաւեալ Litvin-ը՝ Վերջին փայլը սակայն իտալիայէն պիտի առնէր, որ դասական երկիրն է ձայնի և երգի թրթռացումներուն:

Եւ տիկին Սեւեմեան Բարիզէն Հռոմ կը փոխադրուէր 1921ին, ուր յաջողութեամբ աւարտելով իր մասնաւոր դասընթացքը՝ տուաւ իր կատարելագործուած փայլուն երախայրիքը «Cavalleria Rusticana»-ով՝ Սանթուժոյ դերին մէջ:

Առաջին քայլն էր ատիկա եւրոպական բեմի վրայ և յաջող՝ ինչպէս կը վկայեն շատ քննադատներ, որոնցմէ յիշել կ'արժէ Հռոմի առաջին քննադատին Cascoի կարծիքը. «Քավալլերիա Տիկ. Լիւսի Սեւեմեանն Ռուսթիքանայի մէջ



Տիկ. Լիւսի Սեւեմեանն

կատարեց իր արուեստագէտի նախաքայլը՝ հայ երգչուհի Լիւսի Սեւեմեանն որ տուաւ ապացոյցը իր տաղանդին և իր ամենանուրը ձայնակին, երգելով յստակ, ոլորուն, մեղմօրէն յուզիչ և զերազանց հմայքոտ ձայնով, և մենեբրելով անվիճելի ձարտարութեամբ և իսկական ինքնատրպուլթեամբ»: (La Tribuna, Roma):

Եւ այդ յաջող քայլը զինքն ուղղեց դէպի երգի ասպարէզը՝ Հռոմէն սկսաւ հռչակն իր ձայնին. նէ այլևս տիրացած էր դաշնաւորութի, խաղերգի և բեմագրութեան գաղտնիքներուն, ինչպէս նաև իւրացուցած իտալերէնը՝ երգի տիեզերական լեզուն:

Շատ երկար պիտի ըլլար թուել բոլոր այն թատրոններն ու քաղաքները ուր երգեց նէ մինչև օրս, իր փայլուն ներկայացումները վայելեցին ի միջի այլոց՝ Վենետիկ, Թորինոյ, Միլան, Ուտինէ, Հռոմ, Նարոլի, Պարի, Բատովա և այլն. իտալիայէն դատ Զուիցերիա, Եգիպտոս, Գերմանիա, Բարիզ՝ նուագախաղի (opera) և երգահանդէսներու մէջ:

Գլխաւոր նուագախաղերը զորս երգած է՝ են. Մանոն (Սասընտ), Լոնէնկրին (Վակնէր), Անտրէա Շենիէ (Ճորտանոյ), Պոնէմ և Տիկին Պըթրֆոյայ (Փուչչինի), Մէֆիսթոֆէլ (Պոլիթոյ), Յաուսթ Կունոյ, Քավալլերիա Ռուսթիքանա, Բարեկամ Յրից և փոքրիկն Մարա (Մասքանյի) և այլն:

«Բազմավեպ» միջազգային մամուլէն հասուածներ կը հրատարակէ որոնց մէջ զուրս կը ցայտէ Տիկին Սելուսեանի ձայնին շնորհն ու արուեստին կատարելութիւնը:

Տիկին Սելուսեան 1936ին Պուրէէ հրաւիրուեցաւ, ուր երգեց Աթենքի սրահին մէջ ի ներկայութեան հայ եւ օտար բարձրաստիճանի նիւրերու:

Տիկին Սելուսեան կինն է Տէր. Ե. Արզումանեանի եւ կը բնակի Միլանոյ քաղաք (Իտալիա):

ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ Մկրտիչ Տ. Արզուման Մկրտիչ:

ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ Յակոբ, 1935ին Գահիրէի մէջ հրատարակած է *Էվէրէկի պատմութիւնը Ա. Գիրք*:

ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ Օճնիկ, 1908 Նոյեմբերին փայտուն տպարան մը բացաւ Պոլսոյ մէջ և բաւական գրքեր ու թերթեր հրատարակեց: Ծնած է 1880ին (Թեոդիկ՝ «Տիպ ու Տառ» էջ 124—5):

ԱՐԶՈՒՆ Տ. Արզն:

ԱՐԶՈՒՆԻ կամ Ղուլ Արզունի, Զուղայեցի հայ աշուղ:

ԱՐԶՈՒՐԱԿ կամ Էգրուկ, գղ. Խարրերզի, 30 տ. հայ 100 տ. մահմետական բնակչով. եկղ. Ս. Աստուածածին:

ԱՐԶՐՈՒՄ Տ. Կարին:

ԱՐԶՐՈՒՏԻ Տ. Արձուտի:

ԱՐԶ ՕՂԼԻ, գղ. Տիգրանակերտի, Սաղու գղ.ի մօտ, 4 տուն հայ ունէր:

ԱՐԷԶԵԱՆ Ք. Բժշկապետ, ուսուցչապետ Երևանի համալսարանի բժշկական ճիւղին:

ԱՐԷԹԻՆՕ ԹԵՍ ՅԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԱՐԷՇ, Արաու կամ Արաւ, Աղուանից ստորին գաւառներէն մին, մեծաւ մասամբ թրքարնակ, հայարնակ հետեւեալ վեց գիւղերը ունի Խանաւար, Քանդակ, Հաւարիկ, Մազրու, Արէ, Նեմիրպայա, («Մուրն»ի մէջ 1905 թ. 4—5 կայ ուսումնասիրութիւն մը Արէ գոյ. մասին):

ԱՐԷՇ, Արու կամ Էրմենի-բազար, հայարնակ գղ. վերոյիշեալ համանուն գաւառին մէջ, Արջկան գետակի մօտ, բն. 220, փոխադրուած են մերձակայ այժմ աւերակ Խալզան գիւղէն: Գիւղիս եկեղեցին ՉԻԸ (=1279) թուականով արձագրութենէն կ'իմանանք որ այդ ատեն կառուցուած է:

ԱՐԷՊՍՈՒՆ Տ. Արայլիհա:

ԱՐԷՏ Տ. Արիս:

ԱՐԸԳԵԱՆ Արմենակ (ՏԱՏԷՐ), աշուղ, ծնած Մարաշ: 1913ին հրատարակած է «Հազար ու մէկ ծաղիկ» գիրք մը, որ կը պարունակէ թրքերէն քերթուածներ և հայերէն գրութիւններ: (Գալուսեան՝ «Մարաւ» 545):

ԱՐԸԳԵԱՆ Յակոբեան (ԵԱՂՈՒՊԻ), աշուղ ծնած Հայ Հանրագիտակ — 18

Մարաշ, եղած է առևտրական պաշտօնեայ. տարագրութենէն առաջ բնական մահով մեռած: (Գալուսեան՝ «Մարաւ» 543):

ԱՐԸԳԵԱՆ Յարութիւն (ԳԸՅԱՄԻ), աշուղ, ծն. Մարաշ 1870ին, կ'ուսանի Պոլսոյ Կեղրոնական վարժարանի մէջ, Ֆրանսերէն ուսանելու համար Բարիկ կ'երթայ: Ունի յաջող քերթուածներ: 1918ին կը մեռնի Հալէպի մէջ: (Գալուսեան՝ «Մարաւ» 547):

ԱՐԸԳԵԱՆ Յովհաննէս մահտեսի, աշուղ, ծն. Մարաշ 1830ական թուականներուն. իր զաւակները գրեթէ բոլորն այ աշուղ եղած են: Ապրեցաւ չորս 50 տարի: (Գալուսեան՝ «Մարաւ» 542):

ԱՐԸԳԵԱՆ Նեան, (ՄԱԳՍՈՒՏԻ), աշուղ, ծնած Մարաշ, նախակրթութիւնը միւս եղբայրներուն պէս առած է Ս. Քառասուն Մանկանց դպրոցը: 25 տարու մեռած է: (Գալ. «Մարաւ» 545):

ԱՐԸԳԵԱՆ Օվիկ (ԷԼՅԱՅԱՅԻ), աշուղ, ծն. Մարաշ: նախակրթութիւնը առած է Ս. Քառասուն Մանկանց վարժարանին մէջ. 1915ին կը տարագրուի և յետոյ Հալէպի մէջ կը մեռնի ու կը թաղուի Տոքթ. Այթունեանի պարտէզին մէջ: (Գալուսեան՝ «Մարաւ» 543):

ԱՐԸԽՎԷԼԻ, հայարնակ 3 գիւղ Շիրակի մէջ, երկուքը կը կոչուին Արըխվէլի Մեծ և Փոքր, Նորաշէնի հարաւակողմը: Իւրաքանչիւրն ունի Ս. Աստուածածին եկեղեցի: Առաջինը ունէր 1900ին՝ 1200 բնակիչ, երկրորդը՝ 650, որոնք Խնուսի Չէվիրմէ գիւղէն գաղթած են: Երրորդը կը կոչուի Արըխվէլի Նոր, բն. 600, Լենինականի հիւսիսակողմը:

ԱՐԸՆԻՔԱՐ, հին գղ. Սիւնեաց Ծղուկ գո.ի:

ԱՐԹԷՔ, հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գո.ի:

ԱՐԹԻԳԱՊԱՐ կամ Արթի Գովա, դաշտ և աւան՝ Եւզովկիոյ և Սերաստիոյ մէջտեղ:

ԱՐԹԻԿ կամ Արդիկ (տե՛ս), Խ. Հայաստանի շրջաններէն մին. որ մօտ 50000 բնակիչ ունի: Կեղրոնն է Արթիկ, Արագածի լանջին վրայ գործաւորական աւան մը, Լենինականէն մօտ երեք ժամ հեռաւորութեամբ, երկաթուղիով, դէպի հարաւ Այս տեղ է Արթիկի Տուֆի քարահանքը, որ կը շահագործուի մեծ չափի վրար (Պողոսեան՝ «Հայաստանի Աշխարհագրութիւն» էջ 113):

ԱՐԹԻԿ, հին գիւղ Սիւնեաց Բաղք գո.ի:

ԱՐԹԻՆԵԱՆ ՀԱՅԱ. զեղազործ. ծնած Էվէրէկի Չոմախլու գիւղը, եօթ տարեկանին փոխադրուած է Թալաս և յաճախած՝ Ամերիկեան Բարձր. վարժարանը: Ապա չորս տարիի չափ աշխատած է Ամեր. Հիւ. զեղարանին մէջ, իրր օգնական: 1905ին կ'անցնի Պէյրութ Ա. Ս. Բ. և զեղազոր-

ԱՐԹ

ծուծեան ձիւղէն 1911ին շրջանաւարտ ըլլալով կը վերադառնայ Թալաս ու կը ստանձնէ Ամեր. Հիւ. աւագ ղեկադործի պաշտօնը: Բայց տարի մը վերջ կը տարուի Պայքանեան պատերազմը: Մեծ պատերազմին կ'ուղարկուի իբր զինուորական ղեկադործ, Կովկասեան ճակատը մինչեւ թաւրիդ: Ուրմիա, Սալմաստ, Վան, ապա Կարս, Կարին, ուր կը մնայ Զինադադարէն վերջ: Կ'անցնի Կեսարիա ուր N. E. R. ը գործի սկսած էր: Բայց հոնկէ ալ կ'ուղարկուի Քէմալականներու կողմէ Մարաշ, ապա Գոնիա, Հաճըն և 1928-ին կը յաջողի փոխադրուիլ Պէյրութ, ուր Նահրի ճամբուն վրայ ունի իր սեփական ղեկարանը «Pharmacie Haïk», (Տոյպագեան՝ «Լիբանահայ պատ. օրացոյց» 1936):

ԱՐԹԻՆԵԱՆ ՂԱԶԱՐՈՍ Տ.ՔԹ. ատամնաբոյժ, վկայուած Պոլսոյ կայսերական վարժարանէն, հաստատուած Գահիրէի մէջ: (Եգիպտահայ Տարեցոյց 1915 էջ 164):

ԱՐԹԻՆԵԱՆ Յովն. Տոքթ. Նոնաձէ 6 Ապրիլ 1874-ին Ատա Փաղար և տեղւոյն Ներսէսեան դպրոցը ստացած իր նախակրթութիւնը: Կու գայ Պոլիս և կը յաճախէ Կեդրոնական, ապա Կայսերական Լիկիէոն, ուրկէ փայլուն ուսումնաւարտ՝ կը մեկնի ծննազավայր. 1892-3 տարի մը պաշտօն վարելով հոն՝ իբր ուսուցիչ ֆրանսերենի և գիտութեանց, միաժամանակ լոյս ընծայելով Տարեբ բնական և բնապատմ. գիտութեանց դասագիրքը: Այնուհետև կը մեկնի Ֆրանսա, Հիբոկրատի արուեստին նուիրուելու: 5 Մայիս 1899ին Նանսիի բժշկանոցէն վկայեալ՝ իբր օգնական Գլինիքս իր արուեստը կը կիրարկէ հոն մինչև 1909, որմէ յետոյ կը շրջագայի Բարիզ և Ֆրանսայի գաւառները, նաև Անգլիա: 1910ի վերջերը կը վերադառնայ Պոլիս, Թագսիմի ֆրնս. հիւանդանոցին մէջ ներքին բժիշկի և օգն. վիրաբոյժի կրկնակ պաշտօնները վարելու, զորս կը լքէ 1914ի ամբան, համաշխարհային պատերազմի նախօրեակին իսկ մեկնելով դէպի Ֆրանսա: Երախտագէտ Հայու իր սիրան էր որ կը մղէր զինք իր պարտքը հատուցանելու և ջվերջ պատերազմի ծառայելու բանակին մէջ: Տոքթոր Արթինեան հասարակ զինուորի իր ղրբէն կը բարձրանայ մինչև մաժօրութիւն: Զինադադարէն յետոյ կը դառնայ Պոլիս զրադելով իր մասնագիտութիւնով. բայց քիչ ատենէն կրկին կը մեկնի Ֆրանսա և կը հաստատուի Անուովի. Վէկոնէա հայաբնակ գիւղը, ուր իր թանկագին աջակցութիւնը չի զրանար ազգային մշակութային ձեռնարկներու համար:

Իր զրական սկզբնաւորութիւնն ըրած է պատենկութեան օրերէն, աշխատակցելով Ն. Պէրպէրեանի աննման «Բուրաստան»ին: Տարիներ վերջ՝ ուսանող ի նանսի, կը սկսի թղթակցիլ Արփիարի «Հայրենիք»ին, գրելով քննադատութիւն մը Հ. Քաջունիի գիտական բառգիրքին վրայ, նաև ֆրնս. գիտական ու կրթական հաստատութեանց մասին յօդուածներ, նոր ասպատակութեանց ցողոցային երկր հայ երիտասարդութեան ուղի ցոյց տալու համար: Այսպէս, նախաձեռնարկ կ'ըլլայ Նանսիի մէջ վարժուէի պատրաստելու գործին և կը հրատարակէ յօդուածաբանութիւն մէջ որ — այդ գաւարք մը նոյն թերթին մէջ որ — այդ գաւարք մը — կը փութայ հանդանակութիւն մը բանալ և այդ առթիւ Տոքթ. Արթինեան հետը կը տանի 4 Պոլսահայ օրիորդներ որոնք՝ իրենց մասնագիտութիւնը կը լրացնեն նոյն քաղաքը — Լեզուաբանութեան և բանասիրութեան մասին իր ունեցած խոր հակումին ապացոյց են «Տունկերը և անոնց հայրէն անունները» (Չօպանեանի «Անահիտ»ին մէջ երեւցած և յետոյ գիրք եղած) և «Աստուածաշունչի տունկերը» (Պոլսոյ «Աւետարեք»ին մէջ երեւցած, յետոյ գիրք եղած), վերջինս ուսումնասիրուած մեր նախնեաց մատենագրութեան վրայ: 1915ին, Յր. Մաքէնայս ուշադրաւ երկն ու անոր հեղինակը նիւթ ըրած է յօդուածի մը՝ երեւցած Revue Asiatiqueի մէջ: Կ'արժէ յիշել նաև Տոքթ. Արթինեանի մէկ տեսութիւնը «Նոր Զուղայցի Հայոց առեւտուրի մասին ժէ. դարուն» Անահիսի մէջ: Դարձեալ Նանսի հաստատուած ատեն՝ անիկա աշխատակցած է տեղւոյն ֆրանսական թերթերուն, գիտական նիւթերու շուրջ: (Թեոդիկ՝ «Ամենուր Տարեցոյցը», 1921 էջ 185—6):

Տոքթ. Արթինեան 1931ին պատուուած ՕՖիսէսի պատուանշանով, իսկ վերջերս ֆրանսական կառավարութենէն ստացած է Կամաւոր մարգիկի խաչ:

ԱՐԹԻՆԵԱՆ Ռիչարտ, Նիւ Եորք քաղաքի «Մաքրութեան Ընկերութիւն»ը բացած է իր նպատակը պատկերացնող նկարներու մրցում մը՝ որուն կրնային մասնակցիլ դպրոցի աշակերտներ: Պրոնքսի Բարձր. վարժարաններէ մասնակցող աշակերտներու մէջ առաջինը հանդիսացաւ Ճէյմս Մընրօ Բարձր. վարժարանի ուսանողներէն հայ պատանի մը, — Րիչարտ Արթինեան: Այս առթիւ նկարներու մրցման Յանձնախումբի ատենապետ միսիս Սթրայլմ նամակաւ մը իր շնորհակալութիւնները յայտնելով կը հաղորդէ թէ Գննիչ Յանձնախումբը պր. Արթինեանի նկարը առաջին

մրցանակի արժանի դատեց. անոր մէջ գտնելով ինքնատարութիւն և գերազանց վրձինուժ: Մըրցման դրուած նկարներու թիւն էր 1000:

Պ. Արթինեան՝ որ մէկ քանի տարի առաջ Վանամէյ քըրի կազմակերպած նկարչական մրցման մէջ պղնձեայ շքանշան շահած էր, վերջերս ալ շքանշան մը (մէտր) շահեցաւ դպրոցի Գեղարուեստից Լիկէն: (Հ. Կոչակ 1937 թ. 8 195):



ԱՐԹԻՆԵԱՆ ԱՐԶԱՐՍ

Արծենթիւն. «ազատ և անկախ հայաթերթ» տպ. Պուէնոս-Այրէս 1930:

Արծենթիւն Ա. Մ. Մ. Մ. «չարաթաթերթ» օրգան Ամեր. Բան. Կուս. Հայկակ. Ֆեդեր-ի, Մ. Դ. Հնչ. Կուսակցութեան: Տպ. Պուէնոս-Այրէս 1922:

Արծենթիւն Ս. Արեւելի: ԱրԻ, ամսեայ տեղեկատու Հ. Մ. Ը. Մ. ի Ռուսական շրջանի տպ. Պուքրէշ 1924. արտօնատէր Յ. Գ. Աթանասեան:

ԱրԻԱՋՆ Ա. բանաստեղծ Թեհրանի մէջ տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԱրԻԱՄԱՐՍ օրաթերթ (Հ. Յ. Դաշնակցութեան) տպ. Կ. Պոլիս 1918. խմբ. Շ. Մխաբեան, Յ. Ժ. Միրունի (Շարունակութիւն «Ազատամարտ»):

ԱրԻԳԻ, Կիլիկիոյ մէջ գտնուած Արեգին գիւղը և վանքը՝ այսպէ՛ս ալ կը կոչուի:

ԱրԻԳԼԻ կամ Արալլի, լեռ Սիւնեաց աշխարհի Ծղոնկ և Շահապունիք գաւառներու մէջ տեղ:

ԱրԻԳԼԻ, ալլազգարնակ գիւղ համանուն լեռան մօտ:

ԱրԻԹՕՆ Տ. հայազգի դատախազ ուսմէն վըճուարեկ ատեանի:

ԱրԻՄԱԿՏՈՍ լեռ և գետ Ծովային Կիլիկիոյ մէջ:

ԱրԻՄԱՐՁԱՆ Տիգրան Բ. ի օրով (85—55 ն. ք. Ք.) Հռոմայեցոց կողմէ Կապադովկիոյ վրայ իշխան կը դրուի:

ԱրԻՈՍ, աղանդապետ, որուն դէմ գումարուեցաւ 325ին՝ Նիկիոյ Տիեզերական Ս. ժողովը:

ԱրԻԱ Հ. Պողոս վրդ. Լիբանանի Կաթողիկէ Հայոց կղերականութեան մէջ եղական դիրք զբաւոյններէն մին է՝ իր մատուցած ծառայութիւններով՝ մեր ցաւատանջ ժողովուրդին:

Ծնած է Հայէպ 1889 Յունուար 25ին Նախական կրթութիւնը տեղւոյն Հայ Կաթողիկէ նախակրթարանին մէջ ստանալէ ետք 1902ին Պոլիս կ'երթայ և կը մտնէ Սէն Լուիզ Ֆրանսական դպրեվանքը, ուր կը ստանայ իր երկրորդական ուսումը, աւարտելով փիլիսոփայական դասընթացքը: Առողջական պատճառներով կը վերադառնայ իր ծննդավայրը: Տարի մը վերջ 1910ին կ'երթայ Զմմար, հոն հայերէնի դասընթացքի կը հետևի և կ'աւարտէ եկեղեցական ուսումը:

1912ին կը ստանձնէ Պէյրութի եկեղեցւոյն հոգարարձուութիւնը: Պատերազմէն ետք կը նետուի ազգային կեանքի մէջ, իր մեղուաջան գործունէութեամբ բոլոր խաւերուն վստահութիւնն ու համակրութիւնը կը վայելէ:

Տարաբախտ որբերուն հաւաքման գործին կը նուիրուի: Ազգային Միութեան հիմնուելուն՝ ընդհ. քարտուղար կ'ընտրուի, կառավարութեան մօտ վարելով ազգային գործերը: Զարդէն ու աքսորէն վերադարձող հայ բեկորները կը հաւաքէ և կարավաններ կազմելով իրենց բնաշխարհը կը դրկէ:

1919—20ին երկու անգամ կը շրջի Կիլիկիոյ զանազան կողմերը, ազգու զիմուններ կ'ընէ Ֆրանսական կառավարութեան մօտ, 1920ին կը տեսնուի Նուպար փաշայի հետ ի Բարիզ, կը շրջի Գերմանիա, Իտալիա և Աւստրիա: 1922ին Կիլիկիոյ պարպումին Պէյրութ կը վերադառնայ կրկին և ազգանուէր գործունէութեան կը նուիրուի: Երկար ատեն վարած է հայկական հիւզաւանի վերին հսկողութիւնը մատակարարելով Ֆրանս. կառավարութեանէն, Ա. պապէն, Հ. Բ. Ը. Միութենէն և այլ աղբիւրներէ ստացուած նպաստները: Կը հիմնէ Հայ Կաթ. Որբանոցը, հոն 400 որբեր պատասպարելով:

1929ին Պուրճ Համուտի շրջակայքը ազարակ մը գտնելով որբանոցը հոն կը փոխադրէ և որ կը տեէ մինչև 1933—4: 1929ին Մարաշի Հողային Յանձնախումբին մէջ կը հրաւիրուի, կառավարութեանէն վաւերացնել կու տայ Յանձնախումբը, ասով կը բացուի իրեն առջև ժողովուրդին ծա-



ԱՐԻԱ Հ. ՊՕՂՈՍ ՎՐԳ.

ուայելու ասպարէզ մը. 150000 քու. մէթր հող մը գնելով առանց շահի կը վաճառուի: Այսօր այդ թաղամասը չըջանիս ամէնէն բազմամարդ թաղերէն մին է: Ժողովուրդը իր սեփական միջոցներով կը կերտէ իրենց տուները: Իրրե ուրոյն քաղաք մը՝ ունի իր դպրոցներն ու եկեղեցիները: (Տօլպագեան՝ Լիբանանայ պատկ. օրացոյց 1936):

ԱՐԻՍԵԱՆ ԼԵՆԸ. Խ. Հայաստանի լուսաւորութեան գործավար, 1937ին շնորհազրկուելով՝ պաշտօնակ կ'ըլլայ:

ԱՐԻՍՍԱԲՈՒՂՈՍ, որդի Հրէից Հերովդէս արքայի, Հռոմայեցոց կողմէ Փոքր Հայոց վրայ իշխան կը կարգուի Բրիտանի 55 թուականին:

ԱՐԻՍՍԱԿԷՍ Ա. Ս. Պարթե կթ. որդի Գրիգոր Լուսաւորչի, ծնած է հաւանօրէն Կեսարիա 264ին: Դեռ երիտասարդ՝ հոգեւորական կեանքի հետեւեցաւ աշակերտելով Նիկոմաքոս ճգնաւորին: Գրիգոր Լուսաւորիչ երբ Հայաստանը քրիստոնեայ դարձուց, անկէ շատ ետք 319ին Արտաւազդ Մանղակունի սպարապետը յայտնեց Տրդատայ թէ Լուսաւորիչ Կեսարիոյ մէջ երկու որդի ունի: Թագաւորին հրամանով Հայաստան կը բերուին, այդ թուին Արիստակէս եպիսկոպոս կը ձեռնադրուի, օգնական կարգուելով իր հօր: 325ին Կեսարիայէն անցնելով Արիստակէս Նիկիա գնաց, ներկայ ըլլալու առաջին Տիեզերական ժողովին, որ գումարուեցաւ Արիոսի դէմ: Արիստակէս որ արդէն հօրը կենդանութեան հայրապետական գործերը կը վարէր՝ անոր մահէն ետք կաթողիկոս ընտրուեցաւ 325ին և 7 տարի կաթողիկոսութիւնը վարելէ յետոյ նահապետուեցաւ Չորրորդ Հայոց Արքեպիսկոպոս իշխանէն, սպաննուելով՝ երբ Ծովիաց գաւառը այցելելու կ'երթար: Արիստակէս հայրապետը թիլ աւանի վանքին մէջ թաղեցին: Հայ եկեղեցին կը աօնէ Ա. Գրիգորի որդոց եւ թոռանց հետ Յուլիս ամսոյ մէջ:

ԱՐԻՍՍԱԿԷՍ Բ. կթ. Գրիգոր Մակուեցի կաթողիկոս՝ չկարենալով առանձին վարել կաթողիկոսական պաշտօնը՝ 1455ին իրեն օգնական ընտրեց Արիստակէս վրդ.ը, զոր յետոյ 1458ին իրրե ատուակից կաթողիկոս օծեց: Երկու տարի վերջ 1460ին գժտութիւն ծագեցաւ երկու կաթողիկոսներու մէջ. Արիստակէս աւելի զօրաւոր գանուելով ինք վարեց կաթողիկոսութիւնը: Այդ միջոցին ոմն Սարգիս վրդ. Լուսաւորչայ Աջը գողնալով՝ Դավրէժ գնաց, սպասելով Շահնշահի դալստեան, որպէսզի անոր հրամանաւ կաթողիկոս ըլլայ: Այդ թամարայ կաթողիկոսը Ջաքարիա, 1461ին էջմիածին երթալով կաթողիկոսական գահէն վտա-

րեց թէ՛ Գրիգորը և թէ՛ Արիստակէսը և ինք վարեց կաթողիկոսութիւնը իրեն օգնական ունենալով վերոյիշեալ Սարգիս վրդ.ը: 1462ին Գրիգոր և Արիստակէս հաշտուեցան և Ջաքարիան դուրս վանեցին: Գրիգորի մահէն ետք (1466ին) Արիստակէս 4 տարի առանձին կաթողիկոսութիւն ընելէ ետք 1470ին վախճանեցաւ ըստ Օրմանեանի (ըստ Չամչեանի 1466ին): Երկուքին թուականներն այ չեն համապատասխաներ յիշատակարանաց վկայութեանց. 1465էն մինչև 1474 Ձեռագրաց յիշատակագիրները կը յիշեն Արիստակէսը իրրե կթ.ը: (Տե՛ս Գ. Կպ. Յովսէփեանի յօդուածը, «Անանիս» Գ. 5-6 էջ 29):

ԱՐԻՍՍԱԿԷՍ Գ. Ըստ Հ. Չամչեանի կաթողիկոսական ատուին վրայ նստած է 1490—1498. իսկ ըստ Օրմանեանի (1901ի Ազգ. Հիւանդանոցի բնդարձակ օրացոյց էջ 392) 1484—1499 Սարգիս Գ. Միւսայլ կթ.ի ատուակից կը համարուի: ՉԿԻ (=1515)ին գրուած Մաշտոցի մը յիշատակագիրը իրրե ողջ կը յիշէ Արիստակէս կաթողիկոսը (Յիւստակարանի):

ԱՐԻՍՍԱԿԷՍ Արքեպ. Ազրիանապոլսոյ, 1869ին Պօղոս պատրիարք Թագթագեանի հրամարումէն ետք Կ. Պոլսոյ պատրիարքական տեղապահ կ'ընտրուի Յունուար ամսոյ մէջ:

ԱՐԻՍՍԱԿԷՍ Եպ. առաջնորդ Հռոմայի վանքին, կը յիշուի 1494ի յիշատակագրէ մը:

ԱՐԻՍՍԱԿԷՍ Արքեպ. Առաջնորդ Եկեղեցաց, կը յիշուի 1578ին և 1592ին Երզնկայի մէջ՝ Մինաս Երէցէն:

ԱՐԻՍՍԱԿԷՍ Եպ. Առաջնորդ Եւզոկիոյ Ս. Նիկողայոս վանքին, կը յիշուի 1589ի յիշատակագիր Անդրէասէն:

ԱՐԻՍՍԱԿԷՍ Եպ. Մշոյ, աչկ. Եղեսացի Սրապիոն վրդ.ի, 1598ին Երուսաղէմ կ'այցելէ և 1591ին Բարձրահայեաց վանքին մէջ ընդօրինակած ձեռագիրը Ս. Յակոբայ վանքին կը կտակէ (Աղաւնուցի՝ «Միաբան» էջ 37), այս Արիստակէսը ըստ 1597ի յիշատակարանաց՝ Մշոյ Քասձոր գիւղէն է, զինքը այդ թուականին ըստ յիշատակարանաց Ուռնայի (Եղեսիա) Բարձրահայեաց Ս. Աստուածածին վանքը կը գտնենք:

ԱՐԻՍՍԱԿԷՍ Լաստիվերացի պատմագիր, ծնած Արծնոյ (Կարնոյ) մօտ գանուող Լաստիվարս գիւղը՝ ԺԱ դարուն: Կը սկսի պատմել Բագրատունեաց Գագիկ Ա. թագաւորէն (989էն) մինչև Ալիաթանէն Անիի առումը և Դիոմէն կայսեր պարտուիլը, այսինքն մինչև 1071 թուականը: Լաստիվերացին իր գիրքը ո՛չ թէ պատմական ղէպքերով՝ այլ Երեմիական ողբերով կը լեցնէ:

Կը համարուի թէ 1075—80 թուականին վախճանած ըլլայ:

Արիսակէս վրդ.ի պատմութիւնը սպուած է նախ վեցեակոյ մէջ 1844ին (էջ 124):

Մինամ ֆի-Տեր Պետրոսեանց այս գործը աշխարհաբարի բարգմանեց եւ լոյս ընծայեց 1893ին Ալեքսանդրապոլի մէջ:

Արիսակէսի այս պատմութիւնը Ֆրանսերէնի բարգմանուելով Evariste Prud'-hommeէն նախ լոյս տեսաւ „Revue de l'Orient de l'Argérie et de Colonles“ նախագիտի մէջ ու 1863ին առանձին հատրով լոյս տեսաւ:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ վրդ. Բարկաշատայ գռ.էն, ըստ Հ. Չամչեանի՝ 1610ի առննները (Հսր. Գ. էջ 564-5) սա նախ Սարգիս եպ.ի քով կը կրօնաւորի եւ յետոյ Տանձափարախ երթալով հոն վանք կը յինէ, ուր շատերը կրօնաւորելու կ'երթան եւ իրենց խտակեաց կեանքով անուանի կը դառնան:

Տանձափարախ աւանը Փայտակարանի Բարկաշատ գո.ի մէջ կը գտնուի, ըստ յիշատակարանաց 1393ին «Տանձ Փարախ անապաս» մը կար:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ Քերբող, սա ԺԳ. դարու սկիզբը Մեծ Հայքէն Կիլիկիա երթալով՝ այդ ժամանակի նշանաւոր Գրիգոր Սկիւռացւոյ աշակերտեցաւ, սորվելով քերթողութեան եւ հետաորութեան արուեստը: Արիստակէս յորինած է համառօտ բառազիրք մը, ինչպէս Յովհաննէս Երզնկացիին կը յիշէ: (Չամչեան՝ Գ. 168):

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ վրդ. քաջ երաժիշտ, Առաջնորդ Մշոյ Ս. Յովհաննու վանքին, 1630ին կը վախճանի, սա նոյնն է թերևս վերի Մշեցի եպ.ին հետ:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ եպ. կը յիշուի 1637ի յիշատակարանի մը մէջ՝ ընդ Յոհանն եպ. Առաջնորդի:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ վրդ. Առաջնորդ Շհերի Ս. Աստուածածին վանքին, կը յիշուի 1657ին՝ յիշատակագրէ մը: Ուրիշ վրդ. մը՝ Երնջակի Ս. Կարապետ վանքին մէջ 1655ին եւ 1649ին, երրորդ վրդ. մը՝ ի Շամբրի ձոր՝ ձեռագրի ստացող:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ Գրիշք Չեռագրաց. 1497ին «ճարտար գրիշ» Սանահին վանքին մէջ. — 1558ին՝ գրիշ» Վարք Հարանց»ի: — 1559 գրիշ ի Կ. Պոլիս, — Արիստակէս Շամբրցի գրիշ Յիշատակարանի երուսաղէմի մէջ 1610ին (Աղաւնուհի՝ «Միաբանք» էջ 36—7: Յիշատակարանին վերջին տողին «վայ Բղ. ձ. Չ. Մ. Ն. Ժ. Ո. Հ. Մ. եղկելի» Չ տառը պէտք է ձի սրբագրել եւ կարգալ «վայ քեզ Որստակէս եղկելի»): — ք. գրիշ ի Կ. Պոլիս 1636ին, նոյնը անշուշտ՝ որ իբրեւ գրիշ կը յիշուի նորէն ի Կ. Պոլիս 1649ին եւ 1653ին. — դարձեալ Արիստակէս ք. գրիշ ի Կ. Պոլիս 1668,

— Արիստակէս սրկ. գրիշ ի նոր գաւիթ գղ. 1673ին, — Արիստակէս Եազովցացի գրիշ ի Սիլիստրէ 1678ին, — Արիստակէս ք. գրիշ ի նոր Ջուղայ 1686ին, ի Շօշ՝ 1689ին, — Արիստակէս գրիշ ի Քարղմա գղ. Գանձակայ 1698ին:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ Խարբերգի, հայ աշուղ Ժէ. դարուն:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ Ս. ՀԱՅՐԱՊԵՏ վանք, կամ Չելքէկ աւերակ վանատեղի Չիլէի հարաւակողմը: Ըստ աւանդութեան՝ երբ Արիստակէս Նիկիա գնաց՝ հոս ազբիւր մը բղխեցուցեր է, որուն ջուրով կը մկրտուին եւ կը լուացուին հիւանդները եւ կը բժշկուին: Ս. Աստուածածնայ գօտին հոս գտնուած է:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍԵԱՆ ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍ, Պաղտատցի, անասնարոյժ իր ծննդավայրին մէջ:

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍԵԱՆ Մարտին, Ատամնարոյժ, ծնած թեհրան 1910ին, տեղ-

ւոյն ծխական դպրոցը աւարտելէ ետք 14 տարեկանին ատամնարուժութեան կը հետեւի Ղազվինի մէջ, աշակերտելով Տոքթ. Մատթէոս Ոսկանեանի, յետոյ Թեհրանի պետական ատամնարուժարանը կը յաճախէ եւ վկայական ստանալով Ղազվին կը վերադառնայ, ուր 1933-էն ի վեր իր սեփական ատամնարուժարանն ունի:



ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍԵԱՆ ՄԱՐՏԻՆ

ԱՐԻՍԱՍԱԿԷՍՍԵԱՆ Վ. հիմնադիր պարարուեստի ինստիտուտի՝ Երևանի մէջ, 1924ին Երևանի մէջ հիմնուած է պարարուեստի հաստատութիւն մը՝ նախաձեռնութեամբ երիտասարդ արուեստագէտ Վ. Արիստակէսեանի: Այս հաստատութիւնը նըպատակ ունէր ուսումնասիրելու հայ ժողովրդական պարերը, անոնց ծագումն ու վերամշակումը Յարդ 60ի մօտ հայկական պարեր սորվեցուցած է:

ԱՐԻՍԱՍՏԷՂ, յոյն փիլիսոփայ ապրած է 384—322 (ն. ք. Բ.): Ուսուցիչն եղած է Մեծն Աղեքսանդր Մակեդոնացւոյ: Դաւիթ Անյաղթի գործերուն մէջ (տպուած Վենետիկ 1833ին) կան հետեւեալ «տասն ստորագրութիւնք Արիստոտէլի (Գլ. Ը.), Մեկնութիւն ստորագրութեանցն Արիստոտէլի (Թ.), — Արիստոտէլի յաղագս մեկնութեան (Ժ.), — Մեկնութիւն չորեքտասան

գլխոց, ի վերուձական Արիստոտէլի (ԺԲ), — Արիստոտէլի թուղթ առ Մեծն Աղեքսանդր, Յաղագս Առաքինութեանց (ԺԵ.):

Փր. Կոնիքիի հետեւեալ ուսումնադիրութիւնը գրած է «Քննութիւնք գրոց Գաւթի Անյաղթի կամ քարգմանութեանց Արիստոտէլի» գոր Հ. Յ. Տաւեան քարգմանած է 1893ին (Ազգ. Մատենագր. Ժ.):

ԱՐԻՏ, լեռ Չորրորդ Հայոց և Աղձնեաց Հանձիթ և Արզն գաւառաց մէջտեղ:

ԱՐԻՏ կամ ԱՐԼՏ, հին գղ. Սիւնեաց Ծղուկ գո. ի մէջ, գոր 908ին Հայկազուն Սուփանեան իշխանները Տաթեւոյ ընծայեցին:

ԱՐԻՔ տե՛ս Քուշանք և Քուշանաց երկիր: — Պարսիկները Արիք կը կոչէին իրենք զիրենք և նորոնք որ իրենց հետ միացած չէին՝ Անարիք:

ԱՐԼ (Aries), Ֆրանսական քղ. Մարտէյէն 2 ժամ հեռու, ուր 200 հողուով հայ գաղութ մը կայ:

ԱՐԼԷՆ ՄԱՅՔԼ (= Գուշումճեան Տիգրան), հայագրի աշխարհահռչակ գրագէտ, ծնած է Ռուսչուք 1890ին: Երբ դեռ հինգ տարու էր Տիգրան՝ հօրը հետ Լոնտոն կ'անցնի ուր նախնական կրթութիւնը ստանալէ ետք բժշկութեան կը հետեւի Էտինպըրկի համալսարանը:

Կէս ամիս կը տեւէ սակայն իր ուսողութիւնը. կը դառնայ Լոնտոն և ապրուստը ձարելու համար ինքզինքը կու տայ գրականութեան՝ Մեծ պատերազմին իրր պուլկարահպատակ՝ թշնամի կը նկատուի յաշս Անգլիական իշխանութեան, բայց իր սրտաբուխ պաշտպանողականութիւնը կ'արտօնուի կառավարութեան ի նպաստ աշխատիլ և գրիչ շարժել: Պատերազմէն վերջ կը նուիրուի վիպագրական ճիւղին, և իր բեղուն երեակալութեամբ և գրաւիչ ու խայթհամեղ ոճով յաջորդաբար կ'արտադրէ գործեր, որոնք ցոյց կու տան թէ հեղինակը բրիտանական աշխարհի բարեկեցիկ դասուն կենցաղն ու տիպարները լաւագոյնս ուսումնասիրած էր, և որոնցմով աշխարհահռչակ կը դառնայ, — չէ՞ որ տիեզերական էր գործածած լեզուն, անգլիներէնը Ահա իր սկզբնական տարիներու երկերը. Կանանչ գլխարկը, Ասպասակութիւն. Անհետք կիր, Լոնսոնեան Արկաւախնորութիւն Բոլոր անգլիական թերթերը միշտ ներթողած են հայածին Արլէն Մայքլը:

Մ. Արլէն 1924ին Միացեալ Նահանգաց մէջ յոյս ընծայեց նոր հատոր մը, Չֆնաղ Մայիս, որուն մասին Ուրլոյ թերթի քննադատը խիստ արտայայտուեցաւ սակայն, հեղինակը ներկայացնելով իրր մէկը՝ որ ժողովրդականութիւն շահելու մարմաջէն տարուած, իր գրիչն իջեցուցած է հասարակ վիպասաններու աստիճանին:

Որքան որ Արլէն առիթ չէ ունեցած մարտնչի լեզուն սորվիլ և հայ մշակոյթով սնանիլ, սակայն ամէն առիթի յայտնած է հպարտութեամբ իր հայ ըլլալը: 1924ին երբ Ամերիկա գնաց՝ ան շփուժ ունեցաւ իր ազգակիցներուն հետ: Միացեալ Նահանգներու թերթերէն մին Գրրրնիս Օբեներն գրեց մեր ազգակցին մասին. «Մ. Արլէն նոր աստղ մըն է գրական երկնակամարին վրայ: Այս երիտասարդ Հայը կը դրէ անգլիներէն ա՛յնքան սահուն և խնամեալ՝ որ կարծես անգլիացի մը եղած ըլլար... Իրր զրուցարան՝ կարելի է դասել եթէ ոչ Ասքըր Ուայլտի, գէթ Մաքս Պիրպոմի շարքին»: Ն. Եօրթ թայլոգ, «Նրբակերտ ու ողջամիտ երկ («Կանանչ գլխարկը»), վախճանը կատարելութեան, որով ստուգիւ պիտի պարծէր մերօրեայ որեւէ վիպագիր. հրաւէր մը անթերի արուեստի: (Թեոդիկ՝ Ամ. Տարեցոյց 1926 էջ 675): Անգրագոյն տեղեկութիւններու համար տե՛ս ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ Տիգրան):

ԱՐԻՍԱՆԵԱՆ Գալուս, Հնչակեան հերոս, 14 տարի բանտուած Սուլթան Համիտի օրով:

ԱՐԻՍԱՇԱՆ, լեռ Գեղարքունի գո. ի արեւմտեան սահմանածայրը:

ԱՐԻՍԱՇԱՆ, այլազգարնակ գղ. Արագածոտն գո. ի Անրերդի աւերակներուն մօտերը:

ԱՐԻՍԱՆԻ, հայարնակ գղ. Տիգրանակերտի Խիան գաւառակի մէջ, 1900ին 30 տ. հայ բնակիչ ունէր. եկղ. Ս. Թովմաս:

ԱՐԻՍՎԱԼԻ (Մեծ) տե՛ս Մանրաւ:

ԱՐՄԱԹԱՀԱՆԻ, կը գտնուի Արցախի Զրարերդ գո. ի մէջ Մեհմանանց գիւղապետի ճամբով:

ԱՐՄԱԹԱՂԵՐԻՔ Այրարատայ Բասեն գո. ի մէջ, Կարնոյ սահմանակից լեռներէն ըզխող աղբերակունք, որոնք Երասխ գետը կը սկզբնաւորեն: Ղազար Փարպեցեոյ յիշած Արծաքալիբեբը ոմանք Կարնոյ հիւսիսակողմը կը դնեն, Արծաթի գիւղի մօտերը:

ԱՐՄԱԹԻ կամ Արծրի, հին և անուանի գիւղ Կարնոյ գո. ի մէջ, Տուժուլ լեռանց ստորոտը, Կարնէն 4 ժամ հեռի: 1900ին ունէր 56 տուն հայ կաթողիկէ Ս. Աստուածածին եկեղեցիով, 12 տուն լուսաւորչական Ս. Նշան եկեղեցիով, և 20 տ. մահմետական բնակիչ ունէր: Ե. դարէն ծանօթ է գիւղս (Ղ. Փարպեցի): Գիւղիս կոնակը բարձրացած լեռնակի բարձանց վրայ կը գտնուի Լուսաւորիչ (Ս.) վանքը (տե՛ս):

ԱՐՄԱԿ, գղ. Բագրեւանդ գո. ի մէջ, ուր ըստ Ղազար Փարպեցեոյ Ս. Վարդանայ հաւատարիմ նախարարք ձերբակալեցին Զանգազան մասնիչը և մերձակայ Բերդկունք գղ. ի մէջ քարկոծեցին:

ԱՐԾԱԿ, տեղի կամ գիւղ բերկրիէն քիչ հեռու, ուր գնաց յունաց իշխանը իր հեծելազօրքին առատ պաշար գտնելու համար: (Չամչ. Բ. 917):

ԱՐԾՄՓ, հին և անուանի բերդաւան Կողովի գո. ի Չինկիլի լեռնահովիտին մէջ: Ե. դարուն սկիզբը Արրահամ կթղ. ի Դուին զուժարուած ժողովին մէջ կը յիշուի տեղւոյ վանքին երէցը Յովհաննիկ: 1900ին 60 տ. հայ կար, մօտն է Ս. Գրիգոր աւերակ վանքը և Ծաղկավանքը: (Էփր. «Յնախարհիկ» Բաղուած Հ. Ալիւանի «Արարտ» էն, էջ 509—10):

ԱՐԾԸԹԻ 8. Արծաթի:

ԱՐԾԻԱՍ, դաշտ Փոքր Հայոց Կիլիստոս քղ. ի մօտ, ուր Հոռոմք բռնեցին Հայոց Գագիկ թգ. ր և սպաննեցին:

ԱՐԾԻԻ, «կիսամսեայ՝ աղգային գրական և քաղաքական» տպ. Պոստոն 1905—6 (14 համար), խմբ. Արշակ Մահաթեան:

ԱՐԾԻԻ շարաթատերթ. տպ. Կ. Պոլիս 1928 (Ն. Գասապ. «Յազմալիկ» 1927, 204):

ԱՐԾԻԻ, «պարբերաթերթ Հայ Թուրիստ Արծիւ» Միութեան» տպ. Բյովտիւ, 1930ին, խմբագիր՝ Թաղուոր Գեորգեան:

ԱՐԾԻԻ կամ Արծիւ, հին գղ. Սիւնեաց Ծղուկ գո. ի, զոր 839ին Դաւիթ եպ. գնեց Սիւնեաց Փիլիպոս գահերէց իշխանէն Բերդկաներիչ գղ. ի հետ: ԱՐԾԻԻ Հայկ «տէր և տիկին», երգիչներ, 1937-էն այլևայլ մայրաքաղաքներու մէջ երգահանդէսներ կու տան:

ԱՐԾԻԻԵԱՆ Աբրահամ տե՛ս Աբրահամ կթղ. Արծիւեան:

ԱՐԾԿԷ, Այնաւագ կամ Ասիլնեվագ, վան հանգի գլխաւոր գաւառներէն մին, կը համապատասխանէ հին Տուրուբերանի Խորխոռունեաց գո. ի մէկ մասին: Կ'իշնայ Խյաթու, Պուլանըլի, Մանագկերօի և Արծէշի մէջտեղ, հարաւային կողմը սահմանափակուած վանայ ծովակով: Սիփան Մասիք մեծ և զեղեցիկ լեռը նստեր է գաւառիս վրայ: Սոյն հսկայ և հրաբխային լեռան գլուխը՝ 7—8 արտի ընդարձակութեամբ լեռնադաշտ մըն է:

Գաւառիս բնակիչներն են Հայ, Թուրք, Չէրքէղ և Քուրտ. 1900ին գաւառիս Հայոց թիւը 16—17000 էր, ունէր մօտ 30 հայաբնակ գիւղ: Գաւառիս գլխաւոր վանքն էր՝ Սեանչելագործ:

ԱՐԾԿԷ կամ Արծիւե, հին աւան կամ քղ. վերոյիշեալ համանուն գո. ի, վանէն 165 հզրմ. հեռու. ծովով 4.5 ժամէն կարելի է երթեւեկել: 1900ին 2500 բնակիչ ունէր կէսը մահմետական և կէսը Հայ՝ երեք յարանուանութեանց բաժնուած: Մ. Խորենացին կը յիշէ աւանս իրրև հայրենիք Սուրմակ հակաթոռ կթղ. ի: Շատ պատերազմնե-

րու ենթակայ եղած է: ԺԱ դարուն Տուզլի առաւ աւանս և շատ մարդ կոտորեց ու գերի տարաւ: Ինչպէս Արիստակէս Լաստիվերացի կ'ըսէ այդ պտեն բարգաւաճ վիճակ մ'ունէր Արծկէ և անուանի էր իր անառիկ բերրով: Աւանիս մէկ մասին մէջ կը տեսնուի հին եկղ. մը և հին մղկիթ մը: Ըստ Ձեռագրաց յիշատակարաններու՝ Արծկէ Ս. Աստուածածին և Ս. Նշան անուամբ երկու եկղ. ունեցած է: 1900ին՝ Ս. Աստուածածին եկղ. մը և Ս. Սարգիս անուամբ երկու անշուք եկեղեցիներ ունէր: Աւանիս մօտ՝ հիւսիսային կողմը, Սիփանայ մէկ կողին վրայ կառուցուած է հռչակաւոր վանք մը՝ ի հնուին Երաւաւոր կոչուած, և այժմ Սեանչելագործ (տե՛ս): (Միւրախուրեան՝ «Նկար. Ուղ» Գ. 36—42):

Արծկէ կը յիշուի Յիշատակարանաց մէջ: 1421-ին Սպանդիար կ'աւերէ քաղաքս: 1427ին Մաղարտայ վանքին մէջ է Գրիգոր գրիչ Արծկէցի: 1441 Գրիգոր մէկէ աւելի ձեռագիրներ կ'ընդօրինակէ Երուսաղէմի մէջ: 1437ին Սմկու բերդին տէրը Փիրաշի՝ կը նեղէ Արծկէի Հայերը: 1463ին և 1475ին Յովհաննէս ք. զ. որդի Յակոբ ք. ի՝ գրիչ Արծկէի մէջ: 1465 Արծկէցի Յովհ. գրիչ Գեղարքունեաց կամ գիւղին մէջ է: 1480ին Յակոբ որդի վերի (1463 և 1475) Յովհաննէս ք. ի Յայսմաւուր մը կ'ընդօրինակէ Արծկէի մէջ, ուրիշ ձեռագիր մը 1500ին: Ա՛յլ է Յակոբ եպ. գրիչ Արծկէի մէջ՝ 1499ին: 1534ին Դահմազ Արծկէին կը տիրէ: Յակոբ վրդ. (Արծկէցի) 1551ին կը գրէ «Տաղ վասն շարժման կարմիր գլխոյ»: 1652ին վանեցի Թաղէոս գրիչ մը կը յիշուի Արծկէի մէջ:

ԱՐԾԿԷՈՅ ԿՂՁԻ, կղզեակ վանայ ծովակին հիւսիս-արևմտակողմը, Արծկէ աւանին դիմաց, յորում նշանաւոր էր Ս. Ստեփանոսի մենաստանը, որ Յիպնա ևս կը կոչուէր (տե՛ս):

ԱՐԾՆ, Արզն կամ Էրզն ի հնուին նշանաւոր քղ. և շահաստան Բարձր Հայոց Կարնոյ գո. ի մէջ, որուն մնացորդներն և աւերակները այժմ կը տեսնուին Գարարդ կամ Խարարդ հայաբնակ գղ. ի շրջակայքը: Կ'իշնայ Կարնոյ հիւսիսակողմը 3 ուկէս ժամ հեռու, ծովու մակերեսէն 6000՝ բարձր: Ո՛չ կառուցման ժամանակը կը յիշուի և ոչ ղէպք մը առաջին դարուց մէջ: Կ'երևի թէ ԺԱ. դարուն շատ ծաղկած էր վաճառականութեամբ և ճութութեամբ, վասնզի կ'ըսեն թէ նոյն դարու կիսուն ունէր 300.000 (!) բնակիչ և 800 եկեղեցի, որոնց տեսուչ կը յիշուի Դաւթուկ անուն քոր եպիսկոպոս մը: Կոստանդին Մոնումարտոս կայսրը Պետրոս կաթողիկոսին հրամայեց որ այս քաղաքին մէջ նստի, ուր մեծահանդէս կատարեց ջրօրհնեաց և Աստուածայայտութեան տօնը: Ա-

րիստակէս Լաստիվերտցին որ ակնատես եղած է Արծնի ուրախ և տխուր օրերուն, և իրեն քաղաքը կ'անուանէ, մեծ գովեստիւք կը խօսի անոր վրայ, որուն խօսքերէն մէջ կը բերենք հետեւեալը, «... Հոյակապ և ակնաւոր էր (Արծն) ամենայն այնպէս, իրրե զքաղաք՝ որ ի վերայ լերին կայցէ. և ծով և ցամաք երկնէր և առասանայր կրել ի սմա զգորութիւն իւր... նման իմն էր նորահարսն կնոջ, որ զեզոյն վայելչութեամբ՝ ցանկալի գոյ ամենեցուն... վաճառականք՝ եկեղեցւոյ շինողք և դարդարիչք, կրօնաւորաց օթեւանք և հանգուցիչք, և առ աղքատս ողորմածք և դարմանիչք... փառաւորք և օգնողք թագաւորաց: Եւ իրրե ակն մի պատուական լուսագեղ պայծառութեամբ փայլէր ի մէջ ամենայն քաղաքաց, ամենեւին գեղեցիկ, ամենեւին զարդարուն»: Ըստ Մատթէոս Ուռնայեցւոյ երբ Տուղրիլ Սուլթանի զօրքերը 1049ին քաղաքիս վրայ յարձակեցան՝ 150000 հոգի ջարդուեցան, որոնց մէջ և 150 քահանաներ: Կը թուի թէ Արծն քիչ տարի վերջ վերստին աւան դարձած է փախըստականներու վերադարձով, վասնզի ութ տարի վերջ 1057ին, այլազգի ասպատակողները Բլուր գիւղի վրայ դիմած ժամանակ, հոն ասպատանած էին Արծն աւանի բնակիչները: (Էփրիկեան՝ «Բնագաւառիկ»):

ԱՐԾՆԵԱՆ, վարժարան Կարնոյ մէջ զոր Յակոբ Մակարեան 1850ին ի հիմանց վերաշինեց:

ԱՐԾՆԻ Տ. ԱՐԳԻ:

ԱՐԾՆԻ ԶԵՐՄՈՒԿ (աղաջուր), համանուն գեղին մօտ Հրազդան գետի ափը, Երեւանէն 24 հզրմ. հեռի, ուր Մայիսէն Հոկտեմբեր հարիւրաւոր բանւորներ կ'երթան քայքայուած առողջութիւննին վերագտնելու: («Բնագւ.», 1932 թ. 1 էջ 24):

ԱՐԾՈՒԱԲԵՐ Վ.ԱՆՔ, Վասպուրականի Քաջրեբունեաց գւ.ի մէջ, Ակունց աւանին քով կը գտնուի Ս. Ասուածածնի Արծուաբեր վանքը, Սոսկուն հայրանակ գղ.ի վերելը: Նշանաւոր է զարմանալի ճարտարադորձութեամբը և հոյակապ շինուածքովը: Բարձրակատար կաթողիկէի գմբէթը խոնարհած է բաւական տարիներ առաջ, և կրկին նորոգուելը անկարելի է եղած: Վանքս գղեկի նմանութիւն ունի, շուրջը կը պատէ անազին հաստահիմն պարիսպ և չորս անկիւնները կան աշտարակներ: Բոլորաձև գաւթի տակը շինուած են զանազան ներքնատներ և ներքնուղիներ, կան նաև շտեմարաններ, ցորենի հորեր՝ բոլորը քարուկիր և սալալստակ որմերով: Կը կարծուի թէ վանքս կառուցուած է

Հինգերորդ դարու մէջ, որ ծառայած է երբեմն պաշտելատեղի և երբեմն պաշտպանուելու ամբողջ: Վանքիս վանահայրերուն մէջ երեւի եղած է Տէր Սողոմոն Պապան՝ Գեղի-Քեթիւց մականուանուածը, որ քաջ ձիավարժ էր: 1896ի տըխրահոչակ օրերուն՝ վանքս կողոպտուեցաւ: (Էփրիկեան՝ «Բնագաւառիկ»):

1396ի յիշատակարանի մը մէջ յիշուած Սուհարայ կամ Խողձա վանքը 1414ի ուրիշ յիշատակագրէ մը Արծուաբեր Ս. Ասուածածնի կը կոչուի: Այդ թուականին Յակոբ Ասպիսընկեցի, եղբ. Անդրէաս արեղային, Գրիգոր Տաթեւացւոյ Մատթէի մեկնութիւնը կ'ընդօրինակէ: 1425ին Գրիգորիս Խլաթեցին էր Սուխարայի առաջնորդը: Այդ տարին ուրիշ յիշատակարանի մը մէջ կ'ըսուի թէ Սուխարայ վանքը Խառաբաստայ վանք կը կոչուի, որուն Չաքէոս առաջնորդի խնդրանօք հոն Գրիգոր Ոսկեփորիկ ժողովածուն կ'ընդօրինակէ:

1469ին Արծուաբեր Ս. Աստուածածին վանքէն Չաքէոս՝ Շարական մը կը ստանայ: Այդ ստանուան միաբաններուն մէջ կը յիշուին Յովհաննէս Իմաստուն վրդ. և Տէր Յովհաննէս Արքեպիսկոպոս:

1526ի Խառաբաստայ վանքի առաջնորդն է Մարգար վրդ. և Ստեփանոս Արքեպիսկոպոս գրիչ՝ Մարգարայ Արճիչեցի: 1531ին միեւնոյն Մարգարէ Արճիչեցին է որ Սաղմոս մը կ'ընդօրինակէ, էջմիածնի թիւ 969 ձեռագիր Մաշտոցը Արճէչ գրուած է Յովհաննէս վրդ.է, այդ յիշատակարանին մէջ կը յիշատակուի Մարգարէ գրիչը և Ստեփանոս Եպ. շնորհող օրինակին: 1571ին Լիմ անպատին մէջ օկուած Մաշտոց մը Արծուաբեր Ս. Աստուածածին վանքին մէջ կ'աւարտի ձեռամբ Չաքարիս եպ.ի, յառաջնորդութեան Սուխարայ ուխտին Մինաս եպ.ի: 1885ին Կարապետ եպ. կը նորոգէ Աւետարան մը Քաջրեբունեաց երկրին մէջ, որ է Արճէչ, Սուխար թգ.ի վանքին մէջ որ Խառաբաստայ վանք կը կոչուի ընդ հովանեաւ Արծուաբեր Ս. Աստուածածնի: յառաջնորդութեան Մինաս եպ.ի: Գըրչին ուսուցիչն է քաջ քարտուղարն Աստուածատուր: 1598ին ալ հոս ձեռագիր մը կ'ընդօրինակուի ու ասկէ ետք վանքս յիշատակող ոչ մէկ յիշատակարանի մը կը հանդիպիմ:

ԱՐԾՈՒԱԹՈՒԶ Վ.ԱՆՔ, Կեղարքունի գւ.ի Արծուաբար գիւղի սահմանները կը գտնուի, արձանագրութիւնը եղծուած լինելով՝ շինութեան թուականը յայտնի չէ:

ԱՐԾՈՒԱՆԻԿ կամ Արծուեցիկ, գղ. Սիւնեաց

Բաղք գու.ի գլխաւոր տեղի համանուն հասարակութեան. բն. 1000: Հասարակութիւնը երեք հայաբնակ գիւղ ունի, որոնք են, Միլիքեյան, Չափնի և Սեւաբար:

ԱՐԾՈՒԱՔԱՐ, հին անունն Ղշլաղ գղ.ի Գեղարքունիի մէջ. 1900ին 1200 բն. ունէր, անշուք եկղ. Ս. Աստուածածին: Դիմացի հին կամուրջին մօտ կան ԺՁ. դարու վերաբերեալ խաչքարեր, Գիւղիս մօտն է Արծուաբուիչ վանքը: (Ամբաս. Եանց Արեւա. «Գեղարքունի» էջ 491-3):

ԱՐԾՈՒԻՔ Տ. Այծեաց բերդ:

ԱՐԾՈՒՂ Տ. Գալարիս.

ԱՐԾՈՒԱՆԱՅ ՁՈՐ Տ. Եմանու ձոր:

ԱՐԾՈՒԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ, թռուցեալ հայրենասէր թեօք յԱրծրունի մենաստանէն վարագայ, խմբագիր հայրենախօս Մկրտիչ Վրդ. Ուրիմեան, տպ. Պոլիս 1855-6, վարագ 1858-1864: 1873-4 խմբ. Ս. Մանուէլ Անանեան:

ԱՐԾՈՒԻՔ ՏԱՐՈՆՅԱՅ, լրատար, թռուցեալ թեօք վասպուրական Արծուոյն. ի Մամիկոնեան աշխարհէն յիննականեան լերանց ի Մշոյ Ս. Կարապետի հրաշալի ուխտէն: Տպ. Մուշ (Տարօն), խմբ. Գարեգին Սրուանձտեանց:

ԱՐԾՐՈՒՆԵԱՆ ՄԿՐՏԻՉ († 1861) կամ Տէր Մարտիրոսեան, վրդ. միաբան Երուսաղէմայ Ս. Յակոբ վանքին, ծնած Բաղէշ 1800ի սկիզբները: Ուսած վանքին ժառանգաւորաց վարժարանին մէջ և վրդ. ձեռնադրուելէ ետք Յոպպէի ու Դամասկոսի տեսուչ կարգուած: Առան մը դաւանափոխ եղած է և յետոյ կրկին մայրենի եկեղեցւոյ գիրկը դարձած: Գրած է «Ասորագրութիւն սրբոյ քաղաքին Երուսաղէմի քննութեամբ համառօտեալ ի Հաննա և ի Մարինոս պատմագրաց, ընդ որս յաւելեալ բազում բանս հանդերձ կարեւոր ծանօթութեամբք»: Այս 533 էջոց գիրքը տպուած է Երուսաղէմ 1859ին: Հինգ տարի առաջ ալ լոյս ընծայած է «Բացատրութիւն հրաժարման և զղջման բանից սրբոց Հարց. և Յիւսեպոս, Աբիարի ամենայն և Առաւօս լուսոյ երգոց Սրբոյն Ներսէսի Շնորհալուոյ: Աշխատասիրեալ ի Մկրտիչ վ.է Երուսաղէմի»: Տպ. Երուսաղէմ 1854, 292 էջով: Արծրունեան վրդ. Երուսաղէմի մէջ վախճանած է 1861ին: (Տես նաեւ Աղանուցիի «Միաբան» էջ 303-4 ուր նշանակուած են բնագործակաւ ձեռագիրները):

ԱՐԾՐՈՒՆԵԱՅ ԵՐԿԻՐ ՏԵՍ Արծրուցի:

ԱՐԾՐՈՒՆԻ Աբուսահի, Ասով, Գուրգեն, Գրիգոր, Դաւիթ, Սահակ, Սեմեֆերիմ, Վասակ ևն տե՛ս իրենց մկրտութեան անուններուն տակ, ԱՐՈՒՍԱՀԼ, ԱՏՈՄ, Արծրուցի ևն.:

ԱՐԾՐՈՒՆԻ Անդրեաս, ուսուցչապետ, (1847-98) փոքր եղբայր Գրիգոր Արծրունւոյ, ծնած է 1847 Նոյ. 15ին Մոսկուայի մէջ: Իր բարձրագոյն ուսումը առած է Գերմանիա և Գերման համալսարաններու մէջ հանքարանութիւն դասախօսած: Կը հաստատուի Մոսկուայի մէջ և 1896ին Պետերբուրգի Գիտ. Ակադեմիայի անդամ կ'ընտրուի: Գերմաներէն և ռուսերէն լեզուներով 50էն աւելի գիտական գրքեր հրատարակած է: Վախճանած է Մոսկուայի մէջ 1898 Սեպտ 10ին: Մահուն առթիւ հայ մամուլը դրուատիքով արձանագրած է այս գիտնականին մահը. «Արաքս» 1898 Գիրք Ա. էջ 172.— «Բազմավէպ» էջ 592.— «Հանդէս Ամսօրեայ» Թիւ 10, 11, 12.— «Մշակ» Թիւ 105, 169, 176, 179 ևւայլն:

ԱՐԾՐՈՒՆԻ Առոս, նոր գրողներէն, անդամ Հայ Գրողներու Ընկերութեան:

ԱՐԾՐՈՒՆԻ Գեորգ, Արեւելահայ գրչի մշակ մը որ 1829ին Տիգրիսի ներսիսեան հոգեւոր զպրօցի տպարանէն լոյս կ'ընծայէ Դասասան խրատուց գիրքը, «Քաղեալ ի գրոց իմաստասիրաց ջանիւք ազնուական Գէորգայ Արծրունւոյ, ի վայելս մանկանց Հայաստանեայց»:

Գրքին վերջը ոտանաւոր մը կայ՝ Բան առ վերձանդս խորագրով, ուր հետեւեալ տեղեկութիւնները կու տայ իր անձին մասին:

«... Քսանամենիւք երկու ընդ նրմին ելի յիմ երկրէ պանքրխսել ինքնին... Շրջել ընդ ոլորսս իւր Հոլագրեղիին Ընքել ինձ սեղի բնակիլ ի նրմին: ՅԱսիա մասն ընդ Պարսկաստանին. ի Պարսից ծովէ Մարմարականին. ի Կասպից ծովէ ցրվերջ Պոնտոսին, Բարս եւ վարս ազգաց առի ի գննին: Բոպէ երգ երգոց նրկարք իմ գրչին, Վեր առեալ ամին յերոպ աբխարհին. Համբաւ իմաստից որք հրոշակեցին Կրքրութիւն անձանց եւ հաննարք նոցին: Ծեր լայնամաւալ ի Ռուսաստանին, Իսալ, Գերմանիա ընդ Գաղղիային, Անգղիա, Հոլանտիա ընդ Բոլոնիային Շուէքիւք, Սպան ընդ Աւստրիային...»

Գրքին ճակատէն կը գուշակուի որ ինքը հեղինակը չէ եղած զայն տպողը քանի որ իր անունան առջև, ազնուական դրուած է: Նոյնպէս կ'ենթադրեմ որ այս Արծրունի Գէորգն եղած ըլլայ Ներսիսեան Հոգեւոր Դպրոցին տպարանուէրողը: Առաքել Արարատեանն ալ յիշատակած է սապէս իր գրքին ճակատը. «Ի տպ. Ներսիսեան Հոգեւոր Դպրոցին Հայոց յԸՆԾԱՅԵԼՈՅ յԱզնուա-

կան Ազայ Գէորգայ Արծրունւոյ: Գէորգ Արծրունւոյ զիրքն ալ կը տպուի «Ի տպ.ի Հոգեւոր զբարոյն յրեմայելոյ յաղնուական Գ. Արծրունւոյ»:

ԱՐԾՐՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ. (1840—1892) հրապարակագիր, ծնած Մոսկուա 1840ին 1855ին Գերմանիա կ'երթայ, ուր կ'ուսանի գերմաներէն եւ լատիներէն 1863ին Թիֆլիսի ուսումնարանէն շրջանաւարտ ըլլալով՝ կը մտնէ Մոսկուայի բնագիտութեան վարժարանը: Ապա կ'անցնի Նիս, ժընեւ, Յիւրիխ, ուր համալսարանական դասընթացքներուն կը յաճախէ: 1867ին Հայտելայէրկի համալսարանը կը մտնէ, ուրկէ փիլիսոփայական տոքորի վկայականը կը ստանայ:

Գրիգոր Արծրունի հրապարակագրութեան հետեւելու համար անհրաժեշտ համարեց մայրենի լեզուն արմատորէն ուսանիլ, այդ պատճառաւ վենետիկ անցաւ և Մ. Ռախայէլեան վարժարանին մէջ Իգնատիոս վրդ. Կիւրեղեանէն (յետոյ Մխիթարեան Միարանութեան Արքայ) հայերէնին հմտացաւ ու Կովկաս անցնելով 1872ին Մշակ թերթը հիմնեց, որ հայ հրապարակագրութեան մէջ միակը պիտի մնար իբր օրկան ազատակալութեան:

Գրիգոր Արծրունի առանց նկատումի, նախապաշարումի, հարուստներու ղէպի ազգը ունեցած անտարբերութեան ղէմ մաքառեցաւ իր թերթով, կուռ խմբագրականներ գրելով: Իր ընտանեկան հարստութիւնը նուիրեց թերթին զարգացման և տարածման:

1890ին իր գրական գործունէութեան (1865ին «Մեզու Հայաստանի» թերթին մէջ սկսաւ գրել) 25 ամեակը տօնուեցաւ:

Մեռաւ 1892ին երբ իր հիմնած թերթը Մշակ Բասնամեակին մէջ թեւակոխեց:

Բովանդակ հայ մամուլը — Արեւմտեանն ու Արեւելեանը — ողբաց իր վեթերանը, մահուան երկրորդ և երրորդ հինգերորդ տարեկիցին, մանաւանդ տասնամեակին՝ հայ թերթերը կրկին գրեցին այս անձնուէր գրչի մշակի մասին:

Արծրունին բացի «Մշակ» օրաթերթէն, որ լոյս տեսաւ Թիֆլիս մէջ և մահէն ետք մինչև 1920 շարունակցուեցաւ Ա. Բայանթարի և Հ. Առաքելեանի խմբագրապետութեամբ՝ 1890ին Այնսեղ է եւ այս սեղ գործը յիշով ուսանողական տպաւորութիւններ հրատարակեց: Յաջորդ տարին էվելինգ «հոգեբանական էտիւզ (հայերէն միանտիպ ձեռագրից), արտատպուած «Մշակ» լրագրից. որը 1892ին Պոլսոյ «Հայրենիք»ին մէջ արտատպուեցաւ և Ա. Դասաակեան 1894ին ուսերէնի թարգմանելով՝ Բագուի մէջ հրապարակ

հանեց: 1894ին Թիւրքաց Հայերի սնեսական ցրութիւնը 38 էջոց գրքոյկը հրատարակեց և 1904ին, «Մշակ»ի խմբագրութիւնը՝ «Մշակ»ի բաժանորդներուն նուէր տալու համար ի լոյս ընծայեց

Գրիգոր Արծրունու աւխտութիւնները՝ VII+408 էջով: Այս հատորին մէջ «գետեղուած են այն խոշոր ու մանր յոգուածները, որոնք լոյս են տեսել մինչև լրագրի հրատարակութիւնը: Այդ յոգուածները վերաբերում են 1865 — 1871 թուականների շրջանին եւ տպված են եղել մասամբ Մեղու Հայաստանի լրագրում, իսկ մասամբ Հայկակ ան Աւխարհամտագրում»:



ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Բացի հանդէսներու և լրագիրներու մէջ Գրիգոր Արծրունիի մասին գրուածներէն (տե՛ս Հ. Ղազիկեանի «Նոր Մատենագրութիւն»ը էջ 245), Ա. Երէցեան, Լէօ, Խ. Մալումեան իրենց գրքերուն մէջ ուսումնասիրութիւններ գրած են Արծրունիի մասին, (տե՛ս նաև Թեոդիկ՝ «Ամենուն Տարեգոյց 1911 էջ 247»):

ԱՐԾՐՈՒՆԻ ԼԵՆՈՆ, բրոֆ. Միացեալ Նահանգաց Սաքրամէնթօ (Բայիֆօրնիա) քաղաքին մէջ, ՀՕԿի անդամ: Տե՛ս ՅԱԻՆՈՒՆՆԵՐ:

ԱՐԾՐՈՒՆԻ ԹՈՎՄԱՍ, պատմագիր, Տ. Թովմաս Արծրունի.

ԱՐԾՐՈՒՆԻ Կ. Ճարտարագէտ, Բարիդի (39 rue Victor-Masse Paris 9e): 1937ին հնարած է մեքենական ուղեղը և ցուցադրած համաշխարհային ցուցահանդէսին:

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԵՆԵՔԵՐԻՍ, Արեւելահայ, գրած է Սամուէլ Մուրաեանի կսակի խնդիրը՝ 132 էջոց գիրքը, արտատպուած «Մեզու Հայաստանի» լրագրէն և լոյս տեսած 1892ին: «Կոռուկ» հանդէսին մէջ ունի Նոր Պայազիսու Գաղթական Մեքելոյ նշանդրեմ ու հարսանիք. (1863 Գ. տարի թ. Ե.): Գրած է նաև Տփլիսեցի Ասպետաններ, տրամա 3 արարուածով, որուն ներկայացման առթիւ գրած է «Մշակ» 1882 թ. 21: Ունի թարգմանութիւններ Շէքսպիրէն, Օնէէն:

ԱՐԾՐՈՒՆԻ ՎԱՏԱՆ, Բրոֆ. բժշկապետ, Միւնխեն է 1860ական թուականին Թիֆլիսի մէջ: Նախնական և միջնակարգ ուսումը իր ծննդավայ-

րին մէջ ստանալէ ետք Բարիզի համալսարանը կը մտնէ և ընթացքը աւարտելէ յետոյ վկայական կը ստանայ Տոքթ. Վ. Արծրունի իր ծննդավայրը դառնալով գործի կը սկսի, ոչ թէ միայն հիւանդ դարձանելով՝ այլ բամբիւր բժշկական գրքեր հրատարակ հանելով: Եղած է Կովկասի մէջ իբր գիտուն բժիշկ, իբր գրող, իբր հանրային գործիչ: Բազմամթիւ առողջապահական յօդուածն եր գրած է թերթերու մէջ և 1892էն սկսեալ 30էն աւելի գրքեր ու գրքքոյկներ լոյս ընծայած է: Իր ամէնէն գնահատուած երկն է Աղջիկ փողոսով գիրքը: Ընդհանուր պատերազմէն առաջ իր գրական ու բժշկական գրուածքներով բրոֆ. Վ. Արծրունի մեր գրագէտ բժիշկներու փայլուն փառանքին առաջնակարգ դէմքերէն մին եղած էր արդէն: Իբրև հանրային գործիչ Թիֆլիսի թաղապետական և հիւանդանոցի բժիշկ եղած է. նուիրուած է առողջապահական հանրային գործունէութեան: Հրատարակած ու խմբագրած է Թիֆլիսի մէջ (1903—1905) Առողջապահական քերթը, «Կիսամսեայ նկարազարդ հանդէս»: Իսկ 1920ին Երևանի մէջ խմբագրած է Առողջապահիկ «ժողովրդական, առողջապահական կիսամսեայ հանդէս»ը: Դասախօսած է Թիֆլիսի ներքինան դպրոցի և այլ վարժարաններու մէջ: Հայաստանի խորհրդայնացումէն յետոյ, ինքն է եղած մին այն հայ բժիշկներէն՝ որ մեծ ջանքերով և գոհարբութիւններով՝ այնպիսի բոլոր մը, երբ միջոցները չափազանց անձուկ էին, հիմնեցին Երևանի բժշկական համալսարանը, եւ 1921էն ի վեր ինչ մարդկազմութիւն կը գասաւանդէ: Վերջին տարիներու ընթացքին ան հրատարակած է ռուս-լատին-հայ բժշկագիտական բառարան մը, և այժմ (1930ին) կը պատրաստէ հայերէն լեզուով մարդկազմութեան դասագիրք մը՝ վեց հատորէ բաղկացած:



Բրոֆ. Վ. Արծրունի

«Այս վաստակաւոր հայ մտաւորականին յիսնամեայ յրեկանը Խ. Հայաստանի Համալսարանը հանդիսաւորապէս տօնեց 1930ին՝ մասնակցութեամբ կառավարութեան և Հայաստանի մտաւորականութեան և ժողովրդի ներկայացուցիչներէն» (Չօպանեանի «Անանիս», 1930 Ա. արի բիւ 5, էջ 115—6): Հրատարակած բժշկական [գրքերու ցուցակը տե՛ս (Պաղիկեանի «Նոր Մասեմագիսուրիւն» էջ 246—8):

Վ. Արծրունի թարգմանած է ՄՕՆԻՆ Բժ. Լ. Մ.էն և Վ.Ա.Քր.էն:

Արծրունի Վ.անհրաւ, վաստակաւոր ուսուցիչ, տնօրէն և հիմնադիր վարժարանի: Ծնած է 1875ին՝ Երզնկայի մէջ: Նախնական ուսումը 1881-1892 Ակնայ Կամարակապ գիւղին մէջ ստանալէ յետոյ անցած է Պոլիս, ուր յաճախած է կայսերական Գեղարուեստից վարժարանը, Ղալաթիոյ Կեդրոնականը և Օսմանեան լիսէն: 1896ին Կեդրոնական Ուսումն. Խորհրդոյ ատենապետ հանգուցեալ Կարապետ Իւթիւճեանի խորհուրդով մտած է Ուսուցչական ասպարէզը, ուր 43 տարի (մինչև 1938) անընդհատ աշխատած է իբրև Տընօրէն-ուսուցիչ՝ հասցնելով բազմամթիւ արժանաւոր և կարող սան-սանուհիներ: Պաշտօնավարած է Կ. Պոլիս, Ռոտոսթոյ, Ֆիլիպէ, Աարիանուպոլիս, Տարտանէլ, Սիվրի հիսար, Պէյրութ և Ազեքսանդրիա՝ ազգային վարժարաններու մէջ: 1936-37 դպրոցական շրջանին Ազեքսանդրիոյ մէջ հիմնած է, ի յիշատակ Աստուածաշունչի թարգմանութեան և Հայ Գրերու գիւտին, Թարգմանչաց վարժարանը, որուն նաև տնօրէնն է: Աշխատակցած է գլխաւորապէս հետեւեալ թերթերուն, Արեւիկ, Մասիս, Բիւզանդիոն, Սուրհանդակ, Մանգումբի էֆեմար, Ազատաս, Հայ Դպրոց, Ժամանակ, և Երկրպագի Արեւ և Յուսաբե և այլն թերթերուն՝ լուրջ յօդուածներով: Գրած է նաև Journal des Balkans և Echo de Bulgarie օտար թերթերուն մէջ: 1924ին Երուսաղէմի հանգուցեալ Դուրեան Պատրիարքէն ստացած է ուսուցչապետի վկայական: Ունի հետեւեալ գործերը.— Հայրենիք եւ իր բնական զինակիցները, Հայ Դպրոցը (մանկ. թատերգութիւն), Գրափունց, Կեցողագիսուրիւն, Պատերազմական յուշեր, Գիսուրեան դասագիրք մը: Իր հասցէն է V. Ardruni, rue Fakih 16 (Salah el Dine) Alexandrie (EGYPTE):

Արծրունի Վ.անհրաւ, վաստակաւոր ուսուցիչ, տնօրէն և հիմնադիր վարժարանի: Ծնած է 1875ին՝ Երզնկայի մէջ: Նախնական ուսումը 1881-1892 Ակնայ Կամարակապ գիւղին մէջ ստանալէ յետոյ անցած է Պոլիս, ուր յաճախած է կայսերական Գեղարուեստից վարժարանը, Ղալաթիոյ Կեդրոնականը և Օսմանեան լիսէն: 1896ին Կեդրոնական Ուսումն. Խորհրդոյ ատենապետ հանգուցեալ Կարապետ Իւթիւճեանի խորհուրդով մտած է Ուսուցչական ասպարէզը, ուր 43 տարի (մինչև 1938) անընդհատ աշխատած է իբրև Տընօրէն-ուսուցիչ՝ հասցնելով բազմամթիւ արժանաւոր և կարող սան-սանուհիներ: Պաշտօնավարած է Կ. Պոլիս, Ռոտոսթոյ, Ֆիլիպէ, Աարիանուպոլիս, Տարտանէլ, Սիվրի հիսար, Պէյրութ և Ազեքսանդրիա՝ ազգային վարժարաններու մէջ: 1936-37 դպրոցական շրջանին Ազեքսանդրիոյ մէջ հիմնած է, ի յիշատակ Աստուածաշունչի թարգմանութեան և Հայ Գրերու գիւտին, Թարգմանչաց վարժարանը, որուն նաև տնօրէնն է: Աշխատակցած է գլխաւորապէս հետեւեալ թերթերուն, Արեւիկ, Մասիս, Բիւզանդիոն, Սուրհանդակ, Մանգումբի էֆեմար, Ազատաս, Հայ Դպրոց, Ժամանակ, և Երկրպագի Արեւ և Յուսաբե և այլն թերթերուն՝ լուրջ յօդուածներով: Գրած է նաև Journal des Balkans և Echo de Bulgarie օտար թերթերուն մէջ: 1924ին Երուսաղէմի հանգուցեալ Դուրեան Պատրիարքէն ստացած է ուսուցչապետի վկայական: Ունի հետեւեալ գործերը.— Հայրենիք եւ իր բնական զինակիցները, Հայ Դպրոցը (մանկ. թատերգութիւն), Գրափունց, Կեցողագիսուրիւն, Պատերազմական յուշեր, Գիսուրեան դասագիրք մը: Իր հասցէն է V. Ardruni, rue Fakih 16 (Salah el Dine) Alexandrie (EGYPTE):



Արծրունի Վ.Ա.Հ.Ր.Ա.Մ

ԱՐԾ

ԱՐԾՐՈՒՆԻՔ, (Արժունեաց երկիր), նշանաւոր նախարարական տոհմ սերած Ասորեստանեաց Սենեքերիմ թգ.ի Ազրամելէք որդիէն, որ իր Սանասար եղբոր հետ հայրը սպաննելով Հայաստան փախաւ: Այս նախարարութիւնը հաստատեց Վաղարշակ Ա.: Իրենց պաշտօնն էր արծիւ տանիլ թագաւորին առջևէն, և ասկից ծագած կը համարուէ իրենց անուան Արժունիք կամ Արծիւ-ունիք, թէև իրենց անուան ստուգարանութիւնն ուրիշ կերպերով ևս կ'ընեն: Իրենց նախկին բնակութեան տեղն էր Աղձնեաց աշխարհի մէջ, որուն Արզն գաւառի անուամբ Արզրունի կոչուած կը համարուին: Արժունեաց երկիրը Սիմ լերան մօտ կը գտնուէր, այդ վայրը Սանասարի անուամբ Սանասունք և ռամկօրէն Սասունք կոչուեցաւ ու յետոյ բազմանալով ու զօրանալով Գնունեաց հետ զբաւեցին բովանդակ Վասպուրական աշխարհը, և այդ հողամասը Արժունեաց երկիր կոչուեցաւ:

Արժունեաց նախարարական տոհմէն շատ քաջ և անուանի իշխաններ եյան: — Գագիկ Արժրունի իշխանը Ժ. դարուն մէջ շատ զօրանալով և Հայոց Բագրատունի թագաւորաց զէմ ելլալով՝ 908ին Վասպուրականի մէջ առանձին Արժունեաց քաղաւորութիւնը հաստատեց: Արժունի թագաւորաց յաջորդութիւնը հետեւեալ հարգաւաւանդած են մեզ պատմիչները. — Ա. Գագիկ, Բ. Գերեմիկ Առոս որդի Գագիկայ, Գ. Աբուսահլ Համազասպ՝ որդի Գագիկայ՝ եղբ. Գերեմիկայ, Դ. Առոս Սահակ՝ որդի Աբուսահլի, Ե. Գուրգեն Խաչիկ՝ եղբայր Առոսի՝ որդի Աբուսահլի, Զ. Սենեքերիմ Յովհաննէս՝ եղբ. Գուրգէնի որ 1021ին երկիրը Յունաց տալով, Սերաստիա փոխադրուեցաւ ուր թագաւորեցին յետ Սենեքերիմայ՝ Գաւիթ Արժունի, Ասով և Աբուսահլ: Այս թագաւորութիւնը վերջացաւ 1070ին:

Արժունեաց տոհմի ծագման, անուան, պաշտաման, իշխանութեան, երկրի, ոստանի, ձմեռոցի և երեկի անձանց վրայ օգտաշատ տեղեկութիւններ կարելի է գտնել Ինճիճեան Դուկաս վրդ.ի Հայաստանի Հնախօսութեան մէջ, Բ. հատոր 108-121 էջ: (Էփրիկեան՝ «Բնագիտ.» էջ 306):

ԱՐԾՐՈՒՆԻՔ կամ Արզուսի, Այրարատայ Ագալոյլագ կամ Շահ-եօյ կոչուած լերանց բարձր կատարը:

ԱՐԿԱԳ կամ Արկադեոս, կայսր Յունաց, 383-ին գահակալեց իր Թէոդոս Ա. հօրը հետ, 395—408 առանձին: 387ին Արկադէոս պարսից հետ խաղաղութիւն կնքեց Հայաստանը երկուքի բաժնելով ընդ մէջ Յունաց և Պարսից:

ԱՐԿԱԳՈՒԿԵՐՏ, հին գղ. Սիւնեաց Վայոց-ձոր գո.ի մէջ:

ԱՐԿԱԶՆ կամ Արկազան, գղ. Վայոց-ձոր գո.ի, Մալիշկա գղ.ի հիւսիսակողմը: 1900ին 60 տուն Մայրազգի բնակիչ ունէր, որոնք ըստ իրենց հընչայլազգի բնակիչ ունէր, որոնք ըստ իրենց հընչման՝ Արզեագ կը կոչեն գիւղս: Մօտն է Ս. Խաչ վանքը (տե՛ս), նաև փոքրիկ եկեղեցի մը գեղեցիկ զրուագներով, քայքայուած, ունի ԺԳ—ԺԴ. դարուց արձանագրութիւններ, որոնք կը յայտարարուց արձանագրուած Պրօշ իշխանն թէ մատուցու կառուցանողն եղած է Պրօշ իշխանը: (Էփրիկեան՝ «Բնագիտ.» 118—9, «Արարատ» ամսագիր, 1889, էջ 165, 227):

ԱՐԿԱՅԱՆՈՒ ՇԷՆ, հայաբնակ գղ. Վարանդայ գո.ի, Շօշու գղ.ի մօտ. 1900ին 300 բն. ունէր եկղ. Ս. Աստուածածին:

ԱՐԿԵՆՅ s. Յարկեցի:

ԱՐԿՆԻ, Արդրնի կամ Արդան, ի հնունն, ամուր բերդ, Չորրորդ Հայոց Պաղին գո.ի մէջ. այժմ գլխաւոր քաղաքաւան Տիգրանակերտի համանուն գո.ի: Հնախոյզներու համաձայն քաղաքս Արքանա կոչուած է բեւեռաքանդակներու մէջ, Լատինները Արսենիա կը կոչէին: Կառուցուած է Գուրգ լերան կողին գեղեցիկ դիրքով, ծովու երեսէն 2884՝ բարձր. կը նայի Տիգրանակերտի դաշտին վրայ: Զառիվայր դիրքին համեմատ բաժնուած է Վերին, Միջին և Ստորին մասերու: 1900ին 6150 բնակիչ ունէր հետեւեալ կերպով բաժնուած:

Հայ Լուսաւորչականք՝ 2000, բողոքականք 525, մնացածը թուրք, քուրա և յոյն: Ըստ Հ. Ինճիճեանի քաղաքաւանս 1600էն առաջ գոյութիւն չուներ, չրձակայ աւերեալ գիւղերու բնակիչներ եկած են հոս և հիմնած քաղաքաւանս: Այդ գիւղերու եկեղեցիներն են Ս. Եղիաս, Ս. Մամաս, Ս. Լուս. Ս. Աստուածածին և այլն ոմանք կանգուն էին և իրենց տօներուն Արկնցիք ուխտի կ'երթային: Լերան ծայրը կը գտնուէ Արդնոյ բերդը: ԺԱ. դարուն հոս ամրացած էին Հարէյ իշխանի որդիքը, որոնց անդրանիկը Հարպիկ Մոնոմախ կայսեր Պետոս զօրավարին զէմ կը պահէր բերդս, ինչպէս կը գրէ Մատթէոս Ուուհայեցի. 1062ին Տուրքիի զօրքերը յանկարծ կը նուաճեն բերդս, մերձակայ վիճակաց հետ. քաղաքաւանիս մօտ է Բարձրահայեաց Ս. Աստուածածին վանքը (տե՛ս):

ԱՐԿՆԻ կամ Արդանա գո. Տիգրանակերտի, ի հնունն Պաղին կը կոչուէր. բաժնուած է 3 գաւառակաց և 11 վիճակներու, ունի 1083 գիւղ: Բոլոր գո.ի բնակչաց թիւը 1900ին 134517 էր

որուն 20000 միայն հայ էին: Շատ մը քրտարնակ գիւղերու մէջ հայկական եկեղեցիներ կան, կը նշանակէ նախապէս հայաբնակ եղած են անոնք, ինչպէս Համբարձման, Հասուր, Ախոռներ, Հալբար Ա. Թորոս, Հիլար, Մալան, Թրլլարձոր, Վար գեղ, Կարմիր-բար եւ այլն: Արդլման լերան վրայ ուխտասեղի մը կայ սրբոյն անուամբ:

ԱՐԿՆՈՅ ՎԱՆՔ Տ. Բարձրահայեաց Ա. Ասուածաձից:

ԱՐԿՈՒ, այլագգարնակ գղ. Ակնայ:

ԱՐԿՈՒ ԳԵՏ Կամ Արգուգես Տ. Ճահուկ:

ԱՐԿՐՈՒՍ Տ. Յարկուս:

ԱՐԿՈՒՌԻ Տ. Ակուռի:

ԱՐՀԱՁ, թուրքարնակ գղ. Սուրմալու գու.ի (Երևան) մէջ: Մէջը կայ Ս. Գէորգ ուխտասեղի մը, կայ նաև Թուխ Մանուկ անուանով ուրիշ ուխտասեղի մը:

ԱՐՀԵՍՏԱԿՅԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ, «Հայաստանի Արտադրողական Միութիւնների Խորհրդի շաքաթաթերթ» տպ. Երևան 1921—2 խմբ. Ալ. Իսահակեան:

ԱՐՀՆԻ Կամ Արիցի կը յիշուի Եղիշէի մէջ՝ ամուր բերդերու շարքին, զոր ազատեցին հայ նախարարք պարսից ձեռքէն՝ միաբանելով Ս. Վարդանայ հետ: Ոմանք նոյնը կը համարեն Արկնի բերդին հետ:

ԱՐՁԱԳԱՆՔ (Արձագանգ) գրական և քաղաքական լրագիր՝ խմբագիր-հրատարակիչ՝ Արզար Յովհաննէսեան, լոյս տեսաւ Թիֆլիսի մէջ 1882-1898:

ԱՐՁԱԳԱՆՔԻ, «ամսօրեայ լրագիր» արտօնատէր Հրանդ Մամուրեան, խմբագիր Վահան Թօչիկեան, լոյս տեսաւ Զմիւռնիա 1908ին (1—172 թիւ, շարունակուած Գաւիթ անուամբ):

ԱՐՁԱԳԱՆՔԻ, «Ժողովրդական անկախ օրգան (Երկօրեայ)», արտօնատէր Ա. Ժպմկոչեան, (շարունակութիւն Յաղբանակի), լոյս տեսաւ Աթէնք 1928—29:

ԱՐՁԱԳԱՆՔԻ, «գրական, հասարակական թերթ (Եռօրեայ)», խմբագիր՝ Մ. Թորգոմեան, լոյս տեսաւ Եկաղերինոտար 1918—19(20°):

ԱՐՁԱԳԱՆՔԻ ԿԻԼԻԿԻՈՅ «օրկան Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան» լոյս տեսաւ Ատանայի մէջ 1919 մէկ թիւ միայն, ասոր յաջորդեց Տաւրոսը:

ԱՐՁԱԳԱՆՔԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ շաքաթաթերթ Պուքրէշի մէջ լոյս տեսած է 1915ին խմբագրութեամբ Լ. Լանխի, կէսը հայերէն և կէսը ռուսերէն: 1916ին դադարեցաւ:

ԱՐՁԱԳԱՆՔԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ, «կրօնարարոյական և առողջապահական ամսաթերթ», խմբ. Պ. Արմենակեան, տպ. Բարիզ 1920—1931:

ԱՐՁԱԳԱՆՔԻ ՓԱՐԻՉԻ, «ազգային, քաղաքական շաքաթաթերթ» ապա «կիսամսեայ թերթ», ապա «տասնօրեայ», հիմնադիր անօրէն Յ. Բ. Թուրայեան. տպ. Բարիզ 1916—1925:

ԱՐՁԱՆ Տ. Արցախ:

ԱՐՁԱՆԱՄԱՅՐԻ, հին գղ. Սիւնեաց կոլսական գու.ի մէջ:

ԱՐՁԱՆ, պարբերագիր գրականութեան և արուեստի (Պոյսահայ երիտասարդութեան Գրական Հանդէսը) տպ. Կ. Պոլիս 1932: Խմբ. Մ. Թէօդօլեան և Մ. Մերտինեան:

ԱՐՁԱՆ Արժուցի, թարգմանիչ, աշակերտ Ս. Սահակայ և Մեսրոպայ, 426ին Յովհաննէս եկեղեցացիի հետ Բիւզանդիոն (Կ. Պոլիս) կը զրկուի յանձնարարական թղթով մը ուղղուած առ Սիսինիսս պատրիարք, որպէսզի Ս. Հարց ընտիր գրուածքները ցոյց տայ որ հայերէնի թարգմանեն և Հայաստան զրկէ Աստուածաշունչի ընտիր օրինակ մը: Գրեթէ Խօթը տարի Կ. Պոլիս կը մնայ Արձան և թարգմանութեամբ կը պարապի Յովհաննու և ուրիշներու հետ: Դժբախտաբար մեր մատենագիրք չեն յայտնած թէ որոնք են Արձանի թարգմանած գրքերը:

ԱՐՁԱՆ, Գրմապետ, հայր Դեմեղրի. մէկն եղած է անոնցմէ՝ որոնք ընդդիմացած են Ս. Գրիգոր Լուսաւորչի և չեն թոյլատրած որ կուռքերը կործանէ, բայց ի վերջոյ կը սպաննուի Անգեղ տան իշխանէն:

ԱՐՁԱՆ, լեռ Տարօն գու.ի մէջ, Արձան քրմապետը հոս սպաննուեցաւ:

ԱՐՁԱՆԱՉՈՐ, Սիւնեաց Բաղք գու.ի մէջ:

ԱՐՁԱՆԱՔԱՐ Կամ Արձաւախ, կը յիշուի Սիւնեաց Արեւիք գու.ի մէջ. յայտնի չէ ինչ ըլլալը:

ԱՐՁԱՆԱՉԱՅ ԳԻՒՂ, հին գղ. յիշուած Թ. Արծրունիէն, Վասպուրականի Անձաւացեաց գու.ին մէջ:

ԱՐՁԻՒ Տ. Արծիւ:

ԱՐՁԵՒԱԿԱՏԱՐ, հին գղ. Ծղուկ գու.ի մէջ:

ԱՐՁԿԱՂ, գղ. Ասողիկ այսպէս կ'անուանէ Ապահունեաց գու.ի Ածուղ կամ Արծուղ գիւղը որ Դայարիս կը կոչուի:

ԱՐՁՆԻ, հին գղ. Բագրեանդ գու.ի մէջ, ուր տեղի ունեցած է ծանօթ Բագրեանդայ կռիւը (Տե՛ս Ալիւանի «Յուշիկի Հայրենեաց». Գլ. 1.Գ.):

ԱՐՂԱՆԱ Տ. Արկնի:

ԱՐՂԱՆԱ Կամ Արղնոյ Մաշեն, աւան Արկնի գու.ի մէջ, նշանաւոր է հանքերովը, կը կոչուի նաև Պախր Մաշեն: 1900ին 3155 բնակիչ ունէր, որոնց 1000ը Հայ էին: Ունէին վարժարան և Ս. Աստուածածին եկղ. մը:

ԱՐՂԱՆԱ ՄԱՏԷՆ գաւառակը, Արկն գ.ի մէջ, 1900ին ունէր 48500 բն. յորոց 7000ը հայ էին: (Էփրիկեան՝ «Բնաշխարհիկ»: Գաւառակի մասին տե՛ս «Արարտ» ամսագիր 1896 էջ 331):

ԱՐՂԱՇԱՆ, հայաբնակ գղ. Եողզատի, ունէր միայն 18 տուն հայ:

ԱՐՂԱԻԻՉ, գղ. Շապին Գարահիսարի, 1900ին 300 տուն հայ բնակիչ ունէր, եկեղեցիով և զըպրոցով:

ԱՐՂԷԼ, գաւառ Այրարատայ մէջ ըստ Թ. Մեծոփեցիի, ձակատք գ.ի վիճակ մը կը թուի, կողոպտուած Լէնկթիմուրի ասպատակութենէն:

ԱՐՂՐՆԻ Ս. Արկնի:

ԱՐՂՆ, գղ. Ս. Հայաստանի, տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ ԱՐՂՆՈՅ ՄԱՏԷՆ Ս. Արղան:

ԱՐՂՈՒԹԵԱՆ Արփիկ, երգչուհի (տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ):

ԱՐՂՈՒԹԵԱՆ Մովսէս, իշխան Երկայնաբազուկ, ծնած ԺԸ դարուն վերջերը † 1853: Իշխան Մովսէս՝ ի սկզբան անփառունակ սպայ էր կովկասի մէջ. բայց երբ լեռնականներու դէմ պատերազմներ մղեց, իր ռազմագիտութիւնը փայլեցաւ և տասը տարուան մէջ սարսափ ազդեց և իր Տաղիստանի բանակի հերոս հրամանատար՝ արժանացաւ Տաղստանի Թէյմուր Սան Շուրայ քաղաքին մէջ կանգնուած արձանին: Ռուս կառավարութիւնը կանգնել տուած է այդ արձանը ժայռի վրայ, յատկապէս բերուած քաղաքին կեդրոնը շատ ծախքով:

Մովսէս իշխան Արղութեանի յաղթանակներէն մին էր Դանիէլ խանի պարտութիւնը: Սանը 5000 զօրքով Շամիլի զօրը պարզած էր Ախցի կոչուած անառիկ բերդին վրայ. յանկարծ հեռուէն կը լսէ զինուորական երաժշտութիւն: Դանիէլ խան կը սրէ ականջները: Երբ կ'իմանայ թէ իր վրայ եկողը Արղութիշխանն է՝ առանց դիմադրելու բերդը կը թողու և կը հեռանայ: Այսչափ սարսափ աղգած էր Արղութեան:



Արղութեանի արձանը

Իշխան Արղութեան մօտ 15 տարի Տաղստանի

զօրաց ընդհանուր հրամանատար եղած է. ան երբեք առանց յաղթանակի չէ դարձած կռիւներէ:

Արղութեան Ռուսիոյ կայսեր ամէնէն վստահելի անձը եղած է: Իրեն ի պատիւ 1878ին կանգնած արձանին պատուանդանին վրայ գրուած է «Երկայնաբազուկ Մովսէս Արղութեանց, կառավարիչ Տաղստանի նահանգին 1847—1853»: (Արղութեանի նկարագիրը պատկերացնող պատմութեանը տե՛ս Գաբամանեանի «Գրպանի Տարեցոյց»-ը, 1935 էջ 157):

ԱՐՂՈՒԹԵԱՆ Յովսէփ կրդ. Երկայնաբազուկ տե՛ս Յովսէփ կրդ. Արղութեան:

ԱՐՂՈՒԹԵԱՆ Յովսէփ իշխան, տե՛ս ԻՇԽԱՆ ԱՐՂՈՒԹԵԱՆ Պորիս (Իշխան). տե՛ս Երկայնաբազուկ:

ԱՐՃԱԿ, գղ. Վանայ, Ազգ. վարժարանին մէջ 80 մանչ և 27 աղջիկ կը յաճախէին (1900ին):

ԱՐՃԷՆԹԻՆԱ, Հարաւային Ամերիկայի աչքառու պետութիւններէն մին է, ուր Հայերը հազիւ 1909ին ներս մտած եւ իրենց գաղթավայր ըրած են, անոր մայրաքաղաքը Պուէնոս Այրէս: Ընդհանուր պատերազմէն ետք է որ Արձէնթինայի Հայոց թիւը կը բարձրանայ մօտ 20000ի:

Արձէնթինայի Հանրապետութիւնը Հարաւային Ամերիկայի միւս հանրապետութիւններու համեմատութեամբ, քաղաքակրթապէս ու տնտեսապէս ամէնէն բարձրն է. և բնականաբար այդ տեղի հայ զազութը ամէնէն աչքառուն պիտի ըլլար կրթական մշակութային տեսակէտով, մանաւանդ որ Հարաւային Ամերիկայի Հայութեան հէտէն շատ աւելին տեղաւորուած է այս հանրապետութեան մէջ, զանգուածօրէն ապրելով Պուէնոս Այրէս և Քորտօպա, չնչին հաւաքականութեամբ միայն ցրուած մնալով զանազան նահանգներու մէջ:

Պուէնոս Այրէսի և Քորտօպայի մէջ կարիքէն ու անհրաժեշտութենէն շատ աւելի գոյութիւն ունին հանրային, կրթական հաստատութիւններ, զանազան կրթասիրացներ և կանանց օժանդակներ, կրօնական և մարզական մարմիններ:

Գաղափար մը տալու համար ըսենք որ Պուէնոս Այրէսի մէջ ինը վարժարաններ կան 625 երկսեռ աշակերտներով:

Վերջերս (1938) Հարաւային Ամերիկա իր առանձին Առաջնորդ Արքեպիսկոպոսը ունեցաւ յանձին Գարեգին Ռաչատուրեանի, որուն աթոռը Պուէնոս Այրէսի մէջ պիտի ըլլայ: Տե՛ս Պուէնոս Այրէս. Քորտօպա եւայլն:

ԱՐՃԷՆ, ի հնումն մեծ և անուանի քղ. Վաս-

պուրականի Արճիչակովիս գ.ի, համանուն կամ Վանայ ծովակի հիւսիսային եզերքը:

Քաղաքիս նախնական պատմութիւնը շատ ծանօթ չէ, բայց յայտնի է որ մեր աշխարհի հնագոյն քաղաքներէն մին է: Ստէպ կը յիշուի Արճէչ՝ Կոստանդին Պերիերուժէնի Կառավարութեան քրքին մէջ (Գլ. ԽԳ): Յովհ. կթ. պատմարան քաղաքս Աղիովիս գ.ի մէջ կը դնէ և գիւղ կ'անուանէ՝ ըսելով. «Յաջորդէ զաթոռ հայրապետութիւնն եղիս ի գեղջե Արճիեոյ յԱղիովտէ՝ յեպիսկոպոսութենէ Բզնունեաց»: Թ. Արծրունեոյ շարունակողը Արճէչը Գնունեաց գ.ի մէջ կը դնէ: Թովմա Մեծոփեցին և Վարդան Աշխարհազիր՝ Արճիչոյ սահմանքը կամ գաւառը կը կոչեն Քաջերունի: Եօթերորդ դարու մէջ Հերակլ կայսրը Արճէչը այրեց, որուն մէջ ապաստանած էին պարսից զօրքերը: Սենեքերիմ Արծրունի ուրիշ քաղաքաց հետ Արճէչն այ Յունաց Վասիլ կայսեր տուաւ: Ժ. դարէն հտք մերթ Յունաց և մերթ Պարսից ձեռքն անցած է քաղաքս:

ԺԹ. դարու սկիզբը տակաւին շէն էր Արճէչ և ունէր գրեթէ 1500 տուն բնակիչ, մեծամասնութիւնը Բուրսք և սակաւ Հայք՝ որոնք երկու եկեղեցի ունէին: Այդ դարու առաջին քառորդին այս պատմական քաղաքը ծովուն ալեաց տակ ծածկուեցաւ. բնակիչք՝ հետզհետէ Արճիչոյ գիւղերը քաշուեցան: Այժմ ամայի է: (Վիքիպեան՝ «Բնաւիտարիկ»):

Արեւելի եկեղեցիին անունը՝ Ս. Գեորգ, ուներ իր դպրոցը՝ իրիմեան Հայրիկէն շինուած: Ուներ երեք թուխ մանուկներ (եկեղեցի), որոնցմէ ամենէն մեծն էր Ս. Ասուածածիւր: Միւս սրբավայրերն են Ս. Սարգիս, Բանի մը ծառերով շրջապատուած, որներ կարկաչանոս աղբիւր մը, Համբարձման տոնին ժողովուրդը ուխտի կ'երթար հոն: Սուրբ Սանդուխտի բլուրը, յայտնի խաչքարով, Գաղան քիչիւսէ, բոլորովին անեակ. եկեղեցիին տեղը միայն յայտնի էր, իր Բանի մը տապանաքարով: Գուշայ եկեղեցիին, անհետ կորսուած գիւղ մը, տուած է աւուղներ, որոնցմէ նշանաւոր եղած է Աւուղ Զինակը (Սու-Վանի):

Յիւստակարաններէն հետեւեալ տեղեկութիւնները կը փաղեմ: 1421ին Արեւելի Վաւերուի Սպանդարեան: 1432ին Արեւելի մէջ Կարապետ Մաշոց մը կ'ընդօրինակէ, որուն ստացողն է Մկրտիչ վրդ. որդի Օրպելի. կը յիշէ Ս. Յակոբ եւ Ս. Ասուածածիւր եկեղեցիները: 1440ին Յովնանէս Բն. գրիչ՝ կը յիշէ Արեւելի Գմբեթայարկ Ս. Գէորդ եկեղեցին: Յովնանէս Բն. Թումա Մեծոփեցոյ աշակերտ, 1440ին, 1441ին, 1444ին, 1450ին 1461ին ձեռագիրներ կ'ըն-

դօրինակէ: 1449ին Արեւելի բերդը կ'առնուի Սեանդարի որդի Իլանդէն: 1456ին Արեւելի մէջ Աւեսարան մը կ'ընդօրինակուի «ընդ նովանեաւ Ասուածածնի, Ս. Երրորդութեան եւ Ուրբանոս Սեանի»: 1475ին Արեւելի մէջ կը նախապետի Կարապետ Բն.: 1530ին Յովն. Արեւելցի, որդի Կարապետի, բոռն Թ. Մեծոփեցու աշակերտ Յովնանէս Մանգասարեանց նշանաւոր գրչի, Արեւելի մէջ Մաշոց մը կ'ընդօրինակէ. Գանման (Թանմազ) Փարսանին քաղաւորութեան օրով: 1531ին Թանմազ ինք օր Արեւել կը նստի եւ այդ միջոցին բոս յիւստակազին ոչ ոք կ'ընար տուէն դուրս ելլել: 1536ին գրիչ Մարգարէ Արեւելցի կ'ես մնացած Յայտաւորք մը կ'ընդօրինակէ իր աշակերտ Յովն. Արեւելցոյ հետ: (1598էն ետք չի յիշուիր Արեւել, իմ Յիւստակարանաց մէջ):

ԱՐՃԷՇ, գաւառ Վանայ նահանգի, կը համարուի պատասխանէ Արճիչակովիս կամ Քաջերունեաց գ.ի: Կ'իյնայ Արճիչի, Մանազկերտի, Ալաշկերտի, Պայազիտի և Բերկրիի մէջտեղ. հարաւ-արեւելեան կողմէն չրջապատուած ծովով: Հին Արճէչ քաղաքի անբնակ ըլլալէն վերջ, գաւառագլուխ եղած է Ալանց աւանը: Դիրքը դաշտային է եւ լեռնային. ըստ Բինէի բնակչաց թիւը 15000 էր, որուն 10000ը Հայք, լուսաւորչական և կաթողիկէ: Ուրիշ տեղագրող մը մինչև 26000ի կը բարձրացնէ գաւառիս բնակչաց թիւը: Ունի 24 հայաբնակ գիւղ. վանքերէն գլխաւորն է Մեծորայ վանքը: (Մուսանձեանց «Համով Հոսով» 96—7):

ԱՐՃԷՇ (Arges), գ. և գետ Ռումանիոյ մէջ. կը կարծեն ոմանք թէ Վասպուրականի Արճէչ քաղաքի բնակիչներէն Ռումանիա գացած եւ հիմնած ըլլան քաղաքս ԺԳ դարու մէջ: Գիտականօրէն կարելի չէ եղած ապացուցանել այս կարծիքին իրականութիւնը. (Բնական յօդուած մը այս փաղաքին վրայ տե՛ս «Բազմալեպ», 1888, էջ 211—7):

ԱՐՃԷՇ, հայաբնակ գ. Արցախի Ղազախ գ.ի: 1900ին 65 տուն բնակիչ ունէր, եկղ. Ս. Յակոբ: ԱՐՃԷՇ, հայաբնակ գ. Պորչալու (Գուգարք) գ.ի մէջ: 1900ին 550 բնակիչ ունէր:

ԱՐՃԻԱՆ, լեռ Գուգարաց Զաւախք գ.ի հարաւ-արեւմտեան կողմը, բարձր. 8700՝:

ԱՐՃԻՇԱՎՈՎԻՏ կամ Արեւիսանովիս, Վասպուրականի հին գաւառներէն մին, որուն կը համարուի պատասխանէ մասամբ այժմու Արճէչ գաւառը (տե՛ս):

ԱՐՃԻՇԵՅԻ Յովնանէս, տե՛ս Յովնանէս վրդ. Արեւելցի:

ԱՐՃԻՇՈՒ ԾՈՎ. ս. Վանայ ծով:

ԱՐՃՈՒՃՍ կամ Արնուան ամրոց, այս անուամբ

գիւղ մը կը յիշէ Թոմա Արծրունի՝ Վասպուրականի մէջ:

ԱՐՄԱԶ, լեռ Գուգարաց Տաշիր գո. ի մէջ, որուն վրայ Բարթալա՝ Օրբէթ բերդը կառոյց:

ԱՐՄԱՂԱՆՆԱՆ Յարութիւն, վերապատուելի, ծնած Իսթանոս 1855ին, իրրե որը՝ Մարզուանի Աստուածարանական ձեմարանին մէջ կ'ուսանի. կը վարէ քարոզչական պաշտօններ. սիրուած և հայածուած:

Ընդհ. պատերազմէն ետք պատուելի Աշճեանի հետ 800 որբերով Պէյրութ կ'անցնի: 1923ին Յունաստանէն Ամերիկա կ'երթայ ընտանեօք և 1931 Մայիս 8ին կը վախճանի Նիւ Եորքի մէջ: (Հ. Կոչնակ 1931 թիւ 21):

ԱՐՄԱՂԱՆՆԱՆ Սարգիս, Հնչակեան գործիչ, ծնած Սերաստիա 1890ին, որդի վաճառական Մովսէսի: 16 տարու էր երբ մատնիչ Բիւրքճեանի վրայ տէրոր կատարեց: Ընդհ. պատերազմի ատեն Հայաստան կ'երթայ իրրե կամաւոր, կը մասնակցի շատ մը կռիւներու: Զօր. Անդրանիկի կը միանայ Կարինի մէջ 1919ին: Անկէ ետք Կիլիկիա կ'անցնի: Անկախութեան օրերուն զինուորներու խնդրանքով կ'անցնի բանակին գլուխը: Կը հասնի Սիս, բայց այլ և այլ էնթրիքներու պատճառով անգործ կը մնայ:

Նոյնիսկ Ֆրանսացի զինուորականներ խոստովանած էին, թէ միայն Արմաղանեան կրնայ Հաճընի օգնութեան հասնիլ:

Այժմ Սերպիոյ Սկիւպ քաղաքը կ'ապրի:

ԱՐՄԱՂԱՆՆԱՆ Վերոնիկա, բժշկուհի, Իզմիրցի, 1922էն ետք Ամերիկա գացած և հոն բժշկական վկայական ստացած է:

ԱՐՄԱՂԱՆՆԱՆ Բոփիկ, նախնական կրթութիւնը ստացած է Իզմիրի աղջկանց գօյէճին մէջ յետոյ չրջանաւարտ Սառլիճ Տաքօթայի Եանքթըն գօյէճէն 1927ին (Միացեալ Նահանգք). Մասնաձիւղն է պատմութիւն և տնտեսագիտութիւն: (Հ. Կոչնակ 1926, 1076):

ԱՐՄԱՅԻՍ Կեղծանուն Տէր Սահակեան Հ. Կարապետի:

ԱՐՄԱՅԻՍ կամ Արամայիս, նահապետ Հայկազն, որդի Արմենակի, իշխեց 1980—1940 (ն. ք. Բ.), սա չինեց Այրարատայ Արագած դաշտին մէջ Արմաւիր քաղաքը ուր նստան Հայկազուն թագաւորները, իրեն յաջորդեց Ամասիա:

ԱՐՄԱՆ Ա. հեղինակ «Մխացող Շուշաններ» ու. տպ. Թիֆլիս 1919:

ԱՐՄԱՆ, զուտ հայարնակ գիւղ Իզմիրի գո. ի մէջ՝ Ատարաղարի և Իզմիրի մօտ, նշանաւոր իր համանուն վանքով: Ունէր շուրջ 2000 բնակիչ:

Իրր եկեղեցի ունէին վանքի եկեղեցին, իսկ զըպրոց Նարեկեան նախակրթարան մը, ուր կը յաճախէին 200 երկսեռ աշակերտներ: Ժողովուրդը շերամարուծութեամբ և երկրագործութեամբ կը պարապէր: Բնակիչք 1600ի սկիզբները Պարսկաստանէն գաղթած են հոս: Ոմանք կը կարծեն թէ Մարաշէն գաղթած են և անունն ալ Մարաշի տառադարձութիւնն է:

ԱՐՄԱՇՈՒ ՎԱՆԻ Կամ Զարխափան Ս. Ասուածաճնի վանք, կառուցուած Արմաշ գիւղի մէջ բլուրի մը վրայ: Վանքս գիւղին հետ 1611



Արմաշու Զարխափան Ս. Ասուածաճնի վանքը

թուին հիմնուած է Թաղէոս եպ. էն, վանքիս առաջին առաջնորդին իրաւասութեան ներքե էին Կէյլէ, Պաղար, Սէօլէօղ, Բիրմասթի և Պիղա իրենց թեմերով: Վանքս մինչև բնդհանուր պատերազմը մօտ 25 առաջնորդներ և վանահայրեր ունեցեր է. գրեթէ ամէնքն ալ եպիսկոպոսներ և արքեպիսկոպոսներ: Բարդուղիմէոս Կապուտիկեան Արքեպ. ի օրով 1786ին Արմաշու համար կը սկսի նոր շրջան մը, կանոնաւոր միաբանութեան և ուսումնարանի հաստատութեամբ: Նոյն ժամանակ տաճարը ի հիմանէնորոգուեցաւ և վանքս նորէն յինուեցաւ ընդարձակ և հոյակապ, բայց 1806ին, վանքն ու եկեղեցին, ուսումնարանն ու մատենադարանը պէտք ունեցան նորոգութեան: Վերաշինութեան հրովարտակը 1820ին Պօղոս Արքեպ. Ղարախօջեանը ստացաւ ու շորս տարուան մէջ վերաշինեց եկեղեցին, նորոգեց նաև վանքը, ուսումնարան մը բանարով՝ վանքի զարգացումը աճեցուց: Ստեփանոս Արքեպ. Զաքարեան, որ աւելի ծանօթ է Աղաւնի մականուամբ, 1825ին առաջնորդ լինելով, ուսումնարանի ջանքերը կրկնապատկեց, ի նորայ չինեց վանքին փառաւոր առաջնորդարանը եւ միաբանութեան թաղը և հիւսիսային հիւրանոցը՝ որոնք ցարդ կը մնան՝ իսկ նախկին ուսումնարանը

րանը և մնացեալ հիւրանոցները 1888ի հրդեհին այրեցան: Ստեփանոս Արքեպ. Սաղաքեանի առաջնորդութեան (1856—69) օրով, վերջին տարիներու մէջ խանգարուած վանքը, վերստին ծաղկեցաւ, բացուեցաւ Արմաշու տպարանը և սկսաւ հրատարակուիլ Յոյս հանդէսը (տե՛ս):

1886ին Արմաշու վանքը նիկոմիդիոյ վիճակէն զատուեցաւ, իրեն թեմ պահելով միայն Արմաշ և Պասկալ գիւղերը. այնուհետեւ իր առաջնորդները սկսան վանահայր կոչուել:

Աստի կը սկսի վանքին երրորդ կամ նոր շքրջանը, որ ատեն վիճակային խնդիրներէ ազատելով յոկ ուսումնական և կրթական դարգացման կը ծառայէ: Խորէն եպ. Աշրգեանի վանահայրութեան (1872—1888) ժամանակ, 1873ին. Ս. Գ. Էոնդեանց գիշերօթիկ վարժարանը կը բացուի, և քանի մը տարի փայլուն կերպով շարունակուելէ վերջ, 1878ին ելեւմտական տաղանապներով կը փակուի և Յոյս հանդէսի հրատարակութիւնն այ կը դադրի: Աշրգեան Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուելով 1888ին՝ Մաղաքիա եպ. Օրմանեանը զնաց հոն և Եղիշէ ծ. վ. Դուրեանի հետ Արմաշու վանքը մեծաքայլ առաջացուց: Անսիջապէս բացուեցաւ ժառանգաւորաց վարժարանը և այս առթիւ վանքն ալ կոչուեցաւ Պոլսոյ ազգ. պատրիարքարանի Արմաշու դպրեւանք: Եօթը տարուան ընթացքին (1889—1896) երկու դասարաններ աւարտեցին, և ազգն ունեցաւ զոս մը գիտնական վարդապետներու, որոնք իրենց գրական գործերով կամ եկեղեցական ասպարէզին մէջ՝ նշանաւոր անձինք դարձան, ինչպէս Բարգէն Բ. Աթոռակից կթղ., Չաւէն Եղիաշեան, Կ. Պոլսոյ պատրիարք, նախկին Արքեպ. Մուշեղ Սերոբեան, Թորգոմ Արքեպ. Գուշակեան պատրիարք Երուսաղէմի եւային: Օրմանեանի օրով վանքի վրայ եղան նշանաւոր նորոգութիւններ, տաճարը դուրսէն և ներսէն վայելչապէս նորոգուեցաւ և զանգակատունն աւելցաւ, ընդարձակ քարուկիր ուսումնարան մը կառուցուեցաւ, նոյնպէս երեք յարկանի հիւրանոց մը, շերամատան յարմար ընդարձակ շէնք մը, փուռ մը, կատարելագործեալ ջրաղաց մը, եւայլն: Տնկուեցան նաև նոր թթաստաններ, և շերամատեմի պատրաստութեան ընդարձակ գործ բացուեցաւ:

Օրմանեանի յաջորդեց իրը վանահայր Եղիշէ եպ. Դուրեան, որուն յաջորդեցին հետզհետէ Թորգոմ և Մեսրոպ եպիսկոպոսները:

Չարխափան Ս. Աստուածածնայ հրաշագործ պատկերը, որ անարուեստ գործ մըն է և ոչ ալ հին, նախապէս զրուած էր աւագ խորանին վը-

րայ, որ ի վերջոյ ուխտաւորաց դիւրութեան համար փոխադրած էին գաւթին մէջ, տեղը զնելով Աստուածածնայ ուրիշ պատկեր մը, աւելի ճարտարօրէն նկարուած՝ խտալացիէ մը:

Փոքր Ասիոյ ամէն կողմերէն բազմաթիւ ուխտաւորներ կը զիմէին այս հրաշագործ պատկերին, գլխաւորապէս ուխտաւորաց խումն բազմութեամբ կը լեցուէր վանքս Օդոտտոսի և Սեպտեմբերի մէջ, Ս. Աստուածածնայ ծննդեան և Վերացման Խաչի տօներուն: Ամէն տարի ուխտաւորաց թիւը կը հասնէր 6-7000ի: Ուխտաւորք կու գային ո՛չ միայն Արմաշու շքրջակայքէն այլ և Կոստանդնուպոլսէն, Ազրբայճանէն, Փիլիպպուպոլսէն, Պրուսայի, Պիլճիկի, Զմիւռնիոյ, Կուտինայի, Գաղատայի և Իկոնիոյ նահանգներէն: 1895էն ետք Արմաշի Գպրեվանքին մէջ որրանոց մ'ալ բացուեցաւ:

1915ի դէպքերէն ետք Արմաշի Չարխափան Աստուածածնայ պատկերը Պալատ (Պոլիս) փոխադրուեցաւ:

Արմաշու Գպրեվանքի 25ամեակը տեղի ունեցաւ և այդ առթիւ հասոր մը հրատարակուեցաւ որուն մէջ պատկերացուած է Գպրեվանքին քառորդ դարու գործունէութիւնը և հայ եկեղեցւոյ տուած կարող և գիտնական միաբաններու մասին տեղեկութիւններ:

Գպրեվանքի մասին զրուածներ՝ տե՛ս «Արարատ» Ամսագիր 1895 էջ 310 «Ընդարձակ Օրացոյց Ազգ. Հիւանդանոցի», 1900 էջ 175—186, Թէոդիկ՝ «Տիպ ու Տառ», 142, Դինէ Գ. 364—7, Էփրեկեան «Քննախարհիկ» 313—5 և տառելապէս վերը յիշուած յոբելինական հատորը:

ԱՐՄԱՇ, գղ. Խ. Հայաստանի մէջ (տե՛ս Յուելուած):

ԱՐՄԱՒԱՇԷՆ, կրկին գիւղեր Վերին և Ներին՝ Սիւնեաց Շահապօնք գո.ի մէջ: Բնակիչք՝ այլազգիք, որոնք գիւղս Իրամեշին կը կոչեն:

ԱՐՄԱԻՆԵՆԻ, «լրագիր կիսամսեայ, քաղաքական, ազգային, բանասիրական» տնօրէն խմբագիր՝ Արրահամ Մուրատեան, տպ. Գահիրէ 1865:

ԱՐՄԱԻՆԵՆԻ, «տարեգիրք», հրատարակութիւն Գալուստեան Ազգային Վարժարանի Շրջանաւարտից Միութեան, Ա. տարի 1937—1938, տպ. Գահիրէ 374 էջ:

ԱՐՄԱԻԻԲ, հին և անուանի մայրաքաղաք Հայաստանի, որուն աւերակները կը գտնուին Արագածոտն գո.ի Սարտարապատու վիճակին կամ Արմաւրայ դաշտին մէջ բարձրացող համանուն բլրակին վրայ: Ըստ աւանդական պատմութեան Հայկայ թողը Արամայիս կառուցած է

եռք քաղաքս կերպարանափոխուած է. գեղեցիկ լայն փողոցներով, քարեայ և փայտեայ միայարկ և երկայարկ տուներով և կրպակներով զարդարուած է: 1900ին 500էն աւելի տուն բնակիչ ունէր, որոնք բաց ի վաճառականութենէ՝ կը պարապին նաև երկրագործութեամբ: Բնիկ Արմաւիրցի հայերէն զատ կան նաև նոր նախիջևանցի 200ի չափ հայեր: 1900ին ուստաց թիւը շատնալով 1000ի բարձրացած էր:

Տեղւոյս Հայերէն բաղձաթիւ անձինք պետական զանազան պաշտօններու մէջ կը գտնուէին ու շքանշաններով և աստիճաններով պատուուած էին: Նոր սերունդը սկսած է հայերէն սորվիլ: («Մասեաց Աղաւնի» Բ. արի 322):

Արմաւիրի մէջ 1917-8ին լոյս տեսաւ Կարիօրաթերթը՝ խմբագրութեամբ Ներսէս ք. Հնրթեցեանի, 1918ին լոյս տեսած է Բանուրի Ջայեր և 1919ին ու 1920ին Բանուրի Կարիօ «հայ կոմունիստական շարաթաթերթը», պատասխանատու խմբագրութեամբ Վէքիլեանի:

ԱՐՄԱԻԻԻ ԻՆՖՆԱՎԱՐ ՇՐՋԱՆ.— Հիւսիսային Կովկասի մէջ, Սև Ծովու ափին, նովորոսիսքի մօտ կը գտնուի Արմաւիրի ինքնավար յրջանը, մօտ 20 հազար հայ բնակչութեամբ, որ տեղական ինքնավարութիւն ունի և ունի նաև հայկական դպրոցներ և հիմնարկութիւններ: Արմաւիր առաջնորդական վիճակ մը կը կազմէ, (Պօղոսեան Յովն. «Հայաստանի աշխարհագրութիւն» էջ 169):

ԱՐՄԵՆՍՍԻ Կամ Արմենսի պազար, գիւղաքաղաք Եւրոպական Ռուսիոյ Տաւրիոյ կուսակալութեան, բնակչաց մեծամասնութիւնը կը կազմեն Հայք, որոնք մեծաւ մասամբ եկած են Նախիջևանէն, և ունին կաթողիկէով եկեղեցի մը՝ Ս. Աստուածածինն Բաց ի Հայոց կան նաև Թաթարք, Հրեայք, Ռուսք:

ԱՐՄԵՆ Տ. Արմեն:

ԱՐՄԵՆԱԿ Կամ Արամենակ, Հայկազն նահապետ, որդի Հայկայ և յաջորդ (2026-1980 ն. ք. Բ.), ինք էր Սօսեաց մեծ անտառը անկողը և այն լեռը որուն մօտ բնակեցաւ՝ իր անուամբ կոչուեցաւ: Արագած կամ Արմենագած և կալուածը կոչուեցաւ Արագածոտն: Իրեն յաջորդեց որդին Արմայիս:

ԱՐՄԵՆԱԿ, գաւառակ Սելեկիա գո. ի (Ատանա) (Գալուստեան «Մարտ» էջ 16):

ԱՐՄԵՆԱԿԵԱՆ Պ. խմբագիր «Արձագանգ ձըմարտութեան» կրօնաբարոյական և առողջապահական ամսաթերթի, տպ. Բարիզ 1928-1931:

ԱՐՄԵՆԱԿՍ Կամ Մենակո, Արմանեակ բերդը այսպէ՛ս այ կը կոչուի:

ԱՐՄԵՆԻԱ, «շարաթաթերթ՝ ազգային, գրական, քաղաքական և հասարակական» (Հ. Յ. Դաւենակցութեան) յետոյ եօթեայ. տպ. Պուէնոս Այրէս 1931, կը շարունակուի (1938):

ԱՐՄԵՆԻԱ «անկախ շարաթաթերթ»: Տպ. Լոս-Անճելոս 1929-1930: Արտօնատէր Մ. Էլվան և Օ. Վարդանեան: (Տե՛ս Արմենիա):

ԱՐՄԵՆԻԱ Տ. Հայաստան:

ԱՐՄԵՆԻԱԿ, Արմենակ, կամ Արմենիկ, ըստ Յունաց՝ Արմենիաֆօն, սահմանք Առաջին Հայոց,

ԱՐՄԵՆԻԱՔԱ, հանդէս հայադիտական, խմբ. Ռոթ Կարբոլոս Տօքթ. տպ. Լայրցիկ 1926:

ԱՐՄԵՆՈՅ, հայանուն գիւղակ Իտալիոյ Նովարայ գո. ի մէջ:

ԱՐՄԵՆՈՒՊՈՒԻՍ Տ. Կերլա:

ԱՐՄԵՆՍԳԱԼԻՊԲ Տ. Խաղսի:

ԱՐՄԷՆ՝ կամ Արմեն, օտարները այսպէս կը կը չեն Հայերը՝ մեր Արամ նահապետին անունով:

ԱՐՄԷՆ, լեռ՝ Լեռնային Կրիկիոյ մէջ, Լամբրոնի անտիկ ամրոցին մօտ արեւելակողմը: Լեռանս հիւսիսային կողմը ի հնուն կար կրօնաւորաց Անապաս կամ Լսարան մը, որ կոչուած է մերթ Արմենի անապաս և մերթ Յովնանենի: 1233ին Յակոբ անուն կրօնաւոր մը հոս ընդօրինակած է Աւետարան մը Ուրիշ յիշատակարանէ մը կը յայտնուի որ տեղւոյս եկեղեցիները կը կոչուէին Ս. Աստուածածին և Ս. Փրկիչ:

ԱՐՄԷՆ ան՝ Մայիլեան Ա.:

ԱՐՄԷՆ Գարօ ան՝ Բաստրմանեան Գարեգին: ԱՐՄԷՆ Ենովի, գրադէտ, ծնած է 1885ին Էքքէրէ. և շատ պզտիկ հասակին եկած է Կ.

Պոլիս, ուր՝ առած է իր նախակրթութիւնը թաղային վարժարաններու մէջ ու ապա 1896ին յաճախած է Ազգ. Կեդր. վարժարան, յետոյ Ռոպերթ Գոլէճ, որուն շնորհիւր աւարտելէ յետոյ ներուած է գրականութեան և բրոֆ. ձէճիդեանի հրատարակած Բիւրակն շարաթաթերթին օգնական խմբագիր եղած է 1901-5ին, միեւնոյն ատեն ալ-



ԵՆՈՎԻ ԱՐՄԷՆ

խառակցելով Արեւելի, Մասիսի և Արեւելեան Մամուլի 1906—8 իր խմբագրապետութեամբ հրատարակուեցաւ Մասիսը և ապա Չեզոքը (1909) իրր շարաթափերով:

1909—10ին հրատարակեց Առաջնօրեայ Պահ մը հեռանալով զրական ասպարէզէն՝ 1910ին ստանձնեց Մերսինի Աղդ. Պարթեւեան վարժարանի տնօրէնութիւնը և ապա Ատարազարի Աղդ. Կեզը. վարժարանին մէջ ուսուցչութիւն և տնօրէնութիւն մինչև 1915ի տեղահանութիւնը:

1915ին Բէթթահիա կը տարագրուի ուսկից տարի մը ետք Պոլիս կ'անցնի ծպտուած և 1918-19 ժամանակի խմբագրապետութիւնը կը ստանձնէ:

1919ին Պոլսոյ Հայ Կարմիր Սաշի տնօրէն կ'ընտրուի և կը վարէ այդ պաշտօնը մինչև 1922, այդ տարի Պոլսէն Պատի (Իտալիա) անցնելով կը հիմնէ ընկերութիւն մը «Ընկերութիւն Իտալ Հայ Արևելեան Գորգերու»: Երկու տարի զործելով կ'արտադրէ Իտալիոյ ամէն կողմը մեծապէս գնահատուած արևելեան զորգեր: Յետոյ տնօրէնութեան կը կոչուի «Franco-Orient» արևելեան զորգի ընկերութեան Իւզէսի (Uzès) զորգի աշխատանոցին, ուր կը գործէ 1925-30:

1931ին Մարտէյի մէջ կը հիմնէ արագատիպ մեծ մամուլով և արդիական ամէն կատարելագործութիւններով օժտուած առաջին հայկական արպարանը՝ իր անունով, որ ցարգ (1938) կը շարունակէ հայերէն և ֆրանսերէն ամէն կարգի ապագրական գործեր կատարել:

Կ'անգամակցի իրր ատենադպիր վարչութեան Մարտէյի Ս. Թարգմանչաց Մայր-եկեղեցիին կրօնական ընկերակցութեան, ինչպէս նաև Լ. Բ. Ը. Միութեան Մարտէյի մասնաճիւղին վարչութեան:

Վերոգրեալ լրագիրներէն զատ Ե. Արմէն աշխատակցած է նաև Մանգումբի, Ծաղիկի, Բիւզանդիոնի, Ազատամարտի, Վերջին Լուրի, Նոր Օրի, Յառաջի, Ապագայի, Հայ Սիրի (Մարտէյ և Ամերիկա), Անալիսի, Պայքարի, Մշակի (Ամերիկա), Վերածնունդի, Կոչնակի՝ և ուրիշ զանազան թերթերու ինչպէս նաև Տարեցոյցներու:

Իր հեղինակութիւններն են, Կիկը, Թրքահայ գրականութիւնը մամուլի ազատութեան բուսակներն, Ազգ. Սահմանադրութիւն. Վեդարաւոր Աստուան, Արեւիկ Զօպանեան: Թարգմանած է Դեսպան Մօրկրեքաուի յիշատակները և Մղձաւանջ:

Ենովք Արմէն այն հազուագիւտ մտաւորականներէն է որ հակառակ Կ. Պոլսոյ թռուորոհին մէջ ապրած ըլլալուն՝ հետո մնացած է կուսակ-

ցական գործունէութենէ: (Ալյօյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2040 2: Տե՛ս նաև Հայկ Գառազաբի «Պարսկահայ Տարեցոյց»ը 1920 էջ 204-5):

ԱՐՄԷՆ Մկրտիչ, զրագէտ Խ. Հայաստանի մէջ (Երեւան). ծնած Լէնինական՝ 1906ին, ուր ստացած է երկրորդական ուսումը: Մամուլի մէջ առաջին անգամ երեւցած է 1923ին: Հատորով լոյս տեսած են Մ. Արմէնի Ծիրկանայ, Կոստուոյիս և 1934ին՝ Երեւան վէպը. որու մասին բաւական զրնահատական տողեր նուիրեցին զրական քննադատներ: Ունի բազմաթիւ պատմրւած քններ և քերթուածներ, ինչպէս Երկարաւորող Երկի Երգեր, Զուբերիսա, Քաղաք բլուրի վրայ, Կազային Երագ, Գազաբների Երգ, որոնց մէկ քանին թարգմանուած են ռուսերէնի, թուրքերէնի, վրացերէնի և քրտերէնի: Իրրև արձակագիր մանաւանդ՝ Մ. Արմէն արժէքաւոր է իր զրաւիչ պատկերացումներով ու երեակալութեամբ: (Հիւ. Տարեցոյց 1935 էջ 239):



ԱՐՄԷՆ ՄԿՐՏԻՉ

ԱՐՄԷՆՆԵՐ, Բրիտոսէ վեց դար առաջ Արմեն անունով ժողովուրդ մը, որ ցեղակից էր Փոլեզիացիներու, Թրակիայէն (Յունաստան) մեկնելով կ'անցնէր Տարտանէլի և Վոսիորի նեղուցները և նախ կը հաստատուէր Կապադովկիոյ մէջ, յետոյ Հեթերու երկրէն առաջնալով կը մտնէր Հայաստան և Ուրարտացիները կը հպատակեցնէր իրեն: Արմէնները արիական ցեղէ էին. կտրկամ կարճ գլուխ ունէին, խարտեաշ և արծուեռունդ: Մինչդեռ Հայաստանի հնագոյն ժողովուրդները սեմական կամ միջերկրականեան երկարադուխ ցեղին կը պատկանէին:

Արմէնները խաշնարած էին և իրենց հետ բերած էին հարուստ հօտեր: (Յովհ. Պողոսեան):

ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ (Յովհաննէս Տէվենեան), զրագէտ ուսուցիչ, ծնած է 1892ին Մաշկերտ (Ակն-Արարկիր), ուսած նախ զիւղին դպրոցը, յետոյ՝ 1903ին ընտանեօք դաղթած Հալէպ, ուր 1907ին աւարտած տեղին 7 ամեայ ազգ. նախակրթարանը: 1907ին մեկնած Պոլիս, իրրև գիշերօթիկ աշակերտ Պէրպէրեան վարժարանի, զոր աւարտած է 1910-11 դպրոցական տարեշրջանին, որմէ վերջ հետեւած է Պոլսոյ իրաւարանական համալսարանի ընթացքին և ընդհատած ընդհ. պատերազմի հետեանքով:

1915ին իրրե թուրք բանակի սպայ զինուորադրուած ըլլալով, մեծ դժուարութեամբ կրցած է անցնիլ Պուլկարիա, ուր զբաղած է ուսուցչութեամբ: Զինադադարէն յետոյ խմբագրած է շ. Յ. Դաշնակցութեան Պուլկարիոյ օրգան «Հայաստան» շաբաթաթերթը: 1919ին զացած է Երևան, վարելով նախարարական խորհուրդի աւագ քարտուղարի պաշտօնը, ուրկէ՛մեկնած է փետր. 18ի ապստամբութենէն յետոյ, և Պարսկաստան - Միջագետք - Հնդկաստան - Եգիպտոս ճամբով Լ. Շանթի, Ս. Վրացեանի և Յ. Քաջազնունիի հետ անցած է արտասահման և նուիրուած գրական և քաղաքական գործօն կեանքի: Հաստատուած է ընտանեօք կրկին Պուլկարիա, ուր նախ խմբագրած է «Հայաստան» շաբաթաթերթը (Յիլիպէ) իսկ յետոյ 1926—29ին խմբագրած է «Արաքս» օրաթերթը (Սոֆիա):



ԱՐՄԷՆ ՍԵՒԱՆ

Գրականութեան մէջ իր մուտքը ըրած է 1911-1912ին զրեթէ միաժամանակ աշխատակցելով շ. Յ. Դ. Ուս. Միութեան օրկան «Երկունք» ամսագրին և Մեր. Պարսամեանի «Շանթ»ին: Աւելի յետոյ աշխատակցած է զանազան գրական հաւաքածոներու և հանդէսներու: Գրած է Շամտանճեանի «Ոստան»ին, «Ճակատամարտ»ի, Գ. Մխիթարեանի «Նոր Շարժում»ին, «Հայրենիք» ամսագրին և օրաթերթին, Յ. Ճ. Սիրունիի «Նաւասարդ»ին, և ուրիշ թերթերու, ստորագրելով բանաստեղծութիւններ, պատմուածքներ, գրական-քննադատական յօդուածներ ևւայլն:

Տ. Զէօկիւրեան և Ռ. Սեւակի նուիրուած ուսումնասիրութիւնները 1932ին լոյս տեսած են առանձին հատորով:

Իրրե ուսուցիչ պաշտօնավարած է Սոֆիայի Մեսրոպեան ճեմարանին մէջ, ուր հայերէն լեզու, գրականութիւն, ընդհանուր ազգաց պատմութիւն աւանդած է: Սոֆիայի մէջ հրատարակած է գրական-գեղարեւեստական մոդուրիզական «Մասիս» պատկերադարձ ամսագիրը: (Պարսամեան եղբայր «Կեանք եւ Արուեստ Տարեգիրք 1934 էջ 23):

Արմէն Սեւան յետոյ հրատարակած է «Մասիս» տարեգիրքը 1934ին և 1935ին: Սոֆիայի մէջ 1935ին հրատարակած է նաև մանկական թերթ մը «Մրզաստան»: 1936ին Պուլքէշ փոխադրուած է իրրե Ազգային վարժարանի տնօրէն:

Հասցեն է H. Devedjian, Bulv. Carol 43. École Arménienne Bucarest (Roumanie):

ԱՐՄԷՆ ՍԻՆԻ, Տ. Մելիքեան Բիւզանդ:

ԱՐՄԷՆ ՏՕՐԿԱՆ Տ. Սուրենեան Հրայշայ:

ԱՐՄԷՆԵԱՆ ԱՐՄԷՆ, 1910ին Արմէն Արմէնեան

արդէն իսկ մեծ համբաւի տէր կովկասի թատերաբեմին պարկեշտ ու սիրուած դերասանապետը, Սահմանադրութեան թըւականին Արէլեանի հետ Պոլիս, Իզմիր Իրենց խումբովը ներկայացուցներ կուտան: Արմէնեան իր նախնական կրթութիւնը առած է Վենետիկի Մխիթարեանց Քաղկեդոնի բարձրագոյն վարժարանին մէջ. իր հայերէնի ուսուցիչն էր շ. Արիստակէս Քասքանտիլեան: («Բազմավեպ», 1936 էջ 267):



ԱՐՄԷՆ ԱՐՄԷՆԵԱՆ

ԱՐՄԷՆԵԱՆ ՏԻԿԻՆ, գերասանուհի, կողակից դերասան Արմէնեանի տես ԶԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԱՐՄԷՆԻ ԱՆԱՊԱՏ Տ. Արմեն (Լեռ):

ԱՐՄԷՆԻԱ, շաբաթաթերթ՝ ազգային, քաղաքական եւայլն: Տպ. Մարտի 1885—1923, Խըմբագիր՝ Մ. Փորթուզալեան: (տես Էրմենիա):

ԱՐՄԷՆՈՎԻԼԻԿԻԱ Տ. Կիլիկիա:

ԱՐՄԸՋԱՆ, Արմընան կամ Արմուեան, գղ. Բալուի, Չորրորդ Հայոց առաջնորդական թեմին մէջ. 50 տ. հայ բնակիչ ունէր, զպրօցին մէջ 30 մանչ կը յաճախէին:

ԱՐՄԻԱ, գղ. Թուրքիոյ, Պէրէքէթ-տաղըի, 8 տուն հայ կար:

ԱՐՄԻՁՈՆ, գղ. Վասպուրականի Արճէշ գո.ի, 1900ին 250էն աւելի բն. ունէր. քարաշէն եկղ. Ս. Սարգիս:

ԱՐՄԻԿ, գղ. Այրարատայ, բն. 600 այլազգի:

ԱՐՄԻՆ ՓԷԹԷՐ (Փէքրու Կրիկորովիչ), 1599ին կը յիշուի իրր թարգման և ղիւանագիտական գործակալ Միհայ Պրավու Ռումէն իշխանին («Արազ Տարեգիրք» Բ. էջ 72):

ԱՐՄՆԱԼ կամ Արմնայ, հին գղ. Սիւնեաց Սողք
գաւառի:

ԱՐՄՇԱՏ, հայաբնակ գղ. Վանայ Շատախ
գո.ի մէջ. 1900ին 260 բն. ունէր, եկ. Ս. Վար-
դան:

ԱՐՄՈՎ, թգ. Հայկազն. որդի Զարեհի, իշխեց
394-385 (ն. ք. Բ.), իրեն յաջորդեց որդին Բայ-
գամ:

ԱՐՄՈՒԹԱՂ, գղ. Տիվրիկի, 1900ին 200 բն.
ունէր, եկղ. Ս. Գէորգ. քանի մը տուն ալլազգի-
ներ կային: Ունէր ճաշակաւոր երկյարկ դպրոց
մը, կառուցուած Մակարեան Գրիգոր, Սարգիս
և Գալուստ եղբայրներէն, 50 մանչ աշակերտ
ունէր դպրոցը:

ԱՐՄՈՒՃԱՆ s. Արմրնան:

ԱՐՄՈՒՆԻ Գրիգոր, իրաւագէտ, 1920ին կը
իշխուի, վկայուած Պոլսոյ համալսարանէն:

ԱՐՄՈՒՍԱՏ s. Աւմուստ:

ԱՐՄՈՒՏԱՆ կամ Արմսան, կրկին գիւղեր Բարձր
Հայոց Դարանաղեաց (Կամախ) գո.ի մէջ, Փոքր
Վերի Արմսան ունէր 600 բն. եկղ. Ս. Թէոդորոս,
վարժարանին մէջ մօտ 100 աշակերտ կը յաճա-
խէին: Գիւղին գաղաթը Ս. Եղիս ուխտատեղի
մը կար: Մեծը՝ Մեծ Արմսան ունէր 1400 բն.:

ԱՐՄՈՒՏԼՈՒ կամ Տանուտ, զանազան տեղեր
այս անունով գիւղեր կան:

— գղ. Արագածոտն գո.ի մէջ. բն. 600, 400ը
հայ, եկղ. Ս. Սահակ:

— գղ. Արեղեանք գո.ի մէջ Պաշքէօյի արև-
մտակողմը 5390՝ բարձրութեան վրայ:

— Շիրակ գո.ի մէջ, գաղթած կարսի, Բա-
սենի և Ալաշկերտի գիւղերէն, եկ. Ս. Սարգիս,
կառուցուած 1859ին: 1926ին 139 տուն երկրա-
չարժէն կործանեցաւ:

Այս անուամբ զեռ կան ուրիշ գիւղեր ալ
Սպերի, Սերաստիոյ և մեր աշխարհի ուրիշ կող-
մերը:

ԱՐՄՏԱՆ s. Արմուսան:

ԱՐՄՏՈՒ ՎԱՆՔ s. Գեորգայ վանք:

ԱՐՇԱԼՈՅՍ, այսպէս կը կոչուի Խ. Հայաս-
տանի Քեօրվալու գիւղը (սե՛ս):

ԱՐՇԱԼՈՅՍ, «ազգային, գրական և քաղաքա-
կան անկախ հայաթերթ — օրկան ազգային ան-
կախ Միութեան»: Տպ. Գահիրէ 1899-1905, աը-
նօրէն խմբագիր՝ Ե(ղիշէ) Թ(որոսեան), 1908-9ին՝
Գէորգ Փափաղեան:

ԱՐՇԱԼՈՅՍ, «պատկերազարդ օրաթերթ գրա-
կան հասարակական, քաղաքական և տնտեսա-
գիտական: Տպ. Թիֆլիս 1905—6 խմբ.-հրատ. Գ(է-
որգ) Մելիք կարագեօղեան:

ԱՐՇԱԼՈՅՍ «պատկերազարդ յաւելուած (հա-
մանուն օրաթերթի): Տպ. Թիֆլիս, 1906 խմբ.
հրատ. Գէորգ Մելիք կարագէօղեան:

ԱՐՇԱԼՈՅՍ, «ամենօրեայ լրագիր»: Տպ. Զմիւռ-
նիա 1907-8, արտօնատէր Բ(արսեղ) Քէշիշեան:

ԱՐՇԱԼՈՅՍ, օրաթերթ, տպ. Զմիւռնիա 1908:
Արտօնատէր Հր. Մամուրեան, խմբ. Վ(ահան)
Թօշկեան: (Շարունակութիւն Արձագանգի):

ԱՐՇԱԼՈՅՍ, երկչաբաթաթերթ: Տպ. Թէհրան
1912 (թիւ 1—10): Արտօնատէր և Հրատ. Արսէն
Միքայէլեան:

ԱՐՇԱԼՈՅՍ, «գրական, գեղարուեստական և
քննադատական ժողովածու» (ալմանախ): Տպ.
Թիֆլիս 1915—1916: Խմբ. Ա. Մելքումեան,
ապա Երուանդ Սաղոյեան: 1917ի հատորը Ալեք-
սանտրապօյ ապուած:

ԱՐՇԱԼՈՅՍ, շաբաթաթերթ, 1918ին հրատա-
րակուած է ձեռագիր, 1919ին տպուած, ի Թաւ-
րիզ:

ԱՐՇԱԼՈՅՍ ամսաթերթ, տպ. Նիւ Եօրք 1920—
1922, (խմբ. Լևոն Պալեան):

ԱՐՇԱԼՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ, «օրագիր, քաղաքա-
կան, բանասիրական և առևտրական»: Տպ. Զմիւռ-
նիա 1840-1887: Հրատարակիչ և տէր լրագրոյս՝
Ղուկաս Գ. Պալազարեան, որուն մահէն յետոյ
խմբագիր՝ Յարութիւն Սվաճեան (Նախ կիսամ-
սեայ, ապա տասնօրեայ, վերջը շաբաթօրեայ)

ԱՐՇԱԼՈՅՍԻ ՀԱՅՈՒՂԻՔ, ընկերութիւն, 1925ին՝
Նիւ Եօրքի մէջ, առաջնորդութեամբ տիկին Գ.
Նահիկեանի հաստատուած էր Արեւոյսի Հայուհիք
անուամբ ընկերութիւնը՝ որ կը բաղկանար 25է
աւելի տիկիններէ: Սոյն ընկերութիւնը տարբեր
ժամանակամիջոցներուն՝ հետեւեալ օժանդակու-
թիւնները կատարած է.— 1925-1934 Հայաս-
տանի երկրաչարժի աղէտեալներուն՝ 500 տոլար,
1927-1932 Հայ որրի մը հոգածութեան՝ 100 տո-
լար, Նուպարաշէնի շինութեան՝ 150 տոլար և
այլն: Այս տիկինները միանգամայն անտուկ-
ներով հագուստ կարած և զրկած են կարօտ-
եալներուն: Յետոյ Լծուած են իրենց ուժերը
նուիրելու այս կամ այն բարենպաստակ կազմա-
կերպութեանց: («Կոչնակ» 1936, ք. 7):

ԱՐՇԱԿ (Սուրբ). Միլանի (Իտալիա) Liber No-
titix Sanctorumը Ս. Ամբրոսիոսի գահին վրայ
բարձրացուցած կը ներկայացնէ հայ մը Ս. Արշակ
S'ant Arsacio Armeno. պատուական հոգեւոր հօ-
բաջ հովուի համբաւով: («Բագմավեպ» 1929 Ապ-
րիլի կողմի վրայ):

ԱՐՇԱԿ Ա. Արշակունեան թգ. Հայոց որդի Վա-
ղարշակայ, յաջորդ իր հօրը (127-114 ն. ք. Բ.):

իր օրով Պոնտացիք ապստամբեցան, զնաց նուաճեց զիրենք Արշակ և յազթութեան ի նշան Սև Ծովու եղերքը քարէ կոթող մը կանգնեց:

Արշակ հայածեց Բագարատայ որդիները որովհետեւ իբրև հրեաներ՝ կուռքերուն պատիւ չէին տար, անոնց գլխաւորներէն երկու հոգի սպաննեց և մնացողներուն հրամայեց որ իրենց զաւակները չթլփառեն և շաքաթ օրը սուրբ չպահեն: Պոստացան այս երկու պատուէրները կատարել առանց կուռքերը պաշտելու: Արշակ 13 տարի թագաւորելէ ետք մեռաւ և իրեն յաջորդեց Արտաշէս որդին:

ԱՐՇԱԿ Բ. ԹԳ. որդի Տիգրանայ, թագաւորեց 363-381: Երբ պարսից թգ. Շապուհ 363ին Տիրան թգ.ը կուրացուց՝ խախտն անոր որդին Արշակը մեծ շուքով Հայոց վրայ թագաւոր դրաւ: 366ին Բիւզանդիոնի կայսրը Վաղենդիանոս Պարսիկները իր երկրի սահմաններէն վանելէ ետք մեր Արշակին թուղթ գրեց յորդորելով որ Պարսից չհնազանդի այլևս Արշակ, Վաղենտիանոսի պատգամաւորները արհամարհելով ետ զրկեց առանց պատասխանելու կայսեր նամակին: Վաղենտիանոս զայրացած իր մօտ եղած պատանդը (Տրդատ եղբայրը) սպաննել տալէ ետք Թէոդոս սպարապետը Հայոց վրայ զրկեց: Արշակ զարհուրած Մեծն Ներսէս կաթողիկոսին զիմեց որ միջնորդութիւն ընէ կայսեր մօտ: Ներսէս անձամբ գնաց Կ. Պոլիս, Վաղենտիանոսէն մեծ պատիւներով ընդունուեցաւ, ազատեց պատանդները, հաշտեցուց կայսրը Արշակի հետ և կայսրը Ուլուժպիտղա (Ողիմպիտղա) յոյն կոյս մը կնութեան զրկեց Արշակայ: 368ին երբ Արշակ որսի ելած էր՝ Տիրիթ՝ Արշակը իր եղբորորդւոյն Գնէլի ղէմ գրգռեց և այնպէս Արշակ սպաննել տուաւ զայն, որոյ փոխարէն Ս. Ներսէս կթղի անէձքին արժանացաւ: Չգղատացաւ Արշակ, այլ ընդհակառակն Գնէլի փառանձեմ կինը իր կնութեան առաւ: Փառանձեմ ո՛րքան գեղեցիկ մարմնով այնքան սակայն անօրէն էր հոգւով: Ողիմպիտղան թուհաւորեց Մըջնիկ քհ.ի մը ձեռքով:

370ին երբ Պարսից թգ.ը Շապուհ մեծ բանակով Հայաստանի վրայ եկաւ, Արշակ Տիրիթ եւ Վարդան զօրավարները զրկեց նուէրներով, որպէսզի խաղաղութիւն կնքեն: Շապուհ պայման դրաւ միանալ իրեն՝ Յուհաց վրայ յարձակելու համար:

Արշակ երկու սրոյ մէջ մնացած՝ վերջապէս Տիրիթը բանակով մը օգնութեան զրկեց Շապուհի, առանց ինք անձամբ երթալու:

Արշակ Գնէլը սպաննել տալէ ետք Արշակաւան

քաղաք մը հիմնեց (ուր ապաստանող չարագործները ազատ կրնային ապրիլ), որուն համար հայ նախարարք և Ս. Ներսէս թշնամացան Արշակի հետ, և 373ին երբ Շապուհ յաղթական՝ Յուհաց տանէն ետ դարձաւ՝ հայ նախարարք գրով խնդրեցին Շապուհէն որ Արշակաւանը քանդէ: Շապուհ սիրով կատարեց Հայ նախարարաց խնդրանքը և հրամայեց որ ձերբակալեն Արշակը: Վերջինս Անի բերդը ապաստանեցաւ անկից Կովկաս փախաւ Վրաց օգնութեան ապաւինելով:

Նախարարք իմանալով որ Արշակ Կովկաս փախած է՝ Արշակաւանի վրայ յարձակեցան և կոտորեցին բնակչութիւնը և ջնջեցին անոր յիշատակը: Արշակ, 375ին վրաց բանակով Հայաստան դարձաւ՝ նախարարներէն վրէժ լուծելու համար: Տարի մը զեգեբելէ ետք Հայոցմէ ալ զօրք հաւաքեց: Նախարարք սակայն միարանած՝ յարձակեցան Արշակի վրայ, և երկու կողմէն ալ հայ զօրքն էր որ կը կոտորուէր: Այդ ատեն (376ին) Յուհաց բանակը Հայաստան կը հասնէր Թէոդոս սպարապետէն առաջնորդուած՝ Արշակը պատմելու, որ Շապուհին զօրք տուած էր իրենց ղէմ: Արշակ իրեն թշնամի ունէր հայ նախարարները, Շապուհը և Յոյները, յուսահատած նորէն Մեծն Ներսէսի զիմեց, որպէսզի հաշտեցնէ զինքը նախարարաց և Յուհաց կայսեր հետ, երբ հայրպետը չուզեց միջնորդել՝ Արշակ կրկին զիմեց, խօստանալով որ ուղղութեան պիտի գայ և պիտի ապաշխարէ: Մեծն Ներսէս կը զիջանի, նախարարները կը հաշտեցնէ Արշակայ հետ և 378ին Պոլիս կ'երթայ ու Արշակի նամակը Վաղեսի կը տանի, խնդրելու համար որ ներէ: Վաղէս սակայն զայրացած, ո՛չ նամակը կարդաց և ոչ ալ բանակեցեցաւ Ներսէսի հետ, ընդհակառակն զինքը աքսորել տալով՝ պատանդները սրէ անցուց:

Արշակ Ս. Ներսէսի աքսորուելուն լուրը առնելով, ինքզինքը ազատ զգաց և ձեռնարկեց իրեն ղէմ ապստամբող նախարարները սպաննելու: Նախ Կամսարականները Արմաւիր քաղաքը հաւաքեց, իբրև թէ զիրենք պիտի պատուէ՝ և զամէնքն ալ սպաննել տալով անոնց դիակները գազաններուն կեր տուաւ: Երբ Ուաղ եպիսկոպոսը յանդիմանեց արքայն իր այս ոճրագործութեան համար՝ Արշակ քարկոծելով սպաննել հրամայեց երանելի հայրապետը:

379ին Շապուհ թգ. Ալանոզանը մեծ բանակով Հայաստան զրկեց Արշակ խոյս տուաւ, իսկ նախարարները պատուով ընդունեցան զօրավարը, և որովհետև ձանձրացած էին Արշակէն՝ Շապուհին գացին և խոստացան ձեռնտու ըլլալ

որ Ալանոզան բռնէ Արշակը և իրեն տանի: Արշակ յուսահատած անձնատուր եղաւ և Շապուհին տարուելով լանտուեցաւ Անյուշ բերդին մէջ, ուր լսելով Հայաստանի դժբախտ վիճակը, որուն պատճառն ինքն էր եղած՝ սուրբ սիրաբ մխելով անձնասպան եղաւ 381ին:

Արեակ Բ.ի վրայ ողբերգութիւն գրած են Եսայեան Էմմ., Թերգեան Թ., Նարայէյ Խ.:

ԱՐՇԱԿ Գ. Թգ. Հայոց, որդի Պապայ: 381ին երբ Յունաց կայսրը Թէոդոս Արշակայ որդին Պապը Հայաստան զրկեց յունական զօրքով՝ իր մօտ պատանդ պահեց Պապի Արշակ և Վաղարշակ որդիները և Զարմանդուխտ կինը:

Թէոդոս երբ 384ին գահընկեց ըրաւ Հայոց իրեն անհաւատարիմ Վարազդատ Թգ.ը՝ Պապի երկու որդիքը Արշակն ու Վաղարշակը թագաւորեցուց Հայաստանի վրայ: Արշակ 388ին Յունաց բաժնին մէջ երթալով Եկեղեցաց Երիզա (Երզնկա) քաղաքը զնաց և հոն բնակեցաւ, նախարարներէն շատերն ալ իրեն հետեցան, որոնց մեծ մասը յետոյ Պարսից Շապուհի թագաւորին շողոքորդ նամակէն խարուած՝ ետ դարձան Պարսից բաժնին մէջ հաստատուելու, որուն վրայ Շապուհ թագաւոր դրած էր ունի խոսքով Արշակունին: 390ին Արշակ պատերազմի ելաւ խոսքովու դէմ. Կեղամայ ծովուն մօտերը երկու հայ թագաւորներու բանակները դէմ առ դէմ ելան: Զիրար կոտորելէ ետք Արշակ ստիպուեցաւ Երզնկա քաջուիլ, ուր հիւանդանալով նոյն տարին վախճանեցաւ, թագաւորելով 5 տարի միայն (385—390):

ԱՐՇԱԿ Ա. Պարթև Թգ. պարսից 246—215 (ն. ք. Բ.): Արեակ Բ. 189—136, եղբ. մեր Վաղարշակ Թգ.ին: Արեակ Գ. 96—64, Արեակ Գ. 91—109:

ԱՐՇԱԿԱՒԱՆ, հին քղ. Այրարատայ Կոզովիտ գո.ի մէջ, զոր հիմնեց Արշակ Բ. Թգ. և մէջի բնակիչները շառցնելու համար հրաման հանեց որ բոլոր չարագործները հոն ապաւինին արդարութենէն փախչելու համար: Ասով քիչ ժամանակի մէջ քաղաքը չարագործ մարդիկներով լեցուեցաւ:

Շատ անգամ նախարարները բողոքեցին այս բանին համար, բայց Արշակ մտիկ չըրաւ, և ոչ իսկ խաղայ՝ որ տեղապահ էր Մեծն Ներսէս կթ.ի ընդհակառակն հոն արքունի ապարանք ևս չի նել տուաւ: Մեծն Ներսէս Վաղէսի արգելանէն ազատած Հայաստան դառնալով, խստիւ յանդիմանեց Արշակը: Յետոյ նախարարք յարձակելով Արշակաւանի վրայ կոտորեցին բնակիչները և

քաղաքը կործանեցին: Այժմ Գրգերէն Խարապայպաժառ (Աւեր քաղաք) կոչուած աւերակները, որ կը գտնուին Որկովի և Մասեաց լեռան մէջ տեղերը, կը համարուին հին Արշակաւանի մնացորդները (Էփրիկեան՝ «Բնաւախարհիկ» Ալիւանի «Այրարատ»էն փաղուած էջ 294):

ԱՐՇԱԿԱՆ ՀԵՐԱՆՈՒՇ (Նարկիս). Ծն. 28 Յուլիս. 1887, Պէշիկթաշ. դուստր՝ ազգ. յայտնի գործիչ Յակոբ Արշակի 1897 թ. Մագրիքէօյի Աէօսերու վարժարանը յաճախած 1 ու կէս տարի, յետոյ ծննդավայրին Մաքրուհեան վարժարանը Մահէն 2 տարի առաջ գացած է բնակիլ Եէտի Գուլէէ դուրս՝ Վալիտէ-Սուլթան ազարակն ուր մեռաւ 27 Մարտ 1905 թ. հիւժախտէ: Այդ մեռաւոր առանձնոցին մէջ էր որ արփադրեց զգայուն, քնքուշ և սիրահալ բանաստեղծութիւններ՝ որոնցմէ մէկ քանին յետ մահու երեցան «Ծագիկ» կանանց յատուկ հանդէսին մէջ: Նրա յիշատակն անմահացուցած է հոգեղբայրը՝ Հրանտ Նազարեանց, 1909ի վերջերը լոյս ընծայելով զըրգոյկ մը «ՀԵՐԱՆՈՒՇ Արեակեան, իր կեանքն ու իր բանաստեղծութիւնները» մակագրութեամբ: Ոտանաւորներէն զատ՝ կը թողու կարգ մը արձակ էջեր, նորավէպներ և Բառսը անուն ստուար վէպ մը, որոնք կը մնան Նազարեանցի քով:

ԱՐՇԱԿՈՒՆԻ ԱՐՇԱԼՈՅՍ, խմբագիր «Պրոլետար» թերթի, տպ. Այնքսանդրապոլ 1926ին:

ԱՐՇԱԿՈՒՆԻ ՅՈՎԻԱՆՆԵՍ, հայրը երկու զօրականներու Յովհաննէսի և Արտաւանի 543ին Յովհաննէս Արշակունիի այս երկու որդիները Ափրիկէ կը զրկուին Բիւզանդիոնի կայսեր Յուստինոս Ա. էն, զսպելու համար Մաւրեաթինացի ապստամբները, որոնք սպաննեցին Յովհաննէսը, բայց Արտաւան աւելի վիպական և բազմարկածեան կեանք մ'ունեցաւ: Իր եղբորորդիին Գրիգորի և Արտաշէսի հետ կարթագինէն բռնակալող Գոնթարիսի հետ միանալ կը ձեռնցնէ, և զիպող առիթ մը գտնելով կը սպաննէ ապստամբը եւ վերստին զաւառը կայսեր հպատակութեան կը դարձնէ: Իրը հատուցում իր այս ծառայութեան՝ թոյլ կը տրուի իրեն թողուլ իր պաշտօնատեղին և դառնալ Բիւզանդիոն, զի հրապուրուած կայսերական ընտանիքին պատկանող Պրէճէթթա իշխանուհիէն, կը ցանկար իր կնութեան առնել: Այս ամուսնութեան դէմ արքունիքէն (Թէոդորայէն) հանուած արգելքը զինքը կը մոլեգնէ և իր փառասիրածին ղեղեւանայէն դառնացած՝ դաւադրող կը դառնայ 548ին: Արտաւան կը միանայ ուրիշ դառնացածի մը, իր ազգական Արշակին հետ, և միասին կ'որոշեն մահափորձ կատար

բել Յուստինիանոսի վրայ: Դաւադրութիւնը կը յայտնուի, ըսյց կայսրը հեղորէն թէ մեծանձնորէն՝ կը բաւականանայ կապտելով զիրենք իրենց առաիճանէն և ժամանակ մը պայատին մէջ սանտարգել պահելով: (Ֆնսէլեան՝ «Հ. Կոնկակ», 1935 թ. 6 էջ 126):

ԱՐՇԱԿՈՒՆԻ Յովհաննէս, Տոքթ. նմանարոյժ, ծնած Պոլիս շուրջ 1852ին, ուսած Յիւլատելիիա, չրջանաւարտ տեղւոյն Համանման բժշկական զըպրոցէն, Պոլիս կը դառնայ իբրև նմանահան բժիշկ — ոգեհարց և ազգային գործիչ: Կը վախճանի 73 տարու՝ նիւ Եորքի մէջ:

ԱՐՇԱԿՈՒՆԻՔ, երկրորդ հարստութիւն Հայոց թագաւորաց. սկսած Արշակ Պարթև Պարսից արքայի Վաղարշակ եղբորմէն 149 թուին (ն. ք.): Այս հարստութեան Հայք ունեցան 28 թագաւորներ. որոնց վերջինն եղաւ Արտաշէս կամ Արտաշիր: Այս թագաւորութիւնը տեւեց 500 տարիէն աւելի և վերջացաւ Ս. Սահակ հայրապետի օրով, Պարսիկ Սասանեանց ձեռքով՝ և նախարարաց մատնութեամբ: (Էփրիկ. «Բնագաւառիկ»):

ԱՐՇԱՄ, թգ. Հայոց, ըստ աւանդական պատմութեան, հայր Արգար թգ. ի, իշխած է 30—1 (ն. ք. Բ.):

Արցաւի կ'ընծայուի հին զրամներու կարգին գտնուող զրամը Արցաւի վերտառութեամբ, որ Փոքր Ծոփաց հայ թագաւորներու կարգը կը զատուի. ըսյց կը հերքուի (ըստ Կ. Բասմաճեանի) և կ'ընծայուի Կապադովկիոյ կամ Կոմմազինէի վրայ իշխող թագաւորի մը (Կ. Յ. Բասմազեան՝ «Սիոն» 1934 էջ 309):

ԱՐՇԱՄՈՒՇԱՏ s. Աւուուս:

ԱՐՇԱՐՈՒՆԻ Գրիգոր ան'ս Գրիգոր Արցաւունի. Ղազարեան Մ.:

ԱՐՇԱՐՈՒՆԻ Հմայեակ վրդ, 1873ին Կամրջաձորոյ Ս. Աստուածածին վանքը նորոգեց և հոն դպրոց բացաւ:

ԱՐՇԱՐՈՒՆԻ Յովհաննէս (Մէլիսանէճեան) Պատրիարք Կ. Պոլսոյ, Ծն. դեկտ. 1854 թ. Թօփգարու, աշխրկն. անուամբ Միհրան Յաճախած ծընընդամայրին, Գարա Կէօմրիւկի, Գուլէգարուի Սու-Յոսէօններուն և Բժշկ. վարժարանները, միջոց մ'ալ Շուկայ ելած՝ ոսկերչութեան Տատեան Առաքել պէլի բարեխօսութեամբ Կալաթա Սարայի Լիսէն դրուած գիշերօթիկ: Դպրոցէն յետոյ Պոլսոյ զանազան արուարձաններու հայ. կրթարանաց մէջ գասախօս ֆրնսի, Հայի և Պատմութեան, հուսկ ուրեմն Ս. Սալ (Սկիւտար) ուր ծանօթանալով Միհրան Դուրեանի՝ կը համոզէ զինք՝ փարիլ կուսակրօնութեան: 1879 թ. Բ.

Մաղկազարդին՝ երկուքնին և Խաչատուր Արժրուհի (որ Մատթէոս կոչուելով քիչ յետոյ վախճանեցաւ) վարդապետ ձեռնադրուեցան Մ. Իգմիրիան Ս.է Սկիւտար Ս. Կարապետ: Երկար տեւեց կը շարունակէ ուսուցչութիւնը քարոզչութեան հետ՝ Եէնիգարու. Ռոտոսթօ. Կէտիկ վաչա, Նարլը Գարու. Գուզկուլնճուք, Բերա, Պալաթ: — Հայկական խնդրոյն ատեններուն: Պարտիզակցի Վահան և Արուանձտեանց Գարեգին վարդապետներու ի Հայաստան կատարած ուղեւորութենէն պատրաստեալ կնճոռս վիճակազիրը ֆրանսերէնի վերածած է Արշարունի վարդապետ նաև Զէյթունի տեղեկագիրը (կառավարութեան և զեպանութեանց կողմէ կազմուած Յանձնախումբէն պատրաստեալ). զոր ներսէս պատրիարք յաջողած էր զեպանատունէ մը ձեռք անցունել, նպատակ ունենալով Զէյթունի ազատագրութիւնը: — Քանի մը տարիէն կը ստանայ Ծայրագուլնութեան աստիճան Իգմիրիան Ս. է: — Աչըգեան պատրի օրով քարոզիչ Եէնիգարուի, դադրելով այլևս ուսուցչութենէ և անդամակցելով Կրօն. Ժողովոյ իբր Ա. ատենադպիր: Երիզայի առաջնորդ ընտրուելով, նոյն թեմէն Էջմիածին պատգամաւոր գացած Հ. Լեփեանի հետ, Արմեան Հայրիկի ընտրութեան: Դարձին հրատարած նոյն առաջնորդութենէն: 15 ապրիլ 1896 թ. Պրուսա մեկնած, իբր առաջնորդական տեղապահ. տարի մը վերջ առաջնորդ Պրուսայի՝ ուրկէ Էջմիածին մեկնած՝ եպիսկոպոսանալու (27 մայիս 1899): — Վերադարձած Պրուսա՝ ուր մնացած մինչև իր պատր. տեղապահի ընտրութիւնը 11 Փետր. 1909. (որ մ'առաջ Իգմիրիան Հայրիկ առսահպատակութիւնը ընդունած և քաշուած ըլլալով Պատրիարքական Աթոռէն): Մինչև Դուրեան Պատրիարքի Իգմիրէն Պոլիս ժամանումը, 107 օր մեծ կորովով և գործունէութեամբ վարած Պատ. Տեղապահի պաշտօնը, Թուրքիոյ քաղաքականութեան այն բոչոպ չըջանին՝ երկիրիկիա հօրի և սուրի կը մատնուէր և գա: առներէն անընդհատ կը հասնէին հարստահարութեանց և յետադիմական շարժմանց լուրեր: — 10 Յունվար 1910ին մասնաւոր կոնդակաւ ստացած Արք. ութեան տիտղոս Ս. Հայրապետէն՝ Դուրեան Պատրի հետ: (Թեոդիկ՝ «Ամենուն Տարեցոյց» 1911 էջ 248):

1911ին Պատրիարք ընտրուած մինչև 1913: Վախճանեցաւ 1929 Յունուար 21ին և թաղուեցաւ Օրմանեան սրբազանի քով:

ԱՐՇԱՐՈՒՆԻ Վիքտորիա զրագիտուհի, զրած է Մեր դպրոցներ Գաղուքներու մէջ. էջ 128. տպ. Աղեքսանդրիա Տե'ս ՅԱՒԵԼՈՒԱՅՐ:

ԱՐՇԱՐՈՒՆԻՔ, Այրարատայ գաւառներէն մին, որ կ'իյնայ ձակատք, Արագածոտն, Շիրակ, Վանանդ և Գարեղէնք գաւառաց մէջտեղ, և է հին Երասխաձորի արեւելեան մասը և կը համապատասխանէ Կազղուան և Շօթիկէլ վիճակաց, Տըր-գատ թգը գաւառս տուաւ Արշաւիր Կամսարականին՝ որ սիրելով այս երկիրը՝ իր անունով Արշարունիք կոչեց. ինչպէս կը գրէ Մովսէս Խորենացին (Բ. դ.), գրուած կը գտնենք նաև Աւարունիս. Աւորնիք, Արշակունիս. Արունիք, թերևս սխալմամբ գրուած է նաև Աւոսաց երկիր փոխանակ Արտոացի և ուրիշ տեղ մը Աւակերսաց երկիր: Գաւառիս մէջ ի հնումն նշանաւոր էին Երուանդաշատ և Երուանդակերտ քաղաքները. Արտագերս և Կապոյտ բերդերը: Գաւառիս մէջ բնակեցաւ Արշաւրի ցեղը, որ յատուկ իրեն նախնոյն անուամբ Կամսարական կոչուեցաւ և առանձին նախարարութիւն մ'եղաւ: Այս տոհմը իր քաջագործութիւններով նշանաւոր եղաւ հինգ դար, թէ՛ Հայաստանի մէջ և թէ՛ դուրսը՝ Յունաստանի, Իտալիոյ և Ափրիկէի մէջ: Արշակ Բ. Արշարունիքը յարքունիս գրաւեց և Կամսարականաց ցեղը ըզրոր ջարդել տուաւ, ըսյց յիտոյ Արշաւրի որդւոյն Սպանդարատի ձեռքով՝ որ փոխեր էր այս կոտորածէն, նորէն բազմացաւ Արշարունեաց կամ Կամսարականաց ցեղը, որ և եօթներորդ դարու մէջ խիստ ծաղկած էր գիտութեան կողմանէ և երեւելի էր գաւառիս վարդապետարանը: Ութերորդ դարու վերջերը Բագրատունիք Արշարունեաց գաւառը գնեցին:

Արշարունեաց գաւառի եկեղեցական իշխանութիւնը՝ առաջ Բարեանդայ հետ մէկ էր մինչև Մ. Խորենացիի ժամանակ. ըսյց երբ Խորենացին մեռաւ, Արշարունեաց մէջ ալ առանձին եպիսկոպոս նստաւ: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» քաղ. ուսումն. Այրարատ «Այրարատ» քն 55—7):

ԱՐՇԱՒ, «քաղաքական, հասարակական, գրական շարժումներ» (խորհրդային թերթ), Տպ. Բարիկ 1932 («Դարբնոց» շարունակութիւն):

ԱՐՇԱՒ (Արշավ), միամյա որդան Վրաստանի Խորհրդային Գրողների Միութեան Հայկ. Սեկցիայի: Տպ. Թիֆլիս 1932. խմբ. Վ. Աւրյան:

ԱՐՇԱՒԱՆ կամ Արունի, հայարնակ գիւղ Կարնոյ դաշտի, որոյ բնակիչ 1896ին մեծ քաջութիւն ցոյց տուին այլազգաց դէմ: Ունէր դպրոց 25 աշակերտով: Ոմանք նոյն կը համարեն Արեւիկ հետ:

ԱՐՇԱՒԻՐ ԳԱՄԵՐ = Գամեր Արշաւիր, տե՛ս Մեռնուսեան վարդան:

ԱՐՇԱՒԻՐ, պատրիկ. (հայազգի) 807ին Յունաց

կայսր կ'ընտրուի. քանի մը ամիս միայն իշխանութեան զուլա մնացած է նիկեփորոս Ա. օրինաւոր կայսեր օրով:

ԱՐՇԱՒԻՐ Թգ. Պարսից, Փրատա կոչուած 32 ն. ք. Բ.—12 յ. Բ.:

ԱՐՇԱՒԻՐ Կամսարական կամ Արշարունի, որդի Կամսարայ, նախահայր Արշարունեաց (350ին), Գ. դարու ամէնէն երեւելի նախարարներէն մին: 353ին երբ Վոթանէս կաթողիկոս Խոսրովի մահէն հետք, անոր որդին Տիրանը առած Կ. Պոլիս գընաց՝ այդ կարճ ժամանակի համար Հայաստանի պաշտպանութիւնը Արշաւիր Կամսարականի յանձնուեցաւ:

ԱՐՇԱՒԻՐ Կամսարական, փեսայ Մեծն Վարդանայ, որուն Վարդանոյ զուտորը կնութեան առած էր: Սա Ե. Դարու մեր ամէնէն քաջ նախարարներէն մին եղած է, միշտ Վարդանայ հետ ըզրոր կռիւներուն մէջ: Ղազար Փարպեցի զրուատիքներով կը յիշէ Արշաւիրը, ինքն է որ 452ին աներկիւղաբար կը խօսի պարսից Յազկերտ թագաւորին առջև:

ԱՐՇԱՒԻՐ Կոստանդին, հայազգի հրամանատար՝ Բիւզանդացոց Կոստանդին կայսեր օրով, եօթներորդ դարու մէջ:

ԱՐՇԷՂ պարսիկ թգ. Հայոց (Վերին) 16—18: ԱՐՇԷՂ երէց վկայ, ընկեր Ս. Ղևոնդեանց (452ին):

ԱՐՇԷՆ կամ Առեւն, գիւղ և կեդրոնավայր Մշոյ Կինճ գ. ու. 1900ին 300 տ. բնակիչ ունէր, որուն 30ը Հայեր էին, ունէին հին եկեղեցի մը և դպրոց: Հիւսիսակողմը կը տեսնուին տաճարի մը աւերակները, զոր տեղացիք վանք կը կոչէին:

ԱՐՇԷՆԻ կամ Արեւի, հայարնակ գգ. Կարնոյ դաշտին մէջ, 1900ին 30 տ. բնակիչ ունէր, եկղ. Ս. Սարգիս (ս. Արշաւան):

ԱՐՇՈՒՆԻ ս. Արշաւան:
ԱՐՇՈՒՆԻՔ ս. Արշարունիք:

ԱՐՈՅԱՆ Լեւոն օգնական ուսուցչապետ Գօլորատէ Սթէյթ Գոլէճին (Միացեալ Նահանգաց մէջ. Կը յիշէ «Կոչնակ» 1936 թ. 46 էջ 1088):

ԱՐՈՆ, վերակացու Վասպուրականի, 1049ին կը յիշուի:

ԱՐՈՆՏՈՆ, Լվուվցի հայ վաճառական մը, համբաւոր եղած է անով՝ որ 1613ին իր սեփական դրամով շատ մը քրիստոնեաներ գնած է թուրքաց գերութենէն:

ԱՐՈՍ ս. Արու:
ԱՐՈՍԻԿ կամ Արոգիկ, գգ. Խարբերդու առաջնորդական թեմի մէջ: 1900ին 50 տուն բնակիչ ունէր, եկ. Ս. Գէորգ:

ԱՐՈՒԱԿԱՆ, հին գղ. Սիւնեաց Աղահէճք գ.ո.ի: ԱՐՈՒԱՆԹՈՒՆԻ s. Երուանդունիք:

ԱՐՈՒԵՍ (Արվես), նկարչական յեզ Երամշտական պատկերազարդ յերկամսյա հանդէս, տպ. Երեան 1926 Տ, խմբ. Արամ Երեմեան:

Սա Երեանի մեջ լոյս տեսնող ամենաառաջին նկարչական-երաժշտական հանդէսն է, որուն աւստակցած են ժամանակակից սաղանդաւոր նկարիչներն ու երաժիշները.— Ալեքսադր Սպենդիարեան, Սպ. Մելիքեան, Ա. Տէր Ղեւնդեան. Ան. Մայիլեան, Ովսաննա Տէր Գրիգորեան, Վ. Գայֆեան, Գ. Կիրօեան, Կ. Զաքարեան եւ ուրիշներ:

ԱՐՈՒԵՍ (Արվես) (գրականութիւն) Շարաթական հավելված «Պրոլետար» թերթի, տպ. Թիֆլիս 1928-29:

ԱՐՈՒԵՍ (Արվես), ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏՈՒԹՅՈՒՆ «Պրոլետար» թերթի շարաթական հավելված: Տպ. Թիֆլիս 1928-1929:

ԱՐՈՒԵՍԻ (Արվեսի) ՖՐՈՆՏՈՒՄ, «յերկշարաթաթերթ՝ Խորհրդ. Հայաստ.» որաթերթի գրական, գեղարվեստական հավելված» տպ. Յերեվան 1930. խմբ. քարա. Ա. Վշտունի:

ԱՐՈՒԹԻՒՆԱՅՇԷՆ կամ Կարմիր-հար, գղ. Արցախի Խաչեն գ.ո.ի մէջ. բնակիչք տեղափոխուած են Վանք գիւղէն Գիւղիս մօտերը կան երեք ամայի գիւղերու տեղեր և եկեղեցիներ:

ԱՐՈՒԹԻՒՆԱՅ ՍԱՐ, Արցախեան լեռնաշղթայի բարձրագոյն կատարը, որ կ'երկնայ Գարդման գ.ո.ի մէջ, և բարձր է 11085 ոտք: Կատարը գերեզման մը կայ, կը կարծուի թէ հոս մատուռ մը եղած ըլլայ և ճգնարանը Արութիւն անուն ճգնաւորի մը:

ԱՐՈՒԹՉԵԱՆ s. Արուշեան:

ԱՐՈՒԾ, հին գիւղ Սիւնեաց Վայոց-ձոր գ.ո.ի:

ԱՐՈՒՃ, հին աւան կամ գիւղաքղ. Այրարատայ Արագածոտն գաւառի մէջ, Արագածի հարաւային ստորոտը, համանուն գետակի մօտ: Հինգերորդ դարուն այս աւանն ալ արքունի զօրաց ձմերոցներու կարգն էր, զոր առաւ Վասակ եւ աւերեց: Հայոց անխիստութեան և Բագրատունեաց հարստութեան ժամանակ, բարգաւաճած է աւանս Թալնայ նման, մանաւանդ եօթներորդ դարու մէջ կը յիշուի տեղոյս մեծութիւնը, եւ այդ ժամանակէն կը մնան հոյակապ դաստակերտաց մնացորդներ:

605ին կը յիշուի աւանիս վանաց երէցը, ոմն Գրիգոր: 654ին հոս կը նստէր Արարացոց Հաբիր անունով կուսակալը կամ զօրավարը Երբ Արարացոց հաւանութեամբ մեր աշխարհի իշխանապետ եղաւ Գրիգոր Մամիկոնեան (670ին), Ա-

րուծի մէջ շքեղ շինութիւններ ըրաւ, զորսկարգաւ կը յիշեն ժամանակագիրք և պատմիչք: Յովհ. կթղ. կը գրէ «Բարեպաշտ իշխանն Գրիգոր Մամիկոնեան աստուածային այցելութեամբ հիմնադրեալ զչքնադաղեղ եկեղեցին՝ որ ի մեծ դաստակերտին Արուծ, շինէ զնա սրբազով, երկնային իմն ճեմարան հաստատեալ ի վերայ երկրի: Եւ ի հարաւոյ կողմանէ զնէ զարուհիսն իւր՝ յեղբարածայռ ձորակին, . . . և ապա հաստանեղոյս քարամբք և կրով պարսպեալ՝ կարգէ տուն բնակութեան իւրոյ»: Թէ՛ այս հոյակապ եկեղեցւոյ և թէ՛ պայտօի աւերակները տակաւին կը տեսնուին: Եկեղեցւոյ մէջ կան ոչ սակաւ արձանագրութիւններ. զմբէթը, ուր երգեմն վսեմ կերպով կը բարձրանար չորս կրկնակ ստուար կամարներու վրայ, այժմ կործանած է: Արձանագրութիւններէն նորագոյնը ունի 1275 տարւոյ թուականը: — Արուծ աւանը ներկայիս այլազարնակ գիւղ մըն է և կը կոչուի Թալիս, որ եւ համանուն Թալիչ վիճակի շինապաւսը կը համարուի: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն», Հ. Ալիւսի «Այրարատ»-էն Բաղուած էջ 143—5):

ԱՐՈՒՃԱԳՐԱԿ կամ Ալիքագրակ, հայաբնակ գղ. Այրարատայ Բասեն գ.ո.ի մէջ: Թավէտնիէ 1655-ին սակից անցնելու ատեն սաստիկ ձիւնի բռնուեցաւ: Երասխ գետը գիւղիս անուամբ օժանդակ մը ունի Ալիքու գետակ:

ԱՐՈՒՃԱՆՆ, հին գիւղ Սիւնեաց Ծղուկ գ.ո.ի: ԱՐՈՒՆԵՑ ԵԿԵՂԵՑԻ s. Հաւուց բառ:

ԱՐՈՒՆՏԷՐԵԱՆ Աւեսիս (Էթսահար), ծնած Արարկիր 1894ին, ուսած ծննդավայրը, 1906ին Սեբաստիոյ Արամեան և 1910ին Եւզոկիոյ Ֆրէնսերու դպրոցը: 1912—4

Գահիրէի Մաթոսեաններու պաշտօն ե այ, 1914 Դրանսիականի կանցնի կը պաշտօնավարէ Կերլայի Բօր Կուստավի ազարակին և յետոյ Թուլումպաճեան - Թէրզեան վաճառատան մէջ Պուքրէշ: ներկայիս Կերլա հաստատուած 1923էն ի վեր իրր արեւելեան գորգերու գործարանատէր: 1912—13ին Գ. Վարուժանի յորդորով քանի մը ուսանաւ: րներ հյատարակած է Գահիրէի Եղ. Թորոսեանի Արցախյին մէջ: Միշտ



Արուցեան Աւեսիս

երեցած է Ռուսմանիոյ մէջ լոյս տեսնող շատ մը թերթերուն մէջ: Հունգար լեզուին քաջ տեղեակ՝ կարեօր թարգմանութիւններ բրած և հայկական ինդիքներու շուրջ հունգար թերթերու մէջ գրած է շահեկան յօդուածներ: Թարգմանած է Մրետու կոլիը ու Գահ և Սեւ վէպերը՝ հունգարերէնէ:

Իր հասցէն է A. Ejdahar Gheria (Roumanie):

ԱՐՈՒՆՔ, սակաւարնակ գղ. Հայոց Տուրուբերանի աշմական Բանաշէն վիճակի մէջ:

ԱՐՈՒՍԵԱԿ «չարաթաթերթ» լոյս տեսած է 1889ին Մարզուանի մէջ, կ'ենթադրեմ որ խմորատիպ լոյս տեսած է:

ԱՐՈՒՍԵԱԿ, հանդէս, տպ. Բարիդ, 2 համար լոյս տեսած:

ԱՐՈՒՍԵԱԿ, «քաղաքական, հասարակական, գրական, տնտեսական և իրաւագիտական անկախ թերթ». 1935ին լոյս կը տեսնէ միայն տասնեակ մը թիւ. 1936ին կրկին կ'երևայ Թէհրանի մէջ: Խմորագիր՝ Արտաշէս Նազարեան:

ԱՐՈՒՏՁԵԱՆ կամ Արուսչեան, վաստակաւոր նկարիչ, միաժամանակ յայտնի ծագրանկարիչ Երեւանի մէջ: օրերայի բեմադրական նկարչական աշխատանքները կը կատարէ:

«Արտաքին ձեւաւորումը հանդիսանում է բեմադրութեան անբաժանելի մասը, չկայ մէկը առանց միւսին՝ նկարչական ձեւաւորման արեւտը նոյնպէս Առաջին Պետթատրոնում հասաւ իր կատարելութեանը, տալով իր առաջնակարգ տաղանդաւոր ներկայացուցչին՝ ՄԻՔԱՅԷԼ ԱՐՈՒՏՁԵԱՆ-ին, որն իր ստեղծագործական շնչով, տաղանդաւոր վրձինով ստեղծում է նորանոր ձեւաւորումներ, որոնք կրում են իրենց վրայ արուեստագէտի նուրբ ճաշակը, գոյների հարստութիւնն ու գործերի բազմազանութիւնը: Միքայէլ Արուսչեանը լցւած է ստեղծագործական մեծ կարողութեամբ: Նա Առաջին Պետթատրոնի բեմի լաւագոյն վարպետն է: Նրա յայտնի ձեւաւորումներն են՝ «Յիզարոյի ամուսնութիւնը», «Ռեվիզորը», «Օդակումը», «Մակրեթը», «Ուրբիշի երեխան», և այլն, և այլն:» («Հօկ», 1935, Գ. արի րիւ 1):

ԱՐՈՒՔԵԱՆ Սամուէլ, ուսուցիչ գիտութեանց, ծնած Մարաշի Եէնիճէ Գայէ գիւղը 1895ին: Նախն. ուսումը առած է Մարաշ՝ Հայ բողոքականաց Ակադեմիան և յետոյ Ազգային Միացեալ Կեդր. վարժարանին մէջ, որմէ շրջանաւարտ եղած է 1910ին: 1912ին աշակերտած է Տարսոնի Ամերիկեան «Սէնթ Փօլը Գոյէճ»ը, երկու տարի ուսանանելէ ետք, 1915ին կը տարագրուի քիւրտ ցեղերու մէջ: Զինադադարէն ետք ուսումը կը շարունակէ Տարսոնի մէջ և 1921ին իզմիր կ'երթայ,

ուր «Ինթըրնէշնէլ Գոյէճ»ը կ'աւարտէ «Պսակաւոր Արուեստից» (B A.) տիտղոսով և նոյն տարին Պոլսոյ Ամերիկեան «Սքիւլ ավ Բիլէճըն» կը մտնէ և 1924ին շրջանաւարտ կ'ըլլայ Թըլթակցութեամբ կ'ուսանի ուսողութիւնը,

և բարձրագոյն գրահայրին և եռանկիւնաչափութեան քննութիւն կու տայ: Այդ ուսանողութեան շրջանին գասատուութիւնը բրած է: Անցած է 1924ին Սելանիկ ուր Անաթոլիա Գէլէճի մէջ կը գասաւանդէ ուսողութիւն, աշխարհագրութիւն և անդլիերէն (Մակարեան՝ «Յուսագիրք» էջ 176):



Արուեստ Սամուէլ

ԱՐՈՒՔԱ, հին գղ. Սիւնեաց Բաղք գ. ր: 871ին Զուանչիր իշխանը գիւղս Սողոմոն եղին տուաւ փոխարէն Բեխ գիւղը առնելով:

ԱՐՁԱՎԻՍ, հայաբնակ գիւղ Ծ. Գարահիսարի, 1900ին 100 տուն բնակիչ ունէր:

ԱՐՊԵՆՑ, հայաբնակ գղ. Մարաշի, առանց զրպրոցի էր:

ԱՐՋ կամ Արշի, կը յիշուի Զենոր Գրկէն: Կ'իյնայ Տարօն գ. ր. մէջ, Յովհան Մամիկոնեան ևս կը յիշէ Արջուց իշխանը Գայլ Վահանի և Մմբատայ ժամանակ: Արջուց յատուկ եպս. ևս կը յիշուի, որուն յանձնեց Վահան Խաչափայտի մէկ մասը:

ԱՐՋԱ կամ Արնա, գղ. Բասեն գ. ր. Մանուգոմ գիւղի հարաւային-արեւմտեան կողմը:

ԱՐՋԱԿ Տ. Հառչակ:

ԱՋԱԿԱՊ Տ. Քիլիլա:

ԱՐՋԱՁՈՐ կամ Անիգուր. գղ. Սիւնեաց Բաղք գ. ր. Շհարջուկ գղ. ր. մօտ: 1900ին 510 հայ բն. ունէր: մշակութեամբ կը պարագին, ունին հին եկղ. մը:

ԱՐՋԱՆ Տ. Յարջանց:

ԱՐՋԱՌԵՐԵԿ կամ Ուրծայ անապատ, Այրարատայ Սերք գաւառի մէջ յիշուած միայնակ վանքն է, (կը գրէ Էփրեկեան «Բնաշխարհիկ»ի մէջ (որոյ անունը կը գրուի նաև Աջաուրեկ):

Վանքս յիշուած է 1482ի Ծարականի մը յիշատակարանին մէջ (Ծար. Ս. Ղազարու մէջ). ըստ ուրում վանքիս եկեղեցիքն են Ս. Սարգիս եւ Ս. Յակոբոս, առաջնորդը՝ Մանուէլ Էպիսկոպոս. գրիչ՝ Վրբանես կրօնաւոր, ստացող՝ Սարգիս, փակակալ

Ս. Գանանգին «Հայոց թառոյ»: Վանքիս միաբան-
ներէն կը յիշուին Վրբանեսի աշկ. նահապետ սրկ.,
Գաւիթ, Հանես, Խաչատուր վարժապետ Վրբանեսի
Հւայլն («Հայկարան» Հ. Ալիբանի ՀՏՐ. Բ. էջ 756):

Կայ ցաւ «Ուրծայ Առաքելոց ուխտ» ուր 1427-
ին «առ ոսւ վարժապետի մեր Սարգսի» Զաւարիս
որդի Սարգսի եւ Շնոնվորի ժամագիրք մը կ'ըն-
դօրինակէ (Մոնագոյ կը գտնուի), որուն զլիսագրերը
Սարգիս Զագալանեցիէն կը գտնուին: Երէ Արշաւե-
րեկի վանքի Ս. Յակոբ Եկեղեցիին յանուն Ս. Յակոբ
Առաքելոյ չէ՛ ըսել է Ուրծայի մէջ եղած է եւ երկ-
րորդ վանք մը:

ԱՐՋԱՔԱՐ, Արցախի Բուստի գու. մէջ, օժան-
դակ վտակ՝ Թովուզ գետակի, մօտը կայ զուտ եւ
պատուական պղնձահանք:

ԱՐՋԻ ԿՈՆԵՆ, ձորի մը անուն, Բուստի գու. մէջ:

ԱՐՋԻԿ, հայանուն ալրագարնակ գղ. Կարնոյ:

ԱՐՋՈՅ ԱՌԻՃ, ի հնումն շէն գղ. Շիրակի, Բագ-
նայրի հարաւակողմը, այլագղի ընակիչք Ալաճա
կը կոչեն գիւղս, մօտի համանուն լեռան անու-
նով: Հոյակապ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ա-
ւերակներէն կը գուշակուի որ իշխանաշէն մե-
նաստան մը եղած է: Կան ժ.Գ. դարու արձա-
նագրութիւններ, 1207էն մինչև 1289 թուականը:
(Էվրիկեան՝ «Բնաշխարհիկ», Հ. Ալիբանի «Շիրակ»
էն քաղաւած, էջ 121—3):

ԱՐՋՈՆԻՅ ՎԱՆՔ, անչուք մենաստան Արճէշի
գու. մէջ, Արմիզոնք գղ. մօտ:

ԱՐՋՈՎԻՏ, ռազմավայր Բասեն գու. մէջ,
1049ին հոս տեղի ունեցաւ, ինչպէս կը պատ-
մեն Կեղրենոս Բիւզանդացի եւ Մատ. Սուհայեցի
(125):

ԱՐՋՈՒՏ, հայանուն այլագարն. գղ. Շիրակի:
ԱՐՋՈՒՅ ՉՈՒ՝ Տ. Արջ:

ԱՐՋՐԱՅ կամ Առքա սակաւարնակ գղ. Հայոց՝
Արծկէ գու. մէջ:

ԱՐՍԵԱՅՓՈՐ կամ Ասեացիոր, գու. Տայոց աշ-
խարհի մէջ, ուր կը բարձրանան Արսեաց լեռ-
ները:

ԱՐՍԷՆ, պատրիարք Երուսաղէմի, (972-1021):

Սա է որ 1012ին Սիմէոն Հայկազն ճգնաւո-
րին յանձնարարական թուղթ կու տայ երբ ան
Եւրոպա կ'ուղևորի: Արքոյն կենսագիրներէն Վրոն
(ԺԶ. դար) գրած է սոյն նամակը եւ թարգմա-
նած է լատիներէնի աղաւաղ եւ համառօտ ոճով,
խակականը կորսուած է: Հ. Ալիշան Վրոնի թարգ-
մանութիւնը հայերէնի թարգմանած է («Բագ-
մալեպ» ԽԲ.) ուրկէ կը տեսնուի որ Արսէն Ար-
քոյ Գերեզմանի պահապան եւ պատրիարք Երու-

սաղեմի տիտղոսը կու տայ իրեն, զրոյժած է
նամակը կնիով նշանաւ Ս. Գերեզմանի Տեառն
(Աղանուցի՝ «Միաբան», էջ 39):

ԱՐՍԷՆ ԸՆՃԱՅԵՅԻ, ընկեր վարդանայ, կը նա-
հատակուի 451ին:

ԱՐՍԷՆ Երկար տե՛ս ՅԱՒԵԼՈՒԱՅ:

ԱՐՍԷՆ կամ Արսէնիոս, Սուրբ, Եզրպտոսի
գլխաւոր անապատական հայրերէն մին, աղաւ
Հոռմայեցի, նախապէս ուսուցիչ: Արկաղիոսի եւ
Ոնորիոսի՝ Մեծ Թէոդոսի որդւոց, 390ին կը հրա-
ժարի աշխարհէ եւ անապատական կեանքին կը
նուիրուի, կը վախճանի 445ի ատենները, 118
տարեկանին: Հայ եկեղեցիին կը տօնէ Գեղա-
ամսոյ սկիզբները:

ԱՐՍԵՆԻՈՍ, Պատրիարք Յունաց՝ Անտիօքայ,
սա եկեղեցական իրաց մէջ Հայոց հետ միաբա-
նելուն համար (1270ին) Յոյներէն կ'աքսորուի:

ԱՐՍԷՆԵԱՆ Բենիւրեթանց Աղեփանգ, համա-
լսարանական երիտասարդ, հիմնադիր Թիֆլիսի
բարձր դասընթացներու, Նոր-Պայաղեացի ազ-
նուական Արչակ Պետրոսեանէն կը սպաննուի
Սոխումի (Կովկաս) իր կալուածին մէջ եւ կը
թաղուի Թիֆլիսի Պօղոսեանցի գերեզմանա-
տունը (Տե՛ս Բենիւրեթանց, Մանրամասնութիւն-
ներ կը պակսին):

ԱՐՍԷՆԵԱՆ Կ. Արսէն վաճառական, ծնած Պո-
լիս, շրջանաւարտ Ռոպէրթ Գոյճի, յամառ աշ-
խատութեամբ դիրք եւ պատիւ շահած եւ համ-
բաւի տիրացած էր: Ինքն էր նախագահ վար-
չական խորհրդոյ Օսմանեան առևտրական Գրա-
մատան (Հայ Պանքա): Յիշեալ պանքային սը-
նանկացումը փութացուց իր մահը որ տեղի ու-
նեցաւ 1925 Ապրիլ 10ին: (Գաբամանեան՝ «Գր-
պանի Տարեց.» 1926 էջ 157):

ԱՐՍԷՆԵԱՆ Յակոբ, դեղագործ, ծնած 1881ին
Նիկոմիդիոյ Օվաճըզ գիւղը: Նախնական ուսումը
տեղւոյն Ազգ. վարժարանին մէջ առնելէ ետք
1904ին Պոլսոյ բժշկական համալսարանին դեղա-
գործական ճիւղին կը հետեւի եւ վկայական կը
ստանայ 1907ին: Մինչև տարագրութիւնը իր սե-
փական դեղարանը կը բանայ Ատապազարի եւ Իզ-
միտի մէջ: Տարագրութեան ատեն ընտանեօք
մահացու վտանգներէ ազատուելէ վերջ կը փոր-
ձէ Մէսքէնէն Հալէպ փախչիլ եւ հազարումէկ
գժուարութիւններով զինուորական դեղագործ
կ'ըլլայ յիսնապետի աստիճանով եւ կը զրկուի Ե-
րուսաղէմ ուր փոխադրել կու տայ նաև իր ըն-
տանիքին ողջ մնացած անդամները:

1918ին, Անգլիական բանակին կողմէ Պաղես-
տինը զբաւուած ատեն՝ Թուլ-Քէրիմի մէջ գերի

րունուելով Եզրիպոս կը տարագրուի, վեց ամիս րանտարկուելէ ետք ազատ արձակուելով Երուսաղէմ իր ընտանիքին քով կը վերադառնայ: Երկու տարի կառավարութեան կողմէ պաշտօն կը վարէ Բեթ-զենմի մէջ, յետոյ դեղագործի նոյն պաշտօնով Գազա կը փոխադրուի. երեք տարի վերջ հրամարելով Գազայի Անգլիական C. M. S. հիւանդանոցին զեղագործութիւնը կը ստանձնէ, զոր կը շարունակէ 1923էն



ԱՐՄԷՆԵԱՆ ՅԱՎՈՒՅ

ի վեր. յարգուած, սիրուած է անխտիր ամէն ազգի քաղաքացիներէ:

Հասցեն Է. Agop Arsenian Kaza (Palestine):

ԱՐՄԷՆԵԱՆ ԱԷՐ, Տոքթ. փիլիսոփայութեան, այս տիտղոսը ստացաւ Գոյումպիայի համալսարանէն, այդ առիթիւ պատրաստեց գիտական հիմունքներու վրայ հաստատուած և փորձարկութիւններով ճոխացած մանկավարժական կարեւոր ուսումնասիրութիւն մը՝ զոր գրքի ձևով ի լոյս ընծայեց Գոյումպիա Համալսարանի Ուսուցչաց Գոյէճի Հրատարակչական մարմինը՝ 1937ին:

Տոքթ. Արսէնեան ծնած է Վան, շուրջ 1900ին և տեղւոյն նորաչնչի ծիսական զպրոցի մէջ ստացած է իր նախնական կրթութիւնը: Յետոյ յաճախած է Երամեան



ԱՐՄԷՆԵԱՆ ԱԷԹ

Պսակաւոր Արուեստից (B. A.) տիտղոսով շրջանաւարտ եղած է 1926ին: Այս շրջանին ստացած

է Ուաշպըրն ուսանողական պարգևը, որ իւրաքանչիւր տարի կը տրուի բարձրագոյն նիշը աւող աշակերտին: 1926—1930 Բոպէրթ Գոյէճի մէջ պաշտօնավարած է թէ՛ որպէս ուսուցիչ և թէ՛ որպէս արձանագրութեանց օժանդակ պաշտօնեայ: 1930ին գացած է Նիւ Եորք և յաճախած Գոյումպիա համալսարանը, ուրկէ 1932ին ստացած է Մադիստրոս Արուեստից (M. A.) տիտղոսը և վերջերս ալ Փիլիսոփայութեան Տոքթորայի տիտղոսը (Ph. D.):

Վերջին մէկ քանի տարիներէ ի վեր կը պաշտօնավարէ Թիչըրը Գոյէճի մէջ, որպէս մասնաւոր օգնական Մանկավարժական Դպրոցի քարտուղարին: Անգամ է Kappa Delta Pi-ի և Ամերիկեան Հոգեբանական Ընկերութեան: Անգամ է Ամերիկահայ Գիտական Միութեան՝ որուն նախագահութիւնը վարած է երկիցս: Աշխատակցած է Կովկասի և Պոլսոյ շատ մը թերթերուն, ինչպէս և Հայաստանի Կոչնակի: Պատրաստած է երկու ուսումնասիրութիւններ՝ որոնք շուտով լոյս կը տեսնեն Բրիտանական և Ամերիկեան Հոգեբանական կրկնակ հրատարակութեանց մէջ: («Հ. Կոչնակ» 1937 թիւ 26, էջ 632):

ԱՐՄԱ, գգ. Արցախի Ասեաց Փոր գ. ռ. ի մէջ:

ԱՐՄԱՆԱՆ, լիճ Կրկիկոյ:

ԱՐՄԱՆԵԱՆ Տ. Ասլանեան նաև ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԱՐՄԱՆ Օր. Ար. Երզնուհի, Աւստրիական երաժշտանոցէն վկայուած, որ կը մասնակցէր Աւրստրիոյ մեծ թատրոններու երգչախումբերուն: Հայաստանի կառավարութեան կողմէ կը հրաւիրուի և դերասան Յ. Արեւեանի նետ 1925ին Երևան կը մեկնի:

ԱՐՄԱՆԵԱՆ Մանուկ Տ. Յաւելուածը:

ԱՐՄԱՆԵԱՆ Յարութիւն Տ. Հօրթոն:

ԱՐՄԱՆԵԱՆ Վահագն, ջութակահար, ծնած Պոլիս 1916ին, աւարտած Բանկայթի Մխիթարեան լիսէն կը յաճախէ թուրք համալսարանի երկրաչափութեան ճիզը. տաղանդաւոր երիտասարդ մը, Բրոֆ. Միւսէնդիսեանի յաջողագոյն աշակերտներէն. որպէս ջութակահար փնտռուած ուժ մըն է: 1937 Մայիսին հրապարակային իր անդրանիկ քօնսէնը տուաւ իր կրտսեր եղբոր Վարուժան Արսլանեանի նետ, ծնած նոյնպէս Պոլիս 1921ին, ուսումը առած Բանկայթի Մըխիթարեան վարժարանին մէջ, իրրև դաշնակահար՝ Օր. Մասի Ոսկանի տաղանդաւոր և խոստմնայից աշակերտներէն է: (Թ. Ա.):

ԱՐՄԱՆԵԱՆ (Լայրն) Լեւոն, արձանագործ, իր ուսումը առած է Յրէզնոյի մէջ, ուր միշտ յայտնարերած է նկարելու յատուկ ձիրք և յաճախ

վարձատրուած մրցանակներով: 1919ին Լօս Ան-
ճէլըս կը մեկնի ուր Օթիս Արթ Ինսթիթիւթի մէջ
արձանագործութեան
կը հետեւի Քիչ ատենի
մէջ աչքի կը զարնէ
իր արտակարգ տա-
ղանդը, այնպէս որ
1000 տոլար մրցանա-
կով իրեն կը տրուի
Քայիֆորնիոյ Ռանփո-
րաները ներկայացնող
արձանի շինութիւնը:



Այս արձանը 1922-
էն ի վեր կը կանգնի
Լօս Անճէլըսի Քարթէյ
Սէնթրի հրապարակին
վրայ: (Փորձէ՛ տեսնել
Լ.ՅՐՆ ԼԵՒՈՆ):

ԱՐՄԱՆԿԻԻԼ Պօ-
ղոս, շրջանաւարտ
1872ին՝ Պոլսոյ Ան-
տառաբանական վարժարանէն:

ԼԵՒՈՆ ԱՐԱՄԵՆԻ
շինած արձանը

ԱՐՄԱՆՊԷԿ Ս. Ասլանյեկ:

ԱՐՄԱՆՊԷՅ. գղ. Պիլէճիկի, որուն Հեթումեան
դպրոցը 1892ին 3 մանչ աշակերտ ունէր:

ԱՐՄՈՒՍ, գիտակ Մովսիսի կիլիկիոյ մէջ: Տն՝
Հոսոսոս:

ԱՐՄՈՒՐԱՆ, ամիրայ պարսից, շուրջ 1060
թուին:

ԱՐՄՔՈՏ (Տ) Կոմս Ս. Յաւելուածը:

ԱՐՎԱՇ, տեղի, յիշուած Հոռոմոսի վանքի ար-
ձանագործութեան մէջ:

ԱՐՎԵՍ Ս. Արաւես:

ԱՐՏԱՐԵԼ Ս. Արսալի:

ԱՐՏԱՐՈՅՆՔ կամ Արսաբին, հին գղ. Սիւնեաց
Վայոց ձոր գու. ունի 70 տուն հայ. գիւղս կա-
ռուցուած է այգեւէտ և գեղեցիկ ձորի մը մէջ
ունի գեղեցիկ, փոքր և քարաչէն եկղ. մը: Բը-
նակիչք իրոյ սահմաններէն գաղթած են, մօտը՝
քարածայռ լեռան մը կատարը՝ ընդարձակ բերդ
մը կայ:

ԱՐՏԱԳԵՏ, հին գղ. Սիւնեաց Աղահէճք գու. ի,
յիշուած հարկատուաց ցանկին մէջ:

ԱՐՏԱԳԵՐՍ կամ Արսագերից բերդ, հին և պատ-
մական զէպքերով նշանաւոր և ամուր բերդ
Այրարատայ Արշարունեաց գու. ի մէջ, յիշուած
թէ՛ Յոյն և թէ՛ Լատին աշխարհագիրներէ:
Փրկչական երրորդ թուականին, Հոռոմայեցւոց

մեր աշխարհը նուաճելու ժամանակ, բերդիս
պահապանը Ատոր կամ Ատտոն իշխանը զէմ կը
դնէր թշնամեաց, բայց վերջապէս մատնեցաւ
թշնամեաց ձեռքը և պարիսպները քանդեցան,
սակայն այս կողոսյն մէջ Հայերէն անբուժելի
կերպով վիրաւորուելով մեռաւ Գայիոս Կեսար՝
Օգոստոս Տիեզերակային թոռը, որով և մեծ
սուգ պատճառեց կայսերական տոհմին: Ինչպէս
ի հնունմ, նոյնպէս և չորրորդ դարու մէջ Ար-
տագերս մեր աշխարհի ամրագոյն բերդերէն
մին էր, և կը պատկանէր Արշարունեաց գու. ի
տէր Կամսարական նախարարներուն: Յետոյ Ար-
շակ Բ. Կամսարականաց տոհմը կոտորելով բեր-
դիս տիրեց ու մէջը արքայավայել շինութիւն-
ներ ըրաւ: Ամմիանոս Մարկելինոս ժամանա-
կակից լատիկ պատմիչը, Մ. Խորենացւոյ և Բիււ-
զանդի նման մանրամասն կը պատմէ բերդիս
աղէտալի պաշարումը պարսիկներէն, որ տեղի
ունեցաւ Արշակայ դերի բռնուելէն և Խուժաւ-
տանի Անյուշ բերդի մէջ բանտուելէն վերջ: Փա-
ռանձեմ թագուհին, մանուկն Պապ (զոր յետոյ
Կ. Պոլիս տարին), 11000 այր և 6000 կին՝ բեր-
դիս մէջ պաշարուած մնացին 13 ամիս, բայց
խիստ և ամուր դիքք ունենալով պարսիկները
չկրցան տիրանալ: Չորեքտասաներորդ ամսէն
վերջը պաշարողները սուլէ և համաճարակէ
մեռնիլ սկսան, և այնչափ բազմութենէն մնացին
միայն Փառանձեմ թագուհին և երկու նաժիշտ-
ները: Հուսկ ուրեմն պարսիկները մօտեցով բեր-
դիս մէջ՝ թագուհին բռնեցին և մէջը ամբար-
ուած Հայոց թագաւորի՞ գանձերը փոխադրելու
համար, 9 օր և 9 գիշեր աշխատեցան: Բերդս
այրեցին, սակայն ի վերջոյ կրկին նորոգուեցաւ:
Վասնզի հինգերորդ դարու մէջ, Վարդանանց ժա-
մանակ, կը յիշուի արքունի զօրանիստ ամբոց-
ներու հետ: Բաֆֆի զեղեցիկ կերպով վիպասան-
օրէն կը նկարագրէ Արտագերսի պաշարման՞ ժա-
մանակ տեղի ունեցած զէպքերը՝ Սամուէլի մէջ:
Եօթներորդ դարուն Արտագերսը անցաւ Մա-
միլոնեան նախարարներու ձեռքը, իսկ տասնե-
րորդ դարու մէջ Բագրատունեաց պմուր բեր-
դերէն մին էր:

Ոմանք Արտագերսը և Կապոյտ բերդը միև-
նոյն կը համարեն բայց եղիչէ յիշելով այն բեր-
դերը զորս Ե. դարու մէջ ուխտապահները աւե-
րեցին, Արտագերս և Կապոյտ բերդերու անուն-
ները առանձին առանձին կը յիշէ: (Էփրիկեան՝
«Բնագիտութիւն», քաղուած Հ. Ալիւանի «Այրա-
րաւ»էն):

ԱՐՏԱԶ, հին նշանաւոր գու. Վասպուրականի:

Այժմեան Մակու գուր մասամբ մը կը համապատասխանէ հին Արտաղ գուրի Գաւառիս անունը զանազան ձևերով գրուած կը գտնենք, ինչպէս Արսազական գաւառ, Արսազակէ, Ասաւազ, Ի հնումն գաւառս կը կոչուէր Ծաւարեան, և իր Արտաղ անունը առաւ ա՛յն ատեն, երբ Արտաշէս Բ. ի հրամանով Սմբատ Բագրատունին հոս բնակեցուց Արանաց երկրէն բերած զերիները, ինչպէս Մ. Խորենացին կը գրէ:

Հին ժամանակներէն Արտաղու մէջ հաստատուած կար եպիսկոպոսարան, բայց եպիսկոպոսները չեն յիշուիր գաւառիս անուամբ, այլ Թագէոս Առաքելոյ վանքի (տե՛ս) անուամբ, ինչպէս ԺԳ. դարուն՝ Տիրացու եպիսկոպոս, ԺԴ. դարուն՝ Զաքարիա Արքեպիսկոպոս Ծորձորեցի մականուամբ, և զեռ ուրիշներ:

Արտաղ նշանաւոր է իր հին և նուիրական վայրերովը, որոնց մէկն է Թագէոս Առաքելոյ վանքը, որ մինչև հիմայ ալ կայ, հոս է նաև Վարդանանց պատերազմի վայրը Աւարայրի զաշտը և Տղմուտ գետը (Էփրիկեան՝ Բնագիտարհիկ):

ԱՐՏԱՀԱՆ, հին ու ամուր քաղաքաւան Գուգարաց համանուն գուրի մէջ, Կուր գետին հիւսիսային եզերքը, որ քաղաքիս անուամբ Արսահանի գետ ալ կը կոչուի: Քաղաքաւանս կառուցուած է բարձրաւանդակի մը կողերուն վրայ, ծովու երեսէն 5500՝ բարձր: Փայտաշէն կամուրջը իրարու կը միացնէ Արտահանի կրկին մասերը: Ունէր Արտահան նաև բերդ մը, զոր 1828ին Ռուսները ամայացուցին: Արշակունի մեր Երուանդ Թգ.ը նուաճեց Արտահանը և անուանեց զայն Քաջարան, կոչուեցաւ նաև Քաջաց քաղաք:

Ռուսաց 1828ի պատերազմէն առաջ, քաղաքս ունէր գրեթէ 400 տուն բնակիչ, որոնց մէջ կային բազմաթիւ կաթողիկեայ՝ Հայեր, որոնք մեծ մասով Ռուսաց բաժինը զաղթեցին: 1900ին Արտահան 800էն աւելի բնակիչ ունէր, 258ր միայն Հայ: Քաղաքիս Կաթողիկեայ Հայք Արղունի թեմին կը վերաբերին, ունին Ս. Աստուածածին եկղ. մը և զպրոց, իսկ Լուսաւորչական Հայք Ս. Գրիգոր եկեղեցի մը և ուսումնարան:

Գուգարաց հին Արսահան գաւառի անունը սեփականուեցաւ համանուն չրջանակին, որուն սահմաններն են Հիւսիսէն՝ Էրուզէթ, Արևմուտքէն Չախուրէթի և Զաւախք: Կուր գետը կող գաւառէն գալով կ'ընթանայ դէպի հիւսիսային արևելք, և դուրս կ'ելլէ Ախալքալաքի սահմանները, ընդունելով հիւսիսային կողմէն բազմաթիւ վտակներ:

Արտահանի գաւառը ի հնումն նախ Վրաց ձեռքն է եղեր, և ապա մերթ Հայոց և մերթ Վրաց: 1828ի Ռուսաց պատերազմին օտնակոխ եղաւ գաւառս և շատ զիւղեր ամայացան: (Էփրիկեան «Բնագիտարհիկ»):

ԱՐՏԱՄԵՏ կամ Արսամիս, ի հնումն պատմական և նշանաւոր քղ. կամ աւան Վասպուրականի Տոսպ գուրի մէջ, Վանայ հարաւային արեւմտեան կողմը, 1900ին գրեթէ 500 տներէ բաղկացած զիւղ մըն էր, զպրոցը 53 մանչ և 12 աղջիկ կը յաճարէին: Արտաշէս Բ. Արշակունին, Արանաց պատերազմէն ետք երբ Սաթենիկ կնուեթեան առաւ՝ սկսաւ ամենավայելուչ կերպով շինել տալ քաղաքս:

Հին չքեղութենէն հոս հոնցրուած կը գտնուին ոչ սակաւ տխուր մնացորդներ: Տուներուն շատերը կառուցուած են հին քաղաքի աւերակաց քարերով: 1870ին տեղույս Հայերը կազմած են Արեակունեաց Ընկերութիւն մը, որուն բուն նպատակն էր զպրոցի ապագան նիւթապէս ապահովել:


Արտամետի սրբավայրերն են, Բերդ կոչուած տեղը ուր Ս. Սարգիս մատուռ մը կայ, Տէր Յուսկան ուղու Պառեկ անկեան վրայ կառուցուած է փոքրիկ մատուռ մը: Սա անշուշտ լինելու է ԺԳ դարու ապրող Տէր Յուսկան՝ որդի Ստեփանոս վարդապետի ուխտատեղին: Այս մատրան շուրջը 2 քարընկէց հեռու, տարածուած են Արտամետի հին և նոր գերեզմանները, ուր կը գտնուին վիթխարի խաչքարեր, ԺԴ. դարու յիշատակարայններով, երրորդ անկեան վրայ կը գտնուի եկեղեցին որ շատ հին կը թուի: Հին եկեղեցոյն կից շուրջ 1850ին կառուցուած ուրիշ եկեղեցի մը կայ պարզ և կիսաբաց, ուր ամառատեն ժամերգութիւն կը կատարէին: Կային դեռ շատ մը սրբավայրեր, ինչպէս Ս. Թուխ Մանուկ, Ս. Զօր, Ս. Յակոբ: Այգեստանի արևմտակողմը՝ Ս. Սեփանոս: Հոս կայ եղեր 1225ին գրուած հրաշագործ աւետարան մը որ 1900ին Կանկու վանքին մէջ կը պահուէր: (Էփրիկեան՝ «Բնագիտարհիկ», Միւրախուրեան՝ «Նկարագր. Ուղ. 222-240. «Արձուի Վասպուրական» 1859 13—18, 39 43):

ԱՐՏԱՆԴԱՆ ԴԱՄԵՏ, կը յիշէ զաշտս Փաւստոս Բիւզանդ (Ն. խա):

ԱՐՏԱՆԻՃ կամ Արսամուն, գղ. և գետակ Սիւնեաց Գեղարքունի գուրի Արեգունի վիճակի մէջ:

ԱՐՏԱՆՈՒՉ կամ Արսամոյց, հայարնակ քաղաքաւան Գուգարաց կղարչք գուրի, և գլխաւոր տեղի այժմեան համանուն վիճակի կառուցուած է զառիվերի մը վրայ, որուն արևմտեան

կողմը կը բարձրանայ ահագին բարձրարեքձ ժայռ մը, և վրան կայ ընդարձակ տափարակ մը, որոյ տարածութեան տրամագիծը կը տեէ գրեթէ քառորդ ժամ: Քաղաքաւանիս ստորոտէն կը վազէ ձորոտի օժանդակ Արտանուչի գետը: Արտանուչ իբրև հին բերդաքաղաք մը ունի ո՛չ սակաւ հնութիւններ, թէ՛ մէջը և թէ՛ շրջակայքը, որոնք քննութեան և ուսումնասիրութեան կը կարօտին: Արտանուչի հինաւուրց բեր-



Ա Ր Տ Ա Ն Ո Ւ Չ

դը կը գտնուի բարձր քարածայռի գագաթին վրայ՝ զոր այլազգիք Կելերնիֆ գալեսի կը կոչեն: Բերդիս մէջ կայ փոքր քարաշէն եկեղեցի մը: Մրուան արարացի զօրավարը բերդս աւերեց է՝ դարուն մէջ, իսկ Աշոտ Կիւրապաղաթ վերստին շինեց և ինքնանոր մէջ նստաւ ու մեռաւ: 1900-ին Արտանուչ ունէր 1000 բնակիչ, որուն 960 հայ կաթողիկէ էին իսկ մնացեալը Ախալցխայէն գաղթող թուրքեր: Եկեղեցին Ս. Ստեփանոս՝ քարաշէն՝ 1836ին կառուցուած է, ունին և վարժարան մը:

ԱՍՐԱՆՈՒՉԻ ՎԻՃԱԿ Կղարջք գո. ի մէջ, 51 գիւղ ունի, որուն երկուքը միայն հայաբնակ են, այն է Նորաշեն և Տանան: (Էփրիկեան՝ Բնաշխարհիկ» քաղաք «Մշակ» են ժ. սարի բիւ 136):

ԱՐՏԱՇԱՍ կամ Արսաշես, կուսակալ Հայոց 189-159 ն. ք. Ք.:

ԱՐՏԱՇԱՍ, հռչակաւոր և արքայանիստ մայրաքաղաք Հայաստանի, Այրարատայ Ոստան գո. ի մէջ: Արտաքին և բնիկ պատմիչները երկու Արտաշէս կը յիշեն իբրև շինող այս քաղաքին: Մէկն է, ըստ օտար պատմչաց՝ Արտաշիաս Հայկաղն իշխանը, որ Մեծին Անտիոքոսի Ասորոց թգ. ին կողմանէ, Արշակունեաց թագաւորութե-

նէն առաջ, Հայաստանի մէկ մասին վրայ կուսակալ զրուած էր, որ և կը թուի, թէ յետոյ ապստամբելով Սելեւկիացիներէն՝ առանձին կ'իշխէր: Նոյն ժամանակները, Կարքեղանացի հռչակաւոր զօրավարն Աննիրազ, Անտիոքոսի Հռովմայեցիներէն յաղթուելէն յետոյ ուրիշ ասիացի թագաւորաց արքունիքները դեգերելէ վերջ, եկաւ Արտաշիասի մօտ, և իրեն շատ օգտակար խորհուրդներ տուաւ: Կ'ըսեն թէ, Աննիրազ գեղեցիկ և բարեբեր տեղւոյ մը վրայ, որ անմշակ թողուած էր՝ քաղաքի մը յատակաձևը գծեց, և Արտաշիասը հոն տանելով, ցուցուց և յորդորեց որ նոյն յատակագծին վրայ քաղաք մը կառուցանէ: Սա խնդրեց Աննիրազէն որ՝ ինքը այդ շինուածքին գլուխ կենայ: Քիչ ժամանակի մէջ շինուեցաւ հոն Հայաստանի ընդարձակ և հոյակապ մայրաքաղաքը, որ Արտաշիասի անուանով կոչուեցաւ Արտաշատ: Ստարոն Արտաշատը ամրաշէն կ'անուանէ:

Ըստ արտաքին պատմչաց՝ Տիգրանայ պատերազմներու ժամանակ, Լուկուլլոս Տիգրանակերտի տիրելէն ետք, կը փափագէր տիրել նաև Արտաշատի: Տիգրան՝ մէջը ապահովելով կանայքը և մանկուկները, ածապարեց արգիլելու թշնամիներուն դալուստը: Արտաշատը անառիկ մնաց նաև Լուկուլլոսի յաջորդաց: Հռոմայ հռչականուն զօրավարները Պոմպէոս, Կրասոս և Անտոնինոս՝ թէ՛ և Հայաստան արշաւեցին՝ բայց չկրցան Արտաշատ մտնել: Հռոմայ Օգոստոս կայսեր ժամանակ, երբ Հայաստանն ալ Հռովմայեցւոց մարդկաւ, կայսերական տոհմէն Գերմանիկոս ի Հայս զրկուեցաւ, որ Արտաշատ դալով՝ Հայոց թգ. պտակից Զենոնը, որ քաղաքիս անուամբ Արսաշես կամ Արսաշիաս կոչուեցաւ: Արտաշիասէն վերջ, երբ Պարթևաց Արտաւան թգ. ը իր Արշակ որդին Հայոց վրայ թագաւոր դրաւ՝ Հռոմայեցիք անոր դէմ հանեցին Վրաց Փարսման թգ. ին Միհրդատ եղբայրը, և Արշակայ դաւաճան սպասաւորաց մատնութեամբ Քրիստոսի 35 թուականին Արտաշատի մահէն ետք (51ին), Պարթևները Հայոց հաւանութեամբ Արտաշատ մտան: Յետոյ Վաղարշ Պարթև երբ Հայոց վրայ թգ. դրաւ իր Տիրիթ կամ Տրդատ եղբայրը, Հռոմայեցիք Դոմիտիոս Կորբուզոն զօրավարը զրկեցին անոր վրայ, որ քանի մը բերդերու տիրելէ ետք Արտաշատի վրայ գալով՝ գայն այրեց և կործանեց (Տակիտոսի Տարեգրութիւնք ժ. Գ. խ.): Յետոյ Ներոնի հաւանութեամբ և օգնութեամբ Արտաշատը վերանորոգուեցաւ Տիրիթէն, և այս պատճառաւ ալ ժամանակ մը Ներոնիս կոչուեցաւ:

Արտաշատի երկրորդ շինողը, ըստ Մովսէս Խորենացւոյ (Բ. խթ.) Արտաշէս Բ. (88—129) Հայոց թագաւորն եղած է, որ քաղաքին չորս կողմը պարսպեց կրկնապատիկ որմերով և պարսպէն դուրս խոր խրամ բացաւ Ամբուլթեամբ ապահովուած բլրան ծայրը շինեց ամբոց մը, ուր իր յառուկ արքունիքը և գանձը շտեմարանեց: Բլրան ուսոց վրայ շինեց հոյակապ մեհեաններ իր հայրենի կուսքերուն համար, մէջն ըլլալով Արտեմիա և Ապողոն: Հոս փոխադրեց Արմաւիրէն բոլոր կոթողները, անդրինները և շիրիմները:

Արտաշատ այլևայլ կամուրջներ ունէր Երասխայ և Մեծամորի վրայ: Արտաշատը արքայանիստ եղաւ Արտաշէսէն և նոյն պատուոյն մէջ մնաց մինչև Տրդատայ Խոսրով որդին, զրեթէ 259 տարուան չափ ժամանակը Թէև Վաղարշապատ քիչ մը ժամանակ անոր թագաւորական ակտը յափշտակեց, բայց ոչ երբեք կրցաւ ճոխութիւնն ու փառքը վերցընել:

Այս Արտաշատէն վեց մղան դէպի ի հարաւ կ'իյնայ հոչակաւոր Խոր վիրապը:

Արտաշատ մեծ կորստեան ենթակայ եղաւ Պապ թգ.ի ատեն, Բրիտտոսի 382 թուականին, երբ պարսից Շապուհ թգ.ի բանակը եկաւ քանդեց, ինչպէս կը նկարագրէ Բուզանդ (Կ. ծե.) բայց յետոյ կրկին շէնցած կը գտնենք Վարդանայ (450) և Վահանայ օրերուն:

Յովսէփ կթղ. 449ին Արտաշատի մէջ մեծ ժողով մը գումարեց Յազկերտին թղթոյն պատասխանելու համար: Հինգերորդ դարու վերջերը Արտաշատ անշքանալ սկսաւ, տեղի տալով Դուինին: Բայց թէ ե՞րբ բոլորովին աւերեցաւ և ամայացաւ Աշտիշատ ոչ ոք կը յիշէ. սակայն կը կարծուի որ կամ թաթարաց աշխարհաւեր արշաւանքներէն և կամ Անուոյ նման մեծ և սաստիկ երկրաշարժէ մը կործանուեր է: Այլևայլ երոպացի հետախոյզ ճանապարհորդներ, Թավեռնիէ, Շարրէն, Մորիէ, Տիւպուա, և այլք այցելած են քաղաքիս աւերակներուն ու նկարագրած: Այժմ այս մեծ քաղաքատեղը յս վերայ ուրիշ հին շինուածոց մնացորդ չեն տեսնուիր բայց եթէ քանի մը պատերու հիմունք և փոքրիկ եկեղեցւոյ մը աւերակ: 1900ին զրեթէ 140 տուն (1100 հոգի) հայեր կը բնակէին հին Արտաշատի հիւսիսային ծայրի պատուարին ու միջնաբերդին մէջ: Ասոնք մեծաւ մասամբ գաղթած են Սալմաստի կողմերէն, և իրենց ձեացուցած զիւղը ծանօթ է Արսաւա իամ Արսաւիր անունով: Աւերակաց մէջ կան նաև երկու առանձնակ քրդարնակ թաղեր, ո-

րոնք կը կոչուին նոյնպէս Արսաւա: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն», քաղուած Հ. Ալիւանի «Այրարաւ»-էն և ևն):

ԱՐՏԱՇԱՍ. զգ. Այրարատայ Արագածոտն (Սարատրապատ) գո.ի մէջ: 1900ին 50 տուն հայ բնակիչ ունէր:

ԱՐՏԱՇԱԻ, զգ. Արցախի Վայկունիք գո.ի, 250 քուրդ բնակչով, մօտը կայ համանուն սար մը:

ԱՐՏԱՇԵՆ հին զգ. Սիւնեաց Հարանդ գո.ի:

ԱՐՏԱՇԵՍ Ա., թգ. Հայոց, որդի Արշակ Ա.ի, թոռն Վաղարշակայ, ըստ Մովսէս Խորենացւոյն սա իր քաջագործութեամբ կրցաւ Հայոց թագաւորը պարսից թագաւորէն գերադասել տալ: Հօրը մահէն ետք 114ին (ն. ք. Բ.) գահ բարձրացաւ և Պարսիկները նուաճելով հոն շինեց իր արքունիքը և հոն իր անունով ու պատկերով դրամ կտրել տուաւ: Իր Արտաշամ դուստրը կը նութեան տուաւ Միհրդատայ, անոր յանձնելով Պոնտոսի կառավարութիւնը:

Արտաշէս ուզեց ամբողջ աշխարհի տիրել. այդ պատճառաւ անհամար զօրք ժողովելով զօրաւոր բանակ մը կազմեց: Դէպի արևմուտք յառաջանալով տիրեց մինչև ծով և Հելեսպոնտոս հասնելով՝ տիրեց նաև Թրակիոյ և Ելլադայի: Յաղթեց Փոկիացւոց և Սպարտացւոց, սարսափ պատճառելով Միջերկրականի եզերքը բնակող ազգերուն. յաղթականօրէն Հայաստան դառնալէ ետք իր Տիգրան որդին Հայոց վրայ թագաւոր կարգելով Պարսկաստան անցաւ: Եւ երբ այդ կողմերը յարձակողականի սկսած էր դրացի ազգերու վրայ՝ զօրաց մէջ շիրթութիւն ծագելով սկսան զիրար կոտորել: Արտաշէս երբ իր աւագանիով դէպի Հայաստան փախչիլ կը փորձէր՝ իր զօրքերէն սպաննուեցաւ 26 տարի թագաւորելէ ետք՝ 89 թուականին (ն. ք. Բ.):

Հ. Չալկեան դիտել կու սայ (Ա. էջ 556) քե արսափն պասմիչֆ ոչինչ կը պասմեն Արսաւաի քաջութեանց մասին իր Տիգրան որդին և որ նեանաւոր եղած է եւ ծանօթ օտարագրի պասմիչնեու:

ԱՐՏԱՇԵՍ Բ. թգ. Հայոց (88—129). որդի Սաստրուկի. որու մահէն ետք՝ Սմբատ Բագրատունի Բիւրատեան՝ Երուանդ թգ.ի կոտորածէն ազատելով՝ 69 թուին պարսից Դարեհ թագաւորին խնամոց յանձնեց, ուր զարգացաւ մինչև 88 թուականը: Դարեհ վարձատրելու համար Սմբատ Բագրատունին իր տարած յաղթութեանց համար՝ հրամայեց որ Արտաշէսը Հայաստան տանի և թագաւորական գահը բարձրացնէ: Այդ տեսնենքը Ուտէացիք արդէն ապստամբած էին

Երուանդէն, զորս ընկճելու գացած էր ինքը աւ-
ձամբ Երուանդի Դիւրին եղաւ Սմբատայ Ար-
տաշէսը Հայաստան մտցնել, որ այդ ժամանակի
նշանաւոր պատերազմիկ Արզամի պատգամաւոր
ղրկելով յորդորեց իրեն միանալ, խոստանալով
անոր պատիւ և իշխանութիւն:

Արզամ սիրով յանձն առաւ իրեն եղած հրա-
ւէրը: Արտաշէս յաղթական հանդիսացաւ, Երուանդ
սպաննուեցաւ իր պալատին մէջ՝ հակառակորդ
ղինուորէ մը:

Արտաշէս թագաւորական դահուէն տիրանալէ
ետք Մարաց և Պարսից զօրքերը վարձատրելով
ետ զրկեց. Սմբատը Հայոց սպարապետ և Արզամը
իրեն փոխանորդ կարգեց: Յաջորդ տարին (89ին)
Արտաշատ քաղաքը նորոգել և ընդարձակել
տուաւ, զարդարեց զայն ընդարձակ ապարանք-
ներով, և որովհետեւ ներոնիա կոչուած էր՝ հրա-
մայեց կրկին Արտաշատ կոչել զայն: 90 թուակա-
նին Ալանները Տաղստանցիներու և Վրացիներու
հետ միացած Հայաստանի վրայ յարձակեցան:

Արտաշէս բանակին գլուխն անցած թշնամի-
ները վանելու գնաց և այդ մարտին մէջ Ալա-
նաց թագաւորին որդին Սաթէն գերի բռնեց:
Յաջորդ օրը երբ երկու թշնամի բանակներ կուր
գետին երկու կողմը դէմ առ դէմ բանակած էին՝
Սաթէնի քոյրը Սաթենիկ թարգմանի միջոցաւ
խնդրեց Արտաշէսէն որ ազատ արձակէ իր եղ-
բայրը: Արտաշէս, սիրահարուեցաւ Սաթենիկին,
պատգամաւոր զրկեց Ալանաց թագաւորին և
փոխան Սաթէնի, Սաթենիկը կնութեան խնդրեց
և այս ամուսնութիւնը խնամիական կապով
խաղաղեցուց երկու ազգերը, — Հայերը և Ալան-
ները: Արտաշէս շատ մը բարեկարգութիւններ
ըրաւ, այլ և այլ ազգերէ գաղթականներ բերե-
լով բնակեցուց Հայաստանի լեռներուն ու դաշ-
տերուն վրայ (Մ. Խորենացի Բ. ձգ.), շատ մը
կամուրջներ շինել տուաւ ու բազմաթիւ վար-
ժարաններ բանալով դրացի ազգերու նախանձը
զրդուց: Արտաշէս 41 տարի թագաւորելէ ետք
մեռաւ, որուն յաջորդեց որդին Արտաւազգ:

Ո՛չ մէկ հայ թագաւորի թաղումը ա՛յնքան
չքեղ եղած է, ինչպէս Արտաշէսինը: Ժողովուրդը
երգերով անմահացուց իր բարեկարգիչ և բարե-
զարդիչ արքան ու շատերը, ինչպէս կը գրէ Մ.
Խորենացին, իրենք զիրենք թաղել ուղեցին իրենց
սիրելի թագաւորին հետ:

ԱՐՏԱՇԷՍ Գ. ԹԳ. (422-428) որդի Վռամշա-
պուհուոյ, ծնած 403ին: Հօրը մահուան ատեն
տասը տարու մահուկ մ'ըլլալուն՝ նախարարք
նախընտրեցին Խոսրով Գ.ը կրկին ի գահ հրա-

ւիրել, որուն յաջորդեց Շապուհ Պարսիկ՝ Յազ-
կերտի որդին (415-9) և մինչև 422 թագաւորա-
կան գահը թափուր մնաց: 422ին պարսից Վռամ
արքան 18ամեայ Արտաշէսը Հայոց թագաւոր
կարգեց, անունը Արտաշիր փոխել տալով: Վեց տարի
խաղաղութեամբ թագաւորեց Արտաշէս Գ., յե-
տոյ սակոյն անվայել կեանք մը սկսաւ վարել,
այնպէս որ նախարարք, յուսալքուած անոր ուղ-
ղութենէն՝ խնդրեցին Ս. Սահակ կաթողիկոսէն
որ Պարսից Վռամ թգ.ին դիմէ Արտաշէսը գա-
հընկէց ընելու և կրկին պարսիկ վերակացուներ
ուղելու Հայաստանի համար:

Ս. Սահակ զժկամակեցաւ, որովհետեւ առնուած
այս քայլով՝ վերջ պիտի տրուէր Հայաստանի
անկախութեան, լացաւ անոնց առջև և պաղա-
տեց ետ կենալ արտաքին միջամտութեան զի-
մեկէ: Նախարարք սպառնացին, — «եթէ չես
միտարանիր մեզի հետ, զքեզ այ գահընկէց կ'ը-
նենք» ըսին ու Վռամի դիմեցին որ գահընկէց
ընէ Արտաշէսը, և այդ տխուր դէպքը տեղի ու-
նեցաւ 428ին: Իսկ Արտաշէսի մահը քանի մը
տարի ետք պատահեցաւ Խուժաստանի մէջ, ուր
աքսորուած էր Վռամէն:

ԱՐՏԱՇԷՍ ԶԵՆՈՆ, թագաւոր անուանուած
Վերին Հայոց Քրիստոսի 35 թուին:

ԱՐՏԱՇԷՍ Մամիկոնեան որդի Հմայեակի, եզ-
բօրորդի Մեծին Վարդանայ (455ին):

ԱՐՏԱՇԷՍ, որդի Տիրան թգ.ի, հայր Տիրիթի
(350):

ԱՐՏԱՇԷՍ Ա. Պարթևեան, որդի Արշակայ
Պարթևի թգ. Պարսից, 215—189 (ն. ք. Բ.),
Արտաշէս Բ. թգ. պարսից 12—45: Արտաշէս
Գ. թգ. պարսից 109—129:

ԱՐՏԱՇԷՍՍԵԱՆ, աւան, յիշուած Թովմա Արծ-
րունիէ:

ԱՐՏԱՇԷՍԱՍ, թգ. Վերին Հայոց, կարգեալ պար-
ոցի Արշաւիր թգ.էն 27—16 ն. ք. Բ.:

ԱՐՏԱՇԷՆ, հայանուն աւան Ճանիկու, Սև
Ծովու եզերքը:

ԱՐՏԱՇԷՍՍԵԱՆ ԳԱՒԱՌ, Վասպուրականի հին
գաւառներէն մին, պարսկահայոց սահմաննե-
րուն մօտ:

ԱՐՏԱՇԷՐ Տ. Արտաշէս:

ԱՐՏԱՇԷՐ, տե՛ս Արտաշէս Գ. թգ. Հայոց:

ԱՐՏԱՇԷՐ Ա. Սասանեան, թգ. Պարսից 226-270:

ԱՐՏԱՇԷՐ Բ. Սասանեան, թգ. Պարսից 389-393:

ԱՐՏԱՇԷՐ Գ. թգ. Պարսից 628-9:

ԱՐՏԱՇԷՐ Արակունի քաջ, կ'ապրէր Զ. դա-
րուն, սա ևս 545ին Արտաւան Արշակունուոյ
հետ Ափրիկէ կ'երթայ Յուստինիանոս կայսրէն

սպաստամբ Գոնթար զօրավարը ընկճելու համար: Արտաշիի, ինքն է որ խնճոյքի մը պահուն կը սպաննէ Գոնթարը, ինչպէս մանրամասն կը պատմէ յոյն պատմիչը Պրոկոպիոս (Չամչեանի Պատմ. Հայոց, Բ. էջ 249—253):

ԱՐՏԱՇԻՐ հայ իշխան, ի դրան Կ. Պոսոյ կայսեր, որ 792ին Հայոց զէմ կը պատերազմի:

ԱՐՏԱ ՉԱՅ աե՛ս Գեօրգի:

ԱՐՏԱՍԱՄԱՐՆԻՉ, այլ կերպ գրուած անունը Արասամուղ ի (տե՛ս):

ԱՐՏԱՎԷՁ կամ Արսաւազ, սակաւարնակ գգ. Հայոց՝ Վանայ Սև գետի շրջակայքը, հաղիւ 10 տուն հայ բնակիչ ունէր:

ԱՐՏԱՍՈՒՊԱՆ, գգ. Վրասայաստանի, բն. 30 տուն հայ, գաղթած Ղարապաղէն, ունին փոքր քարաշէն եկեղեցի մը:

ԱՐՏԱՐԱՍ, հին գգ. Սիւննեաց Վայոց ձոր գուրի:

ԱՐՏԱՒԱՁ, հին քաղաք ըստ պատմագրաց Կողովրտ գուրի մէջ, Մասիս լեռան մօտ: Տ. Արտաւէզ:

ԱՐՏԱՒԱՁ, իշխան Հայկազն, կուսակալ Հայոց 239—181 (ն. ք. Բ.):

ԱՐՏԱՒԱՁ, հայազգի Բիւզանդիոնի կայսրութեան հայ բանակին զօրավար, ապրած Զ. դարու կիսուն, որ ըստ Պրոկոպիոս յոյն պատմիչի (տե՛ս Չամչեանի պատմ. Հայոց Բ. էջ 268), 549ին հայկական 100 հոգիներոց բանակով Իտալիոյ Վերոնա քաղաքին վրայ կը յարձակի Գոթաց ձեռքէն զայն առնելու համար, բայց Յունաց օգնական բանակները ուշ հասնելուն կը ստիպուի փախուստ տալ:

Երբ երկու թշնամի (Յունաց և Գոթաց) բանակները ձակատած էին՝ Վիլար Գոթացին, այր յաղթանդամ հեծած երկվարին վրայ՝ մենամարտի հրաւէր կարդաց, ո՛չ ոք համարձակեցաւ բաց ի մեր աղջի Արտաւազէն. որ ճարպիկութեամբ սպաննեց Վիլարը, թէև պատահարար ինքն այլ վիրաւորուեցաւ և երեք օր ետք վախճանեցաւ (550ին): Յուստինիանոս կայսրը Գղակ անունով ուրիշ հայազգի մը կարգեց հայ բանակին զօրագլուխ:

ԱՐՏԱՒԱՁՎ Ա. թգ. Հայոց, որդի Տիգրանայ, սա նախապէս Տիգրանէն Արարատայ աշխարհին թագաւոր կարգուած էր (55-30), հօրը մահէն ետք ի՛նք գրաւեց արքայական գահը 30ին (ն. ք. Բ.): Արտաւազը հօրը մահէն ետք բոլորովին զեղխ կեանք մը սկսաւ ապրիլ, որով տաղտկայի եղաւ թէ՛ ժողովուրդին և թէ՛ բանակին: Թշնամիք յարձակեցան իր հողամասին վրայ և Միջագետքէն շատ տեղեր առին: Յետոյ սակայն

երբ Անտոնինոս Հռոմայեցի զօրավարը Պարթեւաց վրայ յարձակեցաւ՝ Արտաւազը Ատրպատականէն, Վրացիներէն ու Աղուաններէն զօրք վարձելով բանակ կազմեց և Միջագետքի վրայ յարձակելով ետ առաւ այն տեղերը՝ զորս թշնամիք յափշտակած էին: Այդ ատեն Անտոնինոս ահազին բանակով պարսից վրայ յարձակեցաւ: Արտաւազը վախնալով որ մի՛ գուցէ Անտոնինոս յետոյ Հայաստանի վրայ յարձակի՝ նախապէս հաշտութիւն կնքեց խոստանալով նիզակակցիլ իրեն ի հարկին՝ պարսից զէմ և երբ Անտոնինոս Արտաւազը օգնութեան կանչեց, նա իսկոյն 6000 հեծեալ և 7000 հետեակ բանակներով օգնութեան փութաց: Եւ որովհետև Արտաւազը Հոկտաւիանոս կայսեր սաղրանքով չուզեց Անտոնինոսի օգնել, այդ պատճառաւ՝ հնարքով մը մեկնեցաւ իր զօրաց հետ պատերազմական դաշտէն, խոստանալով կրկին վերադառնալ: Երբ Անտոնինոս պաշարուեցաւ Պարսիկներէն՝ Արտաւազը ո՛չ թէ օգնութեան չհասաւ, այլ օգնեց պարսից: 30ին (ն. ք. Բ.) Անտոնինոս պարտուած Պարսիկներէն Փոքր Հայկ գալով՝ իրեն հրաւիրեց Արտաւազը իրեւ թէ խորհուրդ հարցնելու համար: Արտաւազը գուշակելով Անտոնինոսի նպատակը յանձն չառաւ անոր երթալու, այլ աւելի Հայաստանի ներսերը ապաստանեցաւ: Ի վերջոյ Անտոնինոս կրցաւ իրեն հրապուրել Արտաւազը ու զայն շղթայի զարնելով յափշտակեց արքայական գանձը:

Օսարագի պատիւներ եւս կը յիշեն Արտաւազը, սակայն Մ. Խորենացւոյ պատմած դէպքերն ուրուականները չեն համաձայնի օսար պատմաց նե: (Այս մասին տե՛ս Արտաւազ Ա. Յաւելուածին մեջ): Հռոմայեցիք կը գովեն Արտաւազը իբրև իմասուն եւ սեղեակ շատ մը լեզուներու: Պլուտարխոս կ'ըսէ թէ Արտաւազի մնացած են յոյն լեզուաւ ոսանաւորներ եւ այլ գրութիւններ:

ԱՐՏԱՒԱՁՎ Բ. թգ. Հայոց, որդի Արտաշէս Բ. ի, ծնած Ա. դարու վերջերը (չուրջ 90 թուին): Սա նախասնձելով Արգամայ վրայ, սկսաւ Արտաշէսը անոր զէմ զբզուել, զրպարտելով, իրեւ թէ հնարներ կը փնտռէր սպաննելու զինքը և զբաւելու թագաւորական գահը: Արտաւազը յաջողեցաւ Արգամը շնորհազրկել և ինք անցնիլ անոր տեղը իրեւ երկրորդ թագաւորի: Յետոյ սկսաւ նախանձիլ Սմբատայ վրայ, որ ընդհանուր սպարապետ կարգուած էր: Սմբատ, որովհետև արդէն ձերացած էր՝ հրաժարեցաւ սպարապետութենէն և այդ բարձր պաշտօնը Արտաւազի լանձնեց Արտաշէս:

114 թուականին Հռոմայեցիք Հայոց վրայ պատերազմի եկան. Արտաւազդէ իր Ձարեհ եղբոր հետ Արեւելեան ու Հիւսիսային զօրքերով թշնամի բանակին դէմ ելաւ. բայց չկարենալով դիմադրել՝ 115ին նուէրներ զրկելով հաշուութիւն խնդրեց Տրայիանոս Հռոմայեցի զօրավարէն:

129ին, Արտաւազ Բ. ի մահէն ետք Արտաւազդ Բ. թագաւորեց, որ իսկոյն եղբայրները Այրարատ նահանգէն հալածեց, իր քով պահելով միայն Տիրանը իրրև յաջորդ, որովհետև ինքը որդի չունէր:

Արտաւազդ ի մանկութենէ մոլի, նախանձոտ և չար եղած էր, և ըստ Մովսէս Խորենացւոյն ժողովրդեան կարծիքը այն եղած էր, իրր թէ «վիշապազունք գողցած էին մանուկն Արտաւազդը, և տեղը դեւ մը դրած»:

Թագաւորութեան երկրորդ տարին, 130ին, երբ որսի գացած էր և Արտաշատու կամուրջէն կ'անցնէր՝ երկվարով միասին խորխորատը ինկաւ և անհետացաւ: Այդ ատենի ժողովուրդը իր երգերուն մէջ ա'ս այ կը պատմէր. իրրև թէ՛ երբ շատերը իրենք զիրենք Արտաշեսի գերեզմանին մօտ կը սպաննէին՝ Արտաւազդ ըսած ըլլայ. «երբ դուն կ'երթաս ամբողջ երկիրը քեզի հետ կը տանիս ես աւերակներուն պիտի թագաւորեմ»: Եւ Արտաշէս սա խօսքերով անիծած ըլլայ. «Եթէ զուն յորսս հեծցես յԱղատ ի վերն ի Մասիս, զքեզ կալցին Բաջք, տարցին յԱզատ ի վեր ի Մասիս. անդ կայցես, և զլոյս մի տեսցես»:

Պառաւնները, կ'ըսէ Մովսէս Խորենացի, կը պատմէին մինչև իր օրերը, թէ Արտաւազդ մութ այրի մը մէջ շղթայակապուած է, երկու շուներ շարունակ կը լցեն շղթաները, որպէսզի Արտաւազդ աղատի և աշխարհը աւերէ: Իսկ զարբինները՝ նոյն իսկ կիրակի օրերը իրենց մորճերը սալին կը զարնէին ամբացնելու. համար շղթաները՝ որ Արտաւազդ չկարենայ ազատիլ:

ԱՐՏԱՒԱԶԻ, կուսակալ Հայոց 159-149 (ն. ք. Բ.):

ԱՐՏԱՒԱԶԻ, Կիւրապաղատ, հայ իշխան, Կոստանդին Ե. Կոպրոնիմոսի դէմ (742—3) Բիւզանդիոնի կայսր ընտրուած:

Արտաւազդ իրրև քաջամարտիկ՝ Յունաց Լևոն Գ. Իսաւրացի կայսեր ընձեռած օգնութեան փոխարէն՝ կայսեր Աննա զուտարը իրեն կնութեան ընդունեց և Ոպսիկիոյ Կիւրապաղատ ու կոմս կարգուեցաւ: Լևոն Գ. Իսաւրացի կայսեր մահէն ետք՝ երբ Կոստանդին Ե. Կոպրոնիմոս Յունաց արքայական գահին վրայ բարձրացաւ՝ իր Արտաւազդ քեռայրին լուր զրկեց թէ կը փախազի քրոջ երկու զաւակները տեսնել: Արտաւազդ զուշակելով որ կայսեր նպատակն է զանոնք իրրև

պատանդ իր քով վար դնել՝ իր Տրդատ պատրիկ ազգականին հետ խորհրդակցելէ յետոյ յանձն շառաւ զանոնք Կոստանդինի զրկել, այլ ինքզինքը անկախ հռչակեց և իր բանակով կայսեր վրայ քալեց որ Փաւլագիա կը գտնուէր. ճամբան անոր զխաւոր բանակին հանդիպելով՝ կոտորեց զայն և գերի բռնեց անոր զօրապետը: Կոստանդին զարհուրած Արմօրիուս փախաւ և բերդ մը ապաստանեցաւ, մինչդեռ բանակը տեղւոյն վրայ Արտաւազդը կայսր հռչակեց: Հայկազն Արտաւազդ զէրութեամբ կրցաւ Պոլիս մտնել, կղերականները և կրօնասէրք սիրով ընդունեցան զինքը, որովհետև դժգոհ էին Կոստանդինէն պատկերամարտ ըլլալուն պատճառաւ:

Անաստաս պատրիարք Ս. Սոփիայի մէջ հանդիսաւորապէս կայսերական թագը դրաւ Արտաւազդի զլուխը, մանաւանդ որ լուր տարածուած էր թէ Կոստանդին Պատերազմի մէջ սպաննուած էր: Քիչ վերջ սակայն իսկական կայսրը Կոստանդին իր բանակով Սկիւտար հասաւ իր երկու հաւատարիմ զօրավարներուն հետ, ժողովուրդը չէր ուզէր զինքը ընդունիլ, գահակորոյս կայսրը ստիպուած ետ դարձաւ ու կրկին Արմօրիուս ապաստանեցաւ:

Արտաւազդ գահը իրեն ապահովելու համար՝ հրամայեց յարդել Սուրբերու պատկերները, տուրքերը թեթեւցուց և իր անդրանիկ որդին Նիկէփորոսը գահաժառանգ անուանեց, իսկ երկրորդ որդին Նիկեաը հայկական բանակին զօրապետ նշանակեց:

Վեց ամիս ետք Արտաւազդ Փոքր Ասիա անցաւ անհնազանդները նուաճելու համար: Կոստանդին յարմար առիթ նկատեց, կրկին Բիւզանդիոնի վրայ յարձակելու: Պաշարեց զայն երկարատեան և որովհետև մայրաքաղաքը պարենէ զուրկ էր՝ ի վերջոյ 743 Նոյեմբերի վերջերը Պոլիս մտաւ, մինչդեռ Արտաւազդ ծովու ճամբով Նիկիա փախաւ և Վասակ Պատրիկի հետ Պիղուի զգեակը ամրացաւ: Քիչ յետոյ Արտաւազդ ձերբակալուելով իր երկու որդիներուն հետ Պոլիս բերուեցաւ, ուր Կոստանդին զիրենք կուրցնել տալով բանտարկեց: (Տե՛ս Չամչեան՝ Պատմ. Հայոց Բ. 403-6, Բաղուած Յոյն պատմիչներէն, զըլխաւորապէս Թեոփանէսէն. տե՛ս նաեւ Գաբամանեանի «Գրպանի Տարեցոյց»-ը 1934, էջ 105-110):

ԱՐՏԱՒԱԶԻ Զմիւռնիացի, աստղագրայն, տե՛ս ՅԱՒԵԼՈՒԱԾը:

ԱՐՏԱՒԱԶԻ Մամիկոնեան, Ղևոնդեանց օրով, որ միւս նախարարներու հետ 452ին Յազկերտին գնաց:

ԱՐՏԱԻԱԶԳԻ Մամիկոնեան, եղբ. Մուշեղ իշխանի Դաւիթ Դուռնեցու նահատակի օրով 693ին կը յիշուի:

ԱՐՏԱԻԱԶԳԻ Մանգակունի, սպարապետ, սա էր որ 260ին դաւադրութեամբ սպանուած Խոսրովի որդին Կեսարիա փախցուց ու անկից Հօտմ տարաւ, և տասը տարի ետք պարսից թագաւորը իմանալով այս՝ Մանգակունեաց ցեղը սրէ անցընել տուաւ: Իսկ 286ին երբ Տրդատ թագաւորական դահը գրաւեց՝ իր կեանքը ազատող Արտաւազդ Մանգակունին հայ զօրաց սպարապետ անուանեց:

ԱՐՏԱԻԱԶԳԻԱՅ ԱՊԱՐԱՆՔ, վանք կամ անապատ Այրարատայ Նիգ գո. ի մէջ, Արասաձորի մօտ: Եկեղեցին որ սրբատաշ քարերով շինուած էր՝ կործանած է, միայն օրմունքը կը մնան: Աւելի ժ. և ժ. դարուց արձանագրութիւններ ԱՐՏԱԻԱԶԳԻ s. Արգաւազիկ:

ԱՐՏԱԻԱԶԱՅ ԳԻԻՎ, հին գլ. Սիւնեաց:

ԱՐՏԱԻԱՆ Արեակունի տե՛ս Արեակունի Յովհաննէս:

ԱՐՏԱԻԱՆ Արեակունի, նախարար, Յունաստան կ'երթայ և հոն կը բնակի 471ին:

ԱՐՏԱԻԱՆ, թգ. պարսից, վերջինը Արշակունեաց ցեղէն 202—226:

ԱՐՏԱԻԱՆԵԱՆ ԳԱԻԱՌ, մին վասպուրականի հին գաւառներէն:

ԱՐՏԱԻԵՂ, կամ Էրսէպի, հնութեամբ նշանաւոր քղ. Ատրպատականի (Իրան), 1900ին 1200 բնակիչ ունէր, որոնց 220ը միայն հայ, իսկ ներկայիս ըստ Ատրպատականի Առաջնորդութեան մարդահամարին 70 շունչ հայ կայ, որոնք առեւտուրով կը զբաղին: Հայերը Դաւրէժէն գաղթած են հոս, որոնց թիւը 1850ին կը սկսի շատնալ և 1887ին կը չինեն ու կ'աւարտեն գեղեցիկ, ազիւսաչէն և զմբէթաւոր եկեղեցին՝ այդ ժամանակի նշանաւոր եղած մարդասէր և աղքատէր Խաչատուր Շահրազեանի ատաջարկութեամբ: Ունէին այդ ատեն ուսումնարան մը, թատերական փոքրիկ սրահ մը և գրադարան-ընթերցարան մը: («Այրարատ» ամսաթերթ, Ա. էջ 503—4, նաեւ 1900 էջ 92 «Մեակ» Բ. թիւ 128):

ԱՐՏԱԻՌ, Ռշտունեաց գո. ի մէջ ուր է դարուն Սիմոն Սիւրանակեացը կը ձգնէր: (Չամչ. Բ. 359):

ԱՐՏԵՄԻՍ կամ Արտեմիդէ զիցունի, որուն արձանը Արտաշէս Ա. թգ. Ասիայէն Հայաստան բերելով՝ Բրիտանոսէ 110 տարի առաջ՝ Արմաւիրի մէջ զնել կու տայ:

ԱՐՏԵՄԻՍ, «օրգան քսաներորդ դարու հայկանանց», տպ. Գահիրէ 1902—3: Հիմնադիր, տէր և անօրէն խմբագիր՝ Մառի Պէյլերեան:

ԱՐՏԵՄԻՍ Ա. ապրած Կոստանդիանոսի ատեն և անկից դուքս նշանակուած Աղեքսանդրիոյ մէջ: Յուլիանոսէն կը նահատակուի 362ի ատենները և մարմինը Կ. Պոլիս կը բերուի ու հոն կը թաղուի: Հայ եկեղեցին կը տօնէ Հոկտեմբեր ամսոյն մէջ:

ԱՐՏԷՄ, հայ աշուղարեկա հայ. (կենսագրական մանրամասնութիւններ կը պակսին):

ԱՐՏԷՆ Գաբելեան, ընկեր վասակ ուրացողի (450):

ԱՐՏԻ, հայանուն այլազգարնակ գլ. Այրարատայ Հաւնունեաց գո. ի մէջ:

ԱՐՏԻԱՆ, գլ. Պազըուի (Ռումանիա) ուր քանի մը տուն հայ կայ:

ԱՐՏԻԹ, եպ. Բասենի, աշակերտ Դանիէլի, ապրած Դ. դարու մէջ, որոյ մասին կը գրէ Փաւստոս Բուզանդ «այր ծերունի և արգար, արժանացեալ Հոգւոյն Սրբոյ»:

ԱՐՏԻԹԷՍ եպ. Գրիգոր Լուսաւորչէն ձեռնադրուած Դ. դարուն սկիզբը:

ԱՐՏԻՄԷԳ s. վաղաբայտ:

ԱՐՏԻՆ, լեռ Այրարատայ Արաղածոտն գո. ի մէջ:

ԱՐՏԻՅ ԳԱԻԱՌ, գլ. Սիւնեաց Սողք գո. ի:

ԱՐՏԻՅ ԳԻԻՎ, Տարօնոյ մէջ, Մշոյ արեւմտակողմը՝ Ս. Կարապետ վանքի մօտ, 1900ին 60 Թ. բնակիչ ունէր:

ԱՐՏԵՈՒՆՔ, գլ. Տուրուրերանի Տարոն գո. ի մէջ, Մշոյ արեւմտակողմը, 1900ին զրեթէ 50 Թ. բնակիչ ունէր:

ԱՐՏԿՈՒՆՔ, գլ. Սղերդի Խիան գո. ի, 1900ին՝ 30 Թ. հայ բնակչօք և Ս. Թովմաս եկեղեցիով:

ԱՐՏՈՆՅ ԽՈՍՐՈՎ (= Գարապետագեան) որդի Սերաստիոյ համբաւաւոր Լուսաբեր Ընկերութեան հիմնադիրներէն Խաչատուր Գարապետագեանի, ծնած ի Սերաստիա, 23 Յունուար 1872ին, ուսած տեղւոյն Ս. Թարգմանչաց Մայր վարժարանի մէջ: 15 տարեկանին ուսուցչութեան կը կոչուի թէ՛ թարգմանչաց և թէ՛ Արամեան վարժարաններուն մէջ միանշամայն: Կահագործութիւն կը սորվի ու յետոյ գրապրութեան կը հրաւիրուի:

1888ին կը կազմակերպէ Ուսումնասեցը ընկերութիւնը, որուն քաջակերութեամբ կ'իրականանայ 1893ին Պոլսոյ Ազգ. Կեդրոնական վարժարանը մտնելու իր երազը: Մասնաւոր դասաւանդութեանց միջոցաւ իր ապրուստը ճարելով կ'ուսանի հոն մինչև «պանքայի ցոյց»ը: Բարեբախտաբար այդ տարին 1895ին արգէն վկայագիրն ստացած էր:

1895ին գաղափար կը յղանայ կազմել Ուսանողաց Ընկերութիւնը՝ տարուէ տարի 1—2 ուսանող եւրոպա զրկելու նպատակաւ:

«Պապ Ալիի ցոյցին ամիս մը կը բանտարկուի և հայ ու օտար ազդեցութեանց շնորհիւ 1896 Սեպտեմբերին Ֆրանսա կ'ապաստանի, շարաթ մը ետք Անգլիա կը հրաւիրուի մարզասէր պ. Ֆր. Թրէտկոլտի կողմէ: Երկուքը միասին Maidstone

տուն), Անգլաքի, Հողբար և այլն թերթերու և հանգէսներու և հանրածանօթ Տարեցոյցներու: Երեցած է հակ իր ի նպաստ հայ դասին գրած յօդուածներով Araratի, Daily Chronicleի, Kent Messengerի, John Bullի, Sunday Timesի և այլն մէջ:



Տէր Է. Տիկին Արսնց

մէջ կը բանան հայ տարագիր Ուսանողաց Տունը (մանրամասնութիւնները տես թրէտկոլտ անուան սակ):

Ապրուստը կը ճարէ Kent գաւառի զանազան քաղաքներու բազմաթիւ դպրոցներու մէջ 30 տարիի չափ գերմաներէն, իտալերէն, ֆրանսերէն, սպաներէն, անգլերէն լեզուները, իսկ զինուորականներուն՝ թուրքերէն ուսուցանելով:

1896ին ժիւլ. Վէրնի 1875ին հիմնած Société Internationale de philologie, Sciences et Peaux Artի անդամակցութեան կը հրաւիրուի և իրաւունք կը ստանայ իր անուան կցելու M.S.P. տիտղոսը:

Չինադադարին (1919) կը հրաւիրուի ատենադպրութեանը Lord քաղաքապետի նախագահութեամբ կազմուած հարիւրաւոր յանձնախումբերէն միոյն, նպաստելու համար պատերազմէն արկածեալ զաղթականներու և անտէրունջ որբերու:

1894ին սկսած են երևնալ իր յօդուածներն ու քերթուածները հետեւեալ թերթերու մէջ. — Հայրենիք (Արփիար-Փաշայեանի, վերջինս եղած է Արտոնց անուան կնքահայրը, Սոսրովի մտերիմ և ազգական Արսուանէն կազմելով զայն), Փռնց, հին և նոր Արեւելք, Բիւզանդիոն, Շարժում, Սուրհանդակ, Շեփոր, Միութիւն, Փիւնիկ, Բանասեր, Անանիս, Այգ (Պալազեան Սրբազանի), Ժողովուրդի Չայնը, Արսեմիս, Արձագանգ Փարիզի, Պայքար (Պոսթոն), 1894ի Ծաղիկ, Պատանի, Նոր Սեբասիա, Փիւնիկ (Պոսթոն), Բանասեր, Պատանի (Լոն-

տուն), Անգլաքի, Հողբար և այլն թերթերու և հանգէսներու և հանրածանօթ Տարեցոյցներու: Երեցած է հակ իր ի նպաստ հայ դասին գրած յօդուածներով Araratի, Daily Chronicleի, Kent Messengerի, John Bullի, Sunday Timesի և այլն մէջ:

Գրական անուններն եղած են Խ. Սմբաս, Խոսրով: Իր յօդուածներէն իրոք տասնեակ մը անձանօթներու կողմէ թարգմանուած և հրատարակուած են թուրքերէն և գերմաներէն (Աւստրիա) լեզուներով:

Երկասիրութիւններն են. — Մսֆիս Խանգարանցի, Աուր պատեանի Գերթուածներ, Մեծ վեպը (տաղաչափեալ և երգախառն), Խոսրովային կամ Հայ Տարագրի Երգարանը (19 երգեր, խօսք և եղանակ ինքնատիպ), Այգեսան (երկու մեծագիր հատոր), Ծիրանի Արեւելք, (տաղաչափ. թարգմ. William Watson անգլ. բանաստեղծին The Purple Fast տաղերուն, հայկական կոտորածոց առթիւ գրուած): Turkey and the Turk և The Holocaust at Adana (Այս երկուքը նահատակ Տքթ. Ն. Տաղաւարեանի աշխատակցութեամբ և Ս. Սվաճեանի (Բարիզ) օգնութեամբ տպուած): Reveries Son tormy Seas, (անգլերէն արձակ և ոտանաւոր քերթուած.) Գ. տպագրութիւնը սպառած, «Անգլ. գրականութեան վսեմութիւնը յիշեցնող հատոր մը» գրեցին անգլիական ինը թերթեր:

Հայկական հարցի շուրջ կատարած է շատ մը բանախօսութիւններ, գրած է յօդուածներ, թըղթակցած է պետական անձերու հետ:

Ամուսնացած է ողբ. Սեղրակ ճարտարապետ Բազուճեանի լեզուագէտ դստեր Աղաւնիի հետ: Հասցէն է A. Ardonz, 7 Bridge Terrace, Maidstone (Angleterre):

ԱՐՏՈՆՅ ՍՕՆԱ ՔՆԱՐԻԿ, տաղան դ ա լ ո թ դուստր Տէր և Տիկին Արտոնցի: Ծնած ի Մէտսթոն (Maidstone), Անգլիա, 26 Նոյ. 1925-ին: Ութ տարեկանին մասնակցելով Անգլիոյ ամէն կողմերէն մինչև 15 տարեկան 2800 փոքրիկ երամիշտներու քննութեան՝ առաջին հանդիսանալով իրր պարգև ստացած է միպմեայ ձրի ուսումը զաշնակի ու Շորէնի գործերուն զեզակազմ հատորը: Քսան



ԱՐՏՈՆՅ ՍՕՆԱ

և եօթ հասակակից ընկերներու հետ Լիսեի քննութեան ներկայանալով մինակ ինքը ընդունուած է ձրի աշակերտութեան «իրր ամէնէն ուշիմն ու խելացին» (Intelligence Test):

ԱՐՏՈՍ, լեռ Բարձր՝ Վասպուրականի Ռչտուն եաց գու.ի մէջ (տե՛ս ԱՐՏԱՆԸ Ը), որ կը ձևացնէ Ոստանայ հովիտը: Թովմա Արծրունի (էջ 328) կը նկարագրէ լեռս:

ԱՐՏՈՍ, գղ. և լեռ Բարձր Հայոց կամախ վիճակին մէջ:

ԱՐՏՈՍԻ գղ. Այրարատայ վերին Բասն գու.ի, համանուն գետին վրայ: Ի հնումն նշանաւոր եղած կը թուի:

ԱՐՏՈՍԻ գղ. Կիւմիւլիսանէի հիւսիսային արեւետեան կողմը:

ԱՐՏՈՍԻ, մեծ գղ. Այրարատայ Վանանդ գու.ի, մէջը կայ հին և բնդարձակ եկեղեցւոյ մը աւերակները: Երբեմն զուտ հայաբնակ էր՝ 1900-ին Ծանախէն եկած 80 տուն Յոյներ կը բնակէին:

ԱՐՏՈՅ, գետ Սիւնեաց Վայոց ձոր գու.ի:

ԱՐՏՈՒՆԻ Սեղրակ, ծնած 1912ին. նախնական ուսման տիրանալէ յետոյ մտած է առևտրական բարձրագոյն վարժարան՝ ուրկէ բարձր պատիւներով շրջանաւարտ եղաւ 1930ին:

Պ. Արտունի իր ուսանողութեան շրջանին մէջ յայանուեցաւ և փայլուն աշակերտ մը և յաջողութեամբ անցուց Նիւ Եորքի նահանգային վկայեալ հանրային համարակալի քննութիւնը: Կը պաշտօնավարէր Edward Margolin & Co. համարակալի տան մէջ մինչև որ 1936-ին Նիւ Եորքի համալսարանէն ստացաւ Պսակաւոր Գիտութեան (B. S.) աստղոսը՝ համարակալութեան մէջ: Նպատակ ըրած է պարապիլ համարակալութեամբ՝ իրեն մասնագիտութիւն ընելով այդ ճիւղը՝ հարկերու (taxes) մէջ. («Հ. Կոչնակ» 1936):



ԱՐՏՈՒՆԻ ՍԵՂՐԱԿ

ԱՐՏՈՆ, կը յիշուի իբրև բերդ Չորրորդ Հայոց մէջ:

ԱՐՏՈՆԿՆ, հին գետ Այրարատայ Շարուր գու.ի մէջ, որուն կը համապատասխանէ Չանախնր գետը:

ԱՐՏՈՆՔ, գղ. Տուրուբերանի Տարօն գու.ի մէջ, Մշոյ արեւելեան հարաւային կողմը, Վարդենիս գղ.էն 10 վայրկեան, ունէր 110 տ. հայ և 8 քուրդ բնակիչ, եկղ. Ս. Աստուածածին:

ԱՐՏՈՒՐ, թրքաբնակ գղ. Ակնայ:

ԱՐՅԱԽ, «քաղաքական, հասարակական և գրական շարաթաթերթ, ազգային խորհրդի օրգան» տպ. Շուշի 1919:

ԱՐՅԱԽ կամ Արձախ, Հայոց Մեծաց 15 նահանգներու շատերէն փոքրագոյն և ամուր նահանգն է Արցախ, որուն սահմաններն էին Վաղարշակ թգ.ի ժամանակ Երասխ գետը, Արցախեան ամենարարձր սարերու զազաթնագիծը և Հնարակերտ ամրոցը: Այս նահանգներուն և Կովկաս մեծ լեռան մէջ տարածուած երկրին վրայ կուսակալ զրուած էր նոյն Վաղարշակ թգ.էն Սիսական ցեղէն Առան անուամբ խելացի մարդ մը: Բայց Աղուանից Արշակունի թագաւորութիւնը սկսելով, Հայոց և Աղուանից մէջ հակառակութիւն կը ծագի սահմանաց համար և այն ժամանակ կուր գետը կ'որոշուի սահմանակից:

Հինգերորդ դարուն Արցախ ամրոցովին Աղուանից թագաւորութեան կ'ենթարկուի: Մեծ Սիւնեաց թագաւորները ձգնելով իւրացնել Արցախի մի քանի գաւառները, կը ծագի երկարատե հակառակութիւն և խռովութիւն Մեծ Սիւնեաց և Աղուանից թագաւորութեանց և հոգեւոր իշխանութեանց մէջ: Այս դարաւոր խռովութեանց վերջ տալու համար Հայոց Աարգիս կթղը ՆՄԵ (= 1006) թուին հանեց յատուկ շրջաբերական կոնդակ, յորմէ կ'երևի, թէ նոյն ժամանակները Արցախի սահմանագիծը եղած է Երասխ, Կուր, Խրամ և Հազարի գետերու և Կայնի, Տիլիճանի, Գեղամեան ամենարարձր լեռանց զազաթնագծի մէջ եղած տարածութիւնը:

Արցախի գաւառներն են ըստ Գեր. Մ. Բարխուդարեանցի:

ՄՏՈՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

Հ Ի Ն	Ն Ո Ր
Ա. Պրանգ	... ձիպրայիլ
Բ. Մուխանգ, Մուղան	... Միլին դաւս
Գ. Արանոտ, Գ. Տոխ	... Քեպպելու
Դ. Ռոցպասեան Զ. Աղուէ	... Զուանգիւր
Ե. Տուչարակ, Տիգրանակիւր, թարանգիւս	... Շահ պուլալ
Ը. Ուսի Առանձնակ, Ուսի գաւառ	... Զուանգիւր
Թ. Թիկաւէն, Շակաւէն, Արալաւէն, Գանձակ, Գեանգա	... Գանձակ
Փ. Կոդր, Շամբար Զակամ	... Ղազախ

ՄԻՋԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ՝

Հ Ի Ն	Ն Ո Ր
ժԱ. Պագկանց, Պանձկանց, Դիզակ ...ձիպրայի	
ժԲ. Միւս Նաբանդ, Հաբանդ, Ամա- րաս. Վարանդա	...Վարանդա
ժԳ. Մեծիրանց, Մեծարանց, Ներքին հաչեն	...հաչեն
ժԴ. Մեծերանց, Ընտրակ. Հաքերց	...Ջրաբերդ
ժԵ. Մեծկողմանց, Մեծկուանց, Չա- րաբերդ, Ջրաբերդ, Թալիչ, Կիւլիս- սան, Ջրաբերդ	...Ջուանձիր
ժԶ. Գարգման, Գարգմանոյ ձոր, Գարգ- մանիկ	...Գանձակ
ժԷ. Փառնես, Փառիս, Փառիսոս	...Ղազախ (Շամբասիլ)
ժԸ. Քուսի, Քաւս	...Ղազախ (Շամբասիլ)
ժԹ. Ջաւէ, Չորագետ. Երկիր Սելորդ- հաց, Երկիր Կայենոյ	...Ղազախ

ՎԵՐԻՆ ԳԱՒԱՌՆԵՐ

Ի. Բերդաձոր, Բելուկան, Ղալաղուա- ղի ձոր, Ղալասէրէսի	...ձիպրայի
ԻԱ. Հանլանց, Ջառիս	...Հանլիք
ԻԲ. Վայկունիք, Վերին Վայկունիք	...Ջանգեղուր
ԻԳ. Սիսական-Ոսան, Ծար, Ջար	...Ջար

Արցախեան լեռնաշղթայի զլխաւոր սարե-
րէն յիշենք հետեւեալները. Արուժիւնայ սար,
Ծռաւ, Քիթ եւայլն: Գետակներէն մեծերն
են Կուր և Երասխ: Նահանգիս մէջ կան տասէն
աւելի լճակներ և մի քանի հանքային տաք եւ
պաղ ջրեր:

Արցախ նշանաւոր է մեր պատմութեան մէջ
իր մի քանի հուշակաւոր վանքերով, իր մէջ է
Ամարաս՝ որուն մէջ ամփոփուած են Գրիգորիս
Աղուաճից կաթողիկոսի նշխարները. հոն է Գան-
ձասարու վանքը. ուր վերջին ժամանակներս կը
նստէին Աղուաճից կաթողիկոսները: (Էփրիկեան՝
«Բնագիտարհիկ» քաղաք Բարխուսարեանց Մ. Եպի-
«Արցախ» են, Ջալալեան Սարգիս արքեպի «Ճա-
նապարհորդութիւն» գրեկն Բ. 350—356):

ԱՐՅԱ. Ա. Ա. Ա. Վ. Ա. Ք. Երուսաղէմի մէջ կը յիշ-
ուի («Հայապատմ» Հ. Ալիբեկի):

ԱՐՓԱ. հին նշանաւոր գղ. Սիւնեաց Վայոց-ձոր
գո. ի մէջ, համանուն գետին եզերքը: Օրբելեան-
ներէն առաջ գիւղիս հին բնակիչք կը յիշուին
Ախրամարեան զարմն: Օրբելեան խորխտ իշխանը
Տարսայիճ՝ հոս շինած էր իրեն դարպաս, որ եւ
աստ վախճանելով իսկ 1290ին, տարին թաղեցին
Նորսվանքի մէջ: Ասոր ժամանակ Նորսվանից

եզ. ը Սարգիս Արփայ գետին վրայ կամուրջ մը
շինել տուաւ: Ներկայիս այդ կամուրջին աւե-
րակները միայն կան: Յանուն Ս. Աստուածածնի



Արփա գիւղի աւերակներ

եկեղեցին 1322ին կառուցուած Յովհ. եպ. էն՝ 1840-
ին խախտելով սիրուն կաթողիկէն ալ գետին
կ'իյնայ:

Հին Արփա գիւղը այժմ ամայի է. վասնզի ժա-
մանակի ընթացքին մէջ գետը մաշեցուցած է
այն հողարուրը՝ որուն վրայ կը գտնուէր գիւղը:
Բնակիչք 1750ի առեւնները քիչ մը աւելի ցած,
դէպի արեւմուտք փոխադրուած և նոր գիւղ մը
հիմնած են հնոյն անուամբ: Նոր Արփա գիւղը
1900ին 60 տուն բնակիչ ունէր, որոնք իրենց
մեռեալները հին Արփայի գերեզմանատունը կը
թաղէին և տարին անգամ մը հին եկեղեցին
ուխտի կ'երթային: Արփայէն քիչ հեռու Գարա-
սու (Սեւ ջուր) կոչուած աղբերակի մօտ կան
երկու նահատակաց ուխտարան գերեզմաններ:

Ժէ. դարու սկիզբը Արփայի բնակչաց մէկ մասը
ուրիշներու հետ գերի գնաց ի Պարսկաստան, ո-
րոնց մէջ Գէորգ անուամբ մէկը. ըստ Առաքել
Դավրիժեցի պատմչի (ժԳ) «պարթեւահասակ և
յաղթանդամ, և սալեւն արի, բանիւք և խելօք
հանճարեղ, և հաւատով և սիրով Քրիստոսի
հաստատ և ջերմագոյն» կը բնակէր Փերիոյ. գա-
ւառի Խոյիկեան կոչուած գիւղը, որ 1621ին կը
նահատակուի: Այս գիւղէն էր նաև Խաչիկի Աղիգ
ղուստը որ նոյնպէս նահատակուեցաւ 1679ին:
(Էփրիկեան՝ «Բնագիտարհիկ» քաղաք Ալիբեկի
«Սիսական» են էջ 181—4):

ԱՐՓԱ. լճակ Սիւնեաց Սողք գո. ի մէջ:
ԱՐՓԱ. ՉԱ. Տ. Ա. խուրեան:
ԱՐՓԱ. ԿէՏիՔ. լեռ Սիւնեաց Աղահէճք գո. ի
հարաւ-արեւելակողմը:

ԱՐՓԱՆՆԱԼ, ըստ Եղիշէ պատմչի, մին այն բերդերէն՝ զոր առին Վարդանանք պարսիկներէն: ԱՐՓԱՇԷՆ, գղ. Տայոց Կող գ. ի մէջ, այժմեան անակիւք՝ քուրաք:

ԱՐՓԱՒՈՒՏ, հայաբնակ գղ. Խարբերդու, 1900-ին 70 տունէն աւելի բնակիչ ունէր. եկղ. Ս. Գէորգ, Ս. Աստուածածին վարժարանը 30 մանչ կը յաճախէին:

ԱՐՓԱՒՈՒՏ, գղ. Հայոց Շամախու մէջ:

ԱՐՓԻ, հայաբնակ գղ. Սիւնեաց, Մօսկան գաւառակի մէջ:

ԱՐՓԻ, պատկերազարդ ժողովրդական շարաթաթերթ, տպ. Թիֆլիս 1913—1914 խմբագրութեամբ Հայկ Տէր Աստուածաբանի:

ԱՐՓԻ, «Հայ բնտանիքին պարբերականը», տպ. Ալլատոն, 1932—1936 խմբագիր՝ Ղոկա. Ա. Բարսեղեան:

ԱՐՓԻ ԱՐԱՐՍՏԱՆ, օրագիր բնասիրական, ազգային, ուսումնական և տնտեսական (ամսաթերթ), տպ. Զմիւռնիա 1853—1856, խմբագրութեամբ Տէտէեան Եղբարց:

ԱՐՓԻ ՍԻՐՈՒՆԻ, քոյր վերապատուելի Լեոն Արփիի, ընկ. Կ. Պոլսեցի, Ամերիկեան գոյէճէն շրջանաւարտ, առաջնակարգ դաշնակահարուհի, կը դասաւանդէ Միացեալ Նահանգաց Օհայ համալսարանը:

ԱՐՓԻԱՐ ՏԻԿԻՆ Լ. Նկարչուհի Ուաշընկթընի մէջ (Ամերիկա) որուն նկարները Pennaի Քիւլային մէջ կը ցուցադրուին և կը գնահատուին:

ԱՐՓԻԱՐԵԱՆ Ամիրայի, Ապուլիացիք, որոնք կապան աւանի հանքերու վերատեսուչներն եղած են Արփիար Փիլիպպոս ամիրան իր ծախքով Կապանի մէջ շինել տուած է ընդարձակ Ս. Աստուածածին եկեղեցին:

ԱՐՓԻԱՐԵԱՆ Արփիար, (1850—1907), դրագէտ, հրապարակագիր և կուսակցական գործիչ: Ծնած է Սամսոնի նաւահանգիստին մէջ 1850ին՝ երբ իր ծնողքը Պոլիս երթալու համար Ակնայ Ապուլիս գիւղէն հոն հասած էր: Արփիար Պոլսոյ մէջ կը յաճախէ Օրթագիւղի Թարգմանչաց վարժարանը: 1865ին կը թողու զպրոցը և 1867ին կը մտնէ Վենետիկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանը, իբր ուսուցիչ կ'ունենայ Հ. Ղեոնդ Ալիշանը, հոն է որ կը տիրանայ հայ լեզուին, կ'ուսումնասիրէ Հայոց պատմութիւնը, հայ դպրութիւնը, ֆրանսական և իտալական գրականութիւնները:

Վարժարանը աւարտելէ յետոյ կը վերադառնայ Պոլիս և Հայոց պատրիարքարանին մէջ քարտուղար կ'ըլլայ: յետոյ սեղանաւորի մը մօտ հաշուակալ:

Այս առններն է որ կը մտնէ հրապարակագրութեան ու գրականութեան ասպարէզը: Կ'ըտրուի Ազգ. ժողովի երեսփոխան, կը նպաստէ Արարատեան Ընկերութեան կազմութեան՝ որուն նպատակն էր հայկական նահանգներուն մէջ զգրոց բռնար:

1878—1889 կ'աշխատակցի «Մշակ»-ի թղթակցութիւն հասցընելով Պոլսոյ Ազգ. կեանքի մասին՝ Հայկակ ծածկանունով: Գր.Արծրունի այլ թղթակցութեանց վրայ հիանալով իւրաքանչիւրին կը վճարէ 14-15 ռուբլի:



ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ (Աւակերտութեան քաղաքից)

1884ին Կովկաս երթալով կը ծանօթանայ Կովկասի հայ կեանքին, ու վերադարձին Արեւելի մէջ կու տայ իր տպաւորութիւնները:

1885ին Կեանքի Պատկերներ հատորով մը լոյս կ'ընծայէ Դասապարտեալը, Երգի մը գիրք, և Կասկի նորավէպերը, նոյնպէս Մասիսի և Արեւելի մէջ կը հրատարակէ Սրի յաղթանակը. Հոգու գաւակի և ուրիշ նորավէպեր:

1889ին կը մտնէ Հնչակեան կուսակցութեան մէջ. 1890ին կը ձերբակալուի ու ազատ կ'արձակուի: 1891ին Յովհաննէս Շահնազարի հետ կը հիմնէ Հայրենիք օրաթերթը: Արփիար այս խիզախ թերթին մէջ կը յարձակի հայ փաշաներուն, պատրիարքին ու հարուստներուն վրայ: Պոլսոյ ամիրայական դասակարգը կը փորձէ թերթը փակել, Արփիարեան և իր ընկերները կը յաջողին վերհրատարակել թերթը և կը շարունակեն պայքարը՝ յանուն հայ ժողովուրդի շահերուն:

1895 Սեպտ. 18ի Պոլսոյ Հնչակեան ցոյցէն յետոյ բազմաթիւ հայ մտաւորականներու հետ Արփիար ևս հեռացաւ Պոլսէն:

1896-1901 Լոնտոնի մէջ կը վարէ Հնչակեան կուսակցութեան գործերը և նոր կեանք ու Մարտի թերթերու խմբագրութիւնը: Յետոյ կ'անցնի Բարիզ և անկէ 1902ին Վենետիկ, ուր կը հրատարակէ «Հայ Հանդէսը»: Այդ առնն Բանքեր Գրականութեան թերթին մէջ կը հրատարակէ Կարմիր ժամուցը:

Արփիար առաջին մահափորձի մը ենթարկ-

ուած էր Պոլսոյ մէջ, այս անգամ երկրորդի մըն ալ ենթարկուելով 1903ին կը փակէ թերթը ու կ'անցնի Եգիպտոս, հոն վարելով Շիրակ ամսագրի խմբագրութիւնը: Այս ատեն կը գրէ «Մինչեւ ե՛րբ, Հոզվրսիֆները և իր վերջին գործը՝ Ոսկի ապրջանը: Եգիպտոսի մէջ վարած է նաև Լուսաբերի խմբագրութիւնը:

Արփիար Լնչակեան կուսակցութենէն հրատարելով մտած էր Վերակազմեալ Լնչակեան կուսակցութեան մէջ ու ապա անկէ ալ հրատարած: Այս ատեն իր թշնամիները աւելի սպառնալից կը դառնային և թերթով կատարեալ մենամարտ մըն էր որ տեղի կ'ունենար: Իր ամենամեծ հակառակորդներն էին Արզուեան և Լ. Լարենց, այս վերջինը սրճարանի մը մէջ ապտակած ալ է Արփիարը:

1907 Փետր. 12ին գրչեր ատեն երբ Արփիարեան պանիր ու հաց գնելով պանդոկ կը դառնար, ոճրագործը կռնակէն կը կրակէ իր վրայ ու կը մեռնի Արփիարեան: Յուզարկաւորութեան ներկայ կ'ըլլան աւելի քան 3000 հոգի: Կը թաղուի Մարմինայի գերեզմանատունը և երկու տարի յետոյ արձան մը կը կանգնեն իր վրայ:

Պարզուկ ու սակաւակեաց մարդ մ'ըն էր Արփիարեան: Ոչ կը խմէր, ոչ ալ կը ծխէր: Մասնաւորաբար վերջին տարիներուն, երբ թշուառ կեանք մը կ'ապրէր, ամառ ձմեռ 17 տարուան երկար վերարկու մը կը հագնէր, նոյն սև փողկապը և նոյն հնամենի կոշիկները:

Արփիարեան հրապարակագրական կռիւներուն հետ պայքարած է նաև աշխարհաբարին համար՝ (Քաղուած Ն. Գ. Բ. Մասնաւոր p. 566):

Արփիարեան «Գեղունի»ի մէջ (1902 էջ 37 48) ունի «Հայոց արդի գրականութիւնը» երկարաշունչ յօդուածը, ինչպէս նաև «Բանրեր»ի մէջ «Արեւմտեան հայոց արդի գրականութիւնը»: Բացի Հայկակէն Արփիարեան գործածած է նաև Հրազդան և Հրպէս ծածկանունները:

ԱՐՓԻԱՐԵԱՆ ԱԼԵՏԻԱ-ՊԵՏՐՈՍ ԺՎ. (1856—1937) կթղ. պատրիարք Տանն Կիլիկիոյ. ծնած 1856 Ապրիլ 13ին՝ Ակնի մէջ: Նախնական ուսումը իր ծննդավայրին մէջ ստանալէ ետք 17 տարեկան հասակին ինքզինքը եկեղեցական կոչման կը նուիրէ ու Պոլիս գալով՝ 1873—6ին հոն, 1876—1883ին Ուրանեան ու 1883—4 Լեւոնեան նորարաց կղերանոցին աշակերտելով՝ իր բնթացքը կ'աւարտէ և 1884ին քահանայ կը ձեռնադրուի և տարի մը վարժարանին մէջ փոխ-տեսուչի պաշտօն վարելէ ետք հայրենիք կը վերադառնայ 1885ին: Հազիւ թէ 5 տարի ժողովրդապետական

պաշտօն կը վարէ՝ 1890 նոյ. 16ին Խարբերդի թեմին եպիսկոպոս կ'ընտրուի: Եւ 1888ին Ստեփ. Ազարեան կթղ. պատրիարքի մահէն ետք Պոլիս կը փոխադրուի պատրիարքական փոխանորդի պաշտօնով մինչև 1905, երբ Սուլթան Համիտէն Լիւանան կ'աքսորուի:

Սահմանադրութենէն ետք 1909ին Առաքելա-



Արփիարեան Ալեսիա-Պետրոս ԺՎ.

կան տեղապահ. 1911ին Թեմական Առաջնորդ կ'ընտրուի Մարաշի ու կը վարէ զայն մինչև վերջին աղէտի օրերը 1922: 1914ին Ամերիկա մեկնած էր, 1915ին իր հօտին գլուխը անցաւ անոր հետ աքսորի ճամբան բռնելով Ղէպի Հալէպ: 1923ին Պէյրութ կը կանչուի իբրև պատրիարքական փոխանորդ և հինգ տարի վերջ 1928ին նաև թեմական փոխանորդ:

Թէրզեանի մահէն ետք, երբ յաջորդը պիտի ընտրէր Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսներու Ժողովը՝ քուէները կեղրոնացուց փորձառու և խաղաղատէր Արփիարեանի վրայ և 1931 Հոկտ. 17ին Կիլիկիոյ Տան Կաթողիկոս-Պատրիարք ընտրուեցաւ Ալեսիա-Պետրոս ԺՎ. անունը առնելով:

Երկու տարի ետք 1933ին, Արփիարեան կթղ. Հռոմ գնաց Ս. Քահանայապետէն պալիուսը ընդունելու: 1934ին Արփիարեանի քահանայութեան յիսնամեայ յորեկանը կատարուեցաւ և իր ջանքերով ըացուեցաւ պատրիարքական նորակերտ շէնքը:

Երեք տարի ետք 1937 Հոկտ. 26ին ի Տէր հանդեսաւ իր հօտին «Հայրիկ»ը:

ԱՐՓԻԱՐԵԱՆ Տիգրան և ԱՐՓԻԱՐԵԱՆ Յիլիէ-տե՛ս ՅԱԼԵԼՈՒԱՄԸ:

ԱՐՓՈՒՆԶ, հին գղ. Սիւնեաց Սողք գա.ի:

ԱՐՔԱՅԱԿԱՂԻՆ կամ Արքայկաղին. Կիլիկիոյ երբեմնի հռչակապանծ և եպիսկոպոսանիստ վանքերէն մին էր սա, որ կ'իյնար Միսիսի արևելահիւսիսակողմը՝ Նուր լեռան վրայ: Կաղնիներու մէջ ծածկուած ըլլալուն պատճառաւ անշուշտ այսպէս կոչուած է: Կը կոչուէր նաև Խնկսոր (այսինքն Հանկասար), ուսկից կը գուշակուի, թէ եկեղեցին նուիրուած էր Ս. Աստուածածնի, վասն զի Հաճոյակատար մակղիրը Տիրամօր կը տրուի: Յայտնի չէ վանքիս սկզբնաւորութեան պատմութիւնը, բայց կը յիշուի ԺԲ. դարու կիսուն, 1167ին. Մեծին Լեոնի հօր՝ Ստեփանէի խաչուած դիակը բերին հոս թաղեցին: Նոյնպէս 1203ին հոս թաղուեցաւ Գրիգոր Ապիրատ կթղ.ին մարմինը: Նոյն ժամանակի վանահայրը Գաւթարքեպիսկոպոս, երբ կթղ. ընտրուեցաւ՝ 1206-8 վանքիս մէջ բնակեցաւ:

Չեռադրաց յիշատակարաններու մէջ վանքս կոչուած է «... հոյակապ մայրաւաղափայտ սուրբ անապաս Արքայկաղին» այնչափ բարձր և պատուաւոր անուններ ունենալուն պատճառն ալ այն է, որ Լեոնի ժամանակ Մամեստիա քաղաքը, որուն եպիսկոպոսը կը նստէր վանացս մէջ. զեռ Հայոց մայրաքաղաքը կը համարուէր:

Արքայակաղնի վանքը ունէր բազմաթիւ միաբաններ, իրեն զբաղարանը լի էր հազուագիւտ ձեռագիրներով, և մեղրուջան աշխատասէր կրօնաւորները շարունակաբար կը գրէին և կ'ընդօրինակէին. 1269 տարւոյ մեծ երկրաշարժէն օտարիկ վնասուեցաւ մենաստանս, ինչպէս նաև իր շուրջը գտնուած բազմաթիւ ճգնարանները, աղօթանոցները կործանեցան: Ժամանակակից գրիչ մը ողբալով կը նկարագրէ այդ տխուր պատահարը: Այս կործանմանէն վերջ թէև ոմանցմէ նորոգուած կը համարուի Արքայակաղնի վանքը, սակայն, ինչպէս կ'երևի՝ չէ կարողացած երկրորդ անգամ հասնիլ իր նախկին պայծառութեան և փառքին:

Վանքս մեծ հռչակ ստացած է իրրև հայկական երաժշտադիտութեան կեդրոն, բազմազան եղանակներով մեղեդիներ և այլ եկեղեցական երգեր հնարուած են Արքայակաղնի երաժշտապետներէն և երաժիշտներէն: Այս երգերը յատկապէս կը կոչուին Մանրուսմուցի և Կցուրդի, բազմաթիւ օրինակներ ընդօրինակուած են այդ երգերէն, բոլորը գեղեցիկ գունազոյն ոսկենկար զարդերով, և տալածուած են թէ՛ Կիլիկիոյ և թէ՛ Հայաստանի միւս վանքերը: Միևնոյն երգը քանի մը տեսակ եղանակներ ու-

նէր և ամէն տեսակ առանձին անուամբ կը կոչուէր: Արքայակաղնի վանքի եղանակներու տեսակը կը հասնէր եօթանասունի. մեր այժմեան եկեղեցական երաժշտութեան մէջ անոնցմէ հազիւ մէկ քանին մնացին (Էփրիկեան՝ «Բնաշխարհիկ», քաղուած Հ. Ալիւսանի «Սիսուան»-էն էջ 253-4):

Վանքս կը յիշուի Վարդան պատմագիրէն (սպ. վեցէս. էջ 139), ուս որում շինողն (նորոգող) եղած է Լեւոն արքայ 1203ին: 1266ին Քորոս ք. որդի Գեորգայ Սիոն եպ.ի առաջնորդութեան օրով վանքիս կ'ընծայէ աւետարան մը ԺԳ. դարուն ոմն Պօղոս գրիչ հոս կ'ընդօրինակէ «Երանելոյն Թեոփիլոսի ի Ս. Գրիգոր Լուսաւորչին» գրած ներքողը:

Այս Պօղոսը նոյնը պիտի ըլլայ վանքիս միաբան Պօղոս գրչին հետ՝ որ 1273ին գտնելով վանքիս մէջ Յովն. Ոսկեբերանի նառք «Գրիգոր Լուսաւորչէ»՝ կ'ընդօրինակէ: Այս միեւնոյն Պօղոսն է որ 1284ին ի խնդրոյ Կոստանդին ք.ի, յառաջնորդութեան Սեփանոս Արքեպ.ի († 1284) կ'ընդօրինակէ Աւետարան մը: Ըստ յիշատակարանին (տե՛ս Սիւսմեան Արքեպ.ի «Յուցակ Չեռադրաց Հայեպի» քիտ 22) վանքիս եկեղեցիներն էին Ս. Աստուածածին, Ս. Գաբրիէլ եւ Միքայէլ: Սեփանոս Արքեպ. Կոստանդինի եղբայրն էր, իրենց հայրն էր Գրիգոր ք.ի: Յիշատակարանէս կը յայտնուի որ վանքիս առաջնորդ եղած է Ղուկաս եպիսկոպոս:

ԱՐՔԱՅԱՅ ԳԱԻՍՈՒ, Մոկաց աշխարհի գաւառներէն մին:

ԱՐՔԱՌՈՒՆԷՐ, հին գիւղ Սիւնեաց Սողք գա.ի: ԱՐՔԱՎԱՆՔ կամ Արգավանք գղ. Տուրուրեբանի Տարօն գա.ի, Մշոյ դաշտի մէջ: 1900ին 60 տունէն աւելի հայ բնակիչ ունէր, Ս. Թովմաս և Ս. Լուսաւորիչ անուամբ եկեղեցիներով:

ԱՐՔԱՎԱՅՈՍ, իշխան Չորրորդ Հայոց, որ Ս. Արիստակէսէն կշտամբուած ըլլալուն՝ յարմարատենի սպասեց Ս. հայրապետը սպաննելու. եւ երբ 332ին Արիստակէս կթղ. Մոփաց կողմերը այցելութեան գացած էր, անօրէն իշխանը Արքեղայոս՝ ճամբուն վրայ սպաննեց զինքը:

ԱՐՔԱՎԱՅՈՍ, զօրագլուխ Մհրդատայ Պոնտոսի թղ.ին:

ԱՐՔԱՎԱՆ, հայանուն՝ բայց թաթարարնակ գղ. Բագուի կուսակալութեան:

ԱՐՔԱՎԱՆ, գղ. Վրահայաստանի մէջ:

ԱՐՔՈՅ, հին գիւղեր Սիւնեաց Հարանդ և Աղահէճք գա.ներու մէջ:

ԱՐՔՈՅՔՍ, հին գղ Սիւնեաց Ճահուկ գա.ի:

ԱՐՔՈՒՆԱԳԵՏ, անուն Սիւնեաց Աղահէճք գա.ի, կը յիշուի Մովսէս Կաղանկալտուացիէն (Վ. ի.), եկեղեցին կը կոչուէր Ս. Գրիգոր:

ԱՐՔՈՒՆԱՇԷՆ, հին գղ. Գուգարաց Չորափոր գու.իւ Հայրենիք Սահակ Գ. կթ.իւ

ԱՐՔՈՒՆԻ, գղ. Կարնոյ. 1900ին ունէր 25 տուն հայ, եկզ. Ս. Յակոբ ճիշտը՝ Թարգունի (տե՛ս):

ԱՐՔՈՒՆԻՎԱՍՏԱՆԻ ՍՏԱՏԵԱՆ ՊՈՊՈՍ ԱԿԵՅ:

ԱՐՔՈՒՆԻՍ, գղ. Օլթիի. բնակիչք՝ Թուրքք:

ԱՐՕՍ կամ Արոս, գղ Տուրուբերանի վարամուշիք (Խնուս) գու.ի մէջ, 1900ին 50 տ. բնակիչ ունէր, որոնցմէ 10 տ. Թուրքք: Հայերը ունէին եկզ. և դպրոց: Գիւղիս գերեզմանատան մէջ եկզ. մը կար, կարծուի որ ժե. դարուն շինուած էր: Կը պատմուի թէ առնաք 250 տունէն աւելի հայ բնակիչ ունեցած էր գիւղս: Տապանաքարերը ձիու կամ ուղտի կերպարանքը Մօտերը միակտուր քարէ փորուած եկզ. մը կար: (Միւրախուեան «Եկարագր. Աղեւուրութեան», Ա. 28—29):

ԱՐՕՐ, հին գղ. Սիւնեաց վայոց ձոր գու.իւ

ԱՐՕՐ, պարբերաթերթ Կալացի. յայտարարուած բայց ո՛չ լոյս տեսած Կալացի մէջ:

ԱՐՕՐ, «հասարակական, քաղաքական, տընտեսական և գրական օրաթերթ» (Հ. Յ. Դաշնակցութեան) տպ. Թիֆլիս 1907 (չարունակութիւն «ժայռ»ի). խմբագիր Լ. Մելիք-Օհանջանեան:

ԱՐՕՐ, միմամսեայ հանդէս՝ գիտութեան, գրականութեան, քաղաքական անտեսութեան, գեղարուեստի, խաղաղասիրութեան, հայագիտութեան, Կովկասագիտութեան Տպ. Թիֆլիս 1910-1912. խմբ. Հ. Առաքելեան:

ԱՐՕՐ, ամսաթիրթ (Հ. Յ. Դաշնակցութեան), տպ. Երզնկա 1910—1911: (Առաջին համարը խմբարարի):

ԱՐՕՐ, «օրգան վեր. Հնչ. Կուսակցութեան Բալիֆորնիոյ շրջանակին. ազգային, գրական, քաղաքական ժողովածու», (եւօրեայ): Տպ. Ֆրէզնո 1919—1921:

ԱՐՕՐԱԿ. Արարակ կամ Արարակացոց քաղաք, ի հնունք քաղաք մը կար այս անուամբ Փոքր Հայոց, Եկեղեցաց գաւառի մօտ, ուսկից էր Ս. Եւստրատիոս, որու մարմինը, ըստ Յայսմաւուրաց հոս ամփոփուած է:

ԱՐՖԷՆ Ս. յեռ Մարաթիոյ:

Ա.Ի.Ա.Գ. ԱՆԱՊԱՏ Պղընձագետ, ուր 1314ին Խաչատուր Աւետարան մը կ'ընդօրինակէ, կը ծաղկէ ու կը կազմէ Սահակ եպ.ի առաջնորդութեան օրով, ձեռագրիս ստացողն եղած է նոյնինքն Սահակ որ զայն Մարտիրոս ք.հ.ին նուիրած է: (Ձեռագիրս Կարնոյ Դընիկ գիւղը կը գտնուէր):

Ա.Ի.Ա.Գ. ՎԱՆՔ Տ. Դրագարկ:

Ա.Ի.Ա.Գ. ՎԱՆՔ Տ. Թաղեոս Առաքելոյ վանք: (Արտագու):

Ա.Ի.Ա.Գ. ՎԱՆՔ կամ Թաղեոս Առաքելոյ վանք,

Դարանաղեաց այս նշանաւոր վանքս չի յիշուիր էփրիկեանի «Բնաշխարհիկ»ի մէջ, որը անցեալին մշակոյթի կեդրոն եղած է Եկեղեցաց Դարանաղեաց գաւառին մէջ, գտնուելով Սեպուհ լեռան վրայ:

Ինծի ծայնօթ յիշատակարաններէն կը քաղեմ հետեւեալ ծանօթութիւնները: 1200ին վարդան գրիչ կը յայտնէ թէ Աւագ վանքը Սեպուհ լեռան վրայ կը գտնուի և այդ առնի առջնորդներն էին Ամբակուժ և Սարգիս 1227ին վանքիս առաջնորդն էր Ստեփանոս, միարանք և ստացողք՝ Պետրոս և Տուրք, անյայտ գրիչ մը ընդօրինակած է Տօնամակ մը՝ ընդհովանեաւ Ս. Աստուածածնի, Ս. Կարապետի, Ս. Առաքելոց և Ս. Ստեփանոս Նախավկայի:

1273ին վանքիս առաջնորդն է Թաղեոս:

1309ին Դարանաղեաց Աւագ վանքին մէջ Ղազար կրօնաւոր կ'ընդօրինակէ «Ճառք նախնի վարդապետաց» (Ձեռագիրս Երուսաղէմ կը գտնուի թ. 1105):

ԺԻ դարուն մէջ կը յիշուի Եղեկիէլ կրօնաւոր մը, որ 1317ին գրուած Աստուածաշունչ մը կը ստանայ (որ Սրուանձտեանցի Թորոս Աղբարի մէջ կը յիշուի հար. Բ. էջ 300 և կը գտնուէր Կամախու Ս. Թաղեոս Առաքելոյ վանքը, որ նոյնն է Աւագ վանքին հետ). Եղեկիէլ և հոգեւոր որդին Սիմէոն կը ստանան այս Աստուածաշունչը և կը նուիրեն Աւագ վանքին որ Ս. Լուսաւորիչ և Ս. Թաղեոս կը կոչուի, որուն բարունապետն էր Յովհաննէս, ասոր աչակերտն էր Ստեփանոս Յոհան եպիսկոպոս:

Հալէպի մէջ ալ անթուական աւետարան մը կայ (Սիւրմէեան Արքեպ. Ա. թիւ 37), նորոգուած և պահպաները գրուած Աւագ վանքին մէջ 1383ին Արիստակէս Մերաստացիէն՝ Առաքել Կամախեցոյ ծախքով: Գրիչը որ վանքիս միարաններէն է՝ կը յիշէ գերջանիկ բարունին Գեորգեոս «գովերափոխեալն առ Բրիստոս»: Յիշատակարանը կը վերջացնէ «ոհ. ո՛հ դառն ժամանակիս, զի քամենայն կողմանց աւերք եղև և մահ տարածամ»:

1407ին Մովսէս երէց Ամիր պէկի որդին Աւագ վանքին աւետարան մը կը նուիրէ:

1418ին Խաչատուր «Վարք Հարանց»ը հոս կ'ընդօրինակէ. ստացող՝ Յովհաննէս:

1439ին ի գաւառս Եկեղեցաց և Դարանաղեաց, ի վանքս որ կոչի Աւագ, ընդ հովանեաւ Ս. Աստուածածնին, Ս. Կարապետին և Ս. Առաքելոց, յառաջնորդութեան մենաստանիս՝ Մարտիրոս վրդ.ի, Սիմէոն որդի Պողոսի և Սառայի Լուսաւորչի վանքին մէջ ընդօրինակել կը սկսի Յայսմաւուրքը (որ Վիեննայի Միսիթարեանց վանքը կը գտնուի ներկայիս), կը յայտնէ

զրիչը թէ Խուլն (Խուլթուլ) եկաւ ձ'Ի (100000) զօրօք և աւեր ըրաւ, Այխանընլան եկաւ յետոյ և շատ տեղաւորեց, «այդ պատճառաւ, կ'ըսէ գրիչը, չկրցի Լուսաւորչայ վանքին մէջ մնալ, ստիպուեցայ Աւագ վանքը անցնիլ և հոն աւարտել ձեռագրիս ընդօրինակութիւնը»:

Տիւրիկի Ս. Աստուածածնայ եկեղեցիին մէջ գտնուած ձաւոցի մը յիշատակարանին մէջ (Սրուանձտեանց «Թորոս Աղբար» Բ. 222) կը կարդանք թէ այդ ատեն ձիհանչա՛ սուլթանը Թաւրիզէն Երզնկայի վրայ եկած է և քաղաքը առած. Խուլթուլակ պարոնը չէ հնազանդած ձիհան շահի, որով վերջնոյս զօրքը յարձակած է Կամախի վրայ ալ ու աւերած:

1451ին Աւագ վանքը «աթոռ Կամախի» կը կոչուի, եկղ. Ս. Առաքեալք, Ս. Աստուածածին, Ս. Կարապետ. միաբանն Յովսէփ քահանայ:

1463ին վանքիս առաջնորդն էր Յովսէփ «որ բազում աշխատանք ունի, զի Լ. (30) արեղայք կան ի վանս, թող զսարկաւազան և զգործաւորան, «Առ Որս»ի գրիչը Ստեփանոս կ'ընդօրինակէ ձեռագիրս «առ ոտս բարունապետաց Արրահամու և Մարգարէի (Ձեռագիրս էջմիածին կը գտնուի):

1464ին նոյն Ստեփանոսն է որ (ինքզինքը Չմշկածագեցի կը կոչէ) առ ոտս բարունապետ Յովհաննու վրդ.ի կ'ընդօրինակէ «Հաւաքածոյ» մը (Ձեռագիրս ըստ «Հանդէս Ամսօրեայ»ի Զ. 114-6 Պետերբուրգ կը գտնուէր):

1469ին Գրիգոր Կաֆացի, «առ ոտս մեծ բարունապետին Յովէս (Յովհաննէս պիտի ըլլայ) քաջ հռետորին Շարական մը կ'ընդօրինակէ որուն ստացողն է Արրահամ վրդ. «անհաս երամիշտ և քաղձրածայն փիլիսոփայ, ի վայելումն աշակերտին իւրոյ Յովհաննէսի»: Օրինակին շնորհողը եղած է Յովհաննէս բարունապետ, որ գրչին գաւաղան տուած է: Պօղոս մալաղն? օգնէ ի խաղելն: Թորոս Կաֆայեցի՛ գրիչը (Գրիգորը) փնտռելու կու գայ: Այդ տարին իբրև հրաշք կ'արձանագրէ յիշատակագիրը Հասան պակ կը սպաննէ Ջիհանշահը և կը տիրէ բոլոր արևելեան գաւառին նաև Եկեղեցաց գաւառին:

1469ին Եղիսարէթ՝ Յովհաննէս եպ.ի առաջնորդութեան օրով վանքիս շուրջառ մը կը նուիրէ «բոլոր զգետիւ»: Ուրիշներ այդ տարին երկու ձեռագիր կը նուիրեն վանքիս:

1478ին Նիկողայոս Պոնտացի, Երուսաղէմի մէջ կը սկսի Շարական մը գրել (Զ. Երսղմ. 1620) և Աւագ վանքը կրթալով հոն կը շարունակէ ընդօրինակութիւնը, բայց «ժանտարարոյ Չիթախի»

վախէն Պոնտոսի Ամենափրկիչ վանքը կ'երթայ: (Աղաւունքի՛ «Միաւանգ» 401):

1481ին Առաքել արեղայ Շարական մը և Գանձարան մը կ'ընդօրինակէ վանքիս մէջ «առ ոտս Յովհաննէս բարունապետի, յառաջնորդութեան Տէր Յովհաննէս եպ.ին»:

1483ին Շարական մը (ի Ս. Դաղար, Վենետիկ) կ'ընդօրինակէ Առաքել և կը յիշէ 1485ին յիշուած անձինքը:

1484ին Առաքել Աւետարան մը կ'ընդօրինակէ (որը Սրուանձտեանց տեսած է Կամախի մէջ («Թորոս Աղբար» Բ. 302) «յաւուրս երջ. բարունապետին Յովհաննէսի վրդ.ի, յառաջնորդութեան ուխտիս Պապոս հայրապետի»: Կր կարծեմք բուսականի սխալ ընթերցում մը սեղի ունեցած է. զի 1485ին ալ վանքիս առաջնորդը դեռ Յովհաննէսն էր:

1485ին նոյն Առաքելը ուրիշ ձեռագիր մը կ'ընդօրինակէ (Զմմառի Անտոնեանց վանքը կը գտնուի) ուր կը յիշուին Յովհաննէս բարունապետ, Ստեփանոս և Արրահամ վարդապետք եւ առաջնորդը Յովհաննէս եպիսկոպոս:

Վերջին անգամ 1497ին կը յիշուի Աւագ վանքը երբ Ստեփանոս արեղայ Խարտիշար գրուած Աւետարան մը կը գնէ և Աւագ վանքին կը նուիրէ:

Ա.Ի.Ա.Պ. Վ.Ա.Ն.Ք, զիւղ Կամախի, 1900ին 25 տ. հայ բնակիչ ունէր. անշուշտ նոյնն է վերի վանքին հետ, որը ամայանայէ հեք գիւղ դարձած է:

Ա.Ի.Ա.Պ. Տ. Դաւախարաբա:

Ա.Ի.Ա.Պ. Բաղիճեցի, սա Սարմաստ ապրած և 30 տարի պարսիկի մը քով քսակակարութիւն կ'ընէր: Երբ Բաղէշ կը դառնայ և իբրև քրիստոնեայ հայոց եկեղեցին կը յաճախէ՝ պարսիկ մը կը զրպարտէ, ըսելով թէ՛ Սարմաստի մէջ պարսից կրօնը ընդունած էր: Զինքը Բաղէշի Շարաֆ ամիրային առջև կը տանին հարցափորձելու, և երբ կը տեսնեն որ հաստատուել կը մնայ քրիստոնէութեան մէջ՝ 1390ին կը նահատակեն:

Ա.Ի.Ա.Պ. Իշխան կամ Սարգիս Իւանեան, սա 1238-ին տեսնելով որ Թաթարներ կը լեցուին Հայաստանի մէջ՝ իր ընտանիքը առնելով գնաց ամրացաւ Կային բերդին մէջ: Դուրաղա թաթարաց իշխանը, ամրոցը երկար ատեն պաշարելէ հեք Աւագին պատգամ զրկեց որ հնազանդի իրեն: Աւագ նախ քոյրը զրկեց ընծաներով և նոյն իսկ կնութեան առաջարկելով. Դուրաղա ընծաները առնելէ հեք նորէն պնդեց որ Աւագ անձամբ կրթայ, ի վերջոյ յանձն կ'առնէ Աւագ և կը վերահաստատուի իր իշխանութեան մէջ, տուրք

տալու պայմանով: 1240ին Աւագ հայ իշխաննհրու կողմէ թաթարաց Ուխաթախան թագաւորին զրկեցին որպէսզի Չարմաղան ամիրան չնեղէ հայ իշխանները: Աւագ պատիւներ զտաւ թագաւորէն և յանձնարարական նամակ մը բերաւ Չարմաղանի և հայ իշխանները իրենց տեղերը վերադարձան:

Օր մը Ջոջրուղա անուն թաթար իշխան մը Աւագին գնաց. և որովհետև Աւագ ուշ ներկայացաւ իրեն՝ Ջոջրուղա մտրակով գլխուն զարկաւ. Աւագի ծառաները Ջոջրուղայի վրայ յարձակեցան և գանակոծեցին: Վերջինս բանակով Աւագի վրայ յարձակեցաւ, որ վրաց թագուհիին ապաւինեցաւ: Միւս թաթար իշխանները սրտմտեցան Ջոջրուղայի դէմ և խնդրեցին հայ իշխանէն որ իր երկիրը դառնայ. Աւագ ղեսպան զրկեց թաթարաց թագաւորին յայտնելով Ջոջրուղայի արարքը: Թագաւորը հրամայեց թաթար իշխաններու որ չնեղեն ո՛չ Աւագը և ո՛չ միւս հայ իշխանները, այլ միայն որոշուած հարկը գանձեն:

Թաթարաց Ուխաթա թագաւորի մահէն ետք (1246ին) երբ որդին յաջորդեց՝ սա հարկապահանջներ զրկեց Հայաստան և Վրաստան, որոնց գլխաւորն էր Ղարաբուղա, որը քանի մը հայ իշխաններ կալանաւորելէ ետք՝ հրա Աւագ ևս կալանաւորելու համար իրեն կանչեց՝ Աւագ թաթար իշխաններու խորհուրդով իր բանակով ներկայացաւ, այնպէս որ Ղարաբուղա ստիպուեցաւ հաշտուեթիւն և բարեկամութիւն կնքել Աւագի հետ: 1249ին ևս Աւագ անձամբ իր մօրը հետ թաթարաց իշխանին գնաց և միջնորդ եղաւ որ զաղրեցնէ հալածանքները Հայ և Վրացի իշխանաց դէմ:

Աւագ ասկէ վերջ քանի մը տարի միայն ապրեցաւ և մեռաւ. զինքը թաղեցին պղնձահանքի գերեզմանին մէջ իր հօրը Իւանէ Աթաբէկի առնթեր, և թաթար իշխանները իր իշխանութիւնը տուին Շահնշահի որդւոյն Ջաքարէի, որ թոռն էր Ջաքարէ Սպասալարի, որովհետև Աւագ իշխանը որդի չունէր: (Չախեան՝ «Պատմ. Հայոց», Գ. հր.):

Ա.Ի.Ա.Գ պարոն, որդի Ազիզ բէկի, հայր Եղիվարդու Մանուէլ եպ.ին (1452ին): — Երէց 1458ին զրիչ Աւետ.ի՝ Երուսաղէմի Ս. Հրեշտակապետ վանքին մէջ: — 1478ին «արիաջան» վարդապետ ի Վայոց ձոր: — «քրտնաջան» վրդ. Սրկղուն գիւղի մէջ, սա իբրև «հովուապետ» Սրկղունի կը յիշուի 1473ին՝ իր եղբորդի Գաւթ զրէն:

Ա.Ի.Ա.Գ եպ. Գաղատիոյ, բնիկ Գաղատացի, «Իրասակարգէ Սրբոյն Անտոնի եգիպտացւոց» 1599ին պանդուխտ ըլլալով Լեհաստանի Լէոպոլիս (Լէմպէրկ) մայրաքաղաքին մէջ՝ ընդօրինակելու տայ Խրատական բանից հաւաքումն, Արթուր գրչին Այս Աւագ վարդապետն է որ 1616ի յիշատակարանի մը մէջ կը յիշուի իբրև եպիսկոպոս և առաջնորդ Գաղատիոյ և Ս. Աստուածածին վանքին: Ասկէ առաջ 1611ին Մեկքիսեթ կթղ.ի առ Լեհահայս զրկած կոնդակին ներքև կը ստորագրէ «Ես Աւագ եպ. առաջնորդ Ս. ուխտին Անկուրիոյ տեսի զնամակս և հաւատացի, այս այսպէս է ըստուկ (ստոյգ) ճշմարիտ» (Ալիւան՝ «Կամենից» էջ 240):

Ա.Ի.Ա.Գ ԱՇՈՒՂ. Ազրպէճանցի հայ արուեստագէտ, որ մասնաւոր հրաւէրով Մոսկուա գնաց 1938ին, ու երգեց իր հեղինակած կտորները: Իր մասին է. Միքայ Մոսկուայի ֆրանսերէն թերթին մէջ կը գրէ. — «Աշուղը իր վրայ կը միացնէ քերթողի և երամիշտի գիծերը, երգիչի և տաղանդաւոր նուագողի, դերասանի և արտասանողի յատկութիւնները, որոնցմէ ան կը յուզուի և կը յուզէ ժողովուրդը...»: Տարիքոտ բայց տակաւին կորովի մօրդ մը:

Ա.Ի.Ա.Գ Յովնանէս, տե՛ս Աւագեան Աւագովիչ:

Ա.Ի.Ա.Գ-Ա.Լ կամ Աւագկալ, զգ. լեռնային Գրիկիոյ, Զէյթունի մօտ. Թուրքերը Մխալ կամ Մուղալ կը կոչեն, 1900ին 3000 րն. ունէր. եկղ. Ս. Սարգիս, շուրջը կան 14 ազարակներ ուր 150 տուն հայ կ'ապրէր:

Ա.Ի.Ա.Գ-Ա.ԿԱՆ Ա.Ղ.ԲԻԻԲ, փոքրիկ վտակ Վայոց ձոր գո.ի մէջ:

Ա.Ի.Ա.Գ-ԵԱՆ Ալիս օրիորդ, զուսար Նիւ Եորքքարնակ Նշան Աւագեանի, զաչնակահարուհի, որ Ամերիկայի գլխաւոր քաղաքներու մէջ երգահանդէսներ կը սկսի տալ (1937ին):

Ա.Ի.Ա.Գ-ԵԱՆ Արիսաւկէս վիրարոյժ-ատամնարոյժ ի Նիւ Եորք: Հասցէն 201 E. 30 th. str. New York city (U. S. A.):

Ա.Ի.Ա.Գ-ԵԱՆ Գրիգոր Բրոն. տե՛ս ՅԱԻՆԵՆՈՒԱՅԵ:



Ա.Ի.Ա.Գ-ԵԱՆ Ա.Լ.ԻՍ

Ա. Ի. Ա. Գ. Ե. Ա. Ն. Եղբայրք Յ. և Ս. Նոր Նախիջևանի մէջ տպարան բացած են և 1898էն սկսած գրքեր և պարբերականներ հրատարակել (Քեոդիկ՝ «Տիպ եւ Տառ» էջ 179):

Ա. Ի. Ա. Գ. Ե. Ա. Ն. Թագուհի (տիկին), Երզնուհի (քօնդրալիզօ), ծնած Զմիւռնիա Մանուկ հասակէն ծնողաց հետ դացած է Ամերիկա: Զայնին քաղցրութեան և երգելու



ընդունակութեան շընորհիւ, յաճախ հրաւիրուած է երգելու ազգային և բարեսիրական հաւաքոյթներու մէջ, ուրկէ խրախուսուած՝ սկսած է հետեիլ երաժշտական դասընթացքներու: Երեք տարի աշակերտած է բրոֆ. տ'Արիտին, ի Պրիճֆորթ, երկու տարի ալ բրոֆ. տիկին Տէյվիս Հաու-

Տիկ. Ա. Ի. Ա. Գ. Ե. Ա. Ն. Թ. Ա. Գ. Ու. Հիլի: Ամերիկեան թերթերը գովեստով խօսած են իր ձայնին ազդուութեան և տպաւորութեան մասին: Յ. Մեհարապեան «Հանրագիտակ Տարեգիրք»ին մէջ հետեւեալը կը գրէ: «Անոր (Տիկին Թ. Աւագեանի) ձայնը թաւշային կակուղ ֆօնօրալիզօ է. ցած և միջին ձայները լիցուն են և թաւ: Կ'երգէ մտածուած և զգացմունքով»: Մինչև 1925 Տիկին Աւագեան երգած է առ հասարակ անգլիերէն և իտալերէն կատրներ: 1925ին Պրուքլին կը հաստատուի եւ աւելի մօտէն կը ծանօթանայ հայ ազգային եւ ժողովրդական երգերուն: (Քեոդիկ՝ «Ամենուն Տարեցոյց» էջ 472). 1926ին Նիւ Եորքի ռատիոյի կայանէն երգած է: 1936ին կը վախճանի Պրուքլինի մէջ:

Ա. Ի. Ա. Գ. Ե. Ա. Ն. Հմայեակ և Վաղիմակ, 1931ին Գոլմպիայի համալսարանի առևտրական ճիւղէն երկուքն ալ շրջանաւարտ կ'ըլլան «Գիտութեան Պսակաւոր»ի տիտղոսով:

Ա. Ի. Ա. Գ. Ե. Ա. Ն. Հրանդ, նկարիչ, տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ: Ա. Ի. Ա. Գ. Ե. Ա. Ն. Յովհաննէս, գրագէտ-քննադատ, ծնած է Ակնայ գիւղերէն Բինկեանի մէջ, Նախնական կրթութիւնը տեղւոյն վարժարանին մէջ ստանալէ ետք 1897ին Սերաստիոյ Զուլիցերիական որբանոցը կը զրկուի, ուրկէ շրջանաւարտ կ'իլլէ 1902ին: Երկու տարի նոյն հաստատութեան մէջ ուսուցչութիւն կ'ընէ և 1904ին կը մտնէ Մարզուանի Անաթոլիա Գոյէճը, ուրկէ ընթացաւարտ կ'ըլ-

լայ 1907ին B. A. տիտղոսով: Երկու տարի նոյն քաղաքի Աւետ. վարժարանի մէջ Տնօրէն-Ուսուցչի պաշտօն վարելէ յետոյ՝ հրաւէրով մեկնած է Վանի Ամերիկեան վարժարանը, ուր հայ լիզուի և զրականութեան, ինչպէս նաև մաթեմատիքայի ուսուցչութիւն կ'ընէ մինչև 1915ի տեղահանութեան տարին: Վանի մէջ 1911—1914 զուտ զաւառական զրականութեան նուիրուած Վանսուպ հանգէսը խմբագրած է: 1915ի վերջերը գացած է Նիւ Եորք, ուր ժամանակ մը զրասնեկային աշխատանք կատարելէ յետոյ մեկնած է Պոստոն 1917—1919 Ազգ օրաթերթի օգնական խմբագրի պաշտօնով: 1919էն ի վեր կը գտնուի Հայասանի Կոչնակ շարաթաթերթի խմբագրական կազմին մէջ, հոն բացի ազգային բաժինը խմբագրելէ՝ երեցած է իր լուրջ քննադատական յօդուածներով: Աշխատակցած է զանազան Տարեգիրքերու, թերթերու և հանդէսներու, (Քէոդիկ՝ Ամենուն Տարեցոյցը, Արեւելք, Հայրենիք, Բիւրակն, Պայքար, Փիւնիկ, Նաւասարդ եւ այլն):

Աւագեան առանձին հատորներով լոյս ընծայած է Գոհարներ հայ գրականութեան, Գրական դեմքեր, Նշանաւոր օբերաներ, Աւետիս Անարոնեան և Այսպէս արեցանք:

Հայ Գրական և Գեղարուեստական գրեթէ մամէն շարժումի և երևոյթի շուրջ պարզած է իր տեսութիւնները՝ ցրուած հոս ու հոն իր ծածկանուններն եղած են Վաղարօ Վաղարեան, Հրայր, Ասպարուհի, Գրասէր, Գեղարուեստսէր, Երաժշտսէր եւ այլն:

Հայերէնի վերածած է շատ մը կարճ պատմութեան քննարկ: Իր թարգմանութեան ցկարգին պէտք է յիշել կոմս Ալիքսի Թոլստոյի հինգ արար թարգմանութիւնը Յար Ֆիօսօր Իվանովիչ, հրատարակուած 1928ի Հայասանի Կոչնակի թիւերուն մէջ:



Ա. Ի. Ա. Գ. Ե. Ա. Ն. Յով. Հ.

Իր հասցեն H. Avakian c/o «Gotchnag» 331 Fourth Avenue, New York City (U. S. A.):

Ա. Ի. Ա. Գ. Ե. Ա. Ն. Յովհաննէս, իրաւագէտ, վկայուած Կ. Պոլսոյ համալսարանէն՝ 1920ին:

Ա.Ա.Գ.(ԵԱՆ) Յովնաննես, որդի Յակոբու վաճառականի Փոտոլի, Կամենիցէն, ուր իսկ ծնած է: Երիտասարդ տարիքէն Լեհական բանակին Փոտոլի զօրաց շարքը կը մտնէ: Լեհերէնէ զատ կատարելապէս սորված էր տաճկերէն, վայաքերէն, հայերէն և ռուսերէն լեզուները: Լաւ ճանչցուած էր իր քաջութեամբը և արիւթեամբը, որոնց համար Զիկմունտոս Գ. Լեհաց թագաւորը Յովնաննէս Զամոյսքի և Սթանիսլաւ Ժուլքիէ-վսքի զօրապետներու խնդրանացը վրայ, Աւագա-ժողովին մէջ ի վարչաւիա 24 Փետր. 1605ին, առանձին վկայականով մը ասպետութեան աստիճանին բարձրացուց զինքը, Աւագ մականունը վաճառականի (Տոնիկիեվիչ) փոխել տալով:

Ա.Ա.Գ.ՈՎԻԶ Ասուաւասուր, հարուստ վաճառական մը, որ Յովնաննէս Գաղիմիր լեհաց արքայէն առանձին մենաշնորհ մը ընդունած էր 28 Դեկտ. 1656ին, Արեւելքի և Լեհաստանի միջև վաճառականութիւն ընելու: Այդ արժեւորութեան վաւերաթուղթը կը գտնուի Լվովի քաղաքատան զիւանատանը մէջ (Oficii Consularis fasciculi 5 et 6, ab anno 1654 ad 1660 No. 718 et 332): (Տոնիկիեվիչ):

Ա.Ա.Գ.ԵՆՔ ԵԶԻՏԷՐ, գղ. Կեռնային Կիլիկիոյ, Զէյթունէն 2 ժամ հեռի: 1900ին 200 բնակիչ ունէր:

Ա.Ա.Գ. ԹԱՂ, հայանուն՝ բայց քրդարնակ գղ. Բաղէշի Կիլիկի սեռէ գաւառակի մէջ:

Ա.Ա.ԶԱՆ, հին գղ. Սիւնեաց Սողք գո.ի:

Ա.Ա.Ծ s. ԱՐԾԾ:

Ա.ԱՆ, նշանաւոր աւան Այրարատայ Կոտայք գո.ի մէջ, Երեանի մօտ, 2 քիլոմէթր հեռի, համանուն Աւան կամ Գրրգալուլազ գետակի եզերքը: Յովնաննէս կթղ. պատմարան աւանս քաղաքապետ կ'անուանէ: Յովնաննէս Սիւնականի օրով հոս եղած է հայրապետական աթոռ՝ է, զարուն սկիզբը, ուր կը թաղուի Յովնաննէս 610ին, Աւան ունեցած է վանք մը, որուն առաջնորդն էր Յունան կամ Յուսան, որ Արրահամ կթղ.ի գումարած ժողովին ներկայ կ'ըլլայ: Այժմեան եկեղեցին Ս. Աստուածածին: Հին քարաշէն եկեղեցիին վրայ 1285ի թուականով արձանագրութիւն կայ: (Էփրիկեան՝ «Բնաւարհիկ» Ալիւսանի «Այրարատ»-էն քաղուած): 1926ին պատահամար նախապատմական շրջանի մնացորդներ գտնուեցան Աւանի մէջ, կան քարահանքեր:

Ա.ԱՆ, թաթարարնակ գղ. Արագածոտն գո.ի մէջ:

Ա.ԱՆԻ, գղ. Վանայ, որուն զպրոցին մէջ 1900ին 53 մանչ կ'ուսանէին:

Ա.ԱՆԻԿ, հին գղ. Մազազ-Ոստան գո.ի, երբեմն կալուած եղած է Հաւուց Թաւայ և սպա Խորյիրապ վանքին:

Ա.ԱՆՇԻՆՅ Մարգար, ծն. Սպահան՝ բարձր ծագումով սերունդէ: 1650ի ատենները կ'ապրէր Հնդկաստանի մէջ, 1669ին Փրանսացիներու կողմէ Կոլոուտայի թագաւոր Ապտալլիւս Գիւթիւպ Շահի պալատը կը զրկուի վաճառականական կապեր հաստատելու համար: Այս Աւանշինցը համբաւաւոր Աւագ Շինենցն է, որուն երկու որդիքը Յովնաննէս և Յովսէփ՝ Մարգար Հուկլիմ մեծ վաճառականներն էին Ժէ. զարուն (Մ. Յ. Սերեանց «Բազմալեպ» 1932 թ. 12 էջ 582 կամ Armenian in India տպ. 1937 էջ 318):

Ա.ԱՆՅ կամ Ա.ԱՆՍ, գղ. Վասպուրականի Տոսպ գո.ի, Վան քաղաքին մօտ, թուրքերը Իսկէիէ քոյիւ կ'անուանեն, որովհետեւ զիւղս ո'չ միայն Վանայ այլ և ամբողջ Բիւնուսեաց ծովակին նաւահանգիստն է:

Գ. զարէն կը յիշուի զիւղս, ուր եղած է Մեծն Ներսէս կթղ.: Ծովակին կատաղի ալիքները երբեք հանգիստ չեն թողած զիւղիս բնակիչները, որոնք շարունակ սախուլներ են իրենց խեղճ տընակները ծովեզերքէն դէպի վեր փոխադրել: 1900ին Աւանց գրեթէ բոլորովին փոխուած էր իր նախկին տեղէն: Ս. Յովնաննէս անուամբ հին եկեղեցին ալ շուրջ 1830ին՝ ծովն իր մէջ առաւ: Նոր եկեղեցին, որուն նոյնպէս Ս. Յովնաննէս անունը տուած էին՝ նախորդէն 60-70 մէթր հեռու կառուցուած էր. մօտը կար վարժարան մը 80 աշակերտով: 1900ին Աւանց 300էն աւելի հայ բնակիչ ունէր (Միւրախոբեան Նկարագր. Ուղեւ. Բ. 202-212):

Ա.ԱՐԱ.Գ.ԵՏՔ, հին գղ. Սիւնեաց Բաղք. գո.ի: Ա.ԱՐԱ.Կ, հին գղ. Սիւնեաց Աղահէճք գո.ի: Ա.ԱՐԱ.ՅՐ, հռչակաւոր և պատմական դաշտ Վասպուրականի Արտաղ գո.ի մէջ, որոյ վրայ տեղի ունեցաւ Վարդանանց մեծ պատերազմը: Նոյն գո.ին մէջ էր նաև համանուն Աւարայր գիւղը, Տղմուտ գետի մօտ, զոր կը յիշեն մեր պատմիչները: Ընդարձակ քննական յօդուածներ գրուած են Աւարայրի վրայ զանազան անգամներ ազգային թերթերու մէջ: («Ասորագր. հիմ Էայ. 205: «Հիւսուածք», Գ. 117-121: «Արարատ» Ամսագիր Ե. 423-6, 463-470, Զ. 185-188. Եւայլն (Էփրիկեան՝ «Բնաւարհիկ»):

Ա.ԱՐԱՅՐ, կիսամասորեայ, տպ. Կ. Պոլիս 1908, Իսկիւլետարի «Աւարայր» ակումբի հրատարակութիւն:

Ա.ԱՐԻՍ, կը յիշուի Մոկաց մէջ:

Ա.Ի.Ա.Ի., գղ. Սզերդի, 1900ին՝ 35 տուն հայ ունէր:

Ա.Ի.Գ.ԵՐ Անդուան, հայ կաթողիկէ, ծնած Անգարա 1859ին, Պոլիս հաստատուած, Ընդհ. պատերազմի ատեն թանկագին ծառայութիւններ ցրած է հայ տարագրեալներուն, Հոսմի Ս. Քահայանապետէն Արժանեաց շքանշան ստացած: Մեռած է ի Կ. Պոլիս 1919ին (Թեոպիկ «Ամենուն Տարեցոյց» 1920):

Ա.Ի.Գ.ԵՐ Հ. Յովնան. Վենետիոյ Միլիթարեան, լեզուագէտ-բանասէր, ծնած Դաղաթա 1877 Հոկտ. 3ին, տարրական ուսումը ծննդավայրին մէջ կատարելէ ետք՝ տասնամեայ Վենետիկ կ'երթայ Ս. Ղազարու վանքին մէջ աշակերտելու Հ. Ստ. վրդ. Սարեանի: Աշակերտութեան շրջանին մեծ յառաջդիմութիւն ցոյց կու տայ ուսման զանազան մարզերուն մանաւանդ լեզուագիտութեան մէջ: 1895ին ուխտերը կատարելով կ'անդամակցի Միարանութեան:

1899ին Կլերիզեան Արքեպիսկոպոսէն քահանայ կը ձեռնադրուի և այդ օրէն կը սկսի իր հասարակական և գրական կեանքը:

Վանքի աշակերտներուն կը դասախօսէ հայերէն, գրականութիւն և Հայոց պատմութիւն, յետոյ կ'անցնի Մուրատ-Ռափայէլեան վարժարանը՝ ուսումնապետի պաշտօնով (1902—1905), այդ ատեն է (Հ. Սարեանի տեսութեան օրով) որ Հ. Աւգերի ջանքերով Մուրատ Ռափայէլեան վարժարանը կ'արդիանայ և աշակերտներուն թիւը չափէն աւելի կը բարձրանայ:

Հ. Աւգերի իր մէջ յատուկ ձգտում մը զգալով լեզուներու՝ կ'աշակերտի լեզուագէտ և հայագէտ էմիլիոյ Դեղայի, և ապա կը կատարելագործէ լեզուական ուսումը նախ Մոնագոյի և ապա Պերլինի համալսարաններուն մէջ, կը վարէ Բազմավեպի խմբագրութիւնը (1912—1915), ստորագրելով նախապատմական Հայաստանի շրջաններուն և եկեղեցական նիւթերու վերաբերմամբ բազմաթիւ հմտալից յօդուածներ, յատկապէս բանասիրական դեռ մինչև այսօր կարծ ժամանակի համար (1916—7) կը կարգուի վերակացու նորընծայարանի ու ապա մատենադարանապետ: Իսկ յետին տարիներս (1919—1929) կը վարէ Միարանութեան Ընդհանուր Քարտուղարի պաշտօնը և հուսկ 1929ին կ'ընտրուի Ընդհ. Արքայ Միլիթարեան Ուխտին վարելով զայն վեց տարիներ:

Հ. Աւգերի անոնցմէ է՝ որոնք աւելի կ'ամբարենն՝ քան կ'արտադրեն: Գրական կեանքին մէջ մասնակցած է Բազմավեպին, Գեղունիին: Առան-

ձին հատորով հրատարակած է Հայ եկեղեցւոյ ժամագրքին լատիներէն թարգմանութիւնը: Դեռ անտիպ կը մնայ Շարակնոցի լատիներէն թարգմանութիւնը: Գրած է «Համառօտ գրականութիւն» մը և «Համառօտ վարք Միլիթար Արքահօր»:

Հ. Աւգեր՝ վանք այցելող օտարականներու հիւրընկալը եղած, հայ անցեայի մասին անոնց տեղեկութիւններ տալով մեր ազգը ծանօթացուց անոնց:

Ա.Ի.Գ.ԵՐԵՍԱՆ Հ. Մկրտիչ. նշանաւոր մատենագիր և հեղինակ (1762—1854) անդամ Վենետիոյ Միլիթարեան Միարանութեան, ծնած է Անգարա 1762 Նոյեմբեր 11ին և 1774ին՝ հօրը հետ Հոսմ ուխտագնացութեան երթալէ ետք՝ Ս. Ղազարու վանքը կը տարուի, ուսումները և Աստուածաբանութեան ընթացքը աւարտելէ ետք 1786ին քահանայ կը ձեռնադրուի. տասը տարի չափ վանքի աշակերտաց դասատուութիւն կ'ընէ և յետոյ 15 տարի քահանայացու աշակերտաց վերակացուութիւն (տեսչութիւն), ութը տարի ալ քարոզչի պաշտօն կը վարէ: Վանքին մէջ աւրութիւն ուրիշ պաշտօններու՝ 30 տարի առաջիկայ խորհրդական եղած է և 20 տարի ընդհանուր աթոռակալ: Աւգերեան 65 տարի անընդհատ գրած ու թարգմանած է և խոր ձերութեան մէջ վախճանած 1854 Մարտ 3ին:

Հ. Մ. Աւգերեան 1800ին կը սկսի հրապարակ հանել իր գրական գործերը: Նախ Ծաղիկ վարուց սրբոյցը, երկու հատոր (572), այն է Հայ եկեղեցւոյ տօնած Արքոց վարքը՝ «ի կարգ այրուրենից ըստ անուանց»: 1810ին Գիմառնուրեան չորից վերջոց (էջ 136 էջ). նոյնին աշխարհարար թարգմանութիւնը Բանաստեղծութիւն չորս ետեերնու վրայ:—Այդ տարին Դեղ կենաց «որ է հոգեւոր բժշկարարան, յորինեալ . . . ի լեզու Կոստանդնու Պոլսոյ» (319 էջ), որուն Բ. տպ.ը եղած է 1842ին:— 1809ին Բարի խորհուրդներ (143 էջ), 1910ին կը սկսի ապագրել իր ամէնէն մեծ գործերէն մին Լիակասար վարժելի վկայաբանութիւն Սրբոց. 13 հատոր. 7278 էջերէ բաղկացած, որուն տպագրութիւնը կը տեւէ 1810—1815: 1812ին՝ Բան գործնական, «որ է մի միայն խնդրելին ամենայն բանաւորի և գործ բանական: Օրինօք և օրինակօք չորից բարոյական առաքիւնութեանց: Յօրինեալ (ոտանաւոր չափմամբ էջ 216): 1825ին՝ Տարեկան առաժ հոգեչան իմաստից երեւելի պրանց ԺԶ. դարու, ընդ ամսօրեայ իմաստս ԺԹ. դարու, թարգմանութիւն ի լատին բնագրէ (էջ 594):

Ու գեռ մանր կրօնական գրքերէ զատ Հ. Մ. Աւգերեան Առձեռն բառարան Հայկազնեան լեզուին լոյս ընծայած է 1846ին, մանրատառ 800էն աւելի էջերով: Իր գրական կոթողը Բառգիրք նոր Հայկազնեան լեզուին, որուն հեղինակները թէեւ երեք են (Հ. Գ. Աւգերեան, Հ. Ս. Սիւրմէյեան, Հ. Մ. Աւգերեան) բայց մեծագոյն մասը է տառէն մինչև վերջ) Հ. Աւգերեանի գործն է:



Այս բեղմնաւոր մատենագիրը բացի վերոյիշեալ գրքերէն հրատարակած է մեր նախնեաց գործերէն այնպիսի գրքեր՝ որ Եւրոպական քանասէրներու յարգանքին և երախտագիտութեան առարկայ եղած է:

Այդ գործերէն նշանաւորն է Եւսիրիոսի Բրոնիկիին լատիներէն թարգմանութիւնը, տպուած 1818ին (788 էջ): «Աոյն դժուարաքերտն այլ եւ պատուարբեր աշխատութեամբ ծանօթացուց ուսումնատենչ Եւրոպայի՝ իր ի վաղուց ցանկացած Եւսիրիոսի ժամանակագրական պատմութիւնը, որուն յունարէն բնագիրը կորսուած էր. և թէպէտ ունէին Եւրոպացիք քանի մը կտորներ՝ լատին թարգմանութեամբ սրբոյն Հերոնիմոսի, բայց ան չէր կրնար յազեցնել ընթերցողաց յազուրդը» (Հ. Սարեան՝ «Մխիթար» բացատրիկ, էջ 106): «Սոյն օգտակար աշխատութենէն յետոյ, (կը շարունակէ Հ. Ս. Սարեան) ձեռնարկեց Հ. Աւգերեան թարգմանելու Փիլոնի երեք ճառերը, որոնք դեռ տպագրուած չէին: Իտալացի քերթողն ու քննադատն Յակոբ Լէորարտի՝ քննական տեսութիւն մ'ըրած է սոյն հրատարակութեան առթիւ որ թարգմանուած է Բազմալեզուի մէջ (1898 էջ 473), ուր համառօտ տեղեկութիւն մը տալէ յետոյ իր ազգակցաց նոր հրատարակութեան մասին, կ'ըսէ, թէ՛ . . . Հռչակաւոր Հ. Մ. Աւգեր՝ վաղապէս Մխիթարեան կը հրատարակէ այս հասորը իբրև նմոյց մը եւ սկիզբն հրատարակութեանց՝ իր կրօնակցաց մեռն հասած բոլոր Փիլոնեան գրոց, որոնք կը պակսին արեւելեան լեզուաց մէջ: Եւ նոյն մեծանուն Հայրն կը յաւելու այս երկրորդ արդիւնքին ալ առ գիտուն Եւրոպիոյ

Հ. Մ. ԱՒԳԵՐԵԱՆ

այն արդեանց, զոր ունեցաւ 1818ին հրատարակելով Եւսեբեայ Քրիստոսի վեցերորդ գեղեցիկ սպագրուութեամբ: Ուր և մատնանիչ կ'ընէ Լէորարտի հայ և լատին թարգմանչին ուրեք ուրեք գործած սխալները. . . նման միւսներուն՝ գեղեցիկ մեծադիր հատոր մը, զէմ առ զէմ հայերէնով և լատին թարգմանութեամբ և իւրաքանչիւր էջ՝ զարդարուած բազմաքնին ծանօթութեամբ, լոյս կը տեսնէր 1826ին, և Հ. Աւգերեանի անմահ փառաց դասիկներ ընծայելով՝ կը փառաւորէր նաև ազգերնիս յայս բոլոր աշխարհի, և անգամ մը ևս պատկառելի կ'ընէր զայն Եւրոպացուց: Հ. Աւգերեանի կը պարտինք Ս. Եփրեմի գործերուն, Հեթում պատմչի «Պատմութիւն թաթարացի թարգմանութեան, Յովհաննէս Օձնեցւոյ, Սերբիանոսի ճառերուն հրատարակութիւնը, բացի ասկից դեռ շատ մը գրքերու հրատարակութիւնը (տե՛ս Հ. Ղազիկեանի «Նոր Մատենագրութիւն» էջ 260):

Հ. Աւգերեան միակը եղած Մխիթարեանց ամէնէն բեղուն գրողներէն: Ո՛չ ոք եղած է ուրեմն ամբողջ հայ ազգին մէջ իրեն հաւասար, արտադրած ինքնագիր կամ թարգմանածոյ երկերով: Պէտք է դեռ ըսենք որ Հ. Մ. Աւգեր կը թողու շատ մը անտիպ գործեր՝ անհամար էջերով: ԱՒԳԵՐԵԱՆ Հ. Յարութիւն, լեզուագէտ և թարմանիչ (1774-1854) Վենետիոյ Մխիթարեան, ծնած է Անգարա 1774 Յունիսին, 1786ին Վենետիոյ Ս. Ղազարու վանքը կը հասնի իր երէց եղբոր քով, և 1798ին քահանայ կը ձեռնադրուի:

Հ. Յ. Աւգերեան իր կեանքը գրեթէ ամբողջ վանքին մէջ անցուցած է, քահանայութենէն երկու տարի ետք Գրանսիլվանիա կը ղրկուի, ուր ազգայնոց մէջ քանի մը տարի քարոզչի և դաստիարակի պաշտօն վարելէ ետք Ս. Ղազար կը դառնայ: Երկու անգամ Լոնտոն գացած է քիչ ժամանակուան համար, նոյնպէս և Հոմ: ուր ներկայ եղած է Գրիգոր ԺԶ. քահանայապետին ընտրութեան:

Վանքին մէջ զլիաւոր պաշտօնն եղած է՝ հիւրընկալի վանքն այցելողները և սիրելի եղած է բոլոր օտարներուն իր զուարթ բնաւորութեամբ:

Իր երէց եղբոր (Հ. Մկրտիչ Աւգերեան) նման աշխատած է ծանօթացնել հայ ազգը Եւրոպայի իր պատուական աշխատասիրութիւններով: Հայր Յ. Աւգերեանի անունը շատ սերտօրէն կապուած է հոյակաւոր Լորտ Պայրընի հետ: Անգղիացի քերթողը երբ 1816ին Վենետիկ գալով Ս. Ղազար այցելեց, իրբև քաջ անգլիագէտ Հ. Յ. Աւգերեան ընդունեց զինք, և բնական է որ երբ

մեծ քերթողը հայերէն ուղեց սորվիլ՝ իրեն ուսուցիչ է. Յարութիւնը պիտի ընարէր:

Շատ անգլիացիներ, լսելով որ Պայրընը հայերէն սորված է՝ իրենք ալ հետեւած են անոր, դասատու ունենալով միշտ է. Յարութիւնը որ Պայրընի հետ, վարժապետ և աշակերտ՝ քերականութիւն մը պատրաստեց որոնք քանի մը անգամ տպագրուեցան:



է. Աւգերեան քերականութեան յետոյ ձեռնարկեց Անգղ. և Հայ ու Հայ և Անգղ. բառգիրքներուն ձեռնտուութեամբ և արդեամբք Յովհ. Պրէնտ հայերէնագէտ անգղ. զիպցոյն: է. Աւգերի

է. ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.Ի.ԳԵՐԵԱՆ

անդրանիկ հրատարակութիւնն եղած է Բառարան համարօտ ի գաղղիականէ ի հայ, տպուած 1812ին (մօտ 600 էջ), որ 1840ին կրկին տպագրութեան արժանացաւ: 1816ին լոյս ընծայեց Բառարան համարօտ ի հայէ ի գաղղիական, 700 էջ: 1817ին լոյս ընծայեց Քերականութիւն անգլիական եւ հայերէն (էջ 183), 1819ին՝ Քերականութիւն հայերէն և անգլիական էջ 336 որ երրորդ տպագրութեան արժանացաւ: 1821ին լոյս ընծայեց Բառարան Անգլիերէն եւ Հայերէն (983 էջ) որ 1868ին կրկին տպուեցաւ: 1824ին՝ Բառարան Հայերէն եւ Անգլիական (664 էջ), որուն համառօտը տպագրուեցաւ 1825ին ի Կալկաթա (319 էջ): է. Աւգերեան ունի զեռ իտալերէն, ֆրանսերէն լեզուով գրքոյկներ վանքը և մեր ազգը օտարներուն ճանչցնելու նպատակաւ: 1821ին հրատարակած է Բացատրութիւն չափուց եւ կոնոց նախնեացը, (207 էջ) և թարգմանած է Միլտոնի Գրախ կորուսեալը՝ արձակ, գրարար և լոյս ընծայած է Ն. Լամբրոնացոյ Ասեմբլանութիւնը:

Հայր Աւգերեան բաց ի հայերէնէ և տաճկերէնէ, գիտէր՝ յունարէն, երբայցերէն. լատիներէն, իտալերէն, ֆրանսերէն, անգլիերէն, հունգարերէն և Գերմաներէն: «Հարազատին նրման, կը գրէ է. Սարեան (Մխիթար բացառիկ էջ 113) է. Յարութիւն ևս՝ վանական կառավարութեան մէջ երկար տարիներ զործակցութիւն ունեցած է, քսան տարւոյ չափ ընդհանրական

քարտուղարի և առաջիկայի պաշտօն վարելով, և ինչպէս որ Եղբորը վիճակին վրայ նախանձելով ետեէն թուր հասեր էր վանք՝ թողլով հայրենի զիրկը, նոյնպէս անոր մահուընէն 8 ամիս վերջը՝ նոյն գեղեցիկ նախանձով վառուած, կը թռչէր դարձեալ անոր ետեէն զէպ ի երկինք, 81 տարեկան՝ ծանրաբեռն ամօք և արդեամբք (1854 Նոյեմբեր 24ին Ս. Ղազարու մէջ): է. Յ. Աւգերեանի մահուան առթիւ գրուած է «Բազմալեպ»ի մէջ 1854 էջ 376:

Ա.Ի.Գ.Ա.Ա.Ղ.Ա.ՈՒՍ. Վաղաշեն: Ա.Ի.Գ.Ա.Ի.ԿԵԱՆ Թաղեոս, բանասէր և խմբագիր, յօգուած ունի Հանդէս Ամսօրեայի մէջ 1926 էջ 396: Աւղայրէկեան Երեան կը բնակի, ուր 1919ին խմբագիրն եղած է Կայծ հասարակական ևն (տե՛ս) Մենչեիկներ թերթին, և 1922ին Հայկոսպի սեղեկասու «Կոսպերատիվ յերկարաթաթերթ»ի, (միայն երկու թիւ լոյս տեսած): Կենսագրականը և այլ մանրամասնութիւններ տեսնել փորձել Յաւելուածին մէջ:

Ա.Ի.Գ.Ա.ԵԱՆՅ. Մ. տե՛ս Աւղայեանց: Ա.Ի.ԵԱՆ, «զաւեշտական եռօրեայ ապա կիսամսեայ» թերթ, 1908-9-9-10 Գոհիրէի մէջ լոյս տեսած է, արտօնատիրութեամբ Վ(րդանէս) Քիւչիկեանի (Թօփալ Շէյթան), 1914-18՝ Պոլիս: Ա.Ի.ԵԱՆՍԱՐ Արժեցի, 1220ին Խորանաչատ վանքի աւագ խորանը շինել կու տայ իր ծախքով: Ա.Ի.ԵԱՆՍԱՐ ԱՍՏՈՒԱՄԱՄԻՆ տե՛ս Ավիխու...: Ա.Ի.ԵԱՆՍԱՐ տե՛ս Ալիսաս:

Ա.Ի.ԵԱՆՍԱՐԵՐ, «կրօնական, ուսումնական, բնականական և քաղաքական շարաթաթերթ» (Բողոքական քարոզիչներու օրկան): Տպ. Կ. Պոլիս 1855-1915: Խմբ. ձ. Կրին, փոխ-խմբ. է. Պարնըմ, ապա խմբ. Մեքալըմ:

Ա.Ի.ԵԱՆՍԱՐԵԱՆ Արեալի Մ. պատասխանատու տնօրէնն եղած է լոյս «ամսօրեայ հանդէս»ին վանի մէջ հրատարակուած 1913-1914:

Ա.Ի.ԵԱՆՍԱՐՆԻՆ ՓՈՂՐ, ամսաթերթ, (հին աւետարականներու օրգանը). տպ. Տիթրոյիթ 1919:

Ա.Ի.ԵԱՆՍԱՐՆՈՅ, աւան Արցախի վարանդա գու. ի մէջ, այլազգիք Չանախի կը կոչեն: Եկեղեցին է Ս. Աստուածածին, կառուցուած չորս սիւներու վրայ՝ փոքրիկ կաթողիկէով. դրան ձակաթի քարին վրայ կայ «թվ. Ռձ.»: 1900ին 1822 բլնակիչ ունէր:

Գիւղաքաղաքիս մօտ կը գտնուի Կուսանց Անապասը (տե՛ս) և հին Մելիքներու մի քանի ապարանքներ, ոմանք կործանած: Արեամեան հարաւակողմը կը գտնուի հին գերեզմանատունը, ուր կան բազմաթիւ ուշադրութեան արժանի

քանդակազարդ տապանաքարեր: (Էփրիկեան՝ «Բնագիտական» ֆաղուած Բարխուղարեանի «Արցախ»-էն էջ 94-95):

ԱԻԵՏԵԱՆ Աւետ, վաստակաւոր դերասան: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅԵՐ:

ԱԻԵՏԵԱՆ Գրիգոր, ժողովրդական դերասան՝ Բագուի և Երևանի մէջ: Ծնած է 1870ին Ռաշտ (Իրան), Շուշիի և Բագուի բէալական դպրոցները ուսանելէ ետք դերասանութեան կը նուիրուի: Աշխատակցած «Արձագանգ», «Մշակ», «Նոր Դար», «Յուշարար» թերթերուն: Հրատարակած է 2 հատոր հաւաքածոյ, որոնց մէջ ամփոփուած են իր հեղինակած վոսվիլներն ու զաւեհները: Թարգմանութեանց թիւը 70ի կը հասնի: Պարսից շահէն շքանշան ստացած է: 1912ին Բագուի մէջ տեղի ունեցած է իր բեմական 25ամեայ յորելեանը: 1932ին լրացաւ իր 45ամեակը և այդ առթիւ Երևանի մէջ գրեց «45 տարի հայ բեմին վրայ» 194 էջնոց գիրքը որ 1933ին լոյս տեսաւ:

ԱԻԵՏԵԱՆ Մանուկ (նախկին տեղակալ), ծնած 1890ին և Կեսարիոյ Ս. Կարապետ վանքի երկրորդական վարժարանէն վկայուած «Գիտութեանց և Գրականութեանց պատկաւորի» ատիղոսով: Տարի մը դպրոցի տեսչութեան պաշտօն վարելէ վերջ, 1914ին մտած է Պոլսոյ զինուորական վարժարանը ուր ընթացքը աւարտելով 1917ին՝ իբր մարդիչ սպայ թուրք բանակին մէջ կը ծառայէ: Ապա քանի մը ընկերներու հետ առաջատանաւորով ու ծովը կտրելով կ'անցնին Կովկաս ու կը միանան Անդրանիկի բանակին:

Անդրանիկի Եւրոպա մեկնելէ ետք ընկերներու թախանձանքով դարձեալ մտած է Հայկ. Հանրապետութեան Ութերորդ գումարը՝ իբր վաշտապետ և ծառայած է մինչև Ղարսի անկումը:

Փետրուարեան յեղափոխութեան ատեն Պարսկաստան-Պաղատ-Պէյրութ ճամբով Ֆրանսա անցած է:

Ներկայիս (1938) Դաշնակից և հայ բանակներու նախկին Հայ Մարտիկներու Կեդր. վարչու-



ԱԻԵՏԵԱՆ ՄԱՆՈՒԿ

թեան նախագահն է, և միաժամանակ կը վարէ սոյն միութեան օրկան «Հայ Մարտիկ» թերթի խմբագրութիւնը՝ Մարտէլի մէջ: Հասցէն է M. Avédian 59 rue Bernard du Bois Marseille (France).

ԱԻԵՏԵԱՆ Յարութիւն, երկրաչափ-ճարտարապետ, ծնած Ատանա 1904ին: Նախնական կրթութիւնը ստացած է իր ծննդավայրի Արգարեան բարձրագոյն, ապա Կիլիկեան բարձրագոյն վարժարանները: Իբր երկրաչափ ճարտարապետ վկայական կը ստանայ Բարիզի École Spéciale de Travaux Publics-էն՝ 1933ին:



Բարիզի յայտնի շինութեանց մէջ աշխատած է մեծապէս դնահատուելով, այդ շինութեանց մէջ մեծապոյն փորձառութիւն ձեռք ձգած է: Հաստատուած է Պէյրութ և հոն կառուցուած Արգարեան վարժարանի շինութիւնը ինք ղեկավարած է՝ ամենազոյգն փոխարինութիւն մ'իսկ չակնկալելով: Հասցէն է Haroutiun Avédian, Avenue Petaine vis à-vis l'église de Capucins, Beyrouth (Liban):

ԱԻԵՏԵԱՆ ՋՐՆԹԼՈՒՄ (կամ Աւետ Զեքրումեան), Կալկադայի մէջ 1811ին ունեցած է իր սեփական տպարանը, ուր այդ թուին տպած է Այրենարան, 1813ին լոյս ընծայած է իր հեղինակած Տեսակ որ կոչի Ծագկակալ. ի սմայ պարունակին համառօտ Աշխարհագրութիւնք, և պատմութիւնք երկնային Լուսաւորաց, նաև ժամանակագրութիւնք և Աստիճանք» ևւայլն... Աշխատասիրութեամբն Ջընթլում Աւետեան կոչեցելոյ (ընդամէնը 96 էջ): Աւետեանի տպարանին մէջ կը տպուի վերջին անգամ 1815ին՝ Համառօտ քաղաքի սուրբիւն եկեղեցւոյ (Մարդար Խօճենց): (Թեոդիկ՝ «Տիպ ու Տառ» էջ 174):

ԱԻԵՏԵԱՆ ԲԼՈՒՐ տե՛ս Արեւոյ Բլուր:

ԱԻԵՏԵԱՆ ԽԱԶ, տեղի Ծագկոտն գո.ի, ուր ըստ Յայժաւուրներու Քրիստոս Սուքիստեանց մարտիրոսաց երևցած է:

ԱԻԵՏԻՍ Կրդ. Էջմիածնի, 1599ին Աթոռակից Դաւիթ Դ. վաղարշապատեցի: 1613ին կ'այցելէ Երուսաղէմայ Ս. Յակոբի վանքը՝ եպիսկոպոսական ձեռնադրութեան համար, միաբանութեան

և իշխանաւորաց հրաւերով կը վկայէ նազարէթ գաղթը իր Պատմութիւնն եւ վարձ Գրիգոր պսրք. Պատմիքի գրուածքին մէջ: Գաղատիոյ վանքի մատենադարանին Ձեռագրին մէջ (թ. 128, էջ 273) կը գտնուի Աւետիս կթղ.ի Երուսաղէմէն գրկած մէկ կոնդակի օրինակը, որուն մէջ կը յիշէ իր Ս. Յակոբ վանքն այցելելը և Պարոնաւերի եպ. ձեռնագրուելը Չատկի մեռելոցի օրը: Աւետիս կթղ. վախճանած է ըստ Օրմանեանի (Ազգայսմ. էջ 2341) 1620 1624ին: (Աղաւնունի՝ «Միաբանք»): Աւետիս կրդ. մինչև 1622ի յիշատակարաններուն մէջ կը յիշուի:

ԱԻԵՏԻՍ Պետրոս ԺԳ. Կարողիկոս-պատրիարք տե՛ս Արիփարեան Աւետիս:

ԱԻԵՏԻՍ եպ. Կեսարիոյ, ըստ Պայեան եպ.ի (Հայ վանօրայք 42), 1685ի յիշատակարանի մը մէջ կը յիշուի Ս. Կարապետ վանքին 24 սենեակ եւ ջրհոր մը շինել տուած է:

ԱԻԵՏԻՍ եպ. Կեսարիոյ 1825—9 «Հայր Աւետիս» յորջորջուած, ծնած Մանճուսունի մէջ, միաբան Կեսարիոյ Ս. Կարապետ վանքին, 1820ին քննչութեան պաշտօնով այցելած է Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքը: Վախճանած է 1829ին ըստ Այսոյանի (Հայ Կեսարիա էջ 934) Առաջնորդ ընտրուելէ առաջ գործակից եղած է նախորդին, Կարապետ եպ.ին Պոսոյ պատրիարքարանն է որ զինքը 1820ին Երուսաղէմ կը զրկէ իբր քննիչ իրեն հայրենակից էտիրնէի առաջ, Մեսրոպ եպ. Տէօփէթեանի հետ: Աւետիս եպ. Ս. Կարապետ վանքի մէջ կը թաղուի: Իր տապանաքարն էր.

Անեղ վնիւ վերին կոյման,
 Հաւիւրեաց զիս յայս սապան,
 Տե՛ր Աւետիս յորջորջական,
 Չորեքամեայ տե՛ր հոգեկան:
 Ուր հանգիպիք սրբոյ սեղոյս,
 Գերեզմանի հանգուցելոյս,
 Տուր գոգորմի ննջեցելոյս,
 Զի հանգիցե յարկ վերնալոյս,
 ՌՄՀԸ Ապրիլ ԺԳ (=1829 Ապրիլ 14)

ԱԻԵՏԻՍ եպ. Հաղբասցի, միաբան Երուսաղէմայ Ս. Յակոբ վանքին, ուր 1473ին ընդօրինակած է Ոսկեփորիկ հաւաքածոյի մէկ մասը (Տառեան Մայր Յուցակ էջ 449), 1485ին այ Աւետարան մը ընդօրինակած է (Աղաւնունի «Միաբանք» էջ 40):

ԱԻԵՏԻՍ եպ. Հաղբասի, 1657ին, 1661ին և 1666ին կը յիշուի յիշատակարանաց մէջ:

ԱԻԵՏԻՍ եպ. Պոնացի, կը յիշուի 1630ին իր աշակերտ Գրիգոր ծաղկողէ: Կը յիշուի նաև 1635, 1637 թուին, կը վախճանի 1648ին:

ԱԻԵՏԻՍ եպ. Սասունցի, միաբան Երսղ.ի Ս. Յակոբ վանքին, կնիքը 1754 թուականը կը կրէ: 1784ին Սոսյ թէնդորոս կթղ.ի օժման կը մասնակցի, Պոսոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ վանքի խորհրդական 1793ին: Կը վախճանի 1802ին: (Աղաւնունի՝ «Միաբանք» էջ 41):

ԱԻԵՏԻՍ եպ. Վասպուրականի, կը յիշուի 1785ին:

ԱԻԵՏԻՍ եպ. Տաթևոյ (?) կը յիշուի 1411ի յիշատակարանի մը մէջ:

ԱԻԵՏԻՍ արեղայ, եզր. Վարդան Բարեբղջիկի 1337ին Երուսաղէմ կ'այցելէ և Սիսի մէջ եղբայրը գտնելով՝ միասին Ղրիմ կ'երթայ և հոն կը վախճանի 1377ին (Աղաւնունի՝ «Միաբանք» էջ 39):

ԱԻԵՏԻՍ, Ռուսահայ աշուղ:

ԱԻԵՏԻՍ Ոսանցի, ըստ Առաքել Դաւրիթեցի պատմչի, Աւետիս Ազրակի Բարլասան զիւղը ծառայութեան մտած էր այլազգի իշխան Բաքտար աղայի քով: Ծառայակիցները լուր կու տան իշխանին թէ «Աւետիս կ'ուզէ իր կրօնքը թողուլ և մեր կրօնքը ընդունիլ»: Երբ կը ստիպեն Աւետիսը որ ուրանայ քրիստոնէութիւնը, ան անդրդուելի կը մնայ մինչև նահատակուիլը: Նահատակին եղբայրը Թարառուկ՝ քահանաներով կ'երթայ եղբորը մարմինը կ'առնէ և Առակ զիւղը թաղել կու տայ:

ԱԻԵՏԻՍ Գրիչք և Սաւցողք. 1443ին Աւետիս արեղայ զրիչ Դր. Տաթևացւոյ «Լուծմունք Պորփիրի» գրքին, ստացող՝ Սարգիս բարունապետ—1449ին զրիչ Կաֆայի մէջ:—1470ին Աւետիս հայր խօջա Չատէի կը գնէ Աւետարան մը և Ոստանի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ կը նուիրէ: — 1625ին զրիչ Հայեպի մէջ: — 1628ին ստացող Մոկաց Դաշտ զիւղին մէջ: — քն. 1633ին զրիչ ի Կ. Պոլիս: — 1633ին զրիչ Աւրնդանայ զիւղին մէջ: — Երէց զրիչ Թուխատու մէջ: — Աւետիս զրիչ Շարականի Աւդոնց զիւղի մէջ, Նոյնն է 1633ի և 1659ի յիշատակուած գրչին հետ: — 1666 և 1675ին զրիչ Երեւանի մէջ: 1667ին զրիչ Արարկիրի մէջ, կը յիշուի 1672ի, 1678ի և 1680ի յիշատակարանաց մէջ:

ԱԻԵՏԻՍ վրդ. Կաւեոյ Առաջնորդ՝ 1756ին Մուսուրկու Ս. Լուսաւորիչ վանքին աւետարան մը կը նուիրէ:

ԱԻԵՏԻՍ Լուսին տե՛ս Այնեան:

ԱԻԵՏԻՍ Զուղայեցի, զիւղաւազ, 1691ին ծանր տուգանքէ մը փրկած է Ամենափրկիչ վանքը, Հիւսէին Շահի ստիպումով յակամայս իսլամանայով՝ Մէհէմէտ Հիւսէին կոչուած է: Երկու ազլիկները Շահին կանանոցն էին, և այդ պատճառաւ ունէր ազդեցիկ զիրք: Զբաղած է միշտ

Հայոց գործերով: Նահապետ Եղեռնացի կթղին մտերիմն էր, և երբ Ստեփանոս Զուղալիցի անոր ամուսնը յափշտակեց, Աւետիս համոզեց Շահը որ գահընկէց ընէ ու բանտօրէիէ զայն 1000 թուաման տուգանքով: (Ալպոյաճեան՝ Թէոդիկի «Ա.Մ. Տարեցոյց» 1926 էջ 616):

Ա.Ի.ԵՏԻՍ, Ամերիկահայուն երգիծարանական Տարեցոյցը, տպ. Ֆրէզնո 1921:

Ա.Ի.ԵՏԻՍ, «Ժողովրդական ամենօրեայ հայաթերթ». տպ. Կ. Պոլիս 1925: Վարիչ տնօրէն Շաւարշ Յակոբեան:

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ Ա.ԼԵՏՏ. Ա.ԼԵՏԵԱՆ Ա.ԼԵՏ:

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ Ա. ունի մետաքսի թել քաշելու երկու գործարան Ռուսնուզի մէջ:

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ սիկիմ Եւփիմ տե՛ս Անայիս:

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ Մարգար, գրող Թիֆլիսի մէջ. կենսագրական ծանօթութիւններ կը պակսին: Տե՛ս ՅԱԻԵՆՈՒԱՅՐ:

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ Միգաս, ատամնաբոյժ, տե՛ս ՅԱԻԵՆՈՒԱՅՐ:

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ Մկրտիչ կամ Թերլեմեզեանց, կրակոտ ճառախօս, խոհուն միտք և հիմնադիր Արմենական կուսակցութեան: Բնիկ Վանեցի, սա իր վարպետ Մկրտիչ Փորթուզալեանէն ներշնչուած՝ առաջինն եղաւ որ հիմքը դրաւ Արմենական կազմակերպութեան և ինքն եղաւ առաջին անգամ զէնք վերջնողը: 1886ին պայքարեցաւ Վանի ջոջ աղաներու անարդարութեան համակերպողներու դէմ և Կ. Պոլիս անցնելով Կ. Նաթանեանի և Գ. Իսաղիլեանի հետ բանտուեցաւ ու երբ շոգենաւով Պէնկազի կ'աքսորուէր՝ ջուրը նետուեցաւ եւ խոյս տալով Մարսէյ անցաւ և աշխատակցեցաւ իր վարպետին Մ. Փորթուզալեանի «Արմէնիա» թերթին: Պարսկաստան անցնելով Աթրպատակ անի վարժարանաց ընդհանուր տնօրէն կարգուեցաւ: 1895ին գաղտնապէս կրկին Վան վերադարձաւ Արմենական կուսակցութիւնը վարելու համար:



Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ ՄԿՐՏԻՉ

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ Յակոբ = Արժուճի, ծնած Վան 1873ին, նահատակուած 1915ին: Հրապարակագիր և յեղափոխական գործիչ: 1890ին Պոլիս երթալով կը մտնէ Հնչակեան կուսակցութեան շարքերը: 1895ի Պապը Ալիի ցոյցին կը փախչի Պուլկարիս և բացակայութեանը մահուան կը դատապարտուի Աթէնք, Եդիպոս և Կովկաս քանի մը տարի դեգերելէ վերջ կը նետուի Մետեխի բանտը: 1898ի վերջեր կ'անցնի Վան ուր եւ կրկին կը ձերբակալուի (1903ին): Ազատելով բանտէն, 1904ին կ'անցնի Պարսկաստան և ուսուցչութեամբ կը պարապի Սահմանադրութեան հոշակումին Պոլիս կը վերադառնայ զբաղելու կուսակցական գործերով: Ազգային երեսփոխան Կէտիկ Փաշայի շրջանէն, կը նշանակուի անգամ՝ վանօրէից խորհուրդին: Աշխատակցած է Պոլսական և արտասահմանի բաղձաթիւ թերթերու: (Թէոդիկ՝ «Ազատօն» էջ 44):

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ Յակոբ = Արժուճի, ծնած Վան 1873ին, նահատակուած 1915ին: Հրապարակագիր և յեղափոխական գործիչ: 1890ին Պոլիս եր-

թալով կը մտնէ Հնչակեան կուսակցութեան շարքերը: 1895ի Պապը Ալիի ցոյցին կը փախչի Պուլկարիս և բացակայութեանը մահուան կը դատապարտուի Աթէնք, Եդիպոս և Կովկաս քանի մը տարի դեգերելէ վերջ կը նետուի Մետեխի բանտը: 1898ի վերջեր կ'անցնի Վան ուր եւ կրկին կը ձերբակալուի (1903ին): Ազատելով բանտէն, 1904ին կ'անցնի Պարսկաստան և ուսուցչութեամբ կը պարապի Սահմանադրութեան հոշակումին Պոլիս կը վերադառնայ զբաղելու կուսակցական գործերով: Ազգային երեսփոխան Կէտիկ Փաշայի շրջանէն, կը նշանակուի անգամ՝ վանօրէից խորհուրդին: Աշխատակցած է Պոլսական և արտասահմանի բաղձաթիւ թերթերու: (Թէոդիկ՝ «Ազատօն» էջ 44):

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ Յովնանէս, տնօրէն ուսուցիչ, ծն. Օրտու, երկրագործական ուսումը աւարտած է Գերմանիոյ մէջ 1896ին, և Սելանիկի երկրագործական վարժարանին մէջ գասատուութիւն ընելէ ետք Սինանեան ձանիկի մահէն ետք ինք կ'անուանի վարժարանի դեր-տնօրէն: Աւետիսեան վերջէն Տրապիզոն կը փոխադրուի և Սահմանադրութեան հոշակումին (1908) էնկիւրիի նահանգին երկրագործութեան տնօրէնութեան կը կոչուի և մեծ պատերազմի ընթացքին կը նահատակուի:

Աւետիսեան ջրբաշխական գործերու մէջ մասնագէտի համբաւ կը վայելէր, գերմաներէն եւ թուրքերէն երկու արժէքաւոր երկերու հեղինակն է. մին ոռոգման (Irrigation) և միւսն ալ ուրդման (drainage) գործողութեանց նուիրուած: (Մակարեան՝ «Յուշագիրք» էջ 153):

Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆ ՕՃԵԿԻ, նկարիչ. քանդակագործ. աւարտած կրօնիք Արուեստներու պետական վարժարանը և ապա Հոռմի Գեղարուեստից պետական բարձրագոյն Ակադեմիայի մէջ արուեստին ընտելացած:

Դեռ ուսանողական տարիներէն Վիեննայի եւ Հոռմի մէջ մասնակցած է ցուցահանդէսներուն, 1929էն սկսեալ է մանաւանդ՝ Եդիպոս երթալէ ետք, որ յայտնաբերած է իր տաղանդը: 1929ին, 1931ին, 1934ին և 1936ին ցուցադրած է «Մալօն տիւ Քէր»ի մէջ:

Մասնակցած է նոյնպէս Աղեքսանդրիոյ Սալօնին, 1931 թուականին Եդիպոս գտնուած չըրջանին, դարձեալ իր մասնակցութիւնը զրկած է Լօս Անճէլլօսի (Մ. Նահանգներ) International print Makers Exhibitionին, 1931, 1933 և 1934 թուականներուն և Պուքրէշի Հայ Արուեստի Ցուցահանդէսին, 1931ին:

Անհատական ցուցահանդէսներ տուած է Գահիրէի մէջ՝ 1932ին և Ադեքսանդրիոյ մէջ 1934ին:

Աւետիսեանն ևս մէջը կը գտնուի այն հատորին՝ զոր 1935ին հրատարակեց Ֆրանսացի մտաւորական պ. Մօրիք Պրէն, ուր կ'երևան Եգիպտոսի բոլոր նկարիչներն ու քանդակագործները: Իր գործն է Ազա Կարապետ Գալուստեանի կիսան դրին: (Յ. Արամեան՝ Արմաւենի էջ 162—4) տե՛ս նաև ՅԱԻԵ, ՈՒԱՄԻ:



ԱԻԵՏԻՍԵԱՆ ՕՆՆԻԿ

ԱԻԵՏԻՔ Եղովկիացի (1657—1711) պատրիարք Կ. Պոլսոյ (1702—6) և Երուսաղէմի (1702—6): Ծնած է Թօքաթ (Եւզոնկիա): Հայրը Պաղտասար՝ Զուլիակ էր, իր պապն էր Տէր Սարգիս անունով քահանայ մը, որուն քով կարդալ սորվեցաւ մինչև 7 տարեկան: 1664ին իր պապը 110 տարու վախճանելով, Աւետիք ուսաւ իր կնքահօր Տէր Պետրոսի քով, հօրմէն ալ ջուլիակութիւն սորվեցաւ: 1672ին Պէլէնկցի Յակոբ անունով վարդապետ մ'եկաւ Թօքատ, և Աւետիք, որ 15 տարու էր, այդ վարդապետին քով փոքրաւորութեան մ'աւաւ, որոշելով կուսակրօն ըլլալ: 1675ին սարկաւազ, 1681ին արեղայ ձեռնադրուեցաւ, և առաջնորդ կարգուեցաւ Սեպուհ լերան Ս. Յակոբայ վանքին Յետոյ գնաց Երզնկա, ուր շինեց Կապուու Ս. Յակոբայ վանքը և նորոգեց Տիրանաչէնի վանքը: Ուղելով կառուցանել նաև Երզնկայի Ս. Աստուածածին եկեղեցին, որ մեծ երկրաշարժին փլած էր, Աւետիք Պոլիս կ'երթայ, շինութեան հրամանը ձեռք կ'անցընէ, և Երզնկա դառնալով կը շինէ եկեղեցին: Կը շինէ նաև Բասենի Պապաքէօյի (Տէլի Պապայի) եկեղեցին: Ապա կ'երթայ Կիւմիւլչիանէ՝ ուր Սահակ վրդ. ծայրաչնութեան աստիճան կու տայ իրեն: 1691ին էջմիածնայ մէջ եպիսկոպոս կը ձեռնադրուի Եղիազար կթղէն: Կը դառնայ Երզնկա, ուր կը հաստատուի: Աւետիք կը գտնուէր Էրզրում, երբ 1701ին իր պատրիարք ընտրուելուն որոշումը հաղորդուած էր իրեն՝ Պոլիս երթալու պաշտօնական հրամանագրին հետ: Այս ամէնը երկարօրէն պատմէ ինքն իսկ՝ ինքնուրոյն ոճով մը իր

ինքնագրութեան մէջ, զոր էտուա Տիւրքիէ Ֆրանսացի հայագէտը գտած է Ֆրանսայի Արտաքին Գործոց Դիւանին մէջ, և զոր հրատարակած է Մասիս 1874ին: Աւետիք պատրիարքական կապան զգեցաւ էտիրնէ, և իրեն փոխանորդ կարգեց Կ. Պոլսոյ մէջ Ամասիացի Յովհաննէս վրդ. Ենոյն ատենները Պոլիս եկան Երուսաղէմէն 4 վարդապետներ և սկսան ամբաստանել Ամղեցի Մինաս պատրիարքը թէ չ'ուզեր վճարել միաբաններուն հազուստի և ուտեստի ծախսը, թէ 4 սնտուկ եկեղեցական սպասներ զրկած է Պոլիս, որոնք գրաւի զրուած են, և թէ 100,000 զրուչ պարտքի տակ մնացած է վանքը: Ասոր վրայ Աւետիք եղաւ Երուսաղէմի պատրիարք, 1702 յուլիս 10ին, պահելով Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը, իր կողմէն նազրը զրկեց Երուսաղէմ Կարապետ անուն անձը, որպէսզի քննէ Մինաս պատրիարքին հաշիւները և վարէ Երուսաղէմի գործերը: Աւետիք դարձաւ Պոլիս, ուր հայ ժողովուրդը փառաւոր ընդունելութիւն ըրաւ իրեն: Սակայն Աւետիք հակառակորդներ ալ ունէր, Սահապայ Եար Երեմիա, Թիւթէլ Օղլու Յովհաննէս, Թիւթէլ Օղլու Նիկողոս, քահանայի մը ձեռքով բողոքազիր մը ներկայացուցին և ջանացին հրաժարեցնել Պատրիարքը, բայց չ'յաջողեցան: Այդ միջոցին՝ Ֆրանսական դեսպանին թարգմանը, որ հայ մըն էր, Սարգիս Սահաթճի, յանուն պ. Ֆէրիօշի դիմեց Աւետիք պատրիարքին և խնդրեց որ Եփրեմ Ղափանեցիի նզոված և պատժել տուած երեք էտիրնէցի քահանաներուն համար միջամտէ: Աւետիք յաջողեցաւ իր մօտ բերել տալ զանոնք: Ապա, մտերմացաւ Գարուչիներու վանահայր Հ. Յակինթոսին հետ, և իր մօտ հրաւիրեց նաև Մխիթար վրդ. Սեբաստացին, որ էտիրնէցի երեք քահանաներուն հետ Գարուչիներու վանքը պահուրածէր, երեք քահանաները դացին Աւետիքին քով, սակայն Մխիթար վաճառականի ծպտումով խոյս տուաւ Իզմիր, անկէ անցաւ Մօռա և ապա Վենետիկ: Աւետիք պատրիարք որ աւելի յաճախ էտիրնէ կը գտնուէր քան Պոլիս, Ամասիացի Յովհաննէս վրդ. Երուսաղէմ զրկեց իր փոխանորդ, և Կ. Պոլսոյ պատրիարքական փոխանորդ կարգեց Իզմիրցի Յովհաննէս վրդ. որ խստութեամբ վարուեցաւ Հայ Հռոմէականաց հետ: Շահամիր օղլու Առաքել, Ոսկերիչ Սրապիոն և Չաղուլ Աբրահամ, որոնք՝ Աւետիքի պատրիարքութենէն առաջ՝ Պոլսոյ մէջ Երուսաղէմի գործակալներն էին, ուրիշ քանի մը անձերու հետ, դատ բացին Աւետիք պատրիարքի դէմ, վերջին տարւոյ Երուսաղէմի վանքին հա-

չիւնները պահանջելով, սակայն դատը կորսնցուցին: Քիչ ետք յուլիս 14ին պատրիարքը էտիր-նէէն դարձաւ և զնաց Սկիւտար, իր սեփական տունը, ուր կը բնակէր մայրն ալ. սակայն յուլիս 22ին հարկադրուեցաւ երթալ Եէտի Գուլէ և սեպտեմբերի սկիզբները հեռանալ Պոլսէն:

1704ին Աւետիք Պոլիս կը դառնայ և կրկին պատրիարք կ'ըլլայ: Երուսաղէմի պատրիարքութիւնն ալ Աւետիք ստանձնեց նորէն և ատիկա տեղի տուաւ երկարատե դատի մը: Մինաս պատրիարքի կենդանութեան՝ իր Պոլսոյ գործակալներէն մէկը՝ Երեմիա, 22000 զրշ. փոխ կ'առնէ յանուն Երուսաղէմի վանքին՝ Լօթրան անուն Անգլիացի վաճառականէ մը. այս գումարին վճարման երաշխաւոր կ'ըլլան բսկերիչ Սրապիան, Քէօմիւրճի Ալիքսան, Ճինեան Յովհաննէս: Երեմիա և միւս երաշխաւորները դատ կը բանան Աւետիքի դէմ և այդ գումարը կը պահանջեն, յայտնելով թէ վանքին պարտքն է այն և թէ Երուսաղէմի Պատրիարքը պէտք է վճարէ: Աւետիք չ'ընդունիր և դատը կը տեւէ տարի մը: Այդ միջոցին Երեմիա կը մեռնի և միւս երաշխաւորները կ'երթան ստուարացնել պատրիարքին հակառակորդներուն խումբը: Այդ խումբին մէջ կը մտնեն ուրիշ երկու նորեր ալ, պատրիարքական փոխանորդ Մարտիրոս վրդ. Երզնկացի, և քրտի Բեհեա (=գափու քէհեասի) Պալքէսէրցի Հայրապետ, որոնք դրամ իւրացուցած էին պատրիարքարանի հասոյթներէն և որոնցմէ հաշիւ կը պահանջուէր: Այդ խումբին մէջ էր նաև Կիլիկիոյ նախկին կաթողիկոսը, Մաթէոս Սարը՝ որուն Երուսաղէմի պատրիարք ըլլալուն արգելք եղած էր Աւետիք: Պէտք է ըսել սակայն թէ Յրանսայի դեսպան պ. Յրիօլի 1705 տարուոյ մէջ իր կառավարութեան գրած նամակները, որոնց պարունակութիւնը Մառիուս Թօփէն մասամբ համառօտած է իր Երկաթի դիմակով մտրդը գործին մէջ, կը յայտնեն թէ Աւետիք մեծ խոհեմութեամբ և շրջանայեցութեամբ կը պաշտօնավարէ: Սեպտեմբեր 26ին կ'այցելէ պ. Պէրիօլին, և կարգ մը պայմաններ կ'առաջարկէ, որոնք կը մերժուին: Վերջապէս իր հակառակորդները կը զօրանան. 1706 Փետրուար 14ին կը հարկադրուի թողուլ պատրիարքակոն աթոռը, և երթալ Պօնալ տաւրիս Ապրիլ 20ին կ'անցնի Քիոս, փոքրաւորի մը հետ: Հոն պ. Յէրիօլէն վարձուած նաև մը կը մտնէ անգիտակցաբար, որ կը տանի զայն Մեսինա: Ապա կը տարուի Մարսիլիա, և հոնկէ Մօն Սէն Միշէլի մենաստանը՝ Յրանսայի հիւսիսային կողմը: 1709 Դեկտ. 7ին Պասթէյլի բանար կը

փոխադրուի, ուր կը գրէ Ինքնակենսագրութիւնը, ուրկէ կ'ելլէ 1710 Սեպտեմբեր 11ին՝ հումէադաւանութիւնը ընդունելէ ետքը: Աւետիք իր կեանքին վերջին օրերը կ'անցնէ Բարիզ, Սէն Սիւրբիս եկեղեցւոյն մօտերը Ֆէրոս փողոցը, և 1711 Յուլիս 10ին հոն կը մեռնի հազիւ 54 տարեկան, իրեններէն հռու, օտար հողի վրայ: Այս նշանաւոր պատրիարքը թաղուած է Սէն Սիւրբիս եկեղեցին, սակայն իր վրայ դրուած տապանաքարը անհետ եղած է ԺԸ դարու վերջերը:

Աւետիք իր ժամանակի նշանաւոր դէմքերէն մէկն էր: Գործօն յանդուգն, և միանգամայն խոհեմ ու շրջահայեաց, գիտցած է արտակարգ աղդեցութիւն մ'ունենալ իր հօտին վրայ, և շատ սիրուիլ անկէ: Ինքնակենսագրութիւնէն զատ Տիւրքիէ գտած է անոր տաղերը, աղօթքները, կոնդակները, մատեանի մը մէջ որ կը պահուի Յրանսայի Արտաքին Գործոց Դիւանատան մէջ: Ունի նաև տաղեր, հոս հոն ձեռագիրներու մէջ ցանուցիր: Իր արձակը ժամանակին նկարագրել լեզուն է՝ գրաբարի և աշխարհաբարի խառնուրդ մը՝ շատ մը թուրքերէն բառերով: Հիւանդանոցի Տարեցոյց 1901 հշ 117—9, 120—122):

ԱԻԵՏԻՔ Արքեպ. Առաջնորդ Ազրիանապոլսոյ, Կեսարացի, սա և իր յաջորդ Մեսրոպ եպ. Ա. Պոլսոյ առաջնորդ (+ 1840) Երուսաղէմի պատրիարք Թէոդորոս Բ. Վանեցիի օրով (1801—1818), վարչութեան (Կ. Պոլսոյ) որոշմամբ քննչական պաշտօնով Ս. Յակոբի վանքը կ'այցելեն և ձեռք քաշել կու տան այն աշխարհական զանձապետներուն՝ որոնց գործառնութիւններուն հետեանքով տրտունջներ եղած էին (Սաւալան էջ 1139): Ըստ այս վկայութեան Յ. Աղասեանի Ազրիանապոլսոյ Հայ գաղութը գրքին 39 էջին վրայ պէտք է աւելցնել այդ քաղաքին Առաջնորդաց վրայ Աւետիք Արքեպ.:

ԱԻԵՏԻՔ Արքեպ. Լէօպոլսոյ (Լեմպէրկ) 1445ին յանձնարարական նամակներով էջմիածին կ'երթայ առ Գրիգոր կաթողիկոս և կը հաստատուի իր պաշտօնին մէջ, ինչպէս գրած է կթՊԸ ՊՂԴ (1445) թուին և Օգոստոս 17ին՝ առ եպիսկոպոսն Լեհաց «Եկն Տէր Աւետիք եպիսկոպոսդ, սիրելի որդիդ մեր՝ առ մեզ, և իրր զձեր վկայական թուղթն, և զՀոռոմ եպիսկոպոսի նշանն, և զպարոն Ստեփանին, և մեք զէր Աւետիքդ՝ որ ձեզ եպիսկոպոս էր բնական, ա՛յլ կրկին և վերստին հաստատեցաք. և զՍէչով քաղաքն՝ իւր գեղանով՝ շնորհեցաք իւրն սեփական թեմ և վիճակ. . . » Այս պատճառաւ է որ Լէօպոլսոյ եպիսկոպոսները զիրենք «Պուղտանայ Հայոց» ալ եպիսկոպոս կ'անուանէին:

ԱԻԵ

Հ. Ալիշանի «Կամենից»էն կենթադրուի (էջ 134) որ Աւետիք նախապէս Կամենից քաղաքին հոգեւոր հովիւն եղած է: Ինք եղած է Լեհահայոց երրորդ եպիսկոպոսը, իրեն նախորդներն եղած են Յովհաննէս և Գրիգոր: Աւետիք 1460ին կը վախճանի (Տե՛ս այս եջին վրայ Աւետիք եպ. 1367ին ձեռն):

ԱԻԵՏԻՔ Եպ. Խօջափանքի առաջնորդ ժէ՛ դարու վերջերը:

ԱԻԵՏԻՔ Եպ. Թֆնայ վանքին, ասոր աշակերտը եղած է Սահակ, որ 1482ին Գանձարան մը ընդօրինակած է (Զեռագիրը վեցնեկոյ Ս. Ղազար վանքը կը գտնուի):

ԱԻԵՏԻՔ Եպ. Կեսարիոյ (1738—1744), ծնած Եւզոպիա, սա Ս. Կարապետի մէջ շինութիւններ ըրած է: Իր օրով վանքը ունէր 16 միաբաններ, որոց գլխաւորն էր Գաւրիթ վրդ, որ մեծ և կարեւոր դորձակցութիւն մ'ունեցած է իր հոգեւոր հօրը՝ Աւետիքի հետ և ապա անոր յաջորդած: Հ. Գալէմքէրեան Կոլոտ Յով: պատրիարքի աշակերտը համարի Ա. Եօթիքը, սակայն փաստ չկայ: (Տապանաբար տե՛ս Այապոյանեան «Հայ Կեսարիա» էջ 924): Ըստ Աղաւնուցիի («Միաբան» էջ 44) Երուսաղէմի նուիրակ կարգուած է 1744ին այցելելով Երուսաղէմայ Ս. Յակոբի վանքը՝ նուերներ տուած է:

ԱԻԵՏԻՔ Եպ. Պաղտատի, քաղաքիս ամէնէն գործունէնայ առաջնորդներէն մին, 1852ին շինած է Պաղտատի Ս. Երրորդութիւն եկեղեցին և Թարգմանչաց վարժարանը: Վախճանած է 47 տարու:

ԱԻԵՏԻՔ քաջ բարունի և երեսփոխան Տիգրանակերտի (Ամքայ) 1490ին:

ԱԻԵՏԻՔ գրիչ և ստացողք 1402ին ի սահմանս Վասպուրականի ձառնարի մէկ մասը կ'ընդօրինակէ: — 1428ին Կաֆայի մէջ ստացող: — 1437ին գրիչ Բալուի Ս. Գէորգ վանքին մէջ: — 1455, 1468 (կրկին) թուականին Տրապիզոնի մէջ ձեռագիրներ կ'ընդօրինակէ: — Հաղբաթցի 1485ին գրիչ՝ Երուսաղէմի մէջ: — ձերուներ արեղայ, որդի Վահրամայ գրիչ Սաղմոսի ի վանս Պալախուրոյ—1503 Աւետիք վարդապետի ձեռամբ Սքայնչելագործ Ս. նշանին կը արուի իրաթ գրուած Աստուածաշունչը: — 1518 թուին Աւետիք երէց գրիչ Կամենիցի մէջ: — երէց Երզնկացի և Վարդան Տրապիզոնցի՝ նորոգողք Գանձարանի 1619ին: — 1628ին Աւետիք դեռարոյս՝ օգնական լինի ի ծաղկելն ի Հայէպ: — 1628ին Աւետիք քհ. 2 ձեռագրաց, 1629 մէկ ձեռագրի գրիչ: 1630 գրիչ Կամենիցի մէջ: 1650ին Աւետիք Խօջա ստացող ի նոր Ջուղայ: 1653ին Աւետիք Սասնցի որդի Դանիէլի լուսարար՝ Երուսաղէմ Աւետ. մը կ'ըն-

դօրինակէ: — 1674ին Աւետիք որդի Խաչատրոյ ստացող ձեռագրի, նորոգողն եղած է Խաչատուր Խասպէկ:

ԱԻԵՏԻՔ Տիգրանակերտցի, 1684էն սկսած մինչև 1709 կը պատրաստէ Տօմարագիտութիւնը, սա ծնած է Ամիդ. սնած Կարին, ուր 14 տարի կեցած է: Գացած է Բաղէշ, Թօխաթ. Սերաստիա (Յիւսակարան):

ԱԻԵՏԻՔ վրդ. Առաջնորդ Բաղէշի, եղբ. Մեսրոպ վրդ. Բաղէշեցւոյ կը յիշուի 1685ին (Յիւշկրք.):

ԱԻԵՏԻՔ պարոնտէր, աթոռակալ Ղրիմու առաջնորդ Յակոբայ, կը յիշուի 1712ին:

ԱԻԵՏԻՔ վրդ. Սորուայ (?) Ս. Աստուածածնի Սքանչելագործ վանքին վանահայր 1816ին Տրովադայի մէջ Կիլիկիացի Աջապահեան Եփրեմ վրդին կը հանդիպի և կը նուիրէ Ս. Հովսէփի մասունքը:

ԱԻԵՏԻՔ, (Աւետիս, Աւետիք, Ա.Յիւսէպի), Հայկական սերունդ մը բնակաւոր ի Լվով, որուն քաղաքագետական ամենահին արձանագրութեան մէջ Աւետիս կը յիշուի իբրև վաղեմի հայ (Antiquus Armenus), Ասոնք Բոլոնիոյ մէջ քաղաքական բարձր պաշտօններ վարած են, իբր խորհրդականներ, դատաւորներ, թարգմաններ և երեսփոխաններ: Չրաղած են վաճառականութեամբ և ձեռնարուեստներով: Բոլոնիոյ Հայոց Հռոմէական եկեղեցւոյ հետ միանալէն ետք 1665ին, շատ մը հայկական ընտանիքներ Բոլոնիայէն մեկնեցան ի Շէտմիսկրուտ և ի Դրանսիական որոնց մէջ Լվովի Աւետիքներ ու մի քանի ընտանիքներ ալ կը գտնուէին: Դեռ մինչև ցայսօր ալ Պուտարէշտի մէջ կ'ապրի Աւետիք ընտանիք մը (Տօնիկիէվիչ):

Աւետիք ընտանիքը Դրանսիականիոյ Եղիսաբեթուպոլիս քաղաքէն մեկնած է Պուտարէշտ պաշտօնին բերմամբ. Եղիսաբեթուպոլսոյ մէկ ժողովրդապետը Աւետիք Ղուկաս կը կոչուի Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԱԻԵՏԻՔ Եպ. ծնած 1367ին, Եպիսկոպոս ընտրուած Լուսաւորչական Հայոց ի Լվով՝ 1398ին: Կառավարեց իր թեմը շատ տարիներ, որ ատեն կը տարածուէր մինչև Ուքրայինա, Վօլոչինա, Բոլոտ և Շէտմիսկրուտ. մեռաւ 1438ին:

Կը կարծենք որ այս Աւետիք Եպիսկոպոսը նոյնն է 329 էջին մէջ յիշուած Լէօպօլսոյ Արքեպիսկոպոսին հետ, ուր թուականները աւելի ճիշտ են առնուած ըլլալով յիշատակարաններէն և ժամանակակից յիշատակարաններէն, եթէ մեր աշխատակից պ. Տօնիկի թուականները ճիշդ են՝ այնատեն միեւնոյն ժամանակի մէջ Բոլոնիոյ հայութիւնը երկու Աւետիք Եպ. ունեցած է:

ԱԻԵՏԻՔ Կոստանդիանոս (1708-1771), վարդապետ, Յիսուսեան ընկերութեան անդամ, ծնած 11 Մարտ 1708ին Դասախօսած է իրր ուսուցիչ փիլիսոփայութեան, եկեղեցական իրաւանց եւ Բարոյական Աստուածաբանութեան: Հրատարակած է իր քարոզները բոլոնական լեզուով: Քրաքովա ապրած և հոն շարունակ աշխատած է ու վախճանած 1771ին: (Տօնիկիէվիչ):

ԱԻԵՐԻԿ Ղուկաս տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՄԵՐ:

ԱԻԵՏԻՔ Միխայիլ, ապրած ԺԸ դարուն մէջ, ժամանակակից վերնոյն Կոստանդիանոսի: Սա կրօնական մատենագիր մ'եղած է: Գրած է առհասարակ լատին լեզուով: Իր լոյս բնծայած գործերն են. Epaminondas pro domo vitae humanae... docertans. — S Joannes Nepomucenus dum ad canonisationem introduceretur. Kraków 1729. — Praesidium Universi Cracias inter turres, 1731. — Pantheon veri numinis 17. 0. — Concylium Aristotelici Eurippi 1728: Աստուծէ զատ շատ մը գրուածքներ թողած է: (Տօնիկիէվիչ):

ԱԻԵՏԻՔ Յովնանէս Միխայիլ: Ուսմունքն առած է ի Քրաքովա և ի Հռոմ, ուր 1741ին ընդունած է փիլիսոփայութեան և բժշկութեան վարդապետութեան աստիճանները, իսկ 1744ին Աստուածաբանութեան վարդապետի աստիճանին բարձրացած է: Հռոմ Քահանայապետական Դիւանատան մէջ աշխատած է և առաքելական նօտարապետ անուանուած: (Տօնիկիէվիչ):

ԱԻԵՏԻՔ Յովնանէս Նեկիմուչեկ, բժիշկ: Ծնած է Քրաքովա, ուր աւարտած է ուսումը և կրթուած փիլիսոփայական և բժշկական ուսմանց մէջ: Բժշկութիւնը իտալոյ մէջ աւարտելէ ետք՝ 1749ին Քրաքովայի Համալսարանին մէջ ուսուցչապետ անուանուած է: Նոյն համալսարանին խնդրանքով Ս. Յովնանէս Քանթէի սրբացուցման դատը պաշտպանած է ի Հռոմ: (Տօնիկիէվիչ):

ԱԻԵՏԻՔ Պոնավեքուրա, վարդապետ Դոմիտիկեան կարգէն: 1739ին բոլոնական լեզուով հրատարակած է իր քարոզները: (Տօնիկիէվիչ):

ԱԻԵՏԻՔ Սիմոն Էւ Ֆելիս տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՄԵՐ:

ԱԻԵՏԻՔԵԱՆ Վ. Գաբրիէլ, Աստուածաբան (1750—1827), Վենետկոյ Մխիթարեան, ծնած է Պոլիս 1750ին, փոքր տարիքէն Ս. Ղազար կ'երթայ ուր ուսանելէ ետք քահանայ կը ձեռնադրուի 1785ին արդէն վարդապետական գաւազան ընդունած՝ վանքի նորընծայից ճարտասանութիւն և Աստուածաբանութիւն կը դասախօսէ տասը տարի: 1799ին Մեկքոնեան Աբրահօր Աթոռակայ կը կարգուի և անոր մահէն ետք տեղապահ մինչև նորին ընտրութիւնը յանձնի Ստե-

փանոս Ազոնցի, որ նոյնպէս Աւետիքեանը Աթոռակայ կը կարգէ: Վերջնոյս մահէն ետք ալ 1824ին նորէն տեղապահ կը կարգուի. մինչև նոր Աբրայիմ Սուքիաս Սոմայի ընտրութիւնը, որ իր քեռորդին էր: Ասոր արքայութեան ժամանակ վանական բոլոր պաշտօններէն կը հրաժարի, թէ՛ յառաջացած ձերութեանը և թէ՛ բաղմամբայ տկարութեանը համար:

Իրր Աստուածաբան Հայր Աւետիքեան ո՛չ թէ մեր ազգայնոց այլ նոյն իսկ Եւրոպացւոց ծանօթ է:

Հայր Աւետիքեան մինչև կեանքի 42րդ տարին գիտութիւնը կ'ամբարէ և միայն 1792ին կը հրատարակէ իր անդրանիկ երկը



Ղ. Գ. ԱԻԵՏԻՔԵԱՆ

Քերականութիւն Թուֆանեան լեզուի (500էն աւելի էջերով), 1806ին՝ Մեկնութիւն չորեքսասն բրոց երանելոյն Պօղոսի առաքելոյ, չորք 2700 էջ.— 1814ին՝ Բագասութիւն Շարականաց 820 էջ.— 1815ին՝ Քերականութիւն հայկական 580 էջ.— 1819ին՝ Քերականութիւն հայկական (աշխարհարար) էջ 240: 1816ին՝ Տեսարանք «արարեալ աշխարհարօրէն ոճով» Ա. Հայու տառից հնչման վրայ, Բ. գրարառ խօսակցութիւն, Գ. Չանազան սովորութիւնք վարժապետաց: 1801ին՝ Նարեկյութ 800 էջ, երրորդ անգամ տպուած 1559ին: 1827ին՝ Մբոյ հօրն մերոյ Գրիգոր Նարեկացոյ երկորդ մատեան 6առից էջ 252: 1836ին՝ Խորհրդակցութիւնք հոգեւորք 22 էջ: Իտալերէն լեզուով գրած է Dissertazione Sulle Corregioni dei libri ecclesiastici Armeni տպ. 1868, էջ 414: (Քննախօսութիւն հայ եկեղեցական գրոց սրբագրութեանց մասին), նոր Հայկազեան բողոքանի Ա. տառը Աւետիքեանինն է. թարգմանած է Ս. Օգոստիանոսի Յաղագս քաղաքի Աստուծոյ գործը, երկու հատոր, 1350 էջ, տպ. 1841ին, դեռ ուրիշ թարգմանութիւններ ու գրքեր ունի:

«Ոչ նուազ նշանաւոր է Ղ. Աւետիքեան իրր քերթող թէև սակաւաթիւ ըլլան իր քերթուածները (տպուած Տաղ Մխիթարեան վարդապետացի մէջ) . . . որոնք հեղինակին քերթողական հանճարին հետ՝ անոր քնարերգակ դաշնակաւոր գրչին կորովը կը ցուցնեն: Ղ. Աւետիքեան հե-

ղինակ է նաև ընտիր թատերախաղերու, որոնց մէջ գլխաւոր կրնան համարուել Տրգաս և Արսաւան, որոնց նիւթը թէև ծանօթ է ազգային պատմութենէ, բայց քերթողն իր հանճարեղ գիւտերովը՝ անոնց գեղեցիկ և նոր կերպարանք մը տուած է...

«Յիշատակուած գործերէն զատ ունի Հ. Աւետիքեան ինը կտոր գործեր ալ, որոնք անախպ կը մնան, որոնց մէջ կան Բերականութիւն հայերէնէ իտալերէն, իտալերէն ճառեր՝ զորս կարդացած է Հռոմ գիտնաւորաց ճեմարանին մէջ, ջատագովական քննութիւն Հայոց եկեղեցական գրքերուն, իտալերէն և հայերէն, Սրմաքէշ Մանուէլի գրոց հերքում մը, ծննդոց գրքին համառօտ մեկնութիւն մը, եւայն, եւայլ, որոնց ամէնուն մէջ ալ կը փայլին խորին հմտութիւն, հզօր պատճառարանութիւն և ողջամիտ վարդապետութիւն:

«Հ. Աւետիքեան՝ անցաւորէն անանցը կը փոխուէր 1827ին, 77 տարեկան, պանծալի կոթողներ կանգնելով գրական աշխարհին մէջ» (Սարեան՝ «Մխիթար» քերք էջ 94, Տե՛ս եւ Գեղունի 1903):

ԱԻՆՏԻՔԵԱՆ Յակոբ Եպ. Ս. Աճեմեան Եպ. Յ.:

ԱԻՆՏԻՔԵԱՆ Ներսէս (Տէր Ասեփանեան), ծնած Նիղէ (Կեսարիա), որդի Ստեփան քհ.ի, 1888ին մտած է Կեսարիոյ Ս. Կարապետ վանքին բարձր. վարժարանը 1893ին գիտական առաջին կարգի վկայական ստացած է և իր օգնական ուսուցիչ պաշտօնի կոչուած 1894ին և կեդրոնականցիներուն հեռանալէն յետո՛ւ՝ ուսողութեան և բնական գիտութեանց դասերը ինքը աւանդած է 22 տարի շարունակ: 1915ի տարագրութեան ճամբուն վրայ նահատակուած ի Սաման-Տէրէ: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 1244):

ԱԻՆՏԻՔԵԱՆՅ (Ասեփան Բանանցի), Թիֆլիս ծնած 1870ական թուականին՝ հեղինակած գործերն են Սամիսարնի սպ. Թիֆլիս 1897ին, Ղեկավարներ 1897ին, Նահասակը սպ. Թիֆլիս 1898, Իրլանտիայի դասը սպ. Բագու 1898, Հոմրուլի պաշտպանը, սպ. Մոսկուա 1899, Գրեթէ բոլոր գործերուն վրայ «Մշակ» և «Մուրճ» գրախօսականներ գրած են:

ԱԻՆՏ, գղ. Կարնոյ Սպեր դաւառակի, 1900ին 30 տ. հայ և 25 տ. մահմետական բն. ունէր. եկղ. Ս. Աստուածածին քովը վարժարան:

ԱԻՆՏԱԿ կամ Էվերէկ գղ. Բարբրղի, արեւելեան հարաւային կողմը Բաղաքէն 5 ժամ հեռու: 1900ին 150 տուն բնակիչ ունէր, որոնց 82 տ.ը հայ էին, որոնց մէկ մասը գաղթած էին Կարինէն Հայոց եկեղեցին Ս. Աստուածածին. ուխ-

տաւայր՝ Ս. Օհաննէս անուն հինաւուրց մատուռ մը: Ուրիշ ուխտատեղի մ'ալ կար Քամի գօրաւոր (Եէլ գիարէթ) անուամբ, և էր գերեզման մը, վրան ապար և թուր քանդակուած:

ԱԻՆՏԱԿ կամ Էվերէկ. գղ. քղ. Կեսարիոյ, 1900ին 900 տուն բնակիչ ունէր Աւերակը՝ իր Յէնէսէ (տե՛ս իր կարգին) արուարձանը՝ 800 տուն: Ալպօյանեանի կարծիքով Էվերէկը հիմնուած է «Այլայէտտին Արթինա պէյի և իր յաջորդներուն իշ-



Աւերակ — Էվերէկ

խանութեան] շրջանին (1326—1381): Կ'ըսուի թէ Էվերէկ Կիլիկիոյ Լուսինեան իշխանութեան տիրապետութեան տակ կը գտնուէր, մէկ ապացոյցն է Էվերէկէն 8—9 ժամ հեռու գտնուող Ս. Դանիէլ վանքը. որ շինուած է Կիլիկեան տիրապետութեան շրջանին:

Հիւսիսէն Էվերէկի կ'իշխէ Երզնոս, արեւելքի ուղղութիւնով կը գտնուի Սաչի լեռը, իսկ հարաւ-արեւելքը Տէվէլլու փոքր լեռը, վերջինս միայն 20 վայրկեան հեռի է Էվերէկէն:

Էվերէկի բնակիչները Լուսաւորչական էին, 1886ին 28 տուն Բողոքական կար, այդ թիւը յետոյ բարձրացած է. կաթոլիկութիւնը չէ կրցած մուտք գործել:

Հայոց ամէնէն նշանաւոր եկեղեցին Ս. Թորոս որը նախապէս խեղճ շինութիւն մ'եղած է, որ յետոյ 1890ական թուականին բոլորովին նոր կը կառուցուի հայ ճարտարապետէ մը. 8 հակայ սիւներով շատ մեծ ու լայն եկեղեցի մը, իր նմանը կայ Եողգատի և Կարնոյ մէջ:

Նախքան 1850ական թուականները զպրոց չկար, 1864ին Էվերէկի մէջ կը կազմուի Դպրոցական ընկերութիւն մը որ 30000 զրուշ կը հաւաքէ զպրոցին համար:

Էվերէկի մէջ 1872—73ին Հայերը ունէին երկու վարժարան, 300 մանչ աշակերտներով, եւ տարեկան 5640 զրուշ ծախքով, որ կը հայթայթէր Հայկեան Ղնկերութիւնը:

Էվէրէկի մէջ յետոյ կառուցուած վարժարանը կոչուեցաւ Ս. Մեսրոպեան որ ունէր 1900ին 440 աշակերտ, (290 մանչ և 150 աղջիկ) և 6 ուսուցիչ ու 3 ուսուցչուհի:

Էվէրէկի մէջ բողոքականներն ալ ունէին 1886-ին աղջկանց վարժարան մը, 60 աշակերտուհիներով:

Էվէրէկ վաճառաշահ ըլլալով՝ Հայերու մեծ մասը բարեկեցիկ էր, արհեստաւորներու թիւն ու վիճակն ալ գոնացուցիչ էր: Վաճառականական արտածելի գլխաւոր ապրանքներն էին խէժը եւ ձէհրին, որ Համպուրկ և Մանչէսթր կը դրկուէր:

Էվէրէկ անուէր Աւերակ բառին աղաւաղեալը կը կարծուի և հաւանական է, որովհետեւ գիւղաքաղաքէս քանի մը ժամ հեռու դէպի հիւսիս կը տեսնուին աւերակ դարձած շէնքերու հին մնացորդներ: Էվէրէկ ըսելով կը հասկցուի իրարու կից չորս գիւղերու ամբողջութիւնը. այն է՝ յուն Էվէրէկ՝ 900 ա. հայ, Ֆենեսէ՝ 800 տուն հայ, Թուրք գիւղ՝ 500 ա. թուրք, Այ-Վոսսան՝ 400 յոյն և թուրք բնակչով: Գիւղաքաղաքէս քառորդ ժամ հեռի կայ Էլպէզ կամ Էլպիս լճակը:

Տեղահանութեան ատեն Էվէրէկ բոլորովին պարպուեցաւ:

Ձինաղագարէն յետոյ բաւական թիւով հայեր վերադարձած են Էվէրէկ: 1926ին Էվէրէկ-Ֆէնէսէի մէջ 1200 Հայեր կային: 1928ին 106 այր, 147 կին, 49 մանչ և 58 աղջիկ միայն կ'ապրէին Էվէրէկի մէջ, որոնք արհեստով և երկրագործութեամբ կ'ապրէին: (Էվիթիկեան՝ «Բնաօխարհիկ» Ա. հս. էջ 831, Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 810-831, Օ. Աղամեան՝ «Հայ Մամուլ» Ա. ք. 30-31: Յակոբ Արզումանեան գրած է Էվէրէկի Պատմութիւնը, Ա. Գիրք, սյ. Գանիրէ):

ԱԻԵՐԱԿ, թրքարնակ գիւղ Ակնայ. բն. 100:

ԱԻԵՐԱԿԻ, հայարնակ գիւղ Վասպուրականի Տոսր գո. ի 1900ին ունէր 140 ա. բնակիչ, եկղ. Ս. Սահփանոս. ծաղկոցին մէջ 20 մանչ և 10 աղջիկ կ'ուսանէին: Աւերակի հարուստ էր գերեզմանատան տապանաքարերով: Ուխտատեղին էր Սարի Ս. Գէորգ մատուռը:

ԱԻԵՐԱԿԻ հին գղ. Սիւնեաց ձահուկ գո. ի:

ԱԻԵՐ ԱՏՆԱԿԱՆՅՑ, ամայի գղ. Վանայ լէզք գղ. ի մօտ:

ԱԻԵՐ ՎԱՆՔ, Վասպուրականի Արծիշակովիտ գո. ի մէջ, որոյ եկեղեցին ըստ արձանագրութեան շինուած է 1442ին, որը դեռ 1850ին կանգուն էր:

ԱԻԵՐՔ, հին գղ. Սիւնեաց Բաղք գո. ի:

ԱԻԵՐ ՔԱՂԱՔ, այսպէս կը կոչուին, Արծն քաղաքի աւերակները:

ԱԻԶԱՂԻԻԻ, հայարնակ գղ. Տարօն գո. ի մէջ, 100 տնէն աւելի բնակիչ ունէր: Այս անուամբ ուրիշ գիւղ մ'ալ կար նոյն գո. ին մէջ:

ԱԻԶՈՒՏ, գղ. Տարօն գո. ի, 1900ին 40 ա. հայ, 16 ա. քաւրդ բն. ունէր. մօտը բլրակի մը վրայ եկեղեցի մը կայ, որուն դիմաց Աւգաքիթ անուամբ անցք մը կայ:

ԱԻԷՃՈՒՐԻԿ, գղ. Խորխոռունեաց գո. ի մէջ, Սիփան լեռան մօտ:

ԱԻԷՇ, հին գղ. Սիւնեաց Վայոց ձոր գո. ի, զոր 1261 թուին Սմբատ Լիպարիտի որդին՝ Անապատ գիւղի հետ նորավանից նուիրեց: Այժմ թաթարարնակ է և կը կոչուի Հաւուտ կամ Ավուտ:

ԱԻԸՆԳԱՆՔ կամ Աւրնդանց, գղ. Մոկաց Առանձնակ գո. ի մէջ, Ապարանից ուխտի մօտ, որուն եկեղեցին ըստ 1610ի ձեռագրի մը յիշատակարանին՝ Ս. Պողոս Պետրոս և Գէորգ զօրավար կը կոչուի:

Փէլ գարուն գիւղիս մէջ մեզի ծանօթ 12 ձեռագիր ընդօրինակուած է Կիւակոս, Վարդան, Թովմաս, Աւեսիս գրիչներէ:

ԱԻԸՆԿԱՅ, Յ. Ս. Աւելի:

ԱԻԹՄՆԱ, վանք Տիվրիկի գո. ի մէջ, 1348ին գրուած յիշատակարանի մը համաձայն վանքիս եկեղեցին է Ս. Աստուածածին:

ԱԻԺԷՆ, հին գիւղ Սիւնեաց Աղահէճք գո. ի:

ԱԻԻՆ, գղ. Սղերդի, 30 ա. հայ բնակիչ ունէր:

ԱԻԻՍԱՍ կամ Աւետու, հայրենիք եղիաղար վրդի որ 1703ին Չնքուշի վանքին առաջնորդ կը կարգուի:

ԱԻԼԱՐ, հին գիւղ և գետ Գուգարաց Թոնղք գո. ի մէջ:

ԱԻԼԱՌՈՒ, գղ. Խարերդի:

ԱԻԼՈՒ կամ Ալոյ, գղ. Վարին Կեղի:

ԱԻԿԱՄԻ կամ Օկաւմի, բաղամարդ աւան Բասեն գո. ի Ծիրանեաց լեռան ստորոտը զոր կը յիշէ Արիստակէս Լաստիվարացի (Ժբ) այժմ կը կոչուի Ոկամի:

ԱԻԿԱՄ գղ. Սասնոյ:

ԱԻՆԻԿ կամ Աւրնիկայ գիւղ, Հաւնունեաց գո. ի իշխանանիստ վայրը, որուն այժմեան բնակիչք մասձետականք են, կը թուին Հայերէ սերած. 65 կէս ստորերկրեայ տուն կայ:

ԱԻՇԱԿԱՆ Ս. Օսական:

ԱԻՇԱՐԱՆ կամ Ափետրոն, երկրալեզու, որուն վրայ կը գտնուի Փոյտակարանի Բազաւան հին գաւառներէն մին:

ԱԻՇԱՐԵԱՆ հրամանատար (Հնչակեան) 1918-19 կովկասի մէջ կը նահատակուի:

ԱԻՇԱՐԵԱՆՅ Ս. Ավարեանց:

ԱԻՏ

ԱԻՇԷՆ՝ Տ. Ավետիս:

ԱԻՉԱՐԵԱՆ Յովհաննէս, Պուլկարահայ դործարարանատէր, 1935ի ցուցահանդէսին ոսկի մեծալ կը շահի:

ԱԻՍԻ, գղ. Ազրաի, ուր Ս. Խաչ վանքի մէջ կը թաղուի Վասպուրականի Աշոտ իշխանը՝ 876ին:

ԱԻՍԻՎՍ. Թլուրան:

ԱԻՍՏՐԱԼԻԱ, 7—8 միլիոն բնակիչով երկիր Ովկիանիայի մէջ: Անգլիացի գաղթականներով բազմամարդացաւ: Ունի բազմաթիւ ոսկւոյ հանքեր, մայրաքաղաքն է Մէլբուրնը: Հայերը հոս ալ գաղթած են 1850ական թուականներուն: Այս սակաւաթիւ գաղթականաց առաջնորդ կը համարուի մի ոմն Մելքում Զուղայեցի, որ եկած է երկու ընկերներով. յետոյ տասնի չափ Հայեր հետեւած են, մեծ մասամբ Զուղայեցիք:

Համաշխարհային պատերազմէն ետք, հայ գաղթականաց թիւը աւելցած է:

ԱԻՍՏՐԻԱ նախապատերազմեան յիջանին Եւրոպայի գլխաւոր տէրութիւններէն մին էր, զինադադարէն յետոյ վերածուեցաւ փոքրիկ տէրութեան մը՝ մօտ 84000 քա. քմ. տարածութիւնով և չորս 7 միլիոն բնակիչով, իսկ 1938-ին միացաւ Գերմանիոյ: Մայրաքաղաքն է Վիեննա (տե՛ս իր կարգին): Մեր Լեոն Մեծագործի օրով կը յիշուի Աւստրիոյ Դքսին զեսպանը ի Կլիկիա, բայց յայտնի չէ վաճառականութեան թէ ուրիշ գործի համար: 1715ին Յովհաննէս Աւետիքի որդին Աւստրիա կու գայ Վենետիկէն և ազգայիններէն ոմանք նստարի առջև երդմունքով կը վկայեն անոր բարի և ուղղափառ քրիստոնեայ ըլլալուն մասին: 1700ի սկիզբները ներսէս անուն հայ քահանայ մը Աւստրիոյ կայսեր շատ հաճոյանալով՝ անոր զրան երէցներուն կարգը անցած էր: Նոյն ժամանակները հոս կը գտնուէր նաև Տէր Յովհաննէս անուն քահանայ մը որուն 1719 թուին 114 տարեկան ըլլալը կը վկայուի: Անկէջ վերջ ստէյ կը յիշուին հայ երիցունք Վիեննայի մէջ, Տէր Մինաս 1729ին, Տէր Մանուէլ Գէֆէցի † 1700. Բարդողիմէոս վրդ. 1733 եւ այլն: Այս միջոցին վաճառականութեան համար ոչ սակաւ Հայեր Վիեննայի մէջ հաստատուելով. քաղաքին արքեպիսկոպոսը իրենց մատուռ մը տուաւ 1752ին, Ս. Ստեփանոս մայր եկեղեցւոյն մօտ: Տե՛ս Թրիես, Վիեննա: Բոլոնիա:

ԱԻՏԱԼ(ԵԱՆ) կամ Ավդայեանց Յովհաննէս, մահանադիր — վարժսպետ: Ծնած է Շիրակ 1793-ին, աշակերտած Եւզոկիացի Յարութիւն Գա-

լուցեանի, սպա հայերէնի ուսուցիչ Կալկաթայի Մարգարիտիան ձեռարանի: Այս երկու հայկաբանները պաշտօնավարած են հոն 1821էն 1863: Աւետալ աշակերտած և դասախօսած է նաև տեղւոյն եպիսկոպոսական ձեռարանը: 1826ին անգամ ընտրուած է Ասիական Պէնկայեան Ընկեան: Ունի բազմաթիւ գործեր, գլխաւորներն են Անգիսայ Անպէս 1821. (էջ 320), Բառարան անգլ. հայ 1825, Ասալայի (Թրգմ.) 1926, Չանչեան պատմութիւն (անգլ. համառօտ 1827): Մեռած է ի Կալկաթա 11 Յուլիս 1860 և թաղուած Ս. Նազարէթ (Ալայոյանեան, Թեոդիկի «Ամենուն Տարեցոյց» 1926 էջ 626): Բացի այս յիշատակուած գործերէն որոնց վերջին երկուքը կը պակսին Հ. Ղազկիեանի Նոր Մատենագրութիւնին մէջ (էջ 221--2) Աւդայեանց ունի Մոսկի 56 էջ, տպ. 1823, Ներբողեան յորհնեալ յիշատակ բարեպաշտին Գալուցեան պարոն Յարութիւնեանին՝ երեսուն եւ հինգամեայ արդիւնաշատ վարժպետին. . . տպ. 1834. էջ 16. Քրիստոնէական կրթութիւն, տպուած 1841 էջ 32, Թուրք շնորհակալութեան, ձառ Յովհաննու եւ այլն: Ունի նաև թարգմանութիւններ Շաթոպրիանէ, Պոտլէրէ եւ այլն: Հրատարակած է Յովհաննէս Արծիշեցւոյ Մեկն. պատարագին:

ԱԻՏԱԼԵԱՆ Պողոս վրդ. Ամրտօլու վանքին միաբան, ուսուցիչ եղած Զրպեա Շահանի, որուն հետ 1787ին կ'այցելէ Երուսաղէմայ Ս. Յակոբ վանքը և անկէ միասին Հոռոմ կ'ուղեւորին (Աղաւունքի՝ «Միաբան» էջ 322):

ԱԻՏԻ Տ. ԱԻՏԻ:

ԱԻՏՈՍ, գղ. Տայոց Օլթի գո. ի, բն. թուրք:

ԱԻՏՈՒՌՆ. հին գիւղ Սիւնեաց Բաղք գո. ի:

ԱԻՐԱՆ կամ Ավրան, հայաբնակ գղ. Տարօն գո. ի Մշոյ դաշտին մէջ. 1900ին 150 տ. բն. ունէր և կամարաշէն եկեղեցի մը Ս. Յովհաննէս զպրօքը 46 մանչ և 6 աղջիկ կը յաճախէին:

ԱԻՐՎՆԻԿ Տ. Ավրսնիկ:

ԱԻՕ Տ. Պիգեան Աւետիս:

ԱՓԱՍՔ, Կովկասեան ժողովուրդ մը, որուն, բնավայրն է Բուլպան, ունին իրենց ուրոյն լեզուն, որ բոլորովին տարբեր է միւս Կովկասեան ցեղերու լեզուէն: Գ. զարուն ընդունած են քրիստոնէութիւնը և հոռոմէական իշխանութեան վերացումէն յետոյ իսլամացած են: Հետզհետէ ենթարկուած են Պարսից, Վրացիներու, Թուրքաց իշխանութեան, իսկ 1812ին մտած ուսւ արապետութեան տակ: Նախապէս թուրք իշխանութեան տակ. գերի կը վաճառէին, Ռուսերը վերջ տուին գերեզմանութեան (Բաւն. Bouillet):

ԱՓԱԳԵՂ Կամ Աբնագեղ, գղ. Նիզ գ. ի մէջ. գիւղիս մօտ Տալու գետակը Բասաղի հետ կը խառնուի: Զաքարիա պարք. և Սիմէոն կթղ. կը գրեն Աբնագեղ: 1900ին ունէր 890 բնակիչ: Եկղ. Ս. Աստուածածին:

ԱՓԱՇԱՏ. հին գղ. Սիւնեաց Գեղարքունի գ. ի ԱՓԵՂՅՓԵՂ, զաւելչտական հանդէս, տպ. Զմիւռ-նիա, խմբագիր՝ Տէտէեան: (Երկու թիւ միայն լոյս տեսած է):

ԱՓԻՆԵԱՆ Կարապետ խմբագիր հրատարակիչ 1907—1914 թուին Ալեքսանդրապոլի մէջ լոյս տեսնող «Ախուրեան» լրագրին:

ԱՓԻՆԵԱՆ Նուարդ, խմբագիր «Ախուրեան հայ կանանց օրացոյց հանդէս» ի, տպ. Ալեքսանդրապոլ 1902:

ԱՓԽԱՁՔ, Կովկասեան ժողովուրդ մը, որոնց ծագումը ունի Ափսսներուն (տե՛ս) հետ, անոնց նման 1812ին ենթարկուած են ոռուս տիրապետութեան, իրենց բնավայրն է Սուխում Բալէի շրջանը՝ Սև ծովու եզերքը (բառն. Bouillet): Ոմանք Ափխազները նոյնը կը համարեն Վրացի Մկէլիներու հետ, ուրիշներ՝ Կախէթի Վրացիներու հետ:

ԱՓԿԷՍ Կամ Ափկիս, հին գիւղ Սիւնեաց Արեւելք գ. ի:

ԱՓՇԵՐՈՆ Տ. Աւետան:

ԱՓՇԻՆ, ոստիկան Ատրպատականի Բաղրատունեաց Սմբատ Ա. թգ. ի օրով (892—901):

ԱՓՐԱՆԻԿ Մոկացի իշխանաւոր, կը միանայ Վարդի հետ՝ ըննդէմ Բելզանդիոնի Վասիլ կայսեր (976—989):

ԱՓՐԻԿԵԱՆ Տրիպոլիս Տ. Տրիպոլիս Ափրիկեան:

ԱՓՐԻԿԷ Տ. Եգիպտոս, Սուսան:

ԱՓՐՈՒԻՏԷ, կուռք, որուն արձանը Սրմաւիրի Բագինին մէջ դնել կու տայ Արտաշէս Բ. թգ. Հայոց:

ԱՓԱՅ, կը յիշուի Սիսեան ձորի մէջ:

ԱՓԱՂԱՅՈՒ ԿԱՏԱՐ, բլուր մը, կը յիշուի Թովմա Արծրունիէն:

ԱՓԵՐՄԱՆ. Ալիքիւման Կամ Ագեբուման. (ռումաներէն (Citatea Albă). Ծովահայեաց բերդաքաղաք Պեսարապիոյ զաւառին (Ռումանիոյ մէջ), Տնիեսթեր գետին բերանը: Քաղաքիս մէջ հին ժամանակներէ ի վեր բաւական Հայեր կը բնակէին, որոնց թիւը օրէ օր կը նուազի: Կան քանի մը բաւական հարուստ ընտանիքներ: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնայ: 1925ին ունէր 400 հոգի (այր և կին) և շրջակայքը 10 հոգի (այր և կին):

1483ին Նիկողայոս Եպ. Ալեքերմանցի Երուսաղէմ

կ'այցելէ եւ գրի կ'առնէ Ս. Տեղեաց ուխտատէրները: Ագեբումանի մէջ ձեռագիր Գանձարան մը կայ որ ՌՃՂՁ (=1747) թուին կը նորոգուի ի ծովահայեաց քաղաքին Ալիքեբուման, ի զուգն Ս. Ասուածածնի, Ս. Օգոստինոսի եւ Ս. Յովնանէս Աւետարանչին իրենց սրբոց ճանապարհը:

ԱՓԹԵՐԵԱՆ Հայկ, տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅՐ:

ԱՓԻՄ ԹԱՄԻՐՈՎ, հայազգի, ֆիլմի գնահատուած նանաւոր դերասան Հոլիվուտի մէջ:

ԱՓԶԻՍԱՐ գղ. Զմիւռնիոյ, որուն ազգային վարժարանը 1901ին 58 երկսեռ աշակերտներ կ'ուսանէին տե՛ս Ազնիսար:

ԱՓՈՒՆԻՍ, կը յիշուի Գաւալի Կամ Նորտըզի մէջ: Տեղեկութիւնք կը պակսին:

ԱՓՈՒՌԼՈՒ այսպէս կը կոչուի Թուանը ձոր, Ակոսի գիւղը:

ԱՓՈՒԲԱՐԱ, հայարնակ գղ. Դաղախու, 40 տ. բնակչով:

ԱՔ. ՊՈՒԼԱՂ, Կամ Ագ-բուլաղ, փոքրիկ հայարնակ գղ. Կոկիսոն գ. ի մէջ. բն. 120 գաղթած Արցախի և Սիւնիքի գիւղերէն. Եկղ. Ս. Մեսրոպ:

ԱՔՍԵՆԴՐՈՎԻՉ Թեոդորոս, արուեստագէտ նկարիչ, ծնած 1859ին Դրանսիականիոյ Պրաչով (Քրոնշտատ) քաղաքը: Միջին դասերը կ'ովի մէջ աւարտելէ ետք, 1879—1882 ուսած է Միւնիխի համալսարանը, յետոյ 1883ին անցած է Բարիդ, ապա Լոնտոն, Կարոլոս Տիւրանի, Պօլտինիի և Վիսթլէրի մօտ: Ֆրանսացի եւ ի գլխաւորի Անգլիացի վարպետաց ազդեցութիւնը ուժգին կերպով կը նշմարուի Աքսենդրովի ստեղծագործութեանց մէջ:

Լոնտրա գտնուած պահուն շնորհալի Անգլուհուոյ մը հետ ծանօթանալով կ'ամուսնանայ իր յաճախ ճամբորդութեանց մէջ Ալեքսանդրովի թեոդորոս ծանօթացած և ընդօրինակած է հին անուանի վարպետներու գործերը. 1895էն ի վեր մինչև ցայսօր ուսուցիչ է Քրաքովայի Գեղարուեստից Ակադեմիոյ մէջ: Առաջնակարգ նկարիչ մըն է և իր նկարները մեծապէս գնահատուած են, որոնց թիւը 150ը կ'անցնի: Վերջին նկարներէն մին, գծուած 1935-



Ալեքսանդրովի Թեոդորոս

ին. կը ներկայացնէ Բոլոնիոյ Հայերը: Մեծադիր նկարի մը ուրուագիծը կը ներկայացնէ միջին դարերու մէջ հայկական գաղութի պատուիրակութիւն՝ Բոլոնիոյ թաղաւորին քով (Տօնիկիէ վի):

Ա.ՔՍԵՆԳՈՎԻՉ Յովհաննէս, վկայեալ համարակալ ընդհանուր սպայակոյտի Բոլոնական բանակին, ծնած է 1899 Սեպտ. 3ին:

Ա.ՔՍԵՆԳՈՎԻՉ Խաչատուր, հայկական իրաւանց նօտար եղած է. գրուածք մը թողած է «Ամենասուրբ եղբայրութեան բարեգործական հրիտակը» տիտղոսով, 1728ին, մեծածաւալ, 19 էջ:

Ա.Ք — փիլ. Ա.ՔԵԱՆ, հայարնակ գղ. Աղուանից Խենի գո.ի մէջ, 1900ին 460 բնակիչ ունէր, որոնց նախնիք գաղթած են Զրաբրդի, Սաչնի գո.ներէն: Մօտերը կան քանի մը գիւղատեղիք և աւերակ եկեղեցիներ:

Ա.Ֆ.Ա.ՏԵԱՆ Ա. Կ. վարիչ խմբագիր «Որբայխարհի Աստղը» ամսագրին, տպ. Պէյրութ 1925—1930:

Ա.Ֆ.ԱՐԵԱՆ Մեքոպ ք. Կիւրինի ազգ. վարժարանէն ընթացաւարտ եղած և ապա ինքնաշխատութեամբ ո՛չ միայն հայկաբան՝ այլ նաև կարող մաթեմատիկոս մ'եղած է. հմուտ թուրքերէնի և անգլիերէնի: Պերճախօս քարոզիչ մըն էր. նախ Ագսարայ պաշտօնավարած և 1915ի գարնան Տէնէք Մատէն (Կեսարիոյ շրջան) փոխադրուած էր. հաջիւ երեք ամիս պաշտօնավարած էր երբ անդահանութիւնը պատահեցաւ և այդ ատեն մարտիրոսացաւ իր խոստմնայից դակին, 18 ամեայ Գեղամի հետ, որ Գոնիայի ձէնանեան ճեմարանէն շրջանաւարտ եղած էր: (Այոյանեան՝ «Հայ Կեսարիա» էջ 2271):

Ա.Ֆ.ԹԱՆԳՈՎԻԼԵԱՆ Արմենակ, բժիշկ, ծնած Թաւրիզի մէջ 1886 Սեպտ. 27ին: Նախակրթութիւնը ստացած է ճննդավայրին Թամարեան դպրոցին մէջ, իսկ 1903ին Մոսկուա կ'անցնի բարձրագոյն ուսմանց հետեւելու համար, ուր ծագած յեղափոխութեան պատճառաւ կը ստիպուի հայրենիք վերադառնալ: Բազու հասնելով՝ հոն իր եղբայրները կը գտնէ 1905ին, հոն կը մնայ ատեն մը, հայ-թաթարական կռիւներուն պատճառաւ չկա-



Ա.ԲԱՆԵՂՈՎԻՉ Յովհաննէս

րենալով քաղաքէն դուրս կ'լլայ: Ի վերջոյ հայրենիք դառնալէ ետք՝ ժընեւի բժշկական համալսարանը կը մտնէ և 1912ին Տոքթորի վկայականը ստանալով՝ 1913ին Ռուսաստան կ'անցնի և յետոյ Թաւրիզ, ուր բժշկութեամբ կը պարապի: Համաշխարհային պատերազմի ատեն Թիֆլիս կ'անցնի ու Բարեգործականի կողմէ պաշտօնի կը հրաւիրուի: Յետոյ Նախիջևեան կը փոխադրուի և Ռուսական յեղափոխութենէն վերջ՝ շրջանային կառավարիչ կ'ընտրուի, շարունակելով իր արուեստը, 1917ին Կաղզվան կ'անցնի, հոն հիւանդանոցին մէջ պաշտօն կ'ընդունի և ժողովուրդին կողմէ Զինուորական Սորհուրդի նախագահ կը նշանակուի: 1918էն մինչև 1921 Հայաստանի և Կովկասի այլ և այլ քաղաքներու մէջ պաշտօնավարելէ ետք Թաւրիզ կը փոխադրուի, 1923ին Մարաղա, ուր 3-4 տարի մնալէ ետք, շուրջ 1927ին Ղազուին կը հրաւիրուի իր և քաղաքային բժիշկ, 1930ին Լուսաւորութեան նախարարութեան արամադրութեան տակ եղած հիւանդանոցին մէջ պաշտօնի կը կոչուի և 1932ին կրկին քաղաքային բժիշկ կը նշանակուի, ուր ցարդ կը պաշտօնավարէ թէ՛ հայ և թէ՛ իրանցի ժողովուրդին սիրոյն և յարգանքին առարկայ ըլլալով, վարելով միանգամայն հայ եկեղեցւոյ հոգաբարձութեան նախագահութիւնը: (1937, Յարուքիւն Ա. ֆի. Տեր Մեքոպեան):

Ա.Ֆ.ԻՆԳՐԱՆԻՍՏԻ, կամ Գարահիսար, գլխաւոր քղ. Պրուտայի կուսակալութեան և համահուն գաւառի մէջ, Կուտինայի Առաջնորդական վիճակի մէջ, Գլխաւոր բերքն է Ափիոն: 1900ին մօտ 20000 բնակիչ ունէր, որուն 5000ը Հոյեր էին, որոնք ունէին 2 եկեղեցի, Ս. Աստուածածին և Ս. Թորոս: Վարժարանը կը կոչուէր Ս. Սահակեան, ուր 570 երկսեռ աշակերտ կը յաճախէին, 200 աշակերտ մասնաւոր դպրոցներու մէջ: 1895ի դէպքերուն շատ կորուստներ տուին Հայերը՝ Կըսուի թէ քաղաքս Տրոյիոյ պատերազմէն վերջ կառուցուած ըլլայ մակեդոնական գաղթականութենէ մը:


Ա.Ֆ.ԿՍՍՍՍՍՍ քղ. Եկազերինոտարի վլատի վլատիկավկասեան երկաթուղւոյ դժին վրայ: Քանի մը Տրապիզոնցի հայ ընամանիքներ կան:

Ա.Ֆ.ՂԱՆԻՍՏԱՆ կեղրոնական Ասիոյ երկիրներէն մին, ներկայիս առանձին պետութիւն, հին ատեն յաճախ պարսիկ տիրապետութեան ենթարկուած: Հոս Հայերը հաստատուած են հինգերորդ դարէն սկսեալ՝ Յազկերտի օրերուն (437—458): Հայ վաղեմի գաղութը կրցած է իր գոյութիւնը պահել մինչև ԺԱ. դար: Ա.Ֆ.Ղանիստանի

մէջ բնակող Ղըլղայիւններու ցեղը նախապէս Հայերը եղած կը կարծուին, որոնց թիւը 10000էն անց է: (Տե՛ս Քեապուլ):

Ա.ՅՆԻՆ կամ Աւելին, զօրաւար Հազարացւոց, որ 840ին Սմբատ սպարապետին օրով Հազարացի ամիրապետ Ապուճաֆարի 6 կողմէ Հայաստան զրկուեցաւ նուաճելու համար Բարանը:

Ա.ՅՐԻԿԵԱՆ Ա. զընդապետ, ծնած 1873ին՝ Երեւանի մէջ, նախնական կրթութիւնը ազգային դպրոցներու մէջ ստանալէ ետք Մոսկուայի Լազարեան ճեմարանին մէջ կը ստանայ երկրորդական ուսումը և 1890ին կը մտնէ զինուորական հեծելազօրքի ուսումնարանը և զայն աւար-



Ա.Յքանիսիւեան Արմենակ (տես էջ 336)

տելով զուրս կու գայ իրրև սպայ ու կը բարձրանայ մինչև գնդապետութեան: 1917ին երբ Մեծամասնականները իրենց ձեռք կ'առնեն Երկրին կառավարութիւնը՝ զինուորականութենէն կը հրաժարի և Լեհաստան կ'անցնի ուր իր եզրօր հետ կ'ապրի Լոդո՛ քաղաքին մէջ:

Ա.Յրիկեան ընտանիք շին Բայազիտցի է. 1829ի ռուսերուր պատերազմէն ետք գնդապետին հայր եր 5 տարու ետխայ եր՝ Հայաստան կը գաղթէ: Ա. Ա.Յրիկեանի պապը Բաղաբէն Լեւոնուոր հարուստներէն մին եղած է Մանսեսի Ավրիկեցի Յովնանէն անունով. որ իր հօր հետ երուսապետ զացած էր ուխտի Գնդապետին մայրը Վարդ Պատրիկեանէրու ազնուական ընտանիքէն էր, որոնք նոյնպէս 1829ին Բայազիտէն Գիւմրի Ալեքսանդրապոլ-Լեւոնական կը գաղթեն:

Ա.ՅՐԻԿԵԱՆ Տիգրան, եղբայր գնդապետ Ա.ի, 1000 տար յօգուտ ներգաղթի նուիրելէ ետք, 1936ին Հ. Բ. Ը. Միութեան 3000 տարի գումար մը նուիրեց, ի յիշատակ Ղևոնդ Արքեպիսկոսի Նուպարաչէնի մէջ շէնք մը կառուցանելու համար: (Միութիւն 1936 թիւ 177):

ԲԱԲ

ԲԱԲ, որդի Տիգրանայ Հայկազնի, անդրանիկն ըլլալով հանդերձ՝ չյաջորդեց իր հօրը, տեղի տուաւ իր կրտսերազոյն եղբօր Վահագնի որ աւելի քաջ էր:

ԲԱԲԱՋԵԱՆ s. Փափագեան:

ԲԱԲԱՋԵԱՆ Գարեգին-Յովն. լեզուագէտ, թարգմանիչ, ծնած Իզմիր 1833ին, աշակերտ Մեսրոպեան վարժարանի՝ ուր Պետրոս պէյ Յուսուֆի հաստատած ֆրնս. և անգլիերէն լեզուաց ուսուցման շնորհիւ կը հմտանայ անոնց: Մեսրոպեանի շրջանը լրացնելուն, ժամանակակից բոլոր անգլիագէտներուն պէս՝ իրր թարգման կը ծառայէ Խրիմի պատերազմին (1854—6) անդլ. բանակին մէջ՝ ուր սիրելի կը դառնայ զօրապետին, որ կը խոստանայ Անգլիա դրկել զինք յետ պատերազմի: Խոստումը կ'իրագործուի: Բարազեան կ'անցնի Անգլիա, քանի մը տարի կը մնայ հոն, ապա կը մեկնի Յուրին՝ ուր կ'ապրի երկար ատեն ու կը մտերմանայ անգլ. ամուսի մը, որուն ամուսնոյն մահէն ետք 1868ին կը պսակուի կնոջ հետ: Այս անգլուհին կը սորվի յետոյ հայերէն և անձնուէր զօրավիպը կ'ըլլայ հայ ամուսնոյն: Բարազեան իր կնոջ հետ Իզմիր կը դառնայ եւ Ընրեցարան մը կը հիմնէ և 1876ին նորէն Անգլիա կը վերադառնայ ամենակարեւոր և անմոռանալի դեր մը կատարելով, ինքը հանդիսանալով Հայկ. եկեղիցի շարժման ոգին և զսպանակը Լոնտոնի և Մանչեսթրի Հայոց օժանդակութեամբ իր անձնական բարեկամ ձէյմս Պրայսի՝ նաև վարիչը Պոլսոյ պատրիարքարանի բանկիք ուղղութեան: Իր ատենապետութեամբ կը զուժարուի 1878 Մարտ 19ին անգլեհայ Յանձնաժողովի նիստը Պրայսի տան մէջ, ի պատրաստութիւն արտաքին գործոց նախարար Լորտ Տէրպիի մատուցուելիք Յիսասակալքին, Հայկական Խնդրոյն վրայ: 1882—3ի ատենները Իզմիր կը վերադառնայ եւ 90ական թուականին կրկին Անգլիա կ'անցնի Հայկ. Հարցին վերարժարժման հետեանքով: 1894ին Երուսաղէմ ուխտազնացութեան կ'երթայ և Իզմիր դառնալով՝ հոն կ'ապրի ցմահ (1908 մարտ):

Բարազեան բացի ազգային դատով աշխատելէն՝ ձէյմս Պրայսի Մասիս բարձրանալուն նկարագրականը ներկայացնող «Transcaucasia and Ararat» երկը թարգմանած է և 1890ին Պոլսո

տակ տուած: Յաջողապէս թարգմանած է նաև Շէյքսպիրի Համլէթն ու Օթելլոն, ալեւոյթի տարիներուն ալ սկսած էր յանգաւոր թարգմանել Հոմերոսի Իլիականը՝ որմէ նմոյշ մը միայն երեաց: (Թեոդիկ՝ «Ամենուն Տարեցոյց» 1926 էջ 669—71):

ԲԱԲԱՆԱՆԵԱՆ Առաքել, տե՛ս Լեօ:
ԲԱԲԱՆԱՆԵԱՆ Յակոբ, Թիֆլիսեցի դրող մը, որ 1896-1900 հրատարակած է փոքրիկ պատմուածքներ:

ԲԱԲԱԼ, գղ. Իրանի, ունի 28 հայ ընտանիք և փոքր դպրոց մը:

ԲԱԲԱԼԵԱՆ Ա. Բժիշկ, Գաշնակցական գործիչ և հրատարակիչ Թիֆլիս լոյս տեսնող (1917-1920) ԱՇխատուոր օրաթերթին: Մասնակցած է նաև համալսարանային պատերազմին հայկական բանակի կողքին կուսելով (Տե՛ս Ժազ Ժամկոչեանի ալպոմը): Ինքն է որ 1918ին Պոլսո կ'երթայ միայնալու Ահարոնեանի պատուիրակութեան:

ԲԱԲԱԼԵԱՆ Արուս, ուսուցչապետուհի Երևանի քոնսերվատիւարի մէջ:

ԲԱԲԱՅԵԱՆ Արամ, 1925—1932ին Երևանի մէջ հրատարակուած «Հայաստանի Գրապալատ-տպագրութեան տարեգիրք» ի խմբագրութեան մէջ եղած է:

ԲԱԲԱՅԵԱՆ Արմենիա տե՛ս Գառպոնէլ:

ԲԱԲԱՅԵԱՆ Ալեքիք, բժշկապետ, ծնած է Ալեքսանդրապոլ և վախճանած ի Մէօթոն (Յրանսա) 1914 Յունուարին, հայրն է երաժշտագէտ-երգչուհի Օր. Մարգարիտի և նկարչուհի Տիկ. Գառպոնել Արմենուհիի:

Տոքթ. Բարայեան 1879էն սկսած լոյս ընծայած է Թիֆլիսի մէջ շատ մը առողջապահական գրքեր: (Տե՛ս «Նոր Մատենագրութիւն» Հ. Ղազիկեանի էջ 291. տե՛ս նաև Թեոդիկի «Ամենուն Տարեցոյց»-ը 1915 էջ 392):

ԲԱԲԱՅԵԱՆ Լեւոն, թարգմանած և Թիֆլիսի մէջ լոյս ընծայած է Ահօի, Իրսէնի, Հայրէի, Նորդատուի, Վերգաի, Վիլլէի և Ռ. Վիրխովի գործերէն:

ԲԱԲԱՅԵԱՆ Խաչատուր, գրած է Վաղաժամ մանողերգութիւն 5 արարուածով, տպ. Թիֆլիս 1904: Նոյն տարին լոյս ընծայած է Բանաստեղծութիւններ, Առաջին հատոր:

ԲԱԲԱՅԵԱՆ Մարգարիտ, զուսար բժշկապետ Ա-

ւեաիք Բարայեանի, կ'աւարտէ նախ Թիֆլիսի կայսերական երաժշտանոցը՝ իրրե զաշակարուէի կ'անցնի Տրէզորն, կ'աշակերտի բրոֆ. Ֆ. Շօյցի, ուր կը սկսի երգի զասեր առնել. Թիֆլիսի կայսերական երաժշտանոցը կը հրաւիրուի իրրե երգեցողութեան դասատու, երկար չի մնար հոն, համաշխարհային պատերազմէն առաջ Բարիդ կը հաստատուի ուր ցարդ ունի իր երգանոցը: Օրիորդ Մ. Բարայեան շատ մը նշանաւոր երգիչներ մարզած է, իր աշակերտն է օրինակ նշանաւոր Բօյ Տրէէն, որ վերջերս (1938) Գահիրէի արքայական օրերայի իատրոնին մէջ երգեց բուն ծափեր խելով:



Օր Բարայեան, մեծատաղանդեղեղունէին, կոմիտաս վարդապետի մաս մը ժողովրդային երգերը զաշակեցորած է:

ԲԱԲԱՅԵԱՆ Սեւիպան, Հայկ. Ս. Ս. Հանրապետութեան կեղր. Գործ. կոմիտէի որոշմամբ՝ Հայկական պետական փլանային Յանձնաժողովի նախագահ կը նշանակուի 1937 Հոկտ. ին:

ԲԱԲԱՅԵԱՆՅ Աբրահամ Մարտիրոսեանց, ծնած է Շամախ 1824ին, որդի Մարտիրոս Բարայեանի որ ոսկերչութեամբ պարապած էր և բանաստեղծ էր: Աբրահամ Բարայեանց ալ գրած է բանաստեղծութիւններ, որոնք Գրիգոր ք. Գրիգորեանցէն հրատարակուած են Բագուի մէջ Զարկեարի փնտր խորագրով: Այս գրքին երկրորդ տպագրութիւնը 1890ին տեղի ունեցած է:

Աբրահամ Բարայեանցի մասին գրուածք մը կայ Արձագանգի մէջ (1886 ք. 71):

ԲԱԲԱՆ, պարսիկ բռնաւոր մը, որ 840ին դօրանալով Հայաստանի մէջ ապստամբած էր Հագարացոց ամիրապետէն: Սմբատայ խնդրանքով Ապուճաֆար Աֆշինը բանակով Հայաստան ղրկեց, Բարանը նուաճելու համար: Պատերազմի պահուն Սմբատ սպարապետի որդին Սահլ կը ձերբակալէ Բանանը:

ԲԱԲԱՆՔ կամ Բարունք, հին գիւղ Սիւնեաց ձահուկ գու. ի:

ԲԱԲԱՋԱՆ, գղ. Գուգարաց Զորափոր գու. ի մէջ: ԲԱԲԱՋԱՆ, հայ աշուղ մը կը յիշուի Բիւրակնի մէջ (1898 էջ և 69):

ԲԱԲԱՋԱՆԵԱՆ, Հ. Հանրապետութեան պատերազմի Կ. Պոլիս 1918ին:

ԲԱԲԱՌԻ, գղ. Ատրպատականի 330 հայ բն. ունի և եկեղեցի մը:

ԲԱԲԱՏՈՒՎԱ, ս. Պապասօլ:

ԲԱԲԱՔԻՇԻ կամ Պապափիշի, գղ. Այրարատայ վարժանունիք գու. ի մէջ, ունի 75 ա. հայ բն. Յովհաննէս անուամբ եկեղեցի մը:

ԲԱԲԱՔԻՇԻ, գղ. Նիգ գու. ի մէջ բն. 70 տուն թաթարք:

ԲԱԲԳԷՆ Ա. Կիլիկեաբեան, Աթոռակից կթղ. Տանն Կիլիկիոյ, ծնած է Այնթապ 1868 Մարտ 28ին, մանկութեան անունն էր Յարութիւն: Նախնական կրթութիւնը իր ծննդավայրի վարդանեան կրթարանին մէջ ստանալէ ետք՝ հոգեւորական դասնալու փափագով Երուսաղէմ կ'ուղեւորուի և ատեն մը Ժառանգաւորաց վարժարանին մէջ ուսանելէ ետք ծննդավայրը կը վերադառնայ և 1889ի աշնան Արմաչ կը մեկնի, հոն ուսանելու և եկեղեցական ասպարէզը ընդգրկելու համար: Հինգ տարի ետք այդ ատենի Արմաչու վանահայր Օրմանեան սրբազանէն արեւգայ կը ձեռնադրուի 26 Մայիս 1896ին մասնաւոր վարդապետութեան գաւազան կը ստանայ Օրմանեանէն, զրկելով իր քեզր Եղիշէ պատմադրին վրայ քննական ուսումնասիրութիւն մը, որ Իգմիրեան մրցանակին ալ կ'արժանանայ (1898ին) և զոր աւելի զարգացնելով 1908ին լոյս ընծայեց Վիեննայի Միթիարեանց տպարանէն:

Վարդապետական գաւազանը ստանալէ ետք Բարգէն վրդ. նուիրուեցաւ իր եկեղեցական կոչումին: 1896ին Արմաչէն Պոլիս կ'անցնի և Օրմանեանի — որ այդ ատեն Պոլսոյ պատրիարքական Աթոռ կը գրաւէր — անձնական քարտուղար կը նշանակուի, պաշտօն մը որ զինքը կը մարդէ վարչական ասպարէզին, Համիտեան չըրջանին մէջ այնչափ փափուկ և վաւանգաւոր: Այդ չըջանին Բարգէն վրդ. միանգամայն Եէնիքէօյի և Պէշիկթաշի քարոզչութիւն ըրաւ:

1897—9 ձանիկի, 1899—1900 Տարօնի առաջնորդութիւնը վարեց և իրրե բարեկամ Զօր. Անդրանիկի կասկածելի դառնալով յաշս Համիտի 1901ին բանտարկուեցաւ և Օրմանեանի ջանքերով աղատ արձակուելով՝ Պոլիս կ'անցնեցաւ, ուր մնաց վեց տարի Ղայաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն քարոզիչ և մատենադարանապետ կարգուելով: Այդ չըջանին է որ 1905—6 «Լոյս» կրօնական բանասիրական շարաթաթերթը խմբագրեց: 1907ին Արմաչու դպրեվանքին փոխ վանահայր կարգուեցաւ և 1909ին Գաղատիոյ Առաջնորդ ընտրուելով 1910ին Ս. Էջմիածին գնաց

և Մատթէոս Իզմիրլեան կաթողիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: 1913ին իր ծննդավայրը այցելեց ուր նախագահեց Կիլիկեան ձեմարանի բացման հանդէսին, միանգամայն Կիլիկիոյ կաթողիկոսարանն ու Կ. Պոլսոյ պատրիարքարանը ներկայացնելով, այդ հանդէսին զուգորդուած էր Հայկական տպագրութեան 400 ամեակի տօնը (1913 Հօկտ. 26):

Այնժամակի Կիլիկեան ձեմարանը, որ Ամերիկայի մէջ այ ունեցաւ Օմանդակ մարմին մը, Միհրան Գարակէօզեանի քաջայերու թեամբ, և որուն տնօրէնութեան կոչուած էր սրբ. Արմենակ Չամիչեան Բարգէն եպ.ի համար կեանքի նպատակ մ'եղած էր այլևս Այդ պատճառաւ նա յաջորդ տարին դարմանումի համար երբ Եւրոպա անցած էր՝ Կիլիկեան ձեմարանին դատը զօրեղապէս — և յաջողապէս — կը պաշտպանէր Յրանսայի և Անգլիոյ ունեւոր ազգայիններուն մօտ:

Վրայ հասնելով համալսարնային պատերազմը՝ Բարգէն եպ. Ամերիկա անցաւ և Նիւ Եորքի մէջ բժշկական յաջող գործադրութեան մը ենթարկուելէ ետք տասը տարի հոն մնաց իրրեւ Առաջնորդական տեղապահ: Պահ մը փորձեր Երաւ հայ եկեղեցական ընծայադուներ պատրաստելու Նիւ Եորքի Եունիըն Աէմինարիին մէջ, բայց չներկայացան թեկնածուներ:

Բարգէն եպ. Ամերիկայի մէջ ևս հրատարակեց Տաւոս շարաթաթերթը (1918—9), «Քաջն Վարդան»ը (1920ին), «Հայաստանեաց եկեղեցի» անուն տետրակը:

1923ին ուխտաւորութեամբ Երուսաղէմի Ա. Յակոբայ վանքը այցելեց. Եւրոպա, Եգիպտոս, Սուրիա ձամբորդելէ ետք կրկին Երուսաղէմ վերադարձաւ իրրեւ թիկունք իր մեծ վարպետին Դուրեան պատրիարքին իր ջանքերով էր սր պ. Պատրիկ Կիւլպէնկեան Երուսաղէմայ ժառանգաւորաց վարժարանին տարեկան 5000 տոլար յատկացուց, և Բարգէն եպ. 1925էն սկսեալ 5 տարի այդ վարժարանին մէջ դասախօսեց և խմբագրեց «Արոն» ամսաթերթը:

Այդ շրջանին տեղի ունեցաւ Եղիշէ Դուրեան պատրիարքի յիսնամեայ յորեկանը, որուն մահէն ետք ձերուսաղարդ Ն. Օժ. Սահակ Ա. Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ՝ Թեմական Ժողովին հաւանութեամբ Բարգէն Արքեպիսկոպոսը իրեն Աթոռակից նշանակեց և օծեց իրրեւ կաթողիկոս 1931 Ապրիլ 30ին:

Բարգէն Ա. կթղ. արգարացուց ձերուսաղարդ հայրապետին ինչպէս և ամբողջ ազգին յոյսերը: Ասոյ պատմական մայրավանքէն վտարուած Ա-

թոռին վերահաստատուածը Լիբանանի ծովափին վրայ, անոր շրջափակին մէջ վերածնունդը հողեւոր և խմացական նոր շարժումի մը՝ մեծագոյն շարժով արդիւնքն է Բարգէն կաթողիկոսի: Բարգէն կթղ. զրական մարզին մէջ ևս աչ-



Շ.ՈՐՀԱԶԱՐԴ Տ. Տ. ԲԱՐԳԷՆ Ա. ԱԹՈՒԱԿԵՑ ՕՐԲ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵՄԻ ՏՈՒՆ, ԿԵԼԵԿԻՈՑ

քառու տեղ կը գրաւէ իր պատմական-բանասիրական գրքերով ու յօդուածներով՝ որոնք հանդէսներու, տարեցոյցներու մէջ տարտղնուած են, իր և կամ ԲԱԿ անուակ տակ:

- Առանձին հրատարակած գործերն են.
- 1. Կիլիկիա արտատպուած Թիֆլիսի «Լուսմայ»էն. տպ. 1896, 40 էջ, Բակ ստորագրութեամբ:
- 2. Ժողովուրդին Տօնացոյցը տպ. Պոլիս 1901 87 էջ:
- 3. Քարոզներ Ա. հատոր, տպ. Պոլիս 1904, ԺԵ+388 էջ:
- 4. Ծով. Ծով.Տլուֆ և Հոսմ-Կլայ, (քարտէզով միասին). պատմական և տեղակազրական ուսումնասիրութիւն (նիւթեր եկեղեցական պատմութեան համար) տպ. Վիեննա 1904, 117 էջ:
- 5. Կոլոս Յովհաննէս պատրիարք, պատմագրական և բանասիրական ուսումնասիրութիւն (նիւթեր եկեղեցական պատմութեան համար). Ա. մաս՝ Կոլոս.— Բ. մաս՝ Ղալարիոյ Ա. Լուսաւորիչ եկեղեցին.— Գ. մաս՝ Կոլոսի յիսուսակարանները: Տպ. Վիեննա 1904, ԺԳ+227 էջ:
- 6. Միւնսնաար (Աղօթագիրք՝ յատկապէս պատ-

բաստուած թուրքերէն խօսող Հայոց համար) տպ. Պոլիս, Բ. տպ. 1904ին:

7. Լոյս կրօնական, գրական, բանասիրական շաբաթաթերթ, տպ. Պոլիս 1905—4:

8. Ուսումնասիրութիւն եղիւիւ պատմագրին վրայ, տպ. Վիեննա 1908:

9. Յիշատակարան Պասմանեան Գրիգոր պատրիարքի, տպ. Բարիզ 1908:

10. Տաւրոս շաբաթաթերթ, տպ. Պոսթոն, 1918-9: (Խմբագիր հրատարակիչ նշանակուած է Վահան Մամիկոնեան):

11. Քաջն վարդան տպ. Պոսթոն 1920:

12. Հայաստանեայց եկեղեցի, տեաքակ, տպուած Պոսթոն 1924:

13. Սիոն ամսաթերթ, որուն խմբագրութիւնը վարած է 1927—1930, տպ. Երուսաղէմ:

14. Կենսագրութիւն Դուրեան Սրբազանի, տպ. Նիւ Եորք 1929:

15. Իսլամը նայ մասեմագրութեան մեջ, տպ. Վիեննա 1930:

16. Հայ եկեղեցի, տպ. Երուսաղէմ 1930:

17. Հասկ ամսաթերթ, պաշտօնական հրատարակչի կաթողիկոսութեան, տպ. Անթիլիաս, (ինք հիմնած և վարած է 1932—36 Յուլիս):

18. Կիլիկիոյ կարողիկոսաց պատմութիւնը (այս ամէնէն արժէքաւոր գործը իր մանէն ետք տպուելի սկսաւ և տակաւին (1938) հրատարակ ելած չէ):

Բարգէն կթղ. ունի անտիպ գործեր ալ, ինչպէս Ղալաթիոյ, Անկիւրիոյ, Կարժիր վանքի ձեռագրաց մայր ցուցակները, Անկիւրիոյ և Այնթապի պատմութիւնները:

Բարգէն կթղ. աշխատակցած է Արեւել, Լուսա, Բիզանդիոն, Բիւրակն, Մասիս, Արեւելեան Մամուլ, Արարատ, Բանասէր, Հանդէս Ամսօրեայ, Հայաստանի Կոչնակ, Շեփոր (Պուքրէշ) պարբերականներուն՝ բանասիրական և կրօնական յոռուածներով: Նշանակեանք հետեւեալները.

Յովակիմ Արեւայ. Եւզոկիոյ «Բիւրակն» 1898 էջ 471, ձանկիկի վիճակի մեջ գտնուող Համեհն-ցիներու զաւարաբարբառը «Բիւրակն» 1899—1900, (13 յոդուած), Վարդապէս բառին ստուգաբանութիւնը «Լոյս» 1905 էջ 1079 և 1906 էջ 54 (14 յոդուած), ձոն Բարսեղ եւ Բարսեղ Մաւկելորեցի «Լոյս» 1905 էջ 1093, Մասայ «Լոյս» 1906 էջ 290 (20 յոդուած), Նալիան եւ Նարեկացի «Լոյս» 1906 էջ 130 (12 յոդուած), և այլն («Նոր Մատենագրութիւն» Հ. Ղազիկեան էջ 1308—9):

Բարգէն կաթողիկոս կարճատե հիւանդութենէ ետք 1936 Յուլիս 9ին ի տէր հանգեաւ Անթիլիասի մէջ:

ԲԱԲԳԷՆ ՍԻՈՆԻ (Պետրոս Փարեան), ծնած Ակնայ Բինկեան զիւղը, 1893ին Ղալաթիոյ Կեղրոնականէն շրջանաւարտ ըլլալէ ետք Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան կ'անդամակցի, Պոլսոյ Պանֆայի ցոյցին մեծ դեր կատարած և նահապետուած (Տե՛ս Փարեան Պ.):

ԲԱԲԳԷՆ տե՛ս Բաբկէն:

ԲԱԲԵԼԱՍ Ս. Անտիօքայ հայրապետ, Գ. դարուն, երբ Հոռոմայ կայսրը եկեղեցի կ'ուզէր մտնել՝ Ս. Հայրապետը արգիլեց, որոյ փոխարէն կայսրը զինքը նահապետեց իր երեք աշակերտաց հետ, որոնք կը տօնուին Հայ եկեղեցիէն Սեպտեմբերի սկիզբը:

ԲԱԲԵԼԱՍ դպիր ծերունի Մաքսիմիանոս կայսեր օրով, Գ. դարու սկիզբը կը նահատակուի 84 աշակերտաց հետ: Հայ եկեղեցին կը տօնէ Յուլիսի սկիզբը:

ԲԱԲԵԼԵԱՆ ՄԵԼԻՆԵ Մ. Առաւելապէս փոքրերու մանկավարժ ուսուցչուհին է Տիկ. Մելինէ Բարեյեան, որ երաժշտական որակով աւելցուած է և ծանօթ է նաև Թուրք, Յոյն, և Հրեայ շրջանակներուն մէջ: Տարիներով Պոլսոյ մէջ աշխատելէ վերջ Բարիզ մեկնած է, ուր իր երաժշտական ուսումը կատարելագործած է Վասքուրի, Կերարտի և Թիպէրթի պէս վարպետներուն ձեռքին Տիկ. Մելինէ: ԲԱԲԵԼԵԱՆ տակ:



Չօրաւոր կամքի տէր Տիկ. Բարեյեան նուիրուած է իր ասպարէզին և Թիպէրթի մէթոտով կ'ուսուցանէ անխոնջ համբերատարութեամբ:

1933էն սկսեալ հրատարակային աշակերտական ռեսիւրայներ կու տայ այլ և այլ մայրաքաղաքներու մէջ, որոնք մեծ խանդավառութիւն առաջ բերին: (Հիւ. Տարեցոյց 1935 էջ 351): Ներկայիս (1938) կը գտնուի Պուքրէշ:

ԲԱԲԵԼԵԱՆ Սեփան, երգահան. դաշնակահար, շրջանաւարտ Պէրպէրեան վարժարանէն, Պոլսահայ երաժշտական շարժումին առաջնակարգ մշակներէն. 1906էն ի վեր դաշնակի անխոնջ ուսուցիչ, որ իր արուեստագէտի խառնուածքին կը միացնէ հոգեբան մանկավարժի թանկագին յատկութիւնները Կարելի է ըսել թէ իւրաքանչիւր ա-

չակերտի համար մասնաւոր մէթոս մը ունի, մէթոս մը՝ որ պիտի համապատասխանէր տղուն ֆիզիքական և մտաւոր ուժերուն: Այսօրուան դաշնակի մեր լաւագոյն ուսուցիչներուն կարեւոր մէկ մասը կամ օժտուած դաշնակարուհիները, Առաքելեան, Տիկին Բարեյեան, Ա. Գալաֆեան (Պոլիս), Տիկին Զապէլ Լ'նքապապեան (Բարիզ), կարգ մը երգչուհիներ ևս իրմէ ստացած են երգի և երաժշտութեան ճաշակը: Ինքը հղած է հրապարակային ռեսիւրալներու առաջին հիմնադիրը Պոլսոյ մէջ (1912ին): Դաշնակի առաջին դասերը առած է իր քրոջմէն Օր. Նազիկ Արէլեանէն. անկէ վերջ ինքնաշխատութեամբ յառաջանալով, անըստ պառ ջանքերով ու նուիրումով ստեղծած է սերունդ մը, որ իր կարգին այսօր ուսուցանելու ասպարէզը ընդգրկած է: Իրրև երաժշտական քննադատ Ս. Բարեյեան համբաւ կը վայելէ: Թափանցելու և յտակօրէն վերլուծելու իր կարողութիւններուն միացնելով ճաշակաւոր և նուրբ գրողի ճշմարիտ ձիրքեր, կշռոյթաւոր ոճ, իմպօն, պայծառ դատողութիւն և յստակ վճիռներ:



ԲԱՐԵՅԵԱՆ ԱՍԵՓՈՆ

Ստ. Բարեյեան ունի նաև իսեալից հասած վիպակ մը, որ Հանրագիտակ թերթին մէջ իրրև թերթին հրատարակուելէ ետք 1900ին առանձին ալ յոյս տեսած է:

ԲԱՐԵՅԵԱՆ Ս. Պաղտաւ:
ԲԱՐԵՅԵՒԻ, Բայբերդ կամ Պայպուրք, ի հնունս նշանաւոր բերդաքաղաք Հայաստանի հարաւոր գլխաւոր քղ. կամ աւան համանուն գաւառակին: Տեղւոյ շիրքը, անունը և մերձաւոր բովերու սահմանները կարծել կու տան, թէ Հայոց հնագոյն քաղաքներէն մին լինի սա, և թերևս շինուած Հայկազն Երուանդեան Տիգրանի Բաբորդիէն, կամ լաւ ևս Բայ անուամբ մէկէ մը, վասնզի հնագոյնները Բայբերդ կ'անուանէին. աւանդութիւն մ'ալ կայ թէ Սկիւթացիք շինած են Մեծն Աղեքսանդրի ժամանակ:

Քաղաքս կը յիշուի Մովսէս Արքեանցիէն, Արիստակէս Լաստիվերոսիէն ժ. Բ. դարու վերջերը կը յիշուի Բարեղի հայ ուխտը Աստուածատուր

անուանով քարեպաշտ մէկը, որ գրել տուած է Մոյ Առաքելոց վանքի մէջ պահուած մեծ և ստուար Տօնակաւը կամ ձառքնիքը:

1307ի Սոյ ժողովին մէջ ներկայ է Բարեղի եպ. Սահակ: Ժ. Գարու մէջ վենետիկցի Մարգո Բոյոյ և Յովսէփ Պարպարոյ Բարեղ այցելած են: Ժ. Գարուն ըստ վենետիկցի ճանապարհորդ ձեռնարկի Բարեղ 1500 տուն բնակիչ ունէր:

Հինաւուրց բերդը կը գտնուի քաղաքին հիւսիսային կողմը՝ բրգաձև քարալերան մը գագաթին վրայ որ երեք կողմէ անմատոյց է: Կ'ըսուի թէ 1828ի պատերազմի օրերուն Ռուսները բերդի պահարաններէն միոյն մէջէն հանած են շատ զէնքեր, կահեր և արծաթեայ որորան մը:

Ճորոխ գետը քաղաքիս մէջէն կ'անցնի և երկուքի բաժնուած քաղաքի մասերը 3 կամուրջներով կը կապուին: Գետային ճամբով քաղաքս միացած է Պաթումի հետ, որմէ 126 հզմ. հեռի է:


1900ին յայտնի չէր թէ քաղաքս որքան բնակիչ ունի: Երկու վարժարաններու աշակերտաց թիւէն կարելի է հայոց թուոյն մասին գաղափար մ'ունենալ: Արամեան դպրոցը 1901ին 73 մանչ և 62 աղջիկ, իսկ Մեսրոպեան վարժարանը 155 մանչ և 69 աղջիկ կը յաճախէին: Հայերը 4 եկեղեցի ունէին, Ս. Աստուածածին, Հրեշտակապետ, Աստուածամայր և Ս. Յովհանն անունով: Առաջին երկուքը կը յիշուին ժ. Գարու սկիզբը գրոց յիշատակարանաց մէջ: Ս. Աստուածածին եկեղեցին 1848ին զեղեցիկ ձևով մը նորոգուած է Կիրիլիցի Կարապետ վրդ.ի օրով: Միւս եկեղեցիները ներքուստ մթին են և արտաքինով խեղճ: Հայոց դերեղմանատան մէջ ՊԶԶ (=1437) թուականով արձանագրութիւններ կան:

ԲԱՐԵՅԵՒԻ գաւառակը որ կ'իջնայ Կարնոյ կուսակալութեան ներքև՝ ըստ Բիւնէի ունէր 58500 բն. 47000 մահմետական, 10500 հայ. 600 յոյն, 400 ալլակայք:

Հայերը 30 գիւղերու մէջ ցրուած էին, գրեթէ ամէնքն ալ ունէին իրենց եկեղեցին, ոմանք ուր 50—150 տուն բնակիչ ունէին՝ 2 եկեղեցի: (Էվիլիկեան «Բնագիտութիւն»):

Բաբերդ քաղաք ժ. Գարեկն կը յիշուի յիշատակարանաց մէջ: 1382ին Բաբերդի առաջնորդ Տեր Յովհաննէս Ս. Թորոս վանքին Աստուածաւունջ մը կը նուիրէ: 1434ին Առաքել գրիչ, աւել. Թադէոս կրօնաւորի, Բաբերդի մէջ Ս. Նախապկայ Ասեփանու եկեղեցի մը կը յիշէ: 1450ին Բաբերդը Ջահանգիրէն կը գրաւուի: 1467ին Տեր Վարդան վրդ. Բաբերդի որդի Սիմեոնի, Միխայել Ասորիի պատ-

մուքեան ձեռագիրը վկայութեամբ Մակար եպ.ին եւ Տէր Պօղոսին յիշատակելու համար Վուկաս Վրդ.ին: 1480 թ. Սաղմոսի յիշատակարանի մը մէջ (սեւ Հանդէս Ամսօրեայ» Թ. արի էջ 247), կը յիշատակուի թէ 1473 թ. քաղաքը կ'աւելնէր իր անկողնի Ուրուսի Ուրուսի



Բ Ա Բ Ե Ր Կ

Հասանէն: Ըստ 1489 թ. գրուած Յայամաւորքի մը յիշատակագրին («Քիւզանդիոն» 1903 թ. 1953) Բաբերդ գաւառին մէջ է Բերբակ անապատը: 1559 թ. Սարգիս երէց ի դուռն Ս. Հրեշտակայեցիին շարական մը կը կազմէ: Ժ. դարուն մէջ բաւական Բաբերդցիներ Լեհաստան եւ Պօլոնիան կը գաղթեն. այսպէս 1603 թ. եւ 1619 թ. Բաբերդցի Ղազար գրիչ մը Լոյս կը գտնուի. հոն է 1617 թ. Բաբերդցի Մեայ յիւով, նոյն է քերես ու 1621 թ. եագլովցա ձեռագիր մը կ'ընդօրինակէ եւ 1629 թ. Սեչով (Սուչավա) կը գտնենք զինք: 1618 թ. Առաքել Բաբերդցի գրիչ ի Կ. Պօլիս, 1652 թ. Սիմեոն վրդ. Բաբերդցի գրիչ ի Կիլիկիա եւ այլն:

ԲԱԲԵՐԿ, հին գղ. Սեբաստիոյ (Յիշատակարանք):
 ԲԱԲԵՐՅԻՔ, հին գիւղ Եկեղեցաց գո.ի (Յիշակր.):
 ԲԱԲԸԳՆԵՍ, հայարնակ գղ. Տիգրանակերտի:
 ԲԱԲԻԵԱՆ Սիմոն, բանաստեղծ Խ. Հայաստանի մէջ:

ԲԱԲԻՂԱՍ Խուժիկ, եպ. Սիւնեաց Ա. դարուն մէջ:

ԲԱԲԻԿ Առաքիտնեան, Ղեկնդեանց օրով, ինքն այ մէկն է անոնցմէ՝ որոնք անձամբ Յազկերտի կ'երթան 452 թ.:

ԲԱԲԻԿ Սիւնի, աներ Արշակ Գ. թգ.ի (386):

ԲԱԲԻԿ Սիւնի, որդի Վասակ ուրացողի (450):

ԲԱԲԻԿԱՆ Աստուածատու, արքեպիսկոպոս եւ ընդհ. Արքայ Վիեննայի Մխիթարեան Միարանութեան, ծնած նոր Ջուղայ 1738 օգոստոս 5 թ., փոքր հասակէն Ս. Ղազարու վանքը կը զրկուի:

ուր ուսման շրջանը աւարտելէ ետք վարդապետ կը ձեռնադրուի: Մխիթար Արքաճօր յաջորդ Մելքոնեան Արքաճօրմէ քանի մը միարաններ ղտգոն մնալով 1773 թ. կ'ուզեն ղինքը հրատարեցնել եւ որին մը Արքայ ընտրել, չ. Բարիկեան այդ ղտգոններէն մին էր. և երբ չեն յաջողիր իրենց նպատակին. վանքէն Թրիէսթ կը մեկնին և հոն կը հաստատուին. երկու տարի ետք Աւստրիոյ կայսրուհի Մարիա Թերեզայէն կը ձանչցուի և կը հաստատուի այս Միարանութիւնը: Մինչեւ Մելքոնեանի մահը Թրիեստի վարդապետները նըպատակ չուէին ցօյերջ անջատ մնալ մայր վանքէն: Մելքոնեանի յաջորդ Ազոնց Արքաճօր օրով երբ կարելի չեղաւ համաձայնութիւն գոյացնել՝ 1803 Մայիս 3 թ. Թրիեստի Մխիթարեանք իրենց Արքայ ընտրեցին Աստուածատուր վրդ. Բարիկեանը, որ իրեւ երիցագոյն՝ երկար ժամանակ առաջնորդ եղած էր և երեք տարի առաջ բորականալէն տիպոգրատուր Արքեպ. էջմիածնի անուանուած, Պիոս է պատէն հաստատուած եւ Յունիս Տին օծուած էր:

Բարիկեան նոր ուժով իրեն գործ ըրաւ նախ Միարանութեան դրամական վիճակը բարեկարգելը որը միայն 1810 թ. քաղաքական փոփոխութեան առեւ կրցաւ ի գլուխ հանել: 1810—11 թ. Թրիեստի Մխիթարեանք Վիեննա կը փոխադրուին Յունուար 8, 1811 թ. Բարիկեան Արքեպ. ի կը յանձնուի Փրանկիսկոս Ա. Կայսեր հրովարտակը, որ կու տար Մխիթարեան հայերուն ի բնակութիւն քաղաքին Am platzl կոչուած արուարձանին մէջ վաղուց լքեալ՝ վերարտար կրօնաւորաց (capucins) խորհուրդ վանքն ու Եկեղեցին, որ 1813 թ. փոքրիկ գումարով մը սեփականութիւն եղաւ Միարանութեան: 1811 թ. վերջերը Բարիկեան Արքայ Թրիեստէն փոխադրուած տառերով տպարան մը բացաւ որ իսկոյն գործի սկսաւ: Արեւելքէն պատանիներ բերելով նորընձայարանը բացուեցաւ. և վանական կեանքը սկսաւ:

Բարիկեան ընկճուած այլևս 85 ամեայ ձերութեան բռնան տակ, կ'առաջարկէ ընտրել ընդհանուր տեղակալ մը, որ կարենայ յառաջ վարել Միարանութեան ծանրահոգ գործերը. որուն առակ կը նկատուի ընդհանուր գործակալն Չ. Արիստակէս Ազարեան: Երկու տարի ետքը (18 Ապրիլ 1825) կը վախճանի ի Տէր Բարիկեան Արքաճօր, զո՛ւած իր բովանդակ կեանքը Մխիթարեան Տան համար: (Քաղուած «Ակնարկ Մխիթարեան Գործունէութեան» գրքէն):

Բարիկեան Գեր. Ա. 1818 թ. 108 էջնոց գիրք մը

կը հրատարակէ հետեւեալ ճակատով. — Համա-
nos յայտ յանգլիստներուն երկուց նշանաւորեանց,
ընդդէմ երկուց մտաւոր



գրութեանց: Առաջինն
Վ. Հ. Միխայէլի Չամչեան՝
քե Օսնեցիին իցե իմաստա-
տեհայրապետն Հայոց՝ վկայեալն ի
սրբոց Հարց մեռոց: Երկ-
րորդն Վ. Հ. Միքսչի Աւգերեան՝
քե սեռակն Օսնեցոյն իցե ուղղա-
փառ վարդապետ-
քիւն եւ գրութիւն վե-
րոգրեալ իմաստասիրի:
Արաւելայ Գեարապատս իւ
Տեանն Տեանն Աս-
թաբիկեան Հ. Աստուածատու
ուածատու վարդապե-
տի Բաբիկեանց Արեւիկոսկոպոսի
սրբոյ էջմիածնի, եւ ընդհանրական
Աբբայի Միաբանութեան Վիեն-
նայու: Ի Վիեննա ի սպ. Հարց
Միսիբարեանց, 1817:

Բաբիկեան թարգմանած է Կ. Ր. Պիլուարտի
գործը:

ԲԱԲԻԿԵԱՆ Յովհաննէս աղա, ծնած Նոր Զուղայ,
ժ՛՛՛՛ դարու կիսուն, որ անուանի վաճառական ե-
ղած է. Արդուինցի Մինաս վրդ. Գասպարեանցի
թարգմանել տուած է Վիպասանութիւն Ամերի-
կայի գիրքը և իւր ծախիւք և արդեամբք տպել
տուած թրիեստի Միսիթ. տպարանին մէջ 1884-
6ին:

ԲԱԲԻՐԱՍ, ամբոց Այրարատայ մէջ ըստ Սղրա-
բոնի, ուր կը պահուէին Տիգրան Բ. ի գանձերը:
ԲԱԲԱՍԱՆ, գղ. Փոքր Աղբակի, ուր կը նա-
հատակուի Աւետիս 1656ին:

ԲԱԲԱՆԻՄԵԱՆ Ս. Բագու տպուած (1920—1930)
Կոմունիստ օրաթերթին խմբագրական կազմին
մէջ կը գտնուի, նոյնպէս 1829—1930ին Երեանի
մէջ տպուած Գոյաղի Կոմունիստ ամսագրի խմբ-
ագրական կազմին մէջ:

ԲԱԲԱՆՅՑ Գ. Թիֆլիսի մէջ տպած է 1897ին
211 էջնոց Նորեկ վէպը:

ԲԱԲԿԷՆ տե՛ս Բաբգէն:

ԲԱԲԿԷՆ կամ Բաբգէն կթղ. (487—492), Վա-
նանդեցի. ծնած Ոթմուս գիւղը, աշակերտ եւ
յաջորդ Յովհաննէս Մանգակունի կաթողիկոսին
(487ին), որ 491ին ժողով գումարեց Վաղարշա-
պատի մէջ, հերքելու համար Բարձուժա Նես-
տորականի և իր համախոհից վարդապետութիւնը:

Այդ ժողովին մէջ քննուեցաւ Զինոն կայսեր հրո-
վարտակը և Բաղքեղոնի ժողովը, ուր նորոգեցին
թէ՛ նեստորականութիւնը և թէ՛ Բաղքեղոնի ժո-
ղովը: Բարգէնի յաջորդեց Սամուէլ Արժկեցի:

Երուանո վրդ. «Աւարտ» ամսագրի մեջ (1907 եջ
691) ուսումնասիրութիւն մ'ունի. «Բաբգէն կրդի
ժողովի քուականը եւ սեղը»:

ԲԱԲԿԷՆ Սիսական, նախարար, կը սպաննէ Գրի-
գոր Սուփանը և 849ին կը տիրէ Սիւնեաց երկրին:

ԲԱԲԿԷՆ Սիսական. եղբայր Սմբատայ, 922ին
միացած իր եղբայրներուն հետ կը պատերազ-
մին այլազգիներէն գրաւելու համար Գողթն
գաւառը: Յաջորդ տարին Բարգէն երբ ընծանե-
րով Նախիջևան գնաց Նըսր ոսթիկանին գան-
գատելու համար Սմբատ եղբորը դէմ՝ Նըսր Բար-
կէնը շղթայի զարնելով բանտեց մինչև 929 թուա-
կանը, երբ ազատելով բանտէն՝ պատիւներով եր-
կիրը դրկեց:

ԲԱԲԿԷՆ Սիւնի, նիզակակից Վահանայ կը յիշ-
ուի 481ին:

ԲԱԲԿԷՆ Սիւնի, աներ Վահան Գողթնացոյ, որ
728ին կ'իշխէր Սիւնեաց աշխարհին, ասոր խրնդ-
բանքին վրայ Ստեփանոս Սիւնեցի Դաւիթ կթղ.
էն Սիւնեաց եպ. ձեռնադրուեցաւ:

ԲԱԲԿԷՆ Սիւնեցի վանական, կը յիշուի 971ին:

ԲԱԲԵՆՆ կամ Փափեցն. գղ. Աղձնեաց Սախա-
ձոր գաւ. ի, 1900ին 40 տ. հայ բնակիչ ունէր, ու-
րոնք ընդհանրապէս բրուտութեամբ կը զրաղէին:
Գիւղիս արեւմտեան կողմը շինուած է հոյակապ
եկեղեցի մը Ս. Յարութիւն անուամբ. մօտերն է
Լուսապսուղ Ս. Սահակ մատուռը («Լուսապ» 1900
Ա. 214):

ԲԱԲՈՒՐԵԱՆ Գեորգ, խմբագրած և հրատարա-
կած է հետեւեալ մանկական գրքոյկները, Թիֆ-
լիսի մէջ. — Մեղաւորը հէքեաթ 1894ին լոյս տե-
սած, Նոր Փնջիկ, գիրք առաջին տպ. 1895ին,
Փոքրիկ ընթերցարան, տպուած 1895ին, Փոքրիկ
գրոյցներ՝ տպ. 1896: Ունի նաև թարգմա-
նութիւններ Վ. Հիւկոյէն, Կ. Մենդէսէն, Մ.
Սէրասէն:

ԲԱԳԱՆՈՒԻ, հին գղ. Սիւնեաց Զորք գաւ. ի:

ԲԱԳԱՆԻՃ կամ Բագայառիչ. հին և նշանաւոր
աւան Բարձր Հայոց Դերջան գաւ. ի, Մասիսթունի
հիւսիսային արեւմտակողմը: Տիգրան Բ. աւանիս
մէջ կանգնեց Եփեսոսու Դից կուռքը, զոր Ար-
տաշէս Ա. բերած էր Յունաստանէն. շինեց մեհ-
եան և մեհենին առջևը բազին: Ազաթանգեղոս
կը գրէ թէ Գրիգոր Լուսաւորիչ Բագայառի-
ճի Մրճական (Եփեսոսոսի) մեհեանը կործանեց:
1900ին Դերջանի այս բարգաւաճ գիւղը 5—6000

տուն բնակիչ ունէր, որուն 450ը Հայեր էին: Հայք ունէին Ս. Յակոբ(?) անուամբ եկղ. մը, 55 աշակերտով դպրոց մը: Գիւղիս կեդրոնն է հին բերքը բնական ժայռերու վրայ, որ ունի դետունուղի փախուստի ձամբայ:— Բագառիճի անուամբ կը կոչուի քովի մեծ դաշտը, ուր 990ին սպանուեցաւ Չորտուանէլ մագրիստրոսը, վրահայ Թոռնիկ արեղայի եղբորդին, Վասլի կայսեր զօրաց հետ պատերազմած ժամանակ: (Էփրիկեան՝ «Բնագոխարնիկ»):

ԲԱԳԱՌԻՃ կամ Բեգեւիճ, այս անուամբ Վերի և Վարի կամ Մեծ ու Փոքր կոչուած կրկին Հայոց գիւղեր կան Բարձր Հայոց Դարանաղեաց (Կամախ) գ. ռ. ի մէջ. իրարմէ հեռի են զրեթէ կէս ժամու ձանապարհ: Վերին Բագառիճ ունէր 80 տուն բնակիչ և Ս. Աստուածածին եկղ. մը. իսկ Վարի Բագառիճ ունէր 130 տ. բնակիչ ու Ս. Յակոբ եկղ. մը: Այս երկու գիւղերը ունէին Հայկազեան անուամբ վարժարան մը ուր 211 աշակերտ կ'ուսանէին:

ԲԱԳԱՐԱՆ կամ Բագրան, ի հնունն անուանի քղ. Այրարատայ Արչակունիք գ. ռ. ի մէջ, Ախուրեան գետի աջակողմեան ափունքը և Երուանդաշատի հիւսիսային կողմը, 5 մղոն հեռաւորութեամբ, Երուանդ Բ. շինել տուած է քաղաքս Երուանդաշատի նման, որ եւ մէջը մեհեաններ կանգնեցնելով, երբ արքունիքը Արմաւրէն փոխադրեց, Երուանդ հոն գտնուած կուռքերն ալ հոս բերաւ, և շատ բազիլիներ ունենալուն համար կոչուեցաւ Բագարան կամ Քաղաք կոչոյ:

Քաղաքս որ ի հնունն անուանի էր իբրեւ զլուխ գործոց հեթանոսական պաշտօնատեղեաց և միջին դարու մէջ սուրբ կրօնից պաշտամամբ, և Բագրատունիներու շինութեամբ և բնակչութեամբ, այժմ փոքր և աւերակ վիճակի մէջ կը գտնուի: Հրարդխէ մը և մեծ երկրաշարժէ մը կործանուած կը թուի Բագարան: Հին հեթանոսական ժամանակներու վերաբերեալ մնացորդ մը դեռ յայտնուած չէ և ոչ նախնի Բագրիներէն կտոր մը:

Արտաչէս Բ. ի օրերէն, որ Բագարանը անշքացոյց՝ հեթանոսական պաշտամունքները փոխադրելով յԱրարատ, մինչև թ. դար չի յիշուիր քաղաքիկս պատմութեան մէջ և իբրև աննշան մնացած կը թուի. վասնզի կամսարականներն իբրևնց ոստանը հաստատեցին Մարմէտի մէջ: Բայց երբ Աշոտ Մօակեր անոնց գաւառը գնաց, Բագարանի մէջ դրաւ իր աթոռը, ուր և իր բարեբախտ թոռը Աշոտ Ա. հաստատեց իր արքունական ապարանքը, ինչպէս կը պատմէ Յովհ.

կթղ. պատմարան, որ և շատ կը յաճախէր հոն: Հ. Ն. Սարգիսեան որ անձամբ այցելած է տեղւոյս, կը յիշէ քաղաքին բերդը բարձր քարածայրի վրայ, և երեք կողմերը խորանդունդ, և չորրորդը անմատչելի, քաղաքին հարաւային կողմէն միայն ունենալով վերելք մը: Բերդի արեւելեան ծայրը աշտարակին դիմաց կը գտնուի առաջին եկեղեցին Ս. Գէորգ, փոքր և կիսակործան, զոր այժմեան



Բագարանի Ս. Շուշան եկեղեցին

(1901ի) 50 տնուոր հայրնակիչք ժ.թ. դարու կիսուն նորոգեր են. Վարազայ խաչին բազմաթիւ ուխտաւորներ կու գան: Բացի Ս. Գէորգէն կան 4 եկեղեցիներ ևս, որոնցմէ մին է Բագարանի մայր եկեղեցին կամ Միանձանց ուխտը. արտաքին ձեով բազմանկիւնի քառաթև է, և իւրաքանչիւր թևի մօտ երկու կողմերը կան դարձեալ ուրիշ անկիւններ, իսկ ներքուստ չորս թևերն ալ կիսարդր են, երկայնութիւն և լայնութիւն հաւասար, թևէ թև 17 մէթր Ունի չորս ոչ միակտուր սիւներ. կործանած է գմբէթը և քովը գտնուած մատուռը, անոր շուրջը կան բազմաթիւ հին խաչքարեր ու շիրիմներ: Իններորդ դարու կիսուն կամ քիչ վերջը շինուած կը թուի այս եկեղեցին, որուն մէջ կան 11 արձանագրութիւններ ՆՆ (=955) և ՆՁԴ (=1034) թուականներով, բայց հնագոյնը անվերծանելի է: Բագարանի այս հինգերորդ եկեղեցին կը կոչուէր Տապանարան Ս. Կարողիկէ, վասնզի իր մէջ կը թաղուէին Բագրատունի իշխանազունք: Յովհ. կթղ. պատմարան յիշելով Աշոտի որդի Շապուհ սպարապետի թաղումը, կը նշանակէ անոր բարձրավանդակ զիրքը, երբ կ'ըսէ. «Եղին զնա ընդ հարս իւրում և Լեւինն Քնարանացն որ ի քաղաքագիւղն Բագարանու»: Հոս փոխադրուեցան Մուշեղի և իր հօր Սմբատ Ա. Սոստովանողի մարմինները: Քաղաքիս եկեղեցիներէն այս վեր-

ԲԱԳ.

ջինը կը թուի ձեռակերտ Աշոտի, Սմբատ Ա. թգ.ի Շապուհ եղբորը սրբույն, որ ըստ պատմչին «ի սկզբան սպարապետական պայադատութեան՝ խորհուրդ բարեաց զանձամբ արկեալ, չինէ ապա զպճնապայծառ եկեղեցին Բագրանու՝ որ ի վերայ Ախուրեան գետոյ, և զարդարէ բազում երեւի սպասուք, և առնէ նաւակատիս աստուածային գոզցես պատշաճողութեամբ»:

Արձանադրութիւններէն կը յայտնուի, որ Բագարան ևս ԺԳ. դարուն սկիզբը նուաճուեր է Թամարա թագուհույն Չաքարեանց զօրավարներէն, որոնց ժամանակ կը յիշուի (1211) Գրիգոր՝ պարոն Բագարանայ, այսինքն քաղաքապետ կամ կողմնակալ, և 1224ին՝ Վարդ՝ ռայիս պատուոյ անուամբ նոյն ժամանակները Միանձանց ուխտի կամ Տապանարան վանաց առաջնորդն էր Վարդան, և անկէ վերջ 1233—5 տարիները Մխրթար ոմն Որովհետեւ այս թուականէն վերջ ուրիշ արձանագրեր չկան՝ կը կարծուի թէ քիչ տարի վերջ սկսեր է ամայանս և աւերիլ Բագարան, մեծ երկրաշարժէ մը կամ Թաթարաց արշաւանքներէ: (Էփրիկեան՝ «Բնագիտարնիկ» էջ 355-7):

ԲԱԳԱՐԱՆ. ի հնումն աւան Այրարատայ կողմիտ. գուր մէջ. այսպէս կոչուած է վերոյիշեալ քաղաքի անուամբ: Սմբատէն չինուած է աւանս, որ հոս բերաւ քնակեցուց երուանդայ ծառաները (Ա զարու վերջերը), զորս գերած էր Արշարունեաց Բագարան քաղաքէն: Այժմ ծանօթ է Աւան անուամբ, Քանաքեռ գիւղի արեւելեան կողմը: Կը յիշուի Չ. զարու վերջերը իրրե հայրենիք Յովհաննէս Գ. կթղ.ի՝ յունական մասին Հայոց: (Էփրիկեան՝ «Բնագիտարնիկ»):

ԲԱԳԱՐԱՍ, առաջին նահապետ Բագրատունեաց, ասպետ և թագադիր Վաղարշակայ (149-127 ն. ք. Ք.), սա հրեայ Շամբատի ցեղէն էր. քաջ և կորովի, որ Վաղարշակայ եղբոր Արշակի երեւիլի նախարարներէն մին ու Ատրպատականի իշխան եղած էր: Վաղարշակ այնքան կը սիրէր Բագարատը, որ վերջինս երբ կուռքերուն չուզեց պատիւ ընծայել՝ զինքը ազատ թողուց իր կրօնքին մէջ: Տե՛ս Բագրատունիք:

ԲԱԳԱՐԱՍ Բագրատունի, ասպետ, 321ին Տրդատէն Արևմտեան քանակին զօրավար կը կարգուի. 351ին Սոսրով Բ.ի Պարսից դէմ մղած պատեազմին մասնակցեցաւ և երեւելի հանդիսացաւ որ յաջող յարձակումով:

ԲԱԳԱՐԱՍ Բագրատունի, իշխան Սասնոյ, ծնած է զարու վերջերը, որոյ խնդրանքով նանա Ասորի կը մեկնէ Յովհաննու Աւետարանը 835ի ատենները երբ Հոյ սատիկանէն ետք Հայոց պատրիկ

կարգուեցաւ (835—848). 840ին երբ Հագարաց-ւոց Ապուհաֆար ամիրապետէ Հայաստան զրկուեցաւ Աֆշին, ընկճելու համար ապստամբ Բարանը՝ դարձին Բագարատի մասին ամիրապետին չար խօսեցաւ, ըսելով թէ Հագարացուց բանակին նիզակակից եղած չէր: Բագարատ 840ին կը գժտի Յովհաննէս կթղ.ին հետ, հաւատարմով կաթողիկոսարանի քանի մը զրպարտիչներուն, որոնք հայրապետը հակառակորդ ներկայացուցին իրեն: Յովհ. կթ. երբ իմացաւ թէ Բագարատ կը խորհի զինքը գահընկեց ընել՝ բանադրեց ու Այրիվանքը քաջուեցաւ: 841ին Սմբատ Բագրատունի սպարապետ և Գրիգոր Սուքան եպիսկոպոսներուն և երեք երեւելիներուն հետ ժողով գումարելով՝ արդարացուցին Յովհաննէս կթղ.ը և ետ կանչելով կրկին իր աթոռին վրայ բարձրացուցին Բագարատ զայրացած, մանուսանդ որ զինքը ժողովի չէին կանչած՝ ամէն կերպով փորձեց գահընկեց ընել կաթողիկոսը և տեղը ուրիշ մը նշանակել: Ետ կեցաւ իր խորհուրդէն, որովհետեւ կաթողիկոսը երեք անձինքն ալ չարաչար պատահասուեցան ու մեռան:

848ին Ամիրապետը, որ 840էն ի վեր ռի պահած էր. Ապուսէթ զօրավարը Հայաստան զրկեց Բագարատը ձերբակալելու համար, որ երբ Տարօն հասաւ խորհուրթեամբ իրեն կանչեց և շղթայակապ Ամիրապետին զրկեց, ուր՝ ազատելու համար ուրացաւ քրիստոնէական կրօնը, ինչպէս կը գրէ նանայի մեկնութեան թարգմանիչը. «Յայնժամ ըմբռնեալ լինէր մեծն և երեւելին այն իշխանն Հայոց վսեմամիտն, որ և զբովանդակն յանձին բերէր ունել զգիտութիւն որ ի Քրիստոս հաւատոցն, ոչինչ արութիւն քաջութեան այնուհետեւ ըստ արժանի իւրոյ մեծութեանն երեւցոյց, այլ՝ իրապէս ի վայր հոյովեալ յաստուածային հաւատոցն՝ զոր ունէր, գորեցաւ վաղվաղակի ի վին անկանդնելի կորստեանն. և ի րաց ընկնելով զղորշմ ուխտի ճշմարիտ հաւատոցն, սուգ անհնարին ըլլոր աշխարհիս Հայաստանեայց հասուցանէր»։ Թէ և կ'աւելցնէ թէ «մեղի հասած» լուրին համաձայն՝ նա իր սրտին մէջ կը պահէր քրիստոնէական հաւատքը»:

ԲԱԳԱՐԱՍ Բագրատունի, որդի վրաց Պատրիկ Աշոտի, ծնած է զարու վերջերը, սա յաջորդեց իր հօրը իրրե իշխան վրաց և կնութեանն առաւ Սմբատ Բագրատունի սպարապետին ղուստերէն մին թ. զարու սկիզբները:

ԲԱԳԱՐԱՍ Գորգեան, թագաւոր Ափխազաց ևւ Վրաց 1045—1050:

ԲԱԳԱՐԱՍ Գուրգեան, թագաւոր, պատանի հասակին Ափխազաց թագաւորական գահը գրա-

ւեց, սա 988ին իր հաւուն Բագարատայ և Դաւիթ Կիւրապաղաթի գէմ պատերազմի ելաւ, Կովկասեան լեռներէն անցնելով բանակեցաւ Կուր դեփին եզերքը, և երբ տեսաւ իր զիմացը բանակող զօրաց բազմութիւնը՝ Սակուրէթ բերդը Դաւիթ Կիւրապաղաթին նուիրելով հաշտուել խնդրեց: 1000 թուականին երբ իր հայրը, վրաց արքայն Գուրգէն վախճանեցաւ՝ Բագարատ վրաց վրայ ալ թագաւորեց մինչև իր մահը 1015, որուն յաջորդեց իր որդին Գորգի (Չամչեան՝ «Պատմ. Հայոց», Բ. 881—883):

ԲԱԳԱՐԱՏ ԳՈՒՐԳԵՆԵԱՆ, թգ. Վրաց, սա Ատրրներսնի թոռան Գուրգէնի որդին էր, որ ըստ Վարդան պատմչի, իր առաջին կնոջ մահէն ետք Վասպուրականի թգ. Սենեքերիմայ զուտարը կնութեան առաւ, ուսկից ծնաւ Գուրգէն, որուն որդին էր վերի Բագարատը: Բագարատ Գուրգէնեան 996ին Դաւիթ Կիւրապաղաթին օգնութեան գնաց ընդդէմ այլազգեաց: (Չամչեան՝ «Պատմ. Հայոց. Բ. 878):

ԲԱԳԱՐԱՏ թգ. Վրաց, հայազգի, որ 1388ին երբ Լէնկթիմուր Վրաստանի վրայ յարձակելով Տրփղիսը գրաւեց, վարպետութեամբ Լէնկթիմուրի զօրքը շարդել տուաւ իր Գորգի, Կոստանդին և Դաւիթ որդիներուն:


ԲԱԳԱՐԱՏ ՏԱՐՈՆԵՅԻ, որդի Աշոտի, սա 976ին իր Գրիգոր եղբոր հետ Վարդ Սիւլաոս Յունաց բռնակալ կայսեր կը զինակցի՝ ընդդէմ Վասի օրինաւոր կայսեր ու ի վերջոյ երբ Վարդ կը պարտուի՝ Բագրատ ևս իր եղբոր հետ կը ստիպուի Վասիին հնազանդիլ (989ին):

ԲԱԳԱՐԱՏ ՏԱՐՈՆԵՅԻ, որդի Գրիգորիսի, որ Ռոմանոս կայսեր օրով Պոլիս կ'երթայ և Թէոփիլակոսը պատրիկին քոյրը կնութեան առնելով՝ իրրև պատրիկ՝ 926ին Տարոն կը դառնայ:

ԲԱԳԱՐԱՏ տե՛ս Բագրատ:

ԲԱԳՈՒՍԿԱՆ կամ Բագուան, հուշակաւոր աւան Բագրեանդ գ.ի՝ թէ՛ հեթանոսութեան և թէ՛ քրիստոնէութեան ժամանակ, կը գտնուի Եփրատայ ձախ ափին վրայ: Մեր պատմիչներէն կոչուած է նաև Դիցաւան ըստ Պարթևաց լեզուի, և Բագւացաւան: Կառուցուած է նպատ լերան հիւսիսային ստորոտին վրայ: Հոս էր վերջին Տիգրանի (Բ. դար) եղբոր Մաթան քրմապետին գերեզմանը, ուր կար Բագին և հիւրնկալութեան իջևան: Արտաշիր Ա. Սասանեան պարսից թգ. (226—270), որ կրակապաշտութիւնը նորոգեց և աճեցուց պարսից մէջ և քանի մը տարի Հայոց իշխեց, բախտաւոր կարծեց զինքը որ աւանիս մէջ գտաւ նաև կրակի բազին և հրամայեց մշտավառ պա-

նել «զուրն Որմզդական՝ որ ի վերայ բազնին որ ի Բագաւան» (Սորենացի Բ. ևե): Գրիգոր Լուսաւորիչ Կեսարիայէն դառնալէ ետք աւանիս մէջ կառուցանել տուաւ Ս. Յովհաննէս եկեղե-



Բագաւանայ Ս. Յովհաննէս եղեղեցին:

ցին, հոն զետեղելով Ս. Յովհաննու և Աթանազիսեայ նշխարները: Աւանիս մօտ, Եփրատայ եզերքը մկրտուեցան Գրի Լուսաւորչէն՝ թագաւորն Տրդատ, իշխանազունք, մեծամեծք և ժողովրդեան բազմութիւնը: Աւանիս եկեղեցին մեր հին մատենագիրներէն կը կոչուէր Տեղի կամ Մասնուն Ս. Գրիգորի, բայց սովորաբար և աւելի ստէպ և մինչև ցայժմ կը կոչուի Ս. Յովհաննէս, և այլազգիները Իւլ Բիլիսե (երեք եկեղեցի), երեք խորանաց համար: Ս. Սահակ հայրապետ հոս եկաւ վերջացնելու իր կեանքը, սակայն այս տեղէն ալ հալածուելով, Բլուր գիւղին մէջ հանգեաւ: Յայտնի չէ թէ ե՛րբ շինուած է աւանիս վանքը: Եօթներորդ դարուն Հերակլ կայսրը Պարսից վրայ գացած ժամանակ, կ'երևի թէ գաղաւթած է հոս կամ այցելած ուխտատեղոյն, և յետոյ անոր վերաշինութեան սատարած 634 թուին, ինչպէս կը գուշակուի թղաչափ մեծատառ արձանագրութիւններէն: Ճարտարապետն եղած է Իսրայէլ անուամբ մէկը. շինուածոյն վայելչութիւնը և մեծութիւնը կայսեր արժանաւոր է. վասնոր Հայաստանի բոլոր եկեղեցիներէն մեծագոյն է, և 1263 (1900ին) տարիներէ ի վեր շատ փորձանքներու հանդիպելով հանդերձ, տակաւին կանգուն է: Այստա որ շինուածոյս լուսատիպ պատկերը չգտնելով կը ստիպուինք անոր ձեռակերտ պատկերը դնել հոս:

Եկեղեցւոյս որմերը խիստ հաստ են և ամուր, և գմբէթը վեր բռնող սիւները ցած, և լայն ու ընդարձակ խորանին երկու կողմերը կան մէկ

մէկ մատուռ: Եկեղեցին շինուած է մեծամեծ սրբատաշ քարերով, և բոլոր մասանց մէջ կը տեսնուի գեղեցիկ շափակցութիւն. բայց հին եկեղեցեաց նման միջին է, մանաւանդ որ նորոգութեան միջոց պատուհաններէն մի քանին գոցած են: Չկան հին արձանագրութիւններ. միայն պատին մէջ հիւսուած քանի մը հին քարերու վրայ կան պակասաւոր քաղղէարէն կամ հին ասորերէն արձանագրութիւններ, թերևս Տրդատայ և Գր. Լուսաւորչի օրերէն մնացած:

Ներսէս Գ. կթ. (940—961) Վարդապետի տօնի մը հոս գտնուած է:

Աւթերորդ դարու վերջերը, Յովար կթ. ի ժամանակ վանքս շատ ճոխացած էր ոսկի և արծաթի սպասներով, զորս յափշտակելու համար 1778ին Եղիա ոստիկանի Սփի գործակալը, զըրպարութեամբ կոտորել կու տայ վանքի միաբանները, որոնց թիւը ըստ Յովհաննէս պատմաբանի 40էն աւելի էր:

Մէջ դարու կէսէն վերջ վանքս սկսեր է վերբստին շինութիւն և բնակութիւն ունենալ: Այս ժամանակները Բագրեանդայ կամ Վազարչապատի եպիսկոպոսական աթոռը հոս փոխադրուեցաւ: Թաղէի վանուց Իսահակ եպ.ը 1685ին Եւրոպայի հայ վանառականներէն վանացս համար նպաստ կը խնդրէ: Երևանի խանը 1821ին Ալաչկերտի վրայ յարձակած ժամանակ, մեծ զերխաղաց ձուճանցի Սաչատուր վրդ.ը, որ այդ ատեն օգնական էր վանացս Սահակ եպ.ին, ո՛չ միայն վանքին մէջ ապաստանողները այլ և գերի բռնուողներն ազատելով: 1862ին, վանքիս պառլամենտը Յովհաննէս եպ.ը վանքիս պարիսպները ի հիմանց նորոգեց և 1864ին ժառանգաւորաց վարժարան բացաւ: Վերջին 1887-8 Ռուս-Օսմանեան պատերազմի ժամանակ մեծապէս վնասուեցաւ վանքս: Իսկ 1808-1829 տարիներու մէջ հանդիպածները երկարօրէն գրած է Պօղոս Յ. Մուրատեան: Նոյն 1877ի պատերազմի ժամանակ վանացս ձեռագիրները գեանի տակ թաղուելով ի կորուստ մատնուած են:

Մ. Գ. դարու սկիզբը վանացս մէջ ժողով գումարուեցաւ և կաթողիկոս օժուեցաւ Դանիէլ Մուրմառեցին, այս ժողովին ներկայ էին Աղթամարայ կթ.ը, Թաղէի վանքի Գէորդ արքեպ.ը: Բագրեանդայ վերջին գաղթականութիւններու պատճառաւ վանացս թեմերը նուազեցան: 1900ին վանացս պարսպի արեւմտեան կողմի Վանքի գիւղը 30 տուն բնակիչ ունէր — Ըստ ոմանց, հին Բագրեանդ լինելու է այժմեան վանքի զիմաց կարաւանի ճանապարհի վրայ, Եփրատի աջ կողմը,

ուր տեսնուած են բազմաթիւ աւերակներ, կը նշմարուէին նաև եկեղեցւոյ մը հիմերը, որոնք քննութեան կը կարօտին: (Էփրիկեան՝ «Բնախարհիկ» ֆաղուած Ալիեանի «Այրարատ»էն եւ Հայկունիի «Բագրեանդ»էն):

ԲԱԳԱԽԱՆ, հին գաւառ Փայտակարանի, Աւշարան կամ Ախչիրոն երկրայեզուի վրայ:

ԲԱԳԻՆԿՈՎ, այս անուամբ կրկին Վերի կամ Վարի գիւղեր կան Չորրորդ Հայոց Հաշտեանք (Ճապաղջուր) գո.ի մէջ:

ԲԱԳԵԱՆՔ կամ Բագունիք, Արշակ Ա. ի ժամանակ այս անուամբ տոհմ մը և իշխանութիւն մը կար Հայաստանի մէջ:

ԲԱԳԻՆ, օրաթերթ (Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսի օրգանը), ապ. Կ. Պոլիս 1911—12, խմբ. Վ. Փափագեան: (Լոյս է տեսած «Առաջամարտ»ի փոխարէն):

ԲԱԳՆԱՅԻ կամ Բզնեք, գղ. և ի հունմն նշանաւոր վանք Այրարատայ Շիրակ գո.ի, գրեթէ երկու փարսախ Անիէն հեռու արեւմտակողմը, նոյնչափ ևս հեռու է Արածա լեռան զագաթէն, անոր հիւսիսային ստորոտին վրայ գեղեցիկ գիրքով: Տասներորդ դարու վերջերը Պահլաւունի իշխանները հոս կանգնեցին նոյն ժամանակի հռչակաւոր վանքերէն մին Ըստ պատմչաց վանացս բուն կանգնողն է Սմբատ Մագիստրոս Բագնայր գիւղը կը կարծուի թէ Բագարանի նման հեթանոսութեան ժամանակ շատ բազիններ ունենալուն այսպէս կոչուեր է: Նախնիք գիւղին վրայ յիշատակութիւն մ'ըրած չեն և այժմ ա-




Բ Ա Գ Ն Ա Յ Ի

Ա. Ասուածածնի եւ Ս. Գրիգոր Եկեղեցիները մայացած է, ի Հայոց կը կոչուի Ղօզլինա ուր 1900ին 60 տուն թաթար կը բնակէր: Գիւղիս վանքը բոլորովին կործանած է. կան-

գուն կը մնայ տակաւին իննդարեան հոյակապ Ս. Աստուածածին եկեղեցին, որ քիչ շատ նման է Հոռոմոսի վանքի եկեղեցւոյն: Չորս գեղեցիկ և մեծամեծ սիւներ կը բարձրանան ժամատան մէջտեղ և 12 որմայեց սիւներ վեր կը բռնեն կամարակապ ձեղունը: Տաճարին լայնութիւնն է հազիւ 8 մէրը և երկայնութիւնը 14: Գիւղիս մեծ եկեղեցին ունի թէ՛ ներքուստ և թէ՛ արտաքուստ բազմաթիւ արձանազրութիւններ որոնց ծանօթ թուականները կը վերաբերին ԺԱ. ԺԲ. դարուց: Պարսպատէն դուրս քարընկէց մը հետու եկեղեցւոյ հիւսիսային կողմը կան ուրիշ երկու մատուռներ իրարու մօտ, որոնց մին մեծագոյն է և ունի կաթողիկէ, դրան վրայ ևս կայ 1223 թուականաւ համառօտ արձանազրութիւն մը: ԺԱ դարու առաջին կէսին Բագնայրի մէջ իմաստութեամբ կը փայլէր Մխիթար վրդ., զոր ուրիշ գիտնական վարդապետաց հետ Պետրոս Գեետադարձ կթղ. Կ. Պոլիս տարաւ: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» Բաղուած Հ. Ալիւսանի «Շիրակ» էն): ԲԱԳՆԱՅ Աւան, s. Բագաւան:

Իրրև պատմական հին եկեղեցի: Երկրորդ եկեղեցին է Ս. Գրիգոր Լուսաւորիչ, կը գտնուի մեծ հրապարակին վրայ 1863--9 թուին շինուած է



Բագուի Ս. Լուս. եկեղեցին

ժողովրդեան տուրքով: Գերեզմանատան մէջ ունէին Ս. Յարութիւն մատուռ մը: Հայք ունէին նորաշէն, փռաւոր եռաշարկ ուսումնարան. Մեսրոպեան երկղասեան ուսումնարանը 1900ին ունէր 200 աշակերտ, իսկ Ս. Հովիտիմեանը 180 աշակերտուհի: Քաղաքս ունէր Բագուայ Հայոց Մարտիրական ընկերութիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուամբ, 1863ին հիմնուած, որ տարուէ տարի հաշուետուութիւնը և տեղեկագիրները կը հրատարակէր (տե՛ս Հ. Ղազիկեանի «Նոր Մասեմագրութիւն» 294): Այս ընկերութիւնը ունէր ճիս մասնադարան մը, ունէր նաև Արօր անուամբ տպարան մը: Յետոյ ունեցած է 9 զանազան տպարաններ, ուր զանազան թերթեր տպուեցան: Ըստ Գարեգին Լևոնեանի 1904էն 1914՝ 27, իսկ 1914-1934՝ 36, ընդամենը 63 պարբերաթերթեր լոյս տեսած են Բագուի մէջ: Տե՛ս Բալախանի: Ներկայիս Բագուն Խ. Ասրաբյանի մայրաքաղաքն է: Պատերազմի առեւն թէև շատ Հայեր իրենց կեանքը վրայ առին, այնուհանդերձ մեծ թիւով Հայեր կը բնակին, որոնց մասին տե՛ս Պագու:

ԲԱԳՈՒԻ կամ Բակուր գղ. Արդնոյ, ուր Յովհ. սարկաւազ 1434ին Մարշոտց մը գրել կը սկսի: (Արուանձեանց՝ «Թորոս Աղբար» Բ՝ 413):

ԲԱԳՈՒԱՆ s. Բագաւան:
ԲԱԳՐԱՆ s. Բագաւան:
ԲԱԳՐԱՆԵԹ, հին գղ. Ալիէթաճորի (Վրահայք) մէջ կը յիշէ Վախուշտ:

ԲԱԳՐԱՏ, իշխան Անւոյ՝ 1064ին, երբ Պարսից Ալիփաթան Ա. թագաւոր Անիի վրայ յարձակեցաւ և զրաւեց:

ԲԱԳՆԻՍ, երբեմնի հայաբնակ գիւղ Վանայ Վան-Տոսպ գո. իս

ԲԱԳՈՍ (Սուրբ) Հոռոմայեցի, ընկեր Սարգիսի (տե՛ս Սարգիս Ս.):

ԲԱԳՈՒԻ կամ Պագու, հին և նշանաւոր գաւառագլուխ քղ. Փայտակարանի Բագաւան գո. ի, ծովեզերեայ մասին վրայ շինուած: Պատմութենէն ծանօթ է խիստ կանուխ 400էն սկսեալ Մովսէս Խորենացին իր աշխարհագրութեան մէջ Բագաւան անուամբ կը յիշէ Բագուն: Քաղաքս կառուցուած է Կասպից ծովին արևմտեան եզերքին վրայ՝ անծանօթ ժամանակներէ: 1860ի ատենները հազիւ 50 տուն հայ կար և քանի մը հարիւր թուրք բնակիչ: Իսկ 1900ին 2200 ընտանեւոր հայեր կային ու բազմաթիւ հայ անհատներ. 1893ի ցուցակի մը համեմատի Բագու բնակչաց թիւն է.

	Ար.	Իգ.	Գումար
Հայք	18269	7314	25583
Մահմետականք	22974	14556	37530
Ռուսք	12370	9020	21390
Լեհք, Հրեայք եւ այլն	1999	1205	3201
Գումար	55609	32095	87704

Հայերը կ'ապրին վաճառականութեամբ. արհեստով և ծառայութեամբ նաւային ու նաւթային գործով և գործարանաց մէջ, ինչպէս նաև քաղաքական և պետական պաշտօններով: Հայերը երկու եկեղեցի ունէին, մին Ս. Աստուածածին, որ կը գտնուի հին թաղի բերդին մէջ, ծովեզերքի մօտ, որ նշանաւոր ուխտատեղի էր

ԲԱԳ

ԲԱԳՐԱՏ, իշխան Արեւնդանի ամբոցին, որ 1117ին իր ամբոցը չկարենալով պաշտպանել՝ Բագտինի ստիպուեցաւ տալ:

ԲԱԳՐԱՏ. թգ. վրաց՝ Լէնկթիմուրի օրով (1387ին):

ԲԱԳՐԱՏ s. Լիւլեհեան Տոմասպետ քոնծ:

ԲԱԳՐԱՏԵԱՆ Յոսիմ. Կաթողիկոս, կաթողիկոսներու պապական նուիրակ Ռուսաստանի մէջ (կովկաս). 1922ին Սարգիս ծ. վ. Տէր Արրահամեանի կը յաջորդէ: 1932ին պոլշեիքներէն Ստոլովկի կ'աքսորուի ու կը վախճանի 1936ին:

ԲԱԳՐԱՏԻ ԻՒՌՅ, հին գղ. Ալկէթաձորի(Վրահայք), կը յիշէ Վախուշտ:

ԲԱԳՐԱՏՈՒՆ s. Գայմա:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՆՅ Գրիգոր, Ախալցխացի, ազգակից Կարապետ եպ.ի տէր Գորաշէն վրանարնակ գիւղի Ախալքալաքի մօտ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԱՅՈՏ, անուանի ռուսահայ Զօրավար, չրջանաւարտ Մոսկուայի բարձրագոյն զինուորական համալսարանէն, ուրկէ կը հասնին սպայակոյտի անդամները: Զինուորական բոլոր աստիճաններէն անցնելով բարձրացած է զօրավարութեան աստիճանին:

Հրամանատար եղած է Բեղրոկրատի, ղեկավար Պաքուի կռիւներուն: Անդամակցած է պետական հայ զինուորական առաքելութեան Ամբրիկայի:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Հ. ԱՐԱԷՆ Կոմիտաս, հայկաբան, թարգմանիչ, Մխիթարեան, ծնած է Կ. Պոլիս 1790, Օգոստոս 21ին, 1801ին Վենետիոյ Ս. Ղազարու վանքը կը հասնի ուր իր սովորական դասերուն հետեւելով՝ առանձինն կը նուիրուի գրարար, հելէն, լատին եւ այլն լեզուներու հմտութեան: 1810ին քահանայ կը ձեռնադրուի և իսկոյն ուսուցիչ կը կարգուի վանքի աշակերտաց, որոնց մէջ էին Հիւրմուզեան Գէորգ և Եղուարդ հարազատները: Այդ ուսուցչական պաշտաման մէջ՝ Հ. Բագրատունի մեծ զարգացում կու տայ վանքի թատրոնին, կը յօրինէ ընտիր ողբերգութիւններ: Հայկական գրչագիրները ուսումնասիրելու նպատակով Բարիդ կ'երթայ, ուր 7 ամսուան անդու աշխատութեամբ 150էն աւելի կ'ուսումնասիրէ: Հօռմ կ'երթայ իրրե օգնական վանքին ընդհ. գործակալի. իրրե օգնական եւ թարգման Յովհաննէս վ. Սէրվիեանի Ռուսաստան կը ճամբորդէ և 1831ին Տիւրքեան Յակոբ իշխանապետին տանը Դրան Երէց կը կարգուի երկար տարիներ, և Տիւրքեան հարազատաց հետ թախտ կ'ունենայ քահանայութեան ուղեորութիւն մ'ընկու:

Հ. Բագրատունի 40 տարի պրպտեց նախնեաց

գործերն ու ձեռագիրները հմտանալու համար հայ գրարար լեզուին. այդ 40 տարուայ աշխատանքին պտուղն է Քերականութիւն ի պէսս զարգացելոց հոյակապ կոթողը, որուն մանրանկար համառօտութիւնը 6 տարի առաջ (1846ին)

լոյս ընծայած էր: Հ. Բագրատունի իրրե և բանասէր-հայկաբան իր քերականութիւններով, իրրե բանաստեղծ իր «Հայկ» ղիւցաղներգութիւնով, իրրե թարգմանիչ Հոմերոսի, Վերգիլիոսի, Միլտոնի եւ այլն գործերու թարգմանութեամբ, իրրե հրատարակիչ Աստուածաշունչով, հայ պատմագիրներով, Մխիթարեան Միարանութեան մեծ ու լուսաւոր դէմքերէն մին կը հանդիսանայ:



Հ. Արաէն Բագրատունի

Մերութեան վանք դառնալով՝ կ'աշխատի միշտ մահը որ տեղի կունենայ 1869ին, Դեկտ. 24ին, ծննդեան ճրագալոյցի գիշերը:

Հ. Բագրատունիի իսկական մականունն է Անքիմոսեան որ երբեք իր գրքերուն ճակատին վրայ երեցած չէ, բացի իր առաջին գործէն:

Հ. Բագրատունի 1810ին վարդապետ կը ձեռնադրուի և միայն տասը տարի ետք 1921ին լոյս կ'ընծայէ իր առաջին երկը որ կ'ըլլայ Քերականութիւն զաղղիական ի Հ. Արաէն վարդապետէ Անքիմոսեան, տպ. Վենետիկ Ս. Ղազար 1821. էջ 608:

Մօտ 40 տարի հմտանալէ ետք գրարար լեզուին՝ 1846ին լոյս կ'ընծայէ Տարեք հայերէն քերականութեան (309 էջ) որ Տրդ տպագրութեան կ'արժանանայ (Ձու դայեցւոց լեզուով ալ կը թարգմանուի և կը տպուի ի Նոր Ջուղա):

Հայերէն Քերականութիւն ի պէսս զարգացելոց տպ. 1852, 744+22 էջ:

Սկզբունք ուղիղ խորհելոյ բարւոք կելոց տպ. 1857, 144 էջ:

Տաղք Տեառն, Արաէնի Կոմիտասայ Բագրատունեոյ վարդապետի Մխիթարեանց, որ և պատճառնայ անուամբ Աւան Միտակեան, տպ. Վենետիկ 1852, մեծաղիր 263 էջ:

Հայկ Դիւցազն, վէպ. գրարար հայկական չա-

վալ տպ. 1858ին 621 էջ, որմէ զբուռագ մը իտալերէնի թարգմանած է Բարէլլէզզի հայագէտ իտալացին:

Ճաշակք հին եւ նոր ողբերգութեանց, ի հեղեանաց և յարդեաց. տպ. 1869, 615 էջ: (Կը բովանդակէ Սովոկլէսի, Ռասինի, Վոլդեռի, Ալփիերիի գործերը):

Ճաշակ հեյլէն եւ լատին նախախօսութեան, տպ. 1860, 364 էջ: (Կը բովանդակէ Եսթինեսի, Գիմոսթենի, Կիկերոլլի գործերը):

Երուանգ, ողբերգ. ի հինգ արարուած, տըպուած 1869ի Բագմավէպին մէջ, էջ 47 են: «Բագմավէպ»ի մէջ ունի այլևայլ յօդուածներ: Անտիպ կը մնան Կարեւոր գիտելիք բառից եւ ոնից, բառագիրք մըն է, ուր կը սրբաչրէ, կը ճշդէ պակասները կը նշանէ նոր Հայկազեան բառգրքին, են.

— Ունի դարձեալ Տիւզեան ընտանեաց ընդարձակ պատմութիւնը, և Ասուածաշունչ գրոց Յոյն և Հայ բառգիրքը, են:

Հ. Բագրատունիի թարգմանած գլուխ գործոցներն են Թէոփրաստ, Կեսար, Հոմերոս, Մասիլիոն, Միլտոն, Որադիոս, Պոսիւէ, Սոաւէ, Վիրգիլիոս, Փոսկոլոյ:

Հրատարակած է

Ասուածաշունչը տպուած 1860ին:

Ագաքանգեղոս տպ. 1835ին, Ս. Բարսեղի Վեցորեայի, 1830ին, Եզնիկ (1826ին), Եղիօէ պատմ. փոքր Ա. տպագր. Մովսէս Խորենացի, պատմ. փոքր Ա. տպագր. Յովհաննէս Ոսկերեան՝ Մեկնութիւն Մատթէի, և այլն:

Հ. Բագրատունոյ կենդանութեանը Խրիմեան Հայրիկ 1849ին (տակաւին վարդապետ) «Բագմավէպ»ի մէջ էջ 308 ունի «Խորմեան վանեցի Մկրտիչ վարժապետին գովեսքը մեր նախնեաց սաղաշափութիւնը նորոգող Բագրատունի Հ. Արսէն Վարդապետին»:

Հ. Արսէն Վ. Ղազիկեան Բագմ.ի մէջ (1900 էջ 24, 65, 161 եւ Մխիթար բացառիկի մէջ էջ 226—246) Հ. Բագրատունոյ վրայ ուսումնասիրութիւններ ունի: Տե՛ս նաեւ իր «Նոր Մատենագիտութիւնը». (Հ. Ղազիկեանն է նոյնպէս որ, Ասկերեան Հ. Վրթանէսի եւ Աւգերեան Հ. Մկրտիչ ու Հ. Յարութիւն հարագասաց վրայ գրած է «Մխիթար» բացառիկին մէջ):

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Արսէն քահանայ = Տէր Յովակիմեան), արևելահայ, որ 1881—1899 տարիներու ընթացքին Թիֆլիսի մէջ լոյս ընծայած է Տասն պատգամք, կամ բարոյական պարտազոյց. 104 էջ: — Վերջին Յուլիկ, «նուէր Մարիամեան — Յովնանեան Ուսումնարանի (Թիֆլիս) Աշա-

կերտուհիներին, նոցա կրօնուսոյց Արսէն Բահանայ Բագրատունուց» տպ. 1883, էջ 120: — Հոգեւոր ընթրիք քրիստոնեայ ընտանիքների համար, տպ. էջմիածին 1901ին: — Արարողութիւն եւ Մեկնութիւն խորհրդոյ սրբոյ պատարագի, տպ. Թիֆլիս 1884, էջ 253: — Ծրագիր Քրիստոնեական վարդապետութեան Զ. Դասարանի, տպ. 1899, էջ 79:

Արսէն քհ. ծնած է Վաղարշապատ 1841ին: Ասուածը Թէոդոսիոյ Խաչիպեան զպրոցը սորվելէ վերջ՝ կը նուիրուի հօգեւոր կոչման. իր մօրեղբորմէն՝ Մակար կաթողիկոսէ ստանալով վերարկու: 22 տարեկանին կը մանէ Բեթրսպուրկի համալսարանն ուր կը մնայ 4 տարի: Թիֆլիզ դասնալով քահանայ կը ձեռնադրուի Կուսանաց վանքիւ, ուսուցչութիւն ընելով նաև զպրոցներու մէջ: 1874ին երբ կը բացուի Թիֆլիզի արհեստագիտական քոլէջային զպրոցը, կը հրաւիրեն զինք՝ իր կրօնուսոյց և հայկարան. 28 տարի անխափան կ'աւանդէ այդ դասերը: Ա. Ծատուրեան, Նար-Դոս. Մ. Պետրոսեան և այլք իր սաները եղած են: Դարձեալ 35 տարի պաշտօն վարած է Յովնանեան զպրոցը: 1905ին իր երեսնամեակը տօնուած: Կովկասահայ Ուսուցչ. Միութեան հիմնադիր: Ընծայեցի ծածկանուամբ քերթուածներ հրատարակած «Աղբիւր Տարագի մէջ», Յայտնի անուն մը ունէր նաև իր քարոզիչ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Հայկ Հրանդ ծնած Տրապիզոն շուրջ 1870ին, կ'աշակերտը տեղւոյն Մխիթարեան վարժարանին. 15 տարեկանին Պոլիս երթալով զբաշարութիւն կ'ընէ և 1887ին Ֆիլատէլֆիա փոխադրուելով՝ հոն կը հիմնէ փոքրիկ տպարան մը: 1902ին Իրանի հիւպատոսի պաշտօնը կը ստանձնէ, զոր կը վարէ մինչև 1935, 1915ի կամաւորական շարժման օրերուն օգտակար կ'ըլլայ իր հայրենակիցներուն. 1937 Փետր.ին կը վախճանի Ֆիլատէլֆիոյ մէջ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Մուսեղ, խմբագիր-հրատարակիչ 1911—1912ին Երևանի մէջ լոյս տեսնող Կոռն «հասարակական, անտեսական և գրական-երգիծարանական շարաթաթերթի»: 1913—1914 լոյս կ'ընծայէ նոր Մամուլը, նախ՝ շարաթաթերթ, յետոյ ետօրեայ «հասարակական, անտեսական և գրական թերթ»ը:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Յարութիւն, ծնած Պոլիս, 1850ին քարակոփ արուեստագէտ, կը վախճանի 1924ին Պոլսոյ մէջ. իր ձեռակերտներն են Ներսէս պատրիարքի և Ասպետ Զուռզի դամբարանները:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ Ղերասան, 1915ին Միհրան Տամատեանի հետ Եգիպտոսի մէջ Հայելին խմբագ-

ԲԱԳ

րած է, 1917ին Պրիստակը, (երկու քն ալ հաղիւ մէկ մէկ թիւ լոյս տեսած են): Կենսագրութիւնը տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱՅԵՐ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԻՔ, հին տոհմ և մեծ նախարարութիւնն Հայոց, որոնց նախահաւան էր Վաղարշակ թգ.ի Բագարատ իշխանը: Վաղարշակէն ասոնց իշխանութիւնն և պաշտօն տրուած էր Արշակունեաց թագաւորներուն թագ զնել: Ասոնք ծագմամբ հրեայ ըլլալով՝ երկար ժամանակ իրենց աստուածապաշտութեան կրօնքը պահեցին, որուն համար շատեր ևս նահատակուեցան մեր կոապաշտ թագաւորներէն, ու վերջը Ս. Լուսաւորչայ օրով քրիստոնեայ եղան: Այս տոհմէն ունեցած ենք շատ երեկելի անձինք, բարեպաշտ իշխաններ, քաջ և զօրաւոր թագաւորներ:

ԲԱԳՐԱՏՈՒՆԵԱՅ ԹԱԳԱՆՈՐՈՒԹԻՒՆԸ հաստատուեցաւ 885 թուին, և տեկց 160 տարի, մինչև 1045: Այս թագաւորութենէն ունեցանք 12 արքաներ, որոնք նստան Անի և ուրիշ քաղաքներ, առաջինն եղաւ Աշոտ՝ քաջ Սմբատայ որդին: Բագրատունեաց ընկուծեան վայրն եղած է նախ Բարձր Հայոց Սպեր գաւառը, և յետոյ Այրարատ նահանգի Կոզովիտ, Արշակունիք և Շիրակ գաւառները: Այս ցեղէն ուրիշ Բագարատ իշխան մը՝ որ պղզական էր Սմբատ Խոստովանողի և փեսայ Արծրունեաց, Ամիրապետէն հաստատուեցաւ «Պատրիկ մեծ իշխան Հայոց», տիրելով Սիմ լերան իշխանական փառքով: (Եփրիկեան՝ «Բնագիրսիկ», Իճնիսեան՝ «Հնախօս Հայաստանի», Բ. 96—108):

ԲԱԳՐԵՒԱՆԻՔ, գաւառ, Այրարատայ նահանգի հարաւային կողմը, որ ըստ ձեռագրաց կը զբրուի նաև Բագրաւանդ: Տարածութեամբն ընդարձակագոյն կը համարուի միւս գաւառներէն, երկնցած է արեւելքէն արեւմուտք: Սահմանքն են՝ արեւելքէն Ծաղկոտն, հարաւէն Տուրուբերան, արեւմուտքէն Բասեն, իսկ հիւսիսէն Հաւնունիք, Գարեղէնք և Ճակատք: Ըստ արդի աշխարհագրական բաժանման՝ հին Բագրեւանդ գաւառին այժմ կը համապատասխանեն Տիատին, Գարաքիլիսէ, Այաղկերտ և Անթապ վիճակները: Բնական զիրքով գաւառս բաժնուած է երկու դաշտագետիններու: Արեւելեան դաշտագետինը, որ ծանօթ է պատմութենէ Ձիրաւ անուամբ, կը տարածուի Նպատ լերան հիւսիսային և արեւելեան կողմերը: Այս դաշտի մէջտեղէն կը հոսի Եփրատ (Մուրատ) գետը ղէպիարեւմուտք. այստեղ է Ս. Յովհաննէս հռչակաւոր վանքը՝ հին Բագաւանի կամ ղիցաւանի տեղը, ինչպէս նաև Տիատին գիւղաքաղաքը, որուն հարաւա-

յին կողմը կան բազմաթիւ ջերմուկներ: Արեւմտեան դաշտագետինը կը տարածուի Սուկաւէտի արեւելեան հարաւը մինչև Ձիրոյ հայ գիւղը: Բագրեւանդայ արեւմտեան մասը, որ Այաղկերտ ևս կը կոչուի, բոնած է մեծ մասամբ Շէռեան գետին ձախ հովիտը, յորում են Թօփրաք-Գալէ (Վաղարշակերտ) և Գարաքիլիսէ վիճակագլուխ գիւղաքաղաքները:

Բագրեւանդ գետուելով մեր նախնեաց Հայկազանց հնագոյն ընկալալայրերու մէջտեղ, այսինքն Այրարատայ հարաւակողմը և Տուրուբերանի Հարք և Ապահունիք գաւառներու հիւսիսակողմը, տարակոյս չկայ թէ իր մէջ ընկեցան Հայկայ սերունդները:

Պտղոմէոս (Ն. ժգ.) կը յիշատակէ գաւառս Բագրեւանդեան կոչմամբ, և զանազան ձեռագրաց գրութեան համեմատ Բագրաւանեան

ի հնունդ արքունի սեփականութեան մաս լինելով, չունի առանձին տոհմային պատմութիւն և ոչ գունդ աշխարհախումբ բանակի մէջ, ինչպէս նաև նախարարներ և իշխաններ: Քաղաքականէն աւելի նշանաւոր եղած է գաւառս եկեղեցականին, կամ լաւ ևս կրօնականին մէջ. վասնզի քրիստոնէութենէն իսկ առաջ հոս հաստատուած են կրօնական պաշտամունք, և գաւառիս պայծառութեան և զարգացման մեծապէս նպաստած: Հին հեթանոսական պաշտամանց Ս. Լուսաւորչի ձեռքով յաջորդեցին քրիստոնէական տոներ և հանդէսներ: Ս. Գրիգորէն հաստատուած է գաւառիս եպիսկոպոսութիւնը: Մինչև Մ. Խորենացիի օրով գաւառիս եպիսկոպոսը կ'իշխէր Արշարունեաց վրայ:

Տուրք եպ.ը որ կը յիշուի Մակարայ Երուսաղէմի հայրապետի թղթոյն մէջ՝ կը կոչուի նաև «Եպիսկոպոս Բասենոյ»: Ս. Խաղ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ գաւառիս և Արշարունեաց, որուն յաջորդեց իր փեսան Ասրիկ: Ե. դարուն Բագրեւանդայ եպ. կը յիշուի Արտաշատու ժողովին մէջ՝ Եզնիկ կամ Եզնակ ոմն, որ Կողբացին կը կարծուի, և ասոր յաջորդեց Մովսէս Խերենացին: Յետոյ 525ին կը յիշուի Տիրեկ եպ. ու քանի մը տարի ետք Մարկոս, Ը դարու մէջ Ստեփանոս, որմէ ետք Բագրեւանդայ եպիսկոպոսք ծանօթ չեն մինչև ԺԴ. դար, յորում կը յիշուի միայն Թաղէոս եպ. Բագրեւանդայ:

Պատերազմիկ կողմերու ճամբան եղած է Բագրեւանդ. բոլոր հայալաճները անցած են Բագրեւանդէն՝ թալլելով, կողոպտելով, վերջին անգամ 1877ի ռուսեթուրք պատերազմի ատեն երբ Ռուսները նուաճեցին Պայագիտը՝ Բագրեւանդի

Հայերը ապստամբեցան Թուրքին դէմ, և հաշտութեան պայմանէն վերջ վախճալով որ մի՛ գուցէ Թուրքերը վրէժ լուծեն՝ հարիւրաւոր ընտանիքներ բանակին հետ Ռուսաստան գաղթեցին: 1895ի դէպքերուն ալ գաւառիս Հայք ոչ սակաւ թշուառութեանց ենթակայ եղան. ալ չըջանին ալ բաւական ընտանիքներ անցան Ռուսաց բաժնին մէջ: Ս. Հայկունի գաւառիս վրայ դիրք մը հրատարակած է Բագրեւանդ, Ջրաբաշխ գաւառ, որ տպուած է Ս. Էջմիածին 1894ին, (Էփրիկեան՝ «Բնագիտահիկ» քաղուած «Բագրեւանդ»-էն Է. Ալիւսանի «Ալլարաւս»-էն, տե՛ս Ալաշկերտ):

ԲԱԳՐԵՒԱՆԿԵԱՆ Վահրամ իրաւարան և և խմբագիր, ծնած է Վան 1890ին, յետոյ փոխադրուած Պոլիս: Նախնական ուսումը առած է Սամաթիոյ Ազգ. վարժարանը: Պոլսոյ Կեդրոնականը աւարտած է 1909ին և 1913ին ալ չըջանաւարտ իրաւարանական համալսարանէն: Նոյն տարին Մերսինի նախադատ ատեանին անդամ կը նշանակուի:



Չորս տարուան աքսորէ վերջ, Կիլիկիա վերադարձած, ուրկէ կ'անցնի Պոլիս ու փաստարանութեամբ կը զբաղի: 1921ին Սամաթիոյ Ազգային Երեսփոխան կ'ընտրուի: 1922ին Սելանիկ ԲԱԳՐԵՒԱՆԿԵԱՆ ՎԱՀՐԱՄ հաստատուելով՝ առեւտրական գործերով կը զբաղի: Ժամանակ մը Սելանիկի Ազգ. Խնամատարութեան և Թրակիոյ ու ու Մակեդոնիոյ քաղաքական ժողովի անդամ: Կարճ ատենուայ մը համար «Ալիք»ի խմբագիր: Իսկ իբր նուիրուած և համոզուած գաղափարախօս մը «Կիլիկեան դատ»ին, մօտ երկու տարի (1926—1928) իր գրչով հրատարակ իջած է, իրեն համար միա-սկսոր եզրղ դատին իբր անխոնջ ախոյեան մը: (Մակարեան՝ Յուզագիր 227—8):

Ըստ Գ. Լեւոնեանի Բագրեւանդեան 1930ից Սելանիկ լոյս տեսնող Գաւառացիական Զախ քեւի Արեւելք օրաթերթին պատասխանատու խմբագիր եղած է:

ԲԱԳՐԻ ԶԱՅՆ, օրաթերթ, լոյս տեսաւ Բագու 1913—1914 խմբագրութեամբ բժ. Մաղինեանի, ապա Գ. Վարչամեանի:

ԲԱԳՍԱԼ ԷՐԱ (Տիկին Աղաբաբեան) տաղանդաւոր երգչուհի (մեծօօսորբանօ) որ իր ղիւթական ձայնով Եւրոպական քաղաքներու մէջ գնահատուած է, ծնած է Թէհրան, 1915ին Մոսկուա երթալով հետեւած է ֆոնեկրիլաբուաին աշակերտելով Մազէթիին: Աւարտելէ ետք մէկ տարի հետեւած է Մոսկուայի գեղարուեստական թատրոնին, 1921ին անցած է Պերլին և օրերայի տնօրէն պ. Լէօ Բլէլին աշակերտելով կատարելագործած է իր երաժշտական կրթութիւնը: Ռուս արուեստագէտներու հետ Պերլինի, Վիեննայի և ուրիշ քաղաքներու մէջ տուած է համերգներ և ներկայացումներ: 1924ին շստած է խաղալ արեւելեան օրերէդներ Անու, Անուլ Ղարիպ, Ուե լիկի Անու լիկի, Արեիկ Մալալան և այլն. և վերջին օրերէդին մէջ մեծ յաջողութիւն ունեցած է 1927ին, խաղալով Լոնտոն ներկայութեամբ Իրանի ղեսպանին: 1924էն ի վեր չըջած է Լոնտոն, Պրիւքսէլ, Անվերս, Լիէժ, Բարիլ, Մարսէյլ, Լիոն, Պորտոյ, Պերլին, Համպուրկ, Վիեննա, Պուքրէշ և այլն, տալով բազմազան համերգներ՝ հայերէն, ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն, իտալերէն և այլ երաժշտութիւններէն, որոնց ծանօթ է լիովին:



Տիկ. ԷՐԱ ԲԱԳՍԱԼ

Երգած է մայրաքաղաքներու պետական օտար լայն կայաններէն, մասնակցած է ֆրանսական ֆիլմերուն: Վերջին անգամ (1936ին) իր ներկայացումները տուած է Գահիրէ և Աղեքսանդրիա:

ԲԱԳՍԱԼ Վահագն Գր. ծնած է Թէհրան 1891 Դեկտ. 11-ին, ուր հայկական դպրոցը աւարտելէ ետք՝ աշխատիլ սկսած է դոկտ. Յ. Ստեփանեանի ատամնաբուժական արհեստանոցին մէջ: 1913ին Գերմանիա մեկնած է համալսարանի մէջ կատարելագործելու համար ատամնաբուժութիւնը: 1915ին Տրեզաէ կը հաստատուի իբրև ատամնաբուժ, սակայն գեղարուեստը երախայրութեան չըջանէն զինքը ողկորած ըլլալուն կը թողու իր արհեստը և ֆիլմի ասպարէզը կը նետուի:

Բաղալ իր խանդավառութեամբ յայտնի եղած է երիտասարդական չըջանին մէջ, մասնաւորապէս իր դէպի մտաւորական և գեղարուեստա-

կան կեանքը ունեցած հակումներով: Գպրոցական շրջանին թերթեր խմբագրած է և գպրոցը թողնելէ անմիջապէս ետք խմբագրած է Քնար թերթը:

12 տարեկան հասակին մեծ ընդունակութիւն ցոյց տուած է ղէպի երաժշտութիւնը և իր գերմանացի ուսուցիչը առաջարկած է ղինքը Գերմանիա տան իւր: Հայրը սակայն ետեւէ հասած ու տուն վերադարձուցած, որովհետեւ մայրը չէր կարող բաժնուած մնալ անկէ:



ԲԱԴԱԼ ՎԱՀԱԳՆ

Մտնելով ֆիլմի ապարէզը Դկտ. Վ. Բաղալ 1923ին Գերմանիայի մէջ կը պաշտօնավարէ ֆրանս. Gaumont ֆիլմի ընկերութեան մօտ կարճ ժամանակ ետք այդ մեծ ընկերութեան կառավարիչը կը դառնայ կեղրոնական Եւրոպայի մէջ: Տասը տարիներու աշխատանքը և իր սերտ կապերը պ. Վէոն Կոմօնի հետ—որը շարժանկարային կեանքի մէջ երեւելի գիտնական ղէմքերէն մէկն է — հրաշալի ղպրոց մը կ'ըլլայ Բաղալի համար: 1930ին նա կը սկսի ֆիլմեր պատրաստել: Իր ստեղծագործութիւններէն յիշենք «La petite de Mont Parnasse», «Es gibt nur eisse Liebe», «Ein Walzer für Dich», «Ich sebne mich nach Dir», «Wolga—Wolga (Stenka Razine)» և քանի մը ուրիշներ, որոնցմէ ամենավերջինն է «Moskau—Schanghai»ը, որուն ամենագլխաւորները խաղացած է յայտնի դերասանուհի Բոյա Նեկրի: Այս ֆիլմը աշխարհի գրեթէ բոլոր սինեմաներու մէջ ցուցադրուեցաւ և Վ. Բաղալի ղեղարուեստական ամենատեժեղ ֆիլմը համարուած է:

Ներկայիս (1938ի սկիզբը) Վ. Բաղալ հրաւիրուած է Իրանի կայսերական կառավարութեան կողմէ՝ ուսումնասիրելու Իրանը և ստեղծելու այնտեղ սինեմաթոկրաֆային կեանք մը: Միաժամանակ նա կը պատրաստէ մեծ ֆիլմ մը, Իրանեան վերածնունդի վերջին տասնամեակի կեանքէն:

Դր. Վ. Բաղալ եղբայրն է յայտնի իրանահայ երգչուհի Տիկին Փերի (Սաթօ) Աղաբաբեանի:

ԲԱԴԱԼ, ռ. Մոլլա-Բաղալ:

ԲԱԴԱԼԵԱՆ Գուրգէն և Հայկ, աստղարաշխներն. Հայաստանի մայրաքաղաքին մէջ:

ՊԱԴԱԻԻԱ կամ Պարալիա, ճպււայի մայրաքաղաքը, ուր Հայերը գաղթած են ժէ դարու կիսուն: Լաւ ղիրք գրաւեր են Հայերը յաչս թէ բնիկներու և թէ Հօլանտական կառավարութեան: Բաղաւիայի Հայոց թիւը ներկայիս հաղիւ 100ի կը հասնի: Անցեալին մէջ շատ պւելի բաղձաթիւ եղած են և հարուստ: Կեղրոնական Բաղաւիայի մէջ աւբայական կոչուած ընդարձակ դաշտ մը կայ շքեղ տներով շրջապատուած: Այդ տուներէն շատերը Հայերուն կը պատկանէին ժամանակաւ: Արքայական դաշտին կից է Հայոց Ս. Յովհաննէս եկեղեցին:

Ընդհանրապէս նոր Զուղայէն կու գան քահանաներ հովուելու գաղութը, որոնք երեք կամ առ առաւելն վեց տարի պաշտօնավարելէ ետք կը տեղափոխուին: Բաղաւիայի մէջ 1831էն մինչև 1938՝ 27 քահանաներ պաշտօնավարած են:

Բաղաւիա մայրաքաղաքին մէջ ներկայիս կան մի քանի պետական բարձր հայ պաշտօնեաներ



Բաղաւիայի Ս. Յովհաննէս եկեղեցին

Եղբարք Զօրհարեաններ, Յովակիմեան ու Մինհարթ Գէորգ Յովհաննէսեան:

ԲԱԴԵԻԻ ԲԳ. Շամշատիւնայի, կը յիշուի 1667ի Յիշատակարանի մը մէջ:

ԲԱԴԻԿԵԱՆ Հայկ, ամերիկահայ նշանաւոր արձանագործ կը բնակի Գալիֆօրնիոյ Սան Յրանչիսկոյ քաղաքը:

Բաղիկեանի ծնողքը՝ բնիկ Վանեցի են, որոնք 1891ին Ամերիկա գաղթելով Յրէզնոյ կը հաստատուին, ուր Հայկ կը ստանայ իր նախնական կրթութիւնը: Յետոյ Սան Յրանչիսկոյ կը փոխադրուի և մինչև այժմ հոն կը մնայ:

Բաղիկեան առաջին անգամ կը քանդակէ Ան-

հանգիստ հոգին արձանը: 1906—8ի Բարիզի արձանագործութեան դասընթացքին հետևելով՝ Գեղարուեստից սալոնին մէջ կը ցուցադրէ Հին պատկերներ խորհրդանշող արձան մը:

1917ին այ Բարիզի մէջ կը ցուցադրէ իր գործերը, արժանանալով աշխարհահռչակ արձանագործ Ռօտէնի գնահատութեանց:

Ամերիկայի մէջ իրեն յանձնուած է մեքենաներու պայտաին համար այլարանական դէպքեր, դէմքեր ու զարդեր քանդակելու աշխատանքը: Ինքը քանդակած է Արրահամ Լինքընի կիսանդրին, որուն համար Ամերիկեան բոլոր թերթերը գնահատանքով գրեցին:

ԲԱՂՆՈՅ կամ Բարնոց, վիճակ Տուրուսերանի Ազաճուճեաց գու.ի արևելակողմը, 70—80 գիւղերէ կը բաղկանայ, որոնց երեքը հայաբնակ էին:

ԲԱՂՆՈՅ գիւղ համանուն վիճակին մէջ, 50 տ. հայ բնակիչ ունէր և Ս. Ստեփանոս եկեղեցի մը: (Հայկունիի՝ «Բազրեւանդ» 319):

ԲԱՂՆՈՅԹԻՎ, գղ. Չմշկածագու առաջնորդական թեմին. ունէր 12 տ. հայ և Ս. Յակոբ եկղ. մը:

ԲԱՂՆՈՅՊԱՆԵԱՆ Գրիգոր, հունդարահայ երեւելի բժիշկ, ծնած է Եղիսարեթուպոլիս հայաքաղաքին մէջ Ի Իրանսիլվանիա (այժմ Ռուսիան), 1830ին, մեռած է 1891ին: 1869ին Պուտարէշտի խորհրդարանին երեսփոխան ընտրուած և իբրև բժշկապետ մայրաքաղաք հաստատուած:

ԲԱՂՆՈՅՊԱՆԵԱՆ Ղուկաս, բանասէր, լեզուագէտ ուսուցչապետ համալսարանի, ծնած է 1861ին Եղիսարեթուպոլսոյ մէջ, որդին է տքթ. Գրիգոր Բաղրուպանեանի իր հայրը երբ Պուտարէշտ կը հաստատուի պատանին Ղուկաս մայրաքաղաքին մէջ միջնակարգ ուսումը ստանալէ ետք համալսարանի ընթացքը կը կատարէ և 1884ին ուսուցչապետութեան վկայական կը ստանայ. 30 տարի Պուտարէշտի երկրորդական վարժարաններուն մէջ ուսուցչութիւն կ'ընէ և ընդհանուր պատերազմի շրջանին պուրսի խաղերու մէջ դրամական մեծ կորուստներու ենթարկուելով մտային հիւանդութեամբ կը տառապի, կը մեռնի 1924ին Պուտարէշտի մէջ:

Դկտ. Բաղրուպան Ղուկաս կը խօսէր և կը գրէր հայերէն: Պուտարէշտի համալսարանի հայերէնի ուսուցչապետ անուանուած էր:

Կ'աշխատակցէր Հանդես Ամսորեայի, Բասմաշեանի Բանասերին և առաւելապէս Կեռայի Armenia ամսաթերթին, որուն խմբագրական մարմինին մաս կը կազմէր, ուր կ'երևար բանասիրական յօդուածներով և ստէպ ոտանաւոր բանաստեղծութիւնն երոյ, որոնք ընդհանրապէս հայրենասիրական էին:

ԲԱՂՆՈՅՊԱՆԵԱՆ Անտոն, Եղիսարեթուպոլիս, քահանայագործած է Կէօրկէնի մէջ. 1791ին Եղիսարեթուպոլսոյ ապերկց կը կարգուի, կանոնիկոսի աստիճանով պատուուած: Հակառակ որ կեանքի վերջին տարիները հիւանդակաւ անցուց՝ գրականութեամբ զբաղեցաւ. 1800 գիրք թողուց Եղիսարեթուպոլսոյ մատենադարանին. մեռաւ 1814 Փետր. 20ին:

ԲԱՂՆՈՅՊԱՆԵԱՆ Ղուկաս, Վաղաշկերտոյ որ ճաշոցի 1421ի յիշատակագրի մը համեմատ (հրատարակուած է Աճառեանէ «Հանդէս Ամսորեայ» 1908 237) Լէնկիթիմուրի որդի Շահուհ երբ իրաթ երթալով Թիւրքմէնները կը փախցնէ՝ վերջիններս կրկին վերադառնալով Վաղաշկերտոյ մէջ Բաղաշայ մօտ կը ջարդուին:

Կը կարծեմ որ Բաղանր Բազան պեճ Է կարգալ որ Է Բազաւանը որ Վաղաւաղեթի պատմական աւանն Է:

ԲԱԶ, գղ. Աղբակու, 1900ին 60 տ. բնակիչ ունէր, 42 տունը հայ էին, ունէին եկեղեցի մը, առանց պարոցի էին: Հոս արհեստական բերդ մը կայ, զոր տեղացիք Պարոնաց բերդ կ'անուանէին: Բազի մէջ կան երկու աւերակ եկեղեցիներ, առաջինը Կաթնով Ս. Խաչ, ուր ուխտի կ'երթային Խաչի օրը, երկրորդը Շուշաբաթ, Գիւղէս բաւական հեռու կը տեսնուին Շուսանիս, Քիլիկիա և Լալիան անուն հայկական աւերակ գիւղերը:

ԲԱԶ, գղ. Վանայ Վան-Տոսր գու.ի, Տիրամայր գիւղի համանուն վանաց արևելեան հիւսիսակողմը, դէպի Բգնուճեաց ծովը մտած. երբեմն նշանաւոր քաղաք էր, Բազ նահապետ իշխանէն շինուած: 1900ին 15 տ. բնակիչ ունէր միայն, որոնց 5ը հայ էին:

ԲԱԶ, թոռն Հայկայ, նախահայր Բգնուճեաց, ինքն է հիմնողը Բազ գիւղին: Տե՛ս Բգնուճիք:

ԲԱԶԱԲԵՐԳ կամ Բազկեր, անառիկ զգեսակ Գու-



ԲԱՂՆՈՅՊԱՆԵԱՆ ՂՈՒԿԱՍ

գարաց Մորոտոր գու.ի մէջ, բիրակի մը կատարը, կառուցուած Բազ նահապետէն Բերդս շատ անգամ քրիստոնէից ապաստարան եղած է պարսից յարձակմանց առեւն Տե՛ս և Բազունիքի:

ԲԱԶԱԲՈՒՆ, գղ. Չմշկածագի Առաջնորդական թեմի, ունէր 25 տուն հայ. եկղ. Ս. Սասուածածին, զպրոցը 10 մանչ և 13 աղջիկ կը յաճախէին:

ԲԱԶԱԶ — ԱՂԱՅԱՆԵԱՆՅ Գրիգոր, խմբագիր 1908ին Բազու հրատարակուած Անի շաբաթաթերթին (Սոց. Յեղափոխականներու օրկան):

ԲԱԶԱՇԷՆ, Սիմէոն կթղ. այս անուամբ ընգարձակ երկիր մը կը յիշէ, որ սեփականութիւն էր Այրարատայ Կոտայք գու.ի Չագավանուց:

ԲԱԶԱՐՃԸԳ (= Թաթար Բազարճըզ կամ Պազարճըզ), քղ. հարաւային Պուլկարիոյ Փլովտիվի նահանգին մէջ, ունի 25000 բնակիչ, որուն 3000ը միայն օտարներ են (հայ. թուրք հրեայ): Հին արձանագրութեանց համաձայն քաղաքիս բնակչութիւնը Անիի գաղթականութեան բեկորներէն կը նկատուի, եկած՝ Թրանսիլվանիոյ ճամբով, եւ մօտ 200—250 տարի առաջ հաստատուած են քաղաքիս մէջ: Բազարճըզի Հայոց թիւն է ներկայիս 130 տուն (500 անձ), որոնք առևտուրով, արհեստով կը պարապին Կան հետեւեալ համարականները. պ. պ. Թաղէոս Պ. Սարգիսեան՝ դեղագործ, Սարգիս Պ. Սարգիսեան՝ փաստարան, Անդրէաս Սանդուխտ Անկկովա՝ բժշկուհի: Անգրէաս Էկինչեան և Որդիք՝ կօշկակարութեան գործարան մ'ունին:

Քաղաքիս Հայոց եկեղեցին Ս. Ստեփանոս 1820ին կառուցուած է, որմէ առաջ Հայերը մատուռ մ'ունեցած են, հաւանօրէն 1760ին շինուած: Ազգ. վարժարանը Խորհեմեան՝ շինուած է 1854ին և վերանորոգուած 1890ին: Վարժարանս ունի 45 երկսեռ (աշակերտ, բաժնուած 4 դասարանի: (Յ. Ռուբինեան):

ԲԱԶԱՐՃԸԳ տե՛ս Պազարեբզ:

ԲԱԶԱՐ ԶԱՅ s. Պազար չայ:

ԲԱԶ-ԲՈՒԹ, գղ. Տիգրանակերտի առաջնորդութեան, քանի մը տուն հայ բնակիչ ունէր:

ԲԱԶԵՆԻՅ ՎԱՆ-Բ (Ս. Ասուածածիկ) Մոկաց աշխարհի Սպարկերտ գաւառակի մէջ: Մենաստանս այժմ՝ անչուք և ողբայի վիճակ մ'ունի: Նոյն գաւառակի մէջ, վանացս մօտ կայ Բազեցից, ըստ ոմանց Բազեցից, հայաբնակ զիւր մը, որ ունի քարաշէն եկղ. մը՝ Ս. Թէոդորոս: Վանքի անուէնը գրուած է նաև Բազեից կամ Բազեցի:

Վանս կը յիշուի 1455ի եւ 1475ի ձեռագրաց յիշատակարաններու մէջ՝ իր Ս. Ասուածածիկն եւ Ս. Էջմիածիկն եկեղեցիներով: 1556ին՝ Ասուածա-

սուր աբեղայ վանքիս մէջ ձեռագիր մը կը կազմէ եւ կը յիշէ այդ առեւնի Մարտիրոս Եպիսկոպոսը, այդ ձեռագիր Աւետարանը 1573ին Մարտիրոս Եպ. Էն նուէր կը տուի Ալոյ Ս. Գեորգ վանքին:

ԲԱԶԷԻ ԲԵՐԳ, Կիլիկիոյ հին բերդերէն մին:

ԲԱԶԻՎ Հայկ, արտօնատէր և պատասխանատու խմբագիր 1910—1920 Թէհրան լոյս տեսած «Առաւօտ» շաբաթաթերթի: Տե՛ս Պազիլ:

ԲԱԶԻԿ, խմբագրատ, ծնած Շատախ, որ 1915ի տեղահանութեան շրջաններուն՝ իր Տիգրան զաւկին հետ հերոսացած է:

ԲԱԶԿԱԻԻՎ, գղ. Կարնոյ, բն, 85 տուն, թուրք և հայ էին:

ԲԱԶԿԵՐՏ s. Բազմաբերդ:

ԲԱԶՄԱՅԱԿՔ, հին գղ. Սիւնեաց Հարանգ գու.ի:

ԲԱԶՄԱՂԲԻԻՎ, կը յիշուի Արիստակէս Լաստիվերացիէն, կը գտնուի Բարձր Հայոց Մանանազի գու.ի մէջ:

ԲԱԶՄԱՇԷՆ կամ Բոզմիւիէն, գղ. Բազրեանդ գու.ի, Մօլլա Զատէի արևելակողմը. ունէր 15 տ. բնակիչ. տե՛ս Բզմեհն:

ԲԱԶՄԱՌԻ, հայանուն բայց թուրքարնակ գղ. Գողթն գու.ի Վանանդաձորի մէջ:

ԲԱԶՄՎԷՊ, հանդիսարան ազգային, բանասիրական, զրական, գիտական ամսաթերթ, հրատարակութիւն Վենետիոյ Միխիթարեան Միարանութեան, (խմբագիրները՝ վանքի միարանները), հիմնադիր և առաջին խմբագիր Հ. Գարբիէլ Այվազովսքի: 1843էն սկսած է լոյս տեսնել:

Հասցեն Է՝ Rédaction de la revue «Pazmaveb» St. Lazare Venise (Italie):

ԲԱԶՄԵՆԻՅ s. Բազեցից:

ԲԱԶՈՒԿ, Հայկազնահապետ 1035 985 ն.ք.Բ.):

ԲԱԶՈՒ-ԶՈՐ, կը յիշուի Այրարատայ Կողովտ գու.ի մէջ:

ԲԱԶՈՒՄ կամ Բազու, գղ. Տարօնոյ գու.ի Մշոյ դաշտին մէջ, Ս. Կարապետէն մէկ ժամ հեռի: Բն, հայ և թուրք խառն էին: Ի հնունն, ըստ Զենտր Գլակի, բաղմամարդ աւան մըն էր: Ս. Կարապետ վանքի 15 կալուածներէն մին էր:

ԲԱԶՈՒՄ, լեռ Գուգարաց Տաշիրք գու.ի մէջ:

ԲԱԶՈՒՆԻ, իշխան Կիլիկիոյ կողմանց 1098ին:

ԲԱԶՈՒՆԻ Յովհաննէս, վրդ. Շատախցի, ծնած է Վան 1810ին, միարան Վարազայ վանքին. Երուսաղէմայ Ս. Յակոբայ վանքին ծառայութեան մէջ կը մտնէ, 1871—2 Դամասկոսի տեսուչ կը կարգուի. կը հրատարի և կը մեկնի Վան կը կարգուի Առաջնորդ Աղբակի և վանահայր Ս. Բարթոլոմէոս վանքին. գրի առած է Աղթամարի Մաշատուր կթղ.ի կենսագրութիւնը («Արախ»

1897 Գիրք Բ. էջ 51—61. «Հանդես Անսորեայ»
 1920 էջ 178, Աղանունի՝ Սիաբանի» էջ 376):
 Բազումների վրդ. 1880ական թուականներէն Վասպուրականի գաւառներուն մէջ յայտնի էր իր յանդուգն գործերով և քաջագործութիւններով, որոնց պատճառաւ ալ թուրքերը և ֆիւրտերը «Դալի Կարաբաշ» մականունով կը ճանչնային զինք: Արճէշի և Աղրակի գաւառներուն մէջ համբաւ հանած էր իրրե վարժ ձիաւոր և քաջ վարդապետ: Պաշտօն վարած է նաև Ատրպատականի մէջ ուր 1899ին Արտաղի (Մակու) Ս. Թադէի վանքին մէջ դաւադրութեամբ սպաննուած է Մանօթ է նաև «Կայծակ» անունով: (Երամեան «Վասպուրական»):

ԲԱԶՈՒՆԻՔ, Վարդան Բարձրերդցի այս անուամբ կը յիշէ Բագաբերդը (տե՛ս):

ԲԱԶՊԷՆ, գղ. Կիւմիստանէի, մեղրը նշանաւոր էր:

ԲԱԶՐԻԱ թրքարնակ գղ. Արզուիին:

ԲԱԹԱԲԱՆ Հայկ. գրած է «Արդի Եթովպիան և Հայ գաղութը» տպ. Վենետիկ Ս. Ղազար 1920:

ԲԱԹԻԿԵԱՆ Տ. Բաղիկեան:

ԲԱԹՆՈՅ Տ. Բաղնոց:

ԲԱԹՈՒՄ Տ. Պարուս:

ԲԱԹՈՒՄԻ ԲԱՆՎՈՐ, պարբերաթերթ, տպ. Պաթում 1922ին: Խմբագրական Կոլեգիա (Վահան Տէր Արրահամյան):

ԲԱԹՈՒՆԾ, թրքարնակ գղ. Արագածոտն գուի: Գրիգոր Մակուեցի կթ. 1431—3ին գնեց զիւրս պարսից Ռոստոմ ամիրայէն և համարուեցաւ էջմիածնի սեփական 7 զիւղերէն մին: Սա էր կրեմն կաթողիկոսներու ամբարանոցը:

ԲԱԹՐԱՍ, Յունաստանի վաճառականական քղ. ուր 500էն աւելի Հայեր հաստատուած են 1921-էն ի վեր: Պ.պ. Տ. Գասպարեան, Կ. Թէքաթլեան, Գ. Հալաճեան, Բ. Պապասանեան՝ կարեւոր զիրքեր գրաւած են: Ունի հայ ատամնարոյժ մը պ. Սահակեան, որ Հայոց Միութեան ատենապետն է: Բաթրասի Աղգային վարժարանի հոգատար մարմնոյն ատենապետուհին է Տիկ. Կ. Թէքաթլեան: 1936էն սկսեալ վարժարանը ստանձնած է Հ. Բ. Ը. Միութիւնը: Վերջերս ունեցաւ Բաթրաս իր հոգեւոր հովիւը յանձին տէր Հմայեակ Խաչատուրեանի, Հայերը եկեղեցի չունին, պաշտամունքը Յունական եկեղեցիին մէջ կը կատարուի: Բաթրասի Հայոց մեծ մասը Ատապաղարցիներ են: (Մ. Սարգիսեան):

ԲԱԹՐԻՔԵԱՆ — Վարդ, աղնուական սերունդ մը: Մականուններն առաջ եկած է յունական ժամանակներէ: Իրենք էին որ Բաթրիք կոչումը

Հայաստան տարին: Ռուսաց Նիկողայոս Ա. ձարիատեն, 1830—4ին, այս ընտանիքը իր ազնուականութեան հաստատութիւնը ստացաւ և ձարական արժանիքը ընդունուեցաւ պալատականի տիտղոսով: 1829ին Պայազիտէն Ալեքսանդրապոլ (Լենինական) գաղթած է այս տոհմը: (Տօնիկիէվի):

ԲԱԹՈՒՆԻՔ, Բուժուցի կամ Բժուցի, Վասպուրականի հին գաւառ, Մովսէս Խորենացիին կը յիշէ Բժուցեաց գե, Հոփիսիմեանց ճանապարհորդութեան պատմութեան մէջ:

ԲԱԼԱԵԱԼԱՅ, գղ. Տիգրանակերտի առաջնորդական երկրորդ թեմին. տ. հայ բնակիչ ունէր:

ԲԱԼԱՍԱՆԻ Բագուէն 10 վերստ հեռու դէպի հիւսիս կը գտնուին նախահանքերը Բալասանի, ուր կը բլթէ առատ նաւթ երեք գոյն և տեսակ, այսինքն ստիտակ, կանաչ և սև: Հանքերը կը պատկանէին զանազան ընկերութեանց և անձանց, զոր օրինակ՝ Կասպեան ընկերութեան, Արարատեան ընկերութեան, Գողթան ընկերութեան, Մասիս ընկերութեան եւայլն: Հոս կ'ապրին բաւական թիւով Հայեր:

ԲԱԼԱՍԱՏԱՓ, հին գղ. Գեղարքունիի

ԲԱԼԱՍՈՂՈՎԻՏ Տ. Բալասնովիս:

ԲԱԼԱՍՈՒ կամ Պալախոն գղ. Բարերդի, կառուցուած բարերեր դաշտի մը վրայ, բն. Հայ և թուրք խառն էին. Հայերը ունէին երկու եկղ. Ս. Կարապետ և Ս. Լուսաւորիչ: Հ. Ինճիճեան հոս Ս. Գէորդ մենաստան մը կը յիշէ:

ԲԱԼԱՍՈՎԻՏ, հին գու. Վասպուրականի:

ԲԱԼԱՂՈՎԻՏ կամ Բալախոնովիս, գո. Չորրորդ Հայոց մէջ, որուն գլխաւոր քաղաքն է Բալու (տե՛ս):

ԲԱԼԱՂԵԱՆ Սաւուել, գիտական գրքեր հրատարակած է 1891էն սկսեալ Թիֆլիսի մէջ:

ԲԱԼԱՃԱ Տ. Պալանա:

ԲԱԼԱՆԿԱՍ-ԽՕԼ-ՉԷՔԻՆ, հայարնակ գղ. Երզնկայի, եկղ. Ս. Հոփիսիմէ:

ԲԱԼԱՆԿԱՍ-ԿԱՄՈՒՐՉ-ԳԼՈՒՍ, գղ. Երզնկայի, 12 տ. հայ և 2 տուն քուրա բնակիչ ունէր:

ԲԱԼԱՍԱՆԵԱՆ Տ. Պալասանեան:

ԲԱԼԱՍԱՆԵԱՆ (Բալասանեան) Գրիգոր (Վաչագան), 1896էն սկսեալ Թիֆլիսի մէջ հրատարակած է Ռոստոմ եւ Սալման, Հեմիխ Պետալօցցի, Առիւմանե Մնե, Պոսիկ Մնե, Երկու Պանլաւան, աւանդութիւններ և պօէմներ: 1902ին խմբագրած է Չգաղմուցը, ի յիշատակ Հ. Ղ. Ալիանի, տպ. ի Վենետիկ: 1908—9 խմբագրած է Գրականութիւն եւ կեանք, հասարակական, արուեստագիտական պատկերազարդ շարաթաթերթը՝ Թիֆլիսի մէջ:

ԲԱԼԱՍ ՉՈՐ, կը յիշուի Այրարատայ վանանդ գաւի մէջ:

ԲԱԼԱՔ, գղ. Սիւնեաց Ծղուկ գաւի:

ԲԱԼԵԱՆ Հայկ, 1927—1932 խմբադրած է Պէյրութի մէջ Ազգակ եռօրեայ «հայաթերթ»ը: ԲԱԼԸՆԿԱՅ, գղ. Տիվրիկի, 10 տ. հայ բնակիչ և մատուռ մ'ունէր:

ԲԱԼԻ Ս. Պալի:

ԲԱԼԻՉՈՐ, վանք Խիզանի մէջ, 1594ին հոս ներսէս արեղայ ընդօրինակած ձեռագրին յիշատակարանին մէջ կը յիշէ Ս. Աստուածածին եկեղեցին:

ԲԱԼԻՆՁԻ, գղ. Տիգրանակերտի եօթերորդ թեմին, 10 տ. հայ բն. ունէր:

ԲԱԼՄԻՐ (Թսլոր) գիւղ Սուրբոյ, Տէր-Ջօր Դամակոս ճամբուն վրայ, սուրիական անապատի խորերը, Փլատակներու ընդարձակ տարածութիւնն ու կանգուն հսկայ սիւները անսաման անապատի մէջտեղ կը վկայեն փառաւոր անցեալի մը պատմութիւնը:

Գիւղիս մէջ 20 ընտանիք Հայեր կ'ապրին, զուրկ եկեղեցիէ և դպրոցէ. կը զրաղին առեւտուրով և արհեստով: (Գր. Մ. Լուրեան):

ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ կամ Բոլշեվիկեան:

ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ԳՐՈՂ, որդան Համամուրի կուսքջիջի Դոնդիսորհրդի յեղ կոլխոզի, տասնորյա թերթ, տպ. Ղարաքիլիսա 1933—? խմբ. Լեվոնյան, Պուլհակյան, Հակոբյան:

ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ԳՐՈՇՈՎ, որդան Թալինի Շրջկոմի յեղ Շրջգործկոմի (հնգորյա թերթ), տպ. Թալին 1932—4... պատ. խմբադիր Խ. Դանիէլյան, ապա Վ. Մարգարյան:

ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈԼԽՈՂ, որդան Ղամարուի Մ. Տ. Կ. Քաղաքմնի (հնգորյա), տպ. Ղամարու 1933—4... խմբ. Ս. Ազալնի:

ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈԼԽՈՂ, Ախալքալաքի ՄՏԿ Քաղաքմնի որդան: Տպ. Ախալքալաք 1934... պատ. խմբ. Լ. Ռուբէն:

ԲԱԼՇԵՎԻԿՅԱՆ ՈՒՂԻ, որդան Յանըխի Խորհանա. Քաղաքմնի (ամխը երկու անգամ): Տպ. Նոր Բայազետ, 1934... խմբ. Ա. Ղաղարյան (Տն'ս Բոլշեվիկյան սեպտով):

ԲԱԼՈՎԻՏ, անտառախիտ հովիտ Համշէնի, որուն մէջէն կ'անցնի համանուն ջուր մը, որ կը խառնուի Համշէնի դեղին հետ:

ԲԱԼՈՒ, գլխաւոր քղ. համանուն գաւառակին, Տիգրանակերտի կուսակալութեան Արզանայի գաւին մէջ: Ըստ հին աշխարհագրութեան, կ'իյնայ Չորրորդ Հայոց Բալահովիտ գաւի մէջ. կանուցուած է Արեւիկան Եփրատի կամ Արածանիի

հիւսիսային ափի մօտ. հաւանական է որ անունը Հայոց հեթանոսութեան ատեն Բաւի անուն կուսքէն մնացած լինի. կը պատմեն միանգամայն թէ Բեյլուս կամ բալ առատ ըլլալուն կոչուած է Բալու:

Բալուն ի հնուն մն ունեցեր է բազմաթիւ արհակիչներ, որոնք զաղթելով նուազեր են, և 1892ին, ըստ Վ. Քինէի, ունէր միայն 7500 բնակիչ հետեւալ կերպով բաժնուած:

Մանմետականք և Գուրտք	3500
Հայք	1700
Ատրի արարք	1000
Ատրի Եագուպիք	1300
	<hr/>
	7500

Այս վիճակագրութիւնը չէ կարող ճիշդ ըլլալ, որովհետեւ ուրիշ ազգային տեղագրողք 1880ին 500 տ. հայ բնակիչ, իսկ 1885ին 550 տուն հայ կը հաշուեն, նորագոյն (1900ի տեղները) գրող մ'ալ 2600 հայ կը հաշուէ: 1870էն սկսեալ Հայերը Ատանա, Խարբերդ, Տիգրանակերտ, Սեբաստիա, Մալաթիա և Գղի կը զաղթեն:

Բալուն նշանաւոր է իր հին կիսակործան, եւ հեթանոսական ու քրիստոնէական ժամանակներու վերաբերեալ նուիրական մնացորդներով: Հիւսիսային կողմը կը բարձրանայ Ս. Մեսրոպայ լեռը, որուն բարձրութիւնը 3098 ոտք կը համարուի Լեբանս վրայ կան քարէ փորուած միջանի մեծ սենեակներ, որոնց միոյն մէջ գերեզմանի ձևով քար մը կայ, որ Ս. Մեսրոպայ գերեզման կ'անուանուի. տեղացի հայք երբեմն ուխտի կ'երթային հոն և կը պնդէին աւանդութեամբ, թէ Հայոց գրերը հոս գտնուած են: Այս մասին վարդան պատմիչ կը գրէ. «ի լեռնն Բալուայ որպէս տակաւին ցուցանի զորչմն աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին ինկովք և ջահիւք միշտ ի տաճկաց և ի քրիստոնէից բնակչաց տեղւոյն»: Փ.Գ. դարուն, Գրիգոր վարդապետ մը որ այս սրբանուէր ճգնարանին մէջ կ'ապրէր՝ Խալքերդի մէջ նահապտակոն: Երաւ. այս ճգնարանը որ վանք կը համարուի աւերակ դարձած է: Քաղաքիս հարաւային կողմը լեբան գաղաթը Գոնահաւք կը կոչէին Հայք և ուխտի կ'երթային: Հիւսիսային կողմի լեբան վրայ Ս. Գեորգ անուամբ վանք մը կայ եղեր ժամանակաւ, Ս. Մեսրոպայ լեբան ճակատը տներուն մօտ, Ս. Թորոս անունով Հայոց ուխտատեղի մը կայ Հայերը 4 եկեղեցի ունէին, Ս. Սահակ, Ս. Լուսաւորիչ, Ս. Աստուածածին և Ս. Կիրակոս: Մայր եկեղեցին էր Ս. Լուսաւորիչ, խիստ հաստատուն և հոյակապ շէնք մը, խաչա-

ձեւ և զմբէթաւոր. համակ շինուած կոփածոյ սրբատաշ քարերով, ունի բարձր և գեղատեսիլ կաթողիկէ: Երկու երկսեռ զպրոցներ կային 170 աշակերտով և 90 աշակերտուհիով: Բողոքական Հայերն ալ — որոնց թիւը 30 տուն էր — ունէին ժողովարան և 80 երկսեռ աշակերտով զպրոց:

ԲԱԼՈՒ գաւառակը 48 հայարնակ զիւղ ունէր 32 եկեղեցիով և մօտ 1350 տուն բնակչութեամբ: Գաւառակիս լեռներն են Գոհանամբ, Կապան-Տաղ, Մալր Տաղլար, Արածանի գեաէն զատ կան՝ Վարդեմի-չայ, Պալգայա-չայ, Տերեկեան սուլոյ, ձառօչայ, Ուզունովա-չայր, ամէնքն ալ Արածանի կը թափին: Բայու գաւառակը ունի վանք. Հաւասոյ վանք կամ Քաղցրահայեաց Ս. Ասուածամին և Պաղինու կամ Ս. Խաչի վանք: (Էփրիկեան՝ «Բաշխարհիկ»):

Ձեռագրաց յիշատակարաններու մէջ կը յիշուի Բալուն. 1437ին Բալուի Ս. Գէորգ վանքին մէջ Աւեսարան մը կ'ընդօրինակէ Աւեսիք. «յեպիսկոպոստրեան Բալուի սեանն Մինասայ ի դառն եւ ի նեղ ժամանակի զոր մահասարածամն յԱսուծոյ՝ չայր թոյլ քանակայից հաց ուտել»:

Վերի աւեսարանը 1461ին Բալուի Ս. Նեան եկեղեցւոյն կը նուիրուի վկայութեամբ Գաւիթ եւ Սիմեոն եպիսկոպոսաց, 1469ին գրուած է Մաեսոց մը Բալուի Հաւայ (սպ.) վանքին մէջ, 1570ին Երուսաղեմ գրուած աւեսարանին յիշատակարանը Բալուի մէջ կը գրէ Միսիթար եպիսկոպոս: 1603ին Սեփիանոս եպ., 1684ին Թովմա գրիչ, Բալուցիք Երուսաղեմ կը գտնուին: — Շուտ 1903ին «Հանգես Ամսօրեայ» ի մէջ «Բալուի գաւառաբարբառի մասին կը գրէ (էջ 45), իսկ Սարգիսեան Յարութիւնն (Այեւոր) 568 մեծապիւր էջերով գործ մը նրասարակեց Գահիրէի մէջ 1932ին ԲԱԼՈՒ, իր սովորութիւնները կրթական և իմացական վիճակը և բարրասը:

ԲԱԼՈՒԱ, զիւղակ Տաշրաց գո.ի մէջ (ի Գուզարս):

ԲԱԼՈՒԵԱՆ գրող և խմբագիր «Ձուարթնոց» Տարեգիրքի և ամսագրի:

ԲԱԼՔԱՆ, գղ. Բաղէշի:

ԲԱԽԵՆՅ ՎԱՆՔ s. Բեխեցն վանք:

ԲԱԽՇԻ կամ Հանի գիւղ, Գարդման գո.ի մէջ, 36 տուն հայ բնակիչ ունէր. եկղ. Ամենափրկիչ, 1680ի արձանագրութեամբ: Յայտնի չէ թէ ե՞րբ աւերուած է զիւղս:

ԲԱԽՁԱՍՐ s. Հաջի Բայրամ:

ԲԱԽՈՒԱՆՅ գղ. Վասպուրականի Գաւաշ գո.ի (Ոչտունեաց), 30 տ. հայ կար. եկղ. Ս. Աստուածամին:

ԲԱԽՈՒՍ, գղ. Տիգրանակերտի չորրորդ թեմին: ԲԱԿ s. Բաբգէն Ա. կրդ. Կիլիկեաբեան:

ԲԱԿ, հայարնակ զիւղակ Շատախու (Վան), ունէր Ս. Քրիստոս անունով քարաշէն եկղ. մը: ԲԱԿԱՎԱՆՔ, Սիւնեաց Չորք գո.ին մէջ կը յիշուի:

ԲԱԿՓՈՐ, հին գղ. Սիւնեաց Սողք գո.ին մէջ: ԲԱԿՍԱՐ, բերդ Վասպուրականի, Ստեփան Ա. սողիկէն կը յիշուի Թոսնաւան կամ Ճուաշ գո.ի մէջ:

ԲԱԿՅԻ s. Ակն:

ԲԱԿՅԻՏ, հին գղ. Սիւնեաց Վայոց ձոր գո.ի:

ԲԱԿՈՒՆՅ ԱԿՍԵԼ, գրագէտ, մէկը Խ. Հայաստանի ամէնէն ուժեղ արձակագիրներէն, որուն գրականութեան նիւթը կը կազմէ գիւղը, անոր կենցաղը և յեղաշրջումը: Հայաստանի Համաստեղն է Բակունց, որ իր սեղմ, պատկերալից, ոգեկոչող և կենդանի «ճով անմիջապէս կը գրաւէ և միջավայրն ու միջոյրտը ստեղծելու շնորհալի տաղանդը ունի (Հիւ. Տար. 1935 էջ 220):

Բակունց ծնած է Գորիսի (Չանդեղուր) մէջ 1899ին. չքաւոր ծնողաց զաւակ ըլլալուն՝ ծխական զպրոցը ձրիներու կարգին կ'ընդունի զինքը: Աշակերտական նստարաններու վրայ իսկ տաղանդաւոր Բակունց ուրիշներու ուշադրութիւնը գրաւած է: 1917ին կ'աւարտէ Էջմիածնի ճեմարանի դասընթացը: Գրելու առաջին փորձն ըրած է 1911ին երբ հաղիւ 12 տարեկան էր. Տիգրան Նազարեանի «Աղբիւր Տարագ» ամսագրին մէջ, ստորագրելով Յիմար մարդը հէքեաթը: Իր բուն գրական գործունէութիւնը կը սկսի 1924ին Գաւառական նամակախօլով Ա. Բակունց գրած է վէպեր, վիպակներ և պատմուածքներ: Չանազան պարբերականներու մէջ հրատարակած արձակները 1927ին առանձին հատորի մը մէջ ամփոփուած են, ընդհանուր վերնագիրը ունենալով Մքնանոր: Այդ տարին լոյս տեսած է նաեւ Յովնաբան Մարչ երգիծական պատմուածքը: Տարի մ'առաջ 1926ին լոյսընծայած էր Գալուսի վիկը 1929ին Նոր Ուղի ամսագրին մէջ հրատարակուեցաւ իր ընդարձակ մէկ վէպը, Կարմրաբար, որ զժրախտարար կէս մնաց: 1933ին հրատարակեց Խոսր ջուրի Կոմունան, Պասմուածքներ, իսկ 1934ին Սեւ ցեղերի սերմնացանը, որուն մէջ մտած են հին և նոր պատմուածքներ: 1935ին ուրիշ ժողովածու մը՝ Անճրեւ անունով: Իր գործերն են Որոսման որդի և Ծիրանի փողը զոյգ գրուածքները, որոնք զխաւորաբար ամբօխավար քննադատներուն ամբաստանութեան հիմը կը կաղմեն: («Կեանք եւ Արուես» 1936 p. 8.

«Հայասանի Կոչնակ», Ա. Երեմեանի գրուածքը 1937 էջ 165):

Ա. Բակունցն ալ 1938ի և. Հայասանի ներքին խնդիրներուն գոհը եղաւ, ամբասանուելով իբրեւ Թրոցկիս, և սպանուեցաւ Նոբելի, Մանարիի, Ալազանի և ուրիշ աստեղներուն հետ:

Բակունց Երեւանի մէջ հրատարակուող (1930—1934... «Կոլխոզնիկ» երկշաբաթաբերին, 1930—1932ին լոյս տեսնող «Սոցիալիստական Ագրոնոմիա» սարեգրքին և 1932ի «Հոկտեմբեր-Նոյեմբեր» սարեգրքին խմբագր. Կոլեգիայի մէջ եղած է:



ԲԱԿՈՒՆՑ ԱԿՍԵԼ

ԲԱԿՈՒՐ, անձանօթ վայր Արդնի մէջ՝ ըստ էփրիկեանի. տե՛ս Բագուր:

ԲԱԿՈՒՐ, Բզեաչի Ազձնեաց (340ին):

ԲԱԿՈՒՐ զօրավար Տ. Պակարաւ:

ԲԱԿՈՒՐ Թգ. Մարաց, 61—73ին:

ԲԱԿՈՒՐ Սիւնի, Ղևոնդեանց օրով 452ին:

ԲԱԿՈՒՐ Սիւնի, Սիւնեաց Նահապետ Ա. Թգ.ի օրով (155ին):

ԲԱԿՈՒՐ, իշխան Վրաց Ս. Մեսրոպայ օրով (Յ. դար):

ԲԱԿՈՒՐԱԿԵՐՏ, աւան Վասպուրականի Մարանդ գու.ի մէջ, ուր հիւանդանալով մեռաւ Արտաշէս Բ. Թագաւոր: Թովմա Արծրունւոյ համաձայն աւանս Մարաց մէջ կ'իյնայ: Թերևս իր օրով Բակուրակերտ Մարաց ձեռք անցած էր:

ԲԱԿՈՒՐԱՆ տե՛ս Քիւրքեան վահան:

ԲԱԿՈՒՐԱՆ Աբաս և Գրիգոր, երկու եղբայրներ որոնք ժԲ դարուն մէջ հիմնած են Պուլկարիոյ Բաչկովայի վանքը (տե՛ս):

ԲԱԿՈՒՐԱՆ, հայ իշխան, Կ. Պոլսոյ Ալէքս Ա. կայսեր արքունիքին մէջ, զօրաւոր և ճարտար անձ, որ Ալէքսի օգնած էր երբ ղեռ ան Բիւզանդիոնի գահը չէր բարձրացած: Ալէքս իր խոստման համաձայն մեծ պատիւներու կը բարձրացնէ Բակարանը: Երբ Սկիւթացիք շուրջ 1085ին Յունաց վրայ յարձակեցան՝ զիրենք ընկճելու համար Բակուրանը զրկեց Ալէքս՝ Վարազ անուն հայ կորիձ իշխանին հետ, այդ ձակատամարտին մէջ երկու հայ իշխաններն ալ կը սպաննուին: (Չամչեան՝ «Պատմ. Հայոց» Գ. 9):

ԲԱԿՈՒՐԻ ՎԱՆՔ, կը յիշուի Սիւնեաց Բազք գու.ին մէջ:

ԲԱԿՏՐԻԱ աշխարհ, Արեաց աշխարհի սահմանակից:

ԲԱ-ՀԱԶՐԻԿ, զգ. Տիգրանակերտի, 10 տ. հայրնակիչ ունէր:

ԲԱՀԱԹՈՒՐ Ե. կին զրոյ մը Թիֆլիսի մէջ (Ճանօրութիւններ կը պակսին, փորձել տեսել ՅԱԻԵԼ՝ ՈՒԱՅՐ):

ԲԱՀԱԹՐԵԱՆ Առաքել, մանկավարժ ուսուցիչ, ապրած է ԺԹ. դարու կիսուն՝ Թիֆլիսի մէջ, ուր հրատարակած է Քերականութիւն աւխարհիկ լեզուի սպուած Տիֆլիս 1879—8. Ուղեցոյց հայ ուսուցչի. տպ. 1882, էջ 212, Համառոտ գործնական հոգեբանութիւն, տպ. 1882, էջ 161. Ծաղկոյր տպ. 1882, էջ 24. Առաջին լինեցարան որ երեք տպագրութեան արժանացած է:

Բահաթրեան վախճանած է 1883ի սկիզբները: (Իր մահուան առիթ «Արեւելեան Մամուլ» 1883 թ. 4. «Արձագանգ» Բ. սարի թ. 7 ևս յլն):

ԲԱՀԱԹՐԵԱՆ Աւետիք, ծնած ու ապրած Շուշիի մէջ, ուր 1889ին հրատարակած է Հին Հայոց սաղափութեան արուեստը, քննական տեսութիւն, 138 էջ և Առակագիրք, ինքնագիր և Թարգմանածոյ, տպ. 1886, էջ 161:

ԲԱՀԱԹՐԵԱՆ Բահաթուր, ծնած է 1872ին Ղարաբաղ, ուսած է Շուշիի դպրոցը և Գէորգեան ճեմարանը, իսկ բարձրագոյն ուսումը ստացած է Ժընևեի համալսարանը՝ հետեւելով քնադիտական և մաթիմատիքի ճիւղերուն: Ապա աւարտած է Կանտի ճարտարագիտական դպրոցը և իր և ճարտարագէտ-քիմիարան մտած է կեանքիսպարէզը: Սակայն առաւելապէս իր մէջ կոչում զգալով ուսուցչութեան՝ նուիրուած է կրթական գործին՝ հայկական դպրոցներու մէջ դասախօսելով մաթեմատիքի:

1914—7 երեք տարի պաշտօնավարած է Գէորգեան ճեմարանը իր ուսուցչի մաթեմատիքի, յետոյ անցած է Երևանի դպրոցը և ի վերջոյ հոն դասախօս եղած է համալսարանի բազմարուեստեան բաժնին մէջ: Նոյն ատեն զրազած է հասարակական գործունէութիւնով. 1918ին եղած է Հայաստանի ներքին գործոց նախարարի պարենաւորման ներկայացուցիչ Վաղարշապատի շրջանին մէջ. 1921ին, փետրուարեան ապստամբութեան օրերուն հրամանատար եղած է Կոտայքի զիւղերէն մէկուն: Անդամ էր Հ. Յ. Դաշնակցութեան և անոր համոզուած գործիչներէն մէկն էր:

Բահաթրեան ունի լուրջ ուսումնասիրութիւն մը Անանիա Շիրակացիի մասին, որուն վրայ աշխատած է երկար տարիներ:

Բահաթրեան համեստ, սակաւախօս մաքուր սրտի տէր և ուղղամիտ անձ մըն էր: Մեռած է 1934 Դեկտ. 1ին Երևանի մէջ:

ԲԱՀԱԹՐԵԱՆՅ Բ. գրած է Պատմութիւն կենաց, նշխարաց սրբոյն Գրիգորիսի Աղուանից կրթի. տպ. Մոսկուա 1859:

ԲԱՀԱԹՐԵԱՆՅ Սարգիս. իրաւաբան, Թիֆլիսցի, աշխատակից Մուրնի. 1895ին լոյս ընծայած է Հոլայից եւ անձնական իրաւունքը հին Հայաստանում. ախտապոլած «Մուրն» էն: Նոյն տարին՝ Հոլայից եւ անձնական իրաւունքը Հին-Վրաստանում:

ԲԱՀԻՋԱՋՈՐ, հին գղ. Սիւնեաց Հարանդ գո.ի: ԲԱՀԼԵՒԱՆ, հայարնակ գղ. Շամախուղ:

ԲԱՀՄԵԴԱՅ. գղ. Սղերդի Խիան գաւառակի. 30 տ. հայ բնակիչ ունէր. եկղ. Քառասուն Մանուկ:

ԲԱՀՈՒԲԵՐԴ, հին գղ. Սիւնեաց Բաղք գո.ի:

ԲԱՀՐԵՅՆ, կղզեքաղաք մը, մարդարիտի հանք, կը գտնուի Պարսից ծոցին մէջ, Արարիոյ հարաւակողմը, ուրկէ կարքեղոնացիք ժամանակին գաղթեցին զէպի հիւսիսային Միջերկրական, շինուեցաւ ժի գարուն Շէյխ Մուհամմէտ խալիֆային կողմէ: Ամէն տարի 600 մակոյկներով մարդարիտ կ'որսան: Ամերիկեան նաւթային ընկերութիւն մը (The Bahrein Oil Company) կը յահագործէ տեղւոյս նաւթահորերը: Քաղաքս ունի օդակայան մը և մօտ 200000 բնակիչ, որուն պետը Շէյխ Համէտ Իպըն Իսա էլ Խալիֆա՝ Անգլիոյ խնամակալութեան տակ կը գտնուի: Քաղաքիս մէջ կան քանի մը հայեր և յուսալի է որ մօտաւոր ապագային գոյանայ այստեղ փոքրիկ հայ գաղութ մը: (Վարդան Մելիքեան):

ԲԱՂԱԲԵՐԴ կամ Պաղաբերդ, հռչակաւոր եւ հին բերդ Բաղաց սահմանակից Սիւնեաց Զորք (Կապան) գո.ի մէջ: Ստեփանոս Թրպէլեան պատմիչ (Գլ. Բ.) կը գրէ. «Իսկ ամուրի անառիկի ի սմա, որ ի մարդկան հնարից հեռացեալ են, բայց միայն թէ Տէր մատնեցէ, Բաղաբերդ. որ և մի ոմն ի զարմիցս Սիսակայ Բաղակ անուն, առեալ զայս գաւառ մասն ժառանգութեան, շինէ զքարն Բաղակու ամրոց, որ կոչի Բաղակի fur և ամրացուցանէ զբերդն, և կոչէ Բաղաբերդ»: Բերդս Յովհաննէս կթղ. պատմիչէն կը կոչուի Ամրոց Բաղաց:

Ժ. դարու կիսուն Սիւնեաց Յակոբ եպ.ը, ապստամբելով Անանիա Մոկացի կթղ.էն, իրեն պաշտպան ունենալով Բաղաց և բերդի Ջուանչիր իշխանը, տասը տարի, մինչև մահը հոս բնակեցաւ: — Ստ. Թրպէլեանի պատմածին համեմատ (Գլ Կ.) 1126ին Ամիր Հարոնը եկաւ առաւ

«քարն Բաղակու. որ էր վանք՝ յորում մթերեալ կայր բաղում սրբութիւնք, խաչ և վկայարանք սկի և արծաթի և կտակարանք, որ գաղթեալ էին ի գաւառացն, և ամենայն ի դերութիւն մատնեցան»: Իսկ 1170 թուականին, ըստ պատմչին՝ կրկին այլազգեաց ձեռքը կ'իյնայ Բաղաբերդը: Բերդիս անուամբ Բաղաբերդ կոչուած է Երբմն չըջակայ վիճակն կամ գաւառն: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» Բաղուած՝ Հ. Ալիբեանի «Սիսական» էն:

ԲԱՂԱԽԱՆԻՔ, կը յիշուի Քաշուհիք գո.ի մէջ ի Սիւնիս:

ԲԱՂԱԽԱՆ, կը յիշուի Գանձակի Ջուանչիր գո.ի մէջ:

ԲԱՂԱԿ. իշխան, որու անունով կը կոչուի Սիւնեաց Բաղք գո.ը:

ԲԱՂԱԿԻ ՔԱՐ, այսպէս կը կոչուի Բաղաբերդը (տե՛ս վերը):

ԲԱՂԱՆԻՍ, հայարնակ գղ. Խաղախու Գանձակ գո.ի, բն. 46 տուն հայ, ունին եկեղեցի մը: ԲԱՂԱՆՈՒՍ, Փայտակարանի հիւ գաւառ մը: ԲԱՂԱՍԱԿԱՆԱՅ ԵՐԿԻՐ, ուր կը բնակէին Բաղասականք, Հայկայ զարմէն, սահմանակից Ուտի աշխարհի:

ԲԱՂԱՐՁԻ, գղ. Սերաստիոյ արեւելեան հարաւակողմը:

ԲԱՂԱՅ ԳԱՒԱՍ ան'ս Բաղք:

ԲԱՂԴԱՍԱՐ S. Պաղասար:

ԲԱՂԴԱՍԱՐ Արքեպ. 1811ին Եփրեմ կթ.ի կողմէ կարեւոր գործերով վան կը զրկուի:

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ S. նաև Պաղասարեան:

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ Ա. բժիշկ, որ կը գործէ Թաւրիզի մէջ:

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ Բ. բժիշկ ի Նիւ Եօրք:

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ Բ. բժիշկ ի Թաւրիզ:

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ Եղիշե, երամիշտ, Ղարարազցի, Մոսկուայի երաժշտանոցէն վկայուած:

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ Խաչատուր Ս. (կամ Պաղասարեան) Բրոֆ. ծնած Կէմիր շուրջ 1850—60 թուականներուն. տեղւոյն Պարթեւեան վարժարարին նախընծայ աշակերտներուն մէջ ամէնէն կարկառուն զէմքերէն մին, որ Կեսարիոյ և չըջակայից կրթական վերածննդեան գործին մէջ կատարած է խիստ կարեւոր դեր: Նախ անկապաշտօնավարեց իր օգնական դասատու իր ծննդավայրին Պարթեւեան վարժարանը, ապա Կեսարիոյ Ս. Սարգիս թաղի Յակոբեան վարժարանը, իրր անօրէն և յետոյ զարձաւ իր ծննդավայրը և երկու տարի չափ կրկին հոն ուսուցչութիւն ընելէ յետոյ, մեկնեցաւ Իզմիր:

Բաղդասարեան, բանաստեղծ մը, փիլիսոփայ մը, արդիւնաւոր ուսուցիչ մը և ինքնաշխատու-

թեան հերոս մըն էր... Հայ գրականութեան մէջ գերազանց, ունի տաղաչափեայ երկու երկասիրութիւններ ըստ Եղիազարեանի Ասրիցե և Վարդի բերք և ըստ Գանիէի Պոյաճեանի և Պետրոս Մարթանանի Վարդի վեպ և Խօսուն Ընոյլ անուններով և ուրիշ աշխատասիրութիւններ: Խօսուն Ընոյլը գնահատուած է իբր սկզբարեան մատուցող գրութար Է. Ղ. Արիշանէի Ըստ Գ. Ս. Գ. Ի կարնոյ Սանասարեան վարժարանի հայերէնի դասախօս եղած է Տ. Գուրգէնէն յետոյ:

Յովհաննէս Պարզճեանի Կ. Պոլիս հրատարակած Գեղեցիկ հանդէսին մէջ (1882, էջ 161) ունի ինքնագիր ոտանաւոր մը «Զեփիւռ գարնան» խորագրով և թարգմանութիւնը՝ Վ. Հիւկոյի «Իմա հրեշտակ» բանաստեղծութեան:

1921ին Իգմիթի մէջ հրատարակուող գրքում է, մեքենայ մը հնարելով, Բարիզի համալսարանէն Փոսթալ Օքսֆորդի համալսարանէն Բօրքո եւ այլք այս մեքենան քննելով՝ հաստատած են անոր օգտակարութիւնը Այդ մեքենան աշխատութեանց մէջ 95 առ հարիւր խնայողութիւն ընել կու տայ: Բարիզեան ընկերութիւն մը գնել առաջարկած է Բրոք. Բաղդասարեանի այս գիւտը (Յ. Յ.): Բաղդասարեան Սալատուր Ս. 1898ին Ասրիցե վիպագրութիւնը հրատարակած է Պոլսոյ մէջ, ինքն ալ 1922ի Իգմիթի աղէտին զոհ գացած է:

ԲԱՂ, ԳԱՍՍՐԵԱՆ Միհրան, ազգային և կրթական գործիչ, ծն. Պոլիս 1852 Մայիս 25ին Հայրը Պոլիս հաստատուած Իգնիմիտցի վաճառական մըն էր (Բաղդասար Հիւսեան), որ լքելով վաճառականական աստիճանը՝ քաղաքական քարոզիչ դարձաւ:

Միհրան նախնական ուսումը Պայաթի (Պոլիս) Խորէնեան դպրոցը առաւ, որուն տնօրէնն էր Յակոբ Գուրգէն. անկից անցաւ Սաղաթի Ներսէսեան վարժարանը աշակերտելով Մինաս Չերազի եւ Եղիա Տէմիրճիպաշեանի:

1873ին Պաղէլի (Զուիցերիա) Աստուածաբանական ճեմարանը ըրաւ իր ուսումը, դասընկեր ունենալով Պէյլերեան Տաճարը:

Միհրանի Զանգերով է որ Զուիցերիացի բարեսէրներու նիւթականով Պրուսայի մէջ «Արեւելեան Որբանոց»ը կը բացուի 1875ին, իր Գրիգոր եղբոր աջակցութեամբ որ մինչև 1915 գոյութիւն ունէր: Միհրան Պաղէլի մէջ առաջին քարոզը կը խօսի 1876ին Միհրան 1878ին աւարտելով ճեմարանը Պոլիս կու գայ ուր կը հրատարակէ անդրանիկ գրական գործը: «Առաջնորդ անգլիերէն լեզուի». նոյն տարին աշնան Կարին

է իբրև քարոզիչ Բողոքական Հայոց, 1879ի սկիզբները Կարնոյ մէջ կը բանայ «Մասեաց վարժարան»ը: Միհրան Կարնոյ Ռուսաց հիւպատոս Կոստանդին Կամսարականին հետ Վան կ'երթայ իրեն թարգման Անգլիոյ թուրքամոյ հիւպատոսին (1879ին աշնան): Թուրքիոյ կառավարութիւնը չի հանդուրժեր Միհրանի ներկայութիւնը Վանի մէջ. կը ստիպուի հեռանալ. Վանէն իգտիր և ասկէ Թիֆլիս կ'անցնի 1887ին և յետոյ Պոլիս, ուր հալածանքի ենթարկուելով Պրուսա կ'երթայ իր Գրիգոր եղբոր մօտ, հոն երկու տարի ուսուցչութիւն կ'ընէ Արեւելեան Որբանոցին մէջ: Տարի մ'ալ Գամսակոս կ'երթայ Կոստ. Կամսարականի իբր թարգման, որուն հեռանալով ինքն ալ 1891ին Ամերիկա կ'անցնի և Այովա նահանգի Des Moinesի համալսարանը կ'աւարտէ 1891ին «Պսակաւոր Աստուածաբանութեան» արտոյնով:

Միհրան ամերիկեան թերթերու մէջ հայկական զուլումները և ջարդերը կը նկարագրէ եւ առանձին կը հրատարակէ Armenia or the Country of Ararat, Past, present, and Future» (Հայաստան կամ Արարատի երկիրը, անցեալ, ներկայ և ապագայ, 1892): Այս գիրքը քանի մը անգամ կը տպագրուի:

Միհրան 1894ին Էյմիսիոն կ'երթայ և Խրիմեան Հայրիկի յանձնարականով Թաւրիզ կը մեկնի, ուր էր այն ատեն Սուքիաս եպ. Պարզեանց, որուն առաջարկով Ուրմի կը մեկնի, իբր ուսուցիչ Հայոց դպրոցին:

1897ին հայասէր Լէփոսուսի նպաստով Սալմաստի մէջ բացուած գերմանական հայ որբանոցին տնօրէն կը կարգուի, 1898էն 1900 Ղալաս գիւղի դպրոցին ուսուցչութիւն կ'ընէ և 1902ին Թաւրիզ կը վերադառնայ և Իրանի կառավարութեան հրաւերով Մարաղա քղ. փոստին կառավարիչ կը նշանակուի, մինչև 1906, յետոյ Թաւրիզի Ամերիկեան «Մէմօրիալ Դպրոց»ի ուսուցիչ 3 տարի, յետոյ մինչև 1918ի ամառը Ամերիկեան հիւպատոսարանի թարգման կը վախճանի 1937 Ապրիլ 23ին Թաւրիզի մէջ:

Իբրև գրական արտադրութիւն գրած է «Մուրճ»ի մէջ «Կարմիր շապիկ» յոգուածաշարքը 1906ին, Ականասեւ ծածկանունով, 1907ին Թաւրիզի մէջ հրատարակած է Աղեք. Տիւմայի «Բաստիյի առումը» վէպը: 1920ին հրատարակած է «Լոյսից դէպի խաւար»ը (36 էջ): (Հայկ Աճեմեան):

ԲԱՂ, ՍԱՍՐԵԱՆ Շաւարճ, Ղութականար, որ Բարգէն Թամրազեանի հետ Հայաստանի երաժշտանոցը կ'աւարտէ և 1936ին Թաւրիզ կը դառնայ ուր Ապրիլ 23ին իր անդրանիկ նուա-

գահանդէսը կու տայ: (Անեմեան Հ. «Մասիս» 1937):

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ Ս. բրոֆ., Թիֆլիսի պետական երաժշտանոցի ուսուցչապետ՝ 1920ին («Սեան» Ա. Երեւ.ի, էջ 98):

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ Օթիկ, օրիորդ, պարուհի: Դասական պարերը ուսած է Բարիզի մէջ, 1936ին բեմին վրայ կ'երևայ Թաւրիզի մէջ (Անեմեան Հայկ, «Մասիս» 1937):

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՅ Ա. երաժշտագէտ, 1888ին Թիֆլիսի մէջ յոյս ընծայած է Արեւելեան եղանակները, 1890ին՝ Մանկական ձայնագրեալ երգարան:

ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆՅ Եղիշեհ, 1900ին Ս. Պետերբուրգի մէջ յոյս ընծայած է Քնար Մուզկայի բանաստեղծութիւններ: Դ. Օքրոյեանցի հետ խրմբագրած է Գեղարուեստական այլոժ, Յ. Կ. Այվազովսկու յիշատակին: 1904ին երգ եւ Բոմանս, Հրատ. «Փնջիկ» (Ս. Պետերսպուրգ) Մի լար բլբլբուլ (բառերը Ս. Ծատուրեանէն) տե՛ս Բաղդասարեան Եղիշեհ (վերջ):

ԲԱՂԵՐ Օղլի, Աշուղ, բնիկ նոր Զուղայեցի ապրած է ԺԲ. դարուն. ըստ իր Տաղ Զուղու խորագրով երգին՝ իսկական անունն է Բաղրամ օղլի Ղազար: Թողած է բազմաթիւ բարոյական, խրատական, սիրային, երգիծական և այլ տաղեր, որոնց շատերը կորսուած են և հազիւ 19 կտոր մնացած: (Արամ Երամեանի գրութիւնը տե՛ս Պարսկահայ Տարեցոյց 1929 էջ 254-261):

ԲԱՂԵՇ կամ Պիրիլիզ, գեղատեսիլ, վաճառաչ և անուանի քղ. Աղձնեաց Սախոյ-ձոր գաւառի: Ծովի մակերեսէն 4837 սանաչափ բարձր, վանէն 5, իսկ Մուշէն 12 ժամ հեռի: Առաջին անգամ Թ. Արծրունիէն կը յիշուի Թ. դարուն մէջ:

Կառուցուած է մասամբ ձորերու մէջ և մասամբ լեռանց ապառաժներու վրայ, մէջէն կ'անցնի չորս ձորերէ՝ ձեացած Բաղեու ջուր կամ Ալի-Պիրիլիզ գետակը: Քաղաքիս տունները ընդհանրապէս երկայարկ են, շինուած ոմանք մոխրագոյն ուրիշներ գոյնզգոյն քարերով: Անուանի է բերդը, զոր Լէնկթիմուր չկրցաւ գրաւել, ըստ արարերէն արձանագրութեան մը՝ բերդս շինուած է Քրիստոսի 1496 թուականին՝ Պոլսոյ սուլթաններէն միոյն ձեռքով:

Ըստ աւանդութեանց և յիշատակարաններու՝ Բաղէշ ի հնուց Հայոց ճոխ և բազմամարդ քաղաքներէն մին եղած է և մեր իշխանութեան կործանման ժամանակ և վերջը, ուրիշ քաղաքներու պէս հայ բնակչաց բազմութենէն ու ձոխութենէն զրկուել է:

Բաղէշ ի հնուին բազմամարդ եղած է, ըստ Հ. Ղ. Իւճիճեանի 25.000 տուն ունէր: Ըստ Վ. Քինէ ճանապարհորդին՝ Բաղէշ ունէր (1892ին) 38,866 հոգի բն. հետեւեալ կերպով բաժնուած.

Հայք (յուսաւորչական)	16.086
" (Բողոքական)	200
Մահմետականք՝	20 800
Եագուպ ասորի	1.800
	38.886

Ըստ Պոլսոյ Ազգ. պատրիարքարանի 1880 թուի վիճակագրութեան, Բաղէշ ունէր 1532 Հայոց տուն և 10.726 հայ բնակիչ:

Հայք ունէին եկեղեցի Կարմրակ Ս. Նան, վեց սիւներու վրայ հաստատուած զմբեթաւոր եկեղեցի մը, նորոգուած 1844ին: Նախապէս այս եկեղեցին Ս. Կիրակոս կը կոչուէր, նոր անունը ա՛յն ատեն առաւ՝ երբ վարդապետ մը Սպահանէն հոս բերաւ կենաց փայտի մասունքը: Այս մասունքը ներկուած կը համարեն փրկիչ արիւնով և մեծապէս կը պատուեն նոյն իսկ այլազգիք, որոնք Կարմրակ հախի իշուն ըսելով կ'երգնուն: Հոս կը պահուէր նոյնպէս Ս. Ստեփանոս նախավկայի մասունքը: Երկրորդ եկեղեցին է Ս. Սարգիս, որուն աւագ խորանին տակէն առատ և անոյշ ջուր մը կը բղխի: Երրորդ եկղ. Հինգ խորան, վերի եկեղեցւոյն զիմացը կը զբանուէր, իսկապէս հինգ խորան ունի: Զորրորդ եկեղեցին Ս. Գէորգ: Այս երեք եկեղեցիները, ինչպէս յայտնի է թուականներէն՝ չուրջ ԺԷ. դարու կիսուն կառուցուած են:

Բաղէշ ունի նաև չորս վանք, որոնց մին քաղաքին մէջ է և կը կոչուի Ամրօլու (տե՛ս): Միւսներն են Գումաց Ասուածածնի վանք, Ավելիու Ս. Ասուածածին, Խնդրակասար Ասուածածնի վանք (տե՛ս իրենց կարգին): Հայք ունին հինգ վարժարան չորս եկեղեցիներու թաղերուն մէջ, որոնք ըստ 1900ի վիճակագրութեան հետեւեալ թուով աշակերտներ ունէին: Հինգ խորան կեղր. վարժ. 103 մանչ, Ս. Կարմրակի զբարոցը 45 մանչ, Ս. Սարգիսի զբարոցը՝ 43 մանչ, Ս. Գէորգի զբարոցը՝ 42 մանչ, Ս. Ամլորդիի զբարոցը՝ 17 մանչ: Հայ Հռոմէականք և հայ Բողոքանք ալ ունէին իրենց ուրոյն զբարոցները:

Էփրիկեան չի յիշեր քե Բաղեւի մէջ հայ կաթոլիկներ ալ կային, որոնց թիւը մօտ 200 պիտի ըլլար, քանի որ իրենք, ըստ Պոլսոյ Ազգ. վիճակագրութեան, առանձին զբարոց ալ ունէին:

ԲԱՂԵՇ, գաւառ, համանուն քաղաքի անուամբ, ունի 4 գաւառակ 110.000 բն. 434 գղ.: ԲԱՂԵՇ, նահանգ համանուն քաղաքին, շըր-

ջապատուած է հիւսիսէն Կարնոյ, արեւելքէն Վանայ, հարաւէն և արևմուտքէն՝ Տիգրանակերտի նահանգներէն: Տարածութիւնն է 29850 քա. հազարամեղր՝ գրեթէ 400000 բնակչութեամբ: Հայերը 2846 տուն, 21534 հոգի՝ կ'ապրին 93 գիւղերու մէջ, (Էփրիկեան՝ «Բնաշխարհիկ»):

Բաղէր ժն. դարու սկիզբներէն ծանօթ է ձե-



Բաղէ քաղաքի տեսարանը

ուագրաց Յիւստակազիրներէն, Բաղէի Պոռ գիւղին մեջ ծնած է մեր Միջնադարեան բանաստեղծներէն մին Ա.Ռ.Ա.Քել, Բաղիւեցի կոչուած (տե՛ս), այդ դարուն արդէն (1445ին) կը յիշուի Ս. Կիրակոս եկեղեցին: 1436ին Քոմայ Մեծոփեցի նշանաւոր վրդ. արագիներէն փախչելով Բաղէ կ'ապաստանի, յիւստակազիրը 1437ին կը յիշուի Ս. Յովնանէսի (Սմբատու վանքի) եկեղեցին եւ Ս. Գեորգ եկեղեցին, որով հակառակ Էփրիկեանի՝ կամ իր աղբիւրներուն գրածին՝ Ս. Գեորգ ժե. դարէն առաջ գոյութիւն ունի եղեր: 1487ի յիւստակազիր մը կը յիշուի Ս. Յովնանէս եւ Ս. Սիրոն եկեղեցիները: 1474ին Հասան Բեկ Բաղէր կը գրուէ եւ Հայոց հանդէպ լաւ կը վարուի: 1499ին Բաղէ՝ պատերազմի ասեմ կ'այրի, 1558ին՝ վարդան երեց Մաշտոց մը կ'ընդօրինակէ Բաղէի մեջ (ցուցակ Կանայեանցի 1053), 1580ին Մարտիրոս Վարդանայ «Մեկնութիւն Դանիէլի»-ն կ'ընդօրինակէ, ստացողն է Աբրահամ վրդ.: 1599ին Ստոյ Ալարիս կը. ր երուսաղէմի պատուոց համար Բաղէ կ'երբայ, 1605ին եւ 1608ին երուսաղէմի մեջ կը յիշուի Բաղիւեցի Միխայէլ աւկ. երուսաղէմայ Դավիթ պատրիարքի: ժե. դարու սկիզբը կը ծաղկի Բաղիւեցի Վարդան վրդ. (տե՛ս), 1643ին Մեսրոպ վրդ. Բաղիւեցի գրիչ, 1660ին Բաղէի առաջնորդն է Մեսրոպ, գրիչ՝ Դավիթ ճնճգրկ, այս Դավիթը 1669ին, 1685ին ալ ձեռագիր կ'ընդօրինակէ, Բաղիւեցի է նոյնպէս Յով. ՀԱՄԱՆԵՍ Կոլոս Կ. Պոլսոյ նշանաւոր պատրիարք (տե՛ս), Շամախեցի Գրիգոր

պսրբ. երուսաղէմի՝ Բաղէի մեջ վարդան վրդ. ի աւակներսւմ ըլլալուն՝ Բաղիւեցի կը կոչուի: ժե. դարուն երուսաղէմի մեջ շատ մը Բաղիւեցիներ կը յիշուին: Բաղիւեցի էր Տիգրանակերտի առաջնորդը Աբրահամ (1759ին):

ԲԱՂԷՇՈՒ Զուր, գետակ Բաղէչի:

ԲԱՂԷՇՅԵԱՆ Ս. Մանուկեան Գարեգին:

ԲԱՂԸՇՏԱՂ կամ Բաղեսաղ, այլազգարնակ գղ.

Ակնի:

ԲԱՂԻՆԻՔ, հայաբնակ գղ. Կամախ գետի, յիշուած է Հ. Ղ. Ինճիճեանէ:

ԲԱՂԼԲԷՕ, գղ. Ուրմիոյ (Իրան), 250 հայ կայուններն եկեղեցի մը:

ԲԱՂԼՈՒ, գղ. Մշոյ դաշտին մէջ:

ԲԱՂՆԱՏՈՒՆ Ս. Պաղնասուն:

ԲԱՂՆԻՔ, գղ. Կարնոյ, բն. 60 տ. հայ, 40 տ. թուրք: Եկղ. Ս. Յակոբ, գետնափոր և անշուք: Թուրքերը գիւղս Ումուսում (Յոյսս) կը կոչեն:

ԲԱՂՆԻՔ, գղ. Չարսանճազի, բն. 15 տ. հայ, եկ. Ս. Մինաս:

ԲԱՂՆԻՔ, գղ. Արարկիբի, բն. այլազգիք:

ԲԱՂՆՈՅ և ՍԱՐԸՍՈՒ Վիճակները՝ հին ԱղիոՎիտ գաւառին կը համատասխանեն (ի ՏԱՐՈՒՔԵՐԱՆ):

ԲԱՂՇՏԱՏ Ս. Բաղրեսաւ:

ԲԱՂՉԷՃԻՔ, գղ. Տիգրանակերտի, ունէր 10 տ. հայ:

ԲԱՂՉԷՃԻՔ, գղ. Չմշկածագու Առաջնորդական թեմի 15 տ. հայ, եկղ. Ս. Աստուածածին: (Տե՛ս ՊԱՐՏԻՉԱԿ):

ԲԱՂԴԱՍՍԸ Ս. Պաղտասար:

ԲԱՂՏԱՏ Ս. Պաղտաս:

ԲԱՂՔ կամ Բաղաց գաւառ, Սիւնեաց նահանգի հարաւակողմը կը գտնուի, որ ռարգաւաճած է ժ. դարու վերջերէն սկսեալ ժ. Բ. ի կէսը, որովհետեւ այդ միջոցին Սիւնեաց թագաւորական դահը հաստատուեցաւ գաւառիս մէջ: Շրջապատուած է Սիւնեաց Հարանդ, Մղուկ, Չորք և Կոփսական գաւառներէն: Գաւառիս անուներ եկած Բաղակ անունով Սիւնեաց իշխանէ մը:

821էն ետք կը յիշուի Վանան անունով մէկը, որ Բաղաց գաւառին ժառանգորդ կ'ըլլայ, որուն պայազատները կը յիշուին կարգաւ մինչև ժ. դարու վերջերը: Այս տոհմէն էր Վահան կրօնաւորը որ Վահանու վանքը կառուցու ժ. Բ. ժ. դարու կէսը Սիւնեաց թագաւորութեան վերջանալէն յետոյ, Բաղաց մէջ նշանաւոր կը հանդիսանայ Համսունեաց տոհմը, որոնց նախահայրն էր Մեծն Համսուն. իսկ իր որդին Հասան, որ ժ. Բ.

դարու սկիզբը «Մեծափառ իշխան Բաղաս» կը կոչուէի. ասոր որդին և յաջորդն էր Համտուն Բ. և միւս որդին Յովհաննէս՝ որ եպիսկոպոսն էր Յովհաննու վանաց և աշխարհին աւերման համար, գնաց Վայոց-ձոր գաւառը, ուր և շինելով հոշակաւոր Նորավանք հոն առանձնացաւ և մեռաւ: Այլազգիները 1104 թուին տիրեցին Սիւնեաց թագաւորներու կապան կոչուած ամուր քաղաքին և հեազհեաէ ուրիշ ամրոցներու, և հուսկ ուրեմն 1170ին ամէնէն ամուր և թագաւորանիստ Բաղարեղին— Սիւնեաց հարստութեան ժամանակ, Բաղաց թագաւորներու իշխանութեան ներքե կը գտնուէին 1400—2000 գիւղեր, 43 բնրգեր և 48 վանքեր: Գրեթէ 550 տարի վերջ, Դաւիթ բէկի օրով, Բաղաց գաւառի բնակչաց մէջ ևս ծագեցաւ և վառեցաւ քաջագործութեանց սէրը, բայց հոշականուն հայրենասէրի մահէն վերջը, երկիրը մնաց առաջին դիրքին մէջ:

Ի հնուին միայն Բաղբ անուանով ծանօթ էր գաւառս, բայց յետոյ բնական դիրքերու համեմատ բամուռած է կրկին վիճակաց, մէկ մասը՝ արեւմտեանը՝ կոչուելով Բաղբ կամ Անանան, եւ արեւելեան մասը Միւս Բաղբ՝ որ ծանօթ է նաև Քաւունիք և Բարկուցաս անուամբ, որ յետոյ Բաղաձոր ալ կոչուած է:

Բաղաց գլխաւոր գետերն են Չաւրնդուր, Զեմի և Ագարակու գետ:

Հին ցուցակի մը համեմատ Բաղբ-Անանան 41 գիւղ կը նշանակէ. որոնք Սիւնեաց եկեղեցւոյն հարկ կու տային, Միւս Բաղբ-Քաւունիք 53 գիւղ: Այս գիւղերէն զատ նորագոյն ցուցակներու մէջ նշանակուած են 62 գիւղ: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն», քաղուած Հ. Ալիշանի «Սիւսական»էն էջ 272—285):

ԲԱՃԱԼԱ տե՛ս Պանալա:

ԲԱ-ՄԱՅՏԱՆ, գղ Տիգրանակերտի, 5 տուն հայ ունէր: (ս. Բամբքին):

ԲԱՄԲ, գղ. Նիգ գ. ի. Բամպակի լեռանց ստորոտը, ունի 48 տ. հայ, մօտը կը բարձրանայ Քեմեքի-Բամբ կոչուած լեռը, որմէ 40 փարսախ հեռի է Քրդի Բամբ գիւղը, 40 տ. քուրտ բնակչօք:

ԲԱՄԲԱԿ կամ Փամբակ, ծանօթ է իրրե վիճակ Գուգարաց Տաշիր գ. ի ստորին մասը. վիճակս մօտ 70 վերստ երկայն է. մէջէն կ'անցնի համառուն պատմական գետը: Գլխաւոր գետն է Բամբակ: Վիճակիս մէջ 34 գիւղեր կան, որոնց 25ը Հայոց են. կը զբաղին նաև խաչնարածութեամբ, առուտուրով և արհեստներով. կը գործեն նաև պարսկական և նոր ոճով գորգեր: Վիճակիս

Հայք 1821էն ետք գաղթած են կարինէն: Պայազիտէն, Բասենէն, Երևանէն:

1890ին վիճակիս մէջ հագիւ 3 ուսումնարան կար: Հնութիւնները շատ քիչ են. ունի բաւական թուով ուխտատեղիներ: (Էփրիկեան՝ «Բնագիտութիւն» քաղուած «Նոր Դար»էն, է. սարի 129—135. «Մշակ»էն, Ժ. Բ. սարի բիւ 181—2 էտային):

ԲԱՄԲԱԿԱՇԱՏ Ս. Մովսէսյանց (Ս. Հայաստան): ԲԱՄԲԱԿԻ ՉՈՐ, այսպէս կոչուած է Բամպակ վիճակը:

ԲԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՐ, «Որգան ՀԿ (Բ) Կ. Վաղպատի Շրջկոմի (հնգորդա թերթ). տպ. Վաղարշապատ, 1931—1934. . . խմբ. Համունի Համարածուժեան ապա՝ Վ. Ասուր:

ԲԱՄԲԱԿԻ ՅՐԳԻԹԵՐԹ, տպ. Ղամարու 1931. պատասխանատու խմբ. Վ. Անանեան:

ԲԱ-ՄԼԹԻՆ, գղ. Տիգրանակերտի ԼՃէ գ. ի. հայք սակաւաթիւ (տե՛ս):


ԲԱՄԻՌԻ, շարաթաթերթ տպ. Պոլիս 1913. Յաւելուած «Ազատամարտ»ի խմբագրական Մարմին: ԲԱՅ, սակաւաթանակ գիւղ Հայոց Տուրուբերանի Արճէշ գ. ի մէջ:

ԲԱՅԱԶԻՏ կամ Պայեզիտ, պատմական նշանաւոր քղ. կարնոյ նահանգի համանուն գաւառի մէջ: Ըստ ազգային հին աշխարհագրական բաժանման՝ քաղաքս կ'իյնայ Այրարատայ կողմիտ գաւառի մէջ ի հնուին ծանօթ էր Դարոյնց հոշակաւոր բերդի անուամբ (տե՛ս): ԺՅ դարէն սկսեալ մինչև այժմ կոչուած է Բայազիտ. կը կարծուի թէ այս անունը առած ըլլայ Օսմանեան սուլթան Բայազիտ Ա. ին (տե՛ս Պայազիտ սուլթ.): և թէ անոր հրամանաւ շինուած է Լէնկթիմուրի մղած պատերազմներու ժամանակ: Այս կարծիքը հաւանական չի թուիր: Սուլթան Սէլիմի Սիւլէյման օրդուոյն արչաւանաց ժամանակ 1554ին, Թուրքաց զօրքերը բանակեցան Բայազիտի բերդին մօտ, որ նոյն ատեն աւերած էր: Երբ Օսմ. տէրութիւնը Հայաստանի տիրեց Շահ-սէֆեանց ձեռքէն առնելով, ժամանակին սուլթանները Բայազիտի կողմերը յանձնեցին մերձաբնակ Քրտաց ձեռքը, որոնց գլխաւոր տոհմը կը կոչուէր Սիլվանի, այդ պատճառաւ գաւառն ալ կոչուած է Սիլվան:

Բայազիտ քղ. ը կառուցուած է Ալա սաղ լեռան կողին վրայ, Կոնստիկ գետակի մօտ: Բայազիտի ժայռի մը վրայ նշանաւոր հնութիւն մը կայ, այն է՝ երկու քուրմեր՝ հայկական սաղաւարդաձեւ խոյրերով և մէջտեղը բազնի վրայ նուիրական եղջերու մը. քուրմերէն մին անմօրուս ձեռքը բռնած կը թուի գաւազան մը, իսկ միւսն ձե-

ԲԱՆ

րունի է և ձեռքերը բարձրացուցած կ'աղօթէ: Նորանոր մանր քննութեանց և խուզարկու-



Բայազիտի բերդը

թեանց կը կարօտին լեռանս քարանձաւներն: Քննելի են նաև Ս. Գրիգոր կոչուած եկեղեցւոյ աւերակները, որուն մօտ է Լուսաղբիւր ուխտատեղին: Ժ.Ը. դարուն կիսուն կը յիշուին քաղաքիս մէջ 2000 Հայոց տուն. իսկ Թուրքաց եւ Ռուսաց առաջին պատերազմաց ժամանակ ունէր 1735 տուն Հայոց և 310 տուն մահմետականաց՝ չորս թաղերու մէջ: Հայոց Ս. Վարդան եկեղեցին Ապսիկուր կամ Ապրիկուր թաղին մէջ էր:

1821ին պարսից պատերազմէն և սրածուծենէն շատ վտանգուած էր Բայազիտ և 1828ին Ռուսաց պատերազմը սկսաւ: Հաշտութենէն վերջ Հայերէն շատերը գաղթեցին Ռուսաց բաժինը: Ռուսները երկրորդ անգամ տիրեցին քաղաքիս 1854 թուի յուլիս 29ին. բայց ամէնէն բազմադէտ պատերազմն եղաւ 1877ին. Հայկազն Արշակ Տէր Ղուկասով Ռուսաց զօրավարը Իկղիրի կողմերէն գալով և անցնելով Չինկիլ լեռներէն մտաւ Կոզովիտ, և Արծափ գիւղի արևմտակողման Շամսու լեռնէն ևս անցնելով, նախ տիրեց Չանկիզորի և յետոյ մայիսի սկիւրը մտաւ Բայազիտ:

1900ին Բայազիտ 2000 ժողովուրդ ունէր միայն, որուն 1200ը հայ էին: Եկեղեցին Ս. Կարապետ՝ քարաչէն՝ բայց փայտաշարկ էր, 1750ի տեսնները շինուած ու 1818ին եփրեմ կաթողիկոսի ժամանակ նորոգուած: Հնազոյն եկեղեցին, որ Ամենափրկիչ կը կոչուէր, բոլորովին քայքայուած և աւերակ վիճակի մէջ է:

ԲԱՅԱՉԻՏ, գաւառ. սահմանքն են հիւսիսէն՝ Ռուսաստան, արեւելքէն՝ Պարսկաստան, հարաւէն՝ Վանայ նահանգն և արևմուտքէն՝ Խնուս և Բասեն գաւառակները: Բաժնուած է հինգ վիճա-

կաց, Բայազիտ, Տիաաին, Գարա-գիլիսէ, Ալաշկերտ և Անթապ, որոնք ունին 418 գիւղ եւ 8448 տուն (52544 հօգի) ըստ Քինէի վիճակագրութեան: Հայ Լուսաւորչականք՝ 8652 հօգի, Կաթողիկեայք՝ 1754, Բողոքականք՝ 99: (Էփրիկեան «Բնագիտարհիկ» քաղուած Հ. Ալիւանի «Այրարտ»-էն):

ԲԱՅԱՉԻՏ նմ կամ Գաւառ, գաւառագլուխ քղ. Նոր Բայազիտի կը համապատասխանէ հին Գաւառ աւանի, և կ'իյնայ Սիւնեաց Գեղարքունի գո.ի մէջ, համանուն գետի մօտ, զրեթէ չորս մղոն ծովեզերքէն հեռու, Երևան տանող արքունի ճամբուն վրայ: Հեռոցհեռէ բազմամարդ եղած և քաղաք դարձած է հին Բայազիտի գաղթականներով՝ և այդ պատճառաւ կը կոչուի Նոր Բայազիտ. հին Գաւառ անունը քիչ անգամ կ'երևայ գրոց մէջ և Սիւնեաց պատմիչ Ստեփանոս Օրբելյանի գիւղերու ցուցակին մէջ չի յիշուիր: — Խանգարուած ըլլալով հին եկեղեցին, փայտով ծածկեցին գաղթականները և կոչեցին Ս. Կարապետ. իրենց հայրենեաց հին Բայազիտի եկեղեցւոյն անուամբ: Ուրիշ մեծ եկեղեցի մ'ալ կառուցին Ծիրանաւոր Ս. Ասուածածին անուամբ, որուն շինութեան նիւթադէս շատ նպաստեց Բարսեղ աղա Արծրուհին: Քաղաքիս վաճառականութիւնը շատ զարգացած չըլլալով՝ շատերը մեկնեցան ասկից, բայց նորէն 1900ին 1128 տուն և 7488 բնակիչ ունէր, յորոց 60 հօգի միայն այլազգիք էին, մնացեալը ամբողջ հայ:


Քաղաքիս գերեզմանաց մէջ, բերդատեղոյն գագաթը կայ Ս. Աստիվանոս մատուռ մը: Գերեզմանաքարերը զարգարուած են գեղեցիկ քան-



Հին հեքանոսական քանդակ Պայազիտի մէջ

դակներով, ուր կը տեսնուին փորուած՝ զգեստուց տարազներ, զանազան շէնքերու ձևեր, արհեստաւորաց գործիքներ և մեր իշխանաց

չքանչաններ. բայց այս յիշատակաց քարերէն շատերը անխնայ կերպով քակած ու գործածած են եկեղեցւոյ շինութեան: Ս. Յովնանէս չիման (մարգ) կոչուած տափարակին մօտ կը գտնուի Ս. Գեորգ անուամբ ուխտական մատուռը: Եկե-



Նոր Բայազիտ գաւառ

ղեցւոյ սպասուց մէջ կան քանի մը սրբազան մատենաներ, Մեծն Ներսէսի բազկի նշխարը, երկու երկաթեղէն խաչեր եւ այլն: Ասկէց փոխադրուած է յէջմիածին Ս. Անդրէաս եւ Մատթէոս առաքելոց նշխարաց արծաթէ տապանակ մը, որ նորոգուած է 1725 թուին Գաւառացի Սիմեոն վրդ.ի հրամանաւ:

ԲԱՅԱԶԻՏ ՆՈՐ գաւառը բաժնուած է չորս վիճակաց. 1900ին ունէր 96123 բնակիչք՝ յորոց 61337ը Հայեր էին: (Էփրիկեան՝ «Բնաւիտարհիկ» քաղուած Հ. Ալիւանի «Սիւսական»էն. էջ 42—5):

ԲԱՅԱՍ կամ Պայաս, քղ. Ծովային կիլիկիոյ: Այստի ճիշդ դիմացը, որ իր շրջանակներով ժամանակաւ պատմական մեծ դէպքերու ասպարէզ եղած է, այժմ փոքրիկ աւան մը դարձած, որ 1900ին 6000 բնակիչ ունէր, կէսը հայ, կէսը թուրք: Ռուբինեան թագաւորներու օրով Բայաս կը յիշուի իբրեւ ձկեր գո.ի մէկ մասը, որոյ յիշխանը՝ Լեոն Ա.ի թագադրութեան հանդէսին նախաթոռ բազմած էր:

Լեոն Ա.ի 1214ի պարզեւզրի մէջ կը յիշուի Բայաս Abaessa գրուած, իսկ Սաչակրաց պատմիչները կը յիշեն քաղաքս Կուսանաց կամ Աղջկանց բերդ անունով: Հայկական ՈԿԵ (=1216) թուին Բայասը գիւղ կոչուած է, ինչպէս կը տեսնուի նոյն տարին տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ գրուած Մաշտոցի մը յիշատակարանէն:

ԲԱՅԱՍ գաւառակ, որ ձէպէյէ Պէրէքէթ գո.ի մէջ կը գտնուի (Ատանայի նահանգ) ունի 49 գիւղ, մօտ 20000 բնակիչով: Գաւառիս մէջ կան նշանաւոր գիւղեր, Զօգ Մեղվաք, Էօգերլի, Օնալը

և Էրզից, իրարու գրեթէ կից են և ունին 1000 տունէ աւելի՝ 800ը Հայոց: Զէյթիւնլիւ (Զիթաստան) կոչուած յայնատարած անտառը, որ երբեմն Սոյ կաթողիկոսութեան կալուած էր, և յետոյ պետական դարձած՝ կը սկսի Բայասի գաւառակի արեւմտեան հիւսիսակողմէն (Էփրիկեան՝ «Բնաւիտարհիկ», քաղուած Հ. Ալիւանի «Սիւսական»էն էջ 413—5):

ԲԱՅԳԱՄ, թղ. Հայկազն 385—371 (ն. ք. թ.):

ԲԱՅԻՆՏՈՒՐ, նախարար Շաւարասայ 1625ին:

ԲԱՅԻՍ, գղ. Սիւնեաց Ճահուկ գո.ի մէջ. նոյնն է Տաթևոյ վանքի հարկատու Պանեոս գղ.ի հետ:

ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ՏԵՄՊՈՎ, «Որգան ՀԿ. (Բ)

Կ. Ղուրղուղուլու Շրջկոմի յիվ Շրջգործկոմի 5 որյա թերթ», տպ. Ղուրղուղուլի 1931—1934...

Պատ. խմբագիր Ս. Պետրոսեան, սպա Կ. Սարուխանեան:

ԲԱՆԱԶՈՒՐ, գղ. Արցախի Դիլակ (ձիպրախ) գո.ի, 1900ին 1000էն աւելի հայ բնակիչ ունէր, եկղ. Ս. Աստուածածին:

ԲԱՆԱԿԵՏՂ, տեղի Սիւնեաց Սողք գո.ի մէջ, ուր Աշոտ Ա. 883ին վրաց կողմերէն դառնալով՝ իր բանակը դրած էր:

ԲԱՆԱՆԵԱՐ, ուրիշ անունով Ապարաներ (տե՛ս իր կարգին):

ԲԱՆԱՆՅ, Բայեան կամ Մեծ Բանանց, բաղամարզ գիւղ Արցախի Գարդման գո.ի համանուն հասարակութեան մէջ, կառուցուած Բանանց կամ Արութիւն (Ղոջ Ղարա) վտակի ձախ ափը: Դիւղիս արեւմտեան կողմը բլրակի մը վրայ ՋԻԶ (=1477) թ. կրող արձանագրութիւն մը կայ:

1900ին մօտ 2000 հոգի բնակիչ և դպրոց մը ունէր: Դիւղէս ելած են Տէր Միքայէլեան բժիշկ, Տէր Միքայէլեան Լեւոն ճարտարապետ, Տէր Իսրայէլեան Յովհ. իրաւարան և Տէր Աւետիքեան Ստեփան գրող: (Էփրիկեան «Բնաւիտարհիկ»):

ԲԱՆԱՆՅ ՓՈՒՔԻ կամ Դամբլանոք, աւերակ գիւղատեղի, Մեծ Բանանցէն մղոն մը հեռու, ունի կիսաւեր եկեղեցի մը. քանի մը կրճատեալ արձանագրութիւնք: Մօտն է նահատակ անուամբ ուխտատեղի մը:

ԲԱՆԱՍԷՐ «տասնօրեայ քաղաքական և առեւտրական» պարբերաթերթ. տպ. Մաղրաս 1848—1849, խմբ. Ս. Պ. Յովհաննէս:

ԲԱՆՍՍԷՐ, «ամսական տետր, աղգային, բանասիրական և քաղաքական». տպ. Կ. Պոլիս 1851-2:

Աշխատասիրող՝ Յովհ. Հիսարեան:

ԲԱՆԱՍԷՐ, հանդէս հնախօսական, լեզուարանական և քննական եռամսեայ, տպ. Պարիս

1899—1907 տնօրէնւելութեամբ Կ.Յ. Բասմաջեանի
ԲԱՆԲԵՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ հան-
դէս Վեցամսեայ տպ. Պեղերբուրդ 1903—1904.
խմբ. Ն. Աղոնց. հրատ. Ա. Մելիքեան:

ԲԱՆԲԵՐ, «ազգային, քաղաքական և բնկերա-
յին առաւօտեան հայկական օրաթերթ» տպ. Կ.
Պոլիս 1914. Արատնատէր՝ Հրաչեայ Ներսէսեան,
պատ. տնօրէն՝ Եր. Թոլայեան:

ԲԱՆԲԵՐ, «չարաթափերթ (Հնչակեան կուսակ-
ցութեան)». տպ. Աստրախան 1915. խմբ. հրա-
տարակիչ՝ Վահան Դուկասեան:

ԲԱՆԲԵՐ, «գրական, գեղարուեստական և հա-
սարակական ամսագիր». տպ. Թիֆլիս 1920. խմբ.
հրատարակիչ՝ Սիմոն Մկրտիչեան:

ԲԱՆԲԵՐ «քաղաքական, հասարակական լրագիր»
տպ. Ալեքսանդրապոլ 1920. խմբ. Ս. Խանոյեան:

ԲԱՆԲԵՐ, Հայաստանի գիտական ինստիտուտի
(Հայագիտական Տարեգիր), տպ. Էջմիածին 1921-
1922. խմբ. ինստիտուտի գիտական քարտուղար՝
Ե. Տէր Մինասեան:

ԲԱՆԲԵՐ, «հոգեւորական ամսաթերթ ամենուէն
համար». տպ. Մարսէլյ 1927—1931:

ԲԱՆԲԵՐ, «քաղաքական, տնտեսական, գրա-
կան, բնկերային մեծ շարաթափերթ». տպ. Կ.
Պոլիս 1933—1934. Արտօնատէր Արամ Տաղլար-
եան, խմբագիր Եղուարդ Սիմօնէշեան:

ԲԱՆԲԵՐ ՊԱՐՏԻՉԱԿԵԱՆ, լոյս տեսած է Պար-
տիզակ 1848ին (Խմբարատիայ):

ԲԱՆԲԵՐ ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐ, օրաթերթ. տպուած Կ.
Պոլիս 1914, որ յետոյ «Բանբեր»ը թողլով Վեր-
ջին Լուր կը կոչուի (տե՛ս):

ԲԱՆԵԱՐԿԵԱՆ, նաւահանգիստ Մանդրանի (Ի-
րան), հոս բաւական Հայեր կային, որոնք 1920-
ին ցիրուցան եղան:

ԲԱՆԴԱՐ ԲՈՒՇԷՐ, Պարսկահայ և Հնդկահայ հին
վաճառականներուն ծանօթ էր այս նաւահան-
գիստը, ուր Հայութիւնն ունի տնտեսական հին
անցեալի պատմութիւն: Երբեմն շէն և հարուստ
գաղութ եղած է: Հին եկեղեցւոյն տեղը՝ Հայերը
1821ին հիմնած են Ս. Գէորգ անուանով եկեղեցի
մը, որ մինչև հիմա տեղն է: Բուշէրի մէջ կ'ապ-
րին 8 տ. (30 անձ) Հայեր: Հոս այ կայ եկեղե-
ցական վարչութիւն մը: (Մ. Սարգիսեան՝ «Մա-
սիս» 1935):

ԲԱՆԴԱՐ ԲԷՂԷՎԻ, Իրանի մէջ, ուր կայ հայ
գաղութ:

ԲԱՆԴՈՒԿ, քղ. Ճաւայի, Բաղաւիայի մօտ.
Հայոց թիւն է 35 անձ:

ԲԱՆԸՆԹԱՂ, գղ. Մչոյ Խոյթ գաւառակի, 6
տուն հայ. և Ս. Գէորգ եկղ. մ'ունէր. 10 տուն
այ քուրտ կայ:

ԲԱՆԻԿ, գղ. Ալրարատայ Ճակատք գո. ի, ունի

170 տ. հայ բնակիչ:
ԲԱՆԻԿ, գղ. Արտահանի շրջանակին մէջ. բն.
25 տ. քուրտ:

ԲԱՆԻԿԵԱՆ ԼԵՆՈՆ, 1888ին Պոլսոյ Անառա-
բանական վարժարտնէն շրջանաւարտ կ'ըլլայ:
ԲԱՆԻՍԼՈՒ, գղ. Սիւնեաց Վայոց ձոր գո. ի.
բն. 40 տուն էր (1900ին):

ԲԱՆԼԱԳ կամ Գանլրգ, գիւղ Լեռնային Կիլիկիոյ.
ունի 120 տուն հայ և 570 այլազգի բնակիչ:

ԲԱՆԿԼՈՒ, գղ. գիւղ Հնդկաստանի Մայսոո
նահանգի: Բաղաքիս և նահանգին մէջ կան 1000ի
չափ Հայեր, որոնք վաճառականութեամբ կը զբա-
ղին. ունին եկղ. և դպրոց:

ԲԱՆՃԱՐԿՈՒՏ կամ Բանջարկուտ, հայաբնակ գղ.
Գուգարաց Ապոց վիճակին մէջ:

ԲԱՆՆԱԶԵԱՆ Հ. պատասխանատու խմբագիր
«Շիրակի Ռանչպար» պարբերաթերթի. տպ. Ա-
լեքսանդրապոլ 1921—1923: 1923ին կը զագրի
տեղի տալով Բանուրին:

ԲԱՆՈՆ, գղ. Արճէշ (Վան) գո. ի մէջ, ունէր 50
տուն հայ բնակիչ և Ս. Գէորգ անուամբ եկղ. մը:
ԲԱՆՈՒՈՐ տե՛ս Բանուր:

ԲԱՆՁՈՒ, քաղաքաւան Ռուժանիոյ, Ֆոքչանի
մօտ. ուր կան 100—120ի չափ հին Հայեր:

ԲԱՆՋԱՐԿՈՒՏ տե՛ս Բանջարկուտ:

ԲԱՆՎՈՐ, որգան Հայաստանի Կ. Կ. (Բ) Լենի-
նականի Գավկոմի Լենքաղգործկոմի Գավարոֆ-
րյուրոյի յեզ Յերկաթ. Արհմիութան (Շարաթը
2 անգամ), տպ. Լենինական 1923—1934...
Խմբագր. Կոլլեգիա: Պատասխանատու խմբագիր՝
Ա. Հախումեան, ապա՝ Վ. Ծովեան, ապա՝ Տիգ-
րան Խորունի, ապա՝ Սիրաս: 1932էն «Գրական
Գրոն» յաւլուածներ:

ԲԱՆՎՈՐ ԳՐՈՂ «Որգան Հ. Պ Գ. Ասուպիացիայի
կից Լենտեքստիլի Գրական խմբակի» (ամսագիր).
տպ. Լենինական 1931. Խմբագրական Կոլլեգիա.
Պատասխանատու խմբագիր Ստաֆֆի:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՅԵՐԵՎԱՆ «Որգան ՀԿ (Բ) Կ.
Կենդկոմի, Յերկոմի յեզ Բաղխորհրդի). տպ. Երե-
վան. պատ. խմբագիր Ա. Կուրտիկեան, ապա Տ.
Խորունի: 1934ի Մայիսէն կոչուեցաւ «Յերեվանի
բանուր»:

ԲԱՆՎՈՐ-ՊԱՐԻՉ, որգան Պարիզի Կոմ. Կուս.
Հայ Աշխատանքի խմբին. շարաթափերթ տպ.
Բարիզ 1924—25. խմբագրական մարմին:

ԲԱՆԻՈՐ, «սոցիալիստական ամսագիր, որգան
հայ Սոցիալ—Ինքնակրատիայի — տնտեսական,
քաղաքական, հասարակական». տպ. Ժընեւ 1904.
խմբագիր՝ Երուանդ Պալեան:

ԲԱՆԻՈՐ, «եռօրեայ թերթ սոցիալ դեմոկրա-
տական բանւորական հայ կազմակերպութեան»,
տպ. Բագու 1907. խմբ. Յով. Իւզրաչեան, խմբ.
հրատ. Գագիկ Պէճիկեան:

ԲԱՆԻՈՐ, «գրական, քաղաքական, բանասիրական շարաթաթերթ. տպ. Կարս 1917. խմբ. կազմ՝ Հրատ. Տպար. Արհեստ. Միութեան»:

ԲԱՆԻՈՐ, «Ռ. Ս. Դ. Բ. Կ. (Մեծամասնականներին) Կովկ. Երկրային և Թիֆլիսի Կոմիտեների Օրգան», տպ. Թիֆլիս 1918 (1—18 թիւ). խմբագիր Ս. Խանոյեան:

ԲԱՆԻՈՐ, ամսագիր (սոցիալիստական հրատարակութիւն), տպ. Թիֆլիս 1919 (1—2), խմբ. Ս. Երզնկեան:

ԲԱՆԻՈՐ, երկօրեայ լրագիր. տպ. Երեւան 1921-1923. (թ. 92ից՝ «Երիտասարդ Բանուոր»):

ԲԱՆԻՈՐ, «Ռ. Կ. Դոնի Շրջանային Կոմիտեյի Հայկական Սեկցիայի օրգան» (եռօրեայ). տպ. Նոր-Նախիջևեան 1921 (1—20 թիւ). Խմբագր. Կոլլեգիա:

ԲԱՆԻՈՐ, օրգան Ամերիկայի Կոմունիստ. կուսակցութեան. տպ. Նիւ Եորք 1922—1934... (նախապէս օրգան Հայ Բանուորական Կուսակցութեան, խմբ. Մնար, յետոյ խմբագրական մարմին):

ԲԱՆԻՈՐ, «քաղաքական և հասարակական երկշարաթաթերթ, նուիրուած Յրանսահայ Աշխատաւորութեան Նահերու Պաշտպանութեան». տպ. Բարիզ 1928—29. խմբագիր Պաուտեան:

ԲԱՆԻՈՐԻ ԽՕՍՔ, Թուսաստանի Սոց. Դեմ. Բանուոր. Կուսակ. Բազւի Կոմիտէի օրգան (բուլղերիկներին), տպ. Բազու 1918. Խմբագրական Կոլլեգիա:

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ, Թիֆլիսի պրոֆեսորներու միութիւնների խորհրդի օրգանը (շարաթաթերթ). տպ. Թիֆլիս 1917 (1—11? թիւ). Խմբագրական մարմին:

ԲԱՆԻՈՐԻ ԽՕՍՔ, «օրգան Ալեքսանդրապոլի բանուորական ակումբի (շարաթաթերթ)», տպ. Ալեքսանդրապոլ 1921. խմբագրութեամբ Վահան Տէր Արրահամեանի:

ԲԱՆԻՈՐԻ ԿԱՐԻՔ, «հայ կոմունիստական շարաթաթերթ. Բո նակասի frshնով պիսի հաց ուսես (բնութեան օրէնքը)», տպ. Արմաւիր 1920. պատասխանատու խմբագիր՝ Վեքիլեան:

ԲԱՆԻՈՐԻ ԿՈՒԻՒ «բիւլլետին, Ռ. Կ. Կ. Բուլղերիկներին) Թոստով-Նախիջևեանի կազմակերպութեան Հայկական Սեկցիայի օրգան. տպ. Նոր-Նախիջևեան 1920 (1—32 թիւ). Խմբագրական Կոլլեգիա Եղ. Չուբար, Եր. Մելիք-Շուլչեան):

ԲԱՆԻՈՐԻ ԿՈՒԻՒԸ «Ռ. Ս.-Դ. Բ. Կ. (Մեծամասնականների) Թիֆլիսի Կոմիտէյի օրգան. տպ. Թիֆլիս 1917 (1—22?), խմբագիր չէ նշանակուած (Ա. Խանոյեան, Ա. Մաւեան):

ԲԱՆԻՈՐԻ ՉԱՅՆ, տպ. Արմաւիր. 1918?:


ԲԱՆԻՈՐԻ ՉԱՅՆ, «Վրաստանի Սոցիալ-Դեմոկրատ.

Բանու. րական Կուսակցութեան Հայկական Սեկցիայի Օրգան». տպ. Թիֆլիս 1919—1920. Խմբագրական Մարմին:

ԲԱՆԻՈՐԻ ՉԱՅՆԸ, «Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Բազւի կազմակերպութեան օրգան», տպ. Բազու 1906. պատասխանատու խմբագիր՝ Ս. Կասեան:

ԲԱՆ Տ. Պաւ:

ԲԱՆՍԱԼԵԱՆ ԼԵՆՈՆ, գրագէտ, ազգային գործիչ, ծնած է Պոլիս 1868ին, Պէրպէրեան վարժարանէն շրջանաւարտ, նախ մասնակցած է Արեւելի և Մասիսի խմբագրութեանց, իր առաջին յօդուածներով իսկ զեղեցիկ տաշանդ մը ի յայտ բերելով: Յետոյ Հայրենիքի ամէնէն փայլուն շրջանին՝ Ա. Արիւարեանի աչք ղազուկը եղած մինչև 1896:



ԼԵՆՈՆ ԲԱՆՍԱԼԵԱՆ

Իր նորավէպերը՝ հայ գրականութեան արժէքաւոր էջերէն են: 1896ի քաղաքական

դէպքերէն ետք արտասահման կ'անցնի և պահ մը Նոր Կեանք և Մարտ և ուրիշ թերթերու աշխատակցելէ ետք՝ կը հեռանայ գրական ասպարէզէն և կը մտնէ առեւտրական կեանքի մէջ: Չինքը կը տեսնենք Պազուի Ֆրանսական նաւթարգիւնարեական ընկերութեան մէջ:

1920 Սեպտ.ին Կովկասէն Պոլիս և անկէ ալ Եւրոպա կ'անցնի Ներկայիս (1938) Հայ Գաղթականաց Բարիզի Օֆիսի տնօրէնն է և Հ. Բ. Ը. Միութեան պատուիրակը ժընեւի մէջ:

Իր նախկին գրական գեղեցիկ կտորները ստորագրած է «Իմեանակ», «Թափառական» և այլ անուններով: «Մուրճ»ի 1901 և 1902 տարիներու թիւերուն մէջ հրատարակուած են Բաշալիանի վիպակները «Մասիս» և «Հայրենիք» թերթերէն: (Յ. Յ.):

Թարգմանած է Ժիւլ-Վէռնի «Սիւ Լնդկատանը», նաև Ժիւ-Մառիի, Վ. Սարգուի, Է. Ֆէտտի, Օ. Ֆէոյիէի գործերէն (Հ. Ա. Ղազիկեան «Նոր Մասեմագիս»):

ԲԱՆՍԱԼՈՒԻ ԵՐՉԱՆ Տ. Ազիգբէկով:

ԲԱՆՍԱՂԱԿ, գղ. Չարսանճաղի, 100 տ. հայ, 10 տ. քուրտ, եկզ. Ս. Սարգիս, ունէին դպրոց մը (նոյն Բաւալանի հետ):

ԲԱՆՍԱՂԻ, թրքարնակ գղ. Ակնայ:

ԲԱՇԱՊԱՐԱՆ Ս. Ապարան:

ԲԱՇԱՎԱՆՔ զԳ. Չարսանձագի, որուն Աղգ. զպրոցը 77 մանչ և 25 աղջիկ կը յաճախէին 1902-ին: (նոյն Բաշաչակի հետ):

ԲԱՇ ՇԵՄԷԴ, գիւղ Տիգրանակերտի, 7 տուն հայ ունէր:

ԲԱՇԻՆՉԱՂԱԵԱՆ Գեորգ. անուանի նկարիչ և գրագէտ: Ծնած 1858ին Աղնախի (Կովկաս): Գեղարուեստական ուսումը ստացած է Ռուսաստան և ապա Եւրոպա կատարելագործած: Մեծ համբաւ չինեց իր զեղանկարներով, որոնց մէջ նշանաւոր են «Աւետան մէջ անտառ», «Արարատ լեռը», «Սեւանայ լիճը»:

Իրրև գրագէտ՝ առաջին անգամ Պետերբուրգի մէջ յոյս ընծայեց «Նկարչից կեանքի յիշողութիւններ» տպ. 1903ին: Ունի բազմաթիւ զբոսուածքներ ուսանայ թերթերու մէջ, ուր իր գրիչը հաւասարապէս կը մրցի իր վրձինին հետ: Իր սարքած նկարահանողէօները ընդհանրապէս յաջողութեամբ պատկուած են թէ՛ Կովկասի և թէ՛ Եւրոպական ոստաններուն մէջ:

ԲԱՇԱՅ. զԳ. Տիգրանակերտի, ունէր ևկղ. և 30 տուն հայ:

ԲԱՇԱՌՆԻ Ս. Գառնի:

ԲԱՇՆԵՂ, հայարնակ ԳԳ. Տիգրանակերտի, ունէր ևկղ. և զպրոց ու 70 տուն հայ:

ԲԱՇՈՒՔ, հին գղ. Սիւնեաց Սողք գո. ի:

ԲԱՇՔԱՆԻԿ (= Դլուխ գիւղ), հայարնակ գղ. Շամշաղին գո. ի. հիմնուած 1852ին. բնակիչք գաղթած են ներքին Չորաթանէն. Անդրկովկասեան երկաթուղւոյ Չակամ կայարանէն ղէպի աբեմուտք՝ տափարակ դաշտի վրայ կառուցուած: 120 տուն հայ, 2 եկեղեցի, մին՝ Ս. Յովհաննէս 1857ին նորոգուած: Գիւղիս շրջակայքը կանչաւ մը աւերակ եկեղեցիներ և գերեզմաններ

ԲԱՉԿՈՎԱՅԻ ՎԱՆՔ, այսվանքը, որ հնագոյնը կարելի է համարել Պուլկարիոյ վանքերուն, կը գտնուի Ֆիլիպէէն 30 հզմ. ի չափ հեռու, Ռոտով լեռներուն հանդիպակաց: Կը բաղկանայ զոյգ մը առանձին շինութիւններէ, մին բուն վանատունը իր Ս. Աստուածածին եկեղեցիով, իսկ միւսը երկյարկանի փոքր շինութիւն մը՝ Մատուռ-Դամբարանը:

Հիմնուած է 1084 թուին, Բիւզանդական բարձր պաշտօնատար Գրիգոր Բակուրեանի (տե՛ս) եղբոր Արասի կողմէ, որոնց իւզաներկ մեծադիր նկարները ցարդ կը մնան Դամբարան-Մատուռի գեանայարկին մէջ:

Վանքս ո՛չ թէ միայն վրահայէ մը կառուցուած է՝ այլ նաև ն. Շնորհալուոյ օրով 1170ին

հայազգի վանահայր մ'ունեցած է յանձին Յովհ. Ութմանի և յետոյ յանձին Մելքիսեդեկ վրդի: Թոռնովոցի մատենագիր Կրկորի Յամպլախ (մ'Դ դարուն ապրած) կը յիշէ զուս հայարնակ գիւղ մը Բակուլայի շրջակայքը: (Ներսէս Գասապեան՝ «Հայրենի Տարեցոյց» էջ 53—8. տե՛ս նաև «Հիւ. Տարեցոյց» 1934 էջ 16. Հ. Ս. վրդ. Պօղոսեանի յօդուածը:

ԲԱՉՈՒ ՆՈՒՆ, իշխան Թաթարաց, 1242ին Կարնոյ վրայ կը յարձակի:

ԲԱՌ, գղ. Մոկաց, բն. հայ և քուրտ. ևկղ. Ս. Գէորգ:

ԲԱՌԱԷՉ, հին աւան Աղձնեաց գո. ին մէջ, յիշուած Փ. Բուզանդէն:

ԲԱՌԻՉԱԿՈՎԻՏ կամ Բառիլովիս, Վասպուրահանի հին գաւառներէն մին:

ԲԱՌՈՒՆՆԱ, նահատակող Սուքիասանց մարտիրոսաց (130ին):

ԲԱՌՈՒՍՏԻՆՍ Մկրտիչ, բժիշկ, տե՛ս ՅԱՒԵԼՈՒՍԹը:

ԲԱՌՆԱԿՈՒՏ, հայանուն, այժմ այլազգարնակ գղ. Ճակատք գո. ի մէջ: Թովմա Մեծօփեցին 1394ին Լենկթիմուրի արշաւանաց առն կը յիշէ այս անուամբ առանձին վիճակ:

ԲԱՌՈՒՍ. Գոչեկիս (Ի Ն. Հայաստան):

ԲԱՍԱԳԵՉԱՐ, շրջան Ն. Հայաստանի, կը տարածուի Սեւանայ լճին հարաւ-արեւելքը: Ունի մօտ 34 հազար բնակիչ: Կեդրոնն է Բասարգեչար: (Յ. Պօղոսեան՝ «Հայաստանի Աւխարագը. 107): Բասարգեչարի մէջ հրատարակուած է 1931-1934... «Կարմիր Բասարգեչար» հնգօրեայ թերթը, իմրագրութեամբ Բ. Մամեդովի և Ա. Ալիբովի:

ԲԱՍԳԱԼ Ս. Գեւորեան Յարուրիւն:

ԲԱՍԵՆ կամ Բասեանի, գաւառ Այրարատայ, կը համապատասխանէ Վերին Բասեն և Հասան գալէ վիճակաց. տարածուած է Այրարատ նահանգին հարաւային արեմտեան ծայրը, նախնիք յաճախ Բասեանի կը կոչէին, իսկ Թուրքերը՝ Բասեկլի: Մեր ազգի ինքնիշխանութեան օրերէն սկսեալ՝ երկու գաւառակներու բաժնուած էր Վերին և Սարին Բասեն: Հին ժամանակ Անկիայս կամ Վերին Բասեն կը կոչուէր Վանանդ գաւառն՝ որ երբեմն այս ընդարձակ գաւառի մասն կը կազմէր, և Արշակ Ա. ի օրով գատուեցաւ ու առանձին գաւառ եղաւ: Հինգերորդ դարու մէջ Բասենի սահմանքն էին հիւսիսէն Տայք, արեւելքէն՝ Վանանդ-Երասխան, հարաւէն՝ Բաղրեւանդ և Տուրուբրան, իսկ արեմուտքէն՝ Բարձր Հայոց Կարնոյ գաւառը: Գաւառս իր անունը առած է հին Բասեանք տոնմի անունէն:

Օտարագիր մատենագիրք՝ Փասեանս կը գրեն: Բնական երկրի շիրքը ընդարձակ հովտաձև դաշտավայր է, ինչպէս կը յիշէ Մովսէս Խորենցի, Հովիտ մեծ Բասեանց գրեյով: Զորբորդ դարու կէսէն վերջ՝ անուամբ կը յիշուի Բասենի իշխան: Մանուկ, և Զ. դարու սկիզբները՝ Ներսէս, ու քաջութիւնները ըրած է Գթաց պատերազմներու մէջ Յուստիանոս կայսեր օրով: Զօրարամին մէջ եղակի կը յիշուի Բասեանցից, որ կու տար 600 զինուոր:

Այս կողմանց առաջին եպիսկոպոսն էր Եւտալիոս՝ զոր կարգեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ քուրմերու սրղինբէն: Ս. Վրթանէսի ժամանակ (Պ. դար) գաւառիս եպիսկոպոսն էր Տուրք, ուրիշ ծանօթ եպիսկոպոսներն են Արտիթ, Մովսէս, Տիրիկ: Ե. դարուն Պարսից նամակի պատասխանը գրող եպիսկոպոսներէն մին էր Քաթիկ եպ. Բասեանց: Է. դարու մէջ՝ Ստ. Օրպէլեան կը յիշէ գաւառիս Մանասէ եպ.ը, ինչպէս նաև Քրիստոսատուր՝ Դուինի ու Յեսու՝ Մանազկերտի ժողովներուն մէջ: Նոյնպէս ԺԴ դարուն կը յիշուի Տիրատուր եպիսկոպոս Բասենի Ստյ ժողովին մէջ: Վաղարշակ Թագաւորը Բասենի մէջ մասին վրայ հաստատեց Որդունեաց նախարարութիւնը: Նոյն Թագաւորի ժամանակ հաստատուեցաւ Արեղենից, Հաւնունեաց և Գարեղենից նախարարութիւնները Բասենի մէջ:

Երասխ գետը Բասենէն անցնելով երկուքի կը բաժնէ գաւառը Վերին Բասեն, որ 48 զիւղ, Ստորին կամ Վարին Բասեն որ 57 զիւղ ունէին:

Ըստ Կ. Պոլսոյ Ազգ. պատրիարքարանի վիճակագրութեան՝ Բասեն գու.ը 29478 բնակիչ և 20 զիւղ ունէր, Հայոց թիւը 12000 էր: Վ. Քինէ՝ Բասեն գաւառակի (գաղա) մէջ կը զնէ 171 զիւղ և 46651 բնակիչ, որոնցմէ միայն 7275 հողի հայ կը հաշուէ: (Եփրիկեան՝ «Բնագիտութիւն» քաղուած Հ. Ալիւսանի «Այրարատ»-էն Եւայլն):

ԲԱՍԻՒ, եպ. Անկիւրբոյ՝ Սսի ժողովին մէջ 1342ին:

ԲԱՍԻՒ, եպ. Բարձրբերդոյ՝ Սսի ժողովին մէջ 1342ին:

ԲԱՍԻՒ, քհ. ստացող Աւետարանի ի Տարսոն՝ 1216ին (Չեռագրիս յիւսակարանը սես Թեոդիկ՝ «Ամ. Տարեցոյց» 1927 էջ 601):

ԲԱՍԻՒԻՍՈ կամ Վասիլ, պատրիարք Երուսաղէմի Հայոց (1353—1356), որու մահուան մասին Ս. Յակոբայ վանքին 282 թիւ Չեռագրին մէջ տարբեր գրով կայ հետեւեալ ծանօթութիւնը ըստ Աղաւնունի եպ. Միաբանի գրքին (էջ 47) ի թվ. ՊԵ. (1356) ի Սեպտեմբերի Դ.ի տօն է (ի տօնի) Ս. Կուսի Թեկղայ հանօ? (հանգեաւ) ի Բս. ընդ

րարեձեւութեամբ դարդարեալ հողով և մարմնով տր. Բասելիոս եպ. Էմայ (Երուսաղէմայ), զոր և տէր Յիսուս դասակից և մասնակից արասցէ ընդ սուրբ հայրապետն, զկացողքս և դամենայնդնացողքնս:

ԲԱՍԻՒԻՍՈ, եպ. Սելեւկիոյ, կը յիշուի 1179ի Հոսովրայի ժողովին մէջ:

ԲԱՍԵՒԻՍՈ, եպ. Տփիսեաց (Թիֆլիս) կը յիշուի 1179ի Հոսովրայի ժողովին մէջ:

ԲԱՍԵՒԻՍՈ եպ. Ամասիոյ, որուն զերեզմանը ուխտատեղի է, Ամասիոյ Այնալը մաղարայի դիմացը գետին միւս կողմն. առաջ այս տեղ եկեղեցի է եղբր, իսկ ներկայիս միայն քարակոյտ մը: Ամասիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ պահուած ձեռագիր Յայտմաուրքի մը մէջ կը յիշուի, թէ Սուլթան Մուրատի ժամանակ Խըւրը անուանով փաշա մը քակելով ուխտատեղւոյն հիմունքը, յայտնուեր են Ս. Բասելիոս եպ. ի նըշխարները խորանին տակը, զոր վերտին ծածկելով նոյն տեղը պահած են: (Մ. Խորեանցից կը յիշէ Ս. Բասելիոսը Բ. ձր):

ԲԱՍԵՒԻՍՈ, բունաւոր կայսր Յունաց 475-7:

ԲԱՍԻՒՔ, Սարմարտացւոց ազգէն սերած, որոնք Ալանաց աշխարհի հիւսիսակողմը կը բնակէին և Հոնաց երկրին սահմանակից էին. Քրիստոսի 213ին թուին Բասիլք Հայոց և Պարսից վրայ կը յարձակին և յաջորդ տարին կը նուաճուին:

ԲԱՍԿԱՆ, գգ. Տուրուրբանի, Վարդոյ վիճակի մէջ. 566 բնակիչ ունէր 1900ին:

ԲԱՍՄԱՋԵԱՆ Կարապետ Յ. յայտնի բանասէր, ծնած է Կ. Պոլսոյ Բերայի թաղին մէջ 1864ին, Գաղատիացի ծնողքէ, հետեւաբար թրքախօս, բայց յետոյ ինքնօգնութեամբ սորված է հայերէն հին և նոր լեզուները, ինչպէս նաև հայ գրականութիւնը: Նախնական ուսումը առած է Բանկալթիի Ս. Յակոբայ վարժարանին մէջ:

Առասպելական կոչուելու աստիճան զիպուածով մը, ինքզինքը նուիրած է հայ և օտար պատմութեանց ուսումնասիրութեան:

1880ին՝ իրր ուսանող մտած է Կ. Պոլսոյ բժշկական վարժարանը, բայց նիւթական ղեռնարութեանց առջև ընկրկելով հրաժարած է անկէ, և զեղագործութեան ճիւղին հետեւելով՝ 1885ին ստացած է իր Maître en pharmacieի վկայականը: Յետոյ Կ. Պոլսոյ Գեղարուեստից վարժարանին մէջ՝ հետեւած է ճարտարապետութեան:

Բասմաջեան՝ գիտութեանց ու լեզուներու բոլոր ճիւղին ձեռք զարկած է, ինչպէս հնագիտութեան, դրամագիտութեան, բժշկական պատմութեան, հին լեզուներ եւայլն, որոնց վրայ գրած

և ապա՛ծ է ցարդ 52 փոքր և մեծ աշխատութիւններ, քարաէսներ, բառարաններ և այլ ուսումնասիրութիւններ:

Հոս կը դնենք ամբողջ գործերուն ցուցակը:

1. Ասորաբաբելական բեւեռագրութիւն (Կ. Պոլսոյ Կեդր. բանիին մէջ գրուած, բուրբերէն): Կ. Պոլիս 1893:

2. Յաւելուած եւ Քննութիւն «Յուցակին Տոսպական կամ հայկական բեւեռածեւ արձանագրութեանց (Հիւլեոնայ): Վեներսիկ, 1896:

3. Տոսպական բեւեռածեւ արձանագրութիւն Մանազկեթի: Վեներսիկ, 1897:

4. Note on the Van Inscription. London, 1897.

5. (Ա.) Համեմատական հետազոտութիւն մեր Յարալիզաց եւ Բաբելազաց Մերովգաթի: (Բ.) Տեղեկութիւն Վանայ արձանագրութեանց վրայ: Վեներսիկ, 1898:

6. Պատկ մը Փրիդրիխ Միւլլերի գերեզմանին վրայ: Վեներսիկ, 1898:

7. A propos des deux sceaux Létéens, London, 1898.

8. Une nouvelle inscription arméniaque ou vannique. Paris, 1898-9.

9. Une nouvelle inscription byzantine. Paris, 1898-9.

10. ԲԱՆԱՍԷՐ, հանդէս հնախօսական, պատմական եւ ֆննական: Պարիզ, 1899—1908:

11. Գարեհի արձանագր. ի Հայս: Պարիս, 1899:

12. La stèle de Zouarthnotz. Paris, 1901.

13. Չուարթնոց եկեղեցւոյ բեւեռածեւ արձանագրութիւն: Պարիս, 1901:

14. Le droit arménien depuis l'origine jusqu'à nos jours. Mâcon, 1901.

15. Զինուորական օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ: Պարիս, 1902:

16. Օրուան մը մէջ լուսանկարիչ ըլլալ, առանց ուսուցչի: Պարիզ, 1904:

17. Անիի յիշատակ (այբօ՛ւ Անիի աւերակներու 24 պատկերով ու Անիի յատկագիծով): Պարիզ, 1904:



ԲԱՍՄԱԶԵՆ Կ.

18. Les Lusignans de Poitou au trône de la Petite Arménie. Paris, 1906.

19. Procès Verbal de Monsieur d'Argenson sur la mort des Monsieur Avedik patriarche des Arméniens de Constantinople. Paris, 1906.

20. Քաղաքային Օրէնք Ներսիսի Լամբրոնացւոյ, ըստ Կոստանդնուպոլի, Թեոդոսի եւ Լեւոնի, բազաւորաց Հռոմայեցւոց: Պարիս, 1867:

21. Jacques II. roi d'Aragon et Oschin, roi de la Petite Arménie. Paris, 1908.

22. Լեւոն Ե. Լուսինեան, վերջին քաղաւոր Հայոց: Պարիզ, 1908:

23. Դամբարան Լեւոն Ե.ի (Գուճաւոր նկար շիրմին): Բագէլ, 1908:

24. Նոր դասագիրք Հայոց պատմութեան (Բ. սարի): Կ. Պոլիս (Բ. տպ.) 1913:

25. Նոր դասագիրք Հայոց պատմութեան (Ա. սարի): Կ. Պոլիս (Գ. տպ.) 1920:

26. Իսկական Պատմութիւն Հայոց (ֆննական) Կ. Պոլիս 1914—1927 Պարիզ:

27. Histoire du Père Élie de Kharpout. Paris 1911.

28. Իզմիրլեան իր ախարագրութիւն մէջ: Բոսսոն 1911:

29. Essai sur l'Histoire de la Littérature Ottomane. Constantinople 1910-11.

30. Զամարիա սարկաւագի կոնդակը: Վիեննա 1911:

31. Ժամանակագրական Պատմութիւն Հայոց: Կ. Պոլիս 1914:

32. Chronologie de l'Histoire d'Arménie. Paris, 1915.

33. Առձեռն բառարան Հայ-աշխարհիկ լեզուէ Ֆրանսերէն: Կ. Պոլիս, 1915:

34. La Cilicie, son passé et son avenir. Paris, 1919:

35. Histoire Moderne des Arméniens, depuis la chute du royaume jusqu'au Traité de Sèvres (1375—1920). Paris, 1922. (2me édition).

36. La Momie d'une princesse arménienne. Paris, 1920.

37. Les Anciens Ouvrages Arméniens sur la Médecine. Paris, 1922.

38. La Nation Arménienne. Paris, 1923.

39. Անիի անցեալն ու ներկան: Վեներսիկ, 1223:

40. Բանասիրական նամականի: Պարիս, 1924:

41. Հին Հայոց գեղարուեստի վարպետները: Պարիս, 1926:

42. Ամիրսովլաթի Ամասիացւոյ «Անգիտաց Անպէս» կամ Բառարան Բժշկական Նիւթոց: Վիեննա 1927:

43. Հայերէն արձանագրութիւնք Անույ, Բագնայրի եւ Մարմաւինու (հայերէն եւ ֆրանսերէն): Պարիս, 1931:

44. Հայկական Ընդհանուր Դրամագիտութիւն: Վեներիկ, 1936:

45. Jacques de Morgan. Numismatique de la Perse antiques, avec la collaboration de K. J. Basmadjian. paris, 1927.

46. Jacques de Morgan. Manuel de Numismatique Orientale. Publication achevée sous la direction de K. J. Basmadjian. Tome I. Paris, 1923—1936.

Կու տանք նաև քարտէսներու ցուցակը:

1. Հին Հայաստան: Կ. Պոլիս 1909:
2. Carte de l'Arménie Ancienne. Paris, 1916
3. Carte de la Cilicie et de ses environs. Paris, 1918.
4. Carte Ethnographique de l'Arménie. Paris, 1919.
5. ARMENIE, Revendications Arménienne. Paris, 1919.
6. Նոր Հայաստան եւ դրացի երկիրներ: Պարիս, 1927:

Բասմաջեան անդամ է գիտական բաղմամբիւ ընկերութեանց, և աշխատակից բանասիրական-պատմական հայ և օտար թերթերու:

Ուսումնական հետազոտութեանց համար գացած է Անի, Էջմիածին, Զուարթնոց, Կարին եւ 1901ի Միտիթարեան հիմնարկութեան երկհարկերամեակի առթիւ՝ Ս. Ղազար (Վենետիկ) եւ այլուր:

Ֆրանսական կառավարութեան կողմէ՝ իր հետազոտութեանց համար վարձատրուած է Officier de l'Instruction Publiqueի ոսկի պատուանշանով:

Կը բնակի Բարիզ, հասցէն է 9 Rue Gazau Paris (France):

ԲԱՍՄԱՋԱՆ Կ. Տիկին (ծն. Գըրլանկճեան) որ 1934ին Ֆրանսական Կարմիր Պաշտէն ստացած է Օժանդակ հիւանդապահուհիի վկայական և երկու շաբաթ ետք (29 Յունիսին)՝ ուրիշ վկայագիր մը Տիկին Մարաջախա Լիսթէի կողմէ ստորագրուած օդային Վտանդի դէմ պաշտպանութեան վերաբերեալ:

Տարիներէ ի վեր, Տիկին Բասմաջեան, թանկագին օժանդակ մը եղած է Պեա. Հայ Կարմիր Պաշի Բարիզի բուժարանին մէջ և միանգամայն աշխատակից իր բանասէր ամուսնոյն:

ԲԱՍՈՐ, գիւղ Տիգրանակերտի, ունէր 15 ա. հայ:

ԲԱՍՈՐԻԿ, կրկին գիւղեր Տիգրանակերտի Աւաջնորդութեան երկրորդ թեմի մէջ, մին 16

տուն, միւսը 28 տուն հայ բնակիչ ունէին և մէկ մէկ եկեղեցի:

ԲԱՍՈՒ, գիւղ Չարսանճաղի, ունէր 30 տուն հայ. եկեղեցի Ս. Լուսաւորիչ:

ԲԱՍՍԱԳԱՍ, աղնուական հայ տոհմ մը, Հունգարիայէն գաղթած ի Փոքր Լեհաստան Աւանգուժիւնը կ'ըսէ թէ՛ Հունգարական հրամանատար մը, անոնցմէ մէկուն պատերազմի մը մէջ ցոյց տուած զիւցազնութեանցը համար, աղնուականութիւն նուիրած ատեն այս խօսքերն ըսած ըլլայ՝ «pos a kasa», այսինքն «տունդ գնա»: Այդ ժամանակէն Բասագաս կոչած են զինքը: (Տօնիկիէ վիչ):

ԲԱՍՍԱԳԱՍ Գրիգոր, վերանուանեալ Շիկեր: Աւստրիոյ կայսեր Փրանկիսկոս Ա.ի վաւերագրով հունգարական աղնուականի տխրոս ստացած է 1797ին (Տօնիկիէ վիչ):

ԲԱՍՍԱԳԱՍ Կայերանոս, ծնած 1771ին ի Հունգարիա, ուր աւարտած է ուսմունքները Աւանձին սէր մ'ունեցած է յափնական լեզուին, զոր մայրենական լեզուին պէս կը խօսէր Ինքզինքը ուսման նուիրած էր և միանգամայն անտեսութեամբ կը զբաղէր, ունենալով սեփական կարուածներ: Հունգարիայէն գաղթեց ի Փոքր Լեհաստան, ուր Հորոտէնքայի վիճակին մէջ շատ մը հողեր գնեց: Հոռոմէական գրականութեան լաւ տեղեակ էր. ի մասնաւորի ուսումնասիրած էր Կիկորոնը և Ուլրատիոսը: Մահու ընէն քիչ առաջ սկսած էր թարգմանել Մովսէս Խորենացոյ Հայոց Պատմութիւնը: Մեռաւ Սթանիսլավովի մէջ 1846 Մարտ 7ին, 75 տարու: (Տօնիկիէ վիչ):

ԲԱՍՍԱԳԱՍ Դաւիթ, մեծ ընդունակութեամբ և հաղուազիւտ առղանդով օժտուած ըլլալով՝ ինքզինքը բոլորովին ուսմանց նուիրած էր: Կարող մարդու և գիտնականի համբաւովը նոյնիսկ Աւգոստոս Գ. Լեհաց արքային ուշադրութիւնը հրաւիրեց իր վրան, որ զինքը թագաւորական պալատան քարտուղար անուանեց: Թիշմինիցէի դատարանին մէջ ինքը կը վարէր հայկական դատերը: 1759ին միջոցները, իբր վարիչ Հայոց եկեղեցւոյն, շատ մեծ մաս ունեցաւ քարայէն նոր հայկական եկեղեցւոյ մը շինութեան մէջ՝ ի թիշմինիցէ: (Տօնիկիէ վիչ):

ԲԱՍՏ, հայարնակ գիւղ Աղճնեաց Խիզան վիճակի, 110 տուն բնակիչ ունէր և Ստեփանոս եկեղեցի մը:

ԲԱՍՏԱՄ, հին գիւղ Սիւնեաց Սողք գաւառի:

ԲԱՍՏԱՄԵԱՆ Գեորգ, ծնած է Թիֆլիս, շուրջ 1879ին, երկրորդական ուսումը առած է Թիֆլիսի պետական լիսէին մէջ, յետոյ անցած է զին-

ուսարական բարձրագոյն իւսիդուրը և 22 տարի ծառայած է ուսուսական բանակին և վերաւորուած 1918ին. երբ Հայաստան խորհրդային կարգերու կ'ենթարկուի՝ Թուրքիա կ'անցնի ու 1927ին Պոլսոյ մէջ կը վախճուի:

ԲԱՍՏԱՄԵԱՆՅՅ Վանան Ծ. վրդ. Միարան Ս. Էջմիածնայ, ծնած է շուրջ 1835 — 1840, Թիֆլիսի մէջ. Էջմիածնի վանքը կ'առնէ իր ուսումը և կը դառնայ Միարանութեան օրէնսդէտ և բանասէր անդամներէն մին: 1872ին Գէորգ Գ. կաթողիկոս զինքը Ս. Գայիանէ վանքին Առաջնորդ կը կարգէ, որ կարևոր նորոգութիւններով կը պայծառացնէ վանքը, փոքրիկ դպրոց մը և տպարան մը բանալով՝ կը հրատարակէ 2 տարի Գպրոց մանկավարժական ամսագիր մը: 1876էն ետք Եւրոպա անցնելով Գերմանիոյ մէջ կը զարգացնէ իր օրէնսգիտութիւնը ապագային Մխիթար Գօշի Դատաստանագիրքը ուսումնասիրութեամբ հրատարակելու համար: 1879ին վանք դառնալով՝ հոն (Ս. Գայիանէի մէջ) կը հաստատէ Ազգագրական Թանգարան մը, Հայոց զգեստներու, տարազներու, կահ կարասիներու, ձեռագործներու և այլ իրերու. վաղահաս մահը սակայն իր զովելի ծրագիրները կէս կը թողու, և չի գտնուիր յաջորդ մը որ զանոնք զարգացնէ և շարունակէ: Մեռած է 1881 Նոյեմբեր 30ին (12 Դեկտ. ն. տ.):

Բաստամեանց վարդապետ, բացի Գպրոց ամսագրի խմբագրութիւնը վարելէ՝ հրատարակած է Մխիթար Գօշի Դատաստանագիրք Հայոց, իրաւաբանական հետազոտութիւնք Վահան Ծ. վարդապետի Բաստամեանց Միարանի Սրբոյ Էջմիածնի և վանահօր Ս. Գայիանեայ վանուց: Ի վաղարշապատ, ի տպ. սրբոյ կաթողիկէի Էջմիածնի, 1880—ՌՅԼ.:

Այս գործին յառաջարանը որ 180 էջերէ բաղկացած լուրջ ուսումնասիրութիւն մըն է՝ նախապէս փորձի մէջ (1879—1881) հրատարակուած է: Բնագիրը 412+ԺԲ էջէ կը բաղկանայ:

Բաստամեանց վարդապետի մահէն ետք Լուսնայի (1898 և 1899) Յաւելուածներուն մէջ լոյս տեսած է Սօրտովցեկի Մօրէի իւստան, պատմական վէպի թարգմանութիւնը:

Վահան վրդ. բացի հրատարակած գրքերէն՝ շատ մը թանկագին աշխատութիւններ թողած է (որոնց մասին տես չ. Ազգիկեանի «Նոր Մասեւագրութիւն»-ը էջ 315):

ԲԱՍՏԱՄԵԱՆՅՅ Փիբղատէ Սիւնեաց Գետաթագ զիւղէն (թերևս վաճառականական նպատակով) ճամբորդած է 1586—7ին Մեծ ու Փոքր Հայաս-

տան. փոքր Ասիա, Կ. Պոլիս, Լեհաստան, Միջին և Արևմտեան Եւրոպա ու զրած է իր ճանապարհորդութեան յիշատակարանը որ բազմաթիւ սխալներ ունի (նմմտ. չ. Ալիսանի «Սիսական»-էն էջ 220—1):

ԲԱՍՏՄԱՆՅՅԱՆ տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐԱՐԱՆԵ Գարօ: ԲԱՎԼՈՒՍ կամ Բօլուս, գիւղ Սեբաստիոյ Արթիզապատ դաշտի մէջ: 1900ին բնակչաց մեծ մասը հայ էր:

ԲԱՍ, ամիրայ, իշխան Հարքայ և Ապահունեաց՝ զերստին կը շինէ Մանազկերտի պարիսպները 917ին:

ԲԱՍԱԿԱՆՅՅ, գիւղ Վասպուրականի Ռշտունեաց դաւառի, շինուած կը կարծուի Բասա իշխանի մը կողմէ: Մանածիհրի բերդի մնացորդները կը գտնուին գիւղիս մօտ:

ԲԱՍԱՐ, գիւղ Աղահէճքի: — Այս անունով կանքանի մը գիւղեր ալ, մեծ մասամբ այլազգարնակ: ԲԱՍԱԼԻ Երանունի s. Բաղայ:

ԲԱՍԸԿԱՆԷ՝ՔԷՇԷ, գիւղ Տրգրանակերտի:

ԲԱՍԻ կամ Պասի, գիւղ Գանձակի, բնակիչ 1800, ունի հին և նոր եկեղեցիներ: Գիւղս Գանձակէն 68 վերստ հեռի է. արևմտակողմէն կը հոսի Պատա գետը:

ԲԱՍԻԿԵԱՆ, այսպէս կը կոչուի Խ. Հայաստանի Քէօսէմահմէտ աւանը, Բատիկ Բատիկեան մեծամասնականի անունով:

ԲԱՍԻՆ վանք, Երուսաղէմի հին վանքերէն մին, որ յատկապէս Շիրակացոց կոչուած է նախնիքներէն, ի վերջոյ անուանուած է Կնկղաւորաց վանք:

ԲԱՏՈՒԱ (Padova), Իտալական հին պատմական քաղաք, ուր ամենահին համալսարանը հիմնուած է. Վենետկոյ մօտ: Ս. Ղազարու Միարանք 1802ին կը ծրագրեն այս քաղաքին մէջ վարժարան մը բանալ: Այս ծրագիրը չիրագործուեցաւ թէ և այդ պատէն, սակայն Մխիթարեանց հսկողութեան ներքե Պոլսէն հայ աշակերտներ եկան և քաղաքիս համալսարանէն ստացան բժշկական և այլ վկայականներ: Առաջինն եղան երկու Պօղոս Շալիաններ, Յարութիւն Բնոյիան եւ այլն: 1834 Օգոստոսին կը բացուի հոս Մուրատեան վարժարանը՝ հետեւեալ ներքին կազմով. Չ. Իզնատիոս վ. Փափագեան՝ ընդհանուր վերատեսուչ, Չ. Պետրոս Մինասեան՝ ուսումնապետ, Չ. Սամուէլ Սամսարեան՝ գործակալ և Չ. Մատթէոս Մաղաքեան՝ խոտովանահայր: Մինչև 1845 հոս կը մնայ Մուրատեան վարժարանը և 1846ին Բարիկ կը փոխադրուի Սակայն Մխիթարեանք չեն լքած բոլորովին Բատուան:

1890ական թուականներուն Վենետիկոյ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի կարողագոյն շրջանաւարտները, խմբովին Բատուայի համալսարանը սկսան յաճախել: Մինչև իսկ 14ի բարձրացած է անոնց թիւը. վերջերս նուազեցաւ այդ թիւը: Հոս հաստատուած է Մուրատ-Ռափայէլեան վարժարանի նախկին երէց աշակերտներէն բժշկապետ Եղուարդ Արսրանեան, ընկի Խարբերոյցի որ ունի իր առանձին բուժարանը, մասնագէտ է քթի, կողորդի և ականջի հիւանդութեանց:

ԲԱՏՐՈՅ ՎԱՆՔ, հին վանք Հայոց Երուսաղէմի մէջ, Դաւթի աշտարակին մօտ, որ կը կոչուէր նաև Ս. Ասուածամին:

ԲԱՐ, գիւղ Մոկաց, ուր կը ծնի Պօղոս վրդ. Մոկացի ԺԶ դարուն:

ԲԱՐ, հին գիւղ Սիւնեաց Սողք գաւառի:

ԲԱՐԱՍ. Պարս:

ԲԱՐԱԶԱՆ, լեռինք Բագրեւանդ գո.ի մէջ:

ԲԱՐԱՒԷԹ, գիւղ Կուզարաց Զաւաղք գո.ի մէջէն կ'անցնի գետակ մը, կէս վերստ հեռի կը դնուի Ս. Ստեփանոս քարաշէն ձախտառի մատուռ մը: Հայք 550, Վրացիք 500 հոգի, ունին առանձին եկեղեցիներ: Հայերը Արտահանէն դաղթած են:

ԲԱՐԱԿԱԶՈՐՈՅ կամ Բարիձորոյ վանք. կը գտնուի Աղձնեաց մէջ. Հիզան հին քաղաքին աւերակներէն 7 վերստ հեռի: Խիզանի և շրջակայից ամէնէն գերադաս վանքն էր: Տօնը կը կատարուի Համբարձման օրը. վանքս զուրկ է միաբաններէ: Խորաններու թիւով կը կոչուի նաև Եօթխորան Ս. Ասուածամին վանք:

ԲԱՐԱԿԵԱՆ Արսեմիս Յ. դաշնակահարուհի, ծնած է Պուքրէշ 1914-

ին. նախնական ուսումը առած է ծննդավայրին Նոտր Ծամտը Սիոնի Ֆրանսացի մայրապետներու վարժարանին մէջ, յետոյ Պուէնոս Այրէս փոխադրուելով հոն կ'աւարտէ տեղւոյն Francassi քօնսերվաթոսիօն և «Concertista» առաջնակարգ տիպոսը կը ստանայ: Զաւակն է պ. Յ. Բարակեանի:



Օր. Արսեմիս Բարակեան

ԲԱՐԱԿԵԱՆ Կիրակոս, Տիգրանակերտցի, պատուելի, կանուխէն Ամերիկա գացած, ուր այլ և

այլ քաղաքներու մէջ պաշտօն վարած է իբրև հովիւ: 1891ին Նիւ Եօքքի մէջ լոյս ընծայած է Լոյս և Խաւար 136 էջնոց գիրքը:

ԲԱՐԱԿԵԱՆ Յ. վերապատուելի, ծնած է Տիգրանակերտ 1850ին, եղբայր պատուելի Կիրակոսի, նախապէս ուսուցչութիւն ըրած է, յետոյ 1883ին Ամերիկա գաղթելով՝ եկեղեցիներ հիմնած Փրավիտէնս և Շիգակօ. շրջուն քարոզիչ Արեւելքի մէջ, յետոյ 1916ին կիկին Յրէզնօ վերադարձած եւ հոն մեռած 1924 Նոյեմբեր 17ին: Գրական գործերն են՝ «Բարոյալից Զաւեշտներ», «Խոհանոցի Գիրք», «Բժշկարան բարոյական ախտից»:

ԲԱՐԱԿԵԱՆ Յակոբ. Գաղաթիացի, ծնած 1886-

ին. ընդհ. պատերազմէն առաջ և ետքը Պուքրէշ հաստատուած, հոգարարձու, թաղական և Ռուսահայ Ազգ. Միութեան փոխ-ատենապետ եղած: Պուէնոս Այրէս կը փոխադրուի իբր գորգի վաճառական և արդիւնարերող արեւելեան կարպերտներու, ամերիկեան ունով: Հ. Ա. Եկեղեցւոյ Հոգարարձութեան Ատենապետի, և «Գաղութահայ Հրատարակչական»ի Հարաւային Ամերիկայի ընդհանուր ներկայացուցիչ:



Բարակեան Յակոբ

Հասցեն է՝ Ag. Los Incas 4561. Buenos Aires (Argentina):

ԲԱՐԱՆԱՅ. հայարնակ գիւղ, Գանձակի, բնակիչ 100 տուն, ունի եկեղեցի և դպրոց: Գիւղէս 3 վերստ հեռի է Ս. Սարգիս ուխտական եկեղեցին, ուր կը դիմեն Զատկին և Նոր Կիրակին՝ Թիֆլիսէն: Կայ Ս. Գէորգ ուխտատեղի մը ևս, Բաւճրեալ ևս կը կոչուի Գիւղիս մօտերը կայ Ս. Աստուածածին հնաշէն վանք մը, որ 1780ական թուականներուն նորոգուած է ընկի Ծովիանեանցի ծախքով:

ԲԱՐԱՆՏԱՂ. գաւառ Թարսպատականի, ունի 10 հայարնակ գիւղ, 1500 բնակչով և 5 եկեղեցիով: ԲԱՐԱՆԻ, գիւղ Սայմաստի Սուլդուղ գաւառակի, 10 տուն հայ կար 1900ին:

ԲԱՐԱՂԱՄԵԱՆ Յովնանէս, ծնած վան 1845ին: Դաստիարակ և բանասէր: Վանի կրթական վաստակաւոր մշակներէն մէկը, որուն աշակերտներէն շատերը դարձան յեղափոխական գործիչներ:

ԲԱՐ

Յ. Բարադամեան յայտնի է նաև իր բանասիրական աշխատանքներով, որոնց մէջ ուշադրութեան արժանի է «Վանի Հայ Գաւառաբարբառի բառարանն ու Քերականութիւնը» (անտիպ): Գրած է նաև՝ «Կենսադրութիւն և պարտք պանդխտին» 63 էջ տպ. Պոլիս 1875ին:

Դժբախտաբար անոր ձեռագիր անախպ գրութիւնները փնտցան 1915ի զէպքերու ընթացքին Մեռած է 1909ին (երամեան՝ «Վասպուրական»):

ԲԱՐԳՈՂԻՄ Վարդանէս, Երնջակցի, Զոռանկոտան կը շրջագայէ և 1635ին Աւետ. մը կը ստանայ. և յետոյ կը բնակի Ապահան, ի Թօրըսկան Դալայ:

ԲԱՐԳՈՒՂԻՄԷՍ կամ Բարբուղիմէոս Առաքեալ, որ ըստ աւանդութեան Հայաստան ևս եղած է քարոզելու քրիստոնէութիւնը, իրմէ կառուցուած կը համարուին շատ մը եկեղեցիներ և վանքեր, ինքն է գրած Հոգւոց վանքի մէջ Ս. Աստուածածնայ հրաշանկար պատկերը: Գողթն գաւառէն անցնելով՝ Վասպուրականի Աղբակ գաւառը կ'երթայ և ուր կը մկրտէ Սանատրուկ թագաւորին Զարուհի քոյրը և արքունի հազարապետ Տերենտիոսը, որ եկած էր գինքը ձերբակալելու: Սանատրուկ ի վերջոյ մորթագերծ ընել տալով՝ խաչը հանել կու տայ Սուրբ Առաքեալը չորջ Բրիստոսի 50 թուականին: Հայ եկեղեցին կը տօնէ Դեկտեմբեր ամսոյն մէջ:

ԲԱՐԳՈՒՂԻՄԷՍՍ Եպ. լատին, «Բարոզողաց» կարգէն, 1327ին Հռոմի քահանայապետին հրամանով Հայաստան կը զրկուի: Սա սորված էր պարսիկ լեզուն և քրիստոնէութիւն կը քարոզէր: 1328ին Յովհաննէս Քանեցի տարի ու կէս կ'աշակերտի անոր և լատին լեզուն կ'ուսանի և ինքն ալ փոխարէն հայերէն կ'ուսուցանէ Բարդուղիմէոսի և բնկերացի: 1329ին Բարդուղիմէոս Յովհաննէս Քանեցոյ հետ այլ և այլ գրքեր լատին լեզուէ հայերէնի կը թարգմանէ, յետոյ միասին Քանայ աւանը կ'երթան հաստատուելու: 1330ին Յովհաննէս Քանեցոյ առաջարկով կը հրաւիրուին շատ մը վարդապետներ ժողով գումարելու և Բարդուղիմէոս Եպ.ի քարոզութիւնը լսելու և Հռոմայ եկեղեցւոյ հետ միարանելու համար: Այս շրջանին երևան կ'ելլեն Միարանողք որոնք հայ ծէսը և ծիսական գրքերը ծալլեցին և ո՛չ թէ միայն Հռոմայ եկեղեցւոյ հետ միացան, այլ ուղեցին հայ եկեղեցին լատինացնել: Բարդուղիմէոս Եպ. 1333ին կը վախճանի և սակայն Յովհ. Քանեցին և ընկերները անոր սկսած գործը կը շարունակեն:


ԲԱՐԳՈՒՂԻՄԷՍՍ Ս. ԱՌԱՔԵՆԼՈՅ ՎԱՆՔ, Վաս-

պուրականի Աղբակ գաւ. մէջ է հինաւուրց այս հռչակաւոր վանքը, կառուցուած կոփածոյ քարերով, ահաւոր և հսկայաչէն դիրքով՝ բարձր ըլլոյ մը վրայ: Կը կարծուի թէ Գ. դարուն կառուցուած ըլլայ: Վանքիս տաճարը երեք գլխաւոր է աւագ սեղանը, բ. աջակողմեանը՝ Հազարապետի սեղանը, գ. ձախակողմեանն՝ փոքրիկ մատուռ մը, ուր է Ս. Բարդուղիմէոս Առաքելոյն գերեզմանը, որուն ին տապանաքարի վրայ առանց թուականի հետեւեալ արձանագրութիւնը կայ. «Այս է սապան հանգստեմն Սրբոյն Բարդուղիմէոս Սրբազան Առաքելոյն առաջին Լուսաւորչին Հայաստանեայց աշխարհի»:

Ս. Բարդուղիմէոսի մեծակառոյց եկեղեցին հաստատուած է վեց կլորակ քարէ սիւներու վրայ՝ որոնց վերի գլուխները հրաշակերտ արուեստով բարձրանալով կը խառնուին հսկայական կամարին, որուն ճարտարապետութեան եւ ամրութեան վրայ նայողը կը հիանայ, միեւնոյն տեսակ կամար մը կը կազմէ տաճարի առաստաղը Այս երկու ներքին կամարաց կեղրոնական ուղղութեամբ՝ զէպի դուրս շինուած են երկու միջակ մեծութեամբ կաթողիկէներ: Վանքս չըրջապատուած է դրեթէ մէկուկէս մեղր լալնութեամբ պարխպով՝ որուն անկիւնաւոր տեղերը կան զարմանալի ձևով կերտուած պահարաններ: Պարսպի թէ՛ ներսի և թէ՛ դրսի կողերուն վրայ քանդակուած կան ըզմաթիւ խաչեր, որոնք բարեպաշտ ու խաւարաց յիշատակարաններն են:

Վանքիս եկեղեցւոյ դրան արտաքին ճակատին վերի կողմը, սքանչելի արուեստով քանդակուած է Հայր Աստուծոյ պատկերը, նման Եղեկիէլ մարգարէի տեսլեան, առիւծներով և հրեշտակներով: Վարի կողմը Ս. Բարդուղիմէոս ատէզը ձեռքը, նժոյգ հեծած՝ կը սպաննէ վիշապ մը: Դրան երկու վիթխարի կողերուն վրայ փորագրուած են վանքի չորս ճարտարապետաց պատկերները ընական մեծութեամբ, և իւրաքանչիւր ճարտարապետ իր գործածած գործիքը ձեռքը բռնած է. անոնց մէջտեղ կը գտնուի նաև Յովհաննէս Մկրտչի գլուխը, և դրան երկու կողմերը երկու մարդ՝ բուրվառ ի ձեռին: Այս արուեստական նշանաւոր գործերն անգամ ընդունած են կոպիտ թշնամեաց հարուածները և տեղ անդ կոտորած են: Հայկական ՌԻՃ (1751) թուին վանքիս աջ թեւն՝ որ երկրաշարժէ վնասուած է եղեր, նորոգուեր է Հաքարու (Հեքեարի) Էզտին Շէրիֆ Խոսրով փաշայի իշխանութեան օրով, ինչպէս կը յայտնէ յատուկ արձանագրութիւն մը:

Հոչակարոր մենաստանիս մեծ կաթողիկէն նորոգուած է, վանահայր Եղիազար վարդապետի օրով շուրջ 1864ին: Նոյն վարդապետը 28 տարի վանահայրութեան պաշտօն վարելով՝ մեծամեծ



Ս. Բարդուղիմէոս վանքը

ինամ տարած է վանքի շինութեան, պայծառութեան և բարեկարգութեան: Ս. Բարդուղիմէոսի այս վանքը ունեցած է երբեմն արձաքոյ կարգի պայծառութիւն և նոյնպէս երբեմն արտաքոյ կարգի անշքութիւն: Կը պատմեն. թէ ժամանակաւ Ս. Բարդուղիմէոս բազմաթիւ միաբանականութիւն ունեցեր է, հանդերձ հարուստ և ճոխ սպասներով և եկամուտներով, սակայն դանազան ժամանակներ թշնամեաց աւարառութեանց ենթակայ եղած է: Ինչպէս եղաւ նաեւ վերջին տխուր դէպքերու միջոց: Բարձրադիր վանքս ունի եզակի տեսարան, պատուական օդ, ջուր, ընդարձակ մարդագետիսք և դաշտօրայք: Վանքիս անմիջապէս քովը 20 անէ բաղկացած Հայոց գիւղ մը կար, որուն բնակիչք Վանգի կ'ըսուէին, վասնզի գիւղս վանքին սեփականութիւնն էր: Հայերը գաղթելով ասկից՝ 1900ին 30 տուն քուրտ կը բնակէին: Ս. Բարդուղիմէոսի վանքէն քիչ հեռու դէպի արեւելահիւսիս կը գտնուի Վիթպու էր (Վիշապի այք) կոչուած քարանձաւ մը: (Էփրիկեան՝ «Բնագիտական», Բաղուած Միախորեանի «նկարագրական ուղեւորութիւն»-էն Բ. 73—9):

Ս. Ղազարու ԼԴ. աւետարանը գրուած 1557ին վանքիս առաջնորդ կը յիշէ Տէր Սահակը: 1661ին ինք եւ 1661ին Դաւիթ ֆի. գրիչ՝ կը յիշէ այդ ասեմի առաջնորդ Եսայիս: 1872էն ետք վանքս իրեն առաջնորդ ունեցած է Շասայցի Յովնանէս վրդ. Բագունին, իսկ 1820ի ասեմներ՝ Իսրայել եպր: ԲԱՐԵՆՈՒԻՍ Տ. Իննակնեան վանք:

ԲԱՐԵՆՈՒՐԵՍՆ, հին գո. մը, դիրքը և սահմանքը անորոյ:

ԲԱՐԵՆՈՒՐ ԱՂԲԻԻՐ, ուխտաառի Բարձր Հայոց Դարանաղեաց գո.ի, Սեպուհ լեռան վրայ: Այս ազգրւբէն ըմպած է Ս. Լուսաւորիչ ինչպէս կ'աւանդէ Յովնան կթ. ըսելով. «Չոգայ ի Բարեմամ աղբիւրիկն... որ և երաստոյ վիմօք պարփակեալ շուրջանակի և դրամքք պատուեալ, եւ յորոյ տեղոյ մատուակեալն իսկ էր յարեցունն իւր՝ Սուրբ և անթիժ ձեռքն Գրիգորի»:

ԲԱՐԵՆՈՒՐ կամ Բալասուր, սակաւարնակ գիւղ Աղձնեաց այժմեան Խիզան վիճակի մէջ:

ԲԱՐԵՆՈՒՐ ՎԱՆԵՐ, համանուն գիւղին մէջ, ուր 1421ին Հայկ. շխտանէն եկած երկու նահատակ քահանաներ: (Աղաւնուցի՝ «Միաբանք» 222), տ'ս Բարականոյ վանք:

ԲԱՐԵՆՈՒՐՆԱՆ Սմբատ բիշկ, Ուստը (Միացեալ Նահանգ) կը բնակի:

ԲԱՐԵՍԻՐԱՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, հիմնուած է ի Կ. Պոլիս 1846ին:

ԲԱՐԵՎԱՅՐ, հին գո. Սիւնեաց Բաղք գո.ի:

ԲԱՐՍՍՐԼ, գո. Տիգրանակերտի Բէշերիկ գաւառակի, 15 տուն հայ ունէր:


ԲԱՐԹՈՂ Արքանամ վառա, բնիկ Կեսարացի խալաճա Բարթողիմէոսի (կամ Բարթողի) սրղի, ծնած Աղեքսանդրիս 1850 Սեպտ. 21ին: Եղբորորդին է Կեսարացի խալաճա Արքանամ վարժապետին:

Արքանամ փաշա աշակերտած է Երուսաղէմայ ժառանգաւորաց վարժարանին և սատարած է Յովնանէսեան Աստուածատուր կայի «ժամանակագրական պատմ. Երուսաղէմի» երկնատոր գործին տպագրութեան ծախքերուն:

Արքանամ փաշա Երուսաղէմի մէջ իրեն դասընկեր ունեցած է Կիլիկիոյ կթգ. Սահակ Բ.ը 1874ին ամուսնացած է սեղանաւորապետ Երուսաղէմեանի աղջկան հետ: Արքանամ փաշա նուիրուած է ազգային գործերու, և աղղապատկան կալուածներու միւթէվէլին եղած է երկար տարիներ: Իր ծախքովը նորոգած է Աղեքսանդրիոյ եկեղեցին և Աղեքսանդրիոյ աղղային սահմանագրական վէճերէն զոլուած՝ վերջերը քաշուած էր հանրային ասպարէզէն, մասնաւոր բարեգործութիւններու մէջ փնտուելով յաղուրդը իր ազգասիրական զգացումներուն, որոնք միշտ վառ մնացին Մէկն եղած է Հայկ. Բարեգործ. Ընդհանուր Միութեան հիմնադիր անդամներէն, որուն բարերար Անդամն էր: Միութեան նուիրած է 1000 եզրիպատկան ոսկի:

Իր սրտին ազնուութեամբը կը վայելէր միջադ-


դասին համբաւ, և Եզիպտոսի վերին շրջանակներուն մէջ յարգուած էր՝ այնքան իբրև բարեգործ՝ որքան ելեմտագէտ: Ստացած է բազմաթիւ պատուանշաններ՝ օսմանեան, ասուական, պարսկական, սպանիական և այլն:



Վերջերս երկրին արնատեսական տաղնապէս մեծապէս փաստուած ըլլալով, բաւական մտահոգութիւնն եր ունեցաւ, որ քայքայեցին իր արդէն հիւլանդ մարմինը, և իր մահուընէն վերջ հասկցուեցաւ որ բարեգործութեան ասպետը իր կրցածէն և ունեցած էն շատ աւելին Բարոյ Աբրահամ փաշա կու տար: Իր յուզար կաւորութիւնը կատարուեցաւ, ազգային հանգամանքով, 16 Դեկտեմբեր 1911ին և ընդհանուր սուգի և յարգանքի բացառիկ արտայայտութիւն մ'եղաւ: Բարձր. Խալիվին արտօնութեամբ, իր մարմինը թաղուեցաւ Աղեքսանդրիոյ Հայոց շրջափակին մէջ: (Ոսկեմասեան 1906-1913 էջ 73—4):

ԲԱՐԹՈՂԵԱՆ Միմաս. բժիշկ ի Գահիրէ, տ. Յաւելուածը:

ԲԱՐԹՈՂԵԱՆ Տելեմաք, որդի Եազմաճի Հաճի Բարթիկի, ծնած է Ալիւտար (Պոլիս) շուրջ 1875ին



ուր Ս. Խաչ վարժարանին մէջ ստացած է նախնական կրթութիւնը և պատենական հասակին մէջ նստուած է գործի ասպարէզը և ընդգրկած իր հօրը Եազմայի արհեստն ու վաճառական ական գործը:

1896ի պանքայի ղէպքին կիպրոսկանցնի և անկից Եզիպտոս, ուր կը կազմէ Գահիրէի Կ. Խաչը և կը նուիրուի բարեգործութեան:

Տելեմաք Բարթողեան, բառին բուն նշանակութեամբ սրտցաւ հայ մը եղած է: Իր գործունէութիւնը և բարերարութիւնը ցոյց կու տան Անկախ Հայուն մը ոգին: Ան բոլոր կուսակցու-

թեանց հետ գործակցած է երբ ազգային շահը միայն ի նկատի ունեցեր են անոնք:

41 տարի Եզիպտոսի մէջ ապրելէ ետք՝ 1937 Նոյեմբերին յանկարծամահ կ'ըլլայ Գահիրէի մէջ: Վերջերս հիմնած էր նաև Եզիպտահայկական Միութիւն մըն ալ: Իր կեանքը մանրամասնօրէն պատմուած է Հայ Տելեմաք մեծադիր 300 էջնոց գրքին մէջ, որ 1934ին լոյս տեսաւ Գահիրէի մէջ, հոն ամփոփուած են նաև իր յօդուածներու մեծ մասը:

ԲԱՐԹՈՍՈՆՅՅ, հայանուն՝ բայց այլազգարնակ գղ. Թորթուճի:

ԲԱՐԻԱՋԵՆՅ Մասրէոս վրդ. Ակնցի, միարան երուսաղէժայ Ս. Յակոբ վանքին, 1788ին Ս. Փրկիչ վանքին տեսուչ կարգուած, զոր 1798ին չիկիով զարգարած է. ունի քանի մը գրքեր ընդօրինակած. (Աղաւնուցի՝ «Միաբան» 252):

ԲԱՐԵԱՆՉՈՐ ԳԵՏ, կը յիշուի Արցախի մէջ: ԲԱՐԻՉ տե՛ս Փարիզ:

ԲԱՐԻՉՈՐ, կը թուի այլ անուն Աղճնեաց Աղնուածոր գաւառի:

ԲԱՐԻՍ կամ Պարիս, գղ. Գանձակի Ղարչինար հասարակութեան 1900ին 363 հայ բնակիչ ունէր, որոնք Հին Բարիսէն գաղթած էին:

ԲԱՐԻՔԵԱՆ Մանուկ, ջութակահար, ծնած 1920ին, եղած է կիպրոս, ուսկից Լոնտոնի երաժշտական Թորինթի զօլէճին մէջ կ'ուսանի 1936ին, նկատուած է իր ունեցած ջութակի մեծ տաղանդը և յուսադրած է որ ամէնէն բարձր աստիճաններուն պիտի հասնի: (Հ. Կոչնակ 1936 էջ, 1072, վորձե՛ տեսնել ՅԱԻԵԼՈՒԱԾՐ):

ԲԱՐՂՈՆ Էրնէստ (Barelon Ernest) տ. Պարլուն Էրնէստ:

ԲԱՐԻ ԼՈՒՐ, քսիստոնէական թերթ, հրատ. Պ. Թառայեան, տպ. Բագու 1906-1917:

ԲԱՐԵՈՒ, գղ. Տուրուբերանի կիսն վիճակի մէջ: ԲԱՐԵՈՒԳԱՐԵԱՆՅ Գեորգ, թատերագիր և հրապարակագիր, ծնած է կովկաս՝ 1835ին: Աշխատակցած է «Մեղու Հայաստանի», «Հիւսիսափայլ» և «Փորձ» թերթերուն: Թարգմանած է Շիլլերի և Լիտտինցի մի քանի երկերը: Մեռած է Թիֆլիսի մէջ 1913, Օգոստ. 13ին: 1869ին լոյս ընծայած է «Սէր կամ մահ» տրամպն, նիւթը Հին Նախիջևանի կեանքէն առնուած: 1889ին Թիֆլիզի մէջ կը տպէ Բարեպաշտ մարդիկ, «առակ շախմատներ համար», [(ոտանաւոր), 158 էջ. իսկ 1897ին՝ Գեորգ Բարխուդարեանցի օսանաւորները, 230 էջ: 1902ին տօնուած է իր գրական և մանկավարժական քառասուն և հինգ ամեայ գործունէութիւնը, այդ առթիւ Իս. Յա-

բուժիչներից Լամայի մէջ (1902 թ. 1) կը գրէ Բարխ. Գէորգի կեանքն ու գործերուն մանրամասն նկարագիրը:

ԲԱՐՆՈՒԳԱՐԵԱՆՅ Մակար, եպիսկոպոս, Ղարապաղցի, ծնած է Չանգեղուրի Սաննաթա գիւղը 1839ին (ըստ «Հիւանդանոցի Տարեցոյց»-ին, 1901, էջ 399 ձևած է 1836ին), 1862ին Երուսաղէմ երթալով կը միաբանակցի Ս. Յակոբայ վանքին մինչև 1868 ուսանելով ժառանգաւորաց վարժարանին մէջ: 1869ին արեգայ կը ձեռնադրուի և վանական գործերով զբաղելէ ետք Ատապաղար կը մեկնի 1871ին, կրկին Երուսաղէմ կը վերադառնայ, 1875ին տպարանի տեսչութիւն կ'ընէ և 1876ին Կ. Պոլիս կը մեկնի ու այդ տարին Զմիւռնիոյ Առաջ. փոխանորդութիւն կ'ընէ: 1880ին Ս. Էջմիածնի միաբան կ'ընդունուի, 1881ին Շուշի, 1882—1888 կրօնուսոյց Շուշի մէջ: 1894ին Էջմիածին դառնալով եպիսկոպոս կը ձեռնադրուի, կը վարէ լուսարարականութեան պաշտօնը և կ'անդամակցի Սինդիկ, 1906 Փետր. 6ին կը վախճանի Էջմիածնի մէջ: (Աղաւուռի «Միաբան», էջ 240): Իր գրական գործերն են. Միրզա և Աննա վէպ գրեց Ուսայ Գեորգ Բարխուղարեանց, տպ. Զմիւռնիա 1876 էջ 180, Ասկէ դուրս ունի դեռ քանի մը անյայտ գրքեր: Իր գնահատելի գործերն են տեղագրական երկերը, ինչպէս Աղուանից երկիր և դրացիք (Միջին Դաղստան) տպ. Թիֆլիս 1893ին, 302 էջ, Արցախ, տպ. Բագու 1895, 461 էջ, Պատմ. Աղուանից, Ա. հատոր, տպ. Թիֆլիս 1900, էջ 213: Ունի նաև կրօնական գրքեր: (Հմտ. Հ. Ղազիկեանի «Նոր Մասեմագրութիւն»):

ԲԱՐՆՈՒԳԱՐԵԱՆՅ Մկրտիչ, խմբագիր «Հանդէս գրականական և պատմական» վեցամսեայ պարբերաթերթի, տպ. Մոսկվա 1888—1896, թ. 1-7: Թարգմանած է նաև Անտոնիոս (Dr. Antonius) վարդապետը, Լեհաստանի հայերի պատմութեան վերջին երեսը, տպ. Բագու 1903 էջ 47:

ԲԱՐՆՈՒԳԱՐԵԱՆՅ Յովհաննէս արևելահայ, ունի քանի մը մանր գործեր և թարգմանութիւններ, 1892ին Մոսկվայի մէջ հրատարակած է Մանկավարժական գրադարանը (տարեգիր) 340 էջ:

ԲԱՐՆՈՒԳԱՐԵԱՆՅ Սարգիս, երաժշտագէտ, ծընած է 1887 Օգոստոս 20ին՝ Թիֆլիսի մէջ: Հայրը որ վաճառական եղած էր, կը վախճանի 1894ին, մայրը ամբողջովին կը նուիրուի ութը զաւակներուն կրթութեան գործին: Ութը տարեկան հասակին Թիֆլիսի երրորդ դիմնագիտան կը մտնէ և յատուկ վարձուած ուսուցիչներէն կը սորվի հայերէն ու ֆրանսերէն: Տասներկու տա-

րեկան էր Սարգիս, երբ մայրը դաշնամուր մը կը գնէ երկու քոյրերուն համար: Այդ ատեն արդէն ապագայ երաժշտագէտը զանազան գործիքներ (չիլի և մանկական քնար) կը նուագէր: Սարգիս այդ ժամանակուայ դաշնամուրի ուսուցիչ Սօֆ. Իք. Կարախանեանէ զասեր կ'առնէ և երկու տարի ետք Թիֆլիսի երաժշտական դպրոցը կը մտնէ իրեն ուսուցիչ ունենալով Ստոյտովսկի և Լ. Տրուսկովսկի: 1907ին Պերլին կ'անցնի երաժշտական կրթութիւնը շարունակելու նպատակով, ուր «Կոյսերական երաժշտանոցը» կը մտնէ: Ամէն օր ութը ժամուայ աշխատանքը, տեխնիկան զարգացնելու համար, կը մեղցնեն իր մէջ դաշնամուրով պարապելու իր բոլոր ձեռնառնները, ուստի կ'որոշէ հեռանայ Պերլինէն ու անցնի Բեստրսպուրկ (Լենինկրատ) և կը նուիրուի քօրէիկական գիտութիւն ստանալու, մասնաւորապէս իր երաժշտական կրթութեան առաջին քայլերէն արդէն կը ստեղծագործէր:

Բեղերսպուրկ երթալով՝ կը սխի պարապի Մ. Գնէսին մօտ, որը Ռիմսկի-Կորսակովի լատագոյն աշակերտներէն մին էր: Նա առաջինը կ'ըլլայ՝ որ իր մէջ կ'արթնցնէ սէր դէպի մայրենի երաժշտութիւնը: Չորս հինգ ամիս ետք Գնէսին կը մեկնի Բեղերսպուրկէն և Բարխուղարեանց Ժիտովերսկիի մօտ կը շարունակէ իր պարապմունքները, և կը գրէ իր առաջին «Արեւելեան պար»ը, որուն շնորհիւ կ'ընդունուի պետական երաժշտանոցը: 1911էն ետք Վիտովի մօտ կ'անցնի, որ ազգաւ լատին էր և բոլորովին չէր հասկնար արևելեան երաժշտութիւնը, և որովհետև առանց բացատրեան Բարխուղարեանց իր աշխատանքները արևելեան ոճով կը ներկայացնէր՝ նա զինքը կը յանդիմանէր և կ'ըսէր — Այնպէս գրէ որ ինձի հասկնալի ըլլայ: Սարգիս յամառութեամբ կը շարունակէր նոյն ձևով: Վիտով տեսնելով որ իր աշակերտը անուղղայ է՝ կ'ըսէ. — Քու հետ ո՛չ մէկ բան կարող եմ ընել. շարունակէ՛ ինչպէս որ կ'ուզես:

1915ին գարնան Բարխուղարեանց կը ներկայացնէ իր արևելեան ոճով գրուած «Սոնատ»ը իրրե Երաժշտանոցի աւարտական աշխատանք, որը քննիչ յանձնաժողովի կողմէն կը գնահատուի և կ'առաջարկուի որ մնայ Երաժշտանոցի ստեղծագործական դասարանը կատարելագործուելու համար: Այդ դասարանին մէջ է որ կը գրէ իր սիմֆօնիական «Անուտ» պօէման մեծ օրգէստի համար և շարք մը դաշնամուրի համար կտորներ:

1917ին Թիֆլիս կը տեղափոխուի և կը զբաղի

կողմնակի դասեր տալով: 1919—21 ի դարձան կը զեկազարէ Երեւանի խմբավարական դասընթացքները, որ ժամանակի աննպաստ պայմաններու պատճառաւ առանձին արդիւնք չտուաւ:

1922ի ամառը, կը շրջի Հայաստան (Ղարաքիլիսէ, Ձալալօղլի. Ալեքսանտրապոլ) ինչպէս և Պաթնուժ, Բագու և յետոյ Մոսկուա ու Բեղերսպուրկ, իր գրուածքներէն համերգներ կազմակերպելով:

Բեղերսպուրկի համերգը մեծ յաջողութիւն կ'ունենայ և յայտնի ոուս երգահան Գլազունով սապէս կ'արտայայտուի.— Բարխուդարեանցի ստեղծագործութիւնները լսելէ ետք, ես կարող եմ վկայել, որ ան անկասկած օժտուած է ստեղծագործական շնորհքով: Անոր ստեղծագործութիւնները ազգային բնոյթ կը կրեն, ձեռի զեղեցկութիւն և ներդաշնակութիւն ունին Այդ բոլորը կ'ապացուցանեն, որ հեղինակը լաւ կատարելագործուած երաժիշտ է: Յանկալի էր, որ անոր հեղինակութիւնները լոյս տեսնէին, իբրև վերին աստիճանի նիւթ մը»:

1923ին, Թիֆլիս կը հրաւիրուի պետական երաժշտանոցի բարձրագոյն թէօրէտիկական առարկաներու դասատու, որ կը վարէ մինչեւ օրս (1927):

Գալով իր գրական աշխատանքներուն, բացի սոցալայէն և սիմֆոնիք պոեմայէն՝ ունի շարք մը դաշնամուրի կտորներ:

Տպագրուածներն են՝

Ա. Արեւելեան պարեր, 1913 թ. Լենինգրատ:

Բ. Նագ-պար, 1920 թ. Մոսկուա:

Գ. Դաւեամուրի պիեսներու ա. սերիան, 1 Աճախայից, 2. Հեփար, 3. Oror, 4. Ակվարիս, 5. Ես եեզ D Mol n. 3, 6. Ես եեզ H. Mol n. 2:

Տպագրութեան համար պատրաստ ունի շարք մը ժողովրդական երգեր դաշնամուրի համար, մի շարք (սէրիա) ժողովրդական երգեր (ձայնի համար) դաշնամուրի ընկերակցութեամբ եւ այլն:



Բարխուդարեանց Աարգիս

Պէտք է յիշել և այն որ 1909ին, երբ Պերլինէն Լենինկրատ կ'անցնի, միաժամանակ նաև կը մտնէ համալսարանի ֆիզիքո-մաթիմաթիքական ֆաքուլտէն, սակայն ժամանակ չունենալով կատարելագործուելու երաժշտութեան մէջ, զանց կ'ընէ այդ ճիւղը և կը նուիրուի երաժշտական աշխատանքներու: (Բար-

ուած իր ինքնակենսագրութեան, որը Տպուած է Ա. Երեւեանի «Սեւանի» մէջ, էջ 79-81 սպ. վեցնիկ 1927:

1937ի լրագիրներէն տեղեկացանք որ պ. Բարխուդարեանց Երեւանի մէջ աւարտած է «Նարինե» օբերան:

ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՅ Ս. ԲՐՈՑՔ. հնագէտ, կը յիշուի Երեւանի մէջ:

ԲԱՐՄԱՓԻ կամ Բարձալիի, գղ. Այրարատայ Կոտայք գո.ի մէջ, Պաշքէնդէն քիչ հեռու՝ արեւմտակողմը: 1900ին ունէր 62 տուն հայ բնակիչ, եկղ. Ս. Յովհաննէս: Գիւղս կը կոչուի նաև Էլիովան կամ Ելլաւան:

ԲԱՐԿԱՇԱՏ, աւերակ՝ Վանայ ծովակի հիւսիսային ափունքը: Տե՛ս Բարկուշուս:

ԲԱՐ ԿԱՅ հայագէտ Տ. Պար Կայ:

ԲԱՐԿԱՏ, գղ. Տուրուբերանի Խորխոռունեաց (Արծկէ) գո.ի մէջ:

ԲԱՐԿԱՅՔ, կամ Պարկիս, գղ. Սիւնեաց Սողք գո.ի մէջ:

ԲԱՐԿԱՅՈՒՇԱՏ կամ Բարկաշուս, այս անուամբ ծանօթ է իբրև առանձին վիճակ, Սիւնեաց Բաղք գո.ի արևելեան մասը: Ըստ Չամչեանի՝ Փայտակարանի գաւառ մըն է:

ԲԱՐԿԱՅՈՒՇԱՏ, գետ Սիւնեաց աշխարհի մէջ:

ԲԱՐՁԱԿ, գղ. Տարօն գո.ի Մշոյ դաշտին մէջ:

ԲԱՐՁԱՆ, գղ. Մշոյ դաշտի:

ԲԱՐՁԱՆՅ կամ Բարձար լեռ, կը գտնուի Գուգարաց Տաշիր գո.ին մէջ:

ԲԱՐՁԻՇԷՆ, հին գիւղ Սիւնեաց Վայոց-ձոր գաւառի:

ԲԱՐՁՐԱԲՈՒՂ, ամուր տեղի, զոր Վարդանանք ըստ Ծղրէի (Ե. զար) Պարսից ձեռքէն առին:

ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՏ ԱՍՏՈՒՍԾԱԾԻՆ, նշանաւոր վանք Չորրորդ Հայոց Արղանա գո.ի մէջ, կառուցուած ապառաժ անազին բարձրութեան մը վրայ՝ որ կը կոչուի Արկնոյ բերդ, ուր կը տեսնուին բերդի պարսպաց մնացորդներ: Վանքս Բարձրահայեաց կոչուած է բարձր դիրքին համար. ըստ աւանդութեան՝ եկեղեցին հիմնուած է Ս. Թադէոս առաքեալէն, յանուն Ս. Աւետուածանի. բայց երբ ժի՛ դարուն մէջ Տիգրանակերտի Մկրտիչ Նաղաշ եպ.ը, տեսնելով նիւրկերտի աւերումը, հոն գտնուած բազմաթիւ նշխարները, զբաւտներու վրայ բառնալով տարաւ ամփոփեց Մշոյ Ս. Կարապետի վանքը և ուրիշ տեղեր, եօթը բեռ ալ հոս բերաւ և նորէն կառոյց զմրեթաւոր եկեղեցին Չե՛ր (= 1384) կամ ըստ ոմանց ՊԳ. (= 1354) թուին, ինչպէս արձանագրուած է դրան ճակատը: Իսկ վանքի շինութիւնն եղած է ՌձԺԲ

(= 1663) թուին, Եղիազար Այնթապցիի ձեռքով, որ յետոյ կաթողիկոս եղաւ: Բաղիշեցի նուր-տինեան առաջնորդի օրով այրեցան վանքիս փուռը, խոհանոցը և մասանը, զորս վերջը դարձեալ չինեց կարապետ վարդապետն Լուսիկ, սուր-թան Մուստաֆայի ժամանակ: Վանքիս թէ՛ սուրբ տաճարը և թէ՛ միւս չէնքերը քարայէն են, թէ՛ պէտ հոյակապ չէնք շունի, բայց բազալտամար երկրին այլ չինուածոց, իրբև նշանաւոր հռչակու-ում է: Բազմաթիւ՝ բայց խառն խոռոն սենեակներ ունի:

Արդնոյ առաջնորդական թեմին աթոռն է վանքս: Առաջնորդարանին դարպասը ամէնէն չքեղ չէնքն է, ընդարձակ և կոկիկ. իր ձակասն և մէկ կողմը շինուած են զբարարաններ՝ յորս զեակողուած են ձեռագիր և տպուած բազմաթիւ գրքեր:

Տաճարին մէջը յախճապակիով է, մինչևե կամարները, ունի խորան մը յանուն Ս. Աստուածածնի, սեղանին վրայի Տիրամօր և Մանուկ Յիսուսի պատկերը հռչակաւոր է:

Վանքիս մէջ կան զանազան արձանագրութիւններ նորոգութեանց և շինութեանց: Այս հռչակաւոր վանքս այ որ շատ մը թանկագին անօթներ և զգեստներ ունէր՝ 1895—96 ղէպքերուն կողպատուեցաւ: (Եփրիկեան «Բնագաւարիկ», քաղուած՝ Մուսնիսեանցի «Թորոս Աղբար»-էն, Բ. էջ 173—179):

Արդնի Բարձրահայեաց վանքը կը յիշուի 1434ին. Յովհաննէս սարկաւազ որդի Յակոբայ՝ եղբայր քաջ հո՛ւսար Գրիգոր Փիլիսոփայի հոս կը սկսի ընդօրինակել մաշոց մը:

1579ին վանքիս առաջնորդն եղած է Առաքել. 1586ին Ասուածասուր Ամեցի Առաքելի առաջնորդութեան օրով վանքիս կը նուիրէ նորոգուած Յայմաւուրէ մը: 1593ին նոյն Առաքել Արք.ի առաջնորդութեան օրով Սահար վանքիս կ'ընծայէ Անանիա զպրին ընդօրինակած Մաշոցը:

1610—30 վանքիս առաջնորդ եղած է Յովհաննէս Չմուղեցի. 1612ին Մարկոս, Պաղասաւրի որդին վանքիս աւետարան մը կը նուիրէ: 1633—1647 Ղուկաս եղած է վանքիս առաջնորդը, որուն յաջորդած է Եղիազար Հոռովկացի (1647—1655), աւոր յաջորդած է Յովհաննէս Արդնցի (1655—1684), յետոյ Սահակ կամ Իսահակ 1684ին: 1719ին վանքիս առաջնորդ կը յիշուի Գանիկ Արքեպ:

ԲԱՐՁՐԱՀԱՅԵԱՅ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, վանք Եղե-սիոյ, Եփրիկեան չի յիշեր զայս, այլ միայն կը յիշատակէ թէ Եղեսիոյ (Ուրհա) մայր, եկեղեցին Ս. Աստուածածնի անուամբ յիշատակուած է:

1515ին տէր Աստուածատուր, Թորոսի որդին, Ուրհայի բարձրահայեաց Աստուածածնի կը նը-ւիրէ Աւետարան մը: 1583ին Սրապիոն վրդ. կարնէն բերած Աւետարան մը կը ղնէ հոս: 1597ին Սրապիոն վրդ. Եղեսիոյ առաջնորդի օ-րով «Ի զուսն Բարձրահայեաց Ս. Աստու-ածածնի» Արիստակէս վրդ. Գարձորայ զիւղէն՝ կը նորոգէ ն. Շնորհալուոյ Մատթէի Մեկնութեան ձեռագիրը: 1591ին հոս եղած է Աստուածատուր եպ. Մշոյ և բնորոնակած է Մեկն. բոլորց Պողոսին և 1598ին Սրապիոն Եղեսացոյ հետ Երուսաղէմ երթալով՝ Ս. Յակոբայ վանքին կը նուիրէ զայն: 1603ին Սրապիոն վրդ. վանքիս նուէր կու տայ «Մեկնութիւն Սաղմոսաց»ը: 1657ին՝ Սարգիս ձեռագիր մը կ'ընդօրինակէ վանքիս մէջ:


ԲԱՐՁՐԱՇԵՆ, հին գղ. Սիւնեաց Մզուկ գո.ի մէջ:

ԲԱՐՁՐ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ s. Գեախայեաց Աս-ուածածին:

ԲԱՐՁՐԱՎԱՆՔ, ամսեայ հանդէս հայ արուես-տի և մտածման, տպ. կ. Պոլիս 1922 (1—5 թիւ լոյս տեսած) պատ. Տնօրէն՝ Ծ. Ռ. Պէրպերեան, ապա՝ Վ. Թէքէեան, Կ. Զարեան, Յ. Օշական:

ԲԱՐՁՐԱՔԱՇ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ կամ Ա. Գրի-գորի վանք, հին մենաստան Գուգարաց Չորոփոր կամ աւելի Տաշիր գո.ի Դրսեղ աւանի մօտ, ձորակի մէջ: Ժ.Ա. դարուն, երբ Մամիկոնեան-ներէն ոմանք եկան բնակութիւն հաստատեցին Լոռիի լեռանց մէջ՝ Դրսեղ աւանը, հետեւնին բերին իրենց աւանդութիւնները, որ տակաւին ժողովրդեան բերանն են: Անոնք այս առիթի ձորերու մէջ կամուրջներ կառուցին, յուշար-ձաններ և աղօթարաններ կանգնեցին, որոնք կը մնան տակաւին կանգուն կամ կիսակործան վի-ճակի մէջ: Նոյն ժամանակները կառուցին իրենց յատուկ տոհմական գերեզմանատուն և աղօթա-րան այս Բարձրաւաւ Ա. Գրիգորի ձերմակ վանքը և ապահովեցին ընդարձակ կալուածներով և զիւ-ղերով, ինչպէս կը յիշուին արձանագրութեանց մէջ: Աւանդութիւնը կ'ըսէ թէ, ա'յնչափ բարձր էր վանքի կաթողիկէն, որ ծայրի խնձորը զաչ-տէն կ'երէար: Վանքի ճանապարհը, ըստ երե-ւութիւն, հնումն ուրիշ կողմը և սալայատակ է եղեր: Մօտերն են Մամիկոնեաններու Բարձ-րաքաջ տաճարի սպիտակ աւերակները: Արևել-եան պատի հարաւային մասը կտոր մը կործա-ններ է, և բոլորովին պիտի կործանէր, ինչպէս կ'ըսեն զիւղացիք, եթէ Յովակիմ (իւլբաւի) ա-նունով մէկը, քարերով չամրացնէր: Այս պա-տին վրայ կայ գեղաքանդակ նրկզխանի թեա-

տարած արծիւ՝ ճանկերու մէջ գտնն բռած: Վանքիս կաթողիկէն կործանած՝ լցուած է մէջը:



Բարձրագու Ս. Գրիգորի վանքի

Աւերակ և ամայի վանքիս արձանագրութիւնները հրատարակած է Ջալալեան, Բ. 108: (Էփրիկեանի՝ «Յնաւխարհիկ», քաղուած՝ «Արաբ»-էն, 1897 Բ. էջ, 1897 Բ. էջ 47—8):

ԲԱՐՁՐԲԵՐՎ, հին ամբողջ լեռնային Կիրիկիոյ Մոլեոնի արեւելեան և Սսի հիւսիս-արեւմտեան կողմը: Չամանտի գետի հովտին մէջ. Արարացիները Պեքայեղ կը կոչէին: Ինչպէս անուէն կը յայտնուի՝ կառուցուած է շատ բարձր դիրքով, և այնչափ ամուր է, որ հայ թագաւորները իրենց դանձր մէջը կը պահէին: Ըստ Կիրակոս պատմիչի, Ռուբէն, Ռուբինեանց առաջին իշխանը երբ Բարձրբերդի շրջակայքը կաքաւորսորդութեան ելած էր՝ բերդիս եպիսկոպոսէն ճաշի կը հրաւիրուի, ծառաներու բացակայութենէն օգտուելով՝ Ռուբէն եպր կը սպաննէ և բերդին կը տիրէ: Թէն սյս պատմութեան ստուգութեան չենք կարող երաշխաւորել, որովհետեւ ուրիշներ կ'ըսեն, թէ Ռուբէնի առաջին տիրապետութիւնը Փոռլագիայի մէջ էր, բայց յայտնի է, թէ ո՛րեւէ հայ իշխան մը կանխաւ զրաւած էր Բարձրբերդը:

Ժամանակը մը թագաւորահայր Կոստանդինի սեփականութիւնն էր, և մօտը կար Կոստանդինոս անուամբ զիւր մը: Ժ. Գ. դարու վերջերը եղբրական գործեր կատարուեցան հոս, այն է Լեթում Բ. ի աչաց խարուսն, Սմրատ թգ. ի հրամանով, և միւս երբոր Թորոսի՝ Թաթարներէն խեղդուիլը (յուլիս 23ին, 1299): Նոյն ժամանակները զիտութեամբ հռչակաւոր կը հանդիսանար Վարդան Բարձրաբերդի վարդապետը:

Լեւոն Գ. ի թագաւորութեան միջոցին (1319—41) Բարձրբերդ՝ Նզրի կոչուած իշխանազանց ձեռքն էր, որոնք սերած էին թագաւորահայր Կոստան-

դին մեծին զարմէն: Բարձրաբերդի իշխան Նզրենց Պաղտին մարաշախտը, դաշինք կնքելու համար Եգիպտոս զրկուած ժամանակ (1335ին), Հալէպի Ալթուն Բուղայէն խարէութեամբ բռնուեցաւ և բանտի մէջ մեռաւ:—Այս բերդս է հաւանականօրէն Մանտրվիլէ Անգղիացի հռչակաւոր ճանապարհորդի յիշած Փարսեփեցի (Pharsépee): Անշուշտ բերդս Կոստանդինի իշխանութեան ներքե մնաց իր թագաւորութեան ժամանակ, անկէ վերջ Լայոց թագաւորութեան վերջն հասնելով, կը յռն բերդիս ազգային յիշատակները, բայց կը կարծուի, թէ այնուհետեւ ևս կանգուն մնացած է բերդս հզոր հայ իշխանի մը ձեռաց տակ, ինչպէս եղած են Տաւրոսի և Կիրիկիոյ գահուն ուրիշ բերդերը: Շահուար Զիւլղատրեան 1467ին նուաճեց Կիրիկիոյ մեծ մասին հետ նաև Բարձրբերդը: Մինչեւ ժ. դար բնակութիւն ունէր բերդս և համանուն աւանն. իսկ անկէջ վերջ աւազակաց երկիւղէն անրնակ դարձաւ: Բերդիս անուամբ կը կոչուէր շրջակայ գաւառը — Բարձրաբերդ ունեցեր է յատուկ եպիսկոպոսներ, որոնցմէ կը յիշուին Ժ. Գ. դարու սկիզբը ոմն Ստեփանոս՝ Սսի և Ատանայի ժողովներուն մէջ, և յետոյ Մխիթար կաթողիկոսի ժամանակ, Սսի ժողովին մէջ ոմն Բարսեղ 1342ին: (Էփրիկեանի՝ «Յնաւխարհիկ» քաղուած է. Ալիսանի «Սիսական»-էն էջ 147—9):

ԲԱՐՁՐ ՀԱՅՔ, հին Հայաստանի առաջին նահանգը, որոյ սահմանքն էին արեւելքէն՝ Այրարատ, հարաւէն Չորրորդ Հայք, արեւմուտքէն՝ Փոքր Հայք և հիւսիսէն՝ Տայք: Նահանգս կոչուած է Բարձր Հայք երկրին բարձրութեան համար, և մեր հին աշխարհագիրը, ժամանակին կարծեաց համեմատ, կ'ըսէ. «Բարձր քան զամենայն երկիր», ա՛նոր համար Կասար երկրի, ևս կոչուած է: Կը կոչուի նաև Կուրժ երկրի որովհետեւ չորս կողմերը գետեր կ'արձակէ, ինչպէս կը զրէ նոյն աշխարհագիրը. «զի բլլսէ չորս գետս զօրեղս, զԵփրատ՝ յարեւմուտս, և զՄրախս՝ յարեւելս, զՊայլ՝ ի հարաւ, զԱկամսիս՝ որ է Վոճ՝ ի հիւսիս», վերջինս կը համապատասխանէ այժմեան Ճորոխ գետոյն, որ Պաղտանայոց սահմաններէն բլլսելով՝ կ'ընթանայ դէպի հիւսիս Պոնտոս: — Նահանգս մեր մատենագիրներէն շատ անգամ կը կոչուի Կարնոյ Աւխարհ, իր գլխաւոր գաւառի անուամբ:

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԲԱՐՁՐ ՀԱՅՈՑ

- | | |
|-------------------|---------------------|
| Հին Գաւառ | Նոր Վիճակի |
| Ա. Դարանաղի | Կամախ, Տուժիկ |
| Բ. Առիւծ | Կերճանիս, Շեռեան |
| Գ. Մնձուր (Մզուր) | Գուրուչայ, Մուշնուր |
| Դ. Եկեղեաց | Երզնկա, Եզնկա |

- Ե. Մանանազի
- Զ. Դերջան
- Է. Մպեր
- Ը. Շաղազումք
- Թ. Կարին

- Շուշար, Թէքման
- Դեր-Ջան
- Իսփիր
- Թորթում
- Էրզրուում, Օվաճըզ

Բնական զիրքով լեռնային էր. իր սահմանաց մէջ են Բիւրակնեան շղթայի բարձր գագաթները և հովիտները: Ունի նաև հարթածաւայ բարձրաւանդակներ կամ ընդարձակ դաշտեր, ինչպէս Կարնոյ, Երզնկայի Դերջանայ կամ Բագառիճոյ եւայլն: Մեր հին աշխարհագիրները երեք կամ չորս մեծամեծ լեռներ կը յատկացնեն նահանգիս, առանց յանուանէ յիշելու. բայց այլ և այլ գրոց մէջ անուամբ կը յիշուին հետեւեալ լեռները. Լերինգ Կարնոյ, Լերինգ Սպրիոյ, Լերինգ Դաքանաղեաց, Սեպուհ Լեառն, Սմբասայ Լերինգ, Պախրայ Լերինգ, եւայլն:

Բարձր Հայքի նշանաւոր գետերն են Եփրատ՝ արեւմտեան Ասիոյ առաջին գետը, և Երասխ՝ Հայաստանի սեփական գետը: Գետերէն զատ ունի նաև Կարնոյ ձուլը կամ յճածե ջրշեղջը, և շատ մը ջերմուկներ ու աղբիւրներ, մանաւանդ Կարնոյ գաւառի և Պինկէօլ լեռանց մէջ:

Նահանգս թէև ցրտին է՝ բայց շատ ալ բարեբեր է. ունի զանազան տեսակ հողեր և առատ քարացած աղ:

Քաղաքական տեսակէտով՝ այս նահանգս կ'երեւի թէ յաճախ խառնուեր է սահմանակից Փոքր Հայոց հետ, վասնզի այն կողմէն հաստատուն եւ բնական սահման ալ չունի: Երբեք չի յիշուիր նախարար ոք միապետ Բարձր Հայոց կամ Կարնոյ, մանաւանդ որ Վաղարշակ թագաւորը արեւմտից կողմնակալ զրած ըլլալով Անգեղ տան իշխանը, կը թուի որ նահանգիս մէկ մասը ի հնուց ինկած է Անգեղ տան իշխանաց ձեռք: Արշակունիներու ժամանակ, և գուցէ անոնցմէ ալ առաջ, նշանաւոր էին նահանգիս արեւմտեան հարաւային գաւառները Անահտայ զից պաշտամունքներով, որոնց վրայ աւելցան նաև Քրիստոսէ առաջ՝ հելլենական աստուածները և պաշտամունքները: Իսկ Գ. դարու սկիզբը, քրիստոնէական կրօնքը և եկեղեցիները շատ բարգաւաճեցին նոյն տեղերը՝ սրբուելով շարշարանօք, բնակութեամբ և ժառանգութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորչի և իր որդւոց ձեռակերաններու եւ նշխարներու մնացորդները կային տակաւին մինչև 1915: Յաջորդ դարու մէջ պայծառացան Կարնոյ կողմերը, շինութեամբ Թեոդուլոյիս քաղաքի և բնակութեամբ Արշակունիներու յետին շառաւիղաց, և անոնց հարստութեան վերնալէն վերջ,

այս կողմերը շատ տարիներ Յունաց բաժնի մասն եղան մինչև Հազարացւոց և Թուրքաց զօրանալը: Յունաց և Հռոմայեցւոց շատ զօրավարներ և կայսրներ անցած են այս նահանգէս Բ. դարէն սկսեալ: Միջին դարու մէջ ալ Թաթարաց եւ Թուրքաց ասպատակութիւններէն շատ աւերածութիւններ և արիւնահեղութիւններ եղած են. նոյն դէպքերը շարունակարար կրկնուած են նաև յաջորդ տարիներու մէջ մինչև մեր օրերը: (Էփրիկեան՝ «Բնագաւառիկ», էջ 409—410):

ԲԱՐՉՐՈՒՆԻ տե՛ս Սուլթան բեկ:
ԲԱՐՂԱՄ, հայարնակ զիւղ Տիվրիկի, լեռան մը կողին վրայ. 30 տուն բնակիչ ունէր. եկզ. Ս Աստուածածին:

ԲԱՐՄ կամ Բարբուղիս, հին աւան Ազրակ գաւառի մէջ ուր կատարուեցաւ Բարդուղիմէոս առաքեալ: Տե՛ս Արեւբանոս:

ԲԱՐՇԱՄ Բաբելացի, Արամ Հայկազնի օրով:
ԲԱՐՇՂ Վահեւունի, նիզակակից Վահանայ (480ին):

ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ Մարկոս Պ. վերապատուելի, ծնած է 1866ին Կեսարիա և իր նախնական կրթութիւնը առած է տեղւոյն Ամերիկեան Միսիոնարական դպրոցին մէջ, իսկ միջնակարգ կրթութիւնը Այնթապի Ամերիկեան Գոլէճին մէջ, որուն չրջանը աւարտած է 1887ին: 1889ին կ'երթայ Ամերիկա, ուր կը մտնէ Մէտիսոնի Աստուածարանական ձեմարանը, որմէ իր վկայականը կը ստանայ 1894ին և իբր մեթոտական պատուելի կը գործէ երկար տարիներ, քարոզելով Միացեալ Նահանգաց զանազան քաղաքներուն մէջ հաստատելով նոր եկեղեցիներ և կիրակնօրեայ դպրոցներ:

Իր ծերութեան օրերուն հանգստեան կոչուած էր, սակայն անիկա Ամերիկեան Ռըլիֆի կողմէ ատենաբանութիւններ ըրած է Հայոց համար եւ անոր գործին բերած է իր աշխատակցութիւնը: Մեռած է 11 Հոկտ. 1929ին: (Ալպոյանեան՝ «Հայ Կեսարիա» 2034):

ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ Միհրան, բժիշկ, ծնած է Կեսարիա 1874 Յուլիս 10ին: Իր նախնական կրթութիւնը ստացած է Կեսարիոյ ամերիկեան Միսիոնարական դպրոցը և միջնակարգ ուսումը՝ Արգեստ բարձրագոյն վարժարանը և Յիսուսեանց դպրոցը: 1888ին պահ մը ուսուցչութիւն ըրած է Տօթթ. Երէցեանի դպրոցը: 1881ին գացած է Ամերիկա, ուր յաճախած է Նիւ Ճըրջի Hackett's Townի Centennary Collegiate Institute մէկ տարի: 1892ին կը մտնէ Նիւ Եօքթի Համալսարանին Բժշկական Գոլէճը, ուրկէ կը վկայուի 1895ին:

Ընթացաւարտութենէն անմիջապէս յետոյ մէկ

աարի կը ծառայէ Alms Hense and Work House քաղաքային հիւանդանոցի մէջ, և յետոյ իր դարմանատունը կը բանայ իբր բժիշկ: Ասկայն անիկա իր առանձին գործուրը չբաւականանալով կը սկսի կառավարական և այլ պաշտօններու հետամուտ ըլլալ:

1896ին Տոքթ. Բարունակեան այցելու մորթարան կը կարգուէ նիւ Եորքի ձրի բուժարանի մորթի հիւանդութեանց բաժինին մէջ: 1898ին նոյն պաշտօնով կը փոխադրուի Եւենիվըրսիթի և Պէյվիլ Գոլէճի դարմանատունը, ուր այդ պաշտօնը կը վարէ 8 տարի և կը հրատարի 1906-ին: Այս ժամանակամիջոցին (1897—1906) Եուենիվըրսիթի և Պէյվիլի շրջանաւարտ կարգերուն կը դասախօսէ վերոյիշեալ մասնագիտութեան վրայ: Մտաւորապէս 4 տարի (1897—1902) Պէյվիլ հիւանդանոցին մորթի և վննեական ախտերու բաժինն այցելու հիւանդներու դարմանիչը եղած է:

1906ին նիւ Եորք քաղաքին հիւանդանոցին մէջ կը ծառայէ օգնական մորթարանի պաշտօնով և նոյն տարուան վերջերը արդէն իսկ կը գրաւէ իսկական դասախօսի բեմը նիւ Եորք Past Graduate բժշկական դպրոցին և հիւանդանոցին մէջ, միևնոյն ատեն ծառայելով Փրիսպիթերեան հիւանդանոցը:


1911ին Կուվըրնիերը հիւանդանոցին մորթային հիւանդութեանց բժիշկ կը կարգուի:

Տոքթ. Մինրան Բարունակեան իբր մասնագէտ մորթի և վննեական հիւանդութեանց, ոչ միայն վարիչն է այդ հիւանդութեանց ճիւղին՝ Պէյվիլ հիւանդանոցին մէջ, այլ նոյն ճիւղին համար խորհրդատու բժիշկն է նիւ Եորքի իտալական երկու հիւանդանոցներուն և Պէյանի Հիւանդանոցին, նիւպըրկի Սէյնթլուքս հիւանդանոցին, և նիւ Եորքի սատիկանութեան պատուոյ վերաբոյժ:

Տոքթ. Բարունակեան անգամ է բժշկական բազմաթիւ ընկերութեանց, ինչպէս է նիւ Եորքի Բաունիթի բժշկական ընկերութեան, Ամերիկեան Բժշկական Ընկերութեան, Մէյնէթընի Մորթարանական Ընկերութեան, Պատուոյ անդամ է նիւ Եորքի Բժշկական Ակադեմիային եւ Մորթարանական Համաժողովին: Եղած է նախագահը նիւ Եորքի բժշկական Ակադեմիայի մորթի ճիւղին, երկու անգամ նախագահ՝ Մէյնէթընի Մորթարանական Ընկերութեան Ուենի Միջազգային անվիճելի համբաւ և հեղինակութիւն:

Երեք անգամ նախագահ եղած է նաև հայկական Բժշկական Միութեան, որուն հիմա (1936)

պատուոյ նախագահն է: Տոքթ. Բարունակեան խառնուած է Ամերիկեան հանրային կեանքին և նիւ Եորքի քաղաքացի հանգուցեալ Բէյթթըն Կատըրտի առաջնորդութեամբ կազմած է նիւ Եորքի առաջին Հայ Հանրապետական Ակումբը (Armenian Republican Club): Կը պատկանի վաղուց Ազատ Որինադրաց կազմակերպութեան և ունի բարձրագոյն աստիճանը իբր մեծ-վարպետ:



Միմիայն ինքնօգնութեամբ ու յարատեւ և աննկուն ճիւղերով ձեռք բերուած այս դիրքը պատուաբեր է որքան իր անձին, նոյնքան իր ազգին և իր ծննդավային (Ալայոյանեան՝ «Հայ Կեսարիա» 2010—2):

ԲԱՐՁՆԻՍ. Երկու այլազգարնակ գիւղ Այրարատայ ճակատք գո.ի մէջ:

ԲԱՐՁԻ ԳԻՒԼ Այրարատայ Շարուր գո.ի, 1900-ին 20 տ. այլազգի բնակիչ ունէր:

ԲԱՐՍ կամ Փարս. սակաւարնակ գղ. Խիզան վիճակի:

ԲԱՐՍԵՂ, Ա. կթ. Թնեցի, որդի Վասակի և Գրիգոր Մագիստրոսի դստեր, քեռորդի Գրիգոր Վկայասէրի և եղբայր Գրիգոր իշխանի, Հասանի և Ապլջահայի, ծնած ժԱ. դարու սկիզբները: Գրիգոր Վկայասէր 1074ին Բարսեղը Անիի մէջ իբրև տեղապահ գրաւ, իսկ 1082ին, Արեւելեան Հայոց խնդրանքին տեղի տալով՝ հրաման ըրաւ որ Աղուանից Ստեփանոս կթգէն՝ Բարսեղ կաթողիկոս ձեռնադրուի և նստի Անիի մէջ, Չեռնադրութիւնը մեծ շուքով տեղի ունեցաւ Հաղարատայ վանքին մէջ: Այդ ատենները պարսիկք Հայաստանի տիրելով սկսան նեղել ժողովուրդը և եկեղեցականները՝ հարկապահանջութեամբ: Բարսեղ 1090ին եպիսկոպոսաց, քահանայից եւ իշխանաց հետ Պարսկաստան գնաց, Մելիք Շահին շատ մը նուէր տանելով և խնդրեց որ հարկերը նուազեցնէ և կաթողիկոսութեան իշխանութիւնը մէկ անձի վրայ կեդրոնացնէ որպէսզի Հայոց ազգին երկպառակութիւնը վերնայ: Մելիք Շահ առանձին հրովարտակ հանեց ու եկեղեցիները հարկէ զերծ կացոյց, ժողովրդեան տուրքերը նուազեցուց և Բարսեղը հրամանատար ու իշ-

ԲԱՐՈՒՆԱԿԵԱՆ ՄԻՋՐԱՆ

խան կարգեց միւս կաթողիկոսներուն վրայ եւ թոյլ տուաւ իրեն առջև խայ կրեր

Բարսեղ, յաջորդ տարին, 1091ին՝ Ջահան գու. ի նոնի քաղաքն գնաց, հակաթոռ Թէոդորոս կթղ. ի քօղն ու հայրապետական գաւազանը եւ Պետրոս Գետադարձէն մնացած գետարգել Ս. Նշանը առնելով՝ գահընկէց ըրաւ զինքը: Ասկից Եղեսիա երթալով՝ իրեն կոչեց Վարազայ վանքը նստող տէր Պօղոսը, հրամայելով որ իր հետ բերէ Վարազայ Ս. խաչը եւ Աստուածածնայ հրաշարի պատկերը: Երբ Եղեսիոյ մօտեցաւ Պօղոս՝ Բարսեղ եկեղեցական ուխտիւ ընդ պառջ գնաց եւ փառաբանական հրգերով զանոնք եկեղեցւոյն մէջ գրաւ: Եղեսիոյ մէջ՝ շուրջ տարի մը մնալէ ետք՝ դէպի Անի մեկնեցաւ, այցելեց Կարմիր վանքը, ուր ամբաստանուած երիտասարդ Ստեփանոս վրդ. ի քարոզը լսելէ ետք՝ զայն ողջագուրեց եւ իր սակեայ գաւազանն ու մատանին տալով աւնոր՝ յաջորդ օրը, եպիսկեպոս ձգուողրեց Շուղր անապատի Կարմիր վանքին առաջնորդ կարգելով (1093):

1104ին Բարսեղ կրկին նեղուելով Պարսիկներէն՝ Եղեսիա անցաւ, որոյ իշխանը Բաղտին, ազգաւ լատին, պատիւներով ընդունեց Հայոց հայրապետը եւ իր տրամադրութեան ներքև գրաւ շատ մը վայրեր, սրպէսզի իր հաճած տեղը նստի: Այդ տտեն սակայն Աղուանից երկրէն պատղամաւորներ եկան խնդրելու որ իրենց նոր վախճանած Ստեփանոս կթղ. ին տեղ ուրիշ մը ձեռնադրէ: Յետոյ զարձաւ Անի ու կրկին Միջագետք. իսկ Գրիգոր Վկայասէրի մահէն ետք նըստաւ Շուղր անապատին մէջ, ուր Կարմիր վանքին մէջ կ'ուսանէին իր ազգական Ապիրատի որդիքը Գրիգոր եւ Ներսէս: 1113ին Բարսեղ փափագեցաւ Երուսաղէմ ուխտի երթալ. սակայն Վարդահերի աւանին մէջ երբ քահանայից բազմութեամբ քանիքին վրայ երեկոյեան պաշտամունքը կը կատարէին. տանիքը կործանեցաւ եւ հայրապետին կողմ քարի մը զարնուելով կտորեցաւ քանի մը օր ետք՝ վախճանեցաւ:

Տակաւին չձեռած փափագեցաւ Սեաւ լեռը փոխադրուիլ, ուր իրեն կանչեց եպիսկոպոսներ, վարդապետներ եւ իշխաններ եւ ասոնց հաւանութեամբ Գրիգորիսի—Ներսէս Շնորհալուոյ եղբօր—տուաւ կաթողիկոսական քօղն ու գաւազանը, պատու իրելով որ զինքը կաթողիկոս ձեռնադրեն:

Բարսեղ հոգին աւանդեց 1113 Նոյ. 13ին (ըստ Վարդանայ՝ Վարդապետին) եւ թաղուեցաւ Շուղրի մէջ, կաթողիկոսութիւն ընելով Գրիգոր Վկայասէրի հետ 24 տարի եւ առանձինն 8 տարի, ընդ

ամէնը 31 տարի: (Ժամանակակից պատմիչ՝ Մասթոս Ուռնայեցի, Վարդան Բարձրաբերդցի եւայլն):

ԲԱՐՍԵՂ Բ. կթղ., Աթոռակից 1549ին՝ Ստեփանոս Ե. Սարմաստեցի կթղ. ին, 1557, 1558, 1562, 1563 թուին գրուած ձեռագրեաց յիշատակագիրք Բարսեղը յը յիշեն իրը կթղ. էջմիածնի, 1567ի յիշատակագիր մըն ալ կը գրէ «ի կաթողիկոսութեան Բարսղի որ յայսմ ամի վախճանեցաւ»:

ԲԱՐՍԵՂ ՊԵՏՐՈՍ Գ. կթղ. Զմմառու տե՛ս Ալֆաւեան Բարսեղ Պետրոս Գ.

ԲԱՐՍԵՂ, կամ Բասիլիոս եպ. Անուոյ, եղբորորդի Բարսեղ կթղ. ի որդի Գրիգորի, 1178ին կը յիշուի. սա այդ թուականին Հռոմկլայի ժողովին ներկայ կ'ըլլայ եւ յաջորդ տարին ինքնազուլի կաթողիկոս կը նստի Անիի մէջ: 1195ին երբ Կիլիկիոյ մէջ նոր կաթողիկոս պիտի ընտրէին՝ հիւսիսային հայ կղերը ամէն ջանք ի գործ գրաւ Բարսեղը ընդհ. կաթողիկոս ընտրել տալու. երբ չյաջողեցան եւ Գրիգոր Զ. Ապիրատ կթղ. ընտրուեցաւ՝ Գրիգոր Տուաէորդուոյ կուսակիցները Բարսեղը ճանչցան իրենց կաթողիկոս, մինչև անոր մահը 1204:

ԲԱՐՍԵՂ, կամ Բասիլիոս արքեպ. առաջնորդ Դրազարկ վանքին, եղբ. Հեթում թգ. ի կը յիշուի 1220ի. եւ 1241ի յիշատակարանաց մէջ:

ԲԱՐՍԵՂ, եպ. 1336ին տտենադպիր Յակոբ կթղ. ին եւ յետոյ Միթիթար կթղ. ին Սսի ժողովին մէջ (1342ին):

ԲԱՐՍԵՂ, եպ. Իկոնիոյ 1336ին Յակոբ կթղ. էն քննիչ կը զրկուի Կանչոյ աւանը եւ 1342ին Սսի ժողովին ներկայ կ'ըլլայ:

ԲԱՐՍԵՂ, եպ. Կապնոյ, 1309ի Սսի ժողովին մէջ կը յիշուի:

ԲԱՐՍԵՂ, եպ. Հայոց 787ին եթններորդ ընդհանուր ժողովին մէջ որ Նիկիա կը գումարուի ընդդէմ պատկերամարտից՝ Բարսեղ Հայ եպիսկոպոս մըն ալ կը յիշեն Յոյն պատմիչները այդ ժողովին մէջ: (Չամչեան՝ Բ. էջ 423):

ԲԱՐՍԵՂ, եպ. Մոկաց՝ Վարդանանց օրով (451):

ԲԱՐՍԵՂ, եպ. Սսոյ, 1342ին Սսոյ մէջ գումարուած ժողովին ներկայ կ'ըլլայ:

ԲԱՐՍԵՂ, եղբ. Առաքել Սիւնեցւոյ քեռորդի Գրիգոր Տաթևացւոյ, զոր կը յիշէ Գարողգրքի յիշատակարանին մէջ: Թաւրիզի ձեռագրի մը մէջ ալ կը յիշուի իրրև անօրէններէ սպաննուած: (Տե՛ս Սիւնեցի Առաքել):

ԲԱՐՍԵՂ, եպ. թոռն Մեծին Պատւոյ, առաջնորդ Այրիվանուց, յաջորդ Ստեփանոս եպ. ին, կը

յիշուելի 1493ի յիշատակարանի մը մէջ:

ԲԱՐՍԵՂ, եպ. և առաջնորդ Սանահին վանքին, կը յիշուելի 1497ին («Հանդէս Ամսօրեայ» 1887 եջ 55):

ԲԱՐՍԵՂ, արքեպ. և առաջնորդ Քրթմանակայ վանքին, կը յիշուելի 1515ին գրուած Մաշտոցի մը յիշատակարանին մէջ, որուն ստացողն է ինքը Բարսեղ արքեպ.:

ԲԱՐՍԵՂ, առաջնորդ Մշոյ Ս. Ղազարու վանքին, ձառնարի մը յիշատակարանին մէջ կ'ըսուելի թէ ասոր օրով 1553ին՝ շէն ու պայծառ էր ուխտս. «բազում թեմ և վիճակ կայր վանիցս Մատին Առաքեալ ևս ընդ մերով իշխանութեամբ էր»: Բարսեղ կը վախճանի 1573ին:

ԲԱՐՍԵՂ, ձՈՆ վրդ. և առաջնորդ Շիրակայ Գպրեվանքին, ծաղկած է ներսէս Շինող կաթողիկոսի օրով: 645ի Յունիսի մէջ գումարուած ժողովէն ետք ներսէս կաթողիկոս Բարսղի յանձնեց որպէսզի «պիտանի» շարականներէն դուրս հանէ «անպիտանները: ձոնի ընտրած շարականները, ինչպէս կը գրէ Վարդան պատմագիր ձոնրնիս կոչուեցան: Հ. Չամչեան ասոր կ'ընծայէ Մարկոսի աւետարանին մեկնութիւնը, որուն բուն հեղինակն է Բարսեղ Մաշկեւորցին: (Տե՛ս վարը):

ԲԱՐՍԵՂ, Մաշկեւորցի, մատենագիր-մեկնիչ, Կիլիկիոյ Մաշկ կամ Մաշկեւոր վանքին միաբան, սա Հայրապետի առաջնորդութեան օրով Մարկոսի Աւետարանին մեկնութիւնը գրած է 1325ին: Շփոթմամբ անշուշտ Բարսեղ Մաշկեւորցին ալ որ ապրած է ԺԴ դարուն մէջ՝ ձՈՆ կոչուած է և իր մեկնութիւնը հրատարակողք (1826ին)՝ գրքին ճակատին վրայ գրած են — «Մեկնութիւն սրբոյ աւետարանի ուր բոս Մարկոսի: Արարեալ երանելի Բարսղի շնորհալի վարդապետի ձոն կոչեցելոյ՝ ըստ մակարական անուանն, լուսաւոր մտօք և իմաստայի յորդորակօք, յօգուտ հասարակութեան մանկանց Սիռլիի՝ եկեղեցականաց և աշխարհականոց՝ ամենայն չափու և հասակի: Հատոր երկրորդ, տպագրեալ հրամանաւ ամենապատիւ և վեհափառ պատրիարքի Կոստանդնուպոլսոյ տեառն Կարապետի երանաշնորհ արքեպիսկոպոսի Արղեամբ գերապատիւ և աղոնուչուք Մանտեսի Աբրահամ աստուածասէր և մեծաճաւատ հոգելոյս ամիրայի Թէրզեանց Ակնեցւոյ: Յիւրումն իսկ սեփական տպարանի: Ի Հասան փաշա խանն: 1826ի Կոստանդնուպոլիս ՌՄՀԵ: Աշխատասիրութեամբ Տ. Անդրէաս վ. Նարինեան Ակնեցւոյ»: Գրքին հրատարակիչը Նարինեան վրդ. կը հրատարակէ նաև Մաշկեւորցի Բարսեղ վրդ.ի յիշատակարանը, որուն սա տողերը երբեք չեն կարծել տալ թէ սա պարզ ըն-

դորինակող մ'եղած է է. դարու Բարսեղ ձոնի դործին, այլ կը հաստատեն թէ ինքն է անոր հեղինակը:

«Շնորհօք եւ պորձուրեամբն Ասուծոյ Հօր սկիզբն արարի գոյս, եւ ձեռնադրեամբ եւ օգնական լինելովն Քրիստոսի Յիսուսի որդոյ Ասուծոյ՝ ի գլուխ հանեալ կասարեցի եւ լոկանուն վարդապետս ԲԱՐՍԵՂ, զմեկնութիւն սրբոյ աւետարանի՝ ուր բոս Մարկոսի, որչափ յաջողեաց եւ զօրացոյց՝ սալով մեզ զմիսս եւ զբանս Հոգին սուրբ Ասուածն նւարիս... Արդ եղեւ վնար այս մեկնութեան՝ ի քաղաւորութեանն Լեւոնի, որդոյ Օցնի... ի վանս՝ ուր կոչի Մաշկու. ի հայրապետութեանն Տեառն Կոստանդեայ կրդ.ի Գրազարկոյն... եւ եր ի ժամանակիս յայմիկ վերակացու եւ առաջնորդ սուրբ ուխտիս՝ Տեր Հայրապետ Էպիսկոպոսի... եւ ի գրութեանս՝ եր քիւն Հայոց՝ ՉՀԳ (=1325):

ԲԱՐՍԵՂ, եպ. որդի պր. Վասակի 1572ին Մաշտոց մը կազմել կու տայ:

ԲԱՐՍԵՂ, եպ. Գոթեցի խնդրանօք Մելիտոնիքաք. 1489ին գրուած Յայմաւուրքը 1588ին կը կազմէ:

ԲԱՐՍԵՂ, եպ. Բաղիւսեցի կը կոչուել նաև Ամսեցի կամ Սասնեցի, առաջնորդ Մշոյ Առաքելոց վանքին, ծնած է 1574ին Մարմանդ (Վասպուրական), Ոսկեսարի և էյոյոյի, և աշակերտած Սրապիոն Առհայեցիի: 1597ին արդէն զինքը առաջնորդ կը գտնենք Մշոյ Ս. Ղազարու (նոյնն է Առաքելոց) վանքին: Ամիգի մէջ Սրապիոն նորընտիր կ'իջ.ը եպիսկոպոս կը ձեռնադրէ 30 տարու Բարսեղ վրդ.ը: 1607ին Բարսեղ Ս. Առաքելոց վանքին մատենադարանին մէջ ցեցակեր Վարժ Հարանց մը կը գտնէ և իր վիճակը (Համեղ) տանելով ընդօրինակել կու տայ ի վայելումն Ապտուլ եղբոր, իր մահէն ետք Առաքելոց վանքը զրկելու պայմանով: 1608ին Բարսեղ Ս. Առաքելոց վանքին և Ամթայ առաջնորդ աւետարան մը և սկիհ մը կը նուիրէ իր ծննդավայր Մարմանդ գիւղի Ս. Գէորդ եկեղեցոյն ի յիշատակ իր ծընողաց և եղբոր Ապտուլին: Յաջորդ տարին Ս. Ղազարու վանքը նորոգելուն պատճառաւ պարտքի տակ կ'իյնայ: 1610ին Ամթայ մէջ Սաղմոսամեկնիչը կը նորոգէ և Առաքելոց վանքը կը զրկէ, 1615ին ալ Մակարայեցւոց գիրքը կը զրկէ հոն: Մինչև 1613 իրեն կը հանդիպինք յիշատակարանաց մէջ:

Բարսեղ ԺԷ դարու նշանաւոր վարդապետներէն եղած է, հազուադէպօրէն նա միանգամայն Ամղայ և Տարօնի Ս. Ղազարու (Առաքելոց) վանքին առաջնորդ եղած է: Իր մասին կը գրէ Աղաւնունի եպ. (Մխարանի եջ 50) հետեւեալը:

«Բարսեղ վրդ. Բաղիշեցին, որ կը կոչուի նաև Ամղեցի կամ Սասնեցի, աշակերտ Սրապիոն վրդ. և յաջորդը, 1608ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, որուն պարտուց վճարման համար, մեծ հոգածութիւն կ'ունենայ Արահու ըսուած Վարազեցի Մարտիրոս վրդ.ին հետ: Բարսեղ վրդ. ուսուցիչն էր Վանեցի Չաքարիա վրդ.ին: Գրիգոր վրդ. Դարանաղցին իր ժամանակագրութեան մէջ (էջ 390) Բաղիշեցի Բարսեղ վրդ.ը կը կոչէ ամենագովելի փիլիսոփայ, ասոր յորդորումով Սոճա Կարապետ Բաղիշեցի և Վանեցի խօսաներ ևս առատ նուէրներով Ս. Յակոբի պարտքը կը վճարեն (Սաւալան էջ 667): Ան Ս. Յակոբի վանքին կը նուիրէ Աստուածաշունչ մը, որուն յիշատակարանն կը հասկցուի թէ Ամգայ արքեպ. Բարսեղ վրդ. այս ձեռագիրը Ռէկա (=1622) թուին սկսած է և վերջացուցած է 9 ամիսէն: ՌՁԱ (= 1632) թուին կրկին անգամ Երուսաղէմ այցելած ժամանակ հետը կը բերէ զայն, և յիշատակ կու տայ Ս. Յարութեան և Ս. Յակոբի, Գրիգոր հայրապետի առաջնորդութեան ժամանակ: Բարսեղ վրդ. նոյն ձեռագրին յիշատակարաններէն մէկուն մէջ իր մասին կու տայ հետեւեալ տեղեկութիւնները. «Ես Բարսեղ նուաստ անուամբ և եթ վարդապետ, սեփական կայիւ Արծրունի, ի գեղջէն Մարմանաու, վերստեսուչ վանացն Ղազարու յորջորջեալ Ս. Առաքեալք, և առաջնորդ մայրաքաղաքին Համթայ, յամի Ռ. Կորոզի, ՁԱ թուին (=1632) եկի ի Ս. և աստուածակոխ քաղաքս Երուսաղէմ. և բերեալ եղի զսուրբ աստուածային Աստուածաշունչ զիրքս յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ի Ս. Յակոբ և ի Ս. Յարութիւն, յորում ժամանակի էր աթոռակալ և Առաջնորդ տէր Գրիգոր Արքեպ. Ս. Երուսաղէմայ: Ուրիշ մանրամասնութեանց համար տեսնել նոյն ձեռագրին յիշատակարանը: Չեռագրին գրիչն է Միհաս, տեղը՝ Համիթ, ստացողը՝ սոյն Բարսեղ արքեպիսկոպոսը: Չեռագիր Տոնապատմութի մը յիշատակարանին համաձայն, Բարսեղ վրդ. ինքն ըլլալով անոր ստացողը՝ կը նորոգէ զայն 1630ին (էջմ. Յուլյակ ք. 295):

Բարսեղ արքեպ.ին հայրն է՝ Ապուհար (տե՛ս վերը Ոսկեհար) մայրը Եօշիկ (վերը էլջոյ), աւագ եղբայրը՝ Ալյուլ և որ է պատճառ ուսման իւրոյ» և 47 տարի է ձգնաւոր... Բարսեղ վրդ. իր այս ուխտաւորութեան առթիւ, Յ. Յակոբի վանքին յիշատակ կու տայ նաև իր սեփական մագաղաթ ձեռագիր աւետարանը, որ ընդօրինակուած է Ա-

ռաքել արեղայի ձեռքով Ամիղի մէջ 1634ին (Քորոս Աղբար Բ. էջ 431):

1632ին կարելի չէ 1634ին ընդօրինակուած ձեռագիր մը նուիրել. կամ կանուխ գրուած է ձեռագիրը և կամ՝ 1632էն ետք Երուսաղէմ զրկած: Բարսեղ 1630ին Տօնսպատճառ մը նուիրած է Մեոյ Առաքելոց վանքին ի յիշատակ «Վարժապետի իւրոյ Սրապիոնի, որ եղև կարողիկոս Գրիգոր անուամբ». այդ ձեռագիրը կ'երեւի էջմիածին տարուած է յետոյ: Բարսեղ արքեպ. Բաղիշեցի ալ կը կոչուի ինչպէս 1622ի յիշատակարանէ մը կը տեղեկանանք:

ԲԱՐՍԵՂ, վրդ. Բաղիշեցի, բարուն, ուրիշ մըն է որ ապրած է վերինէն աւելի առաջ, այս ալնշանաւոր անձ մը եղած է, «Աստուածարան» մը և վերանորոգողը Ամրատու վանքին: 1594ին զինքը Հիդան կամ Խիզան կը գտնենք, իր աշակերտներն են Յովհաննէս և Հայրապետ Մելքիսէղ վրդ. Վժանցի և ուրիշներ: Ես նոյն իսկ կը կարծեմ որ 1608ին Երուսաղէմ այցելողը այս Բաղիշեցին է. ընկերակցութեամբ Չաքարիա Վանեցի վրդ.ին, որովհետեւ այդ թուին արդէն վերի Բարսեղ եպ.ը 34 տարու էր, և հաւանական չէ որ ան արդէն «վարդապետ» աշակերտ մ'ունենայ: Այս Բարսեղն է որ 1608ին Պողոսի թուղթերը, զրուած Չաքարիայէն՝ նուէր կը ստանայ Փաշաճանէն (Յիւս.): 1617ի յիշատակարանի մը համաձայն Բարսեղ վրդ. Բաղիշեցի ի հիմանէ կը նորոգէ Ս. Յովհաննու, Ս. Աստուածածնի և Ս. Կարապետի տաճարները և կը թաղուի «առ զրան Ս. տաճարացս». ըսել է այդ թուականին արդէն վախճանած էր առանց լրացնելու Գիրք Լուծմանցի ընդօրինակութիւնը, զոր իր աշակերտը Յովհան լրացնել կու տայ Վարդան քն. Նիզանցիի ձեռամբ:

Խնդիր է թէ ո՛ւր թաղուած է Վարդան Բաղիշեցին. իմ կարծիքով Բաղէշի Ամրատու վանքին մէջ, որոնց եկեղեցիներն էին Ս. Յովհաննէս-Կարապետ և Ս. Աստուածածին. և ի պատմութենէ գիտենք որ (ըստ 1653ի յիշատակագրքի մը) վանքիս հիմնադիրն եղած է Բարսեղ վրդ. Բաղիշեցին: (Տե՛ս Ամբօլու վանք և Բաղէշ):

Բարսեղ վրդ. Վանայ Գաւառ գիւղին մէջ ծնած է և վախճանած 1615ին ըստ Առաքել Դավթիթեցիին, Բաղիշեցի կոչուած է հոն ապրելուն և գործելուն համար:

ԲԱՐՍԵՂ, եպ. Գանձակի կը յիշուի 1633ին՝ յիշատակարանի մը մէջ:

ԲԱՐՍԵՂ, եպ., առաջնորդ Խորանաշատ վանքին, կը յիշուի 1639ի յիշատակարանի մը մէջ:

ԲԱՐՍԵՂ, եպ., որդի Թուժանի, 1679ին Թիֆլիսի ձեռագիր աւետարանի մը մէջ կը յուշագրէ: Նոյնը կը համարեմ այն Բարսեղ Արքեպի հետ (որդի Թէմուրի (սպ.) որ 1692ին ձեռագիր մը նորոգել կու տայ):

ԲԱՐՍԵՂ, Արքեպ. Կեսարացի, աղղեցիկ և եռանդուն անձ, 1827ի աշնան՝ էջմիածնէն Թավրիզ կ'երթայ Ատրպատականի Առաջնորդարանը Մակուի Ս. Թաղէի վանքէն Դավրիզ փոխադրելու համար, չի յաջողիր սակայն և նոյն տարւոյ նոյեմբերին կրկին էջմիածին կը դառնայ: (Անեմեան Հայկ):

ԲԱՐՍԵՂ, (տէր) Հայրապետ Տիւրիկի Վաւղըս վանքին (1469ին):

ԲԱՐՍԵՂ, (տէր), առաջնորդ Խոջավանքին 1229-53. սա կը թուի ըլլալ միանգամայն Անիի Արքեպիսկոպոսը:

ԲԱՐՍԵՂ, առաջնորդ Կեչառուաց վանքին 1059ին:

ԲԱՐՍԵՂ, կրօնաւոր, աշկ. Յովհաննէսի, կազմող աւետարանի՝ 1033ին:

ԲԱՐՍԵՂ, վրդ: Աւանցի, 1594ին Վարագայ վանքին մէջ իրրև «տարեգիր» կը յիշուի. սա քեռորդին էր և աշակերտ անուանի «Ջալալ» Կարապետ վրդ. Արարքցիի (Հանդես Ամս. 1910 էջ 65-79):

ԲԱՐՍԵՂ, վրդ. Աթիսցի, 1611ին կը յիշուի իրր ստացող Աւետ.ի և պռաջնորդ Աթթախի Ս. Առաքելոց վանքին:

ԲԱՐՍԵՂ, առաջնորդ Վարանդայի Ս. Գրիգորի վանքին, 1664ին ստացող Մովսէս Կաղանկատուացւոյ ձեռագրին:

ԲԱՐՍԵՂ, աստուածարան վրդ. առաջնորդ Ս. Թոմա վանքի և Գողթն գ.ի՝ 1730ին:

ԲԱՐՍԵՂ, Գրիչներ, — արեղայ 1495ին Այրաբատեան գ.ի Ուրծ գղ.ի Վանգալի? ուխտին մէջ Սաղմոս մը կ'ընդօրինակէ: — քճ. աշկ. Ազարիայի, 1498ին Ասպիսականի մէջ Աւետ. մը կ'ընդօրինակէ: — քճ. որդի Աւագի, 1630, 1637, 1638ին գրիչի Թուժարզա—գրիչ 1637ին ի Կեսարիա: — Կրօնաւոր 1637, 1655, 1663, 1665ին գրիչ ի Շօշ = Ն. Ջուղա: — քճ. գրիչ Գանձակի Հերցանկիս գղ.ին մէջ՝ 1683ին: — քճ. Ս. Գրիգոր քաջ նկարողի, նորոգող և ծաղկող Թաղէի վանքին մէջ 1681 և 1614ին:

ԲԱՐՍԵՂ, (տէր), ըստ Շիրակ գ.ի Յարդիկ գղ.ի Ստեփանոս եկեղեցւոյ վրայ գտնուած արձանագրութեան՝ կը գնէ վանքս անօրէններէն և կը վերանորոգէ: («Բազմավեպ» 1930 էջ 403):

ԲԱՐՍԵՂ, կամ Բասիլիոս Ս. Կեսարացի: հայրապետ, որդի Բարսեղ Պոնտացւոյ, ծնած Դ. դարու

սկիզբը, զարգացած գիտութեամբ Աթէնքի մէջ Գրիգոր Աստուածարան նազիանզացւոյ հետ եւ յետոյ Եգիպտոս երթալով՝ ուսումնասիրած է անապատականներու կեանքը անոնց մէջ ապրելով միայնակեաց վարքով: Աստուածային իմաստութեամբ լցուած՝ իր Եւուղոս Աթենացի ուսուցիչը և շատ մը նշանաւոր Հելլէնացիներ Գրիստոսի հաւատքին դարձուց: Իր ամբարած սքանչելի գիտութեան և առաքինութեան համար Կեսարիոյ եպիսկոպոս ընտրուեցաւ. համբաւաւոր եղաւ իր քարոզներով, զրութիւններով, մանաւանդ Արիանոսաց ղէմ մաքառելով. այնպէս որ Վաղէս կայսրը արիանոսական ըլլալով հանդերձ իրեն պատարագին ներկայ կ'ըլլար Ս. Բարսեղ դրած է ճառեր, մեկնութիւններ, պատարագի աղօթքներ. ծաղկեցուցած է կրօնաւորական դասերը՝ կրօնական կարգերով և վախճանեցաւ 379ին Մեր եկեղեցին Յունուարին կը կատարէ Ս. Բարսղի աօնը:

Շատեր կը համարին քե Ս. Բարսեղ մօր կողմանէ հայ եղած է: Մեր նախնիք Ե. դարու մէջ Ս. Բարսղի շատ մը գործեր ի հայ քարգմանած են, որոնցմէ նշանաւորն է ճառք վասն վեցօրեայ արարչութեան, զոր Հ. Արսէն Բագրատունի 1830ին վեցեկոյ Ս. Ղազարու սպարանէն ի լոյս բնծայեց: Նորայ Բիւզանդացի Հայկական Բառաքննութեան գործին մէջ էջ 61—9. քննած է այս գրքին շատ մը բառեր: Հ. Արսէն Սուրբեան վեցեկոյ Մխիթարեան վարդապետը գրած է «Ս. Բարսեղ եւ իր երկասիրութիւնք», իսկ Պոլիս հրատարակուող Պատկեր ամսաթերթին մէջ 1893—4 քիւետու մէջ երկար յօդուածաւարով ուսումնասիրութիւն մը կայ. «Ակնարկ Ս. Բարսղի վեցօրեայ վրայ»:

ԲԱՐՍԵՂ, վանահայր Խլածոր (Բարձր Հայքի մէջ) վանքի առաջնորդ Ժ. դարուն:

ԲԱՐՍԵՂ, վանահայր Սեւանայ վանքին, ապրած է Ժի դարուն. սա նշանաւոր եղած է իր ըրած նորոգութիւններով: 1660ին, ինչպէս կը գրէ Առաքել Դավրիթեցի արկածով կը մեռնի:

ԲԱՐՍԵՂ, վրդ. Մարաշցի կամ Քեսունցի, խոստովանահայր Պաղատուն կոմսի որ 1144ին այլազգեաց ղէմ մղած կոիւրի մը մէջ մեռաւ եւ Բարսեղ ողբերգական ճառ մը գրեց: Բարսեղ որ այդ առեւնի իմաստուն և սրբակրօն մէկն էր՝ 1162ին վախճանեցաւ ե՛թաղուեցաւ Դրազարկի վանքին մէջ:

ԲԱՐՍԵՂ, քահանայ, ղեսպան Հեթում թգ.ին, սա՞ 1252ին հայ արքային նամակը անձամբ Մանգոյ Խանին տարաւ:


ԲԱՐՍԵՂ, «արքունի նկարիչ» ծնած Կեսարիա

ժը զարու սկիզբները կամ ժե.ի վերջերը, աշակերտ Պաղտասար դպիրին, Սուլթան Ահմէտ Գ.ի (1703—1736) նկարին եղած է, 1760ին տակաւին կ'ապրէր: (Ալպոյանեան «Հայ կեսարիա»):

ԲԱՐՍԵՂ, Բիւզանդահայ կայսրներ, տե՛ս Վասիլ: ԲԱՐՍԵՂԱՆՅ ԱՆԱՊԱՏ, Կիլիկիոյ Սեաւ լեռան վանքերէն մին: 1114 թուին Պաշ Գիւտի կիրակի օրը եկեղեցորհնէքի ժամանակ այս տեղ պատահեր է մեծ երկաշարժ և եկեղեցին կործանուելով տակը մնացեր են հայ կրօնաւորներ և երկու վարդապետք:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Ա. 1937ին Երևանի Ժիւրիին մըրցանակը կը շահի իր գրած Կոմօ թատերախաղին համար:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Դլս. Ա. խմբագիր Արփի «Հայ ընտանիքին պարբերականը» ամսաթերթին, որ Ալիստոնի մէջ խմբագրեց 1932 է ն մինչև 1936 Դեկտ. թէ՛ արտաքինով և թէ՛ բովանդակութեամբ առաջինն է իրրե պատանեկան և բնտանեկան թերթի Կենսագրականը տե՛ս ՅԱԻԵՆՈՒՄ:



Դլս. Ա. Բարսեղեան

ԲԱՐՍԵՂԵԱՆ Արուսեակ, 1931ին Սիմմընսի (Մ. Ն.) Կանանց Գոյնէն «Գիտութեան Պատկաւորի» տիտղոսով շքանաւարտ կ'ըլլայ:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Բարուակ, Պոստահայ գրող, 1897ին Պոլսոյ մէջ հրատարակած է Մըսիս ձայնքերթուածներ, 64 էջ.— Դիցաբանութիւն կամ Դիցակիտի հաւատարեաց, տպ. 1898ին Կ. Պոլիս, էջ 103: Առաջին ընթերցարան տպ. անդ էջ 63:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Բարսեղ Ա. 1910—1913 (27 համար) Պոլիս լոյս տեսնող Շող ժողովրդական եւ ուսանողական հանդէսին (ամսաթերթ) տնօրէն խմբագիր եղած է:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Գեղամ, գրագէտ, բանաստեղծ, ծնած է Պոլիս 1883ին: Նախնական կրթութիւնը կը ստանայ Կէտիկ փաշայի Մեսրոպեան վարժարանին մէջ: Տակաւին նախակրթարանի աշակերտ, մասնաւոր հակում ցոյց կու տայ դէպի գրականութիւն: Նախակրթարան աւարտելէ վերջ կը լածահէ Պէդճեան Մայր վարժարանն և անկէ ալ կ'անցնի Կեղրոնական վարժարանը, ուր կը մնայ մինչև 1896: Այնուհետև ինքնաշխատութեամբ

կը ճոխացնէ իր մտային պաշարը: 16 տարեկանին կը գրէ «Սուրահանդակ»ին մէջ: Աշխատակցած է «Մանգուլէի Էֆքեաթ»ին, «Բիւզանդիոն»ին. «Ազատամարտ»ին, Յիլիպէի «Թագմիկ»ին՝ վարագրուս վանագն ստորագրու թեամբ, «Ծաղիկ»ին: 1908ին Շաւարշ Միսաքեանի և Վ. Թաթուլի հետ հիմնած է «Ազգակ» գրական շաբաթաթերթը: 1910ին կ'անցնի արտասահման: Ութ



ԴԱՂԱՍ ԲԱՐՍԵՂԵԱՆ

ամիս Բարիդի մէջ մնալով կը հետևի Ecole des Hautes Etudes Socialesի դասընթացներուն Պոլիս վերադառնալով 1914ին «Մհնեան»ը կը խմբագրէ գործակցութեամբ Յ. Օշականի և Կ. Չարեանի, և կ'աշխատակցի «Բագին»ին: Չգայուն և նրբասէր, Բարսեղեան չհասաւ սակայն իր տաղանդին ամբողջ չափը ցոյց տալու, վասնզի նահատակուեցաւ 1915ին, հազիւ 32 տարեկան հասակին մէջ: Իր յօդուածները լոյս տեսած են առանձին հատորով, որ 4րդ թիւը կը կրէ «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ» մատենաշարին մէջ (Փարիզ, 1931):

Իր գրական ծածկանուններն եղած են՝ Օշին, Չարթօնք, Գեղօ, Նետ:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Դանիել վրդ. տե՛ս Արզգեան Դանիել վրդ.:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Կարապետ, լեզվափոխական գործիչ, ծնած է Վանի քաղաքամէջ, 1870 թուականին. իր նախնական կրթութիւնը ստացած է Յիսուսեան վարժարան. ապա Տրապիզոն վենետիկեան Մխիթարեան գաղտըր և Պոլիս միջնակարգ ուսումը աւարտելով՝ խոհուն և գիտակից երիտասարդ Վան վերադարձաւ, ուղղամիտ և պարկեշտ գրասենեակային հաշուապահ և ապա առեւտրական եղաւ:

Երկար տարիներ Արմենական, յետոյ իր խմբով մտաւ Դաշնակցութեան շարքերը: Ունեւրի ընկերներէն Գէորդ ձիտէճեան և Յարութիւն Լիւսեան ստանձնեցին պատասխանատու դերեր, իսկ ինք խմբապետ եղաւ:

1908ի Դաւոյի դաւաճանութեան ժամանակ Վ. Փափազեանի (Կոմս) հետ թաքստոցէն դուրս եկաւ, և փոխստական լինելով հանդերձ՝ կը վա-

բէր Ս. Գրիգոր վանքի հոգաբարձու թիւեր և անդամ էր Աղքատախնամին: Ապա բանտարկւեալով ազատուեցաւ սահմանադրութեան հռչակումին:

Վանի «Աշխատանք» թերթի տպարանի պատասխանատու տնօրէն ըլլալով հանդերձ՝ Լ. Յ. Գաշնակցութեան կոմիտէի և մասնաւորապէս Արամի պահանջով ոստիկան եղաւ:

1915ի Վանի հերոսամարտին զին. պարենաւորման յանձնաժողովի և գաղթէն վերջ Երեւանի մէջ Եղրայրական Կոմիտէի կից Գաղթակաւորաց Կոմիտէի անդամ եղաւ հովանաւորութեամբ Երեւանի տառջնորդ Խորէն եպ. Մուրտաթէկեանի (վախճանեալ Կաթողիկոս Ամենայն Հայոց) որմէ և Գերագոյն Խորհուրդէն ստացաւ օրհնութեան կոնդակ մը, մահուանէն քանի մը ամիս առաջ:

Հայաստանի առաջին խորհրդայնացումին ձերբակալուեցաւ Համազասպի, Լ. Կոսոյեանի, իր երկու զաւակներու և շատ մը Գաշնակցականներու հետ: 1921ի Փետր. յեղափոխութեան, բանտէն ազատուելով՝ Փրկութեան Կոմիտէին կից՝ բանակին բարենաւորման կոմիտէի անդամ եղաւ: Բոլշեւիկները Հայաստանը վերադարձելէ վերջ, անցաւ Պարսկաստան և շտկայով պանդըխտութեան, ընդհ. ներումին վերադարձաւ Երեւան և կրկին ձերբակալուելով 30 օր տանջուեցաւ բոլշեւիկեան Չեկայէն և պղտարձակուելով անցաւ Թիֆլիս: 1929 թուին հաստատուեցաւ Պուէնոս-Ալքէս քաղ. մեռաւ 1933ին («Հայրենիք» 1933):

ԲԱՐՍԵՂԵԱՆ Էրեմիմոս, աստղարաշխ, երկրաչափ և անտառագէտ ուսուցիչ: Պոլսոյ մէջ լոյս ընծայած 1880ին 400 էջոց Սկզբունք աստղագիտութեան, պատկերազարդ, յօրինեալ ի Հերոնիմոսէ Բարսեղեանց Երկրաչափ-Անտառագէտ և նախկին աշակերտ Կայսերական ուսումնարանի անտառաց: 1885ին հրատարակած է 121 էջոց Գիսաւորք գիրքը:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Մ. Յ., 1880ին Պոլսոյ մէջ խըմբադրած է Արեգակ «ճանդէս ուսումնական եւ արուեստակոյն շարաթաթերթ»ը (միայն մէկ թիւ լոյս տեսած):

ԲԱՐՍԵՂԵԱՆ Մինաս Մ. (բրոֆ. Տոքթ. Պազիլեան), հռչակաւոր բժիշկ. ծնած է նոր Զուղա, 14 Յուլիս 1857ին: 1871ին Կալկաթայի Հայոց Մարդասիրական ճեմարանը, 1874ին Պելճիքայի Յիսուսեաններու Ս. Փրկիչ վարժարանը, 1877ին Անգլիական պետական Presidency collegi աշակերտ, նաև medical College af Bengalի: 1881ին Էտինպուրկի համալսարանին բժշկա-

կան ուսանող կ'արձանագրուի և նոյն տարին երեք քննութիւնները մէկ տարուան մէջ կ'անցրնէ: 1882ին Քլաւն շոգենաւային ընկերութեան բժիշկի պաշտօնով Լիվրբուլէն Պոմպէյ կ'երթեկէ: 1886ին Մանչէսթրի հիւանդանոցի մը մէջ կը պաշտօնավարէ. անդամակցելով Բրիտանական Բժիշկներու Միութեան: և Էտինպուրկի համալսարանի Խորհուրդին:

1889ին իբրև Անգլիոյ պարսիկ գաղութի անդամ՝ կը ներկայանայ նասրէտային շահին, երբ ան հոն կ'այցելէր, շահը զմայլած անոր հմտութեան վրայ՝ նոյն տարին Թէհրան կը հրաւիրէ, Իրանեան համալսարանին մէջ դասախօսելու համար անգլիներէն և բժշկական գիտութիւն: Տօքթ. Բարսեղեան 22 տարի այդ պաշտօնին մէջ կը մնայ:

Երկար ատեն եղած է բժշկապետ Շահին, Ռուսական զեապանատան և արժանացած խանութեան տիտղոսին և բարձր պատուանշաններու:

Ընդհանուր պատերազմէն առաջ Պոլսոյ պարսիկ զեապանատան բժշկապետն էր: Հայկական մեծ եղեռնին ինքն ալ աքսորուած և պարսիկ զեապանին ազդու միջամտութեան չնորհիւ ազատուած և ապաստանած է Պուլկարիա: Զինադատարին ընտանեօք Նիս գացած է կազդուրուելու, ուր 1922 Յուլիս 24ին կը մեռնի: Տօքթ. Բարսեղեան ո՛չ միայն իբրև ճարտար բժիշկ, այլ և իբրև բանասէր ծանօթ էր հայ լրագիրներու՝ իր գրած հմտալից յօդուածներով: (Յ. Յ.): Տե՛ս Պազիլ:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Միքա Սարգիս, բարեսէր, հասարակական գործիչ, ծնած է 1860ին Թաջրիչ (Իրան) գիւղին մէջ, ատեն մը եղած է Թեհրանի համայնական վարչութեան նախագահ, մեռած 1935 Օգոստ. 5ին և թաղուած Վանաստու գիւղին մէջ:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Յովակիմ ֆն., ծնած է Սպահանի (Իրան) Սանգիրարան գիւղը 1886ին, ուսած է նոր Զուղայի Ազգ. Կեդր. վարժարանը, չրջանաւարտ ելլելով Բալարանի Հայրիկեան դպրոցին մէջ ուսուցչութիւն կ'ընէ մինչև 1913, 1912ին Այվատեան Սահակ Արքեպ.էն քահանայ կը ձեռնադրուի ու կը պաշտօնավարէ Թէհրանի մէջ 1915—7, 3 տարի Ռաշտ, նոյն ատեն իբր ուսուցիչ տեղւոյն Ազգ. դպրոցին, վարելով նաև գաղթականական Կոմիտէի նախագահութիւնը: 1920 Օգոստոսին Ռաշտի քաղաքական դառն դէպքերու առթիւ ժողովրդեան հետ Թեհրան փախած է, ուրիկ և նոր Զուղա: 1921ի սկիզբը ընտրուած է Պոմպէյի վիճակաւոր ու յետոյ

պաշտօնավարած Հնդկաստանի այլևայլ քաղաքներու մէջ (Գաբաման. 1925 էջ 90): Բարսեղեան քհ. շատ մը Տարեցոյցներու մէջ Հնդկաստանի և Պարսկաստանի հայ գաղութներու մասին գրուածքներ ունի: (Տե՛ս նաեւ ՅԱԽԵԼՈՒՍԾՐ):

ԲԱՐՍԵՂԵԱՆ Յովնաննէս, ազգային բարերար, ծնած Իգտիր 1898ին, ուր ըրած է իր նախնական ուսումը 1917-ին, ուսական բանակին մէջ ծառայելէ ետք անցած է Ղազվին (Իրան): 1936ին՝ իր վաղամեծի դստեր Հռիփսիմէի իրր յուշարձան կանգնած է Ղազվինի մէջՍ. Հռիփսիմէ եկեղեցին (տե՛ս Ղազվին):



Բարսեղեան Յովնաննէս

ԲԱՐՍԵՂԵԱՆ Յովսէփ, ուսուցիչ, ծնած Նոր Զուգա, 1892ին Ս.

Կատարինեան չափահաս սանուհեաց օժանդակութեամբ կը հիմնէ «Հայունհաց Բարեգործական Ընկերութիւն»ը:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Չեմսեան, 1879ին Պոլսոյ Անտառարանական վարժարանէն շրջանաւարտ:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Պերնուհի տիկին, զրազիտուհի, անգամ Բարիզի Հայ Գրողներու, իր գործն է «Փոթորկէն վերջ» տպ. 1932ին: Գրած է նաև անգլերէն լեզուով գործեր, տե՛ս ՅԱԽԵԼՈՒՍԾՐ:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Սարգիս (իսկական անունով՝ Լեւոն Օսապաեան), ծնած է Գանձակ 1875ին: Վանի յայտնի կռուող և լեզափոխական գործիչ: Եղած է 1905ի «Ելլաբզի դժօխային մեքենայ»ի կազմակերպիչներէն: Ժամանակ մը շրջուն տեսուչ Վանի և Կիրասոնի զպրօցներուն: 1913ին կը հաստատուի Պոլիս, սպաննուած 1915ին:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Սարգիս, 1861—3 Թովմաս Պոռնանցի հետ Պոլսոյ մէջ խմբագրած է «Վարդ Մեսրոպեան» հանդէսը, նախ ամսաթերթ, ապա կիսամսեայ:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Ս. տե՛ս Գնուհի Ս. Բ. Վ.:

ԲԱՐՍԵՂԵԱՆ Օգնիկ, Վառնայի մէջ հրատարակած է 1904—6 «Վիպաթերթ» ամսաթերթը, թարգմանելով Բօն-ժէ էն, Ժիւլ Մառիէն, և Նուառէն:

ԲԱՐՍՂԻ (Ս.) վանք, Կեսարիոյ հարաւային կողմի ծայրի տուններուն հանդիպակաց, գրեթէ չորս

կամ հինգ վայրկեան հեռաւորութեամբ գետնի մը վրայ կը գտնուի վանքս, որ ի վաղուց աւերակ էր:

Վանքիս հիմնարկութեան, շէն ու բարգաւաճ շրջանին մասին ոչ մէկ տեղեկութիւն ունինք: Թերևս հայկական վանք եղած չէ: (Ալպ. «Հայ Կեսարիա»):

ԲԱՐՍՂԻ (Ս.) ՎԱՆՔ, այս անունով վանք մը ցոյց կը տրուէր Թոմարգայի Ս. Աստուածածին վանքին արեւելեան կողմը՝ քիչ հեռուն, փոքր լեռան մը ստորոտը: Շրջակայ գիւղացիք միայն աւանդութեամբ կ'ըսեն թէ հոն Ս. Բարսեղ վանք մը կար: Բոլորովին աւերակ էր: Տարին անգամ մը ուխտի կ'երթային հոն և մատաղներ կ'ընէին: (Ալպ. «Հայ Կեսարիա»):

ԲԱՐՍՂԻ (Ս.) (Ս. Բարսեղ Հայրապետ) ՎԱՆՔ, Թալասի մօտերը Ալի-տաղ լեռան գրեթէ արգանդին վրայ կը գտնուէին վանքի մը աւերակները, ինչպէս նաև հայ գերեզմանատան մը, որ Բարսեղ Հայրապետ կը կոչուէր: Աւանդութեան մը համաձայն Ս. Բարսեղ հայրապետը ճգնած է հոս, այս վանքին զուտ հայկական ըլլալն ալ կասկածելի է: (Ալպ. «Հայ Կեսարիա»):

ԲԱՐՍՈՒՄ, գղ. Արցախի Փառխոս գ. ի: Բն. 160 տուն. մօտ 1200 հոգի, զաղթած են Անիէն, ունին նորաշէն եկղ. մը: Մօտը կայ կիսակործան եկեղեցի մը և եկու վանք, որոնց մին Ս. Հռիփսիմէ կը կոչուի, յիշուած Մխիթար Գոչէն: Լեկղիներու դէմ մղուած պատերազմի ատեն շատ մը հայեր նահատակուած և հոս թաղուած են: Այս կողմերէն էր Մելիք Ռոստամը, Բաղրատունեաց սերունդէն: (Բարխուդարեանց՝ «Արցախ»):

ԲԱՐՍՊԻ, կը յիշուի իրրև Աղթամարայ թեմ: ԲԱՐԻԱՏՈՒՆ, գղ. 1697ի յիշատակարանի մը մէջ կը յիշուի, երբ «Միր Մահմուտ Աղաին շէրի թոռն զԲարաւսօն զամենն այրեաց և աւան և թալան տարաւ ի ձիւլամէրկ»:

ԲԱՐՔԱՇԱՀ, խան թաթարաց 1255—1264 (րոս Յիւստակարանաց):

ԲԱՐՅԷՐՈՒՉ, քղ. Մազանդրան նահանգի (Իրան), 13 տուն հայ կար:

ԲԱՅԻ, գղ. Սղերդի Խիան գաւառակի, 30 տ. հայ կար:

ԲԱԻ, գղ. Մշոյ արեւելակողմը:

ԲԱԻԱՉՈՐ կամ Բաւաց ձոր, գղ. ըստ Ստեփ. Ասողկայ Շիրակի մէջ, ուր գումարուեցան Դաւիթ Կիւրապաղատի և Կարսի Մուշեղ թգի զօրքերը՝ ընդդէմ Սմբատ Բ. Շահնշահի, որ յափըշտակած էր իր հօրեղբոր Մուշեղի Շաաիկ գղը: ԲԱԻԱԻՆ կամ Բաւօն. հին գղ. Տուրուբերանի

Բեթ

Դասնաւոր գո.ի մէջ: Սիոն կթղ.ի հայրենիք կը համարուի:

ԲԱՔԱՆ կամ Բաբուսեան, Վասպուրականի հին գաւառներէն մինն:

ԲԱՔԱՍԵՐ, կը յիշուի տեղիս Փ. Բիւզանդէն. «Արշակ երթայր ընդ առաջ նորա (Մեծին Ներսէսի) մինչև ի կողմանս Բաբասերոյն»:

ԲԱՔԱ կամ Բոբս, հին գղ. Հարանդի:

ԲԳՆԵՐ s. Բագնայր:

ԲԳԱՌԻՃ s. Բրառին:

ԲԳՆԵՍԲ, հին վանք Ծրուսաղէմի:

ԲԳՆԻ կամ Բրնի, յեռ Եկեղեցաց գաւառի մէջ, որուն ստորոտը կը գտնուի Ս. Կիրակոսի վանքը: 1476ի յիշատակարանի մը մէջ կ'ըսուի թէ Բըզնոյ լիբան ստորոտն է Վարդենոց վանքը ի Դարանաղիս:

ԲԵԹԱՆԻԱ, վանք Թիֆլիզի մօտ և տոնմային գերեզմանատուն Օրբելեանց, ուր հանդիսով թաղեցին քաջ Լիպարիտը:

ԲԵԹԼԵՆՄ, վարժապետ ԺԹ. դարու սկիզբը, ուսուցիչ Թաւրիզի վարժարանին մէջ. հմուտ պարսիկ լեզուին, 1828ին Ներսէս Աշտարակեցի կթղ.էն Թիֆլիզ կը հրաւիրուի Ներսիսեան զբոսորդին մէջ իբր պարսկերէնի ուսուցիչ (Հայկ Անեմեան):

ԲԵԹԼԵՆՄ, հռչակաւոր քղ. և ուխտատեղի քրիստոնէից, ուր ծնաւ փրկիչն տիեզերաց: Ծրուսաղէմի հարաւակողմը, 12 հազարամեղր հեռու: Նշանաւոր է ըստ աւանդութեան Մեծին Կոստանդիանոսի մօր Հեղինէի շինել տուած եկեղեցին, որ իբր թէ մեր Տրդատ թգ.ը լրացուցած է, 1227ին տէր Արրահամ և տէր Առաքել անուամբ հայ եկեղեցականներ տէր և իշխող այս տաճարին՝ ներքին դուռը շինել կու տան տախտակեայ պատուական քանդակազորութեամբ հետեւեալ արձանագրութեամբ. «Թվին ՈՂՁ (= 1227), կազմեցաւ դուռս Ս. Աստուածածնիս ձեռամբ Տէր Արրահամին և Տէր Առաքելոյ ի թագաւորութեան Հայոց Հեթմայ, որդւոյ Կոստանդէի «Քրիստոս Աստուած ողորմի աշխատաւորաց», կայ նաև զրեթէ նոյն ոճով արարերէն արձանագրութիւնն Ս. Ծննդեան արդի եկեղեցին՝ սիւնադարդ գաւթէն որմով բաժնուած է, և երեք դասէ կը բաղկանայ, հարաւային կողմը եւ միջին աւագ սեղանը՝ որոյ տակն է Սուրբ Այրը, Յունաց սեփական են, իսկ հիւսիսային դասը Հայոց սեփականուած է 1813 թուականէն ի վեր. Սուրբան Մանուկի հրովարտակաւ: Հայք շատ անգամ վէճեր ունեցած են թէ՛ Յունաց և թէ՛ Լատինաց հետ, և բաւական իրաւունքներ

կորուսած էին, բայց վերոյիշեալ թուականին բարձրագոյն հրովարտակի զօրութեամբ կարողացան դարձեալ հանապազօրեայ պատարագ մատուցանել Ս. Այրին սեղանին վրայ և Յունաց և Լատինաց ունեցածներուն համեմատ կանթեղներ կախել և պատկերներ հաստատել: Ս. Ծննդեան եկեղեցին հինգ կարգ սրահ ունի ատեանէն և երկու զասերէն զուրս, որոնք պատով զատուած են ժողովրդոց կայնելու սրահներէն, և այս հինգ սրահները չորս կարգ կարծրաքար միակըտուր սիւներով զատուած են, որոնք ընդամէնը 50 հատ են: Բեթղեհէմի մէջ Հայերը սակաւաթիւ են, հազիւ 150--200: (Եփրիկեան՝ «Բնագիտութիւն»):

ԲԵՆԼԱՕԻ (M. Bellaud) Ծրանսացի, որ գրած է «փորձառութիւն հայկական լեզուին» գիրքը, տպ. Բարիզ՝ 1812ին:

ԲԵՆՈՒ կամ Բելու, գիւղ Վասպուրականի Ռըլտունեաց գո.ի արեւելեան՝ և Ընձաքիսար լիբան հարաւային կողմը: Կ'ըսուի թէ այսպէս կոչուեր է, իր մէջ Ներքովթայ կամ Բելայ գերեզմանը գտնուելուն համար: 1900ին ունէր իբր 100 տ. հայ և երկու քարուկիր եկեղեցիներ: Գիւղիս հիւսիսակողմը կէս ժամ հեռու Ս. Հայրապետ վանք մը կայ (տե՛ս իր կարգին):

ԲԵՆՈՒԿԱՄ, հին քղ.ի մը անունն՝ Ուտի նահանգի մէջ:

ԲԵՆ կամ Բիլս, գղ. Սիւնեաց Կովսական գո.ի մէջ, Սոսուտուի լիբան հիւսիսային ստորոտը: Սիւնեաց աթոռին հարկատու գիւղերէն մին էր Բեխ, զոր 871ին Ջիւանշիր իշխանը փոխեց Բաղաց գո.ի Արուքս գղ.ին հետ: Ղափանցոց պատերազմաց ժամանակ 1726ին կամ 1728ին, Օսմանեանց կողմնակալ զօրավարը հոս բանակ դրաւ զրեթէ շարաթ մը և ջանաց նեղել Դաւիթ Բէկը և իրենները. բայց հայ քաջերը գիշերանց «ի վերայ հասին նոցա, հարին, կոտորոցին զբազումս ի նոցանէ, և զփաշայն հալածական արարին»: Ժէ դարուն վերջերը այս գիւղը ծնած էր Տաթևի առաջնորդ Ղազար եպիսկոպոս: Եկեղեցին կը կոչուի Ս. Գէորգ: Բնակչաց թիւն էր 1900ին՝ 30 տուն:

ԲԵՆԵՆՅՅ ՎԱՆՔ, կը յիշուի Անւոյ արձանագրութեանց մէջ, որոյ մասին կը գրէ Ս. Մ. Ծոցիկեան. «Բեխնց վանքը, զոյգ մը գեղաշէն մատուռներէ կը բաղկանայ, որոնք այժմ կիսափուլ են, և ժամանակին շրջապատուած էին պարսպատերով: Ախուրեանի եղբրաց բարձունքը հաստատուած այս վանքի անուան շուրջ դիւցազնական պատմուածք մը հիւսուած է: Անիի անկ-

ման մէկ շրջանին, ժԱ. դարու վերջերը, մարտիսէ և երաշտէ մեծ սով յառաջ եկած էր Շիրակի և մայրաքաղաքի մէջ: Եւ Անիի փողոցներուն մէջ, հազարաւոր մարդիկ սովամահ ինկած, կը մնային անթաղ: Այն ատեն Բեյն անուամբ հսկայ քաջ Հայ մը երեւան կու գայ Անիի մէջ, և վեց հազար մեռեալ կը թաղէ: Ահա վանքը այդ հուժկու դիւցազնի անուան և գործունէութեան յիշատակին նուիրուած է»: (Հ. Կոչնակ 1936, էջ 730):

ԲԵՆԵՒԵՐՋԻ, հին գիւղ Սիւնեաց Կովսական գ.ի, որուն համապատասխան կը կարծուի Պաղպալուրճի գիւղը. եկղ. Ս. Հռիփսիմէ:

ԲԵՆՈՐՈՏ s. Բուխրոս:

ԲԵԿՈՍՄՈՒՐ, ամիրայ, Շահարմէն (Հայոց թագաւոր) կոչուած. որ կը նստէր Մանազկերտի մէջ և կը տիրէր Խլաթայ և այլ վայրերու:

ԲԵԿՆՔԱՐ, քարանձաւանման ամուր տեղ մը Սիսի մօտ.ի հնուամն Կեմայ կը կոչուէր:

ԲԵՀՐՈՒԴԵԱՆ ԱՐԱԿՆ. իւլիսան Իվանովիչ, սուսայ մէնուարմաժոռ, ծնած է 1835ին, վարած է ազգային զանազան շատ մը պաշտօններ, մեռած է Թիֆլիսի մէջ 1914ին:

ԲԵՀՐՈՒԹԵԱՆ Կոստանդին իւլիան, «Արձագանք» լրագրի մէջ իր Ծովս. «Ծխական հոգարարձութեան կազմակերպութեան մասին» գրած յոդուածաչարքը 1893ին առանձին լոյս ընծայած է Թիֆլիսի մէջ:

ԲԵՀԵԱՆԻ կամ Պենեանի, քաղաքաւան Երրորդ Հայոց (Մելիտինէ). համանուն գաւառակի մէջ: Բնակիչք՝ մեծ մասամբ մահմետական: Հայք Ս. Փրկիչ եկղ. մը և Ներսիսեան դպրոց մ'ունէին: Մօտէն կ'անցնի Սալբան գետակը: Գաւառակը ունի 45000 բնակիչ, 3000ը միայն հայ էին:

ԲԵՀՐԻՎԱՅ, սակաւարնակ գղ. Մարաղայ գ.ի (Իրան), Մարաղա քղ.էն 40 վայրկեան հեռի, ունի փոքր եկղ. մը:

ԲԵՂԱՄԷՋ, տեղւոյ անուն Պարտաւի և Բելուկամայ (Ուտի) մէջ տեղ:

ԲԵՂԱՊԱՏ, կը յիշուի Ուտիի մէջ:

ԲԵՄ (ամսագիր ?) լոյս տեսած է Յրէզնոյի մէջ: ԲԵՆԱԳ, լեռ Այրարատայ Ծաղկոտն գ.ի մէջ: ԲԵՆԵԱՄԻՆ Ս. նահատակուած 418ին:

ԲԵՆԵԳԻԿՍՈՍ Ս. հիմնադիր Բենեդիկտեան ուխտին, ծնած Իտալիա 480ին և վախճանած 543ին: Գեռ երիտասարդ քաջուեցաւ Հռոմէն 40 մղոն հեռի անապատ մը և հոն անցուց սուրբ կեանք մը: 521ին Քասենի մէջ հիմնեց վանք մը, ուր վանականներու համար սահմանեց օրէնք որ նկատուեցաւ իմաստութեան օրինակ մը:

Մխիթար Աբրայ իր միարսնութիւնը հիմնած է Ս. Բենեդիկտոսի կանոններու վրայ, զոր թարգ-

մանած են իր աշակերտք և տպած ի վիեննա 1842ին (144 էջ). սա խորագրով «ԲԵՆԵԳԻԿՍՈՍ ԱՐԲԱՅ» = Benedictus — Սբոյ հօրն Բենեդիկտոսի կանոնի, զոր թարգմանեալ է աշակերտաց հօրն Մխիթարայ»: Իսկ 1880ին վենետիկի մէջ լոյս տեսաւ Բենեդիկտեան վանաց (սահման). թարգմանեալ ի թարգմանութենէ սրբոյն Ներսիսի Համբրոնացոյ ի յիշատակի ժ.Ն. դարամբարի ձննդեան սրբոյ հօրն Բենեդիկտոսի». (123 էջ):

ԲԵՆԵԳԻԿՍՈՍ ժ.Վ. Պապ 1334—42, իր աթոռը կը գտնուէր Յրանսա՝ Ավինիոն: Եկեղեցական կարգերու և կրօնականներու վարքի բարեկարգութեան ձեռնարկած է: 1335ին Լեոն Ե. թգ. Կորիկոսի իշխան Պաամոնդ Լուսինեանը կը զրկէ Բենեդիկտոս ժ.Վ. պապին պատմելու Կիլիկիոյ անցքերը: Քահանայապետը Գաղղիացոց Փիլիպպոս թգ.ին թուղթ կը գրէ որպէսզի իր նախկին խոստման համաձայն Հայոց օգնութեան հասնի. Պապը պահանջուած գրամական օգնութիւնը խոստացաւ թէ և՛ բայց կրկին անփոյթ մնացին Լեոն 1336ին ստիպուեցաւ Կիլիկիայէն հեռանալ. այլազգիք կրկին աւերեցին Հայ աշխարհը այս անգամ Կոստանդիա թագուհին դիմեց Պապին, որ մխիթարական թղթով մը պատասխանելէ ետք՝ մերձակայ ազգերը յորդորեց որպէսզի օգնութեան հասնին Հայոց. ու երբ անոնք զինու. զօրութեամբ օգնութեան չհասան՝ Պապը 10000 ռսկի զրկեց Լեոնին և նաւերով ցորեն հայ մողղուրդին:

ԲԵՆԵԳԻԿՍՈՍ ժ.Ն. քահանայապետ Հռոմայ, ծնած Պէլլի 1851ին, քահանայապետ ընտրուած 1914 Սեպտ. 3ին Կարող դիւանագէտի համբաւ վայելող այս եկեղեցականը, համաշխարհային պատերազմի առաջին օրերուն բարձրացաւ պապական աթոռին վրայ և ջանաց պատերազմող կողմերը հաշտեցնելու իր այս ջանքերը սակայն քահանայան մեկնութիւններու առիթ տուին:

Հայոց տեղահանութեան ատեն բարոյսպէս և նիւթապէս օգնութեան հասաւ իր Պոլսոյ նուիրակ Տոյլի ձեռամբ:

1917 Օգոստոս 1ին Բենեդիկտոս կոչ մ'ուղղեց պատերազմող կողմերուն. հրաւիրելով զանոնք խաղաղութիւն կնքել՝ իր այդ կոչին մէջ նշանակուած պայմաններուն հիման վրայ, որոնց մէկն էր՝ հայկական հարցին վերջնական լուծումը: Երբ աքսորէն ողջ մնացած Հայերը դարձան՝ կրկին դրամական օգնութիւն զրկեց, և իր անունով հայ որբանոց մը բացաւ, վարչութիւնը վենետիկի Մխիթարեաններու յանձնելով: Վախճանեցաւ 1922 Յունուար 22ին (Գ. Գրյունեան):

ԲԵՆԿԵԱՆ, Բիկեան կամ Բեկեայ. հին և նշա-


նաւոր աւանագիւղ Ակնայ (Փոքր Հայք): Դիրքը խիստ ամուր է, և կրնայ համարուիլ ապաստարան մը կամ ամրոց՝ ժայռերուն փակած: Ունի նեղ և խոր կիրճեր, որոնց մէջէն Եփրատ գետը կծկելով, սղմուելով կ'անցնի պտոյտընթաց: Անուանի է Բենկեանայ կամուրջը՝ որ ամէն երկրոյ գոնեքով կը փակուի, և եթէ թշնամի ունենան՝ կամուրջը կը վերցնեն, որով գետը անանցանելի կ'ըլլայ: Բենկեանցի Հայերը հոչակուած են իրենց քաջութեամբք, ըստիւր նժոյզներ ունին. քաջավարձ հեծեայներ են, և արագոտն կրնան վազել: Տեղուոյ Հայք՝ հարուստ, քաղաքակիրթ և քաջարի էին: Բենկեանի ստորոտը քանի մը տուն թուրքեր կը բնակին զատ, և կ'ապրին Հայոց շնորհիւ: Թուրքաց թաղը կ'անուանուի Ռաբար, և իրօք աւանին անունը Հուբար եղած կը համարուի, զոր Սենեքերիմայ Բենիկ իշխանը նորոգել է. և այսուհետև կոչուել է Բենկայ կամ Բենկան տուն: Բնակիչք՝ 1900ին 1000 էին ևւերեք եկեղեցի ունէին. Հրեշտակապետ, Աստուածածին, Երեք Մանկունք և երկու վարժարան՝ Մեսրոպեան ուր 88 մանչ կ'ուսանէին 1900ին և ունեան: Բենկեանի շուրջը կը գտնուին Ս. Թագաւոր, Ս. Նիկողայոս, Ս. Խաչ, Ս. Յակոբ և Խանակտուր եկեղեցիներու աւերակները: 1896ի զէպքերուն աւանագիւղս այրեցաւ և ժողովուրդը լեռները փախաւ, բայց ի վերջոյ սկսաւ շէնար: (Էփրիկ. «Բնագիտական» քաղուած Մուսնիսեանցի «Թորոս Աղբար»-էն Ա. 238—240): Բենկեան տուած է ազգին ժիժեան Ամիրան. նկարիչ Նշան Աւագեանը, գիւղատնտես Մեծատուրեանը, յեղատիտական Բարկէն Սիւնին (Պետրոս Փարեան) և Միսաք Մեծարենց բանաստեղծը:

- Բենկոնի վ.Ա.Ն.Բ տե՛ս Երեւան վանք:
- Բեն. հին գիւղ Սիւնեաց Զորք գ. ի:
- Բեն-Ն.Ա.ՏՈՎ.Ի.ՉՄԱԵՏԻԲ, s. Բերնարդոյիչ:
- Բեն-Ն.Ա.ԻՍ s. Բեռնա:
- Բեն-Ն.Ի.Կ, գղ. Տայոց Բերդաց ձոր գ. ի մէջ:
- Բեն Պ. նոր գրող Խ. Հայաստանի մէջ:
- ԲենՍԱՐԱՊԻԱ տե՛ս Պետրապիա («Մշակ»-ի մէջ 1894 թ. 21 Հ. Մ. Ջէն ուսումնասիրութիւն մը կայ «Բեսարապիայի Հայերը և Մանուկ-բէյ»:
- ԲենՍՊԱՅ, գղ. կը յիշուի Գուգարաց Զորափոր գ. ի մէջ:
- ԲենՏՈՂ, Հոռմայեցի զորավար որ Գրիստոսի 61 թուականին Հայաստանի վրայ կը յարձակի և կը յաղթուի (Չամչեան, Ա. 315):
- Բեն՝ s. Բեք:
- ԲենՍԱ s. Պեյ-Օղլու:

ԲենՍԱՆ, հին գիւղ Սիւնեաց Գեղարքունի գ. ի: ԲԵՐԲԵՐԵԱՆ Սիճաւ, ծնած է 1871ին Նախիջևեանի մէջ: Հայաստանի հանրապետութեան պետական վերահսկիչ, աշխատակից հայ և ռուս թերթերու, Թիֆլիսի առեւտրական դրամատան տնօրէն և սպանիական հիւպատոս եղած: Մեռած է Երեւան 1919 Փետր. 6ին: (Յ. Յ.):

ԲԵՐԲԵՐԵԱՆ Յովն. բժիշկ Նախիջևանցի: Տե՛ս ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:

ԲԵՐԲԵՐԵԱՆ Ռուբէն, հրապարակագիր, որգի բժ. Բերբերեան Յովհաննէսի, ծնած Նախիջևան, առաջին գործն եղած է Հայոց նորագոյն բանաստեղծներու տպ. Ռոստով Դոնի վրայ, 1898: 1918—1919 Երուանդ Շահագիրի հետ խմբագրած է նոր Նախիջևանի մէջ Հայ Համայնք «Ն. Նախիջևանի և Ռոստովի համայնքի պաշտօնական շարաթաթերթ»ը, ու ներկայիս կը վարէ Պոստոնի Հ. Յ. Դաշնակցութեան օրկան «Հայրենիք» օրաթերթը: Տե՛ս նաև ՅԱԻԵԼՈՒԱԾՐ:



ԲԵՐԲԵՐԵԱՆ ՌՈՒԲԵՆ

ԲԵՐՊ, աւագատեղի Սիւնեաց Ծղուկ գ. ի մէջ, ըստ Ստեփան Օրբելեանի կը գտնուի Յուրայ վանքի դիմացը:

ԲԵՐՊ, հին գղ. Սիւնեաց Գեղարքունի գ. ի: ԲԵՐՊ, գղ. Արցախի Ռուստի գ. ի մէջ, այլագրիներէն թովուղ-դալա կը կոչուի: 1900ին 1200 հայ բնակիչ ունէր. եկղ. Ս. Գէորգ, մօտը կայ Ս. Սարգիս ուխտական մատուռ մը և ուրիշ մը՝ Աւագ Ս. Նշան:

ԲԵՐՊ, գղ. Տուրուբերանի Ապահունեաց (Մանազկերտ գ. ի, 1900ին 65 տուն հայ և 100 տ. քուրտ բն. ունէր): ԲԵՐՊ, գղ. Տուրուբերանի Հարք (Խնուս) գ. ի մէջ: 1900ին 160 տ. հայ բնակիչ ունէր և 127 տ. քուրտ: Կէս ժամ հեռու է Մժնկերտ հինաւուրց դաստակերտը՝ որ այժմ անշուք գիւղ մըն է Մժնկերտի շուրջ վրայ:

ԲԵՐՊՍ, գղ. Արցախի Զաւէ գ. ի. այլագրիներէն Ղալալայ կը կոչուի. երկու թաղի բաժնուած է, մին Ս. Գէորգ և միւսը Ս. Աստուածածին եկեղեցիով: 1900ին ունէր 1200 բնակիչ:

ԲԵՐԳՆԱԳԱՒԱՒ, այլ անուն Այրարատայ Մա-
զազ գուրի:

ԲԵՐԳՆԱԳՐԱԿ կամ Բերդեգրեկ, հին գղ. Տայոց
Ասեայ փոր գուրի նոյնանուն վիճակի մէջ: Թէ՛
վիճակիս և թէ՛ գիւղիս հայ բնակչու թիւնը թուր-
քացած են. կը մնան հին եկեղեցիները:

ԲԵՐԳՆԱԹԱՂ, այսպէս կը կոչուին Վայոց-ձորի
կատուաքար բլուրի մօտ գտնուող բերդի մը ա-
ւերակները:

ԲԵՐԳՆԱԿ, գղ. Մշոյ դաշտի մէջ: 1920ին 150
տ. հայ բնակիչ ունէր:

ԲԵՐԳՆԱԿ, գղ. Այրարատայ Վերին Բասենի
Դու գիւղի մօտ:

ԲԵՐԳՆԱԿ, գիւղ Վասպուրականի Տոսր (Վան)
գուրի մէջ. 1900ին 60 տ. հայ բնակիչ ունէր, եկղ.
Ս. Յովհաննէս, ուր կը պահուէր Ժե. դարուն
զրուած Յայսմաւուրք մը: Գիւղէս քիչ հեռու
աւերակ վանք մը կայ Ս. Աստուածածին ան-
ուամբ:

ԲԵՐԳՆԱԿ, սահաւարնակ գիւղ Աղձնեայ Սիզան
վիճակին մէջ, Բասր գղի մօտ:

ԲԵՐԳՆԱԿ, գղ. Չորրորդ Հայոց Չարսանձագի
առաջնորդութեան, զեղեցիկ շէնքերով, բն. հայ
և թուրք, 1900ին Հայոց թիւն էր 100 տուն.
երկու եկեղեցիներ կային Ս. Աստուածածին եւ
Ս. Շամունէ: Ազդային վարժարանը կը յաճա-
խէին 36 մանչ և 15 աղջիկ: Գիւղիս մօտը կայ
Ս. Թորոս կամ Ս. Տիկին կոչուած հոյակապ վանք
մը կիսակործան վիճակի մէջ: Գիւղս իր անունը
առած է Հին Բերդակէն, որուն աւերակները կը
տեսնուին Պարբերդէն 4 չորս ժամ հեռու զէպի
հիւսիս: (Էփրիկեան՝ «Յաւախարհիկ»):

ԲԵՐԳՆԱԿ, սահաւարնակ գիւղ (Վան) Կարկառ
վիճակի մէջ, ունի Ս. Անտոն եկղ. մը:

ԲԵՐԳՆԱԿ, գղ. Արցախի կամ Ուտիի Տուրքասակ
գուրի մէջ:

ԲԵՐԳՆԱԿՈՐ, հովոցաց տեղի Աղուանից կաթո-
ղիկոսաց՝ Ուտիի մէջ, Կիրակոս պատմիչ այսպէս
կը կոչէ տեղիս, կարելի է որ Բերդանոս պիտի
ըլլայ:

ԲԵՐԳՆԱՉՈՐ, Բերդանո կամ Բերձոր, Արցախի հա-
րաւային դաւառներէն մին, բնակչաց մեծ մասը
այժմ մահմետական են, ունի շատ մը հայանուն
գիւղեր որոնց եկեղեցիները զեռ կանգուն են,
բայց բնակիչք մահմետականք: Գաւառս ունի 5
հայարնակ գիւղ և չորս բերդ:

ԲԵՐԳՆԱՉՈՐ, կը յիշուի Վասպուրականի Ռըշ-
տունեայ գուրի մէջ: Բերդաձորու Ս. Աստուածա-
ծին կը կոչուէր այժու Կարմրակ վանքը:

ԲԵՐԳՆԱՉՈՐ, անտառապատ գիւղակ Բորչալու

գուրի, աւերակներէն կը զուշակուի որ ժամանա-
կին բաւական ընդարձակ եղած է: Կայ Բարձրեայ
անուամբ խոյքար մը:

ԲԵՐԳՆԱՉՈՐ, հին գղ. Սիւնեայ Սողք գուրի
ԲԵՐԳՆԱՉՈՐ s. Գայեքեքի:

ԲԵՐԳՆԱՂ, գղ. Վասպուրականի Երճէչ գուրի, 1900-
ին 30 տ. հայ բն. ունէր, եկղ. Ս. Աստուածածին:
ԲԵՐԳՆԱՂ, գիւղ, կը յիշուի Այրիվանուց արձա-
նագրութեանց մէջ:

ԲԵՐԳՆԱՎԱՆՔ, կամ Փերբեվան, գղ. Կարնոյ գուրի,
այժմեան բնակիչք մահմետականք:

ԲԵՐԳՆԱՏԱԿ, հին գղ. Սիւնեայ Ծղուկ գուրի
ԲԵՐԳՆԱՐԱՆՔ, s. Փերբեքան:

ԲԵՐԳՆԱՔԱՐ, բերդ Արցախի Հաթերք գուրի
ԲԵՐԳՆԱՅՓՈՐ կամ Բերդափոր, Տայոց գաւառնե-
րէն մին:

ԲԵՐԳՆԳՐԵԿ, s. Բերդագրակ:

ԲԵՐԳԻ ԳՆՈՒԽ s. Բայազիս:

ԲԵՐԳԻԿ, գղ. Վանանդ գուրի համանուն գետա-
կի եզերքը, այժմու բնակիչք 15 տուն քուրս:

ԲԵՐԳԻԿ, աւերակ գղ. Գուդարաց Չորափոր
գուրի մէջ, որոյ մօտ Դէրէզայ գետին վրայ 1273-
ին Յովհաննէս քհ. մը կամուրջ մը կը շինէ, ուր
կը կանգնէ յանուն Ս. Յովհաննու՝ քարէ խաչ
մը:

ԲԵՐԳԻԿ, հին գղ. Սիւնեայ Բաղք գուրի:

ԲԵՐԳԻԿ, կը յիշուի Երնջակ գուրի մէջ:

ԲԵՐԳԻՄԱՅՐ, հին և մեծ գղ. Սիւնեայ Վա-
յոց-ձոր գուրի, որուն դիւրքը անյայտ է:

ԲԵՐԳԻՆ, հայարնակ գղ. Գարատաղ գուրի,
ունի 40 տուն հայ և եկղ. մը:

ԲԵՐԳԻՍ, գղ. Տայոց Պարտիզագփոր գուրի,
այժմու բնակիչք մահմետականք են:

ԲԵՐԳԻԱՆ ԲԵՐԳ, հին ամրոց մը Կիլիկիոյ մէջ:

ԲԵՐԵԿԱՆԵՐԻՉ, հին գղ. Սիւնեայ Ծղուկ գուրի
մէջ: Տե՛ս Արձիւ:

ԲԵՐԳԻԱՅ ԳԻԻՂ s. Պարսիկ:

ԲԵՐԳԻՎՈՒՆՔ, հին գղ. Բագրեանդի: Տե՛ս Ար-
ձակ:

ԲԵՐԳՆ, հայարնակ գղ. Քէյվան գաւառակի,
40 տ. բնակչով և եկեղեցիով:

ԲԵՐԳՉՈՐ s. Բերդանո:

ԲԵՐԳՈՒՄԵԱՆՅ ՊԵՏՐՈՍ արքեպ. Աղամախանց,
միաբան Ս. Էջմիածնայ, ծնած Նախջուան ԺԹ.
դարու սկիզբները կամ աւելի հաւանական ԺԸի
վերջերը իր ժամանակի բեղմնաւոր գրչներէն
եղած է և տարիներով Կ. Պոլիս բնակած: Իր
առաջին հրատարակած գործն է Աղբիւր Բաց-
եալը, 1845ին տպուած ի Ս. Էջմիածին, որուն
վրայ Բերթումեան ստորագրած է: Յաջորդ տա-

րին (1864ին) լոյս կ'ընծայէ Կալկադայի Արարա-
 եան ընկերութեան տպարանէն «Մեկնութիւն
 Յայնուրեան Ա. Յովնանու Առաքելոյ, համա-
 ոտեայ ի զանազան մեկնչաց, ի Պետրոսէ Ար-
 քեպիսկոպոսէ Նախջուանցու Աղամալեան Բեր-
 դումեանց: Տպեայ օժանդակութեամբ Յովհան-
 նու Աղաբէգեան Ասպետի»: 350 էջնոց գործ մը
 — 1850ին Երուսաղէմայ Յակոբեանց տպա-
 րանէն լոյս կ'ընծայէ 804 էջնոց Մեկնութիւն
 րդրոյն Պօղոսի առ Եփեսացիս, յորինեալ ի բազ-
 մարդուն Պետրոս Արքեպիսկոպոսէ Աղամալեան
 Բերդումեանց: Տե՛ս Աղամալեան Պետրոս ան-
 ուան ևս:

ԲԵՐՊՈՒՆՔ, ԲԵՐՊՈՒՍ կամ ԲԵՐՊՈՒԿ, հին քղ.
 և բերդ Կիլիկիոյ, երբեմն եպիսկոպոսանիստ և
 իշխանանիստ Մարաշի հիւսիսակողմը Բաղաքս
 Գող վասիլի ձեռքն եղած է Ռուբինեանց հարս-
 տութեան սկիզբները, յետոյ կռուախնձոր դար-
 ձաւ և ի վերջոյ թորոս Բ. ի կողմէ 1157ին Գը-
 լըճ Ասլանին տրուեցաւ: 1208ին Իկոնիոյ Խոս-
 րով շահ սուլթանը Յովհաննէս Մեծարարոյ կթ. ի
 զրգմամբ եկաւ բռնեց բերդատէր Գրեգոր իշ-
 խանը և Բերդուսի տիրեց: (Բակուրանի (Վ.
 Քիւրճեան) Կիլիկիա էջ 348—9):

ԲԵՐՊՔ, հին գղ. Գեղարքունի գո. ի, զոր Աշոտ
 Ա. թգ. Սեանի վանքին նուիրեց:

ԲԵՐԻԱ, տե՛ս Հալեայ:

ԲԵՐԻԱ, Լավրիարցի Հ. Կ. (Բ) Անդրկովկասեան
 երկրային կոմիտէի առաջին քարտուղար, վրացի:
 Հայաստան թաղաքականութեան ղիմեց Աղասի
 Խանձեանի վերջին օրերէն (1936ին):

ԲԵՐԼԻՆ Տ. ՊԵՐԼԻՆ:

ԲԵՐԿԱ Տ. ԲՈՐԿԱ:

ԲԵՐԿՈՒՅԻՈՅ ԳՍԻԱՍ, այսպէս կը կոչուի Առ-
 բերանի գաւառը, իր գլխաւոր Բերկի քաղաքի
 անունով:

ԲԵՐԿՐԻ, գիւղակ վերին Կարկառի (Վան) ունէր
 քարոսկիր Ա. Աստուածածին եկղ. մը:

ԲԵՐԿՐԻ, գլխաւոր քղ. Բերկրացուց գաւառի,
 Վանի կռուակալութեան համանուն գաւառակի
 մէջ: Բերկրի ծանօթ է պատմութենէն, ուր պա-
 տերազմական զէպքեր տեղի ունեցած են: Տա-
 կաւին կայ հինաւուրց բերդը 1900ին ունէր
 3100 բնակիչ. որուն 2100ը հայեր էին, մնացածը
 թուրք և հրեայ: Եկղ. Ա. Աստուածածին, մօտէն
 կ'անցնի Բերկրի կամ Պանուամանի գետը, որուն
 վրայ կայ հնաշէն, բազմակամար կամուրջ մը:

ԲԵՐԿՐԻ, գաւառակ՝ Վասպուրականի, կը համա-
 պատասխանէ հին Առբերանի (Տե՛ս) գաւառին:
 Հայք ունին 9 գիւղ 8000 բնակչով: Այլազգէ՛ք՝

(քուրդ, հրեայ, թուրք) 7000 են: Հոս է Տէր
 Յուսկան որդի վանքը, Նաշարէթ Առաւելեանց
 հոս քարիւղի զանազան աղբիւրներ գտած է,
 բայց նոյն աշխատութեան զո՛հ երթալով՝ անար-
 զինք մնացած է:

ԲԵՐԿՐԻ, հայաբնակ գիւղ Երզնկայի Բոյումէր
 գաւառակի մէջ:

ԲԵՐԿՐՈՅ ԳԱՇՏ, նոյն է Ապաղա դաշտին հետ,
 Բերկրի (Վասպուրական) շուրջը կը տարածուի:

ԲԵՐԿՐՈՅ ԶՈՐ, կը յիշուի Ստ. Ասողկէն Առ-
 բերանի գո. ին մէջ:

ԲԵՐԶՈՐ Տ. ԲԵՐԳԱՃՈՐ:

ԲԵՐԶՈՐ, հայաբնակ գղ. Գեղջան գո. ի:

ԲԵՐՄԻ, գղ. Սղբրդի Խիան գաւառակի. 100
 տ. հայ բն. ունէր:

ԲԵՐՈՅԵԱՆ ՄԿՐՏԻՅ, ծնած Աստրախան ժ.Ը. դա-
 րու վերջերը, ուսուցչապետ հայկական գրակա-
 նութեան՝ Պետրոսպուրկի (Լենինկրաւ) կայսե-
 րական համալսարանին ժ.թ. դարուն, երկասի-
 րած է բառարան Ռուս-հայ. (Այլապեան՝ «Շար
 Հայ կենս» Գ. 48):

ԲԵՐՆԱԹՈՎԻԶ ԽՅՆԱՏՈՐ ԱԼԵՏԻԲ, Լվովցի (Լեմ-
 պէրկ), որ Լեհաստանի Վլատիսլաւ Գ. թգ. ին
 300.000 տուքատի պատկառելի գումար մը փոխ
 տուած է, մեռած է 1671ին (Այլապեան «Շար
 Հայ կենս.» Գ. 33):

ԲԵՐՐԻ կամ Չարսանձագ գղ. համանուն գո. ի,
 որուն Աղզային վարժարանը կը յաճախէին
 (1900ին) 178 մանչ և 101 աղջիկ, էփրիկեան չի
 յիշեր Բերրի: Տե՛ս Չարսանձագ:

ԲԵՐՔՆԻ, հին գղ. Սիւնեաց Կովսական գո. ի:
 ԲՁԱԻԷՐ, հայաբնակ գղ. Ջաւախք գո. ի, բն.
 400:

ԲՁԱՓԱՅ, ամիրա Խուժաստանի 1150ին:

ԲՁԱՆ, աւան Տաթևի վանքի մօտ (Չամչեան՝
 «Պատմ.» Գ. 246):

ԲՁՁՈՆ, հին և աւերակ գղ. Ճահուկ գո. ի:

ԲՁՄՆՇԷՆ կամ Բազմաշէն, գղ. Խարբերդի ա-
 ռաջնորդական թեմի: 1900ին 230 տուն բնակիչ
 ունէր, եկղ. Ս. Աստուածածին:

ԲՁՆՈՅԻՅ ԳԻՒՂ, Արագածոտն գո. ի մէջ ըստ
 Չամչեանի (Պատմ. Բ. 410):

ԲՁՆՈՒՆԱԿԱՆ ԳՍԻԱՍ Տ. ԲՂՆՈՒՆԻ:

ԲՁՆՈՒՆԵԱՅ ԾՈՎ Տ. Վանայ ձով:

ԲՁՆՈՒՆԻ Վ. Խմբազիր 1933ին Ղարաքիլի-
 սայի (Սիսեան) մէջ հրատարակուող Սիսիանի
 հարվածային հնգօրեայ թերթի, որ էր »Որդան
 Սիսիանի Շրջկոմի յեզ Շրջգործկոմի»:

ԲՁՆՈՒՆԻՔ կամ ԲՂՆՈՒՆԱԿԱՆ ԳՍԻԱՍ, Հին
 գո. Տուրուբերանի, Հայկայ Բազ թոռան անու-

նէն՝ Ազի Ծովին արեւմտեան հիւսիսային կողմը, որուն անուամբ ծովն ալ Բզնունեաց ծով կը կոչուի, և այժմ Վանայ Ծովի Գաւառս Գրիգոր Լուսաւորչէն եպիսկոպոսական աթոռ նշանակուած է: Սուրմակ, որ Ս. Սահակայ հակաթոռ կաթողիկոս նշանակուեցաւ՝ յետոյ այս գաւառին եպիսկոպոսն եղաւ: Երանելին Աբրահամ Ղեկնդեանց աշակերտը, աքսորէն ետք գաւառին եպիսկոպոս դարձաւ: Դուինի ժողովին մէջ կը յիշուի Յովհանն եպ. Բզնունեաց և Թէոդորոս եպ. Բզնունեաց՝ Յովհաննէս Օձնեցոյ գուժարած ժողովին մէջ: Ը, դարու սկիզբները Եղիա կթղ. նախապէս գաւառին եպիսկոպոսն եղած էր: ԺԲ. դարու մէջ ևս Ստեփանոս Բզնունեաց եպիսկոպոսը՝ Հռոմկլայոս ժողովին մէջ կը յիշուի: Վաղարշալ թգ. իրր առանձին նախարարութիւն հաստատեց տոհմս, բայց յետոյ Խոսրով ջնջեց երբ անոնց զլիսաւորը Դասարեն դաւաճանեց:

Գաւառիս զլիսաւոր քաղաքն է Խլաթ, որ Քաղաք Բզնունեաց ևս կը կոչուի. միւս քաղաքներն են Արծկէ, Բաղէշ, Հիզան, Դատուան ևւայլն: Գաւառիս կը համապատասխանէ այժմ Խլաթ ևւ Արծկէ գաւառակները:

ԲԶՈՎԱՆԻ կամ Բուզաւանդ, երեք ալլազարնակ գիւղեր Այրարատայ Ոստան գու.ի մէջ:

ԲԶՈՎՆԱՅ, գղ. Շամախու, Բագուէն 30 վերսդ հեռի, հոս է Բագուցի Հայոց միակ և մօտիկ ուխտատեղին, որ Ս. Եղիա և Ս. Անդրէաս առաքելոց նուիրուած մատուռ մըն է: Ունի 1421 թուականով արձանագրութիւն: Գիւղս ունի 1876ին կառուցուած Ս. Մինաս մատուռ մը:

ԲԶՈՒԱՆ կամ Բըզվան. գղ. Երզնկայի, 1900ին ունէր 70 տուն հայ, 30 տ. թուրք, եկղ. Ս. Աստուածածին, Ս. Նշան դպրոցը 50 մանչ կը յաճախէին:

ԲԶՐԱՅՐԻ կամ Բրայրի գոմ, գղ. Կոգովիս գու.ի մէջ (Ալիբան «Հայապարուս»):

ԲԷԳՁԱՏԵԱՆ Ալիբն, Պարենաւորման և առեւտուրի անդրանիկ գործավար Խ. Հայաստանի:

ԲԷԳՆԱՁԱՐԵԱՆՅ Սարգիս ԲԷ. Թիֆլիսի ներսիսեան Հայոց հոգեւոր դպրոցի կրօնքի ուսուցիչ. 1892ին հեղինակած է 198 էջնոց Համառոտ Բրիտանական վարդապետութիւն մը, մեռած է 1894ին Տե՛ս Բեկնագասեան:

ԲԷՁԱՔՂՈՒ, հայարնակ գիւղ Կոտայք գու.ի մէջ, բնակիչք՝ 1875ին Սպահանէն գաղթած են. մօտ 50 ընտանիք հայ կ'ապրէր 1900ին. եկղ. Ս. Յակոբ:

ԲԷԹԱՄՍ, գղ. Տիգրանակերտի:

ԲԷԼ Տ. Ներուլք:
ԲԷԼԱՆԵՎ, գղ. Ատրպատականի. բն. 100 հայ, ունին եկեղեցի մը:

ԲԷԼԼ (Bell) անգլիացի ճանապարհորդ ի Հայաստան՝ 1715ին, իր գիրքը հրատարակուած է 1811ին Լոնտոնի մէջ: (Յ. Քիւրդեան, «Բազմավեպ» 1931, էջ 205):

ԲԷԼՈՒ Տ. Բելու:

ԲԷԼՈՒԼ Նիկողայոս, Հայաստանէն Սէրէթ քաղաքը գաղթած և Մոլտավիական իշխանէն աղնուականի տիտղոս ստացած է: Յետոյ գալով ի փոքր Լեհաստան, Թիշմիլնիցէ քաղաքը հաստատուած է: 1806ին Ռուսանիոյ Եաշ քաղաքէն զրկուած վկայաթղթերուն համաձայն, տարի մը վերջը Լվուվ քաղաքը վաւերացուցած է իրեն աղնուականութիւնը: Հարուստ կալուածատէր մըն էր, առհասարակ ամէնքէն յարգուած իրեն բարեմասնութիւններուն, աղնիւ ընաւորութեանը և աշխատասիրութեանը համար: (Տօնիկիեվիչ):

ԲԷԼՔ Վալդեմար, հռչակաւոր պատմարան և հնագէտ, ծնած 1857ին, գերմանացի հայասէր, 1918ին, Սևրի դաշնագրի նախօրեակին մէկը եղած է մեր դատին ախոյեաններէն: Կովկաս գտնուելով (1880—1890ին) առիթ ունեցած էր ուսումնասիրելու հայերու անցեալը և Հայաստանը: Իր ուսումնասիրութիւնները մեծ մասով հրատարակուած են «Հանդէս Ամսօրեայ» ի մէջ: 1898ին ղէպի Վասպուրական ճամբորդած է. ուր շատ մը հնութիւններ գտած է, որոնք մեծ մասամբ Պերլինի միւլդէն կը պահուին Այս ուղեորութեան ատեն գտած է հայկ. պետութեան նշանաւոր մայրաքաղաքին, Տիգրանակերտի բուն տեղը: («Կեսնի և Արուես» 1933, էջ 118—9):

ԲԷԿԼԱՐՔԱՆՅ, գղ. Աղուանից Հոյի գու.ի մէջ, բն. 800, գաղթած Խաչէն, Զրարերդ և Վարանդա գաւառներէն. եկղ. Ս. Ստեփանոս, դպրոցը՝ Մեսրոպեան: Գերեզմանատան մէջ կը գտնուին հին սապանաքարեր:

ԲԷԿԼԻԱՂՄԷՏ, ընդարձակ գիւղ, Կարսէն 21 վերստ հեռու, 1900ին ունէր 230 տուն հայ ևւ եկղ. մը:

ԲԷԿԼԻ ՆԵՐՍԷՍ, երբեմն հայարնակ Սիւնեաց Գեղարքունի գու.ի մէջ: Բնակիչք՝ թուրք. հացիւ կը նշմարուին հին եկեղեցւոյն հետքերը:

ԲԷԿՆԱՁԱՐԵԱՆ Անդրէաս, Թիֆլիսէն Հնդկաստան կ'անցնի Մարգարեան տպարանին իրր զբաշար, 1894ին կը տիրանայ տպարանին և կը հիմ-

նէ պարսկահայ անդրանիկ լրագրքը Շաւիղ «ագ-
գային», գրական և քաղաքական շարախաթերթքը
որ 1894—7 յոյս կը տեսնէ Թեհրանի մէջ:

ԲԷՎԵԱՅԱՆՔԱՆԻ թաղեոս, եպ. Երեանցի, «ան-
կաշառ և անձնուէր անձ» ներսէս Աշտարակեցի
օրով, որ 1850ին Պարսկա-Հնդկաստանի առաջ-
նորդ կ'ընտրուի և 1851 Ապրիլին տեղը կը հաս-
նի: (Հայկ Անեմեան): Կենսագրութիւնը տես «Արա-
րաս» ամսագիր 1906 թիւ 4:

ԲԷՅԱՆՔԱՆԻ Կարապետ, Յեղափոխական յայտնի
գործիչ, ծնած է Վան 1874ին, նախնական կրթ-
ութիւնը ստացեր է Քաղաքամիջի Յիսուսեան
դպրոցին մէջ, 1889ին կը մտնէ Արմենական կաղ-
մակերպութեան մէջ, 1894ին կը կ'երթայ Պոլիս
և անկէ ալ կ'անցնի Կարին: 1895ին վերա-
դառնայ Վան և կը մասնակցի ժողովրդական
ինքնապաշտպանութեան կռիւներուն, ուր և կը
վիրաւորուի: 1899ին կը մտնէ Հ. Յ. Դաշնակ-
ցութեան շարքերը, պատասխանատու պաշտոն-
ներ վարելով: 1903ին Շամիրամ քաղաքով կը
բանակցի Քիւրտերուն հետ հայ-քրտական հա-
մերաշխութիւն մը գոյացնելու համար: Շամի-
րամէն կ'անցնի Ուրմի, Սարմաստ, Կովկաս, Ե-
զրպոստ և ապա Ամերիկա, բայց 1912ին կրկին
Վան կը վերադառնայ: Ապրիլեան կռիւներուն
կ'անդամակցի «Ռազմանիւթի Հայթայթի Յանձ-
նաժողով»ին: 1915ի նահանջէն ետք կ'անցնի
Իգտիր: 1918ին կը նշանակուի «Հայաստանի Ա-
պահովութեան Խորհուրդ»ի Երեանի կաղմի ան-
դամ: 1918-20ին Արարատեան Հայաստանի կռի-
ւներուն կը մասնակցի իբր Վասպուրականի զօ-
րամասերու պատասխանատու զեկավարներէն
մէկը: 1921 Փետրուարեան ապստամբութեան օ-
րերուն կ'անդամակցի «Վասպուրականի Զինուո-
րական մարմին»: (Երամեան «Վասպուրական»):

ԲԷՅԱՆՔԱՆԻ Հայկ. «Միլիոնաքերի երազ»ը թպ-
տերախաղը (մանկական) գրած է 1938ին, զոր
Երեանի միւրին «Երեմադրութեան յանձնարա-
րելի» կը զանէ: Տես Պէյլեհեան:

ԲԷՅՐՕՎ, գղ. Տիգրանակերտի:

ԲԷՆԴՐ ԳԵԱՅ, գղ. Իրանի, 40 ընտանիք հայ
կայ և փոքր դպրոց մը:

ԲԷՉԱՆ, գաւառակ Տիգրանակերտի, ունի 9 հա-
յարնակ դիւղ. գաւառագլուխն է Բէչարկան, 15
տ. հայ ունէր և եկղ. մը:

ԲԷՈՒՆԱ կամ Բեռնատա, գղ. Վարանդ գո.ի,
1900ին 170 տ. հայ կար, որոնք Ս. Լուսաւորիչ
եկղ. մը ունէին. մօտը կը նշմարուին հին գե-
րեզմաններու և վանքի մը մնացորդները:

ԲԷՈՒՆԵՂ կամ Փարչանջ, բազմաբնակ գղ.

Խարրերդի առաջ. թեմի. 240 տուն հայ կար, ո-
րոնք եկեղեցի մը ունէին:

ԲԷՐ, թգ. Ափխազայ 943ին:

ԲԷՐԷԼԻ, աղի լիճ Կիլիկիոյ Սիհուն և Ճիհան գե-
տաբերաններու միջև:

ԲԷՐՍԱ Օգոսիոս. Արքեպ. հայազգի, 1613ին
Դամիսկեանց կարգը մտաւ Քրաքովայի մէջ:
Ինքնաբերաբար սորված էր կատարելապէս արե-
ւելեան լեզուներ, ինչպէս հայերէն, պարսկերէն,
արաբերէն և թուրքերէն: Ուսմանց մէջ ցոյց
տուած մեծ յառաջդիմութեանց պատճառաւ Դո-
մինիկեանց միաբանութիւնը առաջարկեց Ս.
Պապին որ Արքեպիսկոպոս կարգէ զայն Մեծ Հա-
յաստանին, ինչ որ տեղի ունեցաւ: Չեռնադու-
թիւնն ընդունեցաւ Հոմի մէջ 1631ին և անմի-
ջապէս ուղղուեցաւ ի Հայաստան իր թեմը:
Պարսից Սէֆի Շահը Բէրսա Արքեպիսկոպոսը իբր
պատուիրակ Վլատիսլաւ Դ. Լեհաց թգ.ին կը
ղրկէ, որուն հետ երկու կառավարութեանց հա-
մար ալ նպաստաւոր համաձայնութիւններ կը
կնքէ: Այս պատուիրակութիւնը մեծ համբաւ
շահեցուց իրեն Լեհաստանի և Պարսկաստանի մէջ,
որով և Բէրսա վերանուէր իբր մականուն մնա-
ցած է այդ ընտանիքին: (Կը կարծեմ որ Թրան-
սիլմանիոյ Բերսիան ընտանիքը ասոր եղբայրնե-
րէն սերած է):

ԲԷՔԷՐՈՒՆԻՔ, հին գղ. Սիւնեաց Դողթն գո.ի:

ԲԷՔՄԷՋՃԵՍՆ Կիրակոս եպ., կաթողիկոսական
տեղապահ Կիլիկիոյ, ծնած 1822ին, եպ. 1880ին:

ԲԷՅԱՆՔԱՆԻ ԲԱՇԻ, բազմամարդ դիւղ Բագ-
րեւանդի Խալեաղ վիճակի մէջ. կը նշմար-
ուին վանքի և եկեղեցւոյ աւերակներ, պարսպի
հետքեր: Հայերը Հասան խանի պատերազմի ա-
տեն գաղթած են:

ԲԷՇԷՐԷՆՔ, գղ. Եողգատի. 50 տ. հայ կար,
ունէին Ս. Աստուածածին եկղ. մը, 12 տուն
թուրք:

ԲԷՋՎԱՆ Տ. Բգուան:

ԲԷՋՎԵՐՏ, գղ. Իրանի Փէրիա գո.ի, ունի 35 տ.
հայ և եկղ. մը:

ԲԷԼ-ԲԷԼ, գղ. Տիգրանակերտի, 14 տ. հայ բն.
ունէր:

ԲԷԼ ԲԱՍԿ, չէն Արցախի Վարանդա գո.ի մէջ.
16 տ. հայ բնակիչ ունի կապուած Սիսորաչէն
գղ.ի եկեղեցւոյն:

ԲԷ-ԽՈՐԱՆ, գղ. Տիգրանակերտի:

ԲԷՆՇԷՐՎԱՆ, գղ. Բարերդի, ունէր եկեղեցի մը:

ԲԷՐՔՈՒՆ կամ Բըրդոնէ, գղ. Կարնոյ գո.ի:

ԲԷՔՍՏՐՆ Հէրլոս (Hareld Boxton) վերապատ-
ուելի. ծնած 1880ին, ուսած Աւստրալիա, յետոյ
Լոնտոն ու Քէմպրիճի համալսարանները. 1905ին
քահանայ ձեռնադրուած: 1910ին կը մասնակցի

Հայկ. Խնդրին, հրաւիրելով միանալու Անգլիկոս Միութեան 1913ին, եզրօր նօէյի հետ կանցնի Հայաստան և ապա կը հրատարակէ «Ուղեւորութիւն և քաղաքականութիւն ի Հայաստան» գիրքը: 1915ին Լորա Բրայսի հետ կը հրաւիրուի կազմակերպելու Լօրս Մէյլս Զրնցը, որ նպատակ ունէր օգնել զաղթական Հայութեան և հայ որբերու, այդ հիմնարկութեան պատուակալ քարտուղարութիւնը վարելով ցարդ (1926): 1921ին Տք. Քէնէտիի հետ կ'այցելէ Կիլիկիա՝ ուր կը կազմակերպէ Անգլ. նպաստամատոյցի գործը (գորգագործութիւն և ասեղնագործութիւն 1500 կանանց և աղջկանց): 1922ին կ'անդամակցի Տք. Նանսէնի Խորհր. Ժողովին ի ժընեւ, և նոյն ատեն կ'ուղեւորուի Երևան, Թիֆլիս և Բաղու: 1924ին Աթէնք կ'անցնի հայ զաղթականաց զետեղման համար Ամենայն Հայոց Գէորդ Ե. Կաթողիկոսը Ս. Գրիգոր Լուսաւորիչ խաչով՝ պատուած է Անդրիկան եկեղեցւոյ այս եռանդուն և հայասէր երէցը, որ հերու (1925ին) իր ընկերներով առաքելութիւն մը կատարեց նորէն Եգիպտոս, Պաղեստին, Կիպրոս, Պոլիս և Աթէնք, հոնկէ անցաւ Գորֆու և Թէոդիկէն հայերէնի դասեր ստանալէ ետք Լոնտոն անցաւ: (Թէոդիկ' «Ամ. Տարեց.» 1926 էջ 651):

ԲԹԱՌԻՃ, Բղառին կամ Փրառին, գղ. Երզնկայի, ունէր 60 տուն հայ, 100 տ. թուրք: Եկղ. Ս. Սարգիս. դպրոցը 30 մանչ և 10 աղջիկ կը յաճախէին: Մօտն է Ս. Նիկողայոս վանքը:

ԲԹՆԻՍ. Բզնի:
ԲԺԳԵՐՏ, գղ. վերին Փերիայի, 125 հայ կը բնակի:

ԲԺԻՇԿ, ամսաթերթ բժշկական և առողջապահական, տպ. տէր և տնօրէն Տօքթ. Վահան Ղազարեան, տպ. 1911ին Տրապիզոն, 1912-4 Պոլիս:

ԲԺԻՇԿԵԱՆ.Ս. Բժեկեան:
ԲԺՆՈՒՆԻՔ.Ս. Բուժմուսնի:

ԲԺՆԿԱՎԱՆ ՀԱՆԳԻՍ, հրատ. ՀՍԽՀ Առժողկոմատի. (Տարեգիրք) տպ. Յերիվան 1926-7 Խմբագրական Կոլլեգիա (Ա. Մուսալյան, Տ. Մուշեղյան, Ա. Խեչուժյան): Պատ. խմբագիր՝ Սերիկ Դավթյան:

ԲԺՆԿԱՎԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ, տպ. Կ. Պոլիս 1914, խմբագիր տնօրէն՝ Դոկտ. Վ. Ղազարեան:

ԲԺՆԿԵԱՆ Միմա վրդ. Վենետիոյ Մխիթարեան միարան, ծնած է Տրապիզոն 1777 Հոկտ. 15ին. փոքր հասակին Ս. Ղազար կը զրկուի ուր 1804ին քահանայ կը ձեռնադրուի, մինչև 1810 վանքին մէջ ուսուցչի և այլ պաշտօններ կը վարէ.

զինքը 1815ին Գուրու-Չէչմէի (Կ. Պոլիս) Տիւզ-հանց ապարանքին մէջ կը գտնենք. ուր աշխարհարար թատերգութիւններ և զաւեշաներ կը զրէ և իրեն աշակերտներուն ներկայացնել կու տայ, այսպէսով մին հանդիսացած է մեր մէջ՝ հայ թատրոնի հիմնադիրներէն. Հ. Մ. Բժշկեան բեղուն մատենագիր մ'եղած է: 1815ին Մ. Ղազարու ապարանէն լոյս ընծայած է իր անդրանիկ գործը ձեմարան Գիսելեացը, 380 էջանց, 1818ին երկրորդ տպագրութեան կ'արժանանայ նոյն 1818 տարին լոյս կը տեսնէ Հմսուրիւն Մանկանց յորս մասերու բաժնը-ւած մօտ 800 էջ, որը նոյնպէս 1832ին Բ. և 1851ին Գ. ապագրութեան կ'արժանանայ: 1819ին լոյս կ'ընծայէ Պատմութիւն Պոնտոսի (160 էջ), 1820ին Յայնուրիւն ասուումգիսուրեան (264 էջ), Բ. տպ. 1836ին: 1871ին՝ վարժուրիւն Մանկանց ինն անգամ տպագրուած:



Հ. Մ. ԲՃԾԿԵԱՆ

Հ. Բժշկեան եղած է նաև Խրիմի Ղարասու քաղաքին հայ կաթողիկէից հովիւ և ուսերէն սորվելով հեղինակած է Քերականութիւն Ռուսերէն-Հայերէն, զոր լոյս ընծայած է 1828ին և նուիրած Ռուսաց Աղեքսանդր Ա. կայսեր, (445 էջանց): Իր ամէնէն արժէքաւոր գործն է ձանապարհորդութիւն ի Լեհաստան եւ այլ կողմանս բնակեալս ի Հայկազանց սերելոց ի նախնեաց Անի քաղաքին, էջ 424, լոյս տեսած 1830ին: 1838ին կը հրատարակէ Մրբազան Պատմութիւնը որուն Ա. հատորին մէջ՝ «Պատմ. հին և նոր Օրինաց և Եկեղեցւոյ Բրիտանոսի» 705 էջ. Հատոր Բ. «Պատմ. Քահանայապետաց Հռոմայ»՝ 605 էջ: 1840ին լոյս կ'ընծայէ Քերականութիւն Հայկազանց լեզուի բացատրեալ ի Ռուսաց բարբառ, 268 էջ, ու 1844ին՝ Քերականութիւն բազմալեզու, 192 էջ, որուն ֆրանսերէնը նուիրուած է Նիկողայոս ուսաց կայսերի վերջին գործն է Համառօս նկարագիր վարուց երեւելի արանց տպ. 1850ին, 960 էջ: Ունի նաև թարգմանութիւններ Վախճանած է 1851 Նոյեմբեր 26ին Ս. Ղազարու վանքին մէջ, ուր դարձած էր Խրիմէն քանի մը տարի առաջ:

Հ. Ղազիկեան («Նոր Մասեմագրութիւն») կը գրէ:

բէ «սկսած է նրա արակելի «Կրօնական փոփոխութեանց բառգիրք» մը 1849ին, որ անկասար մնացած է: Մահուան առթիւ տե՛ս «Բազմալեզու» 1852 եւ 153»:

ԲԻՇԿԵԱՆ (Բիշօպեան) Յովսէփ վրդ. էջմիածնի նշանաւոր երաժիշտ և Եփրեմ կթղ.ի նոտար, ապրած է ժ.ժ. դարու կիսուն. հասցուցած է բազմաթիւ աշակերտներ:

ԲԻՒԿԻՐԱՆ ՆԷԱՄՅ. քղ. Ռուսական Պր. քր. մ. օտ. 10ի չափ հին և 5 նոր Հայ ընտանիքներ կ'ապրին: Բիւիւ կամ ձողազ. հայարնակ գիւղ Ղազախ գ. ի (Արցախ). 2200' ոտք բարձր. բն. 38 տուն:

ԲԻՒՆԻ, հին գգ. Սիւնեաց Գեղարքունի գ. ի:

ԲԻԷԹՐՈՎԷԶ Պետրոս, Հայկական ազնուատոհմ ընտանիքէ մը սերած, որուն զինանշանը կը ներկայացնէր երկնակապոյտ յատակի վրայ խարիսխ մը, վերեւ արև. թաղի կորբանին վրայ ջայլամի երեք փետուրներ: Պետրոս Բիէթրովիչ ազնուականութիւնն ստացած է Մոլդաւիայի իշխանագանց ձեռքէն, որուն վկայաթուղթը վերոյիշեալ ընտանիքը բնդունած է Եաշ քաղաքէն 21 Յունիս 1816ին: Պուքովինայի զանազան տեղերը, ինչպէս Հանքովձէ, Սուպքովձէ և ի Զատուպովձէ մեծ հողային կայուածներ ունին: Բնաշխարհութիւնն ընդունած են Լվովի մէջ 10 Ապրիլ 1817ին:

ԲԻԷԼԱՐԷՉԵՆՍԿԻՅ, Ռուսիոյ Եկատորինստարի գիւղ. կան 6—8 Տրապիզոնցի հայ ընտանիք:

ԲԻԹ Մսր, Հայասէր ամերիկացի, ծն. 14 Փետրվար 1851 թ. Մէսէչիւսէթսի Յոյ, Ռիվեր քաղաքը. հայրը՝ Վեր. Ճ. Հուրիօք Բիթ.— Նիւն. կրթ. ստացած Իսթամբուլէն և Սչքօշ քաղաքաց հանր. վարժարանները: Գասախօսած Այովայի (Iowa) նահանգային դպրոցն ու հետեւած նոյն նահանգին Գոլէճի դասընթացքին. ստանալով «վարդապետ արուեստից» աստիճանը: 11 օգոստոս 1881 թ. ամուսնացած Մարթա Հ. Գարթրիճի հետ: 1873—4 թ. գանձապետ Այովայի էտէյր քաղաքին վարչութեան 1874—81 թ. գլխ. պաշտօնեայ Պրիւնկիթըն-Միսուրի երկթղ. ընկերութեան տնօրէնութեան մէջ: 1881—1911 թ. գանձապետ Ամերիկեան Պորս ընկ. հան թուրքիոյ մասնաճիւղին — Մսթր Բիթ քանիցս կատարած է նպաստի բաշխման գործ՝ Անատոլի հայարնակ դաւառաց համար: 1895—6 ի հայկական դէպքերուն, Անգլիոյ դեսպանին խնդրանքով՝ կազմեց Անկլօ-Ամերիկեան նպաստամատոյց յանձնաժողովն որուն միջոցաւ 500.000 ոսկի զրկուեցաւ զաւառի հայ արկածելոց: Գարձեալ, 1909ի Կիլիկիոյ ահաւոր կոտորածէն յետոյ՝ Սուլթանին հովանաւորութեամբ կազմուած «Մի-

ջազային նպաստից Յանձնաժողով» ի բաշխման ճիւղի նախագահ ընտրուելով, արդեա՛մը ապացուցած է աննախընթաց հայասիրութիւն մը, և թողած՝ յաւէտ անմոռաց ու պաշտելի անուն մը Հայ Տառապանքի Պատմութեան մէջ:—

1900էն ի վեր Պորտ ընկ. հան կողմէ ի թուրքիա դիւանագիտական յարաբերութիւնները կը վարէ.

1902 թ. Տաճկաստանի միսիօնարական հաստատութեանց կողմէ. իրր ներկայացուցիչ Ամերիկ. կառավարութեան, զրկուած է՝ Ամերիկ. հաստատութեանց իրաւանց պաշտպանութիւնը խընդրելու: 1909 թ. Ալպանիա դացած, իրր նախագահ Միսիօնարական յանձնաժողովի, նաև էտիւպուրի՝ Տաճկաստանի Միսիօնարութեան կողմէ իրր ներկայացուցիչ ընդհ. միսիօնարական ժողովի: — (Թեոդիկ «Ամ. Տար.» 1911, էջ 249):

ԲԻԹԷՇԹ (Pitești), փոքր քաղաք Ռուսականիոյ, Պուքրէշի մ. օտ, կան 30 տունի չափ հին և 25—30 տունի չափ նոր գաղթական Հայեր: Եկեղեցին նուիրուած է Ս. Աստուածածնայ:

ԲԻԹԱՆՆՆԱՆՆԱՆԻ s. Բիւնանանի:

ԲԻԼԻՍՍԱՆ, հայարնակ գիւղ Աղուանից Գարդման գ. ի, բն. 35 տուն, գաղթած վարանդա գ. էն, Եկղ. Ս. Աստուածածին:

ԲԻԼՍ s. Բելս:

ԲԻՃԱՆՆԱՆԻ կամ Բիժանանանի, հին գաւառ Փայտակարանի:

ԲԻՆԱՆԳ կամ Պիւնակ, քղ. Հնդկաստանի, ուր կայ հայ համայնք մը, Հայոց Ս. Լուսաւորիչ Եկեղեցին Սալատուր Գալուստեան Շիրազեցին կառուցած է (Այլազեան «Շար. Հայ Կենս.» Գ. 88):

ԲԵՆԱՂՈՒՍ, թրքարնակ գգ. Վերին Բասենի:

ԲԻՆԱԹԼՈՒՆ Շէն, գղ. Արցախի, բն. 30 տ. 1846ին Գարատաղէն գաղթած են, նորաչէն Եկղ. Ս. Աստուածածին:

ԲԻՆԻԹ, աւերակ գիւղափոխ Այրարատայ Ուրծ և Արած գ. ի:

ԲԻՆԻՉՈՐ, անտառ Պոռչալու գ. ի մէջ, Շուլավեր գղ. ի մ. օտ:

ԲԻՆԿԱՆ, գղ. Սերասիոյ, 300 տուն հայ ունէր, որոնք Եկղ. և դպրոց ունէին: Տե՛ս Բեն-ԿեԱն:

ԲԻՇԱՆԻՍ, այլաղարնակ գղ. Զանգեզուր գ. ի, ԲիՇենԱկ s. Բենալ:

ԲԻՍ s. Բուս:

ԲԻՏԷԼԻ Մ. զկտ. ուսուցչապետ, «Երկնառաք» թուղթը հրատարակած է:

ԲԻՐԵԱՆՅ Խաչատուր Ամիրա, Բենկեանցի, ժ.ժ. դարուն մէջ հիմնադրած է իր հայրենեաց Ս. Աստուածածին Եկեղեցին: (Այլազեան «Հայ Կենս. Գ. 156):

« Հ Ա Յ Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ »
 Բ. Գրքին Մեկեմաս եղած են ինքնաբերաբար
 Լ ո ճ ս ո ճ ա բ ճ ա կ
Կ Ի Ի Լ Պ Է Ն Կ Ե Ա Ն Ե Ղ Բ Ա Ր Ք
 Ձեռնագիրն շնորհակալիմ
 Հ. Մ. ՊՈՏՈՒՐԵԱՆ

ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ՀՐԱՍԱՐԱԿՉԱԿԱՆԻ ցարդ
 արձանագրուած անդամներն են.

ՄԵԿԵՆԱՍ ԱՆԳՄԱՄՆԵՐ

1. Պուլքրէշարնակ Տիար Արքաֆի Աչրկեօզեան:
2. Լոնտոնարնակ Կիւլպեկեան եղբարք:

ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԳՄԱՄՆԵՐ

1. Վսեմ. իշխան Պորիս Արղութեանց Երկայնա-
 րագուկ (Պրանսա), 2. Վսեմ. Ոսկան Մարտիկեան
 նախկին նախարար Թուրքիոյ (Գահիրէ), 3. Վսեմ.
 Տիգրան Կամարական, գրագէտ (Բարիդ), 4.
 Վսեմ. Սիմէոն Ղարիպեան (Պասրա), 5. Գեբ. Յա-
 բութիւն վ. Տիւրքեան (Պաղտատ), 6. Գեբ. Պօղոս
 վ. Գըրմըզեան (Լէմպէրկ), 7. Վարդան Մկրտիչ-
 եան (Օմուր Ճաքա), 8. Ղազարոս Նահապետեան
 (Գահիրէ), 9. Հրանդ Վարդանեան (Պուլքրէշ), 10.
 Աւետիս Էփօսահար (Կերլա, Ռումանիա), 11. Նեւ-

- սէս Գասապեան (Բլովտիվ. Պուլկարիա), 12.
 Վարդան Մելքոնեան (Պասրա, Իրազ), 13. Արթ.
 Խորէն քճ. Գասապեան (Պասրա, Իրազ), 14.
 Լեւոն Շահոյեան (Պաղտատ, Իրազ), 15. Արթ.
 Յարութիւն քճ. Տիր Մետրոպեան (Ղազվիւն, Ի-
 րան), 16. Հայկազ Տէլինեան (Աղեքսանդրիա).
 17. Տիրան Փայլեան (Տիթրոյիթ), 18. Ա. Տա-
 արեան (Ս.Փաւլո), 19. Տքթ. Ա. Կէօքճեան (Հառ-
 նաքա), 20. Տոքթ. Ռ. Թազուորեան ատամնա-
 նաքա (Նիկոսիա), 21. Յովհաննէս Բարսեղեան
 (Ղազվիւն) 22. Յովհաննէս Շէքէրճեան (Պուլքրէշ),
 23. Նէրսէս Թոփալեան (Կալաց), 24. Թորոս
 Եթէնէքեան (Յոպպէ), 25. Յովհ. Վարժապետ-
 եան (Մարտէլլ), 26. Անդրանիկ Պաղտատարեան
 (Պրայլա), 27. Տոքթ. Յովհաննէս Արթիւնեան
 (Առնուվիլ), 28. Խաչատուր Լազարեան (Նոր
 Ջուլա), 29. Գէորգ Հաճի Արթիւնեան (Պուլքրէշ):

« Հ Ա Յ Հ Ա Ն Ր Ա Գ Ի Տ Ա Կ »

ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ ՄԵՐ ՀԵՏԵԻԵԱԼ ՅԱՐԳԵԼԻ ԳՈՒԾՕՆ ԱՆԴԱՄՆԵՐԷՆ

- Ֆրանսա Rev. I. Posbeykian, 26 rue Troyon
 Sèvres (S. & O.) France.
 Եգիպտոս եւ Սուսան Mr. A. Alboyadjian.
 16 Rue Nahdi, Le Caire Egypte.
 Պուլկարիա Mr. Nerses Kassabian, Rue
 Trgovska 54 Ploadv (Bulgarie).
 Թուրքիա Mr. Toros Azadyan, Billor Sokak
 Gül Han 8-9 Galata-Istanbul (Turquie).
 Ամերիկա (Հիւսիսային) Mr. Vahan Mozian,
 10 East 39 th str. New York City (U. S. A.).
 Ամերիկա (Հարաւային) Mr. A. Baraghian,
 Los Incas 4561 Buenos Aires (Argentina).
 Իրան Mr. Aram Yéremian, Djoulfa-Isbahan
 (Iran).

- Իրազ Rev. P. Pascal Diuleguian, Armenian
 Catholic Church Bagdad.
 Յունաստան Mr. K. Kiyidjian, rue Klisthéous
 7 Athènes (Grèce).
 Պաղեստին Rev. P. B. Toumayan, Patriarcat
 Armenien Jérusalem.
 Պաղեստին Mr. Sahag Sarkisian, Couvent
 Armenien Catholic Jérusalem (Palestine).
 Լիբանան, Mr. Vahan Ouzounian, B. P. 491
 Beyrouth (Liban).
 Սիւրիա Librairie Bogharian, B. P. 295
 Alep (Syria).
 Անգլիա Mr. A. Safrastian 18 Eton Villas
 London N. W. 3.

Ա Ն Ա Հ Ի Տ

Հանդէս մասնական և արուեստի
Խմբագիր՝ Ա. Չօպանեան
Տարեկան բաժնեգիրն է՝ Ֆրանսա, Սուրիա եւ
Պալքանեան երկիրներ՝ 100 ֆրանք
Այլ երկիրներ՝ 5 տոլար
Հասցէ՝ Mr A. Tchobanian
9 Rue Say Paris (9e) France

Բ Ա Ձ Մ Ա Վ Է Պ

Աղգային բանասիրական — գրական — գիտա-
կան և բարոյական հանդէս

Հրատ. Մխիթարեան Միաբանութեան

Խմբագիր՝ Հ. Եղիա Փէշիկեան

Տարեկան բաժնեգիրն է՝ 12 ֆր. զուիցերիական
կանխիկ կամ համապատասխան իւրաքանչիւր
պետութեան դրամով՝ օրուան սակին համեմատ:
Աղգ. հաստատութեանց կէս գնով:

Հասցէ՝ Réd. Pazmaveb

St. Lazare Venise (Italie)

Ե Փ Ր Ա Տ

Երկշաբաթաթերթ

Աղգային, քաղաքական, գրական և գիտական
B. P. 381 Alep (Syria)

ԿԵԱՆՔ ԵՒ ԱՐՈՒԵՍ

Ամսագիր գրական

Խմբագիր՝ Մ. Պարսամեան

Տարեկան բաժնեգիրն 40 ֆր.

Հասցէ՝ 30 Rue Drouot Paris (9e) France

Հ Ա Յ Խ Օ Ս Ն Ա Կ

Ամսագիր կրօնարարական, գրական

Խմբագիր՝ Չայրմայր վրդ. Կէօղիւրեան

Istanbul

Հ Ա Ս Կ

Ամսաթերթ՝ պաշտօնական հրատարակութիւն

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Տարեկան բաժնեգիրն՝ Սիւրիոյ և Ֆրանսական եր-
կիրներու համար տարեկան 15 ֆր. միւս բոլոր
երկիրներու համար 1 տոլար

Հասցէ՝ Red. Hask Antlias (Liban)

Ն Ո Ր Ե Ր Կ Ի Ր

Ս. Դ. Հնչակեան օրաթերթ

Խմբագիր՝ Բ. Վարազդատ

Տարեկան բաժնեգիրն 100 ֆր.

Հասցէ՝ Red. «Nor Yerguir» Bld Raspail 227
Paris (France)

Ն Ո Ր Օ Ր

Շաբաթաթերթ

Խմբագիր՝ Անդրէասեան

Տարեկան բաժնեգիրն՝ Միացեալ Նահանգներ

1 ուկէս տոլար, արտասահման 2 տոլար

Հասցէ՝ P. O. Box 344 Fresno Calif (U. S. A.)

Ն Ո Ր Օ Ր

Աղգային, գրական, քաղաքական օրաթերթ

Պատ. տնօրէն՝ Գարրիէլ Լադեան

Տարեկան Յունաստան 600 տրախմի, արտասահ-
ման 8 տոլար Հասցէ՝ 20A Rue Vouli,

Athènes Grèce

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն

Պատենական և աշակերտական ամսաթերթ

Խմբագրութեամբ Վիեննայի Մխիթարեան

Հայրերու

Լոյս կը տեսնէ Փլովտիի մէջ

Հասցէ Red. Oussoumnanan

Rue Karadja Plovdiv (Bulgarie)

ՊԱՒՔԱՆԵԱՆ ՄԱՍՈՒԼ

Աղգային. հասարակական և գրական շաբաթա-
թերթ (Ս. Դ. Հնչակեան)

Խմբագիր՝ Յ. Պողոսեան և Ս. Փաշաճեան

Տարեկան բաժնեգիրն է՝ Արտասահման 80 ֆր.

2 տոլար

Հասցէ՝ Balkanian Mamoul

Rue Ekzarh Josif 35 S fia (Bulgarie)

Վ Է Մ

Երկամսեայ հանդէս մշակոյթի և պատմութեան

Խմբագիր՝ Ս. Վրացեան

Տարեկան բաժնեգիրն՝ Ամերիկա, Բրիտ. կայսրու-
թիւն, Եգիպտոս և Իտալիա 70 ֆր., Ֆրանսա եւ

մնացեալ երկիրներ 60 ֆր., Պալքանեան երկիր-
ները, Սիւրիա և Պարսկաստան 60 ֆր.

Հասցէ՝ 13 Rue des Platones, cité Jardins de

Plessis-Robinson (s), France

ՎԵՐԱՆՆՈՒՆԴԻ — ԲՈՒՈՒՅ

Քաղաքական, գրական և զուեշտական շաբա-
թաթերթ

Խմբագիր՝ Հայկ Գարազդ

Տարեկան բաժնեգիրն է՝ 100 ֆր.

Հասցէ՝ Red. Veradzound (Haig Karakach)

Téhéran (Iran)

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Մուրատ Թափայէիան նախկին աշակերտաց

Միութեան

Տարեկան բաժնեգիրն՝ 25 ֆր.

Հասցէ A. Altounian Red «Déghégaou»

49, Rue Rachechourt Paris (9e) (France)

Փ Ա Ր Ո Ս

Օրաթերթ քաղաքական, գրական եւն.

Խմբագիր՝ Տ. Մարտիրոսեան

Հասցէ՝ B P. 10 Plovdiv (Bulgarie)

A R A R A T

Գրական ամսաթերթ (ռուսահայերէն)

Խմբագիր՝ V. Mestugean

Տարեկան բաժնեգիրն է 120 լէյ

Հասցէ str. Spătarului 22 București